



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԳԱԼԵՐԻՏԵՐԵԱՆ - ԳՐՈՒԹԻՒՆ

ԱՐՁԵՐՆ ԶԵՒ ՈՒ ԿԱՐ

“ԵՐԱԱ”

բ Ա Ր Ե Փ Ո Խ Ո Ւ Ւ Կ Ա Ծ Ե Ւ Հ Ո Խ Ո Ւ Ց Ա Ծ

卷之三

四



ՀԱՅ. ՓԱԿԱՎՈՒՆ ԳՐՈՒԹԵԱՄԱ

Lusac Co.



ՀԱՅ ՏՊԱՐԱԽԹԻՒՆ, ՊԱՏԿԵՐԱՀԱՅՈՒՆ

687
9-17

Տպագր. Զ. ԳԵՐԳԻԵՎԻՆ

Ա. ԳԵԼԻՆ

1908

ՋԵՂՈՎԱՐ ԳԻՒՂԻ

29330-61

688 Unkn glimp
qf 17 2days h.2.
190 Jrs

25 SEP 2010

ԳՈԼԵՆՑԵՐԵԱՆ ԴՐՈՒՅԹԻՒՆ

ԱՌՉԵՄՆ ԶԵՒ ՈՒ ԿԱՐ

487
9-17

“ԵՒԱ”

ԲԱՐԵՓՈԽՈՒԱԾ ՈՒ ՃՈԽԱՅԱԾ

ԶԱՓԱԿԱՆ ԳՐՈՒԹԵԱՄՔ

ՀԵԴԻՆԱԿ

Մ. ԳԱԼԷՆՏԵՐ

Մասնագէտ Դեռձակ - Ռւսուցիչ եւկու սեռի զգեստներ

ՀԱՏՈՅ Փ.

ՆՈՐ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

595 Օրինակներ ու նկարներ, որոնք կ'ներկայացնեն կնոջական արտաքին ու առանձին արդուզարդի ամէն տեսակ զգեստներ ձեւել եւ կարելու եղանակը :

Կ. ՊՈԼԻՍ — Տպագր. ՆԺԱՆ և. ՊԵՐՊԵՐԵԽԱՆ ԵԽ ՈՐԴԻ
1902

Արտատպում ու թարգմանութիւն արգիլեալ

12 MAR 2013

27.984

SYSTÈME CALINDER

TRAITÉ PRATIQUE DE COUPE ET DE COUTURE D'APRÈS LE SYSTÈME MÉTRIQUE

MODIFIÉE & DÉVELOPPÉE

AUTEUR
M. CALINDER

Tailleur-Professeur de coupe pour les deux sexes

TOME II.
NOUVELLE ÉDITION

SOMMAIRE

595 Patron-méthodes et dessins, représentant les différents modes de coupe et de couture de toutes sortes de vêtements féminins, extérieurs et intérieurs.

IMP. N. BERBERIAN & FILS

CONSTANTINOPLE 1907
ГОС. БИБЛЮТОКС
Reproduction et traduction interdites
ZUUN- 10.0



29330-6

ՔԱՆԻ ՄԸ ԽՈՍՔ ԱԼ

Այս Հատորին Առթիւ



ՆԶՊԵՍ 1904ին մեր նոր հրատարակած գործին, առաջերան աշխ որ ԿԱՐԻՆ յառաջարանին Բ. հատուածովը ծրագրած էինք, վե՛րջապէս չուրջ երեք տարի ետքը, ահա ի լոյս կ'ընծայենք նաև անոր Բ. հատորը, որ կը պարունակէ կնոջական արտաքին ու առանին ամէն տեսակ հագուստները ձեւելու և կարելու մեր առանձնայատուկ ու դասական մէժոտը :

Անոնք որ մեր գործին բազմակողմանի դժուարութիւններուն վրայ մօտէն գաղափար չունին, թերեւս պիտի մեղադրեն որ սոյն հատորն ուշ հրատարակուեցաւ. մինչդեռ երեք տարին շատ կարճ ժամանակ մ'էր բաղդատմամբ գործին ստուար պարունակութեանը՝ զոր մեր տիւ և գիշեր անդուլ աշխատութիւնը միայն կրցաւ ի գլուխ հանել :

Բայց, ներկայ գործին բովանդակութեանը վրայ խօսելէ առաջ՝ աւագ պարտականութիւն կը համարինք Ա. հատորին հրատարակուելէն քիչ վերջը տեսնուած երկու գրախօսականներու հեղինակներուն հրապարակաւ մատուցանելիք մեր չնորհակալութիւնները, որ թէւ երեք տարի վերջ, այլ սակայն չենք կարծեր նուազ յարգանք մ'ըրած ըլլալ հանդէպ մեր երկու պատուական բարեկամներուն :

Նախ ենովք էֆ. Արմէնի որ, Բիւրակն գրական շաբաթաթերթին 6 նոյեմբերի 45 թիւին մէջ, «ՀԱՄԵՍ ԴԵՄՔԵՐ» . —

Մելքոն Գալինսկը» խորագրով՝ իր ձկուն ու ներկուռ ոճովին երկու էջ նույիրած էր, որով մեզ ու մեր գործերը կը ներկայացնէր Բիւրակնի ընթերցողներուն՝ զմեզ շառագունելու աստիճան դըր-ուատելով ու համեստութեան քողէն մերկացնելով։ Մեր աշխա-տութիւնները մօտէն տեսնելէ վերջ, իր գնահատելու զմայլումը յայտնելով սապէս կ'վերջացնէ յօդուածը «Ու ասոր համար է որ, ուզեցի, ինքնամփոփի համեստ կեղեւի մը մէջ պարուրուած իր մթնոլորտէն դուրս բերել դէմքը մէկու մը՝ որ անստգիւտ հերոս մըն է ձեռներեցութեան, կորովի, յարատեւութեան, յանձնա-պատան ջանքերու, որոնցմով ան կրցած է երեակ արուեստնե-րու մէջ հրաշալիքներ արտադրել, օժանդակութեամբը իր հազ-ուագիւտ տաղանգին ու սուր իմացականութեանը»։

Եթառյ Արշակ էֆ. Ալպօյաճեանի որ Բիւզանդիոնի մէջ 1904
Դեկտեմբեր 15էն սկսեալ (թիւ 2511, 12, 13 և 15) «ԿԱՆԱՅՑ
ՀՈՄՍՈՐ» վերնագիրը կրող և թերթին գրեթէ ամբողջ առաջին
երեսները գրաւած ընդարձակ գրախօսականով՝ Զեւն ու Կարը ի-
գական սեպին համար ո՞րքան կարեւոր ու Էական գիտելիք մ'ը-
լալը պարզելէ ետք, մտած է մեր գործին մէջ, և սկիզբէն մինչև
վերջ մանրակրկիտ զննութեամբ ու խղճարէն պրատելով՝ աշ-
քառու կէտերն անաշառ բովէ մը կ'անցնէ ու տեղ տեղ արտա-
տառումներ կ'ընէ, և միենոյն ատեն առանց մոռնալու գործին
գժուարագոյն կողմերն ալ մատնանիշ բնել, կ'յարէ «Մ. Գալէն-
տէրեան էֆ. իր 25 տարի գասախօսութիւններով՝ առանց վհա-
տելու ջանացած է սոյն(*) գաղափարին ձգտիլ և նոյն իսկ բան
մը զոհած է իր երջանկութենէն և կեանքէն, տեսնելու համար իր
գործին տարածումն որ իրեն համար սեւեռեալ գաղափար մը ե-
ղած է: Այն փորձը զոր ինքն ըրած է, գնահատելու կարողու-
թենէն զուրկ ժողովուրդի մը մէջ, շատ սուղի նստած է իրեն, և
այսպէսով զործածած է նոյն իսկ «ի վեաս իր անձին», մինչ իրը
վկայեալ մեքենագէտ և բոլոր ձեռարուեստներու արտակարգ
յարմարութեամբ, օժտուած անձ, շատ դիւրաւ ապրուստ մը և ա-
նուն մը պիտի կարենար շահիլ արհեստաւորներու շրջանակի մը
մէջ: Գալէնտէրեան չէ ըրած այն բանը և ինքինքը նուիրած

(*) «Զեւի ու կարի ու
կ'ուզէ Ալպօյանեան էֆ.»

ձեւագիտութեան գործին տարօրինակ յամառութեամբ մը որ ապչեցուցիչ ըլլալու աստիճան տոկուն կամք մունենալ կ'ենթադրէ՝ Մտածեցէք որ, իր գաղափարները պատկերացնելու կարող փորագրիչ չգտնելու երկիւզով կամ մտածելով թէ մի՛ գուցէ չկարենայ խօսք հասկցնել վիմագրիչներուն՝ իր հիմնական և գլխաւոր նպատակին հասնելու համար կատարելապէս իւրացուցած է վիմագրութեան դժուարին եւ նուրբ արդեւսն և իր բոլոր հատարակութեանց պատկերներն ինքը կը փորագրէ քարի վրայ կտարեալ ճշգութեամբ և ծայրայեղ ու չափագանցեալ ըսուելու աստիճան սոսկալի նրախղճութեամբ մը չափերու համեմատութիւնն պահելով։ Եւ անոնք որ մօտէն տեսած են նուրբ վիմագրութեան մը զժուարութիւնները, շուտով պիտի ըմբռնեն թէ Գալէնտէրեան ի՞նչ տաժանելի աշխատութեանց կ'ենթարկէ իր անձը լոկ ձեւագիտութիւնը ժողովուրդին մէջ տարածուած տեսնելու համար։ Եւ քիչ մը վարն ալ կը յարէ «Գալէնտէրեանի գործին մէջ գործադրութեան միջոցները թէ՛ բազմաթիւ են և թէ առանձնայատուկ։ Մէթոտին խնդրին քով ճաշակի և վայելչութեան խնդիր մը պիտի գտնէք, հոն ուր գեղարուեստ միայն կ'փնտոէք, պատմական ծանօթութեան մը պիտի հանդպիք և զուտ արուեստագիտութեան բաժինի մը առընթեր նոյնքան ալ զուտ բանասիրական նիւթեր պիտի գտնէք։ Եւ ասոնք այնքան իրարու մէջ աղուցիկ կերպով մը իրարու մօտ եկած են որ տարբազագրութեան մը ենթարկել գրէթէ անհրաժեշտ կը դառնայ։ Արդէն նիւթն ինքնին բազագրեալ գործ մ'է, վասնզի թէ՛ զիտուրին մը և թէ արուեստ մ'է»։

Բայց շառյլուած այս գովեստները չէ որ մեզ կը շահագրբ-
գըռեն, ա'յլ, աւելի մեր գործին Տկար կողմերը մատնանիշուած
տեսնելը: Եւ եթէ տեղի անձկութիւնը նկատողութեան շառնէինք
կ'արժէր որ Ալայօյածեան էֆ.ի մէջ բերած բոլոր տեսութիւններն
արտատպելով՝ անոնց վրայ աւելցնէինք նաև մեր ըմբռնած տե-
սակէտը: ուստի պիտի բաւականանանք քանի մը գլխաւորներուն
միայն պատասխանել: Մեր գլ.քին քանի մը հատուածներուն
ինենուայց ըլլալուն վրայ տարակոյս կ'յայտնէ: և կ'ըսէ «Թէն
պատկերները այնքան խղճամիտ եղանակով գծուած են որ կըր-
նան մեծ դիւրութիւններ ընծայել ինքնիրեն սորվիլ ուզողներուն,

բաւ է որ անոնք համբերատար հոգի ունենան՝ գրուածքը տող առ տող բաղդատելու համար գծուած պատկերներուն հետո Բայց տեղեր կան ուր պատկերն անբաւական է և կենդանի բարբառն անհրաժեշտ: Այսպէս, (էջ 64) բնական մեջքը բացատրելու համար բաւական տեղ զոհուած է, բայց հարկ է ըսել թէ կարելի չէ եղած որոշ կերպով բացատրել»: Այս նկատումներուն մէջ շատ իրաւունք ունի Ալպօյաճեան էֆ., որովհետեւ նոյն հրահանգին տպագրական փորձը սրբագրելու ժամանակ, մեր ալ ուշադրութենէն վրիպած է գրաշարին ձեռագրին վրայէն երեք տող ցաթկած ըլլալը, ինչպէս նաև այս կարգի քանի մը կարեւոր վրիպակներն ալ մեր կողմէ տեսնուած ըլլալով, նշանակեցինք սոյն հատորին վերջը:

Ալպօյաճեան էֆ. մեր երեք հատորներուն պարունակութեան կարգն ալ նկատելով կ'ըսէ. « Խսկ Գ. հատորին կ'վերապահուին երկու սեռի ճերմակեղէններուն, ինչպէս նաեւ երախայի տարազներուն ամբողջ շարքը, Այս դասակարգութեամբ դժուարագոյնէն դէպի դիւրագոյնը կ'իջնէ, Գալէնտէրեան, մինչդեռ տրամաբանական կարգը կ'պահանջէր ճիշտ հակառակը: Այն ատեն ուսուցումն ա'լ աւելի պիտի դիւրանար և շատ պարզ գծերով կազմը ուած հագուստներէն սկսելով է որ ուսանողուհին պիտի դիմէր դէպի ամէնէն կնճուտ ձեւերը՝ որք հիմա մէկէն ի մէկ կ'ներկայացուին: Բայց այս հակադարձ դրութիւնն ընդունին իր պահան ունի, որ է ցուցամոլութիւն և անհամբերութիւնը »: Եւ կը յաւելու, « Ուստի Գալէնտէրեան կարճ ճամբան գտած ըլլալ կը կարծէ, սկսելով անկէ որ շլացուցիչ և փայլուն է »:

Մեր անշահախնդիր ոգին արդէն ծանօթ ըլլալով, « շլացուցիչ » ը և « փոյլուն » ը կ'մերժենք, ինչպէս որ « ծնողքներ » ու, « խնամակալներ » ու և « հոգաբարձուներ » ու քմահաճոյքներուն գոհացում տալու գաղափարն ալ միշտ մերժած ենք:

Շուրջ 30 տարուան ժամանակամիջոցի փորձառութեան չնորհիւ մեր ձեռք բերած սկզբունքին կը հետեւինք, որ է ՄԻԱԿԵՐՊ ՏԻՊԱՐԻ ԴՐՈՒԹԻՒՆՔ, այսինքն իրանազգեստին տիպարով ձեւել ուսերէն վար իջնող բոլոր արտաքին հազուստները, փոխանակ ուրիշ հեղինակաւոր վարպետներուն ի գործ դրած մէթոտին նըման՝ ամէն տարրեր անուն կրող արտաքին հազուստին համար

ձեւագծելու տարրեր եղանակներ յօրինել: Այս կերպով՝ գրեթէ անկարելի պիտի ըլլար հագուստ ձեւելը դասական եղանակի մը ներքեւ առնել:

Նախ որ ամէն մէկ տեսակ հագուստին ձեւագծելը մէկ երկու անգամէն սորվեցնել անհնարին է. և երկրորդ՝ անվերջանալի գործ մը պիտի դառնար ան, քանի որ նորաձեւութիւնն օրն օրին նոր անուններով հագուստի զանազան ձեւեր կը ներկայացնէ. մինչդեռ մենք այս ամէնը կ'կերտենք իրԱՆԱԶԳԻԵՍՏԻՆ ՏԻՊԱՐՆԵՐՈՒՎԸ:

Առաջին ակնարկով՝ իրաւ է թէ « դժուարագոյնէն դէպի գիւրագոյնը կ'իջնենք », որովհետեւ տակաւին չէր հրատարակուած մեր գործին ա'յն մասը, որուն մէջ պիտի տեսնուէր թէ տիպարներն ինչ կերպով կ'վարենք այս կամ այն հագուստը ձեւելու համար: Միւս կողմէ բաձարձակապէս անկարելի է որ շապիկին, քոթանակին, սուկանին, ուսարկուին, մեկնոցին, նափորտին, և լն. տիպարները կպչուն իրանազգեստի վերածուին. բայց ընդհակառակն՝ իրանազգեստին տիպարներովը կ'շինուին անոնց բոլորն ալ, որոնք սոյն հատորին մէջ մանրամատսնօրէն ապացուցուած են: Միայն ուսուցիչը զօրաւոր կամքով մը ջանալու է միանգամ ընդմիշտ իրանազգեստին չափերն ու զայն ձեւագծելու եղանակն աշակերտին մտքին մէջ հիմնապէս զետեղել. ա'լ անկէ վերջ ուսունողն իսկ պիտի տեսնէ որ տարրեր անուններով աւանդուած հագուստներուն ձեւերը ՄԻՃՏ Կ'ԲԽԻՆ ԻՐԱՆԱԶԳԻԵՍՏԻՆ:

Խսկ Ալպօյաճեան էֆ. շատ իրաւունք ունի երբ կ'ըսէ « Ասոր մէկ ուրիշ պատճառն ալ վարժարաններու մէջ պէտք եղածին չափ ձեւի ու կարի ժամանակ յատկացած չըլլալն է » ու մէկուկէս սիւնակով կ'ծանրանայ այս կէտին վրայ. ինչպէս որ մենք ալ թէ, մեր գործերուն մէջ և թէ՝ Սուրբանդակ օրաթերթի 1606, 1619 և 1647 թիւերով նոյն գաղափարը պարզած ենք:

Երկրաչափական գծերուն վրայ ալ խօսելով կ'ըսէ « Մեզի համար անսովոր թուեցան ժեղ հորիզոնական (էջ 21), խոսոր ուղղահայեաց (էջ 34, 38) » ը (ստորագծուած):

Ասոնք գործածած ենք ՀԻՄՆԿԻԳԾԻՆ ՀԵՏ բառերն յապաւելու համար որպէս զի շփոթ նախազառութիւններ չկազմուի: Եւ կ'յաւելու « նոյնպէս երկրաչափական ճշութեան հակառակ է եր-

կու գծերով անուանել գիծ մը, երբ երկու որոշ գիծ չունինք ի ձեռին»:

Իրաւ է թէ ձեւցով քաշուած հորիզոնական և ուղղահայեաց գծերուն միացած անկիւնը կ'կոչուի Ա., հորիզոնական գծին վարի ծայրը՝ որ անորոշ սահման մունի՝ կ'անուանուի Ք (X) և ուղղահայեացին ծայրը 0 (Z), որոնք անծանօթներն են, ու յետոյ պէտք է ըսէինք, — Ա. կետեն Ա.-Ք գծին վրայ իջնելով կ'եւանակենք առաջին չափը, որ է 36 հարմեդ՝ որով կ'հաստատուի Բ կետը, — ևն Բայց մեր տախտակներն այնքան խճողուած են, որ չէինք կրնար հիմնագծերուն ծայրերը պէտքէն աւելի շարունակել ու անոնց ալ մէյ մէկ տառ զոհել։ Այս կերպով մեր միակ սկզբունքն եղած է երկրաչափական կնճռոտ կիրառութիւններն համառօտել։

«Գալով գործին դասակարգութեանը» կ'շարունակէ Ալպօյաձեան էֆ. «թերեւս Ա. հատորը Գ. հատոր ըլլալու սահմանուած էր, ինչպէս վերը ցոյց տուինք» և ապա կ'յարէ «բայց այս առաջին հատորն ինքն իր մէջ խնամով դասակարգուած կրնանք համարել։ Միայն իրը դիտողութիւն սա չափը մատնանիշ կ'ընենք թէ (էջ 16) չափառութեան վրայ չորս կարեւոր զիտելիքներ ուղրուած են որոնց մէջ կ'խօսուի Զրդ, Յրդ և այլն չափերու վրայ, երբ տակաւին բացատրուած չէ թէ ի՞նչ են այդ չափերն և ի՞նչ կ'նշանակեն։ Այդ հատուածը կ'երեւի թէ սխալմամբ կանխած է Ե., Զ. և Է. դասերն որոնցմէ յետոյ պէտք պիտի ըլլար դնել զայն»։

Դիտողութեան առնուած այն հատուածը որ Ա. հատորի Դ. դասին (էջ 15) շարունակութիւնն է. իրանազգեստին չափերուն քանակութիւնը զրուած և սահմաններն ալ արուած են. ուստի իր ակնարկած չորս գիտելիքներն ուրիշ բան չեն, բայց եթէ Չափառութենէ առաջ՝ անոնց յարակից պարագաներուն վրայ կանխաւ տրուած նախագիտելիքներ։

Ալպօյաձեան էֆ. Գ. յօդուածով սքանչելիօրէն կ'բացատրէ մեր յօրինած ԱՆԹԱՇԵՐ բառը՝ մէկ սիւնակի մէջ. բայց միւս կողմէ ալ գնդասեղի մեզմ խայթուածներով ուշադրութիւն կ'հրաւիրէ կարգ մը բառերու առումին, կրկնութիւններուն ու բարդ բառեր կազմելու մասին։ «Այսպէս, Գալէնտէր բնաւ չընդունիր սեղմիրան բառին գործածութիւնը» կ'ըսէ, «որ իրաւ է թէ սխալ է, որ

իրաւ է թէ անոր բուն նպատակը ցոյց չիտար, որ բնաւ պաշտօնին հետ համապատասխան չէ, բայց սա մեծ առաւելութիւնն ունի որ ժողովուրդէն ընդունուած և ամէն դասակարգի մէջ գործածուիլ սկսած է։ Մենք համամիտ ենք իրեն հետ որ պաշտօնի և կիրառութեան, ինչպէս նաեւ լեզուին բառակազմութեան օրինաց տեսակէտովը սենամբարձ բառն աւելի ճիշտ է, բայց շատ դժուար բան է ընդդիմանալ սխալի մը որ նոր իրազործուած է»։

Ինչպէս յայտնի է, նորակերտ բառերը դասագրքերու միջոցաւ չէ՝ որ կ'ժողովրդականանան, այլ լրագրութեամբ, ու երբ գրագէտ մը միեւնոյն բառը մեզմէ վերջը՝ տարբեր ձեւով մը կը կերտէ, յանցանքը մերն է թէ օրագրողներուն որ գոնէ փոքր զոհողութիւն մը չեն ըներ մասնագիտական գործերուն բառացուցակներն աչքէ անցնելու։

Սեղմիրան բառը տակաւին չկերտուած՝ մենք արդէն սենամբարձ կոչած էինք զայն. հետեւապէս մեր հարազատ զաւակը չէինք կրնար լքեր և ուրիշնը որդեգրել։

Նմանածեւ բառերն ալ գործածեցինք քանի որ արդէն լեզուին մէջ գոյութիւն ունէին, չուզեցինք որ կարծուի թէ անտեսած ենք զանոնք. օրինակ. Տակարգել մակնրու, Ամրավերարիու և դամասկեան վերարկու, ևայլն։

«Նոյնպէս մեր միաքը տարօրինակ հակասութեան և խիստ մեծ վարանումի մէջ կ'մայ» կ'աւելցնէ, «Երբ Ֆրանսերէն ուու բառը կ'տեսնենք քրան, կանեփեայ կտաւ, կուսք, սպիտակ կանեփեայ կտաւ, ոսայն կտաւ, բառերուն դէմ միօրինակարար»։

Որոշէնտեւ Ֆրանսերէնի ծանօթ եղաներուն յայտնի է թէ ուու բառն անխտիր կ'գործածուի բոլոր քթանէ պատրաստուած նիւթերուն, ըլլայ ամէնէն նուրբ շապիկցու քթանն և ըլլայ նաւերուն առագաստցու քթանը։

Ինչպէս Ալպօյաձեան էֆ. ալ իր Դ. յօդուածի Յըրդ սիւնակին սկըզբը պարծանքով կ'ըսէ «Նոյնպէս մեր լեզուն աւելի լաւ կ'ստորածանէ ինչ որ Ֆրանսացին մէկ բառով (hanche) ընդհանուր առմամբ կ'հասկնայ»։ Մենք ունինք. Սնակուս=Թլակուս. Ազինբ=Բարձ=Սրունք, Ազր=Երան=Երանք, Երասանք բառեր որոնք իրենց զատ և որոշ տեղերն ունին մարմնոյն վրայ»։

Գալով նոր բառեր կերտել կամ բարդելուն, արդէն ԱԴԱՄԻ

յառաջարանովն ըստած էինք ու հիմա ալ կ'կրկնենք թէ մենք յաւակնութիւն չունինք բանգէտ ձեւանալով բառեր կերտելու ծանծաղամտութեան, այլ ինչպէս ենովք էֆ. Արմէն ըստած է «իր նախորդը չէ ունեցած այս գործը զոր գլուխ հանելու համար ոչինչ աշխատութիւն, տկար հեղինակութիւն մը, և յարատեւութեան ու ձեռներէցութեան պղտիկ ոգի մը չէ՝ որ կը պահանջուի, քանի որ հոն ամէն բան առաջ եկած և հնարուած է ոչինչեն, մէջտեղ ելլելու համար այդ բոլորովին նոր աշխատութիւնը»:

Իրօք առաջին անգամ ըլլալով մասնագիտական ճիշդ մը՝ այն է գերձակութիւնը, որ զանազան զիտութեանց հետ առնչութիւն ունի, պիտի ժողովրդականացնէինք՝ արհեստագիտական իրերը գրի առնելով ու բացատրելով. և միանգամայն զայն պիտի վերածէինք դաստկան զրութեան. Եւ երեւակայելու է շուրջ 30 տարի առաջուան մեր վիճակը:

Առաջին ակնարկով դէմերնիս կ'ցցուի հագուստին կոնակի մասը, խելահասներու կ'հարցնենք թէ — ի՞նչ կ'ըսեն առոր, — «Այնայ», կ'պատասխանեն: — Սա՛ քովի փոքրիկ կտորին ի՞նչ կ'ըսեն, — «Այնային լովի կտորը»: — Շնորհակալ ենք, ա՛լ կ'բաւէ, կ'ըսենք ու գործի կ'սկսինք: Եւ այնան կ'կնքենք ՅԵՏՍՈՒՄՈՍ և ի կարգին ԿՈՂԱՄԱՍ և ԱՌԱՋԱՄԱՍ ու երեքին միութիւնն ալ ԻՐԱՆԱԶԴԻԵՍՏ:

Կ'առնենք նորածին յետսամասը ձեռքերնիս, շուրջն ակնարկ մը կ'նետենք ու կ'տեսնենք որ վեց հատուածակողմ և վեց ալ անկիւն ունի. պո՞ս՞ո՞ւ, միայն այս կտորին վրայ 12 բառ եւս պէտք է: Կե՛ցէք բառարանը նայինք. բայց ո՞ր բառարանը, տակաւին ո՞չ նորայր կար, ո՞չ նուպար և ո՞չ ալ Արուեսից ու գեղեցիկ դպրութեանցը: (Իբր թէ անոնք գրած ըլլային): Կե՛ցէք, մէկ անկիւնը գտանք՝ ծոծրակ, ծոծրակ հէ՛, ծոծրակ, այո՛, շատ աղուոր է՝ ծոծրակ. Գործը մնաց 11 բառի, — largeur du haut du dosին ի՞նչ ըսենք. ի՞նչ ըսենք... հա՛մ ըսենք—հա՛մ, յետամասին օձիքը. չե՛ղաւ, օձիքը վերի կտորն է. — յետամասին պարանո՞ց՝ պարան անցնելիք տեղ, մենք անսառն չե՛նք, դարձեալ չեղաւ. — յետամասին վիզը, ո՞չ յետամասին նիտը, ո՞չ, յետամասին վերի լայնութիւնը, այս ալ Ֆրանսերէնին ճիշտ բառաւ կան թարգմանութիւնն է. — եղա՞ւ, — շա՞տ ալ աղուոր եղաւ.

ուրեմն անով նախադասութիւն մը կազմենք, — Յետամասին վերի լայնութիւնը լայն եղած ատեն, — ի՞նչ ըսել է. — Երի յետամասին վերի լայնութիւնը բարձր եղած ըլլայ, — . . . Ահա ասոնց նման դեռ շատ մը որոճումներէ ետք՝ կ'անուանենք ԿՌՆԱԾԱԳ, ու այսպէս ալ ԹԻԿՆԱՆԿԻԻՆ, ՈՒՍԱՆԿԻԻՆ, ԹԻԿՆԱԾԱԳ, ԹԻԿՆԱԾԱԳ. Կլն: Ուրեմն, ակներեւ է թէ ասոնք մէկ օրուան մէջ ծնած ու ընտրուած բառեր չեն, եւ հետեւ արար կոչուած են լեզուին հետ անբաժան մնայու:

Բարքերու համար օտարամոլ ըլլալը թերեւս ներուի, բայց բառերու հետ խաղալը չենք հասկնար: Մեր տոհմային պատուական ՏԻԳ բառը կ'ձգենք ու նախաբազուկը կ'ընդգրկենք, մինչդեռ նախնեաց մատենագրութեան մէջ գործածուած կ'տեսնենք «Ապարանջանսն՝ արմկանց վերեւ զտիգսն արկանէին»:

Ալպօյաձեան էֆ, կ'ուզէ որ ԱՐՄԱԿԱՐ ըսելու տեղ արմուկին կարը սսէինք ու ԾՂԱԿԱՐԻԻն տեղ ալ ծղիին կարը: Բառերու այս կերպով գործածութիւնը նախադասութեան մէջ արմուկին կարին ու ծղիին կարին պիտի ըլլային՝ փոխանակ ԱՐՄԱԿԱՐԻԻն ՈՒ ԾՂԱԿԱՐԻԻն: Ինչպէս նաեւ ՏԻԳՈՒՍՅՈԴ անուանելու տեղ, տիգին եւ ուսին յօդը ըսէինք, չարագրութեան մէջ պիտի ըլլար ուսին անկիւնը տիգին եւ ուսին յօդին անկիւնեն, փոխանակ ՈՒՍԱՆԿԻԻՆԸ ՏԻԳՈՒՍՅՈԴին ըսելու, որով իններու տարափ մ'առաջ պիտի գար և իմաստի ալ մթութիւն: Իրաւ է թէ Միջին Բ. դասարանի մը մէջ երբ ՏԻԳՈՒՍՅՈԴ բառը կ'արտասանուի: աշակերտաւէիք ապշած կը նային մեզի թէ արդեօք Հոթենթերէն խօսիլ կ'սկսինք, բայց վայրկեան մը միայն կ'տեւէ այս: Օրովհետեւ նիւթին բացատրութիւնը կ'թողունք և ուշագրութիւննին կ'հրաւիրենք ՏԻԳՈՒՍՅՈԴ բառին՝ վրայ. ծղիին վարի մասը ցուցնելով՝ ի՞նչ կ'ըսեն առոր, կ'հարցնենք: «Բազուկ», կ'պօռան ամէնը մէկանց: Վերի մասը ցուցնելով, — Ասոր ի՞նչ կ'ըսեն, — «Նախաբազուկ» — Ո՞չ աղջիկներս, սիսալ սորված էք: այդ մեր զասագիրք չենողներուն ծուլութենէն յառաջ եկած բառ մ'է որ Ֆրանսերէն անանի երան, նախաբազուկ թարգմաներ են փոխանակ տիգ բառին:

— Ուսը ո՞ր է, կ'հարցնենք, ու ձեռքերնին՝ կ'դնեն իրենց ուսերուն վրայ: — Լա՛ւ կ'ըսենք: — Յօդ ի՞նչ ըսել է: այս ալ մատերնուն վրայ կ'ցուցնեն: — Հիմակ ինձ նայեցէք, ըսելով

կանցնինք գրատախտակին առջեւ և կ'գրենք Տիգ ՈՒՍ ՅՕԴ ու կ'հարցնենք թէ — Ա.յժմ կ'հասկնա՞ք այս բառերուն նշանակութիւնը, ընդհանուր «Ա.յո՛» մը կ'լսո՞ի: — Լաւ ուրեմն, զիտէ՞ք թէ ես ի՞նչ ճարպիկութիւն ի գործ դրած եմ. պարզապէս այս երեք բառերն իրար կցելով զրեր եմ և եղեր է ՏիգՈՒՍՅՕԴ:

Ահա սոյն համբերատար բացատրութենէն վերջ, այլ եւս տղան սորված է բառը: Անշուշտ երկայն չպիտի տեւէ մեր կերտած բառերուն հասկնալիութիւնը: քառորդ դար մ'եւս, ու այն ատենուան մամիկները՝ որ այսօրուան աշակերտուհներն էին, ՏիգՈՒՍՅՕԴն ու ԿՈՆԱԾԱԴՐԸ հաց ու զուր ըսելու պէս իւրացուցած պիտի ըլլան, որուն օրինակը տեսած ենք արդէն:

Օր մը փողոցէ մը անցած միջոցիս պատուհանը մամիկ մը տեսայ, որ խօսքը սենեակին խորն եղողին ուղղելով՝ «Կողամասը ծուռ մ'առներ » կ'ըսէր. — Անշուշտ թոռնէն սորված րլլալու էր. — Ինչ որ մեզի գոհացուցիչ ու քաղցր վարձատրութիւն մ'էր, որուն վրայ հպարտութեամբ քայլերս շարունակեցի՝ կ'երտած բառերս սկսած են ժողովուրդանանալ, մենախօսելով:

Եւ քանի որ կ'ներուի ջրկիր, գրատախտակ, պատառախաղ, եռաձայն եւն. գրել, մենք եւս լեզուի օրէնքին դէմ մեղանջոծ չենք ըլլար ԱՐՄԱԿԱՐ, ՇՂԱԿԱՐ, ՍԵՂՄԵՐԻԶ, ԳՐՊԱՆԱՓԵՂԿ, Եւայլն ըսելով :

Այս ամէնէն վերջ, կրկին չնորհակալութիւն մը Արշակ էֆ. Ալպօյաճեանի, որ իւրաւամբ չէինք սիստած կանուխէն զինքը ՄԱՆՐԱՋՆԻՆ ԽՈՒՋԱՐԿՈՒ, ԽՂՃԱՄԻՏ ՎԵՐԾԱՆՈՂ եւ ԱՆԱՋԱՌ ՅՆՆԱԴԱԿԱՏ անուանելով, և որ ամենայն համբերութեամբ հետեւած է սոյն գործի Ա. հատորին մէն մի տողին ու բառին և զատած է լաւագոյնը լաւէն: Իսկ մեզ ալ կ'ներուի անշուշտ այսքան ընդարձակ ու կնճռոտ գործի մը մէջ մարդկօրէն սպրդած փոքր սիսալներուն:



Վերադառնանք այժմ սոյն հատորին բովանդակութեան, որ Ա. հատորին շարունակութիւնն ըլլալով, 48 վիմագիր տախտակ-ներու մէջ կ'պարունակէ 595է աւելի օրինակներ ու նկարներ, և

կ'ներկայանցէ կնոջական արտաքին ու առտնին հագուստներու բազմաթիւ ձեւերով պէսպիսութիւններ, ինչպէս՝ Արդուզարդի սուկաններ, գօսիներ, օձիններ, զարդօձիններ, բարիկներ, «պոկրո»ներ, կպչուն իրանազգեսներ, բովկե՛ն կոնամէջէն ու շեղ կոնկուելի իրանազգեսներ, բազմարի թեւեր, բանկոնով իրանազգեսներ, բանկոններ ու բանկոնակներ, պախճաւանդներ, «բուեսկ» ու «ամբիո» շրջազգեսներ, եղանցներ, լեհազգեսներ, պարեզօններ, «գոփնօլին», բիկոնցներ ու բիկոնցակներ, Ամազոնազգես, արտազգեսներ ու բիկոնազգեսներ, ուսարկուններ, նափորսներ, մեկնոցներ, դերձակակերպ կարելու իրանազգներ, խցազգեսներ, ալգազգեսներ, մուշակահանդերձներ, կրկնակար-արտազգեսներ, եւայլն եւայլն:

Բոլոր ասոնց ձեւել և կարելու հրահանգները վեց գլուխներով բացատրած ենք այսքան սեղմ ու կուռ գործի մը մէջ՝ հնարեղած պայմաններով: Մանաւանդ աչքով շօշափելի սոյն 595 օրինակներն ու նկարները քանի մը պատմիկ բազմապատկուած են բացատրութեանց մէջ՝ որոնք այս կամ այն ձեւափոխութիւններով տարրեր ձեւեր ունենալու մեծ առաւելութիւնն ալ կ'ընծայեն:

Իսկ այս ամէնուն վրայ կատարեալ գաղափար մ'ունենալու համար բաւական է նիւթերուն ցանկն ուշադրութեամբ աչքէ անցնել:

Բունքնք նաեւ թէ, սոյն հատորն առաջին անգամ թղթատղին թերեւս զարմանք պատճառէ կարգ մը նորաձեւութենէ ինկած հագուստներուն երեւումը, ինչպէս են ԼԵՀԱԶԳԵՍ, ՊԱՐԵԳՕՏ, ՄԵԿՆՈՑ, «ԺԱԲՈՆէԶ», «ԳՈՒԽՈԼԻՆ»: և զուցէ աւելորդ համարի զանոնք: Բայց գիտնալ պէտք է թէ, նպատակնիս մեր գործերն օրուան նորաձեւութիւններովը զարդարել չէ, այլ հագուստ ձեւելու եղանակն ուսուցանել, և ինչպէս ի. գլխու Ա. գասով խօսած ենք, — ՆՈՐԱԶԵԽՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԴԱՐՁ ՇՐՋԱՆՆԵՐ ՈՒՆԻ, — Ուստի նկատողութեան առնելով այս պարագան՝ ջանացինք մինչեւ այսօր նորաձեւութեան շրջաններուն մէջ ծանօթեղող հագուստներուն բոլոր ձեւերը ներկայացնել: որպէսպի անոնց վերերեւման ժամանակ մեր մէթոտին հետեւողը կամ նորավարժ աշակերտուհին անել ճամբու մը մէջ չգտնուի:

Միակ անպատեհութիւնն որ եղաւ, տախտակներուն թիւը չբազմացնելու համար, մէն մի նիւթը չկրցինք միեւնոյն շարքի

վրայ դասաւորել, այլ միակ նպատակնիս եղաւ տեղի խնայողութիւնը, որով քեւերը, օձիքները, զօսիները, եղանցքները և «պօիեր»-ները ցրուած վիճակ մը ունեցան։ Ուստի ասիկա բառնալու համար նիւթերուն սովորական ընդհանուր ցանկէն զատ՝ աւելցուցինք նաև դասակարգուած ցանկ մը, ուր դիմողը շատ դիւրաւ պիտի հասկնայ թէ անոնք ո՞ր տախտակներուն մէջ կ'գտնուին և ո՞ր դասերուն մէջ բացատրուած են։

Ամէնէն գերջ սրտնեղիչ պարագայ մը կայ զոր չենք կրնար զանց առնել։ Ոմանք մեր գործերը սուզ կ'գտնեն, և այս որակումը կ'ըլլայ անշուշտ այն կարգի անձանց կողմէ, որոնք դաշտափար չունին հրատարակչական գործերու վրայ, — ըւլայ տեղական թէ Եւրոպական, — և արհեստագիտական գիրքերու արժէքը կ'բազդատեն Քերական, Ընթերցարան կամ Վիպասանութեան հետ Մինչդեռ օտար լեզուով հրատարակուած նմանօրինակ երկեր՝ որոնք նիւթի և մէթոտի տեսակէտով ալ անհունապէս վար կ'մնան մերինէն, 8, 10, 20, 30 ֆուանքի անսովոր գիներով կ'ծախուին, թողունք տակաւին այն առաւելութիւնը՝ որ մէն մի անդամին 10—20 հազար օրինակ կ'տպագրուին անոնք։

Այս ալ անշուշտ գիտութեան զարգացումը մեր մէջ նուազ ըլլալէն առաջ կուգայ։ Հանրութիւնը գոնէ նկատողութեան չառներ թէ շատ անգամ 2 թերթ նուագի խաղերը 2, 3 և 5 ֆուանք արժէք կ'ունենան, և երբ մենք մեր աչքին լոյսը վրայ տալով՝ այսքան ստուար ու բազմաշխատ գործի մը 30—60 դահեկանի չնչին գին մը կ'որոշենք։

«Սուլի է» կ'ըսեն։

ՄԵԼՔԹԱՆ ԳԱԼԻՆՑԵՐԾԱՆ



ՆԱԽՆԱԿԱՆ ՀՐԱՅԱՆԳՆԵՐ

Արդի կնոջական հազուսներուն դերձակութեան համար անհրաժեշտ գործիներն ու զանոնք գործածելու կերպը



ՆԱԽԱԿԱՆ ՀՐԱՅԱՆԳՆԵՐ

ԱՅՃՆԻ է թէ մեր սոյն նոր գործին, այն է ԱՌԶԵՌՆ ԶԵՒ ՈՒ ԿԱՐԻՆ Ա. Հատորը՝ գրեթէ արհեստին տեսական մասը կ'կազմէ։ Հետեւաբար որքան որ անոր մէջ կարելու մասին ալբացարութիւններ տուինք, բայց անոնք հազիւքանի մը կցկառուր տեսութիւններ կը համարուին գործին ծանր պահանջումին տեսակէտովը։ Ուստի բնական է որ սոյն Բ. Հատորին մէջ աւելի պիտի ծանրանանք կարելու ձիւղին վրայ, որ ձեւելու արուեստին լրացուցիչ մասն է։ Այսօր ձեւելու և կարելու համար շատ մը գործիներու կ'կարօտինք։ Այս գործիները ճանչնալ ու զանոնք պէտք եղած տեղը գործածել գիտնալու համար ալ, ամէն ուսանող կամ հետեւող՝ մասնաւոր ծանօթութիւն ունենալու է։ Հետեւապէս մեր ներկայ հատորին դասաւորութիւնն ու ամէն մէկ հագուստի կարելու բացատրութիւնները չխճողելու համար, պատշաճ դատեցինք «ՆԱԽՆԱԿԱՆ ՀՐԱՅԱՆԳՆԵՐ» խորագրին ներքեւ բացատրել գործիներն ու անոնց գործածելու կերպը։



ԶԵՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՄՔԵՇՏ ԵՂԱԾ ԴՈՒՇԻՆԵՐ

Ա. ԳՈՐԾԱՍԵՂԱՆ. — Զեւելու համար գործասեղան մունենալու է որ 80—85 հարիւրորդամետր բարձրութիւն ունենայ, 80—100 լայնութիւն և 180 կամ 200 հարմէդ երկայնութիւն. ամէնէն լաւագոյնն է ընկուղենի ըլլալը կամ գէթ թիթի=օխլամուր, տախտակներն ալ այնպէս մը ագուցուած՝ իբր թէ միապաղաղ ըլլային:

Բ. ՔԱՆԱԿԱՆԵՐ. — Զեւոցին, այն է ուղղանկեան մասին արդէն խօսած էինք. անհրաժեշտ է ունենալ նաեւ 120 հարմէդ երկայնութեամբ ու 5 հարմէդ լայնութեամբ քանակ մ'ալ:

Գ. ՄԵԴՐԱԿԱՆ ԵՐԻՑԻՆ ՈՒ ԶԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՅՈՏԻՒՆ ՎՐԱՅ ԱՐԴԷՆ ԱԿՏՈՔ Եղած ծանօթութիւնները տուած ենք (ՏԵ՛Ս Էջ 13 և էջ 15):

Դ. ԶԱՓԱՏԵՏՐ. — Զափերը գրելու համար մասնաւոր տետր, զոր հրատարակած ենք 1887ին (Այժմ սպառած):

Ե. ՕՃԱՌ. — Կերպասներուն վրայ հազուստին ձեւը գծելու համար ամէնէն լաւագոյնն է սովորական ընտիր տեսակ օճառը, թերթ թերթ կտրուած ու չուրթը դանակի պէս հատու կերպով տաշուած, որ պէտք է շատ չոր ըլլայ:

Զ. ՄԵԴՐԱՌԴՅԱ ԿԱՄ ԿԱՒԻՃ. — Թուղթի կամ լաթեղէններու վրայ ձեւագծելու համար մասնաւոր ձեւով գունաւոր կաւիճ, կամ նորահնար սեւատողիչ: Առաջինը կ'արժէ 10—20 փարա, մինչդեռ վերջինը 5 դահեկան, գործելու մասին իրարմէ ունեցած տարբերութիւննին սա է որ, կաւիճը դիւրաբեկ է, սահուն կերպով չի գործեր ու ձեւիչին բերանն ալ կ'վնասէ. իսկ սեւատողիչը նոյն իսկ ամէն օր գործածելով, առնուազն 2 տարի կ'դիմանայ, և կաւիճին անպատեհութիւններն ալ չունի: Շուրջ 30 տարի առաջ ասոնց տեղ՝ այրած քուրայի կտորուանք կ'գործածուէր:


Է. ՏԱՇՈՂ ԳՈՐԾԻ' օնառի եւ սեւատողիչի. — Այս երկուքին գծող չուրթերն օր միշտ զանակի մը պէս նուրբ ըլլալու են, ստէպ տաշելու համար բարիկեան գործիք մը հնարուած է, որ կ'արժէ 30 զրուչ: Մինչդեռ վարժ ձեռքի մը մէջ կտրոցը կամ ձեւիչին մէկ բերանն ալ կրնայ զործիին դերը կատարել, թէեւ ոչ այնքան արագ և քիչ մ'ալ աղտոտութիւն առաջ բերելով: Մաքրասէրներուն համար կ'արժէ ՌՈՒԺԸՆԻ աս գործիէն հատ մ'ու-

նենալ, որ ամրող կեանքի մը տեւողութեանն ալ կրնայ ծառայել:

Ը. ՏԻՊԱՐՅՈՒ ԹՈՒՂԹ. — Տիպար ձեւագծելու թուղթը պիտի ըլլայ մեծ թերթ ու անդիծ, որ չփոթութիւն չպատճառէ. ոչ սահուն և ո՛չ ալ բարակ: Ամէնէն լաւն է մետաքսախառն թուղթը՝ որ ամէն առաւելութիւն ունի, միայն թէ սովորական թուղթերուն կրկինը կ'արժէ:

Թ. ԶԵՒԻՉ. — Ահա ամէնէն էականը, որ «Զեւիչ» ըսելով անցնելու չիգար: Որովհետեւ ձեւիչը մեծ դեր կը խաղայ՝ ձեւաւոր կտրուածքի և արագութեան տեսակէտերով: Գրեթէ չկայ գործի մը որ ասոր չափ բազմաթիւ տեսակներ ունենայ. բայց ո՞րն է դերձակին պատշաճողը: Այսօրուան ամէնէն վերջին կատարելագործեալը Բարիզզի F. Gallier անուն ճարտարագործը հնարած է, որուն յաջորդած է F. Fautillet et Fils որ կ'գերազանցէ բոլոր միւս երկիրներու մէջ պատրաստուածները: Դերձակներու համար շատ մեծ ձեւիչներ կան, որոնք թիւերու կարգով ալ հետզհետէ փոքրացած են. մենք անոնց վրայ չպիտի խօսինք սակայն:

Ֆրանկական ձեւիչին գլխաւոր առաւելութիւնն է պողպատին ամէնաընտիր տեսակէ ըլլալը, որ սահուն կերպով կը կտրէ ամէնէն կարծը կերպակէն մինչեւ ամէնէն բարակ ջանջիւը, և քիչ անգամ սրել տալ պէտք կ'ըլլայ: Ասոր բանիչները այնքան վայելուչ շինուած են, որ ձեռքի մատները բնաւ նեղութիւն չեն կրեր



չարժելու, և կոշտեր ալ առաջ չեն բերեր (Խնչպէս կ'երեւայ սա նկարին վրայ): Զեւելու համար 24 կամ 22 թիւերը շատ չափուոր են, փոքր աշխատութիւններու համար ալ 20 կամ 18 թիւ:

Ժ. ՓԵԱՆՈՒԱԿ. — Ծալլուող կամ հաստատուն, 18—20 թիւ:

ԿԱՐԵԼՈՒ ԳՈՐԾԻՆԵՐ

Ա. ՄԱՏՆՈՅ. — Կարելու համար երկու ձեւ մատնոց կայ՝ գազարը գոց և բաց։ Կիները գոց ձեւն իրենց յատկացուած կը կարծեն և բաց ձեւը այրերուն։ Ասի թիւը ըմբռնում մ'է։ որովհետեւ մատնոցը սեռ չունի, այլ պատշաճութիւն։ Կարելու համար բաց ձեւն է յարմարագոյնը։ Անշուշտ պիտի ըսուի թէ « ինչո՞ւ ուրեմն գոց ձեւն ալ հնարուած է »։ կ'պատասխաննք թէ—մէկը միւսին կատարելագործեալն է։ — վասն զի կիները գործասեղան (արթիկ) չեն ունեցած, այլ մասնակի աշխատութիւններ միայն՝ այն ալ իրերավարժութեամբ ձեռք բերուած, և ասոր համար անոնց մէջ կատարելութեան զարգացում ալ չէ մտած։ Հետեւարար անգամ մը որ գոց մատնոցը գոյութիւն ունեցեր է, անմիջապէս իրենց սեփականներ են՝ առանց նկատի առնելու, թէ իրերեւ արհետառը աշխատելու համար մատնոցին գոցն ու բացը ի՞նչ տարբերութիւններ ունին։ Մանաւանդ կիները մատնոցին գագաթովը կ'վարեն ասեղը, ինչ որ հիմնական սխալ մ'է։ Քանզի մատնոցը որ աջ ձեռքի միջամատը կ'դրուի, նոյն մատը դէպի ափին մէջ ծալլուելու է, ինչպէս նաեւ մատնեմատն ու ճկոյթը, և ասեղը վարելու է մատնոցին մէկ կողմովը։ Մատներուն դիրքն ու ասեղը վարելու եղանակը մասնաւոր վարժութեան կ'կարուի, որուն համար դերձակի սկսնակ աշակերտին մատնոցը դրուելիք մատը կ'կապեն ափին մէջ, որ առ նուազն 8—10 օրէն հազիւ կրնայ ընտելանալ անոր։ և այս ալ իր յատուկ բառն ունի՝ որ է զարկ բաշ։ Մինչդեռ ո՛չ մէկ աղջկան ո և է հրահանդ կ'տրուի ասոր համար, և հազուազիւտ բացառութեամբ, ամէն աղջիկ գրեթէ 5—6 տարեկան հասակէն կարելու բնական ձգտումը կ'ունենայ, ու այրերն ալ ասպետական վարմունքով մը՝ ասեղը միշտ կիներու մատներուն յատուկ գործի մը նկատած են։ Արդ, պիտի ըսուի թէ « ինչո՞ւ ուրեմն գոց մատնոցը մինչեւ հիմա կը շինուի »։

Ցայտնի է որ շատ գործ արաններ տեսակ արտադրութիւններ կ'ունենան, առանց գիտնալու թէ ինչո՞ւ կը շինեն եւ ի՞նչ բանի կ'գործածուին։ բաւական է որ իրենցմէ խնդրանք ըլլայ։ Զիկա՞ն միթէ արծաթէ, ոսկիէ ինչպէս նաեւ 150—200000

ֆր. արժող ծանրագին քարերով զարդարուած մատնոցներ, որոնք իշխանական օժիտներու մասը կազմած են, այլ սակայն կ'մնան կարի գլուխներու յատուկ խորչիկին մէջ, ու 10 փարանոց երկաթէ պարզուկ մատնոցն է որ հագուստի պճնամոլներուն ճաշակին գոհացում կուտայ։


Բ. ԱՍԵՂ. — Ասեղն ալ մատնոցին պէս երկու գլխաւոր տեսակ է, կարեն ու երկայն։ կիներն առհասարակ երկայն ասեղ կը գործածեն։ իսկ կարճը այրերու յատկացուած է, այսինքն, արհեստաւորներուն, որոնք կը ծառայեն նպատակի մը։ Բնական է թէ կարճ ասեղով դիւրին կ'կարուի, մանաւանդ նիւթին միրճել և հանելու ժամանակ չի ճոճիր ու ձեռքին մէջ ամփոփ կ'մնայ, նամանաւանդ շուտով ալ կ'ընդգրկէ մէկը միւսին հետ, ևն. ևն.։

Ասեղին թիւը աճելով կ'բարակնայ. ուստի 5 թիւ ասեղը կը գործածուի հաստ կերպասները դերակարելու, 6 թիւը բարակ բրդեղէնները և 7 թիւն ալ մետաքսեղէնները։ 7 թիւով հաստ ու բարակ բրդեղէններ կ'կարուին, 8, 9 և 10 թիւերով ալ ամէնէն բարակ նիւթերը։ Ասեղին ամէնէն յարգի տեսակը ան է որ չի ծոփի, ծայրը սուր և ծակն ալ (աչքը) երկայն բացուած կ'ըլլայ։

Գ. ԴԵՐՁԱՆ ԵՒ ԹԱԼԻԽՈՅ. — Այսօր կարի թելի բազմաթիւ տեսակներ կան ու մարդ կ'չուարի ընտրութիւն մ'ընելու. կարելու թելերը չորս կարգի կ'բաժնուին, 1. Դերակարի, 2. Մէջի հաստակ կարերու, 3. Երևան տեսնուելիք կարերու, 4. Օղակի։

1. Դերակարի համար առաջները կ'գործածէին կարժով ոլորուն գերձան (ոմանք գեռ մինչեւ այսօր), որ երկու տեսակ կ'ըլլայ. հաստ և բարակ, առ վերջինը գերձակներուն միայն ծանօթէր։ իսկ հիմա առհասարակ գուճի վրայ փաթթուած գերձաններ կ'գործածուի։ Բայց պէտք է գիտնալ թէ զերակարի համար գործածելի թելը՝ սա՛ չորս յատկութիւնները միանգամայն ունենալու է. Ա. Դիւրաբեկ ըլլալու է, որպէս զի հտնելու ժամանակ շուտով վրթի ու կերպասը չվասուի։ Բ. Ճերք չունենայ, որ հանուած ատեն կերպասին չկառչի։ Գ. Բարակ ըլլայ, որ խիտ անկուած կերպասներու վրայ ծակափկներ չբանայ։ Դ. Կակուղ ըլլայ, որ լաւ ընդգրկէ կերպասը։

Հետեւարար ամէնէն լաւագոյնը գուճի վրայ փաթթուածներն են. հաստ բրդեղէններու համար 50 միլի, բարակ բրդեղէն կեր-



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՈՅԱ ԲԻՈԼՈԳԻԿԱԿԱ ՑԱՆԿ

Ա. Ա. ՄԱՅՆԻԿԻAN
Ա. Ա. ՄԱՅՆԻԿԻAN

հաստութեամբը, և քի'չ ոլորուած։ Օղակին թելն այնպիսի չափով մը կտրելու է, որ կցելու պէտք չունենայ։
 'Տ. ԿԱՐԵ ՄԵՔԵՆԱՅ. — Ահա՝ էականը. արդ՝ չպիտի թռւենք այն կարգ մը գլխաւոր պատճառները, որոնք տակաւին 25—30 տարի առաջ կարի մեքենային դէմ հանրութեան ունեցած մասմա արդարացը ատելութիւններուն շարժառիթը եղած էին թէ «կարը կ'քակուի, կտաւը կ'ծակձկէ, հագուստին վրայ խզի կեղտ կ'ըլլայ, կերպասը կ'փոթթէ», ևն. ևն.։ Յայտնի է թէ ու վերջին 10—15 տարուան մէջ կարի մեքենաներն այնքան կատարելագործուեցան ու մասնագիտական ձեւերով շինուեցան, որ ձեռքով կարուած ամէնէն նրակերտ կարերն ալ տեղի տուին անոր։ Այսօր ամէնէն դժուարահաճ պճառէրն անգամ հագուստին մեքենայով կարուիլը բնաւ անպատճութիւն չի համարիր։ Երեւակայել պէտք է թէ կարի մեքենան դեռ 65—70 տարուան հարք մ'ըլլալով, այսօր առնուազն հազար տեսակի կ'հանգին, որոնք ո'չ միայն հասարակ թափանց կար կ'ընեն ու ամէնէն բարակ ջանջիլը՝ առանց փոթթելու կ'կարեն, այլ և օյակ ժինող, կերպ կերպ զարդասեղեն, ասդենկարեն, փակարեն և մինչեւ անգամ տեսակ տեսակ կոնակներ կարող մեքենաներ հնարուած են. որոնց մէջ անշուշտ կան ցախաւելներն ու լաւագոյններն ալ։ Ո՞րն է ուրեմն ամէնէն լաւագոյն կարի մեքենան։

Մասնագիտական տեսակէտով՝ յայտնի է թէ ներկային մէջ ամէնէն լաւագոյն կարի մեքենան Սաքսոնեայի Տրէզա քաղաքին «Սեյտէլ Նաուման» գործարանին պատրաստածներն են՝ մեքենագիտութեան ամէնէն վերջին կտարելութեամբ օժտուած։ Այս գործարանը բոլոր Եւրոպա իր տեսակին մէջ ամէնէն մեծն է, որ ունի 2500 գործաւոր և տարին 100.000 մեքենայ կ'արատագրէ՝ բազմաթիւ ձեւերով և բոլոր արուեստահանդէսներու մէջ գնահատուած է ու ոսկի շքազրամներով վարձատրուած։ Նաուման գործարանին արտադրութիւններն երկար տաեն նորոգութեան չեն կարօտիր, պարբերական խանգարումներ չեն ունենար, շատ տոկուն են ու չափազանց աժան՝ բազզատմամբ նմանօրինակ մեքենաներու. ահա այս առաւելութիւններուն համար է որ զայն կ'յանձնարարենք ժողովրդեան։

Միակ անպատճութիւնն որ կայ, սա' է թէ Նաուման գոր-

պասներու համար 70—80 թիւ և ընտիր թաւիչներու կամ մետաքս սեղէններու համար ալ 100—120 թիւ գործածելու է, ու միշտ ձերմակը։ Առաջները դերակարը մեկիկ մեկիկ կ'քակէին ու նոյն թելերը վերստին կ'գործածէին, և այսպէս շարունակաբար, մինչեւ որ ա'լ մաշէր։ Բայց, ինչպէս կ'մակաբերուի՝ դերձանը յարաւել գործածուելով հերք կ'կազմուի, որուն անպատճութիւնը ցոյց տուինք քիչ մը վերը։ (Հար՞կ է նաեւ ըսել թէ քանի մ'անգամ գործածուած թելերուն ծայրերը քանի մը բերաններ ալ այցելած կ'ըլլան։)

Շատ կարեւոր է նաեւ գիտնալ թէ դերակարին թելերը բնաւ քաշելով փրցնելու կամ բզրկաելու չէ, քանի որ աս կերպով՝ կերպասը քիչ ու շատ կ'վասառուի. այլ նախապէս ձեւիչին ծայրովը տեղ տեղ կարելու և փափկութեամբ մը հանելու է (Երկայնութեան չափը Տե՛ս հետագայ Երդ հրահանգին վերը)։

2. Մէջի կարերու բեկրք. — Ասոնց համար ալ դուժի վրայ փաթթուած տեսակները միշտ նախընտրելի են. 50էն մինչեւ 80 թիւ։ Իսկ գունաւորներու համար 50 թիւ. որովհետեւ աս վերջինները տարբեր թիւ չեն ունենար։


3. Տեսանելի կարերու համար մետախս քել։ — Արժէքաւոր կերպասներուն երեսի կամ մէջի կոզմէն տեսնուած կարերը բնականաբար մետաքս թելով կ'կարուին. Այսօր հրապարակը կարգ մը մետաքսի նմանող Եւրոպական թելեր կան, որոնք թղթէ ցպիկութեան կամ գուճերու վրայ փաթթուած են, բայց անոնք պարզապէս Ռամի ըսուած բոյսէն պատրաստուած են, հետեւապէս տոկուն չեն ու կ'գունատին. և քանի որ Լիօն պատրաստուած մետաքսը հոս չգտնուիր. լաւագոյն է տեղականը գործածել, ու րուն միակ անպատճութիւնն է կաժով ըլլալը զոր պէտք է փաթթել։

Արդ, բոլոր ձեռքով կարուած թելերուն երկայնութիւնը՝ իւրաքանչիւր կարողի կէս զրկաշափին հաւասար ըլլալու է, որ թէ՛ շուտով ել և էջ ըլլայ, թէ՛ չկնճռոտի և թէ՛ վերջաւորութիւնը չմաշի։

4. Օղարել. — Լուացուելիք հագուստներուն օղակները գերձանով կ'շինուի. իսկ միւսները մասնաւոր թելով մը, որ կ'կոչուի ողաթել՝ այն է կարի առվորական մետաքս թելին գրեթէ կրկին

ծարանին թուրքիոյ ներկայացուցիչը հանրածանօթ Մէրձանօփ վաճառատունն ըլլալով, սկզբունքն է կանխիկ վաճառելը։ Ասոր համար ալ կարժէ որ լուսագոյն իարի մեքենայ մունենալ ուղղողը, նոյն իսկ տոկոսով փոխառութիւն ընէ և նառման գործարանին մեքենան գնէ, դարձեալ շահաւոր պիտի ելլէ։ Ի՞նչպէս կ'երեւայ այս տեղ զրուած Ա. և Բ. նկարներով։

Կը մնայ այժմ գիտնալ թէ կարի մեքենաներն այսօր թիւերով ու զործի համեմատ դասաւորուած են. օրինակի համար,




Ա. Նկար

Naumann B à bras élevé || Նախկին դրութիւն, բարձրաբազուկ չերիլ ըստուածը կոչտ գործերու համար յատկացուած է. Մէտեիւմը, ինքումետիւու ու թիրանիան դերձակներու և ֆամիլի կոչուածն ալ՝ նուրբ գործերու։

Այս գլխաւոր դասաւորութենէն ետք, կարգը կուգայ հիմնական սկզբունքին, այն է ասեղին դիրքին ու կարի ընթացքին։ Արդ, ինչպէս գիտենք, երբ ու է կարի մեքենայի մը առջեւ կ'նստինք ու կ'ոկտինք աշխատիլ, գործը կ'ատանի մեզմէ դէպի դիմաց, բացի Սիսրէմ Հուիլր են Ռիլլըն ու սիլանիկօզ, եկիւյ զուոպէ կոչուած հին դրութեամբ մեքենայէն, որ

աշխատողին ձախէն դէպի աջ կողմը կ'ատանի։ Կարի մեքենային այս բազմաթիւ պէսպիսութիւններուն մէջ երկու որոշ սկզբունքներ ևս կան, այսինքն մեքենաներ կան, որոնց ասեղին ծակը աշխատողին նստած դիրքին հետ դէմ առ դէմ կ'ըլլայ (ի՞նչպէս դէմը դրուած Ա. նկարը), ու կան ալ որ ձախ կողմը (Որ է Բ. նկարը) որոնք մեքենական յօրինուածքին տարբերութենէն առաջ կուզան։ Բայց մեզի համար շահեկան պարագաներ կան զանոնք մասնաւորապէս նկատողութեան առնելու. վասն զի առաջին պա-



Բ. Նկար

Vibrante Naumann E || Նոր դրութիւն, բրրուս

րագային, երբ ասեղին ծակը մեր դէմն ըլլայ, թափանց կարերն ալ իրարու ետեւէ և ուղիղ դիրքով մը կ'շարուին. մինչդեռ երկրորդ պարագային, երբ ասեղին ծակը ձախ կողմը ըլլայ՝ թափանց կարերը խոտոր կ'կազմուին։ Թէպէտ և այս խոտորումները՝ բրդեղէն կերպասներու վրայ չեն տեսնուիր. բայց գլխաւորապէս նըշմարելի կ'ըլլան խիտ անկոււած մետաքսեղէններու և բարակաման քթաններու վրայ։ Ասոնց առաջինը կ'անոււանուի նախկին դրութիւն ու երկրորդը նոր (Տե՛ս վերը դրուած Ա. և Բ. նկարները)։ Նախկին դրութեան անպատճեռութիւնն է մեքենական յօրինուածքին

ատամնաւոր անիւներով կաղմուած ըլլալը , որով թէ՛ մեքենան չուտով կ'մաշի , թէ՛ ասեղ շատ կ'կոտրէ և թէ՛ աղմուկ կ'հանէ : Մինչեւ նոր դրութիւնն արտակեցլոններու ագուցումներով կը շարժին և մեքենագիտական կատարելութիւն մը կ'ներկայացնեն : Ասկէ զատ , նոր դրութիւնն այն առաւելութիւնն ալ ունի որ կոցին թելը , ցպակին լեցուն վիճակին մինչեւ յետին ծայրը միօրինակ ալրկումով մը կ'քակուի , իսկ հին դրութեան այն մասը պարբերաբար թոյլ ու ձիգ կուգայ . հետեւաբար կարին երեսի ու ներքեւի կանոնաւորութիւնը կ'խանգարի : Նոր դրութիւնն ուրիշ ձեւ մ'ալ ունի որ կ'կոչուի Oscillante=ձօձուն , ինչպէս նաեւ Canette Centrale կամ պօպին սանդրալ , որով կ'կերտուին ասղենկար բանուածքներ , ժանեակներ ու կերպ կերպ ասեղնագործութիւններ :

Ուրեմն եթէ մէկ կարի մեքենայ պիտի ունենանք , այն ալ նոր դրութեամբ մեքենան միայն պէտք է ընտրենք . իսկ ընդարձակ գործատուններ՝ գործին պահանջքին համեմատ , քանի մը տեսակներն ալ պէտք է ունենան :


Գալով մեքենային ձեռքով կամ ոտքով ըլլալուն . այս մասին ալ սա՛ չափն ըսել բաւական է թէ եւրոպայի և ոչ մէկ կողմը ձեռքի մեքենայ կ'ծախուի , այլ պարզապէս Արեւելքի համար կը շինեն զայն : Իրաւ է թէ ոտքով բանուելիք մեքենաներուն դէմ բժշկական դասուն կողմէ շատ մ'առարկութիւններ եղած ու վնասակար նկատուած են : Վնասները կրնան իրաւացի ըլլալ ումանց համար , որոնք արդէն կազմական ու ընդհանրական ներքին հիւանդութեան մը ենթակայ են . և ստիպուած են ընդարձակ գործարանի մը մէջ՝ գործի բաժանման կազմակերպութեան համեմատ , օրական 8—10 ժամուան շարունակական աշխատութիւն ունենալ . օրինակի համար օրն ի բուն հովանոցի տրէզ կ'կարեն , կամ վերջաւորքի եղբերու խծիպներ կ'ընեն և կամ վագկայուած կերպաս կ'պատրաստեն , ևն . ևն . : Իսկ անոնք որ փոքր քանակութեամբ արտադրողներ են , ինչպէս նաեւ առանին պէտքերու համար միայն կարի մեքենայ կ'ունենան , անհրաժեշտ է որ ոտքով բանուի , որպէս զի երկու ձեռքերն ալ տրամադրելի ըլլան գործը գիւրութեամբ վարելու . և փոխանակ 4 ժամ աջ ձեռքով մեքենան դարձնել և ձախով միայն գործը կաղալով վարելու , մէկ ժամ ոտ-

քերը շարժել աւելի նախամեծար է : Մանաւանդ արդի մեքենաներուն շարժումն այնքան թեթեւ ուժ մը կ'պահանջէ , որ կրնանք ըսել թէ շատ անգամ աշխատողը կ'մուռնայ թէ միեւնոյն ատեն ոտքերն ալ կ'շարժին :

Արդ ուրեմն , իրաւ է թէ կարի մեքենաներն այսօր ամէն առաւելութեամբ օժտուած ու մեծագոյն օգտակարութիւնը կ'ընծայեն , բայց գիտնալու է նաեւ իւրաքանչիւր գործի պահանջքին համեմատ ասեղ ու բեկ գործածել . ասեղին թիւերն աճելով կ'հասանայ . ասոր համար՝ նաումանի կարի մեքենաներուն ոչ կողմի ճակատը՝ փայլուն մետաղէ փոքրիկ ցուցակ մը կայ , (Ցե՞ս Եկարեները) որուն մէջ մասնաւոր խնամով նշանակուած է . մէն մի ասեղի թիւին համեմատ՝ կրոցին ու ասեղին անցուելիք թելերուն թիւերը . ուստի պէտք է զանոնք կէտ առ կէտ գործադրել , եթէ չուզուիր որ անհաճոյ կարեր կազմուին :

Ամէն պարագայի մէջ , դերձանը կակուզ տեսակ ըլլալու է , և մետաքս թելը քիչ ոլորքով : Գլխաւոր պարագաներէն մէկն ալ մեքենան իւղուտելն է : Ընդհանրապէս ծախողները՝ քարիւղ կամ ձիթախան քարիւղ գործածել կ'յանձնարարեն , բայց բնաւ պէտք չէ հաւատք ընծայել այս պատուէրին , որովհետեւ անոնց շահը կ'պահանջէ որ մեքենան շուտով խանգարուի ու հիննայ , որպէս զի նորը գնուի : Մեքենային յատուկ իւղը մասնաւոր շիշով կ'ծախուի : Ամէն օր գործածուղ մեքենաներուն համար՝ Յ օրն անգամ մը բոլոր շարժական մասերուն վրայ կէտ մէկ կաթիլ դնել պէտք է , բացի կրոցին ընդունարանէն ու անոր շփուղ պատուարէն : Իսկ , զուտ քարիւղը կ'գործածուի քանի մ'ամիսն անգամ մը մեքենան մաքրելու համար միայն :

Մեքենաներն իրենց յատուկ զգրոցին մէջ ունին նաեւ կարգ մը գործիներ , որոնց մեծ մասը շատ օգտակար ծառայութիւններ կ'մատուցանեն հագուստի կերպ կերպ զարդարանքներու համար , ինչպէս են նեղ ու լայն խծողուներ , բնդիմանրական խծողու , ուղիլ կարելու առաջնորդ , բախանց եղր կարելու մասնաւոր ոսք , բաւիչ կարելու համար նեղ ոսք , բուծինի և վաղկայի համար գործիներ , ևն . : Շատ տուներ ու գործատեղիներ՝ այս գործիները կ'միան իրենց պահարանին մէջ՝ իբրեւ անպէտ նկատուած գործիներ . որոնց վրայ պիտի խօսինք իրենց կարգին :



Ե. ԱՐԴՈՒԿ. — Տակաւին ասկէց 20—25 տարի առաջ գերձակներուն արդուկը պարզապէս երկաթի զանգուածներ էին, ու կրակի վրայ տաքցուելով կ'գործածուէին, որովհետեւ այն ատենուան մեր հրապարակը գտնուած սնամէջ արդուկները շատ թեթեւ ու տճեւ էին և գերձակներուն պահանջքը չէին կրնար գոհացնել։ Մենք առաջինն եղանք որ 1877ին Բարիգէն ուղղակի բերել տուինք Ռումենի նորահնար արդուկը։ Այն ատենները բաւական ծաղրուեցանք «լուրջ»։ արհեստաւորներու կողմէ, որոնք նոյն իսկ մեր երեսին կ'ըսէին թէ «Դերձակին արդուկը մինչեւ որ կրակին վրայ չտաքնայ՝ պէտք եղած արդիւնքը չի տար»։ Խսկ այսօր շատոնց մոռցուած է նախակին ոճով արդուկին մասնաւոր կրակարանը, և ամէնէն յետին դերձակին գործատեղին մոտած է Ռուժէռի արդուկը։ Վասն զի ջերմութիւնը ներքուստ ընդունող գերձակի արդուկը հետեւեալ գլխաւոր պայմաններուն մէջ ըլլալու է, Ա. Ծանր ըլլալու է։ Բ. Կրակը փոխանակ յատակը գտնուելու շանցի վրայ ըլլալու է, որպէս զի նիւթը չխանձէ։ Գ. Մոխիր ու կայծ դուրս տալու չէ, Դ. Ծխնելոյզն ետեւի կողմն ըլլալու է որ ածիսային թթուն՝ զործածողին ուղղակի չնչառութեանը չխառնուի, Ե. Բազրիկին առջեւի կողմը բաց ըլլալու է որ, արդուկող ծայրն ամէն տեղ վարելու ի վիճակի ըլլայ։ Թէպէտ և այժմ մեր հրապարակը կ'վխտան արդուկի բազմաթիւ տեսակներ, բայց Ռուժէռն է որ իր գիւտը 30 տարիէ ի վեր կատարելագործելով՝ վերը յիշուած բոլոր յատկութիւններով օժտուած և արհեստաւորներու ամէն կարգին ալ պատշաճեցուցեր է։ գործին համեմատ սուհմանած է ծանրութիւններն ալ, այն է 0 թիւ $1\frac{1}{2}$ քիլօ՝ մարմինն ալ յշկուն, առանին ճերմակեղէններ արդուկելու համար։ այս թիւը կ'բարձրանայ մինչեւ Յի և ծանրութիւնը 9 քիլօի, գերձակական ամէնէն կոչտ գործերու։ Ռուժէռի արդուկները բաւական սուղ ըլլալուն, շատ մը մերձաւոր կեղծնմանները չինուած են, ու մինչեւ $\frac{1}{4}$ ընուազ արժէքով կը ծախուին։ Վերջերս Անգլիական գործարան մը քիչ տարբերութեամբ կեղծած է և Ռուժէռի կէս գինը կ'վաճառէ։ Ռուժէռի դրութեամբ արդուկները փայտի ածուխով կամ օդային կազով կը

տաքնան։ Կին գերձակներու համար 2 կամ 3 թիւը շատ չափաւոր է, որ կ'կշռէ 3.700 և 4.500 (Տե՛ս նախորդ էջի նկարը)։ բնաւ թող ծանր չթուին այս կշռները, որովհետեւ՝ մէկը որ անգամ մը վարժուի ասոնց, թաշկինակներն անգամ անոնցմով կ'արդուկէ։

Արդուկը զործածելու կերպը. — Ռուժէռի գրութեամբ արդուկները տաքցնելու համար, ցանցին վրայ կարգ մը կրակ շարելէ ետքը, վրան դիզելու է լաւ ածուխ։ ու կափարիչը փակելով, մոխիրին դուռը և ծխնելոյզին օդաշու դռնակը բանալու է՝ մինչեւ որ ածուխները քիչ մը հրահրին, ապա՝ մոխիրին դուռը գոցելու է։ արդուկն այլեւս ի վիճակի է գործելու։ Այժմ փութանք ըսել թէ, արդուկելը մասնաւոր պայմաններ ունի։ զոր կին գերձակները չեն ըմբռնած։ ինչպէս նաեւ ամէն ինքնազարժ կար կարողներ։ Արդ, բոլոր հաստ ու բարակ ասուեղէններով շինուած հագուստներուն կցորդուած եզրերը, գրպանները, ըլլալու կրծքաները, կրծօծիքները և օծիքը, իրենց կարգին չըջօնի կողմէն պիտի արդուկուին։ սպոնգով քիչ մը թրջելով սկսելու է նախ արդուկը վրան դնել և քանի մը հարմէդ միջոցի մէջ տարութելով՝ բոլոր ու ժովը ճնշել, ապա, արդուկին Ֆարկայնութեան չափ յատաջանալով, դարձեալ նոյն ճնշման ենթարկել, մինչեւ որ աւարտի։ կտտարելապէս արդուկուած ըլլալն անով կ'հասկցուի։ Երբ գործն երեսի կողմը դարձնենք, բնաւ խոնաւթիւն ու չողի շմալէ զատ, նոյն տեղերը փայլունութիւն մը առած ըլլան, զոր ապա կ'բառնանք փայլաման կոչուած կանեփեայ կտտառվ (Տե՛ս Ֆիշ մը վարը)։

Շատ բարակ բրդեղէններն և ընդհանուր մետաքսեղէնները ճնշման պէտք չունին, արդուկին ծանրութիւնը կ'բաւէ չորցնելու։ Եթէ խանձելու վտանգ տեսնուի, խանձարգել (որուն ամէնէն պատշաճն է պարզ աստառ՝ այն է հիւսակտու) մը դնել, մինչեւ որ նպատակին հասնուի։

Թաւիչներուն և թաւարձիներուն կարերն ու նախապէս չըջըուած եզրերն ալ կ'արդուկուին, բայց բոլորովին հակառակ ուղղացունքով, այսինքն արդուկը դէպ ի մէկ կողին վրայ պառկեցնելով՝ և միւս կողին վրայ ծածկելով թաւիչէ հագուստին արդուկուելիք մասին չըջօնն և կակուղ վրձինով մ'ալ երեսէն ճնշելով

տարութերելու է, որով թէ՛ արդուկուած կ'ըլլայ և թէ՛ թաւիշին հերքը չի ճմլուիր:

Մոռնալու չէ սակայն, օրը քանի մ'ան գամ արդուկն օդին մէջ առկախ բռնելով թոթուել, որ մոխիրը դէպի յատակը մազուի, ետեւի մոխիրին դուռը բանալ ու պարպել զայն, որ կրակին ջերմութիւնը չը չեղոքացնէ. և ապա մէջը դարձեալ նոր ածուխ շարել: Ծուժէսի դրութեամբ արդուկներուն կ'բաւէ. Յ ժամը անգամ մը ածուխ դնել. մերձաւոր ժամանակի մէջ պէտք չեղած ատեն՝ ծիսնելոյդին դռնակը փակելու է որ ածուխը զուր տեղը չսպառի և ջերմութեան տարիճանը չսաստկանայ:

Զ. ՓԱՅԼԱՍՈՔ. — Այս լաթեղէնը տեսակ մը գործիք է որ՝ ինչպէս քիչ մր գերը ըսինք. կ'ծառայէ հագուստին երեսի կողմերը արդուկելէն առաջ եկած փայլունութիւններն ու կերպասին ստացած անսովոր բրառութիւնն ամոքելու:

Ուստի առնելու է մէկ մեղք ընտիր տեսակ դերձակներուն հագուստի մէջ գործածած կանեփեայ կտաւ, սանի մը մէջ դնելով՝ գոնէ 20 ժամ կրակի վրայ ջուրով եփելու է, մինչեւ որ բըրտութիւնն անհետի ու տղտղիկի, այսինքն չորցնելէ ետք, երբ պաղ ջրով թրջենք՝ կակուզ լաթի մը պէս ըլլայ, ահա՛ փայլամոքը պատրաստուած է. եթէ եփելով այս վիճակին չէ հասած, անգամ մ'ալ շարունակելու է:


Արդ, կարը ամրողջովին աւարտած հագուստի մը վերջին արդուկն ընելէ ետք, բարձը (Գրեթէ 70 հարմէդ երկայնութեամբ լաթէ երեսով բարձ մը, որ մէջը ճնշեալ և ողորկ կերպով լեցուած ըլլայ սղոցի թեփ) կ'դնենք սեղանին վրայ: Հագուստին շրջօնն ողորկ մը կ'ածկենք սոյն բարձին վրայ, յետոյ փայլամոքը պաղ ջուրով կ'թրջենք, լաւ մը կ'քամենք ու բանալով կ'թոթուենք, և կ'ծոծկենք հագուստին երեսը: Արդուկը՝ որ այս միջոցին շատ տաք ըլլալու է. թեթեւ մը կ'քսենք թաց լաթին վրայ ու կամաց մը կ'վերցնենք, որով հագուստին այն մասին վրայ շոգիի ամպ մը գոյանալով փայլը կ'անհետի. այսպէս կ'շորունակուի բոլոր այն տեղերն ուր արդուկ քսուած ու փայլ առած է: Հագուստին այն տեղերն ուր բարձին վրայ փռել կարելի չըլլար, փոքրիկ բարձիկ մ'ալ պէտքը կայ զոր ձեռքի վրայ գործածելով՝ փայլերը կ'առնուի:

Է. ԱՐԴՎԱՏԱԽԱԿՆԵՐ ԵՒ ԿԱՆՈՆԱԿՈՐԻՉ. — Հագուստին մասնակի մասերը կամ ամրողջութիւնն արդուկելու համար ներքեւը մասնաւոր ձեւով տախտակ մը կ'գտնուի և անհրաժեշտ է որ ա՛յն ըլլայ ընկուղենիէ, և առանց վարակի (պուտագ), որ կ'անուանուի արդկատախտակ. Յ հարմէդի չափ թանձրութիւն, 60—65 հարմէդ երկայնութիւն, մէկ կողմը 25—30 և միւս կողմը 15—20 հարմէդ ծաւալով՝ որ պէտք է ըլլայ յարդ կոն ձեւով մը և լաւ կերպով մ'ալ յդկուած: Ասոր մէկ մանրանկարն ալ կրնայ ըլլալ, նեղ անցքերու մէջ մղելու համար. ինչպէս նաև 40—45 հարմէդ երկայնութեամբ և 6—8 հարմէդ լայնութեամբ ու բարձրութեամբ կիսագլանածեւ փայտ մը, որ դարձեալ հագուստին ա՛լ աւելի նեղ անցքերուն համար կ'գործածուի:

Մետաքսեղէններ, բուծիններով զարդարուած մասեր, վաղկայուած շոփմի ձեւ կարեր և ասղենկար բանուած քներ արդուկելու ժամանակ, մեծ արդկատախտակին վրայ խիտ անկուած ասուի մը անցնելու է, որպէսզի այս գործերը ցայտուն մնան:

Ը. ԿՈՐԱԿՈՑՂ. — Գմբեթարդ և մասնաւոր թանձրութեամբ ու բարձրութեամբ փայտէ կոճ մը, որ գլխաւորաբար կ'ծառայէ հագուստին կուրծքերն ու օծիքն արդուկելու, ևն.:


Թ. ՕՂԱՀԱՏ. — Հագուստին օղակիններուն սկիզբը մասնաւորապէս 3—4 հազմէդ տրամագծով բոլորակ ծակ մը կ'ըլլայ, զոր կարծելու չէ թէ իբրեւ զարդ կ'շինուի, այլ որպէսզի հագուստը կոճկուած ատեն՝ կոճակին կարուած արմատն օղակին բոլորակ մասին մէջ հանգչի և շուրջը տձեւ պոստումեր յառաջ չի գան:



Մինչեւ 20 տարի առաջ՝ պարզ ագծանի ձեւ գործիով մը նախ կ'ծակուէլ բոլորակ ծակն ու յետոյ ձեւիչին ծայրովը կ'կտրուէր բուն օղակին բացուածքը: Եւ ո՛րովհետեւ բոլորչի ծակը բացուածքին դէմ տանձի ձեւ ըլլալու է, զարծեալ ձեւիչով անկիւնները

գ'կտրուէք: Մինչդեռ 15 տարի մը կայ որ Ռուժէոփի գործարանը նորագիւտ օղահատիչ մը հնարեց, որով մէկ անգամէն կ'կտրուի, թէ՛ բոլորչի ծակը և թէ՛ բացուածքը, միեւնոյն տաեն տանձի ձեւ մը տալով, մանաւանդ այն առաւելութիւններով որ, օղակն ուզուած երկայնութեամբ կ'բանայ, հագուստին եղրէն դէպի ներս բացուելիք չափին համար մասնաւոր կանոնաւորիչ մ'ալ ունի. և պարագային համեմատ ալ բոլորակ ծակը կ'չեզոքանայ (Տե՛ս նախորդ էջի նկարը): Թէեւ Ռուժէոփի օղահատիչը կարժէ սովորականին տասնապատիկը, բայց իր կատարելութեան և արագութեան տեսակէտովն ամէն գնահատութենէ վեր է. որուն կեղծերն ալ չեն պակսիր դժբախտաբար:

Ժ. ԶԱՆԱԶԱՆ ԳՈՐԾԻՆԵՐ. — Մեծ հաստատութեանց կամ ընդարձակ գործառնութիւն ունեցողներու համար՝ կան նաեւ կարգ մը օգտակար ու շահաւէտ գործիներ. ինչպէս են Կոնակ շինող, Բազմածալ բնող, Ցայտումներ=կօֆուէ բնող, Դրասանիներ կտրող և Մետաղ օղեր դնող ազգաններ:



ԱՌՋԵՌՆ ԶԵՒ ՈՒ ԿԱՐ

ԳԼՈՒԽ Զ.

ՍՈՒԿԱՆՆԵՐ

Պ.Ս.Մ.Ա.Կ.Ա. ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ



ԵՐ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԵՄԱՏ սոյն հատորը կ'պարունակէ իրարու ըը նմանող և տարբեր անուններով շատ մ'արտաքին ու առտնին հագուստներ ձեւելու և կարելու կերպերը, բայց այն տարբերութիւնները լոկ երեւութական ձեւափոխութիւններ են. վասն զի ինչպէս ասկից առաջ ալ ըսինք: մենք մեր դրութիւնը հիմնած ենք ՏԻՊԱՐԻ ՄԻԱԿԵՐՊ ԴՐՈՒԹԻՒՆ առունով. հետեւապէս բոլոր այն արտաքին այլազան ու տարածեւ հագուստները ձեւելու համար, մեր չափառութեան ընդհանուր եղանակն ու տիպարները պատրաստելու հիմնական սկզբանքները չեն փոխուիր: Ուրեմն ա'լ դիւրին է ըմբռնել թէ Ա. հատորին մէջ հրահանգուած իրանազգեստին տիպարներովը կ'ձեւենք տարբեր անուններով ու բազմաթիւ երեւոյթներով հագուստները:

Գալով ներկայ գլխուն պարունակութեանը՝ ակներեւ է թէ ամէն հագուստի ձեւ իր ծագման ու կիրառութեան պատմութիւնն ունի, ինչպէս նաեւ Սուկան անունով հագուստը, որ Արեւմտեան

Ժողովրդոց մէջ՝ առնուազն 1500 տարուան ծագում մ'ունի, և ճանչցուած է իրեւ արանց հագուստ: — ինչպէս ժԵ, դարուն՝ Ֆլանսական կարգ մը զօրքեր մէջքը բազմածալով ու նոյն կերպասէն գոտիով սուկան կ'կրէին (Տե՛ս է. գլխու Ա. դասը): — Գունաւոր կտաւէ պատրաստուած լայն ու ածեւ շապիկ մը, որ սմանցը կ'իջնէր մինչեւ ծունդի հաւասարութիւնը. և այս վերջինը՝ մէջքը կապուած կաշիէ գոտիով մը կ'ամփոփուէր. այնպէս որ տակաւին մէկ դար առաջ՝ սուկանը Արեւմտեան գեղջուկներուն, քաղքենի բանւորներուն ու փողոցի ստամբակներուն տարազն էր, և ժողովրդեան բարեկեցիկ դասն արհամարանքով կ'չեշտէր «Սուկանաւոր»ը ըսելով. որովհետեւ այդ բառն իր մէջ կ'բովանդակէ անվարտիսան գիւլօթ կամ ստամբակ=կավլօօ բառերուն հաւասարիմասար. պարզապէս, սուկան հագնողը ստորին դասակարգի կը վնրաբերէր: Ինչպէս այսօր ալ՝ նոյն իսկ Բարիզի մէջ մսավաճառ, գործաւոր ու բանւոր իրենց սուկաններովը կ'ձանցուին: Իսկ բաւորդ դարէ մը ի վեր է որ, սուկանը կանանց համար ալ պարզ կերպասներով պատրաստուած առօրեայ ագանելի եղաւ, և տակաւ առ տակաւ ա՛յնպիսի թափէ մ'առաւ, որ այսօրուան կնոջական արտաքին տարազներուն գլխաւորներէն մին կ'համարուի՝ իր բազմաթիւ ձեւերու պէսպիսութիւններովը. վասն զի, ամէնէն բարձր ընկերութեանց և երեկոյթներու մէջ՝ մանկամարդ օրիորդներ և ամէն հասակի տիկիններ իրենց շքեղազարդ սուկաններովը կ'փայլին. 1էն մինչեւ 15—20 ուսկինոց սուկաններ կը պատրաստուին, ընտիր մետաքսերէններով ու մեծարժէք ժանեակներով պանազարդուած:

Ուրեմն՝ եթէ արդի սուկաններուն նախաձեւին և անոր անցեալ կիրառութեանը վրայ յետագարձ ակնարկ մը ձգենք, չպիտի ուզէինք հաւատալ այս մեծ յեղաշրջումին. հետեւապէս՝ զարդիս «սուկանաւոր»ը ըսելով՝ անվարտի հասկնալու տեղ, բարեշրջելով՝ հասկնալու է «Սուկանաւոր զեզումիք»:

Արդ, իրաւ է թէ շուրջ 25 տարուան մէջ քանի մը հազար կնոջական սուկանի կերպ կերպ ձեւեր յօրինուեցան, բայց այդ ամէնուն գլխաւոր սկզբունքները, մեր հայեցակէտով, երեք հիմնական ձեւերէ տագում կ'առնեն: Որոնք են պարզ սուկաններ, զանվարյով սուկաններ և շապիկի ձեւ սուկաններ, որոնց իւրաքանչիւրին ալ ձեւելու, ձեւագծու և կարելու կերպերը կարգով պիտի բացատրենք հետեւեալ դասերուն մէջ:

ՊԱՍ Ա.

ՊԱՐՁ ՍՈՒԿԱՆՆԵՐՈՒՆ ՅԵՏՍԱՄԱՍՆԵՐԸ

(Տե՛ս Իթ. Տախտակ 135էն մինչեւ 144րդ օրինակներն ու պատկերները)

Նախ վութանք ըսել թէ ամէն կերպ սուկաններն ալ ներքեւն աստառէ կազուն իրանազգեստ մը կ'ունենան կամ ոչ, ասիկա պարզապէս ճաշակի խնդիր է. բայց սա՛ գիտնալ պէտք է թէ ներքեւն իրանազգեստով եղած ատեն թէ՛ կեցուածքը բարեձեւ կ'ըլլայ և թէ՛ դիմացկուն, թէպէտ և սա վերջերս նէ բքեւի աստառն անոր համար անհամաժեշտ եղաւ որ, սուկանի կերպասին ծակոտկէն տեսակները նորաձեւութիւն ըլլալով՝ ներդաշնակութիւն մը կ'պահանջուէր: Իսկ միեւնոյն ատեն ծակոտկէն կերպասներուն ներքեւը աստառ դնել չէր ուզուէր, որպէս զի լանջքին, ուսերուն ու ծղիներուն մերկութիւնն արտաքուստ թափանցէր: Ուրեմն, ահա՛ այսքան նկատումներ կան՝ սուկանն աստառով կամ առանց աստառի պատրաստուելուն մէջ. ուստի նախապէս լաւ նկատողութեան առնելու է զանոնք:

Արդ, պարզ սուկաններուն յետսամասները 6 կամ 7 գլխաւոր սկզբունքներով կ'շինուին, Ա. — Կոնակը միակտոր ու բոլորովին կազուն (փակած) ձեւով (Տե՛ս 137րդ պատ.), Բ. — Միակտոր՝ բայց մէջքին վրայ քիչ մը փոթփոթուած (Տե՛ս 140րդ պատ.), Գ. — Կոնածագն ու մէջքը միանգամայն փոթփոթուած (Տե՛ս 142րդ պատ.), և նոյն իսկ մինչեւ ուսին կէս հաւասարութենէն փոթփոթուած (Տե՛ս ԼԱ. Տախ. 160րդ պատ.), Դ. — Վերէն մինչեւ վար հակածալերով (Տե՛ս 143րդ պատ.), Ե. — Իրարու ներհակ բազմածալերով (Տե՛ս 144րդ պատ.), Զ. — Ուսերուն շուրջը բոլորչի փոթփոթումներով պղպջակ ձեւացած (Տե՛ս ԼԱ. Տախ. 162րդ պատ.), Է. — Երկայնքին կամ լայնքին վրայ կերպ կերպ կարուած ծալերով կամ բուծիններով զարդարուած կ'ըլլան (Այս երկու վերջիններուն բացատրութիւնը Տե՛ս սոյն զիսու Գ. դասին մէջ):

Սա՛ ալ չմոռնանք ըսելու թէ սուկաններուն երկայնութիւնը կամ մինչեւ դուեվայր կ'ըլլայ և կամ մինչեւ կոնքի հաւատարութիւնը:

Եթէ ներքեւն աստառէ իրանազգեստ մը պիտի ըլլայ, այս ալ երկու կերպով կ'ըլլայ, այն է՝ սուլանին երկայնութիւնը մինչեւ գօտեվայր եղած ատեն, կարճ—իրանազգեստի ախարբներ պատրաստել՝ միայն մէկ կողամասով և ընդարձակ սեղմօններով։ Իսկ մինչեւ կոնքի հաւասարութիւն եղած ատեն ալ՝ կրկնակողարմասով ու միշտ ընդարձակ սեղմօններով։ Յետոյ նոյն տիստարներն աստառին վրայ դնելով ձեւելու է՝ ճիշտ Գ. գլխու Բ. գասի հրահանգին համեմատ, և եթէ սուլանին կռնակը միակտոր պիտի շինուի, աստառին կռնամէջն ու կողամասներն իրար կցորդելու է՝ յետոյ կարելու է առաջամասին սեղմօնները. պայմանաւ որ ասոնք կամ՝ միջախծիպ ըլլան և կամ, շատ նեղ կարաբաժին մը ձգելով՝ կարելէ եաք՝ եղունքով բանալ ու վրան լաթերիզ մը ծածկելու է, երկու եղբերը մեքենայով նրբաւարտ թափանց կարեր ընելով, որ թէ՛ մաքուր ըլլայ և թէ՛ դիմացկուն։ Միեւնոյն ատեն կրծեղրին ճարմանդներն ալ կարելու է, այնպէս որ երկու կողանջատները և ուսերը միայն մնան կարելու։

* * *

Ա. — Կոնակը Միակուր եւ Կպչուն Զեւով Սուկաններ

Այժմ համարենք թէ ներքեւն առանց աստառի և կռնակը միակտոր ու կպչուն ձեւով սուլան մը ձեւել կ'ուզենք, որ իջնէ նաեւ մինչեւ կոնքի հաւասարութիւն։ Այս պարագային՝ տիպարը կ'ուզէ՛ պարզ կողամասով ըլլայ, կ'ուզէ՛ կրկնակողամասով. բաւական է որ մինչեւ կոնքի հաւասարութիւնը պատրաստուած ըլլայ։

Արդ, կերպասին ծալքը կ'ուզզենք դէպի մեր առաջակողմը և յետսամասի տիպարին ծոծրակն ու մէջքը կ'հաւասարեցնենք կերպասին ծալքին (Տե՛ 135րդ օրինակին Ը եւ Զ. կեսերը). այնպէս որ տիպարին Մ' կէտը կ'մնայ գուրսը, ինչպէս նաեւ Գ կէտը։ Եթէ նախապէս տիպարը կրկնակողամասով պատրաստուած է այն ատեն ալ կ'առնենք Ա. կողամասն ու ասոր կ և Ղ կէտերը կ'միացնենք յետսամասին կ և Խ կէտերուն. յետոյ կ'առնենք Բ. կողամասն ու ասոր ալ Զ և Ց կէտերը կ'միացնենք Ա. կողամասին Ց և Պ կէտերուն (Եթէ տիպարը պարզ կողամասով պատրաստուած է, այն ատեն ալ պարզ կողամասին կ և Ղ կէտերը կցելու է յետ-

սամասին կ և Խ կէտերուն)։ Այս կերպով երկու կողամասներուն երանի մասերն իրարու վրայ կ'ելլեն (Տե՛ս 135րդ օրինակին Ո—Ց եւ Ռ—Խ մասերը)։ Վերջապէս՝ տիպարներուն ստացած սոյն դիրքին մէջ՝ կոնածագէն, թիկնաւարտէն, կողնաւարտէն ու կողանջատէն մէյ մէկ հարմէդ կարաբաժինի լայնութիւն ձգելով՝ կերպարը կ'կարենք (Տե՛ս 135րդ օրինակին Ը—Փ, Փ—Ի, Ի—Լ—Ց—Զ եւ Հ—Զ—Ն զծերը), իսկ վարի եղբը՝ Ո, Ի, Ռ և Շ կէտերուն հաւասարութեամբ. պարագային համեմատ՝ այս տեղէն ալ կարաբաժին կրնայ ձգուիլ։

Սակայն այս կերպով ձեւացած յետսամասն երեք անպատեհութիւն ունի, նախ՝ տիպարին կռնամէջը ներկայացնող Ը—Գ—Զ գծին մէջտեղի կորութիւնը կերպասին ծալքէն դէպի ի գուրս կը մնայ, որով թիկունքը քիչ մը կ'նեղնայ. մանաւանդ չափատուն առաջակոր եղած ատեն՝ այս պարագան ա՛լ աւելի զգալի կ'ըլլայ. բայց քանի որ պահանջելի ձեւ մէկ, զայն ձեւողն ու հագնողը սոյն թերութեան համար, փոխադարձ աչքերնին գոցելու են։ Երկրորդն է թիկնանկեան դէմ և և Լ' անկիւններուն իրալմէ անջատ մնալը, այս մասին ալ Ե. գլխու Գ. դասին վերջերը յիշած ենք թէ թիկնաւարտին կէսէն մինչեւ կողնաւարտին կէսը սեղմերիզ մը դերակարել և սոյն աւելորդն անով ամփոփելու է (Տե՛ս ԻԳ. սախ. Գ1րդ օրինակին վրայ սեղմերփին պատկերը)։ Գալով վերջին անպատեհութեան, այս ալ երանի մասը նեղ մնալն է, զոր դարմանելու համար, Շ—Ո գծին մէջտեղէն մինչեւ ԶՊ կէտին մօտերը կերպասը փեռեկի պէս կարելու է, ինչպէս նաեւ Ո կէտէն մինչեւ Զ կէտին Զ հարմէդ մնալու չափ՝ Ո—Զ գծին ուղղութիւնը՝ որ է կերպասին ծալքը, որոնցմով կռնակի ամբողջութեան երանի մասին դէմ երեք փեռեկառւմ յառաջ կուգայ, ու հարկ կ'ըլլայ իւրաքանչիւրին ալ մէյ մէկ ձգտամասնիկ կարել (Տե՛ս 137րդ պատկերին վրայ ցուցուած սոյն ձգտամասնիկներուն երեւոյը)։ Այս ձգտամասնիկներուն վարի ձաւալները կրնայ հաշուի տակ առնուիլ, նախապէս տիպարին Մ' կէտը՝ կերպասին ծալքէն որչափ դէպի դուրս մնացած ըլլալը, ինչպէս նաեւ Ո—Ց միջոցը միատեղ առնելով. նոյնպէս ալ Ռ—Ի միջոցը, և անոնց լայնութեան համեմատ մէյ մէկ հարմէդ ալ ընդարձակութեան բաժիններ դնելով կը պատրաստուի։ Սոյն ձգտամասնիկներուն հրա-

հանգը տալով հանդերձ, կ'փութանք ըսել թէ այս կիրառութիւնն ամէն ինքնաբոյս կար կարողներուն սովորական կերպն է. իսկ մեր հնարած եղանակը պիտի տեսնուի յետագայ հրահանդին վերջը:

Կրնայ ըլլալ որ կռնակը կպչուն ըլլալով հանդերձ, նեղ ծալեր ձեւացած ըլլայ կամ բուծիններով զարդարուի. այս պարագաներուն նախապէս յետամասին երկայնութեանը չափ բաւարար կերպաս կտրելու է և սոյն զարդերը կարելէ ետքը կերպասը ձեւելու է :

* * *

Ա. կրկին. — Կռնակը միակուր ու ներքեւն աստառով կպչուն Սուկաններ

Եթէ սուկանին ներքեւը աստառէ կպչուն իրանազգեստ պիտի չինուի, այն ատեն երեսի կերպասին ձեւելու պայմանը կ'փոխուի, այսինքն, ինչպէս քիչ մը վերը յիշեցինք, նախ կրկնակազմասներով ձեւուած աստառներն իրարու կ'կարենք և եթէ երեսի կերպասը թափանցիկ է, նոյն կարերը միջախծիզներով կը գոցենք որ մաքուր ըլլայ. իսկ անթափանց կերպասներուն համար, աստառին կարերն արդուկով կ'բանանք:

Յետոյ կռնակին ամբողջ լայնութեանը բաւելու չափ կերպաս կ'կտրենք ու անոր մէջտեղին ուղղութիւնը կ'հատասարեցնենք կռնամէջի բացուած կարին վրայ, և ծոծրակէն սկսելով՝ մինչեւ գոտեվայր մանր մանր կ'դերակարենք, ասեղին մէն մի ելւմուտքին ատենը՝ ձախ ձեռքով ալ կերպասը շոյելով, որպէս զի այս վերջինը պիրկ ըլլայ (Տե՛ս 136րդ օրինակ): Ապա՝ կռնամէջէն հոռիլոնաբար մինչեւ անթմէջի հաւասարութիւնը կ'դերսկարենք՝ միշտ կերպասը պլկելով. նոյնպէս ալ թեկնամիջոցէն մինչեւ թիկնանկիւնը, Յետոյ ծոծրակէն սկսելով՝ կռնածագին և ուսին եղրեքն կուգանք մինչեւ ուսանկիւն ու կ'դասնանք թիկնաւարտին եղրը, ուր կերպասը քիչ մը աւելի պիտի գայ, զոր մաս ուռ մաս մէն մի դերակարի մէջ կ'ամսվովինք մինչեւ կողնաւարտին կէսը: Ապա ուրեմն, այս անգամ ալ յետամասին գոտեվայրէն սկսելով՝ կերպասը թէ՛ լայնքին ու թէ՛ երկայնքին պրկուած դիրքով կը գործակարենք դէպի գոտեվայրին ուղղութեամբը մինչեւ սնա-

կուշտ, և ասկէց ալ կողանջատէն դէպի անթմէջ: Միեւնոյն կարգով ալ կ'դերակարենք միւս կողմը (Լաւ դիտէ 136րդ պատկերին դերակարուած ձեւն ուր կ'տեսնուի իւրաքանչիւր հանգոյցի գտնուած տեղն ուր թելերուն վերջաւորութիւնները): Կը ընդուք աստառին կողմն ու կերպասին աւելորդները կ'յարդարենք ճիշտ աստառին եղրերուն հաւասար: Մեր սոյն բացատրած դրութեամբ կ'տեսնուի որ աստառին բացուած կարերը կ'ծածկուին կերպասին ներքեւը (Տե՛ս 136րդ պատկեր, ուր երանի մասին աստառին կարերը երեսի կողմէն կ'երեւան), որով ըրջոնը մաքուր ու կոկիկ դիրք մը կը ստանայ:

Արդ, ինչպէս որ նախորդ ձեւը մինչեւ կոնքի հաւասարութիւն միակուր չէր կրնար ըլլալ, նոյնպէս ալ այս ձեւը, ուստի դարձեալ հարկ պիտի ըլլալ կերպասին երանի մասն երեք տեղերէ փեռեկտել ու ձգտամասնիկներ գնել, բայց մենք հետեւեալ շատ պարզ ու առ աւելի վայելուչ միջոցը պիտի ցուցնենք, այն է սնակուշտէն Ա₁₂ հարմէդ և յետակողման գոտեվայրը Յ հարմէդի չափ կերպասն երկայն ձգելով՝ երանի մասին աւելորդները կ'կարենք, որով կերպասին յետամիջողման գոտեվայրը բութանիւնը մը կ'ձեւանայ (Տե՛ս 136րդ պատ.): Այժմ աստառին երանի մասը սեղանին վրայ լաւ մը կ'տարածենք ու բաց մնացած մասը միակուր կերպասով մը կ'ծածկենք՝ ինամով շուրջը դերակարելով: Իրանին գոտեվայրի կերպասին ըլլունքը կարաբաժին մը ներս ծալեւով՝ փոքր փոքր կ'պերակարենք, և երկու կարգ թափանց կարերով կ'վերջացնենք (Տե՛ս 138րդ պատկերը):

Այս կերպով պատրաստուածը սա՛ առաւելութիւնն ալ ունի որ, սուկանը տան մէջ հագնուած ատեն եթէ ուզուի երանի մասը քղանցքէն դուրս ալ կրնայ ձգուիլ որ ինքնին վաւատաի մը տեսքը կ'ունենայ, փոխանակ փեռեկտուած ու ձգտամասնիկներով կարկտաններու պէս երեւալու:

Քառակուսի գծաւոր կերպասներն երբեմն առ ի զարդ չեղ ալ կրնայ դրուիլ (Տե՛ս 136րդ պատկերը):

Աւելորդ է ըսել թէ թիկնաւարտներուն դէմ ամփոփուած փոթփոթունները աստառին կողմէն արդուկելով անհետացնելու է:

Վաստահաբար կ'ապահովցնենք նաեւ թէ, աստառէ իրանազգեստի վրայ միակուր կպչուն սուկանները կամ պօլեօներն

առանց փորձի կ'պատրաստենք. փոխանակ ուրիշներուն պէս՝ նախ աստառը փորձել ու յետոյ զայն չափատուին կամ կեղծիրանի մը հագցնելով՝ կերպասը վերի վերոյ գնդառեղներով պրկել և ապա հանել, դերակարել ու կրկին փորձելու :

Նորաձեւութեան բերումով՝ այս կարդի սուկաններուն վրայ կերպ կերպ դարձդարձիկ երիջներ կամ ժաղաւէնեակներով կըր-նայ զարդարուիլ. նոյն իսկ պարզ կամ դրասանք ձեւացնելով (Տե՛ս 138րդ պատկերը) :

* *

Բ. — Կոնակը Միակուր ու Մէջին վրայ ֆիչ մը Փոր-
փորուած Սուկաններ

Այս սուկաններն աստառով ալ կ'ըլլան առանց աստառի ալ, միայն կարեւորն այն է որ աստառով եղած ատեն՝ տիպարները կրկնակողամասով պատրաստուած ըլլան։ Երկու պարագային ալ կերպասն աստառէն անկախ կերպով ձեւելու է, այսինքն տիպարները շարելով պէտք է ձեւել. հեաեւապէս յետսամասին ծոծրակը՝ այն է և կէտը կ'հաւասարեցնենք կերպասին ծալքին (Տե՛ս 139րդ օրինակ), և Մ' կէտը և հարմէթ ներսօք. յետոյ Ա. կողամասին կողածագը կ'հաւասարեցնենք թիկնանկեան կէտին՝ որ է և կէտ, և Ո կէտը՝ Յ կէտէն և հարմէթ հեռու։ Ապա ուրեմն՝ Բ. կողամասին վերի ծայրը կ'հաւասարեցնենք Յ կէտին, և Ի կէտը Ծ կէտէն և հարմէթ հեռու։ (Եթէ տիպարը մէկ կողամասով է, դարձեալ Ա. կողամասին դիրքին պէս կ'զետեղենք)։ Հուսկ ուրեմն, տիպարներն այս դիրքով դասաւորելէ ետքը, (Լա՛ւ դիտէ 139րդ օրինակը). կոնածագէն, թիկնաւարատէն, կողնաւարտէն և կողանջատէն մէյ մէկ հարմէթ կարաբաժին ձգելով՝ կերպասը կ'կտրենք. իսկ ստորոտը կ'համեմատենք Բ. կողամասին ընթացքին, այն է Ծ—Ի դժին, ուստի կերպասին ծալքէն ուղղահայեացաբար կը կարենք մինչեւ Ո—Ծ և Ի—Ծ գծերուն կողութիւնովը, առանց յետսամասի Մ—Յ դժին նայելու, որ քանի մը հարմէթ վեր կ'մնայ։

Դիտնալ պէտք է թէ Մ', Յ, Ո, Ծ և Ի կէտերուն մէյ մէկ հարմէթ անջատութիւնը անոր համար կ'դրուի որ, կոնքին հաւասարութեանը վրայ կծկուած չըլլայ։

Այս ձեւով սուկաններն եթէ իրենց ներքեւէն աստառ իրանազգեստ պիտի ունենան, անոնց մասերն իրարու կցորդելէ ետք, կարեւուն ծիւ եղբերը կերպասին ներքեւը պահելու պայմանաւ, շուրջը կ'գերակարենք ու գոտեվայրին դէմ մնացած աւելորդը շուլլելով՝ կ'փոթփոթենք յետսամասին գոտեվայրի լայնութեան վրայ և երեսի կողմէն ու փոթերուն պաստումներուն մէջէն անտեսանելի կէտ կարով մը կ'հաստատենք աստառին վրայ, այնպէս որ, ծոծրակէն մինչեւ յետսակողման գոտեվայրի տակի աստառը և հարմէթի չափ երկայն ըլլայ, որպէս զի սուկանը հագնուած տաեն երեսի կերպասը պրկուած կենայ ու փոթերը ճառագայթի ձեւով մը դէպի թիկանց վրայ անհետանան (Լա՛ւ դիտէ 140րդ պատկերին այս երեւոյը)։

Եթէ սուկանին ներքեւն ասանց աստառի է, այն ատեն ալ կողամասին (կամ կողամասներուն) գոտեվայրի լայնութեան չափովը կերպասն հանգարտ թողելու է, և մնացածը շուլլելով՝ կծկել և վերածելու է Յ հարմէթի, այսինքն կերպասին գոտեվայրի ընդարձակութիւնը վերածելու է տիպարներուն յետսամասին ու կողամասին գոտեվայրի մեծութիւններուն։ Փոթփոթելու հաւասարութիւնն ալ գտնելու համար, նախապէս Առաջին չափին երկայնութիւնը ծոծրակէն դէպի ի վար նշանակելու է։

Երկայն սուկանները, ըլլան աստառով թէ առանց աստառի, մէջը գոտեվայինդ դնելու է, հետեւապէս առանց աստառի շնուռած սուկաններուն մէջքին վրայի փոթերը հաստատելու է գոտեապինդին վրայի եղբին հետ։

* * *

Գ. — Կոնածագն ու Գօնեվայրը Միանգամայն Փոր-
փորուած Սուկաններ

Այս անգամ յետսամասին ը և Մ' կէտերը կերպասին ծալքէն (որ է ա—գ գիծ) 5 հարմէթ զուգահեռական ուղղութեամբ դէպի ներսօք կ'դնենք (Տե՛ս 141 րդ օրինակ), իսկ կողամասներուն չարքը ճիշտ նախորդ հրահանգին նման։ Արդ, կերպասը կարելու ժամանակ կ'առաջանակին նախորդ հրահանգին նոյն ուղղութիւնն ժամանակ, Ծ—Ժ դժին կարաբաժինը ձգելով, նոյն ուղղութիւնն առաջաւց կերպասին ծալքէն կ'սկսինք, որ է ա կէտը, որով կը

նոծագը 5 հարմէդ լայն կ'ըլլայ, նոյնպէս ալ ստորոտը կըտ-
րուած ատեն՝ Շ—ի գծին ընթացքը կ'բերենք կերպասին ծալքին,
որ է ք կէտը:



Բարակաման կերպասներու համար, 5 հարմէդ փոթփոթե-
լու բաժինը կրնայ 7էն մինչեւ 10 հարմէդի բարձրանալ:

Ասոր կարելու եղանակը դարձեալ նախորդին պէս է, միայն
կերպասին կռնածագը նախապէս շուլլելով՝ կծկել և վերածելու
է աստատին (կամ տիպարին) կռնածագի մեծութեան. թերեւս
գօտեվայրի կծկումն ալ քանի մը կարդ ոլորակարով պղպջակ ձե-
ւացնել ուզուի (Տե՛ս Ա. Տախտակի 162րդ պատկերը):

* * *

Դ. — Վերէն Մինչեւ Վար Հակածալերով Սուկաններ

Եթէ ուզուի որ կռնակն երեք հակածալ ներկայացուի, նա-
խապէս յետամասին երկայնութեանը բաւելու չափ կերպաս կըտ-
րելէ ետք, անոր երկու եզրերն իրարու բերելու է՝ մէջ տեղը
ձեւացած ծալքէն 3—5 հարմէդ ներսօք, այսինքն հակածալին
լայնութիւնը քանի հարմէդ որ ուզուի ձեւացնել՝ ճիշտ այնքան
ներսօք կ'դերակարենք ու կերպասը դարձեալ բանալով կ'տարա-
ծնենք. և այս անգամ դերակարուելով ցցուած մասն երկու կողմի
վրայ կ'տարածնենք և հակածալ մը կ'ձեւացնենք վերէն ի վար՝ ու
կ'դերակարենք, որով կ'կազմուի մէջ տեղի հակածալը: Յետոյ
երկու կողմի հակածալերն ալ ունստորին կամ ուսին ո՛ր հաւա-
սարութիւններուն վրայ որ գտնուիլը կ'ուզենք, տիպարին յետ-
ամասին հետ բազգատելով՝ անոնք ալ մէջ տեղինին հետ զու-
գահեռական դիրքով նախորդին պէս կը պատրաստենք: Ապա՝
այս հակածալերը չեզած համարելով, կերպասը կ'ծալենք ու տի-
պարները Բ. կերպին համեմատ կ'շարենք վրան (Տե՛ս 139րդ օրի-
նակը). և կարաբաժինները ձգելով՝ կերպասը կ'կտրենք: Ապա ու-
րեմն, կերպասը դարձեալ կ'բանտնք և գօտեվայրի հաւասարու-
թեան վրայ՝ քովի հակածալին շրթունքը կ'բերենք կ'կցենք մէջ
տեղի հակածալին վրայ, նոյնը կ'ընենք նաեւ միւս կողմինք,
այնպէս որ հակածալերուն վերի կողմերն անջատ ու գօտեվայրին
վրայ իրարու միացած կ'ըլլան (Տե՛ս 143րդ պատկեր):



Հակածալերուն գօտեվայրին վրայ եղած այս շարժումներն եթէ անբաւական ըլլան կերպասին գօտեվայրի մեծութիւնը ձըշտելու, և դարձեալ կերպասը մեծ մնայ, քովի հակածալերուն կողանջատի կողմի շրթունքներն ալ կ'մղենք յառաջ, ու աւելորդը կ'զրկենք հակածալին ներքեւը՝ մինչեւ որ գօտեվայրի լայնութիւնը ճշտուի: Միայն թէ իւրաքանչիւր կողմին ներքեւը գնացած պատումներն երանին վրայ անհաճոյ կծկումներ առաջ կը րերեն, ուստի լաւ է որ ներքեւի երկրորդական ծալքելուն շըրթունքները երեսէն չտեսնուելու չափ խորութեամբ ձեւիչով ճեղքուին, և գաղտնի կարով մը աստառին մէջքի հաւասարութեան (կամ գօտեպինդին) վրայ հաստատուին: Սայն հակածալերը լու կերպով արդուկելն ալ գլխաւոր պայման է:

Այս հակածալերուն երեսի տրամագծերէն մեքենայով թափանց կար ալ կրնայ ըլլալ (Տե՛ս 143րդ պատկերին միայն մեջ տեղի հակածալին երեւոյթը):

Սոյն հակածալերը շատ աւելի դիւրին կերպով մ'ալ կը պատրաստուի, որ կ'կոչուի կեզծ հակածալ, այն է Ա. կերպին պէս միակտոր ու կպչուն իրանազգեստ մը կ'պատրաստենք՝ յետոյ հակածալին փափաքուած լայնութեան կրկինէն քիչ մ'ալ աւելի լայն կերպասէ երիզներ կ'ձեւինք, ու անոնց շրթունքները տրամագծին վրայ՝ մէյ մէկ կարարաժին իրարու վրայ կ'հանենք ու փոքր դերակարով մը հաստատելէ ետք, կ'արդուկենք. և կ'ունենանք տեսաուի մը հզկուած լաթերիզ. հիմա ալ նոյն երիզները կ'գերակարենք յետսամասին վրայ՝ ուր և ի՞նչ քանակութեամբ ու հեռաւրութեամբ որ հակածալեր ցուցնել կ'ուզենք, ճիշտ նոյն դիրքով կ'շարենք յետսամասին վրայ. և եթէ երեսի տրամագծերէն մեքենայով թափանց կարեր ընել ուզուի՝ լա՛ւ, ասպա թէ ոչ ներքեւի տրամագծերէն գաղտնի կարով մը կ'հաստատենք, որ դարձեալ բնական ձեւով շինուածին երեւոյթը կ'ունենայ (Խնչպես է 143րդ պատկերը):

* * *

Ե. — Իրարու Ներհակ Բազմածալերով Սուկաններ

Նախապէս յետսամասին երկայնութեանը բաւարար կերպաս կարելէ ետքը, առաջին բազմածալը ծոծրակէն ո՛րքան որ հե-

ուռէն սկօել կ'ուզուի, ճիշտ այն կէտէն դէպի ի հեռուն նշանակե-
լու է բազմածալին լրկին լայնութիւնը. արդ՝ համարենք թէ 3
հարմէդ բազմածալի խորութիւն կազմել կ'ուզենք, ուրեմն 3+3
=6 հարմէդ ա'լ աւելի հեռուէն տրամագծին հետ զուգահեռական
ուղղութեամբ ծալլերով կ'դերակարենք. և նոյն շրթունքը կը
կոտրենք դէպի ի ծոծրակին կողմը, իսկ գօտեվայրին դէմ՝ ճիշտ
տրամագծին վրայ կ'ըերենք: Այսպէս կ'ընենք հաեւ երկրորդ ու
երրորդ հակածալերը. նոյնպէս ալ միւս կողմինը. որով ուսին
կողմը դէմ առ դէմ կ'ունենանք բազմածալերու շարք մը, իսկ
գօտեվայրին վրայ բոլորն ալ անհետացած (Տե՛ս 144րդ պատկերը):
Ապա ուրեմն, այս բազմածալերը մինչեւ գօտեվայրը լաւ մը կ'ար-
դուկենք, և ներքեւն աստառով կամ աստանց աստառի ըլլալու
պարագային համեմատ՝ կ'հետեւինք Ա. հրահանգին կամ անոր
յաջորդ Ա. իրկին հատուածին մէջ բացատրուած եղանակին. միայն
թէ ասոր երանի մասին դէմ ձգտամասնիկներ դնելու պէտք չկայ,
այլ գօտեվայրին դէմ բազմածալերուն հաւաքումը ձեւիչի հար-
ուածով մը կտրելու է և վարի մասը կէս բացուած հողմահարի
պէս տարածելու է (Տե՛ս 144րդ պատկերը), մինչեւ որ աստառին
կամ տիպարին երանի մասին ծաւալին հաւասարի: Յետոյ լաւ մը
արդուկելու է:

(Սոյն դասին սկիզբը յիշուած Զ. եւ Է. ձեւերեւն հրահանգնե-
րը Տե՛ս սոյն գլխու Գ. դասը:)

Գ Ա Ս Բ.

ՊԱՐՁ ՍՈՒԿՍԱՆԵՐՈՒՆ ԱՌԱՋԱՄԱՍՆԵՐԸ

(Տե՛ս 1. տիսակ 145էն մինչեւ 154րդ օրինակերեւն ու պատկերները)

Ժամանակ կ'ըլլայ որ սուկաններուն յետուակողմը տարբեր
ունով կ'պատրաստուի և առաջակողմը տարբեր, օրինակի համար,
կռնակը պարզ կպչուն կ'ըլլայ, մինչդեռ տառաջակողմը հակածալեր,
բազմածալեր, բուծիններ և կտրուած ծալերով եղած կ'ըլլայ
(ի՞նչպէս 137 եւ 154րդ պատկերները). Երբեմն ալ նոյն և նման կը

շինուի, ինչպէս այս տարուան սկիզբը այնքան նմանութեամբ կը
շնուէր որ նոյն իսկ առաջակողմի կրծօճիքներուն նմանն ալ թի-
կունքներուն վրայ շինուեցաւ. Ուրեմն՝ ակներեւ է թէ այս տե-
սակ զարդերու համար նորածեւութիւնը բացարձակ օրէնքներ
չունի, այլ պարզապէս քմածին ստեղծումներ միայն:

Աւելանին կուրծերը պատրաստելու կերպը. — Համարենք թէ
առաջակողմը կարուած ծալերով սուկան մը շինել կ'ուզենք (Տե՛ս
153րդ պատ.) : Այս կարգի ծալերով կամ բուծիններով զարդար-
ուած առաջամասներուն կերպասը ձեւելէ առաջ պատրաստելու
է ոյն զարդերը, ուստի առաջամասի տիպարին երկայնութեանը
բաւարար և 1—2 հարմէդ աւելի երկայն կերպասը կ'կտրենք
(Չափելու կերպը Տե՛ս 152րդ օրինակ) բայց թէ որ կերպասին լայնքը
նեղ է, ու երկու առաջամասերը չպիտի տայ, այն ատեն երկու
երկայնութիւն պէտք է կտրել: Հիմա ենթադրենք թէ կրծեզրը
հակածալ ձեւացնել կ'ուզենք, և յայտնի է թէ կնոջական հագուստ-
ներուն աջ կրծեզրը կ'կոճկուի դէպի ի ձախին վրայ. ուստի համա-
րենք թէ նախ կ'ուզենք աջ կրծեզրին հակածալը պատրաստել:

Ուրեմն, Յէ հարմէդ լայնութեամբ աստանէ երիզ մը կը
կարենք, որ պէտք է ըլլայ առէջքին ուղղութեամբը: Սոյն երիզը
կ'դերակարենք աջ կողմը ներկայացնող կերպասի շրջօնին
հղուը (Տե՛ս 145րդ պատ.) . Եթէ կերպասը հերք կամ նկարէն տեսք
ունի, գիտելու ենք որ դէպի ի վար ըլլայ: Որով առաջ կուգայ
բ-դ և ա-գ երեւոյթը: Այժմ բ-դ ուղղութենէն բոնելով՝ փափ-
կութեամբ կ'դարձնենք դարձեալ շրջօնին կողմը, որով առաջ
կուգայ բ-դ շուրթը (Տե՛ս 146րդ պատ.), իսկ ա-գ եզրը կ'պառկի
կերպասի շրջօնին վրայ, ու աստանէ երիզը կ'պահուի այս ծալ-
քին մէջ (Տե՛ս 146րդ պատկերին զ անկիւնը, որ որու տեսնուելու
համար՝ կամաւ մաս մը դեպի վրան տշած են): Եթէ կերպասը
բրդեզէն է և կամ սոլոսկուն, այս դերքին մէջ դարձեալ մէջան-
շէն կ'դերակարենք որ չշարժի (Ա.ալ դիմէ 146րդ պատկերը՝ ուր եր-
կու դերակարեն ալ որու կ'սեսնուին): Անգամ մ'ալ բ-դ եզրը կը
շրջենք դէպի շրջօնին վրայ, ասով ալ կ'կազմուի ե-գ շուրթը
(Տե՛ս 147րդ պատ.): Հուսկ ուրեմն՝ այս վերջին ե-գ շուրթէն 5-6
հարմէդ հեռաւորութեամբ՝ մեքենայով թափանց կար մը կ'ընենք
(Ա.ալ դիմէ 147րդ պատ.), որով ա-գ եզրը կ'պահուի կարին մէջ,

յետոյ բ-դ եղրը կ'րանանք դուրս, և անոր ալ եղրէն նախորդին լայնութեամբը թափանց կար մը կ'ընկնք (Այս վերջին գործողութեան շրջօնին երեւոյը ՏԵ՛Ս 148րդ պատկեր), և վերջապէս երեսի կողմը կ'ունենանք բ-դ և ե-զ եղրերով կաղմուած հակածալը (ՏԵ՛Ս 149րդ պատկեր) որ 4 հարմէդ լայնութիւն մը կ'ստանայ՝ երեք անգամ իր վրայ շրջուելովը։ Ահա՝ այսպէս կրծեղրին հակածալը պատրաստելու մեր սոյն եղանակը թէ՛ դիւրին, թէ՛ լաւագոյն և թէ՛ տոկուն հանգամանք մը կ'ունենայ։

թէ՛ տոկուն հանգամանք մը կ'ունենայ:

Կը մնայ ուրեմն ձախ կողմի հակածալը, ասոր ալ աստառէ
երիզը նախորդին պէս դերակարել ու շրջօնին կողմը դարձնեէ
ետք, երեսի կողմէն երկու կարգ թափանց կարեր երթալը կ'բաւէ,
այսինքն ե-զ ծալը (ՏԵ՛Ս 149րդ պատկերը) ձեւացնել աւելորդ է:

Կըճեզրի այս հակածալերուն մէջ դրուած աստառ երիզները
կ'ծառայեն օղակներն ու կոճակները տոկուն ընելու, ուստի տար-
բեր պարագաներու մէջ կընան անոնք աւելորդ համարուիլ:

բեր պարագաներու մէջ կրնան տառաք աւալի լր ։ Հիմա ալ կ'շարունակենք երկայնութեան ծալերը, որ ճաշտ-
կի, կազմութեան կամ նորաձեւութեան համեմատ կ'ըլլան. օրի-
նակի համար ծալերը մինչեւ կրծամէջին հաւասարութեամբը, կամ
մինչեւ գօտեվայր և կամ մինչեւ վարի եղբը (Տե՛ս 150րդ պատ-
ուր ծալերը կարուած են մինչեւ զօտեվայրի հաւասարութիւնը), կամ
թէ կրնայ ըլլալ որ հակածալին վրայ ասղենկար կարամէջ մը
դրուի ու ասոր ալ երկու եղբերը դրասանքներ կարուին (Տե՛ս
151րդ պատ., այս առքիւ չմոռնանք բնելու թէ սոյն 150 եւ 151րդ
պատերեները բեկան եւ իբրեւ ձախ կողմ ներկայացուցած ենք, բայց
անոնք գծագրական դիրքին պատշաճեցնելու համար է միայն. ուստի
զանոնք նկատելու է իբրեւ աջ կողմ): Յետոյ՝ բոտ կամս զարդա-
րելու է կուրծքերը, թերեւս մինչեւ կը ծամէջին հաւասարու-
թիւնն երեք կարդ ծալեր, ասոր գիմաց ասղենկար կարամէջ մը,
որուն վերջաւորութիւնը կամ եռանկիւն ձեւացնել (Տե՛ս 151ր |
պատեր), կամ գէպ ի անութին կողմը կարճ չեղութիւն մը: Դար-
ձեալ 3 ծալեր, դարձեալ կարամէջ ու դարձեալ 3 ծալեր, դուցէ
վերջաւորութիւններն հետղհետէ իրարմէ կարճ (Տե՛ս 151րդ պատ-
ուր վերջ առաջ մանրամասնութիւնները):

Հարկ է գիտնալ թէ ասղենկար կամ ժանեակէ կարամէշերն

ընդհանրապէս ծակոտիկէն կ'ըլլան, և շատ անգամ ներքեւի կերպասը կ'հանուի, որ անոնք թափանցիկ երեւան :

Գիտելիք. — Եթէ կուրծքի ծալերը դէպի ի լայնքին ընել ուզուի, կամ՝ թէ՛ լայնքին և թէ՛ երկայնքին իբար խաչաձեւած կամ շեր ծալեր ձեւացուած. այն ատեն կրծքպին հակածալը զատ կտորով մը պէտք է ձեւացնել, նախապէս 9 հարմէդ զուգահեռական լայնութեամբ կերպաս կտրելով՝ մէջի կողմէն կարել, կէսը դէպի երեսը չընել և հակածալ ձեւացնելու է.

Մէկ երկու տարի է որ, հակածալերը արտակարգ լայնութիւններով ալ շինուեցան. օրինակի համար 5, 6, 7 և մինչեւ 10 հարմէգ լայնութիւններով։ Բայց ի՞նչ որ ալ ըլլայ, պատրաստելու եղանակը փոփոխութիւն չկրել։

• •

Պարզ Սուլանից Առաջամասը Զեւելու կերպը

Երկու առաջամասին բաւարար կերպասներու վրայ սպահան-
ջուած կերպերով դարձերը ալատարաստել և լաւ մը արդուկելէ
ետքը, իւրաքանչիւրին երեսներն իլարու գոցելով կ'փառնք ուղա-
նին վրայ, դիտելով որ ծալերուն (եթէ եղած է) առ կախ մնացած
վերջաւորութիւններն ամփոփ կերպով իրարու քով կենան (ՏԵ՛ս
150 եւ 151րդ պատկերներուն ա-բ, ա-զ, զ-դ եւ դ-բ անկինները):

Եթէ սուկանին ներքեւն աստառ է իրանազգեստ պիտի ըլլայ, բնական է որ տիպարն ալ ընդարձակ սեղմօնով ըլլայ. իսկ առողջ աստառի եղած ատեն, պարզ իրանազգեստի մը առաջամասի տիպարին Դ կէտը կ'հաւասարեցնենք կրծեզրի հակածալին ճիշտ մէջաեղը (Տե՛ս 152րդ օրինակին և կէտը), այնպէս որ 4 հարմէզով կազմուած հակածալին լայնութեան կէտը որ է 2 հարմէզ, տիպարին հազարէն դէպի դուրս մնայ. իսկ տիպարին Զ կէտը, հակածալին կէտէն $1\frac{1}{2}$ հարմէզ դէպի ներսօք դանուի ուրաէս զի կուրծքին վրայ կծկուած չըլլայ (Տե՛ս 152րդ օրինակին զ-Զ միջօնը). որով տիպարը կերպասի հակածալին հետ խոտոր Դիրք մը կ'առնէ (Տե՛ս 152րդ օր.). միեւնոյն ատեն դիտելու է նաեւ որ տիպարին ուլնստորը՝ այն է Ծ կէտը, կերպասին վերի կողմէն մէկ կարաբաժնի չափ վարօք դանուի (Մեր 152րդ օրի-

նակը կամպւ աւելի վար դրած ենք, որպէս զի գործողութիւնը լաւ տեսնուի)։ Տիպարին ստացած այս գիրքին մէջ երբուծին, ուսա- ծագին ու փողեղրին մէջ մէկ համեզդ հեռուէն կարաբաժիններ կ'ձգենք (և 62 էջի հրահանգին համեմատ), և տիպարին կողան- ջատը կ'շարժենք դէպ ի դուրս, ու կը կազմենք նոր կողանջատը, որ է լ'—ժ' փոխանակ լ'—ժի (Տե՛ս 152րդ օրինակ), ասոր ալ կա- րաբաժինը ձգելով՝ կերպասը կ'ձեւենք։

Գալով առաջակողմի երկայնութեան, այս ալ մինչեւ հիմա երկու ծանօթ կերպ ունի, կպչուն և անկուն։ Սկիզբէն ի վեր ճանչցուած էր կպչուն ձեւը, այն է կրծեղրը՝ հագագէն մինչեւ առաջակողման գոտեվայր, գոտիին մէջ պրկուած կեցնելը (Տե՛ս 154րդ պատ.), իսկ քանի մը տարի է որ հնարուեցաւ անկուն ձեւ, այն է առաջակողման գոտեվայրին դէմ կրծեղրը դէպ ի գոտիին վրայ ինկած (Տե՛ս 153րդ պատ.)։ Ինչպէս ուրիշ նորոյթներ, նոյն- պէս ալ սուկաններուն այս անկուն ձեւը դեռ 3—4 տարի առաջ այնպիսի ծայրայեղութեան մը հասաւ, որ անկունին երկայնու- թիւնը գրեթէ կոնքի հաւասարութեան մօտեցաւ, և ո՞րպէս զի պիրկ ու ձեւաւոր կենայ, մէջը կապարէ ծանրութիւն կամ մասնա- ւոր բարձիկներ դրուեցան, փոքրիկ պարիկ մը տեսքը տալով անոր։

Արդ, եթէ առաջակողմը կպչուն ձեւով պիտի շինուի, ժ' կէտէն մէկ կարաբաժին վարօք մեղմ կոր գիծ մը սկսելով, կը տանինք Բ կէտէն 1¹/₂ հարմէդի չափ վարօք կ'անցնինք մինչեւ կրծեղրին վրայ. որ է և հաւասարութիւնը (Տե՛ս սա + + զիծը)։

Իսկ անկուն ձեւով շինելու համար, նախ անոր չափը որոշե- լու է, որ 6էն մինչեւ 16—18 հարմէդ կը լլալ. և համարենք թէ 12—13 հարմէդի չափ անկուն մը ձեւացնել կ'ուղենք։ Ու- րեմն, սակուշտէն, այն է ժ' կէտէն 1 կարաբաժին վարօք մեղմ կոր գիծ մը կ'սկսինք՝ մինչեւ Բ. սեղմօնին մօտերը կ'առաջանանք և չափազանց վէտկոր ձեւի մը վերածելով՝ ուղղահայեաց դիր- քով կ'միացնենք Բ անկիւնը (Տե՛ս 152րդ օրինակին սա օ—օ—օ— զիծը), և կերպասը կ'կարենք այս գձէն։

Սուկաններ ալ կան որ ինչպէս յետակողմը, նոյնպէս ալ առաջակողմը մինչեւ կոնքի հաւասարութիւն կ'ժնուին, որ ուղ- ուած ատեն քղանցքին վրայ կը նայ թողուի՝ միայն մէջքը գոտի մը կապելով կամ քղանցքին մէջ կ'պահուի. այս պարագային ալ

կերպասը տիպարին կոնքի հաւասարութեամբը կտրելու է (Տե՛ս 152րդ օրինակին զ-բ- զիծը), Կայ ալ որ կոնքի հաւասարութեամբ կ'ժնուի ու քղանցքին մէջ կը պահուի. և առաջակողմը անկուն կ'ձեւայուի. պարզապէս գոտիին տակէն պէտք եղածին չափ դուրս քաշելով։ Քովերը կոնքի հաւասարութեամբ եղած ատեն, առաջակողմի անկունը նոյն խոլ տիպարէն վար ալ կը նայ դրուիլ Ժ'—Բ վէտկոր ձեւը գ կէտէն սկսելով։ Այս երկու վերջին կեր- պերը իրր թէ քանի մը ձեւի վերածուելու տրամադրութիւն ունենալու համար ի գործ կ'դնեն. բայց սա' ալ նկատողութեան առնելու է որ այսօրուան նորոյթը կ'ձգտի ամէն զարդարանք բարակ ցուցնելուն մէջ, հետեւապէս նորածեւութիւնը մի եւ նոյն ժամանակ քանի մը նկատում միանգամայն չխ կը նայի առ- նել. ուստի անկուն ուղուած ատեն՝ գոտեվայրէն կարելու է և գոտիի մը կցորդելու է (Քօփին ձեւել եւ կարելու կերպը Տե՛ս պիտու Ժ. դասը)։

Կարելու կերպը. — Սուկանն եթէ ներքեւը աստատով է, նա- խապէս աստատին սեղմօններն ու ճարմանդները կարուած ըլլա- լով, կ'ակսինք կողանջատը, անութը, երբուծը, ուսածագն ու փո- ղեղրը գերակարել աստատին նոյն տեղերուն հետ. ապա՝ կողան- ջատը և ուսածագը կ'միացնենք յետամասին կողանջատին և ու- սին։ Գալով գոտեվայրին, կերպասին բ կէտէն սկսելով, այն է կրծեղրի հակածալին մէջտեղէն հաշուելով, 3¹/₂—4 հարմէդ լայ- նութեամբ դէպ ի կողանջատին կողմը ծալք մը կ'ձեւացնենք, դէ- տելով որ այս ծալքին ներքեւի շրթունքը ճիշտ ու ճիշտ հաւա- սարի հակածալի կեդրոնին, և ահա այսպէս կ'շարունակենք միե- նոյն լայնութեամբ ծալքերու շարք մը, բոլորն ալ իրարու վրայ դիզուած (Տե՛ս 152րդ օրինակի սա—օ—օ—օ զիծն վրայ շարուած խորշխորշեանի նշանակները, որ բացարած ենք 180 էջի հրահանգո- վը) որ կ'անուանուի խորշխորշան։ Այս խորշխորշանները որոշ քա- նակութիւն մը չեն ունենար, այլ դիտելու պարագան այն է որ, հակածալին մէջտեղէն սկսուած ատեն անոնց բոլորին ալ չուր- թը վէտկոր գծին հետ հաւասար կցուին, և յետոյ ամբողջ ծաւա- լը գոտեվայրի չափին հաւասարի։

Պ Ա Ս Պ .

**ՄԻՆՉԵՒ ՈՒՍԵՐԸ ՓՈԹՓՈԹՈՒԱԾ ԿԱՄ ՓՈՂԵԶՄԻՆ ՇՈՒՐՉԸ
ԲՈԼՈՐԾԻ ՊՂՊՉԱԿ ԶԵՒՍՑԱԾ ՍՈՒԿԱՆՆԵՐ**

(Տե՛ս լ.ս. տախ. 155էն մինչեւ 162րդ օրինակներն ու պատկերները)

Մինչեւ Ռւսերք Փորփորուած Սուկաններ . — թէ՛ կռնածագն և թէ՛ ուսերը միանդամայն փոթփոթուած սուկաններ (Տե՛ս 162րդ պատկերը) շինելու համար, կերպասին ծալքը կ'ուղղենք դէպի ի մեր առաջակողմը, որ է ա—բ գիծ (Տե՛ս 155րդ օր.), և 5—8 հարմէդ հեռուէն զուգահեռական գիծ մը կ'քաշենք . յետոյ յետուամասի տիպարին լ կէտը կ'հաւասարեցնենք սոյն գծին վրայ Մ' կէտն ալ 1 հարմէդ հեռու : Տիպարին ստացած առ դիրքին մէջ ժ—լ գծին, այն է կռնածագին կարարաժինը գծելով՝ գրեթէ ուղղահայեաց դիրքով մը կ'միացնենք կերպասի ծալքին, որ է ա կէտը (Տե՛ս 155րդ օր.) : Ապա՝ յետուամասին կռնածէջը՝ 10—12 հարմէդի չափ զուգահեռաբար առաջ կ'տանինք՝ դիտելով որ բնաւ վեր կամ վար չափի . յետոյ կ'շարենք կողմանաները (կամ կողմանը), ինչպէս որ բացատրեցնենք ասկէց առաջ (Տե՛ս 155րդ օր . Տիպարներուն վերջին շարքը որ ներմակ ցուցուցած ենք) : Տիպարներուն ստացած այս դիրքին մէջ՝ թիկնաւարտին, կողնաւարտին ու կողանջատին կարարաժինները ձգելով կերպասը կ'կտրենք . ստորոտն ալ կը կտրենք Շ—ի գծին հաւասարութեամբը մինչեւ բ կէտ . գալով թիկնածագին, նախորդ ժ կէտը մեղմ ու երկայն վէտկոր գծով մը կ'միացնենք վերջի կէտին՝ որ է ի : Որով յետուամասի տիպարին երկրորդ շարժումով առաջ եկած ժ կէտն ու նախորդ դիրքին ի կէտը կ'մնան չէզոք, և այս երկուքին մէջտեղին անցնող գծովը՝ թիկնածագի նոր ձեւ մը երեւան կուգայ :

Գալով առաջամասին, ինչպէս ըսինք՝ անպատճառ պայման չէ որ յետուամասին հետ նմանաձեւ ըլլայ. բայց թէ որ այս վերըին սկզբունքով պիտի շինուի, այսինքն թէ՛ հագագին դէմ և թէ՛ ուսերը միանդամայն փոթփոթուած ձեւով շինել կ'ուզուի . թերեւս կրծամէջն ալ հակածալ չուզուի, և գուցէ կերպասին կրծեզրը միակտոր ըլլայ ու քովէն կոճկուի (Քովէն կոնկուելու հըրահանգը Տե՛ս յաջորդ գլխու Ժ. դասը) : Ուրեմն. այս վերջին

կերպին համար, ուսուական շապիկի հրահանգին նման՝ տիպարին Դ և Բ կէտերը 8—12 հարմէդի չափ կերպասին ծալքէն՝ այն է ա—բ գծէն դէպի ի ներսոք կը դնենք (Տե՛ս 156րդ օրինակ) . և Ծ կէտէն մինչեւ ա կէտ ընդարձակ փողեզը մը կ'գծենք : Յետոյ տիպարը 8—10 հարմէդի չափ դէպի ետ քաշելով, երբուծէն կարարաժինը կ'ձգենք . և Խ' կէտը մեղմ վէտկոր գծով մը կ'միացնենք Ծ կէտին, կողանջատն ալ 2 հարմէդի չափ կ'գարձնենք և կ'ունենանք Լ'—Մ' գիծը : Եթէ սուկանը կոնքի հաւասարութեամբ պիտի շինուի, կ'առնենք նաեւ Մ'—բ գիծը, իսկ եթէ անկունով կ'ուզուի, այն ատեն ալ սնակուշտէն մինչեւ գ կէտ՝ ընդարձակ վէտկոր գծով մը կ'կարենք (Տե՛ս 156րդ օրինակ) :

Եթէ այս սուկանին մէջ աստառէ իրանազգեստ չափափի դըրուի, աւելի լաւ է որ յետուամասի թիկնածագն ի՞նչ երկայնութեամբ որ կազմուեցաւ՝ առաջմասին ուսածագն ալ միեւնոյն երկայնութեամբ շինուի . յետոյ զանոնք իրարու կարել և արդուկելէ ետքը՝ ուսին փոթը քաշել, տիպարին հետ չափելով անոր լայնութեան հաւասարեցնել, ու ներքեւէն սեղմերիլ մը հաստատել, որպէս զի հանելու հագնելու ժամանակ չքակուի : Չմոռնանք ըսեւու թէ կոճակը քովէն եղած ատեն՝ աջ ուսը միայն նախապէս կրնայ կարուելի . իսկ միւս կողմը անջատ կ'պատրաստուի :

Կրնայ ըլլալ որ այս ձեւով սուկանն ալ կրծամէջէն հազնուի, ու դարձեալ միակոր երեւայ . ուստի այս պարագային կրծամէջը փոխանակ կերպասին ծալքէն առնելու՝ եղբին հետեւելու է, այսինքն աջ կողմի կրծեզրը ներկայացնող եղբը 2 հարմէդի չափ ներս շրջելով՝ առբերան ձեւացնելու է, թեթեւ ծալկարով մը հաստատելով՝ այնպէս որ երեսէն չի նշարուի . իսկ ձախ կողմինը և հարմէդի չափ ձեւացնելու է, որպէս զի անոր գրեթէ 3 հարմէդի չափ լայնութիւնը աջ կողմի ներքեւը զրկելով՝ իրեւ կոծակափեղի ծառայէ :

Եթէ կրծամէջը հակածալով կ'ուզուի, այն ատեն ալ ա—բ գիծը նկատելու է հակածալին կէտ լայնութեան տրամադիծը՝ եւ դարձեալ տիպարին Դ եւ Բ կէտերը զուգահեռաբար դնելու է նոյն տրամադիծին, փոխանակ նախորդ դասի հրահանգին պէս

տիպարը խոտոր դնելու . որովհետեւ ասուր հագագին դէմ փոթ-

փոթում գտնուելուն համար կուրծքին վրայ կծկում առաջ չի դար :

Իսկ եթէ հագագին դէմ փոթփոթում չուզուիր ու միայն ու-

սը պիտի փոթփոթուի, ահա այս պարագային է որ տիպարը ար-

բամագծին հետ խոտոր դնելու է (ի՞նչպէս և . տախտակի 152րդ օր.) :

* * *

Փողեցրին շուրջը պղպջակ ձեւացած սուկաններ

ձեւելու կերպը

Գիտնալ պէտք է թէ պղպջակով զարդերը 22 տարի տռաջ ալ նորամեւութիւն էր, բայց այն տաեն ներքեւէն ոլորակար ը-
նելով կ'ձեւացուեր, մինչդեռ այսօր նոյն ոլորակարը երեսի կող-
մէն կ'շինուի՝ մէն մի տողի մէջ բուծիններ ձեւացնելով:

Այժմ համարենք թէ նախ յետամասը կ'ուզենք ձեւել, ուստի վերի հրահանգին պէս՝ առաջ յետամասին տիպարը կերպասին ծալքէն 5—8 հարմէդի չափ հեռու դնելով (Տե՛ս 157րդ օր.), կըռ-
նածագին ժ'—լ' գիծը կարաբաժինով մը կ'օրինակենք մինչեւ ա
կէտ: Եթառյ ենթադրելով որ կռնածագին դէմ 5 կարգ պղպջակի
ձեւացնել կ'ուզենք. ուստի բնական է որ պղպջակ ձեւացած ատեն
կերպասին երկայնութենէն ալ կ'պակսի և ասոր համար ալ պարզ
ձեւով պղպջակի մէն մի կարգին համար գոնէ կէս կէս հարմէդ ա-
ւելի հաշուելու է, իսկ արդի ձեւով երեսէն բուծին գլուխներ ձե-
ւացնելու համար ալ մէյմէկ հարմէդ. ուրեմն հինգ կարգ պարզ
ձեւի համար 2½—3 հարմէդ յետամասին տիպարը դէպի վար կը
քաշենք (Տե՛ս 157րդ օր. ժ, լ եւ Մ' կէտերը), և հիմա ալ 8—10
հարմէդի չափ առաջ կ'առանք յետութիւնը կ'գծենք (Տե՛ս 157րդ օրինակին ժ'՝
անկինները). յետամասին այս երրորդ շարժումէն ետքը, ընդ-
հանուր կանոնին համեմատ կ'շարենք նաեւ կողամասին տիպար-
ները (Տե՛ս 157րդ օրինակին ներմակ մասերը). կողնաւարտին ու կո-
ղանջատին կարաբաժինները ձգելով՝ կերպասը կ'կտրենք. ստորո-
տըն ալ միշտ Բ, կողամասին հետեւելով, որ կ'յանդի մինչեւ բ կէտ՝
յետամասին Մ' կէտէն գրեթէ 4 հարմէդի չափ վարէն անցնելով
(Տե՛ս 157րդ օր.) : Չորրորդ և վերջին անգամ ըլլալով՝ յետամա-
սին տիպարը նախորդ դիրքէն հորիզոնաբար 2—3 հարմէդի չափ

դէպի վեր կ'քաշենք, որով առաջ կուգայ թիկնածագին ժ'՝ ի՛՛
դիրքը, ապա՝ ժ' կէտին կարաբաժինի կէտէն նոր թիկնածագի մը
ընդարձակ ձեւը կ'գծենք մինչեւ ի՛՛ կէտ, և աս կէտը կ'գծենք
նախորդ թիկնածագին կէտին. յետոյ կռնածագին, թիկնածագին
ու թիկնաւարտին ստացած ընդարձակ դիրքերուն հա ու նոտ կեր-

պասը կ'կտրենք (Լաւ դիտէ սոյն 157րդ օրինակին վրայ, յետամասի
տիպարին չորս անգամ տեղի ունեցած շարժումները եւ կերպասին
ստացած վերջնական ձեւը):

Առաջամասը. — Փողեղըին շուրջը պղպջակով սուկաններն ալ
կրնան կրծամէջէն կամ քովէն կոճկուիլ: Ուստի նախ այս պարա-
գան կ'ձատենք, և համարենք թէ քովէն կոճկել կուզուիլ, հետեւ-
սպէս նախ առաջամասին տիպարը նախորդ հրահանգին համե-
մատ՝ կերպասին ծալքէն 8—10 հարմէդ հեռու կ'դնենք (Տե՛ս
158րդ օրինակը), և Դ կէտէն 2 հարմէդի չափ վերօք հագագի
դէմին փոթփոթելու բաժինը կ'գծենք մինչեւ ա կէտ, երկրորդ
անգամ տիպարը 4—5 հարմէդ դէպի վեր կ'քաշենք, որով առաջ
կուգայ Ծ'—Խ' ուղղութիւնը. և Ծ կէտէն կ'գծենք փողեղըին մը-
նացած ընդարձակուղ շարունակութիւնը, երրորդ անգամ ըլլա-
լով՝ տիպարը կ'քաշենք նախորդ դիրքին վրայ, և 8—10 հարմէ-
դի չափ ալ դէպի ետ՝ որով առաջ կուգայ Ծ'—Խ' դիրքը, հիմա
ալ կողանջատին շարժումը կ'կատարենք և անութը կ'գծենք: Վեր-
ջապէս չորրորդ անգամ ըլլալով՝ տիպարը Յ—Ղ հարմէդ զուգա-
հեռաբար կ'քաշենք դէպի ի վեր, որով առաջ կուգայ Ծ'—Խ' ուղ-
ղութիւնը. ուրեմն Խ' կէտէն մինչեւ Ծ' կէտ՝ նոր ու ընդարձակ
ստացագի մը ձեւը կ'գծենք՝ բաղդատելով միանգամայն թիկնա-
ծագին երկայնութեան հետ. և Խ' կէտը կ'միացնենք նախորդ
երրուծի կէտին, ու կերպասը կ'կտրենք: Այս ձեւն ալ կրնայ
ամբողջ կոնքի հաւասարութեամբը ըլլալ կամ մինչեւ գոտեվայր՝
կրծեղը կաչուն և կամ անկուն (Բոլոր այս մանրամասնութիւնները
լաւ դիտէ սոյն 158րդ օրինակին վրայ):

Եթէ կերպասին լայնութիւնը նպաստաւոր ըլլայ, այս ձեւով
սուկանին ուսերը կրնան միակտոր ըլլալ. այնպէս որ նախ յետ-
սպամասին կերպասի ձեւին համար թղթէ տիպար մը կ'շինենք, ա-
ռաջամասն ալ կերպասին վրայ ձեւագծելէ ետք, յետամասին հա-
մար շինուած տիպարին թիկնածագը կ'հաւասարեցնենք առաջա-

մասի ուսածագին. շրջագծերը կ'օրինակենք և բոլորն ալ միակը-
տոր կ'կարենք: Բայց գիտնալ պէտք է թէ սոյն կերպը քանի մը
նկատելի պարագաներ ունի. նախ որ կերպասին կռնամէջը չեղ
կ'ըլլայ. Եթէ կրծամէջէն պիտի հագնուի, այն ատեն ալ կարելի
է կռնամէջը ծալքին դնելու կրծեզրը շեղ ձեւացնել. ինչպէս նաև
կռնամէջէն ալ կրնայ կոճկուուիլ, որուն համար աջ կողմի կռնա-
մէջէն կոճակիափեղի բաժին ձգել մունալու չէ:

Կարելու կիրար. — Եթէ սուկանը կրծեզրէն պիտի հագնուի՝
նախ կերպասին երկու ուսերն իրարու կ'կարենք. յետոյ ուսածա-
գին լայնութիւնը կ'բաժնենք Յ հաւասար մասերու և փողեզրի
ձեւին հետեւելով՝ իրաքանչիւրէն ալ մէյմէկ զուգահեռական դը-
ծեր կ'բաշենք. ապա՝ մի առ մի ծալլելով՝ շրջոնի կողմէն ոլորա-
կարեր կ'ընենք, ու ամէնն ալ կ'կծկենք ափարաներուն մեծութեան
հետ չափել և հաստատելով (Տե՛ս 161 և 162րդ պատկերներուն
լանջին ու թիկունքը):

Եթէ երեսի կողմէն բուծիներ ալ ձեւացնել կ'ուզուի, շրջոնի
կողմը կրկնակի ծալեր ձեւացնելու է, որուն մէջ պահուած ըլլան
Յ—Գ հազմէդի չափ ակրոներ, երբ ոլորակարերը կծկենք և երե-
սի կողմը շրջենք, սոյն ակրոները ոլորուն բուծինի երեւոյթ՝ պի-
տի առնեն:

Վերջապէս դիւրին է ըմբռնել թէ այս ձեւով սուկանները
պարագային համեմատ կրնան կրծեզրէն, ուսէն կամ կռնամէջէն
կոճկուիլ:

Պ Ա Ս Պ .

ՈՒՍԼ ԹԵՒԱԿՈՎ «ՊՈԼԵՐՈ»Ի ԶԵԽ ՍՈՒԿԱՆՆԵՐ

(Տե՛ս լի. տախ. 163, 164 և 165րդ օր. ու 169—170րդ պատ.)

Սուկաններ կան որոնք քանի մը տարբեր անուններով և կարդ
մը հագուստներու խառնուրդովը կ'կազմուին: Առոնցմէ առայժմ
իրեւ նմոյշ կ'ներկայացնենք սուկան—պօլերօն առաջակողմը դահ-
վըրայ ձեւացած և ուսը թեւակով՝ այն է չորս տարբար ձեւերու
խառնուրդով բաղադրեալ ամբողջութիւն մը,

Ցեասամօսը. — Համարենք թէ տիպարները կըկնակողամասով
են, Ա. կողամասը յետսամասին հետ միակտոր, և Բ. կողամասն

ալ տառանձին, ինչպէս նաև յետսակողաման գօտեվայրին դէմ զգա-
լի փոթփոթում մը ձեւացնել կ'ուզենք:

Ուրեմն, յետսամասի տիպարին ծոծրակը, այն է Ը կէտը կը
հաւասարեցնենք կերպասին ծալքին և Խ կէտը Յ հարմէդ ներսօք
(Տե՛ս 163րդ օր.): յետոյ սուկաններու ընդհանուր կանոնին հա-
մեմատ՝ Ա. կողամասին կողածագը կ'հաւասարեցնենք Լ կէտին
ու Ռ կէտը Յ կէտէն և հարմէդ հեռու: Ապա, Ը—Ժ, Ժ—Ի, Ի—
Լ—Յ և Յ—Պ գծերուն մէյմէկ հարմէդ կարաբաժններ ձգե-
լով՝ և երկայնութիւնը Ռ—Ռ գծին հաւասարութեամբը կերպասը
կ'կարենք (Տե՛ս 163րդ օրինակ): Խակ Բ. կողամասը կ'կարենք բո-
լորովին առանձին, առանց մունալու և կէտէն դուրս և հարմէդ
ընդարձակութեան բաժինն ու շուրջի կարաբաժնները (Տե՛ս 164րդ
օրինակ), բացի սառուտէն՝ զոր պէտք է կտրել տիպարին հաւա-
սարութեամբը: Այս կերպով մինչեւ կոնքի հաւասարութիւն, ու-
րոյն սուկանի մը ձեւը կ'ունենանք՝ գօտեվայրին վրայ կերպասին
մնացած աւելորդ լայնութիւնը տիպարին չափովը փոթփոթելով.
Վերոյիշեալ ձեւն անմէջապէս ուրիշ ձեւի մը կ'վերածուի, Եթէ
կերպասը մինչեւ գօտեվայրի հաւասարութեամբը կտրենք ու մաս-
նաւոր գօտիի մը վրայ առնենք (Տե՛ս 170րդ պատ.), որով լայն յետ-
սամաս մը և երկու նեղ կողամասներով կազմուած տեսք մը կ'առնէ:

Միենոյն ատեն եթէ ուզենք ուսը թեակով ձեւացնել՝ յետ-
սամասին ու Ա. կողամասին դիրքերը նոյնը պահելով: 1 հարմէդ
Ժ կէտէն և 2 հարմէդ ալ ի կէտէն դէպ ի վերօք մէյ մէկ կ'էտ
կ'նշանակենք, որով կ'ունենանք Ժ՝ և Ի՝ կէտերը. տիպարին Ժ և
Ի անկիւնները կ'հաւասարեցնենք սոյն Ժ՝ և Ի՝ կէտերուն ու նոր
թիկնածագ մը կ'գծենք (Այս փոփոխութիւնը Տե՛ս 163րդ օրինակ):
Եթոյ քանակը կ'հաւասարեցնենք Ժ՝ և Ի՝ կէտերուն ու շեղ գիծ
մը կ'քաշենք, որ կ'ներկայացնէ ուսի մակերեսին տրամալարը.
ապա՝ Ի՝ կէտէն կոր գիծ մը կ'իջեցնենք՝ զզալաբար տրամալա-
սէն խոտորելով, և թեւակին տրամանջուած երկայնութեան չա-
փովը կ'նշանակենք Բ կէտը (Թեւակի գիտական օրէնքով ժինելու կեր-
պը Տե՛ս է. զիսու Ժ. դասը), որ մերձաւորապէս կ'գտնուի
Գրեթէ թիկնաւարակ կէսին դէմ. սոյն Բ կէտը փոքրիկ աղեղնա-
ձէ գծով մը կ'միացնենք Լ կէտին (Տե՛ս 163րդ օր.), այնպէս որ
Ի՝ Բ և Բ՝ լ գծերը լիզուի ձև մը ներկայացնեն: Առավ ալ սու-

կան—պօլերօի երրորդ ձև մը առաջ կուգայ (Տե՛ս 170րդ պատկերին տիգուսյօդէն դէպի տիգին վրայ ինկած տեսքը)։ Միւնոյն ատեն տարբեր ձևի մաս կընայ վերածուիլ, թիկանց վրայ լաթերիզներով կամ ասղենկար երիզներով կերպ կերպ շարքեր զետեղելով (Տե՛ս 170րդ պա.) բայց միշտ նպատակաւոր երեւոյթներով։ օրինակի համար, թիկնածագին կէսէն կոր դիրքով մը մինչեւ անութիւ բարձրութեան հաւասարութիւնը իջեցնել՝ թիկան լայնութեան $\frac{2}{3}$ ին դէմ, և թիկնանկեան հաւասարութեամբ երկրորդ մը իրար խաչաձևած (Այս մանրամասնուրիւնը տե՛ս 170րդ պատկեր)։

Առաջամասը. — Կերպասին եղբէն Յ հարմէդ զուգահեռաբար դէպի ներսոք հորիզոնական գիծ մը կ'քաշենք, որ է ա-բ և գ-դ գծերը (Տե՛ս 165րդ օրինակը)։ յետոյ տիպարին Դ կէտը կ'հաւասարեցնենք գ-դ գծին և Զ կէտը Ա/Հ հարմէդ ներսոք, որ է Ե—Զ միջոցը։ շուտով կ'օրինակենք փողեզը, ուստագը, երբուծը՝ այն է մինչեւ Ը կէտ։ Ապա՝ մասնակի գահվրայ մը ձեւացնելու համար, տիպարին Դ—Զ գիծը երեք հաւասար մասերու բաժնելով։ Զ կէտին յաջորդողը կ'անուանենք զ կէտ և սոյն կէտը շեղ լարով մը կ'միացնենք Ը կէտին։ հիմա ալ սոյն լարը կ'բաժնենք երեք հաւասար մասերու և զ կէտին կողմի բաժանումը կ'անուանենք է կէտ (Տե՛ս այս ամենը 165րդ օրինակին վրայ), և Ը կէտէն մինչեւ սոյն է կէտը՝ մեղմ գոգաւոր գիծ մը քաշելով։ կը կտրենք, ու նոյն գծին ձեւը կ'օրինակենք կերպասին վրայ։ Ապա ուրեմն՝ տիպարը 10—12 հարմէդի չափ զուգահեռաբար դէպի ետ կ'քաշենք, և Ը կէտը մեղմ կոր գծով մը է կէտին կ'միացնենք, որով Է—Է և Ե—Ե՝ գծերը սեղմօն մը կ'կազմեն (Տե՛ս 165րդ օր.)։ անութը կ'օրինակենք, կողանջատն ալ կ'դարձնենք, պահանջուած ձեւին համեմատ՝ երկայնութիւնը մինչեւ կոնքի հաւասարութեամբ կամ անկուն ձեւովը կ'առնենք։

Ինչպէս կ'երեւայ, առաջամասին այս ձեւը, թերատական գահվրայով մը կ'ներկայանայ որ եթէ Ծ—Խ և Խ—Ը գծերուն կարաբաժիններ դնելով առնուի, կ'համապատասխանէ յետամասի առաջին ձեւին, որ է Բ—Ժ, Ժ—Խ, Խ—Ը—Ց և Ց—Պ—Ը գծերուն ընթացքը։ Խոկ եթէ ուղենք թեւակով ձեւացնել, Ծ կէտէն 1 հարմէդ և Խ։ կէտն ալ 2 հարմէդ վարոք կերպասին վրայ մէյ մէկ կէտ կ'նշանակենք, որով կ'ունենանք Ծ' և Խ' կէտերը։ քանակը

կ'հաւասարեցնենք այս երկու վերջիններուն ու շեղ լար մը կ'քաշենք (Սոյն լարին ծառալուրիւնը տես' Ե զլխու ԺԲ. դասը)։ յետոյ տիպարին Ծ և Խ անկիւնները կ'հաւասարեցնենք կերպասին վրայ նշանակուած Ծ' և Խ' կէտերուն, և ուսածագը կ'օրինակենք, Խ' կէտէն դգալի շեղ կորութիւն մը կ'իջեցնենք դէպի ի երբուծին դէմ, յետուամասին Խ'—Ծ գծին կազմած երկայնութիւնը կ'փոխադրենք Խ' կէտէն սոյն կոր գծին վրայ, որով կ'կազմուի առաջամասի թեւակին Ք կէտը։ հիմա ալ Ք կէտէն մինչեւ Ը կէտ մեղմ կոր գիծ մը կ'քաշենք, որով Խ'—Ծ և Ք—Ը գծերն երբուծին դէմ լեզուի ձեւ մաս մը կ'կազմեն։

Կարելու կերպը. — Նախ կրծեղը առքերանի բաժինները շրջօնին կողմը գարձնելով դերակարելու է և ապա՝ է և լ կէտերէն բռնելով՝ դէպի ի կողանջատին կողմը Յ հարմէդի չափ խորութեամբ ծալ մը ձեւացնելով (Տե՛ս 165րդ օրինակին սա. — ձեւով զիծը)։ յետոյ ծալքին շրթունքն մինչեւ Ը' կէտ շուլլելով կ'հձկենք ու կ'հաւասարեցնենք գահվրայ ձեւացած Ը կէտին։ Եթէ ներքեւն աստանէ իրանազեստ դնել չուզուի. այն ատեն գահվրայ ձեւացած մասն աստանով մը կրկնելու է, Է—Ը գծին կարաբաժինը աստանին վրայ շրջել ու մանր մանր դերակարելէ ետք, շրթունքը նստեցնելու է վարի մասին վրայ (Տե՛ս 169րդ պատկերին երեւոյը)։ որով կարծես թէ զատ կտրուած գահվրայ մը մինչեւ առաջակազման գօտեվայր շարունակուած է։ Հիմա ալ ուսերը միացնելու է, այսինքն առաջամասին Ծ'—Խ'—Ք գիծը կտրելու է յետամասին Ժ'—Խ'—Ք գծին, յետոյ Լ—ԲԲ—Ը գծին շրթունքը շրջելու է ներքեւի աստանին վրայ։ Եղերքը ճաշակի համեմատ՝ կամ մեքենայով թափանցկարեր ընելու է կամ ժապաւինեակներ անցնելու է։ Եւ որպէս զի երկու առաջամասներուն ալ կրծեղը շրթունք շրթունքի երեւան, նոյն կերպասէն 8 հարմէդ լայնութեամբ երիզ մը կ'առնենք, մէջտեղէն ծալլելով կը կցենք ձախ կողմի կրծեղը ներքեւը, այնպէս որ 2/3 հարմէդի չափ դէպի ի դուրս կոճակափեղի մը ձեւանայ, որուն վրայ կ'կարուի զսպանակ—կոճակներ, խոկ երեսի կողմը ուղուած մեծութեամբ և այս կամ այն տեսակէ կոճակներու շարքերով կրնայ զարդարուիլ։ ինչպէս մէկ երկու տարի է որ չատ փոքր կոճակներ շին-

ուեցան ու հագուստին այս կամ այն կողմերը մասնաւոր շարքերով փակցուեցան (ի՞նչպէս կ'երեւալ 169րդ պատկերին վրայ)։

Եթէ ուզուի որ առաջամասն ալ յետամասին պէս միայն թեւակ ձեւացնելը բաւական համարուի. հետեւելու է Ը-Լ և Լ-Ժ գծերուն, միայն մոռնալու չէ կողանջատին շարժումը՝ սնակուշար Յ հարմեդի չափ դէպի դուրս քաշելով։

Ուսերէն միակտոր թեւակ ձեւացած հագուստներուն թեւերը անթածրին կցոլոգելը մասնաւոր խնամք կ'պահանջէ. որուն համար նախ անթածրի արձակ մասին բաժինը կարելու է, և ապա թեւակին մասի բաժինը հաստատելու է անթածրի գծին հետ՝ որ նախապէս տիպարին երբուծի ձեւը փշանուակով օրինակուած կ'ըլլայ աստաղին վրայ, չմոռնալով ծիւ շուրթերը լաթերիզներով ծածկել։

Այժմ ակներեւ է թէ այս դասի պարունակութիւնը (այն է 169 եւ 170րդ պատկերներուն ձեւովը սուկան—պօլերոները) տասնէ աւելի ձեւերու կ'վերածուի, ամենափոքր փոփոխութիւններով՝ ամէնէն պարզէն մինչեւ ամէնէն բազադրեալը։

Պ Ա Ս Ե .


ՍՈՒԿԱՆԻ ԲԱՂԱԴՐԵԱԼ ԹԵՒ ՄԸ, ՈՐ Է ԹԵՒԱԿՈՎ,

ՊԱՍՏԱՌԱԿՈՎ ԵՒ ԶԱՓԱԶԱՆՑ ԱՆԿՈՒՆՈՎ


(Տե՛ս Ա. Տ. Տախտակ 159րդ օրինակ եւ Լ. Տ. Տախտակ 166, 167, 168րդ օրինակները եւ 171րդ պատկերը)

Արդէն թեւի նախնական դասերուն ժամանակ յիշեցինք թէ ամէնէն արտակեդրոն թեւերն ալ պարզ կամ հակեալ թեւերու տիպարներէն ծագում կ'առնեն. որուն ահա առաջին նմոյշը պիտի տանք, պարզ թեւի մը տիպարովն առաջ եկած բազադրեալ թեւի մը ձեւ, որ կրնայ կցուիլ սուկանի, սոլերօի, զարդարանաց իրանազգեստներու և մինչեւ անդամ խցազգեստներու կամ այգազգեստներու (Տե՛ս 171րդ պատ. այս թեւին աւարտած ձեւը)։ Որովհետեւ նորաձեւութիւնը սահման չունի, այսօրուան շրջագայութեան պօլերօի կամ մեծ երեկոյթներու համար հագնուելիք սուկանին թեւը, գալ տարի առտնին ագանելի հանդերձի մը վրայ դրուած է. հետեւապէս ո'չ մէկը արհամարելու է և ո'չ միւ-

ՀԱ. ՏԱԿԻՏԱԿ



Տ. Տ. Տ. Տ. Տ.



սը, այլ մէն մի ոճով շինուելիք ձեւերը ճանչնալ ու զայն գործադրութեան դնելը գիտնալու է:

Տիպարին պատրաստուինք. — Նախ սովորական պարզ թևի մը տիպարը կ'ձեւագծենք, միայն երկու փոքր փոփոխութիւններով, այն է արմուկը (Ծ կէտը) իրարմէ չբաժնել (Տե՛ս Ա. Տախ. 159րդ օր.), այսինքն ի և և կէտերը միացնել Ծ կէտին վրայ և դաստակը փեռեկով շինելու համար՝ թեւբերանը կազմել ե' և Ժ' կէտերուն վրայ (Տե՛ս 84 էջի սկիզբը):

Թեւակը. — Յայտնի է թէ թեակը միայն գահվայէն կամ սուկանին ուսերէն չկազմուիր այլ թեւէն ալ կրնայ յօրինուիլ: Արդ, թեւին տիպարէն թեակ մը ճեւագծելու համար, նախ տիպարին վրայ կ'գծենք փափաքուած ձեւը, և համարենք թէ Բ' կէտէն 2—3 հարմէդ վարօք կ'ուզենք ճեւացնել, ուրեմն Բ' կէտէն դէպ ի ծղակարին վրայ կ'նշանակենք Ղ կէտը և Բ—Բ' գծին հետ զուգահեռական գիծ մը կ'քաշենք, որ երթայ մինչեւ արմակարը, զոր կ'անուանենք Զ' կէտ (Տե՛ս 159րդ օր.): Եթէ կ'փափաքինք որ մակաթեւին կողմն անկիւնաւոր ճեւ մ'ունենայ, քանակը կ'հաւասարեցնենք Դ' և Ժ' կէտերուն և վերի կողմին վրայ մաս մը տեղէհորիզոնական գիծ մը կ'քաշենք, որով Ղ—Զ' գծին կտրած տեղը կ'կազմուի Ճ' կէտը, ապա՝ այն Ճ' կէտէն 2—2 $\frac{1}{2}$ հարմէդ դէպ ի վար կէտ մը նշանակելով՝ կ'անուանենք Մ' կէտ. Հիմա ալ Ղ կէտէն մինչեւ Մ' կէտ գմբեթարդ կոր գիծ մը կ'քաշենք, ինչպէս նաև Մ' կէտէն մինչեւ Զ' կէտ: Այժմ տիպարին այս մասը կ'փոխագրենք թեւի աստառին վրայ և փշանուակով կ'օրինակենք Զ—Ղ, Զ—Ղ—Լ, Լ—Զ', Զ'—Մ' և Մ—Ղ գծերը (Տե՛ս Ա. Տախ. 166րդ օր.): Ընդհանրապէս թեակին վրայ ծղակարն ու արմակարը կ'ջնջուի, այսինքն միակտոր կ'ըլլոյ և կցորդումը տեղի կ'ունենայ ենթաթեին գրեթէ մէջ տեղը. ուստի նախ Բ' կէտէն մինչեւ Ղ—Զ' գիծ փոքրիկ հորիզոնական գիծ մը կ'քաշենք, որով կ'ունենանք Բ'—Ց գիծը (Տե՛ս Ա. Տախ. 159րդ օր.): Յետոյ ենթաթեը կ'դարձնենք դէպ ի գիմացի կողմը և ասոր Ի—Զ' գիծը կ'հաւասարեցնենք մակաթեւի Լ—Զ' գծին, իբր թէ իրարու կարուած և դէմ առ դէմ տարածուած ըլլային (Տե՛ս Ա. Տախ. 166րդ օր.), փշանուակով կ'օրինակենք Ի—Բ'', Բ''—Ց' և Ց' Զ' գծերը: Ապա ուրեմն, ենթաթեւի տիպարին ծղակարը կ'գտարձը.

նենք մակաթեի ծղակարին դէմ, այնպէս որ, Զ կէտէն մինչև Ղ կէտ իրարու հաւասար կցուին. և վերջապէս կ'օրինակենք Զ—Ղ', Բ'—Յ և Յ—Ղ գծերը, որով կ'ունենանք թեակին միակոտը ձեւ, և կցորդումը անթմէջին դէմ (Տե՛ս 166րդ օրինակին մեկ մեկ եւ երկերկու սեւ կէտերը), Եթէ մակաթեւին մէջ տեղն անկիւն կազմել չուզենք, այն ատեն կ'առնենք միայն Յ'—Յ'—Ղ—Յ գիծը: Հուսկ ուրեմն, բոլոր շուրջը կարաբաժններ ձգելով՝ աստառը կ'ձեւենք (Լա՛ւ դիտէ 166րդ օրինակին մանրամասնութիւնը, որ բնդորինակուած է 159րդ օրինակէն):

Պատառակր. — Տարակոյս չկայ թէ բազմաթիւ պաստառակի ձեւեր կան ու կ'ըլլան, և այն ամենքն ալ պարզապէս գծագիտական դարձուածքներու մէջ կ'կայանան. որոնց գլխաւոր հիմը կ'առնուի թերերանէն. ինչպէս հիմա պիտի տեսնենք:

Համարենք թէ խոտոր ձեւով պաստառակ մը շինել կ'ուզենք և փեռեկն ալ արմակարին կողմը. արդ, թեին տիստարը կ'դնենք թղթի կատրի մը վրայ և կ'օրինակենք Ե'—Ժ' գիծն ու բերանի կողմի ծղակարին մէկ մասը, ինչպէս նաև Ժ' կէտէն գորդաւոր գծով մը կ'խոտորենք արմակարէն դէպ ի դուրս. տիպարը վըրայէն վերցնելով՝ ներքեի թղթին վրայ օրինակուած ծղակարին կողմն ըստ հաճոյս կ'որոշենք 5—6 հարմէդ բարձրւթիւն մը, որով կ'ունենանք Ո կէտը (Տե՛ս 159րդ օր.), այս թիւին գրեթէ կրկինն ալ կ'նշանակենք արմակարին կողմը և կ'ունենանք Ն կէտը: Սոյն կէտէն դէպ ի վեր փոքր շեղ գիծ մը կ'քաշենք՝ Յ'—Կ հարմէդ լայնութիւն մը սահմանելով, որ է Շ կէտ. հիմա ալ Ո և Շ կէտերը վայելուչ կորութիւնով մը իրարու կ'միացնենք (Տե՛ս 159րդ օրինակին սոյն մասը): Յետոյ պաստառակին տիպարը ձեւը չով կ'կարենք և ասոր Ե'—Ո գիծը կ'հաւասարեցնենք բարակ կանեփեայ կտաւի մը ծալքին. չափազանց զգուշութեամբ նմանը կ'կտրենք (թերեւս նախապէս տիպարին շուրջը գծելով), ու կ'բանքնք (Տե՛ս ԼԲ. ասխ. 167րդ օր.). և կ'դիտենք որ Ե' և Ո կէտերը մէյ մէկ վայելուչ կորութիւններ ներկայացնեն, որով կ'ունենանք մէկ թեին պաստառակը. ուստի սոյն բաց գիրքին նոյն նմանը կ'կտրենք նաև միւս կոճատը:

Թեւին կերպասը ձեւելու կերպը. — Որպէ՛ս զի այս թեին կերպասը թեակէն սկսելով Գլօծ ձև մ'ունենայ և դաստակի

հաւասարութեան դէմ ալ չափազանց ընդարձակութիւն մը, նախ մակաթեի տիպարին Ղ—Զ գիծը կ'բաժնենք չորս հաւասար մասերու, որով կ'ունենանք ա, բ և գ կէտերը (Տե՛ս 168րդ օր.). յետոյ Ղ և Ո կէտերը կ'հաւասարեցնենք կերպասին եղրէն մէյ մէկ կարաբաժին ներսօք, և կ'օրինակենք ա—Ղ և Ղ—Ո գծերը (Տե՛ս 168րդ օր.) ապա՝ գնդասեղ մը կ'ցցենք ա կէտին վրայ և տիպարին Ե կէտը Զ—Կ հարմէդ դէպ ի ետ կ'քաշենք, ու կ'օրինակենք Բ—Ա գիծը. գնդասեղը կ'փոխադրենք Ք կէտին վրայ՝ դարձեալ տիպարին Ե կէտը կ'քաշենք Զ—Կ հարմէդ ետ, ու կ'օրինակենք Բ—Գ գիծը. գնդասեղը հիմա ալ կ'փոխադրենք Գ կէտին վրայ՝ ու դարձեալ Ե կէտը կ'քաշենք Զ—Կ հարմէդ ետ, ու կ'օրինակենք Կ—Ղ գիծը (Տե՛ս տիպարին սայն երեք տեղափոխութիւնները, 168րդ օրինակին վրայ Ե, Ե' եւ Ե'' անկիւնները): Այժմ կ'առնենք մակաթեին տիպարը, ասոր ալ Զ—Ղ' գիծը կ'բաժնենք չորս հաւասար մասերու և կ'ունենանք դ, եւ գ կէտերը: Արդ, արմակարին վերի ծայրերը կ'կցենք իրարու (Տե՛ս Զ կէտը), իսկ արմուկը՝ այն է ենթաթեին Ծ' կէտը, Զ—Կ հարմէդ մակաթեին Ծ կէտէն հեռու կ'դնենք՝ ու կ'օրինակենք Զ—Գ գիծը. գնդասեղը կ'ցցենք Կ կէտին վրայ և հիմա ալ ենթաթեին Ե' կէտը կ'քաշենք Զ—Կ հարմէդ գիծը կ'էպ ի ետ, գնդասեղը կ'փոխադրենք Ե կէտին վրայ՝ ու վարի ծայրը նորէն Զ—Կ հարմէդ ետ կ'քաշենք՝ ու կ'օրինակենք Ե—Գ գիծը (Տե՛ս այս զործողութեան ժամանակ Ե''' անկիւնը). վերջապէս գնդասեղը կ'փոխադրենք Գ կէտին վրայ՝ Կ այս անդամ ալ կ'օրինակենք Գ—Ղ' և Ղ'—Ո" գիծը: Այժմ գաստակին հաւասարութիւնը ներկայացնելու համար ընական է որ պաստառակին ծղակարի կողմի բարձրութեան հաւասարութենէն սկսինք. ուստի Ո" կէտէն կոր գիծ մը կ'սկսինք Ծ' կէտէն Զ հարմէդի չափ վարօք կ'անցնինք Ք կէտին և անկէց ալ Ծ և Ո' անկուններուն առաջնորդութեամբը (միշտ Զ հարմէդի չափ ցածէն) կ'տանինք մինչև Ո կէտ: Այս կերպով դաստակին դէմ ուսուցիկ ձև մը այն կ'ունենանք, իսկ եթէ կ'ուզենք որ չափազանց անկիւն մը չինենք (Ի՞նչպէս 171րդ պատ.) այն ատեն կ'առնենք Ո"—Բ"—Ո գիծը (Տե՛ս սոյն 168րդ օրինակին վրայ՝ մակարեւին ու ենթարեւին տիպարներուն չորսական անգամ տեղի ունեցած շարժումներն եւ բոլոր մանրամասնութիւնները): Դիտուեցաւ անշուշտ որ ա, բ, գ, դ,

Ե և զ կէտերուն գնդասեղներով շարժելէն՝ տիպարին նախնական ձևերը տարրեր դիրք մատին, օրինակի համար՝ ենթաթեխն Զ—Ղ՝ գիծը որ նախապէս ուղղիղ էր, այժմ կոր ձև մատացաւ. Հետեւապէս թեքը զլու ձևի վերածուեցաւ: Արդ, նկատելով որ դաստակն անկուն ձևով կ'նախընտրենք. ուստի բոլոր շուրջէն մէյ մէկ կարաբաժին ձգելով՝ կերպասը կ'կարենք:

Կարելու կերպը.— Այս թեւն երկու կերպով կրնայ կարուիլ, մէկ մը որ ներքեւն ամրող աստառով կ'ըլլայ, ուստի պարզ տիպարին ամբողջ մեծութեամբն աստառ մը կ'ձեւենք (Տե՛ս 159րդ օր.), և անոր վրայ փշանուակով կ'օրինակենք թեւակին ձեւը՝ մակաթեւին համար Ղ—Մ և Մ—Ձ դժերը, իսկ ենթաթեւին համար ալ Ղ—Ձ գիծը. ինչպէս նաեւ պաստառակին հաւասարութիւնը, այն է Ո կէտին բարձութենէն Ե'—Ձ' գիծն զուգահեռտ կան ընթացքովը մինչեւ արմակարը (Տե՛ս 168րդ օրինակ, մակարեւը Ո'—Շ եւ ենթաբեւը Ո'—Շ կէտ կէտ զծերով):

Աստառին ծղակարն ու արմակարը առանձին կ'կարենք, ինչպէս նաեւ կերպասին ծղակարը, այն է խաչանիշը խաչանիշին և Ո կէտը Ո' կէտին կցելով (Տե՛ս 168րդ օրինակին վրայ). այս վերջինին կարն արդուկով կ'բանանք ու կ'չըլենք երեսի կողմը, կ'անցընենք աստառին վրայ՝ կերպասին ՈՈ' միացած կէտը կ'հաւասարեցնենք աստառին Ո կէտին՝ այնպէս որ կերպասին կարաբաժինը՝ փշանուակով նշանակուած պաստառակին գիծը ձածիկ. ապա՝ կերպասին թեւրերանը ծղակարին երկու կողմին վրայ Յ—Կակն Հարմէդ փոքր փոքր կ'դերակարենք. հիմա կերպասին թեւրերանի մնացած շուրթը կէտ կ'ընենք ու կը գտնենք Ք' (Կամ Ք) կէտը (Տե՛ս 168րդ օր.), և թեւրերանի տարածութեւնը սոյն Ք' կէտին երկու կողմը խորշմորշան կ'ձեւացնեն՝ իւրաքանչիւր ծալի մեծութիւնը գրեթէ կ'հարմէդ խորութեամբ՝ մինչեւ որ կերպասին մեծութիւնը հաւասարի աստառին Ո'—Շ գիծին և այս ամէնը կ'դերակարենք աստառի Ո—Շ գիծին վրայ:

Այժմ թեւակին մէկ սեւ կէտը մէկ սեւ կէտին և երկու սեւ կէտը՝ երկու սեւ կէտին կցելով կ'կարենք, արդուկով կ'բանանք, Յ—Մ—Յ' շրթունքին կարաբաժինը ներս կ'ծալլենք, և ասոր երկու սեւ կէտը կ'կցենք թեւին երկու սեւ կէտին, խաչանիշը խաչանիշին, Մ կէտը բ' կէտին և Ձ' կէտը (Ձ կէտին ու շուրջը կ'դեշանիշին, Մ կէտը բ' կէտին և Ձ' կէտը) մէկ սեւ կէտին ու շուրջը կ'դաշտին:

րակարենք. ինչպէս նաեւ վերի եզրն ալ աստառին շրթունքին՝ դիտելով որ թեւակին Զ կէտը հաւասարի աստառի ծղակարին և Լի կէտն ալ արմակարի գագաթին, թեւակին շուրջը կերպ կերպ երիդներով կրնայ զարդարուիլ (Տե՛ս 171րդ օպատկերը):

Գոլով պաստառակին, ասոր ալ պատրաստելու եղանակը բարձր օճիքին պէս է կանեփեայ կտաւը կ'դնենք կերպասին վրայ, շուրջը կ'դերակարենք, կարաբաժինները ձգելով կերպասին աւելորդ ները կ'կարենք, բացի թեւրերանէն՝ բոլոր շուրջը կ'ծալլենք կանեփեայ կտաւին վրայ, և եղերուն զարդերն ալ պատրաստելէ ետքը, կ'կցենք թեւին, Յետոյ բերանի կողմի կերպասը կ'չէզոքացնենք և կանեփեայ կտաւին եղրը փոքր փոքր կ'դերակարենք աստառի թեւրերանին, որմէ եաք կերպասին կարաբաժինը կը չըլենք ներս՝ վրայ կար մը կ'ընենք ու առերեանով մը կ'ծածկենք աստառին կողմին կ'կցենք թեւրերանը պաստառկի մեծութեամբը ըլլալուն համար՝ պատառակէն փոքրիկ փեռակ մը ձգելու է, որուն ներքեւն ալ կոճակափեղի մը կցելու է որ զսպանակ—կոճակով փակուի. իսկ մէկ մասը գաղտնի կարով մը շրթունք շրթունքի կցելու է:

Այս թեւը կարելու երկրորդ կերպն ալ մէջը առանց աստառի ըլլալու պարագան է. թեւակին համար աստառ մը կ'կարենք և իր կերպասին հետ կրկնելէ ետք, պարզապէս կ'կցենք թեւի կերպասին, նոյնպէս ալ պաստառակը. միայն այս անգամ թեւրերանին մէջի ծածկոյթն այնքա՞ն լայն դնելու է որ, շրթունքէն մինչեւ կերպասին բարձրութեան հաւասարի:

Վերի մասերը թափանցիկ ուզուած տաեն, նոյն իսկ թեւակին մէջ ալ աստառ չըրուիր:

ՊԱՍՏԱՐ

ՊԱՏԱՐԱՆԵՐ

(Տե՛ս ԼԳ տախտակ 172էն մինչեւ 175րդ օրինակները)

Պահպայի կիրառութիւնը շատ հին է և ընդհանրապէս ներքին հագուստներու համար ճանչցուած էր, բայց սա՛ վերջին 10—15 տարուան մէջ ամէն տեսակ հագուստներու վրայ ալ դրուեցաւ: Օրոնք գահվարայով ալ կ'ըլլան, ինչպէս են, սուկաններ (Տե՛ս ԼԵ. որոնք գահվարայով ալ կ'ըլլան, ինչպէս են, սուկաններ)

տախ . 182, 183 եւ 184 պատկերները), զարդարանքի շապակներ (Տե՛ս լեռ . 185, 186 եւ 187րդ պատկերները), առաջնին հագուստները և նոյն իսկ կրկնացները ու թիկնաղգեստներ :

Ասկէց առաջ գահվրաներուն ուսերը կարով կ'ընէին, որպէս կը բաղկանար երկու մասէ, ասոնց կռնակի մասը կ'անուանուէր Թիկ-ՆԱՐԱՒՄ և առաջակողմինը ԼԱՆՋԱՐԱՍԱՍ, իսչ այսօր առ հասարակ միակտոր ձեւը կ'պահանջուի:

Զանազան անուններով հագուստներու վրայ դրուած գահվերանները ճշգրտուած ու ընդունուած մասնաւոր լայնութեան սահմաններ ունին, որոնք պիտի բացատրենք իրենց կարգին:

Շատ վարպետներ գահվլան կ'նկատեն ուրոյն մաս մը և կը ձեւեն մասնաւոր օրենքներով, իսկ մենք կը հետեւինք մեր առանձնայատուկ դրութեան, այն է իրանազգեստի առաջամասին ու յետսամասին տիպարներէն կ'ձեւացնենք դայն, ի'նչ ձեւով ալ պահանջուի :

Միակտոր գաճվրայի տիպար ձեւազնելու կերպը .— Համարենք
թէ զարդանքի պատշաճող սուկանի միակտոր գաճվրայ մը պատ-
րաստել կ'ուզենք : Արդ , գիտնալ պէտք է թէ սուկաններու հա-
մար գաճվրային առաջակողմի ընդունուած տմէնչն մեծ լայնու-
թիւնը ծղակարին կցուած կէտէն մինչեւ Զ կէտ կ'ըլլայ , և ամէ-
նչն նեղն ալ երբուծի հաւասարութեամբը : Ուրեմն՝ սուկանին
համար պատրաստուած առաջամասսին տիպարը կ'գնենք թուզթի
մը վրայ , և նկատելով թէ միջին լայնութեամբ և կրծամէջն ան-
կիւնաւոր ձեւով գաճվրայ մը շինել կ'ուզենք , որուն որոշ սահ-
մանը՝ անութիւն վրայ կ'առնենք Լ կէտը , և կրծեզրին վրայ՝ Դ—
Զ գիծն երեք հաւասար մասերու բաժնելով՝ ու Զ կէտին յաջոր-
դող կէտը գաճվրային իբրեւ կրծամէջի սահմանը , որ է ա կէտ
(Տե՛ս 172րդ օր .) : Այս երկու կէտերը շատ մեղմ կոր գծով մ'իրա-
րու կ'միացնենք և կ'ունենանք լանջքին դէմ գաճվրային հաւա-
սարութիւնը (Ի՞նչպէս Լե . տախ . 183րդ . պատ . ձեւը) անպա՛ ուսա-
ծագին երկայնութիւնը կ'բաժնենք երեք հաւասար մասերու , և
ուլնստորին կողմի կէտը կ'անուանենք բ կէտ . յետոյ կ'առնենք
յետսամասին տիպարը՝ ասոր Ֆ կէտը կ'հաւասարեցնենք առա-
ջամասի Ծ կէտին և թիկնածագին մէկերբորդ մասը Բ կէտին (Տե՛ս
172րդ օր .) : Տիպարներն այս դիրքին մէջ և ի կէտերը զանա-

զան կաղմութեանց համեմատ՝ քանի մը հարմէդ իրարմէ անջատ կ'մնան, որոնց վրայ պիտի խօսինք. բայց նախ փութեանք ըսել թէ գահվրային կռնակի միջին լայնութիւնը կ'ըլլայ թիկնանկեան հաւասարութեամբը, այն է ե—լ, գծին վրայ (ՏԵՇ 172րդ օրինակը). Արդ, ի և և կէտերուն գտնուած հեռաւորութիւնը կ'չափենք, և համարենք թէ գտանք Յ հարմէդ, ուրեմն սոյն Յ հարմէդը կ'դնենք և կէտէն վեր՝ դէպ ի թիկնաւարտին վրայ և կ'անուանենք Ք կէտ, ուրկէ կ'քաշենք փոքրիկ ուղղահայեաց գիծ մը, որ է Ք—Լ' գիծ. միշտ ի և և և կէտերուն հեռաւորութեան ենթագրեալ Յ հարմէդին կէտը, որ կ'ընէ 1½ հարմէդ՝ կ'դնենք Ք կէտէն Ք—Լ' փոքրիկ ուղղահայեացին վրայ, որով կ'հաստատուի և կէտը. դարձեալ միեւնոյն Յ հարմէդին կէտը՝ այն է 1½ հարմէդն ալ կ'դնենք Ե կէտէն Ե—Լ գծին վրայ, ասով ալ կ'հաստատուի Ե' կէտը. Դարձեալ և վերջին անգամ ըլլալով՝ կ'առնենք նուև միեւնոյն Յ հարմէդին ¼ը, որ կ'ընէ 7½ հազմէդ՝ կ'նշանակենք Ը կէտէն Ը—Ե գծին վրայ, ասով ալ կ'հաստատովի Ը' կէտը. Այս հաշուական մանր գործողութիւններէն ու Ը', Ե' և Ը' կէտերը մանրակրկիտ ճշութեամբ և առանց բացառութեան նշանակելէ ետքը՝ գահվրան աւարտած կ'համարուի. որովհետեւ Ը' և Ե' կէտերն ուղիղ գծով մը իրարու կ'միացնենք՝ որ է գահվրային թիկնամէջը. Յետոյ Ը' կէտէն մինչեւ ԾԺ կէտ՝ նոր և աւելի մեղմ կոնածագ մը կ'գծենք. պատ՝ Ե' կէտէն մինչեւ Ը' կէտ՝ շատ մեղմ կոր գիծ մը կ'քաշենք, այս վերջին գիծն ալ կ'ներկայացնէ գահվրային թիկան գէմի լայնութեան հաւասարութիւնը. հուսկ ուրեմն՝ Ե' կէտէն մինչեւ և կէտ՝ նոր թիկնաւարտի մը ձեւը կը գծենք, որ վայելչօրէն կ'խառնուի Խ—Ը գծին՝ այն է երբուժին (Ուշադրութեամբ բնենք բոլոր սոյն մանրամասնութիւնները 172րդ օրինակին վրայ): Հիմա կ'առնենք փշանուակը և կ'սկսինք օրինակը Ե—Ը', Ը'—ԾԺ—Դ, Դ—Ա, Ե—Ը', Ը—Խ—Ը և Ը—Ա գծերը, և նախասպէս տիպարներուն ներքեւը դրուած թուղթին վրայ կ'ունենանք գահվրայի լանջամասին ու թիկնամասին միակտոր ձեւը (ՏԵՇ 172րդ օրինակին մուր սուևերով ցուցուած մասը): Տարակոյն չկը թէ սոյն գահվրայի տիպարին Ը'—Ե' գիծը կերպասի ծալքին դնելով պիտի կարուի, որպէս զի թէՇ թիկնամէջը և թէՇ ուսերը բաձարձակ կերպով միակտոր ըլլան (մանրամասնութիւնները տեՇ լաջորդական նրահանգները):

卷之三

ԶԱՆԱԶԱՆ ԶԵՒԵՐՈՎ ԳԱՀՎՐԱՆԵՐ

Ինչպէս ըստնք, սուկաններու համար՝ գահվրային առաջակողմի ամէնէն լայն ձեւը կ'ըլլայ. ծղակարը կցուած կէտին, այն է Ռ կէտէն մինչեւ Զ կէտ (Տե՛ս 173րդ օր •), և կռնակի կողմը Գ կէտին հաւասարութեամբ: Ուրեմն՝ համարե՞ք թէ լայն գահվրայ մը շինել կ'ուզենք, որուն կրծամէջը մեղմ անկիւն մը կազմուի. ուստի Ռ և Զ կէտերը մեղմ կոր գիծը մ'իրարու կ'միացնենք. յետոյ նախորդ հրահանդին համեմատ յետսակողմի Ք, Լ', Ե' և Բ' կէտերը նշանակելէ ետք, Ե'—Ե' գիծն այս անդամ կ'քաշենք մինչեւ Գ—Գ' գծին վրայ, ուր կ'ունենանք Գ" կէտը ամէն առաջիւ Ե' կէտէն մինչեւ Լ' կէտ ալ կ'քաշենք Ե'—Ե' գիծը, որոնք կը կազմեն գահվրային յետսակողմի հիմնական դեերը: Արդ ուրեմն՝ համարնեք թէ գահվրային յետսակողմի լայնութիւնը կ'ուզենք առնել Ե և Գ կէտերուն մէջտեղի հաւասարութենէն: ուստի Ե' կէտէն մինչեւ Գ" կէտ՝ Ե'—Գ" գիծը կէս կ'ընենք, որով կ'ունենանք Ե' կէտը, և այս կէտէն կ'քաշենք Ե'—Ե' մեղմ կոր գիծը, որ կատարելապէս զուգահեռական ըլլայ նախորդ Ե'—Ե' գծին (Տե՛ս 173րդ օրինակը). իսկ Լ' կէտը ճշգելու համար՝ Խ—Լ' գծին կոր գիրքը կ'ձգենք Ե'—Ե' գծին վրայ, և ահա կը հաստատուի Լ' կէտը: Այս կերպով ունեցած կ'ըլլանք Ե'—Ե', Ե'—Ե'—Խ—Խ, Ռ—Զ, Բ'—ԾՖ—Դ և Դ—Զ գծերով կազմուած լայն գահ վրայի մը ձեւը:

Եթէ գահվրային կռնակն ալ անկիւնաւոր ուզենք՝ Գ" կէտէն մեղմ գմբեթարդ կոր գիծ մը կ'քաշենք մինչեւ Լ' կէտ (Օրինակը շխնդիլու համար. այս զիծը չենք ներկայացուցած). իսկ կռնամէջի անկիւնն աւելի զգալի ուզուած ատեն ալ՝ Գ" կէտէն մինչը լ' կէտ զգալի գմբեթարդ կոր գիծ մը կ'քաշենք (Տե՛ս 173րդ օր.):

Բազմանկիւն ուզուած ատեն՝ նախ երբուծէն, այն է Հ կէտէն մինչեւ Զ կէտ շեղ լար մը կ'քաշենք և զայն կէս ընելով՝ 2—3 համէդ երկայնութեամբ փոքր հորիզոնական մը կ'իջեցնենք դէպի վար, որ է և կէտ. յետոյ Հ կէտէն մինչեւ է կէտ և և կէտէն ալ մինչեւ Զ կէտ մէյմէկ կամարաձեւ գծեր կ'քաշենք (Տե՛ս 173րդ օրինակը): Նոյնպէս ալ յետսակողմի Գ"—Լ' գծին մէջտեղին դէմ կ'ձեւացնենք ը անկիւնք:

Առաջակողմի ձեւն ալ լայն և ուղիղ ուզուած ատեն, նախ Դ—Զ գիծը կէս կ'ընենք ու կ'անուանենք դ կէտ. Ը—Ի միջոցն ալ (առաջամասին) կ'նշանակենք և կէտը. և սոյն Ե և դ կէտերն ուղիղ գծով մը իրարու կ'միացնենք (Տե՛ս 173րդ օրինակին բարակ զոյգ զիծը •) իսկ նեղ ուզուած ատեն, է' կէտէն 1 հարմէդ վերօք կէտ մը կ'նշանակենք, որ է զ կէտ, և սոյն զ կէտն ուղիղ գծով մը կ'միացնենք Ը կէտին (երբուծի կէտին):

Երբեմն գահվրաներէն փոքր ուսնոց մ'ալ կրնայ շինուիլ. ուստի Ծ կէտէն 1 հարմէդ վարօք կ'նշանակենք Ծ' կէտը, և Խ կէտէն 2 հարմէդ վարօք ալ Խ' կէտը. քանակը կ'հաւասարեցնենք սոյն Ծ' և Խ' կէտերուն ու կ'քաշենք Ծ'—Գ գիծը, որ ուսին մակերեսը ներկայացնէ (Տե՛ս 173րդ օրինակին սա.—.—.—զիծը): Յետոյ Խ' կէտէն Խ'—Գ գծին վրայ կ'նշանակենք ուսնոցին փափաքուած երկայնութիւնը, որ մերձաւորապէս 8—10 հարմէդ կրնայ ըլլալ, որով կ'կազմուի Ժ կէտը. այժմ Լ' կէտէն չափազանց կար գիծ մը կ'ակախնք ու կ'տանինք Ժ կէտին վրայ և անկից ալ մինչեւ Ղ կէտ, այնպէս որ ամբողջութիւնը գրեթէ 1/3 շրջանակի մը ձեւն առնէ (Տե՛ս 173րդ օրինակին բառակուսեակ զծերով սուլեր տրուած մասը): որ թեւին վրայ կախուելով թեւակի մը երեւոյթը կ'ըստանայ:

Այս $\frac{1}{3}$ բոլորչի ուսնոցը կրնայ առնուիլ քիչ մը վերը բացատրուած բոլոր գահվրայի ձեւերուն հետ ալ. սա երեւոյթներով որ, Ե'—Ե'—Ճ—Ճ—Գ գծերովն առնուած ատեն, կարծէս թէ գահվրան թիկունքին, տիգին ու լանջքին վրայ բոլորչի ուսնոցի մը ձեւը կ'առնէ. իսկ Գ"—Ե'—Ճ—Ճ—Ա (կամ Զ) գծերուն հետ՝ ձուածեւ երեւոյթ մը. մինչդեռ Ե'—Ե'—Ճ—Ճ—Ե—Ե—Գ գծերուն հետ ալ՝ կարծես թէ ուսին դէմ անջատ թեւակի մը ձեւացած է:

Ուսնոցն անկիւնաւոր ալ կրնայ ըլլալ (Տե՛ս 173րդ օրինակին Ք կիսը եւ բաց սուլերով մասը), և նախորդին պէս կրնայ թէ՛ թիկնամասին և թէ՛ լանջամասին մէն մի ձեւին հետ առնուիլ, մասնաւանդ Գ"—Ե'—Ճ—Ճ—Գ գծերն առնուած ատեն, կարծէս թէ բազմանկիւն ուսնոցակի մը ձեւն առեր է:

Վերջապէս, գահվրաներուն այս զանազան ձեւերը ճանչնալէ ետք, պէտք չէ կարծել թէ թիկնամասը ուղիղ եղած ատեն լանչեալք, թէ կարծել թէ թիկնամասը ուղիղ եղած ատեն լան-

ջամասն ալ ուղիղ պէտք է ըլլայ՝ ու անկիւնաւոր եղած ատեն ալ անկիւնաւոր. այլ մէն մի կողմին համար կրնայ մէկ կամ միւս ձեւն անկախաբար ի գործ դրուիլ, նոյնպէս ալ լայնութիւնները:

* *

ՍԵՂՄՈՆՆԵՐՈՂ ԳԱՀՎՐԱՆԵՐ

Կոնակէն կոնկուելիք. — Գահվրաները տարբեր կերպով մ'ալ կրնան պատրաստուիլ, այսինքն յետսամասին ու առաջամասին տիպարներուն ստացած բնական դիրքերովը. այն է ուսին վրայ սեղմօն ձեւացնելով (Տե՛ս 174րդ օրինակը): Բայց այն պարագային միայն կրնանք աս ձեւով շինել, երբ հագուստին կերպասը բրդեղէն է ու մէջն ալ աստառ պիտի դրուի:

Արդ, նկատենք թէ գահվրային կրծամէջը միակտոր շինել կ'ուզենք ու կոնամէջէն պիտի կոճկենք. ուրեմն, առաջամասին Դ—Զ գիծը կը հաւասարեցնենք գահվրային մէջ դրուելիք աստառի ծալքին, և յետսամասին թիկնածագը՝ առաջամասի Ծ—Ք գծին (Տե՛ս 174րդ օր.): Այժմ համարենք թէ սոյն գահվրան նեղ և ուղիղ ձեւով մը շինել կ'ուզենք. հետեւապէս տիպարներուն ստացած դիրքը փշանուակով կ'օրինակենք ներքեւի աստառին վրայ, ինչպէս են Հ—Ե, Ե—Լ, Լ—Ի, Ի—Բ, Բ—Խ, Խ—Ը, Ը—Գ և Ը—Ծ—Դ գծերը (Տե՛ս 174րդ օրինակ, ստուերաւոր մասը). տիպարները վերցնելով պիտի տեսնենք որ ուսին վրայ սեղմօն մը ձեւացեր է Ի—Բ և Բ—Խ գծերով: Փշանուակին ձեւացուցած բոլոր գծերէն մէյ մէկ կարաբաժին ձգելով՝ աստառը կ'կտրենք, բացի կոնամէջէն, ուրկէ Յ հարմէդի չափ լայն կ'կտրենք, որ ձախ կողմին համար կ'ծառայէ իրեւ առերերան և աջ կողմին ալ իրեւ կոճակիտեղկ. այնպէս որ, ը—Ե գիծը կ'ունենանք բուն տիպարին մեծութիւնը, որ է կոնամէջի տրամագիծը. և թ—Ճ գծով ալ յաւելուած բաժինը (Տե՛ս 174րդ օրինակ տիպարներուն դիմացի կողմը՝ զանկրայի բացուած ձեւին վրայ): Եւ երբ աստառին ծալքը բանանք, կ'ունենանք կրծամէջը միակտոր և ուսերը սեղմօններով գահվրային միակտոր ձեւը (Տե՛ս 174րդ օրինակ):

Կրծեզրէն կանկուելիք. — Եթէ գահվրան կրծեզրէն կոճկել կ'ուզենք, այս անդամ ալ յետսամասի տիպարին Հ—Ե գիծը կ'հաւասարեցնենք աստառին ծալքին (Տե՛ս 175րդ օրինակ): և

փշանուակով կ'օրինակենք Ե—Լ, Ի—Լ, Բ—Ի, Բ—Խ, Ը—Ը, Գ—Գ, Դ—Դ և Դ—Ծ—Ը գծերը. շուրջի կարաբաժինները ձգելով՝ աստառը կ'կտրենք, բայց ասոր Յ հարմէդի յաւելուած կոճակիտեղի բաժինը կրծեզրէն կ'ձգենք, այնպէս որ Դ—Պ գիծը՝ տրամագիծը կ'ներկայացնէ և թ—Ճ գիծը յաւելուածը (Տե՛ս 175րդ օր. բացուած ձեւին վրայ): տարակոյս չկայ թէ զոյդ աստառը կարել և բանալով՝ հիմա ալ պիտի ունենանք կոնամէջը միակտոր (Տե՛ս 175րդ օր.):

Սեղմօնով գահվրաներն ալ կրնայ նախորդ հրահանգներուն մէջ բացատրուած ձեւերովն եւս շինուիլ:

Այժմ գիտելի պարագայ մը կայ որ գահվրան կոնակէն կոճկուի ու կերպասը գծաւոր ըլլայ, կունամէջը չեղ գծերով կը կազմուի, կրծամէջէն կոճկուած ատեն ալ՝ կրծամէջը չեղ գիրքով կը կազմուի (Տե՛ս ԼԵ. սախտակի 184րդ պատկերը):

Սեղմօնով զանկրաները կարելու կերպը. — Գահվրային ձեւուած աստառը կ'ծածկենք կերպասին վրայ, շուրջը կ'գերակարենք, բայց սեղմօններն ազատ ձգելով՝ այսինքն անոնց հեռաւոր սահմանէն անցնելով. յետոյ կերպասին աւելիները կ'կտրենք, և սեղմօնին վրայ ծածկուած մասը ետ կ'մղենք ու աստառին սեղմօնը կ'կարենք, որ կրնայ երկու կերպով ըլլալ, այն է սեղմօնին շրջագծերէն կարաբաժիններ ձգել և աւելորդը կարել (Տե՛ս 174րդ օրինակին Խ—Բ—Ի սեղմօնը), կամ առանց կտրելու՝ շրջագծերն երարու կարել և հակածալի ձեւով արդուկել (Տե՛ս 175րդ օր. ին Ի—Բ՝ և Բ—Խ սեղմօնը՝ որ կտրուած չէ): Ապա՝ կերպասը դարձեալ կ'ծածկենք վրան և կ'սկսինք սեղմօնին առաջ բերած աւելորդը մանր գերակարելով կերցնել ու աստառին կողմէն արդուկելով՝ անյայտացնել, իրը թէ փոթփոթուած չըլլար:

Բնաւ մոռնալու չէ թէ՝ կոնամէջէն և թէ՝ կրծեզրէն կոճկուող գահվրաներուն վրայի կողմի առերանին մասը ներս շրջելէ առաջ, տրամագծին վրայ սեղմերիդ մը գերակարել, ու վրայկարով մը աստառին հետ հաստատել, արդուկել, և ապա առերերանը ներս շրջել, որպէս զի այն տեղի կերպասին ու աստառին ստացած շեղութիւնը առաջգականութիւն չունենայ, այսինքն չշեղի:

Գահվրայով սուկանները քովէն կոճկուելու պարագային, գահվրային ուսերը կարով կ'ըլլայ, այսինքն թիկնամաս և լանջամաս ձեւացնելու է, պայմանաւ որ ուսին կարերը մակերեսին

վրայ ելեն, ինչպէս բացատրեցինք Դ. դասով՝ թեւակով գահվրայ ձեւացնելու ժամանակ (Տե՛ս ԼԲ. տախ. 163 եւ 165րդ օրինակներուն Ժ'—Խ' եւ Ծ'—Խ' գծերը):

Դարձեալ քովէն կոճկուելու պարագային, աջ ուսն ալ միակոր կընայ ըլլալ. մանաւանդ ժանեակներով կամ այլեւայլ զարդերով գահվրան ծածկել ուղուի (Տե՛ս ԺԱ. գլուխ):

ՊԱՍ Է.

ԳԱ. Հ Վ Ր Ա. Յ Ո Վ Ս Ո Ւ Կ Ա Ն Ն Ե Ր

(Տե՛ս Լ. Տ. տախտակ 176 եւ 177րդ օրինակները)

Գահվրայով սուկանները քանի մը կերպով կ'ըլլան, օրինակի համար, փոթփոթուած ձեւով, կարուած ծալերով, պարզ լայն ծալերով կամ հակածալերով. այն է առանց գահվրայի սուկաններուն պէս, միայն ասոնց տարբերութիւնը սա՛ է որ իրանին զարդերը գահվրայի հաւասարութենէն սկսած կ'ըլլան:

Գահվրայով սուկաններուն ներքեւն ալ աստառէ իրանազգեստ կրնայ գտնուիլ կամ ո՛չ. միայն թէ առաջին պարագային՝ արդէն հարկ չկայ նախապէս զատ գահվրայ մը ձեւել. այլ գահվրային կռնակի և առջեւի լայնութիւնները մինչեւ ո՛ւր ու ի՞նչ ձեւով որ կ'ուղուի՝ իրանազգեստին աստառները ճիշտ տիպարներուն մեծութեամբ կտրելէ ետք, գահվրաններուն թիկնամասին ու լանջամասին ձեւերն իւրաքանչիւրին վրայ փշանուակով օրինակելը բաւական է: Մասնաւրապէս միայն թիկնամասին վրայ նակելը բաւական է: Մասնաւրապէս միայն թիկնամասին վրայ ներքեւն ամբողջ աստառ կայ, կռնամէջի լո՛գ՝ գիծը դեր չունի, հետեւապէս մեկնակէտը լո՛գ գծին վրայէն առնել պէտք է. նոյնպէս ալ թէ կէտերը կազմելու պէտք չկայ: Ըստ կ'ուղենք թէ ինչպէս որ գահվրային լանջամասը ճիշտ ու ճիշտ կ'օրինակուի առաջամասի տիպարին անփոփոխ ձեւովը, նոյնը պիտի ըլլայ նաեւ թիկնամասը (պատճառը Տե՛ս Քիչ մը վար): Ապա՝ սուկանին կերպասը ձեւելու կանոններուն համեմատ կ'կտրենք, միայն գահվրային բաժինը կարծ կ'առնենք. յետոյ աստառներն առանձին կ'կտրենք ու վրայի կերպասը կ'դերակարենք չուրջը,

և եթէ փոթփոթուած ձեւով կ'շինենք՝ գահվրային հաւասարութեան դէմի փոթերն ալ կ'շինենք. ինչպէս նաեւ առաջամասները՝ կ'դարձնենք աստառակին կողմը և փշանուակին գծերէն մակենթակար մը կ'անցնենք, որ կերպասին վրայ որոշ տեսնուի նոյն սահմանները: Յետոյ, աստառներուն ուսերը երեսի կողմէն կ'կարենք ու արդուկով կ'բանանք և հիմա գահվրային բաժինը բաց մնացած աստառներուն վրայ կերպասով կ'ծածկենք՝ ուսերուն վրայ քիչ մը փոթփոթելով՝ (ինչպէս քիչ մը վերը սեղմօնով գահվրաներուն առթիւ խօսեցանք) մակենթակարերուն հաւասարութենէն կարարաժիններ կ'ձգենք ու կերպասին աւելորդները կ'կտրենք, և նոյն կարարաժինները ներս ծալլելով՝ մակենթակարերուն ուղղութեամբը կ'դերակարենք. յետոյ պահանջուածին համեմատ մեքենայով թափանց կարեր, զարդասեղներ կամ ժապաւինեակներով կ'զարդարենք:

Իսկ եթէ ինչ ինչ նկատումներով գահվրայով սուկանին ներքեւն աստառէ իրանազգեստ շինել չուզուի, այն ատեն վրայի կերպասին ձեւելու պայմանը բոլորովին կ'փոխուի. որովհետեւ թէ՝ առաջամասին և թէ՝ յետամասին կերպասները գահվրային հետ հազորդակցութեան դրուած եզրերը նախապէս ճիշտ ու ճիշտ անոր համապատասխան ձեւելու է, ինչպէս պիտի բացատրենք հետեւեալ հրահանգով:

Դահվրայով սուկաններուն կերպասը ձեւելու կերպը

Յետամասոր. — Եթէ սուկանը փոթփոթուած ձեւով պիտի շինուի, նախ որոշելու է անոր սահմանը, վասն զի փոթփոթումը կրնայ մէկ մասին վրայ գտնուիլ (ինչպէս և Լ. տախտակի 187րդ պատկերը) կամ ամբողջ թիկան հաւասարութիւնը փոթփոթել ուղուիլ (Տե՛ս Լ. տախտակի 185րդ պատկերը):

Արդ, համարենք թէ թիկան լայնութեան $\frac{2}{3}$ մասին դէմ փոթփոթել կ'ուղենք, և ո՛րովհետեւ փոթփոթելու բաժինը փոթի սահմանին մէկ անգամին հաւասար կ'դրուի, ուրեմն այս հաշուով մերձաւորապէս 12 հարմէդ կերպասին ծալքէն՝ որ է ա—բ գծէն կ'էպ ի ներսոք զուգահեռական գիծ մը կ'քաշենք և կ'ունենանք գ—դ գիծ (Տե՛ս 176րդ օր.): Յետամասի տիպարին դ կէտը կ'հա-

ւասարեցնենք զ կէտին, Մ' կէտը դ կէտէն 1 հարմէդ հեռու և գահվային բաժինը կերպասին դագաթէն դուրս (լաւ դիտէ 176րդ օր.)։ Ասոր քով կ'կցենք կողամասին տիպարը, կողածագը և կէտին և Ո կէտը Յ կէտին։ Կողնաւարտին ու կողանջատին մէյմէկ հարմէդ կարաբարակին ձգելով՝ կերպասը կ'կտրենք, իսկ ստորոտը Ո—Շ գծին հաւասարութեամբը և մինչեւ բ կէտ ուղղահայեաց (Տե՛ս 176րդ օր., որուն վրայ կերպար տեղ զծերով եւ տիպարը մուր գոյն ներկայացուցած ենք, որպէս զի գործողութիւնը լաւ տեսնուի), Գալով վերի կողմին, եթէ գահվրան թիկնանկեան հաւասարութեամբն առնուած է, այն ատեն յետամասի տիպարին ե—Լ գծէն մէկ կարաբաժին վերօք կերպասը կ'ուղղենք, որ է ա—զ գիծը։ առանց Լ' կէտին հետեւելու, որպէս զի գահվրային Ե—Լ' կոր գիծը (Տե՛ս ՀԳ. տախ. 172րդ օր.) սոյն ա—զ գծին կցորդուած կոր գիծը (Տե՛ս 177րդ օր.) սոյն ա—զ գծին կցորդուած կոր գիծը (Տե՛ս 177րդ օր.) սոյն ա—զ գծին կցորդուած կոր գիծը (Տե՛ս 177րդ օր.), այն ատեն Գ կէտի հաւասարութենէն դէպի կերպասին ծալքը ուղղահայեաց գիծ մը կ'քաշենք, որ է Գգ—Ե (Տե՛ս 176րդ օր. ձեւոցին դիրք)։ Այժմ Ե կէտէն մինչեւ և կէտ շատ մեղմ կոր գիծ մը կ'քաշենք կերպասին վրայ և ասոր ալ կարաբաժին մը ձգելով՝ կերպասը կ'կտրենք (Տե՛ս 176րդ օր. ուր նախորդ եւ սոյն ձեւուն կերպասները տարբեր զծերով կ'երեւան), և երբ սոյն Ե—Զ մեղմ կոր գիծը փոթփոթենք ու հաւասարեցնենք գահվրայի Դ—Լ' գծին։ Ճիշտ անոր համապատասխան կորութիւնը պիտի ստանայ, բացի և և Լ' կէտերուն միջոցը գտնուած հեռաւորութիւնը, որ այն ալ սեղմօնին դերը կատարող տարրերութիւնն է (լաւ դիտէ սոյն 176րդ օր. մաւրամասնութիւնները)։

Առաջամասը։ — Սուկանն եթէ կրծամէջն պիտի կոճկուի, Յ հարմէդի չափ կլրպասին եզրէն դէպ ի ներսօք առբերանի բաժին մը ձգելու է, և ձախ կողմին համար ալ 2 $\frac{1}{2}$ հարմէդի չափ կոճակաբեղկի բաժին, կամ թերեւս հակածալ ձեւացնել ուղուի։ իսկ եթէ քովէն կոճկուիլ կ'ուղուի՝ այն ատեն կերպասին ծալքը կ'նկատենք ա—Բ գիծ (Տե՛ս 177րդ օր.)։ Եւ համարենք թէ յետսամասին պէս, ասոր ալ լանջեղին $\frac{2}{3}$ ին հաւասարութեանը դէմ փոթփոթել կ'ուղենք, հետեւապէս կ'առնենք 10րդ չափին $\frac{2}{3}$ ը որ կ'ընէ 12 հարմէդ, կ'դնենք ա կէտէն ներս՝ կերպասի գագաթին

վրայ և զուգահեռաբար կ'քաշենք զ—դ գիծը։ Այժմ առաջամասի տիպարին Զ և Յ կէտերը կ'հաւասարեցնենք սոյն զ—դ գիծին և Ե կէտը կերպասի գագաթէն մէկ կարաբաժին վարօք (Տե՛ս 177րդ օր. տարբեր սուներով ներկայացուած տիպարին կողանջատը կ'դարձնենք և Ե—Լ' և Լ'—Ձ'—Մ' գծերուն կարաբաժինները դնելով՝ կերպասը կ'կտրենք. իսկ կոնքի հաւասարութիւնը նախ կ'հետեւինք Մ'—Մ' գծին և ապա՝ Յ կէտը Զ հարմէդի չափ ցացնելով (որ է դ կէտ), կ'անցնինք դ կէտին վրայ և անկից ալ ուղղահայեացարար մինչև բ կէտ։ որ կոնքին այս մասը կ'ծառայէ քղանցքին մէջ պահուելու (թերեւս վրան ալ ձգուի)։ Բայց թէ որ փոքր անկունով մը ուղուի չինուիլ, նախ Բ կէտէն Ց հարմէդ վարօք կ'նշանակենք ը կէտը, յետոյ Ժ' կէտէն մէկ կարաբաժին վարօք մեղմ կոր գիծ մը սկսելով, կ'վերածենք վէտկորի և Կ'անցնինք ը կէտին ու կ'երթանք մինչեւ թ կէտ (Տե՛ս 177րդ օրինակ)։

Գալով վերի եզրին, Եթէ գահվրան ուղիղ գծով առած ենք, որ է գ—Ե գիծը, այն ատեն այս գծէն մէկ կարաբաժին վերօք կերպասը կ'յարդարենք՝ որ է ա—զ—Է գիծը։ Իսկ Եթէ կրծամէջն անկիւնաւոր ձեւով կ'ուղուի, որ է Ե—Զ գիծը։ այն ատեն կերպասին ծալքէն մինչեւ Զ կէտ ուղղահայեաց գիծ մը կ'քաշենք (Տե՛ս 177րդ օրինակ, նոյն տեղի ձեւոցի պատկերին դիրք), որ է Զ—Գ գիծ։ Յետոյ Ե կէտէն մինչեւ զ կէտ մեղմ կոր գիծ մ'ալ քաշելով՝ կարաբաժինը կ'ձգենք՝ ու կերպասին աւելորդը կ'կըտրենք (Տե՛ս 177րդ օր. Երկու ձեւերուն կերպասին տարբեր ուղերը)։

Կարելու կերպը. — Եթէ ներքեւն աստառէ իրանազգեստ չկայ, գոնէ գահվրային ներքեւը աստառ մը կ'ունենայ. ուստի նկատելով որ կցորդելու առաջնութիւնը յետսամասին տուինք, ուրեմն ա կէտէն (կամ անկիւնաւոր եղած ատեն Ե կէտէն) մինչև թիկան լայնութեան $\frac{2}{3}$ ին դէմ փոքր շուլլալ մը կ'ընենք ու թելը քաշելով՝ կերպասը կ'կծկենք, մինչեւ որ փոթի բաժինը գահվրային լայնութեան հաւասարի՝ և թելը կ'կապենք. նոյն պէս ալ միւս կէտը։ Յետոյ գահվրային աստառը կ'գոցենք կերպասի շըբջնին կողմը և կարաբաժինին լայնութեամբ իրար կ'կարենք ու կ'ցցենք վեր, որով կարին ծիւ շըթունքը կ'մնայ. Երեսի կողմը, որ կ'տարածենք գահվրայի աստառին վրայ։

Առաջամասերն ալ ճիշտ այսպէս կ'ընենք, ի բաց առեալ քովէն կոմկուելու պարագան, զոր պիտի բացատրենք է. գլխու ժջ. դասով:

Ապա՝ այս ընդհանուրը կ'տարածենք սեղանին վրայ՝ երեսի կողմը դէպ ի վեր և հիմա ալ կ'ծածկենք գահվրային կերպասը, ու շուրջը կ'դերակարենք. աւելի լաւ է որ նախապէս գահվրային կերպասը ձեռւած չըլլայ և այժմ առնուի բաւարար մաս մը ու այնպէս գերակարուի, որպէս զի հոս ու հոն հրմշտկուելով կաշկանդումի առիթ շամայ՝ այլ ամէն կողմն ալ աստառէն քիչ մը թոյլ դրուի. յետոյ թիկան և լանջքի հաւասարութիւններուն կարաբաժիններ ձգելով՝ տւելորդները կ'յարդարենք, և վերջնականապէս շրթունքները ներս ծալլելով մանր մանր կ'դերակարենք: Ամէնէն ետք կ'դարձնենք շրջօնին կողմը, այս անդամ ուսերուն ու փողեղբի կերպասին աւելորդներն աստառին հաւասարութեամբը կ'յարդարենք:

Այս գործողութիւններէն ետք է որ գահվրային շրթունքները կ'զարդարուի, թափանց կարերով կամ ուրիշ նիւթերով:

Շրջօնի կողմը մաքուր ցուցնելու համար, կրնայ նախապէս գահվրային կերպասը ճիշտ ձեռւուիլ, կարին ծիւ մասը շրջօնին կողմը ձգուիլ, երեսի թափանց կարերը կամ զարդերը դրուելէ ետք, աստառը կ'ծածկուի մէջը և ծալկարերով կ'հաստատուի:

Գահվրային կերպասը՝ իբրեւ զարդ տարբեր նիւթերէ ալ կրնայ ըլլալ (Թօսին կարգադրելու կերպը տե՛ս սոյն գլխու Ժ. դասը):

ԳԱԼՈՒՅՈ

ԲՈՂՈՐԾԻ ԳԱՀՎՐԱՅՈՎ ՍՈՒԿԱՆՆԵՐ

(Տե՛ս Լ. Թ. տախ. 178էն մինչեւ 181րդ օր. եւ Լ. Ե. տախ. 184րդ պատ.)

Գահվրաները ո՛չ միայն ուղիղ, անկիւնաւոր, թեւակով կամ բազմանկիւն կ'ըլլան, այլ և բոլորածև ալ (Տե՛ս Լ. Ե. տախ. 184րդ պատ.), որուն ձեռելու սկզբնական հիմունքը նախորդներէն տարբերութիւն չունի. բացի քանի մը փոքր գիտելիքներէ: Օրինակի համար, առաջամասին ու յետոամասին տիպարներուն ժ և Ծ կէտերը և մինչև ուսածագին մէկ երրորդը կ'հաւասարեցնենք թիկ-

ԳԱՀՎՐԱՅՆԵՐ

Օրինակ 172.

Օրինակ 173.

Օրինակ 174.

Կոնակէս կոճկուռելիք
գահվրայ:

Կրծեզրէս կոճկուռելիք:

Օր. 175.

ԴԱՀՎՐԱՅՆԵՐ ՍՈՒԿԱՆԵՐ

Օրինակ 177.

Օրի. 176.

Օրի. 178.

Օ. 179.

Օրինակ 180.

Օրի. 181.

17

նածագի մէկ երբորդին, որով ի և և կէտերը ընապէս իրարմէ անջատ կ'մնային, որ չափելով՝ այս անդամ անոր կէսը կ'նշանակենք Ե կէտէն Ե ուղղահայեացին վրայ, որ է Ե' կէտը՝ և մէկ չորրորդն ալ Հ կէտէն վար՝ Լ' կէտին համար (Տե՛ս 178րդ օր.): Գալով կռնամէջի լայնութեան. համարենք թէ կ'ուզենք մինչեւ Ե—Գ գծին մէջտեղը հաստատել, որ է Ե կէտը, և Լ'—Ե' գիծը կ'իջեցնենք մինչեւ նոյն հաւասարութիւնը՝ որով կ'կազմուի Ե' կէտը. իսկ կրծեզրին վրայի աստիճանը՝ համարենք թէ այս ալ Կ'ուզենք Զ կէտէն Զ հարմէդ վերօք հաստատել, որ է Զ' (կամ ա') կէտը (Տե՛ս 178րդ օր.): Ե կէտէն կոր գիծ մը սկսելով հետզհետէ բոլորաձեւ կ'ասանինք մինչեւ Ի կէտ, ապա Խ կէտ և յետոյ՝ միշտ բոլորչի ձեւով կ'գծենք մինչեւ Զ' կէտ, դիտելով որ սոյն վերջաւորութիւնը Դ—Զ' գծին հետ գրեթէ ուղղահայեաց դիրք մը առնէ (Լա՛ւ դիտէ 178րդ օր.): Այժմ ի և Խ կէտերուն բացութիւնը անհետացնելու համար, նոյն բացութեան կէսին չափովը Ճիշտ միեւնոյն տեղը փոքրիկ սեղմօն մը կ'գծենք (Տե՛ս 179րդ օր. սոյն բոլորաձեւ գահվրայի բացուած ձեւին վրայ՝ Խ եւ Ի կէտերուն մեջ տեղը գծուած սեղմօնը). իսկ ֆնացած կէսն ալ թիկնանկիւնին մօտերը փոքրիկ սեղմօն մը կ'գծենք, որ է զ և Է անջառութիւնը (Տե՛ս 178 եւ 179րդ օրինակներուն վրայ): Տարակոյս չկայ թէ նախապէս ներքեւը տիպարցու թուղթ մը դրած ենք, և հիմա փշանուակով կ'օրինակենք Ե—Լ', Լ'—ՃԾ—Դ, Դ—Զ' և Ե'—Կ—Գ—Ի—Խ—Զ' գծերը, ինչպէս նաև երկու փոքր սեղմօնները:

Բոլորչի գահվրան ալ կրնայ կրծեզրէն կամ կռնամէջէն կռնկուիլ, բայց մենք այժմ համարենք թէ կրծեզրէն կ'ուզենք կոճկել. ուստի տիպարին Ե—Լ' գիծը կ'գնենք աստառին ծալքին, շուրջը մէյ մէկ կարաբաժին կ'գծենք, իսկ կրծեզրը Յ հարմէդ և սեղմօններն ալ օրինակելով՝ աստառը կ'կտրենք ու կ'բանանք (Տե՛ս 179րդ օրինակ սոյն բոլորչի գահվրային բացուած ձեւը եւ տիպարին ու աստառին տարբերութիւնները՝ զատ զատ տույերով): Կռնկուելու պարագային համեմատ աջ կողմի Դ—ա գծէն դուրս կըրծեզրը Զ հարմէդի կ'վերածուի, որ է ը—թ գծով յաւելուածը. իսկ ձախ կողմի Դ—ա' գծէն դուրս Յ հարմէդը անփոփոխ կ'պահուի, որ է թ—թ' (Տե՛ս 179րդ օրինակ, ուր Ե'—Լ' զիծը կռնամէջի ծալքը կ'ներկայացնէ):

Ինչպէս կ'երեւայ՝ մեր սոյն բոլորշի անուանած գահվրայի կրծեղրին կողմը ձուաձեւ հակում մ'ունի, արդ՝ եթէ կ'փափաքինք որ բացարձակապէս բոլորշի ըլլայ. առաջամասս Ծ—ի գծին երկայնութիւնը կ'փոխադրենք թէ՛ Ծ՝ կէտէն դէպ ի Ծ—Ե՛ գծին վրայ և թէ՛ հագագէն (Դ կէտէն) դէպ ի կրծեղրին վրայ, և այս կէտերը բոլորշի գծով մը իրարու կ'միցաննք, այնպէս որ ուսին լայնութեամբը և փողեղրի ձեւին ընթացքովը զուգահեռական մանեակ մը կ'ձեանայ. իսկապէս բոլորշի կոչուելու արժանի:

* * *

ԲՈԼՈՐԾԻ ԳԱՀՎՐԱՅՈՎ ՍՈՒԿԱՆԻ ՅԵՏՍԱՄԱՍԻՆ ՈՒ ԱՌԱՋԱ- ՄԱՍԻՆ ԿԵՐՊԱՄՆԵՐԸ ԶԵԽԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Տեսամասը. — Ասոր անութը, կողանջատն ու ստորոտը ձևելու կերպը բնաւ տարբերութիւն չունի նախորդ գասի հրահանգէն, այլ ինդիրը թիկան դէմի բոլորշի ձեւ տրուելուն վրայ է: Ասկէ զատ գիտնալու ալ է որ, սուկանը բոլորշի գահվրայով եղած ատեն, փոթփոթելու բաժինը գոնէ թիկան լայնութեան չափին հաւասար ըլլալու է. հետեւապէս յետսամասին տիպարը կերպասին ծալքէն՝ այն է ա—բ գծէն 17 հարմէդ հեռու դնելու է, որ է Ե—զ գիծը (Տե՛ս 181րդ օր.): Յետոյ կռնամէջի գահվրային հաւասարութենէն (որ է Ե՛ կէտը) դէպի կերպասի ծալքն ուղղահայեաց գիծ մը կ'քաշենք (Տե՛ս 181րդ օր, ձեւոցին պատկերը): Ապա՝ ձեռցին անկիւնէն մեղք կոր գիծ մը սկսելով՝ տակաւ առ տակաւ գոգաւոր ձեւով մը կ'բարձրացնենք մինչեւ ի կէտ, և այս գծէն կարաբաժին մը ձգելով՝ կերպասը կ'կտրենք, որ է ա—զ և զ—գ եղրերը, այսինքն այս վերջինը Չ հարմէդով ընդհատուած ծայր մը կ'ձեանայ՝ ի կէտին մէն մի կողմի մէյ մէկ հարմէդ կարաբաժիններուն պատճառովը:

Առաջամասը. — Այս առաջամասին կերպասը ձեւելու կերպը նախորդ գասի գահվրայով սուկանին նմանն է. միայն եթէ կը փափաքուի որ կրծեղրը թագուցիկ կերպով իրարու քով կենայ (ինչպէս Լ. Տախ. 183րդ պատ.), այն ատեն կերպասին եղրէն Յ հարմէդի չափ առերանի բաժին ձգելով կ'ունենանք ա—բ գիծը (Տե՛ս 180րդ օր.), և այս գծէն դէպի ներսօք կ'գնենք փոթփո-

թելու բաժինը՝ իբրեւ նուազագոյն թիւ 42 հարմէդ կամ չափաւոր ըլլալու համար ալ 10րդ չափին հաւասար, որ է 18 հարմէդու կ'քաշենք զ—դ գիծը: Իսկ տիպարը սոյն զ—դ գծին հաւասարեցնել, կողանջատափ շարժումը և անոնց կարաբաժինները ձգելով՝ կերպասը կտրելու կերպը, ինչպէս նաեւ ստորոտը բացառութիւն չունին, նոյնպէս ալ լանջեղրին բոլորշի ձեւը տալու կերպը՝ ասոր յետսամասի հրահանգին նմանն է: Որո՞վհետեւ գահվրային կրծեղրի երկայնութիւնը հաստատուած է Զ' կէտին վրայ, ուրեմն նախ այս կէտէն ա—բ գծին հետ ուղղահայեաց գիծ մը կ'քաշենք. յետոյ տիգուսյօդէն մեղմ կոր գիծ մը սկսելով՝ տակաւ առ տակաւ գոգաւոր ձեւի մը վերածելով, կ'ձգենք ա կէտին վրայ. և երբ առոր կարաբաժինը ձգենք՝ երբուծի կարաբաժինին հետ ուսածագին վրայ Չ հարմէդ լայնութիւն մը կ'ըստանան, որ է Ե—զ գիծ, և որ պիտի միանայ յետսամասի զ—գ գծին:

Այս սուկանն ալ կրնայ անկունով շինուիլ:

Գահվրային կարելու կերպը՝ ուսը սեղմօնովին նմանն է, այսինքն սաստառն ու կերպասը նախ վեր ի վերոյ դերակարելէ ետք, կերպասին շուրջը յարդարել, ետ մղել, սաստառին փոքրիկ սեղմօնները կարել և յետոյ կերպասին շրթունքը կերցնելով դերակարել և արդուկելու է: Իսկ սուկանին հետ կցորդելու գործողութիւններն ալ արդէն ծանօթ են: Միայն հարկ կ'համարինք յիշել թէ այս բոլորշի գահվրային շուրջը փոթփոթուած ծածանող ժանեակ, խանդուոք կամ ասղենկար դրասանք կարուիլը շատ սիրուն երեւոյթ մը կուտայ անոր, որ մարդ պիտի փորձուի կարծելու թէ շարժուն ուսնոց մը կ'կրէ (Տե՛ս Լ. Տախ. 184րդ պատ.):

Փ Ա Ս Փ .

ՇԱՊԻԿ—ՍՈՒԿԱՆՆԵՐ ԵՒ ԱՆՈՆՑ ԳԱՀՎՐԱՆԵՐԸ

(Տե՛ս Լ. Տախ. 186էն մինչեւ 190րդ պատկերն ու օրինակները)

Ինչպէս ըսինք, կարդ մը գահվրայով սուկաններ ալ կան որ շապիկ—սուկան կ'կոչուին, այսինքն արանց օսլայուն շապիկներուն կեղծնմանը ձեւացնելով, այն է շատ նեղ գահվրայով մը շինուած. և այս ալ կնոջական ձեւին մէջ երկու սկզբունքով կ'ձանչ-

ցուի, կայ որ առաջակողմէն բնաւ գահվրայ չերեւար այլ ուսին մակերսին հետ կ'ըլլայ ու միայն յետսակողմը նեղ գահվրայ մը կը տեսնուի, և կայ ալ որ առաջակողմէն ալ քիչ մը կ'երեւայ (Տե՛ս 186րդ պատկեր), ուստի մակերեսին հետ զուգահեռական լայնութեամբ: Եւ ահա այս հիմնական սկզբունքին վրայ է որ սկսած են դարձդարձիկ ձեւերով՝ բազմաթիւ շատկի զանվրաներ յօրինել, ինչպէս հիմա սկիտի բացատրենք:

Շապիկի գանվրաներ պատրաստելու կերպը. — Ասոր ալ հիմնական սկզբունքները միակոտը գահվրաներ պատրաստելու եղանակին նմանն է. հետեւաբար, նախ սուլկանի գահվրային միջին լայնութեամբ կոնակի ձեւը պէտք է գծենք, որ յետոյ կարենանք զայն շապիկի գահվրայի վերածել: Ուստի առաջամասի տիպարին ուսածագն ու յետսամասի տիպարին թիկնածագն իրարու կցել և փողեղը բաղդատութիւն ընելու պէս՝ կոնածագն ու փողեղը ներդաշնակ դիրքի մէջ դնելէ ետք, միշտ գահվրայի ընդհանուր կանոնին համեմատ, ի և Խ կէտերուն հեռաւորութեան չափին տմբողջով ու կոտորակներովը կ'կազմենք Ք, Լ', Ե' և Ը' կէտերը (Տե՛ս 188րդ օր.): կ'քաշենք նաեւ Ը'—Ե', Լ'—Ժ, Ե'—Լ' և Լ'—Խ գծերը (Տե՛ս 188րդ օր. ուր այս երկու վերջինները շատ բարակ գծով մը ներկայացուցած են): Այժմ բուն շապիկի գահվրային թիկնամասի լայնութիւնը կ'առնուի Դ—Ե և Լ'—Խ գծերուն մէջտեղէն որ նախորդ Լ'—Ե գծին հետ ու անոր զուգահեռական կոր ձեւովը նեղցած կ'ըլլայ, որ է Խ'—Դ" գիծը: Գալով առաջակողմին՝ որ երկու սկզբունքով կ'ըլլայ ըսինք. նախ կ'առնենք առաջին ձեւը, որ եթէ ուսին մակերեսէն ձեւացնել կ'ուղենք, Ծ'—Խ' գիծը քաշելով վերջացած կ'ըլլայ: Խոկ արանց շապիկի ձեւով եղած ատեն՝ որ պէտք է առաջակողմէն ալ երեայ (Խնչպէս 187րդ պատ.): այն ատեն Ծ'—Խ' գծէն Զ հարմէդ զուգահեռաբար դէպի առաջամասին վրայ իջնելով կ'քաշենք ա—բ գիծը (Տե՛ս 188րդ օր. ուր այս վերջինը սարբեր սուլերով մը ներկայացուցած են):

Եթէ սուլկանն առաջակողմէն պիտի փակուի, Լ'—Դ" գիծը կերպասի ծալքին դրուելով կ'կարուի. ուստի բացուած ատեն կոնածագը վայելուչ կորութիւն մունենալու է (Տե՛ս 190րդ օր. Խ'—Դ"—Խ', Խ—Բ, Բ—Ա եւ Ա—Ը' գծերը, ուր Խ'—Ը' գիծը ուսին մակերեսի հաւասարութիւններուն կ'պատկերացնեն):

Սյս երկու ծանօթ ու ընկալեալ ձեւերէն վերջը կուգան բազմաթիւ գահվրայի ձեւեր, որոնք պարզապէս գծագիտական գրչի զրուանքներ են, օրինակի համար, առաջակողմի մէջ տեղը անկիւն մը ձեւացնել, այն է ա—բ գիծը կէս ընել ու գ—դ փոքրիկ հորիզոնականը յառաջ բերել, Յ հարմէդով դ կէտն հաստատել և բ—դ ու դ—ա կոր գծերը կազմել (Տե՛ս 188րդ օր. ուր այս ալ սարբեր սուլերով մը ցուցուցած են):

Կրնայ նաև թիկնամասին մէջ տեղն ալ անկիւնաւոր ըլլալ՝ ճիշտ միեւնոյն գործողութեամբ (Տե՛ս 189րդ օր.), որոնք են ե—զ փոքրիկ հորիզոնականն ու Խ'—զ և զ—Դ" կոր գծերը:

Կրնայ փոքրիկ աղլիսներ ալ յօրինուիլ, թիկնամասին մէջ տեղին դէմ, որ է Ե կէտին երկու կողմերը Զական հարմէդով զ և կ կէտերը կազմել (Տե՛ս 188րդ օր.), նոյն չափ ալ երկայնութիւնները և մէջ տեղը Յ $\frac{1}{2}$ հարմէդով բութանկիւնը ձեւացնելով կամ զանոնք դէպ ի ուսերուն կողմը ներկայացնելով (Խնչպէս 187րդ պատկերը), և կամ կոնամէջին դէմ ներկայացնելով:

Կրնայ խոտոր ձեւերով ալ շինուիլ, զոր օրինակ. փողեղը կէս կ'ընենք ու կ'անուանենք գ կէտ (Տե՛ս 189րդ օր.) և Բ կէտն ուղիղ գծով մը կ'միացնենք սոյն գ կէտին:

Կամ Դ կէտէն ներս կ'նշանակենք հակածալի մը կէս լայնութիւնը՝ որ մօտաւորապէս կ'ըլլայ Զ հարմէդ, զոր կ'ունենանք ա կէտ. յետոյ Բ կէտէն կոր գծով մը կ'սկսինք ու չափազանց վէտ կոր ձևի մը վերածելով կ'միացնենք ա կէտին (Տե՛ս 189րդ օր. ուր այս վերջինը տարբեր սուլերով մը շինած են): Թիկնամասն ալ դէպ ի կոնամէջ խոտոր կրնայ ըլլալ (Տե՛ս 189րդ օր. Խ'—Է գիծը), շատ մեղմ կոր գծով մը (Տե՛ս այս վերջինին բացուած ձեւը 190րդ օրինակին վրայ Խ'—Է—Խ' գծերը):

Ուրեմն, Խնչպէս կ'տեսնուի գահվրային գլխաւոր սկզբունքները ըմբռնելէ վերջ, շատ դիւրին է հարիւրաւոր տարբեր ձեւերով ընվ ներկայացնել զանոնք, գծերու ամենափոքը շարժումներով, բաւական է որ նորածեւութեան պատկերին վրայ լաւ դիտուի թէ անոնք ո՞ր հաւասարութիւնները կ'չօշափին ու ի՞նչ ձև գծերով ժնուած են (Ուշի ուսուլ կարգալու է յաջորդ զիսաւ Բ. դասր):

Շապիկ սուլկաններուն մարմինն ալ ճիշտ միւս սուլկաններուն պէս կ'պատրաստուի, միայն վերի մասերն ինքնարբերաբ աւելի բարձր կ'կազմուին ու գահվրային ստացած խոտոր ձևերն ալ անոնց համեմատ կ'օրինակուին:

ՊԱՍ Ժ.

ՄՈՒԿԱՆԻ ԵՒ «ՊՈԼԵԲՈ»Ի ԳՈՏԻՆԵՐ

(Տե՛ս Հ. Տախտակ 1912 մինչեւ 194րդ օրինակները)

Երկու սեռին համար ալ մէջքը գօտի կապելը շատ հին սովորութիւն մըն է, անշուշու ծագման նպատակն է նախնական պարզունակ հագուստին մէջքն ամփոփ պահել, որ կասկած չկայ թէ ծառի կեղեւէն միսկով՝ մարդոց օրստօրէ զարդացման ու յառաջդիմութեան հետ մտած է պերճանքի շարքին մէջ և եղած է ցփսիէ, բրդէ, բամպակէ ու մետաքսեղէն կերպասներէ, մետաղէ, արծաթէ ու ոսկիէ հիւսկէններէ, ուլունկներէ, գաղտակուրէ ու մարդարիտներէ, աղամանդէ ու յակինթէ, մեծարժէք քարերու ագուցուածքներով և վերջապէս կաշիէ, փոկէ, խեժէ ու առասանէ գօտիներ, որոնք կղերին ու աշխարհականին ցուցադրական գլխաւոր զարդն ըլլալով հանդերձ, մինչեւ անդամ մարդիկ չեն մուցած հրեշտակներն ու սուրբերն անդամ անոնցմով զարդարել, Ուրեմն, ակներև է թէ գօտին միշտ եղած է, կայ ու պիտի մնայ իրբե մշտակայ նորաձեւութիւն։ Այսօր զանազան նիւթերով պատրաստուած գօտիներու պէսպիսութիւնն անթիւ անհամար ըլլալով հանդերձ. սուկանի ու պօլերօի գօտիներ ալ կ'պատրաստուին՝ նոյն իսկ իրենց կերպասին տեսակէն կամ տարբեր գոյն կերպասներէ, ինչպէս են թաւիչէ, սնդուսէ, դիպակէ, բեհեզէ և այլն։

Անկոււած կերպասներով պատրաստուած գօտիները, որ սա՛քանի մը տարուան մէջ աչքառու նորութիւն մ'եղաւ, չորս գըլիստոր ձեւեր ունին. Ա. — Միայն ազդրերուն շուրջը պատելով (Տե՛ս Հ. Տախտակ 183րդ պատ.), որ առաւելապէս կ'պատշաճի իրանն անհամեմատ կարձ կազմերու։ Բ. — Բոլորովին իրանին շուրջը պատելով (Տե՛ս Հ. Տախտակ 170րդ պատ.), այս ալ կ'պատշաճի իրանը չափազանց երկայն եղողներուն։ Գ. — Յետսակողմը իրանին վրայ, առաջակողմը քաղցրթին վրայ և երկու քովերը կէս առ կէս (Տե՛ս Հ. Տախտակ 154րդ պատկեր), այս ձեւն ալ կ'պատշաճի առաջակողման գօտեվայրը բարձր եղողներուն։ Դ. — կ'ըլլայ նաեւ հաւասարապէս

իրանին ու ազդրերուն վրայ, որ ամէնէն քիչ գործածականն է (Տե՛ս Հ. Տախտակ 184րդ պատկեր)։

Երդ, առաջին կերպին ձեւադեկու եղանակն արդէն բացատրած ենք Ա. հատորի Դ. գլխու Գ. դասին մէջ, վտաւատ ձեւացնելու հրահանգով (Տե՛ս Ի. Տախտ. 76րդ օր.)։ Նոյն վտաւատը միեւնոյն ատեն կ'վերածուի ազդրը պատող գօտիի ձեւին, Բ—Ժ—Ղ. կ’զէն 4¹/₂-5 հարմէդ զուգահեռական լայնութեամբ ուրիշ գիծ մ'աւելցնելով (Տե՛ս Ի. Տախտ. 76րդ օրինակին մուլք սուերով մասը)։ Եթէ առաջակողմի վարի եղրն անկիւնաւոր չինել ուզուի կամ ձուաձեւ-վէտկոր (Տե՛ս Այս ամէնը 76րդ օրինակին վրայ ինչպէս նաեւ լ. Բ. Տախտակ 169րդ պատկեր)։ և կամ շեղանկիւն ձեւացացած (Տե՛ս Հ. Ա. Տախտակ 164րդ պատկեր)։

Երկրորդ կերպը ձեւագծելու համար, այս անգամ առաջամասի տիպարին սեղմօններուն վերի կողմի շրջագծերն իրարու կը կցենք ու վարի կողմը կ'թողունք ստացած դիրքին մէջ (Տե՛ս 192րդ օր.)։ Յետոյ կողամասին Հ—Զ գիծը կ'կցենք առաջամասի կողանջատին, ինչպէս նաեւ յետսամասը կողնաղեղին, իբր թէ «Զուափ» թիկնազգեստ ձեւել ուզէնք. միայն այս անգամ իրանազգեստի տիպար ըլլալուն համար, ազդրերուն ու երանին մասերն իրարու վրայ կ'ելլեն։ Ապա, վշանուակը կ'առնենք ու Զ—Զ—Բ գիծը վայելուչ կորութիւնով մը կ'օրինակենք՝ նախապէս ներքեւը դրուած տիպարցու թղթին վրայ, 4¹/₂ 5 հարմէդ ալ զուգահեռական բարձրութիւն մը կ'ուտանք, որ է ա—բ—գ գիծը։

Թերեւս առաջակողմն ու յետսակողմը թէ՛ վար և թէ՛ վեր անկիւններ ձեւացնել ուզուի (Տե՛ս Հ. Ա. Տախտ. 162 պատ.), կամ միայն վերի կողմը (Տե՛ս Լ. Բ. Տախտ. 170րդ պատ.)։ Ուրեմն, համարենք թէ վարի և վերի կողմերը միանգամայն անկիւնաւոր ձեւացնել կ'ուզենք. ուստի յետսակողմի ակտէն վեր և Զ կէտէն վար 2¹/₂ կամ Յական հարմէդով կ'նշանակենք և եկտերը. ինչպէս նաեւ առաջակողմի գ կէտէն վեր և Բ կէտէն վար ալ զ և կէտերը, և երկու կողմի դ—ե և զ—կ գծերը ափարներուն ձեռվը կ'օրինակենք. ամէնէն վերջ դ, ե, զ և կ կէտերը մէջ մէկ գողաւոր գծերով կ'միացնենք. այս գծերուն։ Այս ամէնը վշանուակը ներքեսի տիպարցու թղթին վրայ օրինակուած ըլլալով, զայն ձեիչով կ'կարենք. և եթէ ուզենք որ այս գօտիին ագուց-

ուածքը առաջակողմէն ըլլայ՝ այն ատեն յետսակողմը միակտոր շնորհ պէտք է, ուստի տիպարին դ—ե գիծը կերպասի ծալքին դնելով՝ որուն բացուած ամբողջութիւնը կարծես դրասանքի մը տեսքը կ'ունենայ (Տե՛ս 193րդ օր.): Մոռնալու չէ Զ—Զ—Բ գծին բաղդատութիւնը 12րդ չափին հետ:

Եթէ ուղենք երրորդ ձևը շինել, գործը քիչ մը կ'կնճռուտի, որովհետեւ՝ նախ առաջամասին սեղմօննելոն առաջին կերպին համեմատ պէտք է ծալլել, այն է վտաւատ ձեացնելու եղանակին պէս (Տե՛ս 191րդ օր.): Յետոյ նկատելով որ գօտիին լայնութիւնը կ'ուզենք 5 հարմէդով պատրաստել. ուստի առաջամասի սնակուշտէն, այսինքն ժ կէտէն վեր կ'նշանակենք գօտիի լայնութեան կէսը՝ այն է 2½ հարմէդով թ կէտը և 2½ հարմէդ ալ դէպ ի ազդրին վրայ իջնելով կ'նշանակենք դ կէտը. այժմ կողամասին տիպարն առնելով՝ նախ ասոր Զ կէտը կ'կցենք առաջամասի ժ կէտին, ապա կ'նայինք որ թ և դ կէտերուն հաւասարութեանց դէմ կողամասին ա և զ կէտերը միենոյն քանակութեամբ իրարու վրայ դրուին. Հուսկ յետոյ կ'կցենք յետսամասին Խ կէտը՝ կողամասի Ղ կէտին և Կ կէտը կողնազեղին, որով այս երկու վերջիններուն երանի մասերն իրարու վրայ կ'ելլեն. մինչդեռ կողանջատը՝ թէ՛ իրանին և թէ՛ ազդրին մասերը միանդամայն (Տե՛ս 191րդ օրինակ ուր այս դիրերը մուր ստուեներով ցուցուցած ենք):

Այժմ Զ կէտէն վեր կ'նշանակենք յետսակողմի լայնութիւնը 5 հարմէդով ե կէտը, իսկ առաջակողմը՝ Բ կէտէն դարձեալ 5 հարմէդ վարօքալ զ կէտը: Զ կէտէն ուղղայեաց գծով մը կ'յառաջանանք մինչեւ ԽՂ ու տակաւ առ տակաւ կոր գծի մը վերածելով դ և զ կէտերուն վրայէն կ'անցնինք՝ գծին դիրքը վէտկորի վերածելով՝ կ'երթանք մինչեւ զ կէտ: Այս գծին ձիշա զուգահեռական ճեւովն ալ կ'քաշենք ե—բա—Բ գիծը: Կ'օրինակենք նաեւ Ե—Զ և Բ—զ փոքրիկ գծերը: Ու եթէ առաջակողմն անկիւնաւոր կ'ուզուի, զ կէտէն Յ հարմէդի չափ վարօք կ'նշանակենք ե կէտը և այս անդամ վարի շուրթը կ'ունենանք Զ—ԽՂ—Դ—Գ—Բ—Ե գիծը: իսկ ճուածեւ ուղուած ատեն ալ ը—ե վէտկոր գիծը (Տե՛ս բոլոր սոյն մանրամասնութիւնները 191րդ օրինակին վրայ): Անհրաժեշտ է 12րդ չափը բաղդատել Զ—ԽՂ—ԶՖ—Բ գծին ուղղութեամբը՝ որ մի՛ գուցէ մեծ կամ փոքր եղած ըլլայ:

Դարձեալ եթէ ագուցուածքն առաջակողմէն ուզենք ընել, ե—Զ գիծը կերպասի ծալքին դնելով կ'կորենք, ու երբ բանանք, Զ և Ե կէտերը պէտք է վայելլուչ կորութիւններ կազմած ըլլան (Տե՛ս 194րդ օր. որ առաջակողմն առած ենք ձուածել ձեւով): Այս ձեւելով պատրաստուելիք գօտիները կարելի չարենական բույս ձեւագծել և կարելի չէ մէկուն գօտիի տիպարը ուրիշի մ'ալ գործածել՝ քանի որ իւրաքանչիւրին կազմը տարբեր է ու ույն գօտիներուն գոգաւոր և վէտկոր գծերն ալ առաւել կամ նուազ իրարմէ տարբեր ձևեր պիտի ստանան:

Չորրորդ ձեւը առաջինին ու երկրորդին միատեղ ձուլուածն է, այսինքն նախ ազդրին վրայ պատող ձեւով տիպուրը պէտք է առնենք և յետոյ իրանը պատողն ու այս երկուքին գօտեվայրի շրթունքներն իրարու կցենք. որուն պատրաստելու գլխաւոր դերը կ'կայանայ կարելուն մէջ զոր քիչ մը վարը պիտի տեսնենք:

* * *

Գօտիները կարելու կերպը. — Այս կարգի գօտիներուն կերպասն ընդհանրապէս ողորկ կ'ըլլայ. հետեւապէս ներքեւը պընդածուէնով կ'պատրաստուի, ուստի բարձր—օձիք պատրաստելու նման՝ գօտիի տիպարին բաւարար և կրկնակի կանեփեայ կտաւառնելով, նախ մեքենայով կարգ կարգ թափանց կարեր ընել, թէթեւ մը թրջել ու արդուկելէ ետք. տիպարը վրան կ'դնենք, շուրջը ձառութեամբ կ'գծենք և աւելորդները կտրելով կ'յարդարենք: Յետոյ սոյն պատրաստուած պնդածուէնը կ'դնենք կերպասի շրջոնին վրայ՝ դիտելով որ յետսակողմի տրամագիծը կերպասին առէջքին հետ հաւասար ըլլայ, առանց ուշ դնելու որ երկու ծայրերը շեղ դիրք մը կ'առնեն (թէ՛ որ կերպասին լայնքը չըրաէ՛ մէջ տեղը կարով ալ կրնայ ըլլալ): Ապա՝ շուրջը կ'դերակարենք և կերպասէն 1 հարմէդի չափ զուգահեռաբար կարաբաժին ձգելով (Տե՛ս 194րդ օրինակին Ե—Բ և Բ—ա գծերը, որոնք կերպին ձգելով) կարաբաժինները կ'ներկայացնեն). վերջապէս այս կարաբաժինին կարաբաժինները կ'շրջենք կանեփեայ կտաւին վրայ ու մանը մանը կ'դիմակարենք. այնպէս որ ճիշտ բարձր—օձիքին երեւոյթը առնէ: Սակարենք. այնպէս որ ճիշտ բարձր—օձիքին երեւոյթը առնէ: Որո՞վհետեւ այս գօտիներն անջատ ալ կրնան գործածուիլ՝ սոյն գանին ալ կրնան կցուիլ: Առաջին պարագային եթէ շուրջը ժամանին ալ կրնան կցուիլ:

պաւինեակներ կամ թափանց կարեր ընել կ'ուզուի, զանոնք ընելէ վերջ, արդուկել, երկու ծայրի ճարմանդներն ալ կարելով, շրջօնն առբերանով մը ծածկելու է: Իսկ եթէ սուկանին պիտի կցուի, այն ատեն բարձր-օճիքի պէս դերակարելու է սուկանի գոտեվայրին, և յետոյ միւս գործողութիւնները կատարելու է: Նոյն իսկ թափանց կարերով զարդարել չուզուած ատեն, բարձր-օճիքին պէս՝ սուկանը գոտիին շրթունքն կէս հարմէդի չափ ներսօք կոտրելով, ծալկար մ'ընել ու մէջի շրթունքներն ալ վրայ կարով հաստատել և ճարմանդները կարել ու առբերանը ծածկելու է, որ երկու կողմն ալ մաքուր ըլլայ:

Այժմ շատ կարեւոր խնդիր մը կ'մնայ, այն է թէ երրորդ ձեւով գոտի մը շինել ուզուած ատեն (Տե՛ս 191 և 194րդ օրինակ-ները). Երբ կարգը կուգայ սուկանի գոտեվայրին կցելու (նոյն իսկ անջատ ալ դրուած ատեն), զ—դ և ա—բ միջոցները (Տե՛ս 194րդ օր.) արդուկով ընդգտելու է՝ մինչեւ որ կողանջատին ու ազդրին դէմ տիպարներուն իրարու վրայ եւած ա—բ և զ—դ բաժիններուն չափ (Տե՛ս 191րդ օր.) ընդարձակուին և ակոսաձեւ յօրինուելով, կարենայ կէսը իրանին վրայ բարձրանալ և կէսը ազդրին վրայ հանդչիլ, ասկէ վերջը կցելու է սուկանին, դժեւով միանդամայն որ յետակողմի Զ կէտը կցուի սուկանի Զ կէտին, թ կէտը առաջակողման գոտեվայրին, իսկ սնակուշտին վրայ կէս առ կէս: Մոռնալու չէ շրջօնի կողմը դրուելիք առբերանցունիւթին ալ նշանակուած տեղերն ընդգտանլ: Այս ձեւով գոտիին երեսի ու մէջի ո և է նիւթերուն ընդգտառիլը կասկածի տակ ըլլալու համար նախապէս ուշադրութիւն ընելու է որ՝ տիպարին կոնամէջի տրամագիծը ամէն մէկունն ալ առէջքի թելերուն դրուի, որով ա—բ և զ—դ միջոցներն ինքնարերաբար շեղ կ'կազմուին ու տրամադիր կ'ըլլան ամենայն ձկունութեամբ ընդգտելու: թ. ձեւով շինուած անկիննաւոր գոտիին ալ մէն մի անկիւնի կոր մասը փոքր ինչ ընդգտելու է որպէս զի երանին, իրանին, քաղրթին ու ստամոքսին դէմ լաւ հանդչին:

Բոլոր այս գոտիները քովէն ալ կրնան ագուցուիլ, այն ատեն մէկ ամրողը ձեւելէ ետք, տիպարը սնակուշտին հաւասարութենէն կտրել ու երկու մասի բաժներով՝ իւրաքանչւրը տանել կցելու է իրեն պատկանած տեղին և այնպէս պատրաստելու է,

(իրեւ զարդ՝ առաջակողմը կարով ալ կրնայ ըլլալ), այս պարագային՝ գոտիին $\frac{3}{4}$ ը կ'կցուի սուկանին և $\frac{1}{4}$ ը առկախ կ'մնայ (ընդհանրապէս ճախ կողմը): Իսկ սուկանին այս կողմի անգոտի մնացած չուրթը առբերանով մը կ'փակուի:

Սոյն ձեւով գոտիներուն վրայ կերպասը պաստամեկը ալ կրնայ ըլլալ, այս պարագային՝ վրայի կերպասը մօտաւորապէս 25 հարմէդ լայնութիւն մ'ունենալու է կատարեալ շեղ կտրուած, ապա՝ երկու ծայրերը պաստել և քովերն իրարու ներհակ խորշացաններ ձեւացնելով պրկելու է պնդածուէնին վրայ (Առանց պիտածուէնի եւ պոսումներով գօթներ տինելու կերպն ալ տե՛ս է, զիսու լի. դասը):

ՊԱՍ ԺԱ.

ԾԱ. 1—0 ԶԻ Ք

(Տե՛ս լի. տախ. 199րդ պատկեր և 200րդ օրինակ)

Ծալ—օճիքին ծագումը Արեւմտեան է և շատ հին ձեւ մէ: այնուէս որ 1745—1772ին ֆրանսական տրակոն զօրքերն ալ ծալ—օճիք կ'կրէին, և հակառակ հիմակուան բազմաթիւ օճիքի ձեւերուն, իր այժմէութիւնը բնաւ կորուսած չէ (Տե՛ս 199րդ պատկեր):

Ծալ օճիքը՝ յետսակողմը միայն ոտք կունենայ. իսկ հագագին վրայ զգեստին հետ հաւասար, որով՝ յետսակողմը ուզուածին չափ բարձր կ'շինուի և հագագը միշտ ցած կ'կազմուի: Ասիկայ առաւելապէս կ'ալատշաճի վիզը կարճ անձերու, և ամէն տեսակ հագուստի վրայ ալ կրնայ դրուելի. իսկ այսօր առաւելապէս կ'կցուի առանին հանդերձներու վրայ՝ ինչպէս են այգազգեստի, խցազգեստի, քոթանակի, ևայլն. բայց զեղեցիկ վիզ ունեցողին համար ամէն ժամանակ արտաքին հագուստներու ալ կ'կցուի, որ վիզին ու հագագին տեսքը ցայտուն և զգլիվիչ կ'ընծայէ:

Սոյն օճիքն առանց ձեւագծական եղանակներու ալ կրնայ պատրաստուիլ, պարզապէս ուղիղ կտոր մը փողեղրին կտրելով, մանաւանդ շեղ կտրուած, և թողուլ որ յետսակողմը ուզածին չափ ոտք մը բարձրանայ. ինչպէս ամէն անուս ձեւող ու կարող այս պէս կ'կերտեն զայն, առանց նկատողութեան առնելու հագուղին վիզի բարձրութիւնն ու պատշաճութիւնը: Եւ ահա ասոր համար

է որ կ'պարտաւորինք քանի մը հիմնական սկզբունքներով զայն ձեւագծելու եղանակը բացատրել . որպէս զի յետակողմն ուղղուածին չափ օձքուն ձեւանայ :

Արդ , կարուած հագուստին փողեղը կամ առաջամասին ու յետամասին տիպարները՝ գահվայ պատրաստելու եղանակին պէս ուսին երկայնութեան մէկերրորդն իրարու կցելով կ'դնենք տիպարցու թղթի մը վրայ (Տե՛ս 200րդ օր .) : Ծոծրակէն մինչեւ հագագ՝ փողեղին մեծութիւնը ճշութեամբ կ'չափենք , ու համարենք թէ եկաւ 19 հարմէդ : Եետոյ առաջամասին փողեղը՝ այն է Դ—Մ գիծը կէս ընելով մէջտեղը կ'նշանակենք Ք կէտը . քանակը կ'հաւասարեցնենք սոյն Ք կէտին և ծոծրակին (Ք կէտ) , ու կ'քաշենք Ք—Օ գիծը : Այժմ օձիքին յետակողմը քանի հարմէդ որ օձքուն ձեւացնել կ'ուղենք , նոյն չափ փողեղը չափէն կ'հանենք . ուստի համարենք թէ 3 հարմէդով օձքուն մը կ'ուղենք կազմել , հետեւապէս 19—3=16 հարմէդը Դ կէտէն շեղակի կ'դնենք Ք—Օ գծին վրայ և երիզին ծայրը հասած տեղը կ'հաստատենք 0 կէտը : Զեւոյը կ'հաւասարեցնենք 0—Ք գծին և գագաթէն կ'քաշենք 0—ա գիծը , և նոյն ուղղութիւնը կ'շարունակենք նաեւ 0—զ գծին համար : Ապա՝ օձքուին համար սահմանուած 3 հարմէդը կ'նշանակենք 0 կէտէն 0—ա գծին վրայ՝ ուր կ'հաստատուի ա կէտը . նոյն թիւը կ'նշանակենք նաեւ 0 կէտէն 0—զ գծին վրայ՝ ասով ալ կ'ունենանք օձքուին անդրագարձութիւնը , որ է Բ կէտ . դարձեալ 0 կէտէն 0—զ գծին վրայ յետսակողմի ըրջուքին լայնութիւնը՝ 4 կամ 5 հարմէդ՝ այս վերջինով ալ կ'հաստատուի զ կէտը : Ապա ուրեմն , ա և Դ կէտերն ուղիղ գծով մ'իրարու կը միացնենք ու ա կէտէն ալ ուղիղ անկիւն մը ձեւացնող մեղմ կոր գիծ մ'սկսելով՝ դէպի Դ կէտին կողմը կ'վերածենք վէտկոր գծի և կ'միացնենք Դ կէտին , որ կ'ներկայացնէ օձիքին ստորոտը՝ այն է փողեղին կցուելիք եղըք : 0 կէտէն մինչեւ Դ կէտ զգալի կոր գծով մը կ'ներկայացնենք 0—Դ գիծը , որ կ'ցուցնէ օձիքին ծալուելիք եղըք : Է կէտէն մինչեւ Դ կէտ՝ ա'լ աւելի կոր գծով մը կ'ներկայացնենք անդրագարձող գիծը (Տե՛ս 200րդ օրինակ , ուր այս վերջինը կէտ կէտ գծով չինած ենք) :

Հիմա ալ կ'քաշենք օձիքունջին ուղղութիւնը , որ ճաշակի ու նորաձեւութեան համեմատ՝ ոչ միայն լայնութիւնը փոփոխական

է , այլ և ուղղութիւնն ալ . օրինակի համար ծայրերն եթէ շատ վար ըլլան , Անդղիական ոճ կ'կոչուին (ի՞նչպէս 199րդ պատկերին տեսքը եւ 200րդ օրինակին Դ—գ գիծը) . շատ խոտոր եղած ատեն՝ նաւաստիական ոճ կ'անուանուին (ի՞նչպէս 200րդ օրինակին Դ—գ գիծը) . իսկ երկուքին մէջտեղ՝ ամէնէն ծանօթ ծալ—օձիքի ձեւն է (ի՞նչպէս Դ—ե գիծը) . պարագային համեմատ լայնութիւններն ալ կ'տարրերին , 7 , 8 կամ 9 հարմէդ դրուելով : Ամէնէն վերջ պէտք է գծել օձիքին արտաքին ըրթունքը որ գ կէտէն սկսելով՝ զ , ե կամ Դ կէտերուն կ'միացուի , յաջորդաբար ա'լ աւելի կոր գծերով :

Այժմ կարգն եկաւ , որ ըսենք թէ ի՞նչի կ'ծառայէ Բ—Դ գիծը , Պոր պահ մ'առաջ անդրադաւրիւն անուանեցինք : Ո'րովհետեւ փողեղը ին երկայնութիւնը բուն այս գծին հաւասարելու է . ուստի Դ կէտէն սկսելով մաս առ մաս Դ—Բ գիծը կ'չափենք և 19 հարմէդին հասած տեղը կէտ մը կ'նշանակենք , որ թերեւս Բ կէտէն գուրս ելլէ , կամ պակաս մնայ (մինչդեռ ներկային մէջ ճիշտ կուգայ) . այն ատեն ա—զ գիծը զուգահեռաբար փոխադրելու է ճիշտ նոյն կէտին հաւասարութիւնը : Այս օձիքին արմատն ալ (ա—Դ գիծը) ընդգտել պէտք է մինչեւ որ 0—Դ գծէն ծալլուած ատեն սոյն ա—Դ գիծը հաւասարի Բ—Դ գծին (Լաւ դիտէ բոլոր սոյն մանրամասնութիւնները 200րդ օրինակին վրայ) : Ահա այս եղանակով միայն կարելի է ծալ—օձիքներ պատրաստել որ կարելի ըլլայ յետսակողմը պահանջուածին չափ ոտք ձեւացնել :

Տարակոյս չկայ թէ ներքեւի նիւթը և պնդածուէնը անպատճառ չեղ կտրուած ըլլալու են , որպէս զի կարելի ըլլայ արմատն ընդգտել . իսկ երեսի ծածկոյթը կերպասին տեսակէն կախումն ունի , այսինքն եթէ կերպասը գծաւոր է կամ որոշ հերթ ունի , պէտք է անոնք կռնամէջի ուղղութեամբը գտնուին . հակառակ պարագային այս չեղ կրնայ դրուիլ , որ շատ աւելի դիւրին կ'ըլլայ . ապա թէ ո՛չ՝ ոտք ձեւանալիք մասը քանի մը տեղերէ մկրատել պէտք է , որ ներսի կողմը լաւ հանգչի . ու զանոնք ուրոյն երիզով մը ծածկելու է :

ՊԱՍ ԺԲ.

ԲԱՐՁՐ—ԾԱԼ—ՕՉԻՔ ԵՒ «ՌԱՊԱ»

(Տե՛ս լ. 2. տախ. 195, 196, 197, 201 և 202րդ օրինակները)

Բարձր—ծալ—օճիքը սա քանի մը տարուան մէջ մեծ ընդունելութեան արժանացաւ նորածեւութեան սիրահարներու կողմէ։ այս օճիքին նախորդէն ունեցած տարբերութիւնն այն է որ ասոր հագագի կողմն ալ բարձր կ'ըլլայ, իբր թէ բարձր օճիք դրուած ըլլայ (Տե՛ս 201րդ պատ. ինչպէս նաեւ լ. 6. տախտակի 183րդ պատ.), Այս օճիքը երկու կերպով կրնայ պատրաստուիլ, միակտոր կամ երկու մասով. մենք այժմ պիտի բացատրենք վերջին կերպը, իսկ միակտորն ալ իր կարգին։

Ուրեմն, բարձր—ծալ—օճիք շինելու համար՝ նախ սովորական բարձր—օճիքի մը տիպարը կ'շինենք, չափատուին վիզին բարձրութեան կամ հաշակին համաձայն. համարենք թէ այս ալ ըլլայ յետուակողմը 5 և առաջակողմը 4½ հարմէդով։ Այժմ օճիքին բաւարար թուղթ մ'առնելով մէջ տեղը ծալք մը կ'ձեւացնենք, ու զայն կ'անուանենք ա-բ գիծ (Տե՛ս 195րդ օրինակ)։




Ապա, կ'առնենք բարձր—օճիքին տիպարը և ասոր ն' կէտը կ'հաւասարեցնենք տիպարցու թղթին ա կէտին և Ո' կէտը ¼ հարմէդի կէտէն հեռու, որով օճիքին տիպարը ներքեւի տիպարցու թղթի ա-բ ծալքին հետ խոտոր ուղղութիւն մը կ'առնէ (Այս ամենը լաւ դիտ 195րդ օրինակին վրայ)։ Բարձր—օճիքի տիպարին ն'-Շ գիծը կ'բաժնենք չորս հաւասար մասերու և կ'ունենանք գ, դ եւ ե կէտերը։ Ապա ուրեմն, բարձր—օճիքին տիպարը կցած դերքին մէջ՝ ա-գ գիծը կ'օրինակենք ներքեւի տիպարցու թղթին վրայ. յետոյ դ կէտին դիմաց ½ հարմէդ բարձրութեամբ կէտ մը նշանակելով՝ կ'անուանենք դ' կէտ, գնդառեղ մը կ'առնենք ու խընամով կ'ցցենք զ կէտին վրայ (Ճիշտ տիպարին եղը), և կ'օրինակենք գ-դ գիծը, որով բարձր—օճիքի տիպարին դ' անկիւնը կը փոխադրուի Դ' անկեան. միեւնոյն ատեն և կէտի այս վերջին դերքին մէջ ½ հարմէդ բարձրութեամբ ալ Ե' կէտը նշանակելով՝ գնդառեղ կ'փոխադրենք այս անդամ ալ դ' կէտին վրայ ու վերջին անդամ ըլլալով բարձր—օճիքի տիպարին և կէտը կ'հաւասարեցնենք ե' կէտին, և կ'օրինակենք դ'-Ե' ինչպէս նաեւ Ե'-Շ և

Շ—Դ' գծերն ու բարձր—օճիքին։ Այնպէս որ՝ այս գործողութիւններով բարձր—օճիքին ափաբարը երկու շարժում ըրած կ'ըլլայ (Տե՛ս 195րդ օրինակին Դ', Դ' եւ Դ' անկիւները)։ և կերջնականապէս տիպարցու թղթին վրայ կ'ունենանք ա-բ ծալքը, ա-Շ, Շ—Դ' և Դ'—բ գծերով ներկայացած բարձր—օճիքին աւելի գոգաւոր ձեւը (Տե՛ս այս վերջինները 196րդ օր.)։ որպէս զի սոյն եղը բարձր—օճիքի վերի շրթունքին կցուելով դէպի վար կեցած ատենը վրայինին վարի եղը թոյլ ըլլայ, որ վիզին չորջը պատած ատեն ալ այս վերջինը չկծկուի։ Այժմ կարգը կուգայ ծալմասին ձեւը ձատել, որ այս ալ պարզապէս նորածեւութեան ու քմահաճոյքներու խնդիր մէ։ Ուստի, նախ որոշելու է հագագին վրայ ունենալիք անջտառութիւնը, ու եթէ անդիմական ոճով ներկայացնել կ'ուգուի, ծայրերը շատ անջատ ըլլալու չեն (ինչպէս և 201րդ պատիերը)։ Ուստի քանակը կը հաւասարեցնենք Շ—Դ' կէտին և Դ' կէտին Զ հարմէդի չափ ներսօք ու կ'քաշենք Շ—Գ գիծը։ աւելի քիչ բաց ուղուած ատեն (ինչպէս լ. 6. տախտակի 183րդ պատիերը), Շ—Գ գիծը՝ Դ' կէտէն 1 հարմէդ հեռաւորութեամբ քաշելու է. եթէ կ'ուգենք որ երկու ունջերն իրարու կից կենան, այն ատեն ալ Շ—Դ' գծին հաւասարութեամբն առնելու է։ Լայնութեան ստորինն ալ իր մասնաւոր քմայքներն ունի, օրինակի համար, կռնակի շրջուքին ամէնէն լայն ձեւը կրնայ ըլլալ բ կէտէն ¼ կամ Զ հարմէդի չափ վարօք և կէտը կազմելով՝ որ մեզմ կոր գծով մը երթայ միանայ զ անկիւնին (Տե՛ս 196րդ օր. ին)։ Կամ բարձր—օճիքի արմատին հաւասար ըլլայ ու նոյն իսկ հագագի կողմին բացուածքը փոքր բալորշիով մը, որ է բ—բ—Շ գիծը։ Կամ բարձր—օճիքին Զ հարմէդի չափ նեղ ըլլայ (ինչպէս լ. 6. տախ. 184րդ պատ.)։ և կամ թէ նեղ և թէ՝ առաջակողմը բոլորվին անջատ վրայ (Տե՛ս 202րդ պատ.), որ պէտք է առնել ծ-լ-ի գիծը (Տե՛ս այս ամենը 196 րդ օրինակին վրայ)։ Ահա այսպէս ծալ մասին կուտանք առնելու 196 րդ օրինակին վրայ)։ Ահա այսպէս ծալ մասին կուտանք առնելու 196 րդ օրինակին վրայ)։ Ահա այսպէս ծալ մասին կուտանք պահանջուած ձեւը. ուստի համարենք թէ նախնարեցինք նեղ ու պահանջուած ձեւը, որ է ա-բ, ա-ի և բ-լ-ի գծերով ձեւը, հագագն անջատ ձեւը, որ է ա-բ, ա-ի և բ-լ-ի գծերով ձեւը, որտիպարը կ'կտրենք ու ծալքը կ'բանանք (Տե՛ս 197րդ օրինակ), որտիպարը կ'կտրենք ու ծալքը կ'բանանք ա-բ բաղդատած ըլլանք թէ մի՛ գուցէ ա և բ կէտերը տգեղ երեւոյթներ առած ըլլան։ *



ԲԱՐՁՐ—ԾԱԼ—ՕՉԻՔԻՆ ԿԱՐԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Ներքեւի մասը ճիշտ բարձր—օճիք պատրաստելու եղանակին պէս կրկնակի կանեփեայ կտաւով ու թափանց կարերով պնդածուէն կ'պատրաստենք. կերպասին վրայ դնելով զայն կ'գերակարենք. ու կարարաժինները ճգելով՝ աւելորդները կ'յարդարենք. միայն ասոր վերի շուրթը կարարաժին չենք ճգեր, բացի այն պարագայէն, որ եթէ հագագին վրայ ծալ մասն անջատ պիտի ըլլայ, այն ատեն կարարաժին ճգելու ենք ի—Շ' փոքրիկ միջոցներուն և բոլոր այն կարարաժինները մանր դերակարով մը կը շրջենք պնդածուէնին վրայ. ու այս վիճակին մէջ՝ պարզ բարձր—օճիքի նման կ'կցենք հագուստի փողեզրին՝ պահանջուած ճեւով վերջնականապէս կ'կտրենք: Յետոյ կ'առնենք շրջուք մասին տիպարն ու ասոր նմանը միատակ կանեփեայ կտաւ մը կ'կտրենք (Տե՛ս 197րդ օրինակին մուր գոյնով երեւցած մասը). կ'դնենք զայն կերպասին վրայ, (որ թերեւս այս ալ ըլլայ բոլորովին տարբեր գոյնէ ու նիւթէ. նոյն իսկ այս միջոցին շատ նորածեւութիւն է գունաւոր սեկով—ոչխարի մորթ—ծածկել, և եզրը՝ հագուստին կերպասին երիզ վերադիր անցնելով ու թափանց կարերով զարդարելը:) մէջտեղէն կ'գերակարենք, ամէն կողմերը կարարաժիններ ճգելով կ'յարդարենք, և բացի վերի շուրթէն՝ միւսները կը շրջենք կանեփեայ կտաւին վրայ՝ մանր մանր ու խնամով կ'դերակարենք. երեսի կողմի թափանցկարերը կ'ընենք. թերեւս ժապաւինեակ կարել ուղենք (Խնչակ 183րդ պատ.) կամ կարամէջ երիզով զարդարել ուղենք (Խնչակ 201րդ իւ 202րդ պատկերները): Այս վիճակին մէջ լաւ մը կ'արդուկենք, ու մէջը բարակ նիւթէ կամ մետաքսեղէնէ առերերան մը կանցնենք և եզրին հետ կ'խըճպենք, ասոր ալ վերի շուրթը կանեփեայ կտաւին հաւասարեցնելով (Տե՛ս 197րդ օրինակին բաց գոյնով կողմը, որ իբր թէ բ—լ—ի եզրին կարաբաժինը ծալուած ու առերանը ծածկուած է): Այժմ ասոր վերի շուրթի կարարաժինը ետ մղելով կանեփեայ կտաւին ու առերանին շուրթը կ'կցենք բարձր—օճիքի ծիւ եզրին հետ՝ կէտ կարով մը հաստատելով: Յետոյ կարարաժինը կ'շրջենք ներս ու վրայ կար մը կ'ընենք, որով մէջի կողմի այս դիրքին մէջ հիշտ բարձր—օճիքին երեւոյթը կ'առնէ: Մայրերուն ճարմանդները կը

ԼԵ. ՏԱԿԱՆԻԿ



Լ. ՏԱԿԱՆԻԿ



ՇԱԳՈՒԽ ԳՈՎԱՅԻՆԻ

կարենք, և սովորական բարձր-օճիքի մը պէս՝ բարակ նիւթէ առ բերանավ բոլոր գճզնուքները կ'ծածկենք։ Այս կերպով օճիքը շատ փափուկ ու շատ դիւրին պատրաստուած կ'ըլլայ և կեցուածքն ալ ամէն կերպով երաշխաւորուած։ միայն եթէ անպատեհութիւն մը կայ այն ալ սա՛ է թէ ծալ մասը գէպի վեր կեցնել ուղուած տան կարելի չէ յարդ ըլլալ, և սակայն պահանջելի իրողութիւն մալ չէ քանի որ լուացուելու և օպայելու պարագաներ չկան։ (Երջուն մասին տուրջը ծակոնկեն կարամիջով պատրաստելու կերպը տե՛ս Ե. զիխու Զ. դսափն զարդ—օճիքներ ձեւել եւ կարելու հրահանգը)։

* * * «ՌԱՊԱ» ՇԻՆԵԼՈՒ ԿԵՐՊԸ

(Տե՛ս 198րդ օրինակ եւ 203րդ պատկեր)

«Ռապա» կ'անուանուի քառակուսի փոքրիկ կտոր մը որ եւ- րոպացի կղերականներ իբրեւ փողկապ կ'կրեն զայն օճիքի առա- լակողմին կերի եղրէն գէպի հագագին վրայ առ կախ ձգուած։ Որովհետեւ կանանց անյագ ձաշակը յագուրդ չունի, ու նոյն իսկ կղերին այնքան ճշճիմ «ռապա»ն ալ կ'որդեզըրէ, և չժղողուր իւ կղերին այնքան ճշճիմ «ռապա»ն ալ կ'որդեզըրէ։ ուստի դառնանք այժմ կանանց «ռա- պա»ին։

«Ռապա»ն ամէնէն պարզ վիճակին մէջ (Տե՛ս 203րդ պատկերի հազարին դեմ զսենուած փոքրիկ եռանկիւն կտորը) կ'առնուի բարձր—օճիքին տիպարէն, որ ընդհանրապէս բարձր—ծալ—օճիքի հետ շատ լաւ կ'պատշաճի։ Ուրեմն, 196րդ օրինակին վրայ ծալ մասը Շ' կէտէն $1\frac{1}{2}$ —2 հարմէդի չափ ներսօք ներկայացնելէ հետք, Շ'—Դ" գծին ուղղութեամբն ալ կ'գծենք «ռապա»ին օրուան ձեր, և համարենք թէ եռանկիւն շինել կ'ուզենք։ ուստի տիպարցու- թիթի մը վրայ կ'օրինակենք Շ'—Դ", Շ'—Խ, Խ—Ծ և Ծ—Դ—Դ" թիթի մը վրայ կ'օրինակենք Շ'—Դ", Շ'—Դ գծը կ'փոխադրենք պընդա- գիծերն, ու նոյն տիպարին կ'գծը կ'փոխադրենք կ'րանանք ծուէնցու նիւթի մը ծալքին և կրկնատակ կտրելով, կ'ընկենք, (Տե՛ս 198րդ օր.)։ կերպասով կ'կրկնենք, եղրի գարդերը կ'ընկենք, ներքեւն առքերանով կ'գոցենք և տրամադիծը բարձր—օճիքի առաջակողման տրամադին կցելով կ'վերջացնենք, այնպէս որ «ռապա»ին կէսը դուրս կ'մնայ և հարկ կ'ըլլայ ծայրը զապանակ— կոճակով մը միւս կողմին հետ հաղորդակցութեան դնել։

Ինչպէս ըսինք «ռապա»ն շատ մը ձեւրով ալ կ'ըլլայ։ օրի- նակի համար կրկնակի, եռակի և թերեւս քառակի իրարմէ եր- կայն ձեւրով իրարու վրայ կախուած, զուտ ժանեակներով կամ ջանջիլ նիւթը եղերումներով պատրաստուած ու խորշխորշաննե- րով ամփոփուած, և այլն, և այլն։


ԳԼՈՒԽ Ե.

ԱՐԴԻԶԱՐԴԻ ԶԳԵՍՏՆԵՐ ԵՒ ՆՈՐԱՁԵՒԹԻՒԹԻՒՆԸ

Պ Ա Ս Ա .

ՆՈՐԱՁԵՒԹԵԱՆ, ԾԱԳՈՒՄԸ, ՄԿՁԲՈՒՆՔԸ,

ՈՃՆ ՈՒ ՊԱՏՇԱՋՈՒԹԻՒՆԸ



Ո Ա Ն Յ Նորաձեւութեան ծագման ու նպատառին վրայ գաղաքար մը կազմելու, կարելի չէ մարդոց մարմինը ծածկող հագուստ կոչուած կեզեւին օրսորէ կրած փափոխութիւններուն պատճառը գիտնալ և անոր համեմատ զանոնք պատրաստելու ձեռնարկել. և՝ քանի որ մեր սոյն հատորին գլխաւոր պարունակութիւնն ալ նորաձեւութեան յառաջ թերած փափոխութիւններուն համար սահմանուած է, անհրաժեշտ համարեցինք այս գլխու Ա. դասը յատկացնել նորաձեւութեան ծանօթացումին:

Արդ, նորաձեւութիւն=Mode=Մօսա, բառ մ'է որուն սահմանը գրեթէ անեղը է: Շատեր, հագուստն ակնարկելով՝ մեզի կ'հարցնեն թէ «Ո՞վ կ'հնարէ նորաձեւութիւնը»:

Արդարեւ բատին բեան լուրջ հարցում մ'ընէ այս, զոր առանց ստուար էջեր մըոտելու ու դէպի փիլիոփայութեան ելլելու՝ պատասխանել կարելի չէ, և սակայն պիտի ջանանք նոյն իսկ այս անձուկ սահմանին մէջ փոքր ի շատէ գաղաքար մը տալ թէ ի՞նչ է նորաձեւութիւնը և ո՛վ կ'հնարէ զայն:

Ինչպէս որ մարդկային քաղաքակրթութեան հետ՝ կեանքն ալ հաճելի ընելու համար, հնարուած են կերտակրներու տեսակ-

ները, գիւղագնացութիւնը, հիւրանոցներ զարդարելը, նուագածութիւնը, զրուեցուցիչ խաղերը, պարերն ու թատրոնը. նոյնպէս ալ մարդոց ամէն օրուան կրելիք տարազը տաղտակացուցիչ միօրինակութենէ զերծանելու և զինուորական գումարտակներու տեսքը չառնելու համար, հագուստն ալ ենթարկուած է ձեւփոխութեան, զոր այժմ կ'անուաննենք նորաձեւութիւն: Տարակոյս չկայ թէ այս բառը յատուկ չէ միայն ագանելեաց համար, այլ և նոր երեւոյթ առարկաներու և բարքերու համար ալ. ինչպէս կ'ըսենք թէ «Հիմա ձեռք թոթուելը նորաձեւութիւն չէ», ևն.:

Եւ աւելի զարմանալին կայ որ, նորաձեւութիւն=մօս բառն ալ ժամանակ առ ժամանակ իր նորաձեւութիւններն, այսինքն հոմանիշ գործածութիւններն ունի, ինչպէս են նուվորէ=նորելուկ, Հօր=նուվորէ=գերագոյն նորոյթ, Տեսնիւու=մօս=վերջին նորաձեւութիւն, Ֆեն=սը=սիկլ=գարավերջիկ (որ ըսուեցաւ ժԹ. դարուն վերջերը) և զարդիս ալ կ'ըսեն Առ=նուվօ=նորակերտ. իսկ, նորաձեւութիւն ըլլալէ դադրած է՝ ըսելու համար ալ կ'ըսեն. Տեմօսէ=անկետ նորոյթ (*):

Ուրեմն, պարզենք թէ ինչպէս ծագում կ'առնէ հագուստներուն նորաձեւութիւնը.

Շուրջ մէկ դարէ ի վեր է որ Արևմեան գլխաւոր կեդրոններուն մէջ նորաձեւութեան յատուկ պարբերական հանդէսներ հրատարակութիլ սկսած են, և այսօր անոնք ստուար թիւի մը բարձրացած են. վեցամսեայ, քառամսեայ, եռամսեայ, երկամսեայ, ամսեայ, հնգամտանօրեայ և շաբաթական հրատարակութիւններով: Սոյն մասնաւոր հանդէսներէն զատ՝ կան ու կ'վըստան առօրեայ լրագրերու, գրական, ընտանեկան և նոյն իսկ զաւեշտական թերթերու մէջ նորաձեւութեան յատուկ բաժիններ:

Կնոջական նորաձեւութեան մասնագիտական արդի գլխաւոր հանդէսներն են՝ ֆրանսայի մէջ՝ նիգ բարիզիկն, Սալօն ըլ լա մօս, հանդէսներն են՝ ֆրանսայի մէջ՝ նիգ բարիզիկն, Սալօն ըլ լա մօս, կ'արիզիկն, կ'արուառ ըլ լա մօս, կ'արիկօզ, Գերլա մօս բարիզիկն:

(*) Մօս կ'գրուի նաև կնոյական պարզ հագուստներ կարող կին դերձակներու (Յորեն) աշխատանոցներուն վրայ. մինչեւ կանանց արտաքին կարզ մը հագուստները կ'կոչուին Գունդար դարձաւ՝ Ամազոնազգեստ, Գանչեւիում մը հագուստները կ'կոչուին Գունդար դարձաւ՝ Դերձակակրեպ՝ առնածեւ, եւ այս Ասուեկին հագուստներ եւ Գունդար դարձաւ՝ Դերձակակրեպ՝ առնածեւ, եւ այս վեցիններուն պատրաստողներն այը դերձակներ են:

մանիոյ մէջ՝ և Սեղօն (որ 13 զանազան լեզուներով կ'հրատարակուի), Տէր Պազար և Անդլիայի մէջ՝ Ֆէըն, ևն։ Եւ երեւակայել պէտք է թէ լոկ այս նիւթին վրայ հրատարակուող այսօրուան հարիւրաւոր հանդէսներն ի՞նչպէս կ'հնարեն անոնց բովանդակութիւնը։ Խնդիրը պարզ է, նախ Դաղլիացիք կ'հրամցնեն և յետոյ Գերմանացիք կիւրացնեն, Անդլիացիք կ'օրինակեն, Ամերիկացիք կ'հետեւին։ Թէ ի՞նչպէս կ'հրամցուի հագուստի մը ձեն, իրեւ արգի նորածեւութիւն։ այս ալ շատ պարզ է, որովհետեւ նորածեւութիւնը ժողովուրդներու բարքերուն և Ժամանակակից քաղաքականութեան դրոշմը կ'կրէ։ Այս սկզբունքով, մենք և ո՛չ մէկ օր նորածեւ հագուստ մը տեսած ենք ու թերեւս չպիտի ալ տեսնուի։ վասն զի դարերէ ի վեր քաղաքակրթեալ ժողովուրդներու մէջ հետզետէ ծագում առած ինքնատիպ հագուստի ձևեր կան, որոնք նորածեւութեան ծնունդ տուող հիմնական ոճեր եղած են։ և ներկային համար սա՛ կամ նա՛ ոճը կ'առնուի ինչ ինչ պարագաներու բերումով։ Այնպէս որ, ազգերու հագուստներուն դարաւոր պատմութեան տեղեակ եղող մէկը շատ դիւրակ կրնայ ըմբռնել օրուան հագուստին ձեւերը՝ քանի որ անոնք արդէն ծանօթ եղող ոճի մը հետեւողութիւնն են։


Դերձակի մը, նա՛ մանաւանդ կնոջական հագուստներ պատրաստող դերձակի մը համար, անհրաժեշտ է պատմական ոճերը ձանչնալ, որպէս զի կարենայ անոր նորածեւութիւն եղած Ժամանակ՝ նոյնութեամբ ձեւացնել զայն։

Սրդարեւ ոճերն ալ բազմաթիւ են, որոնք գլխարկիներէն մինչեւ կօշիկները կ'յանդին։ Օրինակի համար, Շառլիանել՝ որ լայնեզր գլխարկովը, ժանեկազմարդ կազուն հագուստներովն ու կարճ և գլուխինովը կ'ձանչցուի։ Հանրիկոս Դ. շեղ կոճակով սուկանն ու մէջքը կապուած մետաքսահիւս ծոպաւոր կապիչովը։ Եւ այսպէս սուուար շարք մը կ'կազմեն Լուի ֆե., Մառի Անրուաներ, Ամբիո, Ռական, Վարօ, Բուենաս, Բօլոնիկ, Գունօլին, Բեյզան, Պօնէմ, Էսքանել, Տիրեզրուառ, Ռինեսանս, Շվետուազ, Շինուազ։ Փարօնեկ, Բակօ, Ղազօշ, Ատամպուլին, Թռավկարիկն, Ալա կոեֆ, Ռուսական, Պարսկական, Հնդկական, Ամերիկան, ևն։ ևն։ Ասոնց վրայ աւելցնելու է դիցուհիներու անուան ձօնուած հագուստի ոճեր, մեծահռչակ դերասանուհիներու առանձնայատուկ

տարագներ, ինչպէս նաև անուանի դերձակներու քմածին արտադրութիւնները։ Մանաւանդ ֆրանսական նախակին ժամանակներու զինուուրական համազգեստներուն ստուար շարքը, որոնք այնքան մեծածախս ձոխութեամբ հրապուրիչ ու շքեղ եղած են որ, անոնց իւրաքանչիւրին ամբողջութիւնը կամ մասնակի ձևերը սա ու նա ժամանակներու մէջ կնոջական ագանելեաց նորածեւութեան կարգ կ'անցնին։ Այս մասին գէթ փոքր գաղափար մը առաջու համար, կարժէ քանի մը ճշգրիտ թուականներով աստանոր յիշատակել անոնց ինչ ինչ ձեւերուն մանրանկար պատկերները։ Ինչպէս 1450ին, հետեւակ զորքերը կ'կրէին բարակ բրդեղէն հոգագոյն կերպարէ և մէջքը կապիչով սուկան։

ԺԵ. Դարուն, Դ. նկարին նմանը՝ մէջքը բազմածալով ու նոյն կերպասէն զօտիով սուկան կ'կրէին։

1512ին, թմբուկահար զորքերը կալուտագոյն մետաքսէ կըպ-



Ա. Բ. Գ. Դ. Ե.

Հուն սուկաններ կ'կրէին. Ե. նկարին ձեւովը թեւեր ունենալով։

1515ին, կարգ մը զորքերուն թեւերը Ա. նկարին ձեւովն էր։

1558ին, Սին—Սիլիս գունդին զորքերը՝ այսօրուան թիկնոցին

մերձաւոր ձեւովն ուղիղ թիկնոց կ'կրէին, Բ. նկարին ձեւովը

թեւեր ունենալով՝ ներքուած թափանցող մակարութիւններով,

թեւեր ուղիղ արտակեդրուն այն էր որ, մէկ առաջամսութ կապոյտ ու

և աւելի արտակեդրուն այն էր որ, մէկ առաջամսութ կապոյտ ու

միւսը ծիրանագոյն, եւ այսպէս հագուստին բոլոր մասերը սոյն

միւսը ծիրանագոյն, եւ այսպէս հագուստին բոլոր մասերը սոյն

միւսը գոյներուն փոխարեւական խառնուրդովը կազմուած էր։

1559ին, կարգ մը զորքերուն թեւերը Գ. նկարին ձեւովն էր։

1580ին, հրացանաձիգները՝ վառ գոյներով կաչուն «Պոլէր»

կ'կրէին։

1610ին, տիգերուն գագաթը խոպոպաւոր թեւակներ դըր-

ուած են։

1664ին, սպաները կ'կրէին ատրագոյն կերպասէ ուղղաձիգթիկնոց։

1745ին և 1772ին, զլահակիր զորքերը ծալ—օձիք կ'կրէին։ Եւ այս ամէնն իրենց իսկատիպ ոճերն ունին ու բազմաթիւ ալ ստորաբաժանումներ։ Այսպէս ալ կերպասները, ժանեակներն ու ժապաւէնները զանազան ազգերու, երկիրներու կամ անհատներու անուններով ծանօթ են արդէն։

Այժմ կարգն եկաւ բացատրելու թէ այս ծանօթ ոճերն ի՞նչ շարքով նորաձեւութեան կարգ կ'անցնին։ Այս ալ պարզ է, քանի որ ըսինք թէ՝ նորաձեւութիւնը բարքերուն և քաղաքականութեան դրոշմը կ'կրէ։ Հետեւապէս խաղաղութեան ժամանակ ամէն երկրի ժողովուրդ իր անցեալ փառքերուն յիշատակներովը՝ ներկան կ'ցուցագրէ, և այս պարագային երր աչքէ անցուին ամէն երկիր հրատարակուած նորաձեւութեան թերթերը, պիտի տեսնուի որ, և ոչ մէկը միւսին ի՞նմանի։ որովհետեւ այս շըրջանը նորաձեւութեան անձուկ=«Գոխզ»ի ժամանակն է։ Այլեւս ամէնուն ճաշակէն կախումն ունի ընտրութիւն մ'ընել՝ գլխաւորներէն եղող Անդրիական, Գաղղիական՝ կամ Գերմանականին հետեւելու մասին։ Սակայն պէտք չէ անտես առնել որ նորաձեւութեան անձուկ ժամանակին մէջ անգամ կան բաներ, որ ընդհանուրն ալ կ'յիշեցնեն։ Օրինակի համար, 2—3 տարի առաջ թեւերուն վարի կողմի ուռուցիկ ձեւերուն իրար գերազանցող պայքարը կար, և այսօր ալ վերի կողմի ուռուցիկ՝ «Ժիկօ» անուանեալ թեւը երեւան եկած է, որուն շուրջ 10 տարի առաջուան ջերմ կիրառութիւնն ու յետոյ ազգած նողկանքը դեռ չէ մուցուած։ և սակայն այսօր դարձեալ նորաձեւութեան թերթերը նոյնը մեղի կ'մասաւցանեն։ Մինչեւ 8—10 տարի առաջ՝ արանց տարատին մէջ տեղը ծալք ըլլալը շատ ամոթէր։ մինչդեռ այժմ մասնաւրապէս արդուկով ծալք կ'յօրինուի։ Վերջապէս ոչինչ կայ նորաձեւութեան մէջ արհամարելի, ամէնէն սկեպտիկ պահպանողականն անգամ տակաւ առ տակաւ կ'հետամտի նորաձեւութեան պահանջումներուն, ըլլայ գլխարկ, փողկապ, շապիկ, հօշիկ, գաւաղան, հովանոց կամ մատանի, եայլն։

Նորաձեւութեան այս պարագան բարքերու դրոշմն է, իսկ քաղաքականութեան դրոշմն ալ այն ատեն կ'կրէ, երբ վեհապետ

մը կամ իշխանազուն մ'ուրիշ պետութեան մը պետին այցելութիւն կուտայ, ընդունող կողմը ի պատիւ հիւրին՝ անոր երկրին տարազը կ'ընտրէ իբրեւ նորաձեւութիւն, կամ պատերազմիկ երկու ազգերու յաղթող կողմին տարազը կ'ընտրուի։ Եւ ահա այս պարագաներուն՝ մանաւանդ վերջինին մէջ, ա'լ բոլոր նարածեութեան թերթերը նմանաձեւ պատկերներով զարդարուած կ'ըլլան։ Ինչպէս 1890ի Զին և ձարձնական պատերազմի ժամանակ կնոջական բոլոր արտաքին կրկնոցները վերածուեցան ձարձնական ձեւի։ Նոյնպէս ալ արդի Ռուս և ձարձնական պատերազմին, լայն թեղանիքով թեւերն ու տարածուն ստորաներով քղանցքները և բոլոր առանին հանդերձեղէններուն ձեւերը։

Այս մտացի ձարպիկութիւններն ի գործ կ'դրուին բոլոր այն անուանի գերձակներու կողմէ, որոնք լաւ գիտեն իրենց ունեցած վեհափառ, ազնուազարմ, ընչաւէտ կամ պշրասէր յաճախորդներն օր աւուր տարբեր տարբեր ձեւերով զգեցնելու գաղտնիքը։ անոնք արդէն օրուան նորաձեւութեան սահմանը գծած կ'ըլլան, և թերթերու հրատարակիչները կ'դիմեն անոնց ու աւարտած զգեստներուն ձեւերը կ'օրինակեն՝ իբրեւ լրագրի յօդուած։ և այսպէսով կ'տարածուի ի սփիւռս քաղաքակիրթ աշխարհին։

Կմայ այժմ ուրիշ հարց մ'ալ թէ պէտք է հետեւիլ նորաձեւութեան։ Քանի որ կեանքը հաճելի ընելու պարագայ մ'է, այսու։ «Նորաձեւութիւնն ընդիմադիր չունի» կ'ըսին, «Եւ եթէ ունենայ իսկ՝ համար չառնուիր»։ Զէ՞ որ Պօմառչէ ալ ըսած է թէ «Ո՞վ նորաձեւութիւն ո՞ր Սուրբն է որ քեզի չափ երկիւղած աղօթողներ ունենայ, մանաւանդ այսպիսի չերմեռանդ աղօթողներ։

Սակայն պէտք է խոստովանինք թէ մենք նորաձեւութեան նպատակն ու կիրառութիւնը սխալ ըմբռնած ենք։ հետեւապէս նախ հագուելու պատշաճութիւնն ըմբռնելու ենք, որ ապա կարենանք նորաձեւութեան կիրառութիւնն ալ ըմբռնել։

* * *

Հագուելու Պատշաճութիւնը. — Բաղաքակրթեալ ժողովուրդներու արքունիքէն սկսելով՝ իշխանական, ազնուական, ժողովական բարձր դասէն մինչեւ բարեկեցիկ դասերու ախկացք և վրդեան բարձր դասէն մինչեւ բարեկեցիկ դասերու ախմար տարօրիորդք, օրուան ու գիշերուան զանազան պահերուն համար տարբեր հագուստներ կ'կրեն։ Ինչպէս են զարդնումի—զգեստ—Խօ—Տր

—ի, զարդի հանդերձ, այդազգեստ, նախաճաշի զգեստ, յետ միջօրէի՝ ընդունելութեան զգեստ, այցելութեան զգեստ, նախընթրիքի զգեստ, շրջադայութեան, թատրոնի, պարահանդէսի, ցայդահանդէսի, նուազահանդէսի, երեկոյթի զգեստներ. նընջառնեակի զգեստ, գիշերազգեստ. ասոնցմէ դուրս են հաղորդութեան, հարսնիքի, տղնդերի, մկրտութեան, եկեղեցւոյ, որսորդութեան, ճամբորգութեան, ձիտորի Ամազոն, գնդամուղի, սահնակի, ծովափի, լսանքի, երկանիւի, ոգաւորի, եւայլն յատուկ համազգեստները, որոնք ամէն տարի և տարւոյն չորս եղանակներուն համեմատ նորածեւութիւններ կան: Եւ ահա նորածեւութեան թերթերը հագուելու պերճանքին բոլոր տոյն մանրամասնութիւնները կ'հաղորդեն օրն օրին: Եւ այս ոճերը գարձգարձիկ շրջաններ բալորելով կ'երթան ու կ'ուգան, և ահա ասոր համար է որ ըստնք թէ, —մենք նորածեւութիւն չենք տեսած, —ուրիշ խնդիր է թէ օր մը կիները տարստ հաղնին և այլերը քզանցք:

Ասոնք գիտանալէ ետք, այժմ երեւակայել պէտք է եւրոպական լեզուներու անտեղեակ և տղէտ մէկը, որ նիւթական կարողութեամբ ալ միջակէն վար եղած ըլլոյ, և հաղիւ տարին մէկ կամ երկու ձեւք զգեստ կարենաց շինել՝ ստորին տեսակէ նիւթերով, որ կ'յանդկնի նորածեւութեան թերթերուն նկարներն աչքէ անցնել, ու լոկ անսոնց արտաքին երեւութները զննելով «օփ»? ձեւ մը կ'փնտոէ. և վերջապէս կ'հանդիսի պարզուկ ձեւի մը ու կ'անուանէ «գօսդիւմ դայեօո», —զոր ուրիշներէ լսած է, —և ճաշակին շատ յարմար եկած. . . զնդամուղի կտոր սահնակի յատուկ եղող տարագի մը ձեւը (*), «ասոր պօյը կարճ են ցուցուցեր ամա՛, ես երկայն կ'շինեմ» կ'ըսէ, մեծ գիւտ մ'ըրած ըլլուու պարձանքով:

Այս մտածելու, դատելու և ընտրելու կերպերէն բնաւ վարչեն մնար այն մօսիսրա կոչուած կար կարողներու լէգէոնը, որ օրն ի բուն իրենց խելապատակին համապատասխան յաճախորդներու կ'հագցնեն ամէնէն ծիծաղելի և այլանդակ ձիծաղելի կ'ըսէ,

(*) Շատ պատահած ենք այս տեսակ ընտրութիւններու եւ դիտել տուած ենք :

գուստները, որոնց իւրաքանչիւրն ալ նորածեւութեան հանդէսներէ քաղոււած կ'ըլլան, Փոխադարձ տղիսութեանց արդիւնք եղող այս տղեղ ասկացոյցներն ամէն օր կ'տեսնենք փողոցի մայթերուն ու կամուրջին վրայ, աղօթատեղիներու և շոգենաւերու մէջ. ոմանք պարտէզի գլխարկով մը՝ երեկոյթի սուկանով մը՝ ընդունելութեան քղանցքով մը և պարի կօշիկով մը կ'երթան, ոմանք կարծէս ցերեկուան պարահանդէսի կ'երթան և ոմանք կ'արծէս մահճակալէն նոր ելած են, սակայն կ'երթան: Եւ ոչ մէկ աւել նորածեւութեան այսքան ծաղրելի երեւոյթը տեսնուած է. Ժապաւէններու, ժանեակներու, անհեթեթ կերպասի տեսակներու, Գլխարկներու, կօշիկներու ու գոյներու անկատակից խճողումներով միջազգեստներ. այս ամէնուն լրացուցիչն ալ կ'ըլլայ գոյնըզգոյն շպարներու այլանդակ մալակոնումը. մինչդեռ բարոյախօթեան եկած ժամանակ՝ ամէն մէկ մէկ կ'իւրան կ'դառնանք:

Արդ, մէկ անգամ ընդ միշտ սա ալ գիտնալ պէտք է թէ ամէն նորածեւութիւն ամէն կազմի չպատշաճիր. որովհետեւ մէծ վարպետներ իրենց վեհափառ կամ ազնուազարմ յաճախորդներուն այնպիսի հագուստներ կ'հագցնեն, որ իրենց կազմին համապատասխան վայելչութիւն մ'ունենայ. և մենք պէտք չէ որ զանոնք նոյնութեամբ առնենք՝ իրեւ վերջին նորածեւութիւն: Օրինակի համար պոստումներով սուկանները ո՛րքան ալ նորածեւութիւն ըլլան, գէր կազմերու համար անվայել կ'ըլլան. կըպչուն հագուստներն ալ վահտներուն: Բէլրինը ո՛րքան ալ այժմէութիւն ունեցող նորածեւութիւն մ'ըլլայ՝ կարճ հասակով (մանաւնդ ալ գէր) կազմերու շատ աննպաստ է. ուսերը լնականէն շատ ցած կազմերու համար՝ թէին վերի կողմը կպչուն ձեւերը, և չպիազանց բարձր ուսեր ունեցողներուն համար ալ՝ ուռուցիկ թևեր շատ տղեղ երեւոյթ մը կուտան իրանին ամբողջութեանը:

Ուրեմն, ոչ միայն հագուստները զգեցման պատշաճութեան, պարագային ու նորածեւութեան համեմատ ըլլալու են. այլ և կրողին կաղմն ալ նպաստաւոր ըլլալու է. աստ թէ ոչ նորածեւութեան հետեւելու մարմաջով, շատեր խրատուիլակ կամ բարեկենդանի դիմակաւոր կ'դառնան: Եւ որ նոյնն է, երկու զոյգ ձերմակեղէն փոխնորդ չունեցողը կ'խորհի թէ «Գոխնօլինը ե՞րբ մօսա պիտի ըլլայ»:

իրաւ է թէ մարդկային իմացականութիւնը միշտ դէպի բարձը ձգտելու սահմանուած է, ու այնպէս ալ պէտք է ըլլայ, մանաւանդ որ ճաշակներն անվիճելի են. բայց ո՞րքան որ մարդդղեակի ու ապարանքի մէջ չընակիր՝ իրաւունք չունի նորածեռութեան հասնիլ ձգտելու, այլ բաւական է որ քաղքենիի տարազը համեստ, վայելուչ, բարեձե ու նորուի ըլլայ. և ընդհանուր հայեացքով մը նմանի օրուան նորածեռութեան՝ մինչեւ որ նոր մը յաջորդէ անոր:

Այժմ դիւրին է ըմբանել թէ տարազագործութեան բոլոր այն նրանկուած կերպասները, ժանեակները, ժաղաւէնները, երիզը, կոճակը, ծաղիկը, գեղարուեստական հանձարով գծագըրուած թերթերուն նկարները և գերճակին ճարտար մտքին ու մատներուն նուրբ արտադրութիւնը՝ կ'ծառայեն հարուստին ձեռքէն դրամը խելու, կեանքը փոխադարձ հանելի ընելու համար:

Կ'փութանք եղրակացնել թէ՝ քանի որ մենք չպիտի կարենանք այն բաղադրեալ նորածեռութիւններուն հետեիլ, ջանանք ուրեմն, որ մենք ալ մաս մ'ունենանք նորածեռութեան երեսէն մեզի ինկած աշխատութեան բաժինովը նիւթապէս օգտուելու, եւ ա'հա այս իսկ է մեր բուն նորածեռութիւնը:

Փ Ա Ս Բ.

ՆՈՐԱԶԵԽՈՒԹԵԱՆ ԹԵՐԹԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՌԵՑ ՄԷՋ
ԳԾՈՒԱԾ ՆԿԱՐՆԵՐԸ ԽՕՍԵՑՆԵԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ ՊԱՐԶՈՂ
ՅՈՒՅԹ ՇԱՀԵԿԱՆ ՀՐԱՀԱԳՆԵՐ

Ահա կարգը եկաւ նորածեռութեան հանդէսներուն պարունաւկած նկարները լուծելու եղանակը սովորելու, որպէս զի անոնց վրայէն հագուստներուն ձեւերն առնուած ատեն՝ կարենանք նրամանները շինելու: Բայց, նախ խօսինք նորածեռութեան թերթերու դասակարգին ու անոնց ընտրութեանը մասին վրայ:

Արդ, ինչպէս նախորդ դասով տեսանք, ատոնք տարբեր տարբեր ժամանակներու մէջ կ'հրատարակուին. ոմանք տարւոյն չորս եղանակներու սկիզբները, ոմանք աշնան ու գարնան սկիզբ-

ները, ոմանք ամէն ամսու սկիզբները, ոմանք հնդետասնօրեայ և ոմանք ալ շաբաթական:

Ասոնց ամէնէն պատշաճն ու մասնագիտականը՝ ամսեայ և հնդետասնօրեայներն են, թէև քիչ ծաւալի վրայ և հազիւ իւրաքանչիւր հագուստին մէկ կամ երկու տարբեր ձեւերը կ'տեսնուին, բայց օրն օրին ամէնէն թարմ ձեւերը կուտան. ինչպէս լրագրի մը օրուան հեռագրական լուրերու բաժինը: Շաբաթականները պարզապէս ծայրայեղութիւններ են: իսկ եռամսնայ և վեցամսնայներն ալ՝ նախորդներուն նուազ փոփոխութիւններով ընդօրինակուած ու արտատպուած հաւաքածոններն են. հետեւապէս այժմէութենէ ալ դադրած կ'ըլլան: Միայն ասոնց առաւելութիւնն այն է որ, ըստուար են ու մէկ կարգի վրայ միեւնոյն տեսակէ հագուստի բազմաթիւ ձեւեր կան, և շատեր, իբրեւ ճոխպարունակութիւն՝ մեծ նախապատութիւն կուտան այս վերջիններուն:

Նորածեռութիւն անունով կարգ մը թերթեր ալ կան, որոնք թէ՝ նիւթի և թէ՝ նկարներու գեղարուեստական նրբութենէ զորի և քմածին համաչափութիւններով ափ յափոյ ուրուագըծուած ափեղ ցփեղ թոհ ու բոհ մը կ'ներկայացնեն:

Իսկ կարգ մը տեսրակի ձեւով հրատարակութիւններ ալ կան, որոնք գարնան և աշնան սկիզբները կ'հրատարակուին, բարիզի մեծ վաճառատուններու կողմէ, ինչպէս են լուվո, Պօն մառէ, Բուներան, Բրի սէն Թօմա, ևն., ատոնք ալ ուրիշ բան չեն բայց եթէ իւրանց ծախսած հագուստի, կապուստի և զանազան իրենց վաճառքին պատկերագրդ ցուցակը (բարայօլ) կ'ներկայացնեն ու ձրի կ'բաժնեն ամէն տեղ. և ժողովրդեան պարզամիտ սոսուար դաս մը կան՝ որ «Մեզի Բարիզէն մօսել կուգայ» ըսելով՝ վաճառքի ցուցակները նորածեռութեան հանդէսներ կ'ըծեն և անոնց վրայէն օրուան նորածեռութեան դատաստաններ կ'ընեն. նոյն իսկ շահագէտներ ալ կան որ, այս տեսրակները դընամով կը ծախսեն ա'լ աւելի միամիտներու:

Արդ, քանի որ ամսեայ և հնդետասնօրեայ լոկ մասնագիտական առաջնակարգ հանդէսներ կան, հետեւապէս շատ տըղայական պիտի ըլլար վեցամսնեայ և բառամսնայ հրատարակութեանց կամ վաճառքի ցուցակներուն պարունակութիւնն ապա-

դայ ամիսներուն նորաձեռութիւնը կարծել, թէև «նախորդներուն ծաւալն ու նիւթը ըստուար չէ» պիտի ըսուի, բայց երբ անոնց ամէն թիւերը ինամով հաւաքենք՝ ինքնին պիտի ունենանք ընդարձակ հաւաքածոյ մը, ինչ որ միւսները հասկաքաղելով՝ իբրեւ նոր մեզի պիտի հրամցնէին:

Գալով ամսեայ և հնգետասնօրեւայ թերթերու տեսակներուն ընտրութեանց, իրաւ է թէ Ֆրանսականները շատ թարմ և շատ մտացի հով մունին. բայց գծագրական արուեստի տեսակէտով՝ Լա Սեզօնը չեն կրնար գերազանցեր, այս վերջինին նկարները պատրաստելու եղանակին անմրձելի մանրակրկիտ ճշտութեամբը. առաջիններէն կօգտուին միայն արհեստին մէջ հմուտ ու վարժ եղողները:

* * *

ՆԿԱՐՆԵՐԸ ԽՕՍՔՆԵԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ

Իրաւ է թէ նորաձեռութիան մասնագիտական թերթերուն իւրաքանչիւր նկարի ներկայացուցած ձևը նոյնութեամբ պատրաստելու եղանակին բացարութիւնն ընդհանրապէս գրուած կ'ըլլայ մէն մի նկարի ներքեւը, կամ թիւերու կարգով՝ թերթին գանազան էջերը. բայց երկու պատճառի համար այն գրուածներըն անբաւական են նկարին ճիշտ նմանը հագուստ շինելու: Նախ որ, շատ անգամ անոնք կցկոտուր տեղեկութիւններ են, պարզապէս ըսուած ըլլալով թէ «Մանկամարդ տիկնոջ շրջագայութեան միազգեստ» կամ «Դեռատի օրիորդի երեկոյթի սուկան» այսինչ երկրին ժանեակովը զարգարուած, այնինչ գոյնէ ժապաւէնով վարդակապ մը յօրինուած, «Ճախ կողմին վրայ կ'կոճկուի» կամ «Կունակէն կ'փակուի, քղանցքը Դ արեզներէ կ'բազկանայ և սոսորուար տարածուն է», եայլն, Երկրորդ որ, Եւրոպական լեզուներու անտեղեակ եղողին համար՝ ասոնք կ'մնան անխօս ու անբարբառ: Հետեւապէս մենք այժմ պիտի ուսուցանենք միայն նըկարները կարդալու եղանակին գաղտնիքը, որ ամէնէն դիւրինն է և շատ մանրամատնութեամբ ու վերջին ծայր ճիշտ:

Որո՞վհետեւ մասնագիտական թերթերուն պարունակած նըկարները հիմնական և լուրջ սկզբունքներու համեմատ գծագրուած են. ուստի համարենք թէ վրանց հագուստ մը շինել կ'ու-

գենք ու անոնց վերաբերեալ նկարներն աչքէ կ'անցնենք: Նախ պէտք է դիտել երկայնութիւնները, որ ինչպէս Ա. Պլուու Ե. գասով՝ Զրդ կրկին չափն առնելու ժամանակ բացատրեցինք թէ հագուստին երկայնութիւնը նպատակաւոր տեղի մը վրայ կ'լայ. և ահա այս միջոցին կ'նայինք թէ կոնքի, դաստակի, ափին մէջի, միջնամատին ծայրի, ծունդի, ևն. հաւասարութեամբ շինչի, ո՞ւած են, կ'նայինք թէ ստորաը տարածուն է թէ կաչուն: Միաշար կոճկինով է թէ կրկնաշար, օղակները թագուցիկ են թէ վրայէն, կպչուն են թէ պարկածն, թէ բազմաւասնեայ. կրկին-յետամատով, պարզ—կողմամատով թէ կրկնակողամատով, գահվրայով թէ Ամբիոն ձեւով:

Յետոյ դիտելու է միւս մանրամատնութիւնները. օրինակի համար եթէ կրծօձիքով հագուստ մէ, նայելու է թէ կրծօձիքին կրծամէջին, կրծամէջին ո՞ր հաւասարութեան կ'համապատասրացուածքը կրծեզրին վրայ ո՞ր հաւասարութիւնը կրնայ ըլլալ հագագին ու կրծամէջին երկայնութեան վերի մէկերրորդին, երկուերրորդին, կրծամէջին ու առաջակողման գոտեվլայրի երկայնութեան վերի մէկերրորդին, երկուերրորդին կամ գոտեվլայրին թէմ: Ապա, դիտելու է թէ՝ կրծօձիքին ծայրերը անութիւն կ'նայի, դէմ: Ապա, դիտելու է թէ՝ կրծօձիքին ծայրերը անութիւն կ'նայի, կրծամէջին կրծամէջին թէ տիգուայօդին. ծայրին երկայնութիւնը ծղակարին, երբուծին թէ տիգուայօդին. ծայրին կ'նային այսին, երեքչորորւանջրի երկայնութեան հետ համեմատելով՝ կէ՞սին, երեքչորորւանջրի երկայնութիւնը վրայ ելած են. օձիքին լայնութիւնը ուսի լայդին թէ թէին վրայ ելած են. օձիքին լայնութիւնը ուսի լայդին թէ ամագի ստիճանին վրայ կ'գտնուի: Կրծափեղնութեան քանի երրորդ ստիճանին վրայ կ'գտնուի: Կրծափեղնութիւնը կուրծքի կէս լայնքին հաւասարած է՝ թէ այս կին լայնութիւնը կուրծքի կէս լայնքին համեմատութեամբ, կամ սեղմօնին հետ համեմինչ կամ այնինչ համեմատութեամբ, կամ սեղմօնին համեմատութեամբ: Եթէ զարդարանքի կազուն ու սրածայր իրանազգեստ մատուած: Եթէ գարդարանքի վրայուն ուսի լայնութիւնը ուսի լայնութիւնը համեմատելու է անութիւն ու երբուծին հետ, որ լայնութիւնը համեմատելու է անութիւն երբուծին ու անութիւնը կ'ըլլայ ծղակարին հաւասարութենէն, երբուծին ու անութիւնը կ'ըլլայ ծղակարին մէջտեղէն, երբուծէն, ևն.: Խոկ թեւին զարդարանքի մէջտեղէն մինչեւ արմուկի հաւասարութենէն մինչեւ անութիւն եւ կամ արմուկի հաւասարութենէն մինչեւ ափգուայօդ, ու դիտել թէ հանգրիծակ, սկսատառակ, ու մինչեւ ափգուայօդ, ու դիտել թէ հանգրիծակ:

ոռոցիկներ, կարուած ծալեր, անկուններ, թեւակներ նոյն մասերուն քանի^Յ երրորդ աստիճաններուն վրայ կ'գտնուին:

Այսպէս ուրեմն, կռնակի կողմն եղած զարդերը համեմատուած կ'ըլլան անութի, թիկնանկեան, այս երկուքի մէջտեղին, թիկնավարտի կէսին ու տիգուայօդի հաւասարութեանց դէմ։ և անութէն վար եղած զարդերն աւ կողանջատի բարձրութեան հետ կ'համեմատուին։ Զարդօձիքներուն լայնութիւնն ալ իրանի վերի մասին գլխաւոր կէտերուն հետ կ'համեմատուին։

Գալով քղանցքին վրայ եղած զարդերուն, բարձրութիւնները կ'համեմատուին սնակուշտէն մինչեւ գետին եղած հասակին հետ, անոր կէսին, $\frac{1}{3}$ ին, $\frac{2}{3}$ ին, $\frac{1}{4}$ ին, $\frac{1}{5}$ ին, $\frac{1}{6}$ ին կամ $\frac{1}{8}$ ին ու $\frac{1}{10}$ ին հետ։ որուն սա ու նա կողմը ծայրեր ձեւացած կ'ըլլան, վերջաւորք կամ երիզներ դրուած կըլլան, ևայլն, ևայլն։

Վերջապէս բոլոր խնամով պատրաստուած նորաձեւութեան մասնագիտական նկարները գծագրուած են վերոյիշեալ սկզբունքներուն համեմատ, իրանին բազկին ու սրունքին վրայ գտնուած գլխաւոր տեղերուն և անոնց ստորաբաժանումներուն հետ մանրամասնաբար համեմատելով։ ուստի մենք ալ անոնց նմանը շինելու համար մեծ ուշագրութեամբ ի նկատի պէտք է առնենք նոյն իսկ ամէնէն աննշան կարծուած պարագան, որպէս զի նոյն հագուստին ձեւը ո' և է անձի մը հասակին ու կազմին հետ ճշութեամբ համեմատուի, և հագած ատեն նկարին նմանի։

Ահա՝ այն գաղտնի մանրամասնութեանց անտեղեակ ձեւող ու կարողներ են, որ թէեւ նկարի վրայ նայելով հագուստի ձեւեր կ'ընտրեն ու նմանը շինել կ'կարծեն։ բայց յետոյ՝ յաճախորդին հետ ժողովրդական յանկերք դարձած սա ասութիւնը կ'կրկնեն թէ «պատկերին վրայ աղւոր կերեւայ, բայց շինէս նէ անոր պէս չըլլար»։

Պ Ա Ս Պ.


ԴՐԱՍԱՆՔ, ԲՈՒԾԻՆՈՎ ԵԶԵՐՈՒԱԾ ԴՐԱՍԱՆՔ

ԵՒ ԴՐԱՍԱՆՔՆԵՐՈՎ ԶԳԵՍՑՆԵՐ


(Տե՛ս Լէ. տախտակ, 204էն մինչեւ 210րդ պատկերները)

Դրասանք. — Հագուստին սա կամ նա եզրերը դրասանքներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ



ՀԱՅԱՍՏԱՆԻ



ձեւացնելը շատ հին ոճ մըն է, առաւելապէս Արեւելեան ժողովը տարագներուն վրայ, որոնք ոսկեման հիւսկէններով ճողապէս եղերուած զգլիիչ հրապոյր մը կուտային անոր. նոյն խապէս եղերուած զգլիիչ հրապոյր մը կուտային անոր. նոյն իսկ 80—100 տարի առաջ կոնանց հարսանեկան օժիտի համար պատրաստուած պատմուածաններուն, շապիկներուն ու անդրավարտիքներուն եղրեւն այնքան դարձարձիկ դրասանքներ ձեւացուցած են, որ դիտողին վրայ յուսահատութիւն կուգայ և գլխու պտոյտ կը պատճառէ անոնց վրայ եղած անհամար առզընտուքը: Իսկ Արեւմուեանք՝ մշակած են պարզ ձեւերն ու ժամանակու պատճառէ անոնց վրայ եղած անհամար առզընտուքը: Իսկաւին շուրջ մէկ քառորդ դար անոր զանազան դրուագները, Տակաւին շուրջ մէկ քառորդ դար առաջ զարդարանքի իրանազգեստներուն եղրեւն անով կ'զճնուեր (Տե՛ս 206րդ պատ.): 7—8 տարի առաջ ալ սուկաններու վրայ մեծ թոփիչ մը ունեցաւ՝ ագուցիկ (Տե՛ս 210րդ պատ.) կամ ընդհատեալ (Տե՛ս 12. տախ. 203րդ պատ.) ձեւերովը. և այսօր իսկ քղանցքներուն զանազան մասերն ու զարդ—օձիքները կ'զարդարուին անոնցմով: Այս իրողութիւններէն միշտ սա՛ եղրակացութեան կը հանգինք թէ՝ «այս ինչ ձեռն այսօր նորածեւութենէ ինկած է» ըսելով զանց ընել և անոր շնելու կերպը արհամարելու չէ, քանի որ միշտ ներկան մեզ կ'ասպացուցանէ թէ նորածեւութիւնը վերադարձներով կ'հոլովուի, ու մենք ալ պէտք է զանոնք սովորինք որ մի գուցէ երևան եկած ժամանակ անգէտ եղած ըլլանք անոր մասին:

* * *

Դրասանքները պատրաստելու կերպը.—Դրասանքներն երեք կերպով կրնան ներկայացուիլ: Ա.՝Մասնաւոր գործիքով կամ ձեւապով կրնան առաջարկացուիլ: Բ.՝Մասնաւոր գործիքով կամ մասնաւոր չորս կերպ կերպ դրասանքներ կտրտել, պայմանաւ որ կերպասը չուզածուող տեսակէ չըլլայ: Բ.՝Ասղենկար բանուածքներով եղեցիկ ու ապա կերպասին աւելորդները ձեւապով կտրել (Ենչպէս 206րդ պատ.): Գ.՝Դրասանքներուն եղրեւն կարաբաժին ձգել և ըլջել, որ կ'պատշաճի գճգճուող կերպասներու: Այժմ պիտի բացատրենք այս վերջինին ձեւագծել և կարելու կերպը, որ բոլորովին կը տարբերի ի գործ դրուած ընկալեալ կոշտ ու տղեղ ձեւերէն: Արդ, համարենք թէ բարակ բրդեղէն, մետաքս կամ թաւիչէ իրանազգեստի մը ունստորէն մինչեւ գօտեվայրը՝ 5, 8 կամ 10

աղեղնաձեւ դրասանքներ ձևացնել կ'ուղենք . ուրեմն նոյն երկայնութեան հաւասար և 7—8 հարմէդ լայնութեամբ աստառէ երիգ մը կ'կտրենք որ առէջքին ուղղութեամբն ըլլայ , և մօտաւորապէս շինուելիք զգեստի կերպասին գոյնը յարաբերէ ու քիչ մ'ալ ձկուն ըլլայ , որ պիտի ծառայէ իբրև պնդածուէն : Այս աստառէ երիդին եղրը Ա գիծ համարելով (Տե՛ս 204րդ օր.) , մէկ կարարաժին ներսօք ուղիղ գիծ մը կ'քաշենք որ է Բ գիծ , և ամբողջութեանը վրայ քա՞նի դրասանք որ կազմել կ'ուղենք՝ այնքան մասերու կ'բաժնենք՝ նախապէս դադաթէն 2—3 հարմէդ պարապ ձգելով : Արդ , համարենք թէ 5 դրասանք ձևացնել ուղեցինք՝ ամէն մէկը 8ական հարմէդ մեծութեամբ . այն ատեն դրասանքին մեծութեան $\frac{1}{4}$ ին հաւասար (որ ներկային մէջ կ'ընէ 2 հարմէդ) , և Բ գծին զուգահեռական-հորիզոնական երկրորդ գիծ մ'ալ կը քաշենք՝ որ կ'ըլլայ Գ—Գ' գիծ . դադաթէն ձգուած քանի մը հարմէդին կէտը կ'անուանենք Դ : Սոյն Դ կէտէն սկսելով Գ—Գ' հորիզոնականին վրայ կարգաւ կ'նշանակենք մէն մի դրասանքին 8ական հարմէդով մեծութիւնը , որոնք են Ե , Է , Ը և Թ կէտերը (Տե՛ս 104րդ օր.) : Յետոյ Բ հորիզոնականին վրայ կ'նշանակենք մէն մի դրասանքին կէտերը (Տե՛ս Զ կէտը) . Դ կէտէն աղեղնաձեւ գիծ մ'ըսկսելով կ'միացնենք Զ կէտին ու հակադարձը կ'ձգենք Ե կէտին վրայ , և այսպէս յաջորդաբար Ե կէտէն Է , Է կէտէն Ը , Ը կէտէն Թ և մնացածն ալ կէս դրասանք կամ վէտկօր (Ինչպէս 104րդ օրինակին վերջաւորութիւնը կամ 107րդինը) : Երբեւ գծադիտական աշխատութիւն , աստառին վրայ խնամով դրասանքներուն ձևերը տալէ ետք , ոյն աստառ երիգը կ'ծածկենք իրանգգեստի առաջամասին բաւարար երկայնութեամբ նախապէս կտրուած կերպասի շրջօնին կողմի եղրը . և երեսիր կողմն ալ նոյն երիզին լայնութեամբ՝ զգեստին նիւթէն ձեւուած առերլան մը , այնպէս որ երկուքին երեսներն իրարու փակուին , և այս ամէնը մէկ կ'գերակարենք : Ապա , մեքենային ներքեր դնելով՝ դրասանքի գծերէն թափանց կարեր կ'անցնենք , որ մասնաւորապէս շատ մասնը ըլլալու է : Ապա ուրեմն , դրասանքներուն եղրերէն կէս կէս հարմէդ զուգահեռաբար կարաբաժին ձգելով աւելորդները կ'կտրենք . մէն մի դրասանքին խոռոշները ձեւիչով կ'ճեղքենք , և այնքան խոր որ թափանց կարին թելը միայն չկտրուի : (Տե՛ս

104րդ օր .ին է կեր) : Կ'մնայ այժմ ուրիշ համբերութեան կարօտ գործ մը այն է՝ մէն մի դրասանքին եղրը ձևիչով մը մանր մանուած անկիւն կտրտել (Տե՛ս 104րդ օր .ին է - Ը դրասանքը) : Ամէնէն ետք, և դարձեալ ամենայն համբերութեամբ՝ սոյն մանուած անկիւնները խնամով կ'կոտրենք դէպ ի աստառին կողմը (Տե՛ս այս ալ 104րդ օր .ին Ը - Ը դրասանքը), դիտելով որ թափանց կարերը ճիշտ ու ճիշտ ծալքին եղրը գտնուին. և լաւ է որ այս վիճակին մէջ եղրերը արդուկով ճնշուին : Հուսկ ուրեմն, մատեր-նիս կ'խրենք կերպասին ու առգերանին մէջ և այս վերջինը մէկ առ մէկ կ'ըրջենք աստառին վրայ, խոռոչները կ'թոթոթենք որ լաւ հանգչին և եղրերը շփելով կ'յդկենք ու մանր մանր կ'դե-րակարենք :

Այժմ դիւրին է ըմբռնել թէ ի՞նչու ավլու՛
ձեւացուցինք և զանոնք շրջեցինք աստառին կողմն ու արդուկե-
ցինք, քանի որ առանց այս գործողութիւններուն ալ կրնայինք
առքերանը շրջել աստառին վրայ: Որո՞վհետեւ կ'ըսենք, ասանց
անոնց՝ դասցուած տտեն մէջի շրթունքները վէտ վէտ ալիքներ
պիտի ձեւանային ու այն տմէն մէկուն դիմաց ալ մէյ մէկ տճեւ
անկիւններ. մինչդեռ մեր ցուցուցած եղանակովը դառնալէն ետք՝
կարծես թէ բոլորն ալ կարկինով գծուած կիսաշրջանակներ են
(Տե՛ս 105րդ պատկերին վայելչութիւնը): Ալ տսկէ վերջ դրասանք-
ներուն եզրերը ուզուածին պէս կ'զարդարուի. թերեւս մեքենայով
մէկ կամ երկու կարգ թափանց կարերով. թերեւս ժապաւինեա-
մէկ գամ գամ կարգ թափանց կարերով (Խնչպէս 107րդ պատ.). թե-
կով գարճ գարճիկ շրջաններ ընելով (Խնչպէս 107րդ պատ.). թե-
րեւս եզերքը հիւսկէն կարելով. և թերեւս մետաքսապատ բուծին
անցնելով: Միայն թէ այս վերջինին պատրաստելու եղանակն ալ
զատ պէտք է ուսումնասիրենք:

մէկ հարմէդ լայնութեամբ և ձափ ձեռքի բութամատ ու ցուցա-
մատերու օգնութեամբ բուծինը լաւ մը կ'տեղաւորենք երիզին
ծալուած խոռոշն ու այն տեղին հաւասարութեամբը մանր մանր
կ'դերակարենք, որչափ երկայնութիւն որ պէտք պիտի ըլլայ՝
Յետոյ կ'կցենք դրասանքի շուրթին, պայմանաւ որ երիզին լայն
եզրը ներքեւը մնայ (որ ի հարկին իրբեւ առերերան ծառայէ,
ներքին շուրթը ծալկարով մը գոցելով), միշտ մանր մանր դերա-
կարելով, և դրասանքին խոռոշ անկիւնները շեղանկիւն ծալլե-
լով: Այս երիզապատ բուծինը դրասանքին եզրը հաստատելու
համար, կամ մեքենայով թափանց կար երթալու է և կամ շըլ-
թունքէն շատ բարակ ծալիար մը:

Եթէ հաստ ու խիտ անկուտած կերպամներու վրայ դրասանք-
ներ շինել ուզուի՝ ինչպէս են զազմիր, ասուի, կիսասուի կամ զա-
սոռ անուանուած նիւթեր՝ որոնք բնաւ չեն գճգծուիր. այն ա-
տեն ոչ պնդածուէն դնել պէտք է և ոչ ալ կարելով դառցնելիք
առքերան. այլ գրասանքը պէտք եղուծ ձեւով գծելէ ետք, կէս
հարմէդի չափ կարաբաժին ձգելով յարդարելու է և ջրելով դե-
րակարելու է, այնպէս որ բոլորչի մասերը մէն մի ասեղի ելեւէ-
ջին ժամանակ մաս առ մաս ամփոփուին, մանաւանդ ասեղին
մուտքը դէպի վար. և յետոյ ծալուած շրթունքին ցցուած ալիք-
ները ձեւիչով հատ հատ կտրելու է որ կոշտ չըլլան. այս վերջին
գործողութիւնն այնպիսի կանոնաւորութեամբ մը ընելու է որ եթէ
փորձուինք գերակարը քակել ու ծալլուած շրթունքն ուղղել,
եզրը մանուած անկիւններու յաջորդական շարք մը առած ըլլայ,
ինչպէս է—Ը գրասանքը (Տե՛ս 104րդ օր.): Եթէ քանի մը կարդ
թափանց կարերով պիտի զարդարուի, ու անոնցմէ մէկը նրա-
ւարտ պիտի ըլլայ, նախ այս վերջինը ընելով՝ արդուկելու է,
յետոյ առքերան անցընել, շուրջը ծալ կարսվ փակելու և ասա
թափանց կարերուն միւս կարգերը:

Դրասանեմով իրնազգեսար ձեւելու կերպը . — Դրասանքը պատրաստելէ ետք, զայն կ'փռենք սեղանին վրայ, ու եթէ բանկոնակ ցուցնելու համար իրանազգեսատին կուրծքը բաց շինել կ'ուզուի և առաջակողման գօտեվայրին ու թերեւս կոնքին կէս հաւասարութեանը վրայ՝ սուկանի պէս անկուն ձեւացնել կամ պրկր-

ուած խորշխորշան, այնպէս որ ուլնստորէն մինչեւ առաջակողման գօտեվլը յը սուրանկիւն բամկոն մը երեւայ (ի՞նչպէս 206րդ պատկերը). այն ատեն տիպարին ուլնստորը կ'հաւասարեցնենք դրասանքի վերի եղրին ու կոնքի հաւասարութիւնը վարի եզրէն 4-5 հարմէգ ներսօք (Տե՛ս 207րդ օր.), սա՛ սկզբունքով որ, քանակը եթէ հաւասարեցնէինք դրասանքի վարի ծայրին (որ է բ կէա) ու Դ կէտին և քաշել ուղէինք ա-բ հորիզոնական գծի մը, Զ կէտը 11/2 հարմէգի չափ կ կէտէն ներսօք մնալու էր (Տե՛ս այս ամեեք 207րդ օրինակին վրայ): Այնպէսով շնուրելիք հագուստին կրծեղըն իր վերջնական ձեւն առած կ'ըլլայ. կ'մնայ ուրեմն միւս կողմերուն կարաբաժնները ձգել ու եթէ առաջակողման գօտեվայլը խորշխորշան ձեւացնել պիտի ուղուի՝ չենք մոռնար տիպարին սնակուշտն ալ դառցնել (ի՞նչպէս 207րդ օր. ցուցուցած ենք):

Շատ անգամ գօտեվայրը կպչուն իրասավագութիւնը կատարուի և թերեւս ունասորդէն մինչեւ գօտեվայր դրասանքներ կ'շինուի, և թերեւս ունասորդէն մինչեւ գօտեվայր խոտողնակի բաց կամ կրծեզրը գմբեթարդ կորութիւնով մը ներկայացուած է կամ երկու կողմի դրասանքներուն ցցուն շրթունքները կրծեզրին վրայ իրալու կպած կ'ուղուի, այս պարագաներուն նախ դրասանքին մէջ գրուելիք պնդածուէնին վրայ ձեւագծեւ է կրծեզրին պահանջուած կոր, գողաւոր կամ վէտկոր ձեւն ու լետու դրասանքները գծագրել:

ինչպէս նախորդ գասով տեսանք թէ առէս առ իրեն ոճն ունի, և զգեստին բոլոր գլխաւոր կողմերն այն ոճին պէտք է համապատասխանեն. հետեւաբար գրասանքով սկսուած իրանազգեստի մը թեզանիքը կամ պաստառակն ալ նոյն ձեւով պատրաստելու է, նոյն իսկ ուսին վրայ ձեւացած թեւակը և գոտեվայրին կցուած նել վատաւոը (ի՞նչպէս 206րդ պատկերը ուրախ ամենը կ'հասանեն):

ՊԱՍ Փ.
ԱԴԻԵՐ ԶԵՒԱՑԱԾ ԱՆԿԻՒՆԱՀՈՐ ԴՐԱՍԱՆՔՆԵՐՈՒ
ՓԱԿՈՒՈՂ ՍՈՒԿԱՆՆԵՐ

(Տե՛ս Լէ. տախտակ 208էն մինչեւ 210րդ պատկերները)
Դրասանքներն անկիւնաւոր առ կ'ըլլան ու շատ անդամ անոնք

նը կէս կ'ընենք և ասոնցմէ ալ մէյ մէկ փոքրիկ ուղահայեաց գծեր կ'քաշենք որոնք կ'միանան թ—ժ գծին ինչպէս ի—լ, ևն. (Տե՛ս 208րդ օր.) այնպէս որ Զ, Լ և Լ, Բ չեղ գծերով կրարումիանալով կ'կազմուին դրասանքներուն բոլոր անկիւնները, ինչպէս են Ե—Զ, Զ—Լ, Լ—Բ, Բ—Ե, ևայլն։ Ճիշտ այս գծերուն վրայէն մեքենայով թախանց կարեր կ'ընենք, յետոյ կէս կէս հարմէդ կարաբաժններ ձգելով՝ տելորդները կ'կտրենք, խոռոշները կարաբաժններ ձգելով՝ տելորդները կ'կտրենք, կարաբաժններ ձևիչով կ'ձեղքենք (Ինչպէս Խ—Ծ փոքրիկ զիծը), կարաբաժնները կազմով շրթունքները խնամով կ'ըրջենք պնդածուէնին վրայ ները (Տե՛ս 208րդ օրինակին Կ, Հ—Զ, Զ—Ղ, Ղ—Ղ եւայլն ծալլուածեր), ու Եթէ (Տե՛ս 209րդ օր) աստանէ երիշ մը իրբեւ պնդածուէն, ինչպէս նաև նոյն լայնութեամբ ալ առքերանցուն տարբեր տեսակէ բարակ նիւթ մը դնելու է։ Նախորդ դասի հրահանդին համեմատ՝ առքերանցուն երեսը կ'ձածենք կերպասի երեսին և աստառն ալ կերպասի շրջօնին կողմը դնելով՝ քանի մը կարդ կ'դերակարենք։ Յետոյ, աղխերուն երկայնութիւնը քա՛նի հարմէդ որ շինել կ'ուզենք, նոյնչափ և մէկ կարաբաժնն աւելիով հորիզոնական գիծ մը կ'քաշենք, որ է Ա—Բ (Տե՛ս 208րդ օր.)։ Կընայ ըլլալ որ դէպի գօտեվայր աղխերն հետպէնէ իրարմէ կարճ շինել ուղուի Տե՛ս 210րդ պատ.)։ այս պարագային ալ Ա—Բ գիծը պէտք եղածին չափ խոտոր ըլլալու է։ Ապա, կ'քաշենք Գ—Դ գիծը որ աղխերուն երկրորդ կարգի անկիւններուն հաւասարութիւնը կ'ցուցնէ, և պնդածուէնին եղրէն մէկ կարաբաժին ներսօք ալ կ'քաշենք Թ—Ժ գիծը, որ կ'ներկայացընէ աղխերուն՝ և որ նոյնն է՝ դրասանքներուն արտաքին ծայրերու հաւասարութիւնը (Տե՛ս 208րդ օր.)։ Հիմա ալ կ'քաժնենք դրասանքներուն լայնութիւնն ու Եթէ ասոնք դէմ առ դէմ ագուցիկ պիտի ըլլան, թէ՛ իրենց և թէ՛ միջոցներուն հեռաւորութիւններն ալ հաւասար։ ուստի կարգաւ ուղղահայեաց—զուգահեռական գիծեր կ'քաշենք, ինչպէս են Ե—Զ, Է—Բ ևայլն։ Հուսկ ուրեմն, Գ—Դ գծին վրայ մէն մի դրասանքի լայնութիւն

Եթէ ուսադիրներ կ'ուզուի դրուիլ, որ նոյն իսկ տիգերուն վրայ կախուին (Տե՛ս 210րդ պատ.), անոնց ծայրը, շուրջի զարդն պատը կախուին (Տե՛ս 210րդ պատ.) անոնց ծայրը, ծայրին նմանի. նոյն պէս ալ պատու կոճակը պէտք է կուրծքի ոճին նմանի. ողակները կ'քաշնորոյթի համեմատ կոճակներն ընտրելու ետք օղակները կ'քաշուին։

ԹԱՇԱՆՈՂ ԹԱԹԻԿՆԵՐ ԷՒ ՄԱԿԱՐՉՈՒԹՈՒՆՆԵՐԸ.

(Տե՛ս 211ին միջեւ 222րդ պատկերները)

Սա վերջին տարիները շատ ընդհանրացած էր բոլոր արտաքին հագուստներուն վրայ ալ ուրարի ձեւով ծածանող թաթիկ-ներ=բար ձեւացնելու . որոնք կ'ըլլային հագուստին կերպասէն կամ տարբեր նիւթերով ու զանազան գոյներով եզերուած : Իրբեւ օճիք (Տե՛ս 221րդ պատ.) , իբրեւ «Իտապա» (Տե՛ս 219րդ պատ.) , իբրեւ ուսագիր (Տե՛ս 222րդ պատ.) , իբրեւ ուրարի (Տե՛ս 220րդ պատ.) և քղանցքներու վրայ ալ իբրեւ առկախ արէզգ(*) : Ծածանող թաթիկները ծառայեցին միանդամայն կրկնոցներու և պօլերօններուն փողեղին շուրջն իբրեւ օճիք (Տե՛ս 219 եւ 221 պատ.) և ուսերուն շուրջովն առկախ ծածանող զարդօճիքներ (Տե՛ս 222րդ պատիեր) :

Արդ, բոլոր այն զարդերը որ իրանին սա կամ նա կողմին վրայ պիտի կենան, մեր աեսակէտով՝ անոնք միշտ պէտք է առնուին, իրանազգեստին տիպարներէն . որպէս զի չափատուին վրայ ուր որ կ'ուզենք կեցնել զանոնք՝ ճիշտ այն տեղերը կ'ենան: Սա ալ գիտնալ պէտք է թէ այս կարգի զարդերուն շրջագծերն որոշ կանոններ չեն ունենալ այլ պարզապէս գծագիտութիւն են անոնք և անոնց վայելչութիւնը ճիռն կոր գծեր կարենալ շինելով ձեռք կ'բերուի. ահա այս կարգի զարդերուն համար է որ Ա. գլխու Ա. դասի Ձեւազգօւրեան միջոցները հարցին մէջ չորս ուսումներէն մին յիշեցինք ԳՏԱԳԻՏՈՒԹԻՒՆը: Ուրեմն համարենք թէ պօլերօի մը կամ սուկանի մը վրայ ծածանող թաթիկներ շինել կ'ուզենք, որոնք առաջակողմը կրծեղրին հետ շրթունք շրթունքի իջնեն մին-չեւ առաջակողման գօտեվայր կամ մաս մ'ալ երկայն՝ կռնամէջին դէմ և ուսերուն ուղղութեամբը դէպի տիգերուն վրայ ձգուած (Տե՛ս 211րդ օրինակ):

Այս կերպով առաջամասին տիպարը կ'դնենք շինուելիք թա-
թիկներուն ծաւալին բաւարար տիպարոց թղթի մը վրայ , ասա՞

(*) Ականջը խօսի Մալաթեան էֆ.ին որ corsage à basque «Ճրէզաւոր իրանազգեստ» Թարգմանած է, Ֆրանսացի անժարակ հեղինակին սփառը ինք ալ վիժելով՝ մարդ ողբան ծաղրելի կ'օլլայ չգիտցած նիւթին վրայ ճառելով.

սւսածագը կէս ընելով մէջտեղը կէտ մը կ'նշանակենք որ է Ք կէտը . յետոյ յետսամասի տիպարին Ժ կէտը և թիկնածագին կէսը կը հաւասարեցնենք առաջամասի Ծ և Ք կէտերէն մէջ մէկ հարմէդ հեռու (ՏԵ՛Ս 211րդ օրինակը) : Տիպարներուն ստացած դիրքերուն մէջ՝ փողեղբի ճեւը կ'օրինակենք ներքեւի թղթին վրայ որ է Բ— Ժ— Դ— Պ գիծը : Զ կէտէն Ա₁/₂ հարմէդ դրազք Զ' կէտը նշանակե- լով՝ քանակը կ'հաւասարեցնենք Պ և Զ' կէտերուն ու կ'քաշենք Դ— Զ'— Ա շեղ գիծը , որ կրծեղը տրամագիծը կ'ներկայացնէ : Ծ' կէտէն Ա հարմէդ վարօք կ'նշանակենք Ծ' կէտը և Խ կէտէն Զ հարմէդ վարօք ալ Խ' կէտը ու կ'քաշենք ուստին մակերեսը ներկայա- ցնող Ծ'— Խ'— Պ գիծը : Այժմ նորաձեւութեան համեմատ Խ կէտէն դէպի տիգին վրայ ծածանող մասին երկայնութիւնը նշանակելով կ'քաշենք Ե— Պ ուղղահայեցը . ասուր իւրաքանչիւր կողմը Գա- կան հարմէդով կ'ձատենք Ե և Պ կէտերը և Զ հարմէդով ալ Պ կէ- տը (ՏԵ՛Ս 211րդ օր .) : Համարենք թէ կոնամէջի երկայնութիւնն ալ կ'ուղենք հաստատել Պ կէտին վրայ . ուստի սոյն Պ կէտէն Զ հարմէդ խոտորումով կ'քաշենք Պ— Ժ շեղ գիծը , և Ժ կէտէն գո- գաւոր կոր գիծ մըսկանով ուստին վրայէն կ'գարձնենք ու կ'բե- րենք մինչեւ Ե կէտ , նոյնպէս ալ Պ կէտէն մինչեւ Ե , ուր Ե— Պ անկիւնագծերով կ'լլանայ (Ա.ա ու շաբրութեան առնելու և Պ— Պ անկիւնագծերով կ'լլանայ) : Կ'մայ ուրեմն յետ- է 211րդ օրինակի զծերուն վայելչութիւնը) : Կ'մայ ուրեմն յետ- սամասին ու առաջամասին տիպարներուն վրայ շնուած գիծերը վշանուակով օրինակել ներքեւի տիպարցու թուղթին վրայ (Զե- կանուակով օրինակել ներքեւի տիպարցու թուղթին վրայ) :

Միեւնոյն ձեւին կարձն ալ կ'ըլլայ (Տե՛ս 214րդ օր.), այն է,
կոնամէջը մինչեւ թիկնանկեան հաւասարութիւն (որ է Ե կէտ),
ուսին վրայ՝ մինչեւ տիգուսյօդ (որ է Խ' կէտ) և առաջակողմբ
գոտեվայրէն Յ—Կ հարմէդ կարձ։ Ասոր ալ ձեւագծելու կերպը
դարձեալ նախորդին նմանն է, միայն կոր գծելն աւելի գողաւոր
և աւելի ճկուն շրջաններ կ'ընեն, ինչպէս կ'տեսնուի Ե—Ժ, Ժ—Ե,
Ե—ԹԻՇ', Խ—Ղ, Ղ—Ե, Ե—Ր և Ր—Ա գծերով (Լաւ դիտէ այս
ամեն 214րդ օրինակին վրայ)։

Եթէ ուզուի այս կարծ ձեւն աւելի թախ լուս է այսութիւն մէջտեղերը մէջմէկ հատ ևս ձեւացնելով, միայն թէ լայնութիւն ները նեղ կ'ըլլան։

Փողեղրին շուրջը իրեւ օձիք ճեւացնելով ու կրծեղրին հետ իրեւ ուրար ձգել ուղուած ատեն ալ (Տե՛ս 215րդ օր. Եերեւեն տեսնուած բաց զոյնով ձեւը), նախ կռնամէջին դէմ փափաքուած լայնութիւնը կ'նշանակենք, որ է դ կ'էտ. և այս կէտէն սկսելով փողեղրին հետ զուգահեռական գծով մը կուգանք մինչեւ հագագին դիմաց ու վէտկոր ճեւով մը կ'միացնենք կրծեղրի ուրարին:

Թերեւս առաջակղումը ծածանող թաթիկն ու լնստորին ուղղութեամբն ու լանջին վրայէն իջնէ դէպի գոտեվայր, և այս վերջինը միւս ծայրերէն աւելի լայն շինել ուղուի (Տե՛ս 214րդ օրինակին տեղանկիւն ստուերով գծուած ձեւը), որ է Ը—Ը—Ծ'—Ը, լ—ի, լո—ի, ի—զ ևայլն:

Թերեւս թլիփ-օձիքի մը առաջակղումը կարճ թաթիկ ճեւացնել ուղուի, որ ուապաի մը ճեւն առնէ (Տե՛ս 212րդ օր. մուր ստուերով ձեւը), ու թերեւս հագագն ալ կիսաբոլորչի բացուած ըլլայ:

Թերեւս հագագը կիսաբոլորչի, կրծեղրին ուղղութեամբն ու կռնամագին հետ զուգահեռական լայնութեամբ իջնէ առաջակողման գոտեվայրէն քանի մը հարմէդ վար (Խնչայէս 215րդ օրինակին ներեւեն տեսնուած բաց զոյն ստուերով ձեւը), որ է Ը—ա—ր և դ—ք գծերը, ու թերեւս վարի ծայրն երեք փոքր դրասանք ճեւացնել ուղուի. ինչպէս թ ծայրը:

Թէ՛ այս վերջին և թէ՛ առաջինին (որ է 214րդ օրինակին բաց զոյնով ձեւը) ուսի կողմէրը գոգաւոր կամ ալ տահակ դրասանքներով ալ կրնան շինուիլ:

Թերեւս ուրարի ճեւով բարդ իրարդ կրկնակի և եռակի շինել ուղուի (Տե՛ս 216րդ օր.) և կրծեղրին հետ զուգահեռարար անջատ, ու ծայրերը կիսաբոլորչի որոնք են ի, ը և թ ծայրերը, կամ երեք անկիւն (Տե՛ս այս վերջինը 220րդ պատկերին վրայ). միայն թէ մէկէ աւելի թաթիկները՝ տեսնուածին չափը միայն կ'շինուի:

Այս թաթիկները որ միեւնոյն ատեն օձիքի դեր ալ կ'կատարեն ըսինք, ընդհանրապէս կռնամագին բարձրութեամբը կ'ըլլան, բայց երբեմն դէպի վիզը բարձրացած օձգոտն ալ կ'ձեւացնեն: Այս պարագան, նախապէս գիտնալով՝ հագուստին կերպասը կորուած ատեն փողեղրին փափաքուած բարձրութեամբն օձգոտնին բաժինը միատեղ կ'ձեւուի, որ ընդհանրապէս 1½էն մինչեւ 4 հարմէդ կ'ըլլայ: Արդ, յետսամասի տիպարին կռնամագը՝ օձ-

գոտնին փափաքուած բարձրութեանը չափ կերպասին գագաթէն վարօք դնելով և հագուստին յետսամասն ի՞նչ ձեւ որ շինել կ'ուղուի՝ զայն կ'ձեւացնենք. յետոյ կռնամէջի ուղղութիւնը կ'չարունակենք դէպի վեր (Տե՛ս 217րդ օր.), և համարենք թէ օձգոտնը 3 հարմէդ բարձրութեամբ ճեւացնել կ'ուղենք, ճիշտ նոյն չափ բարձրութեամբ կ'նշանակենք Ը' կէտը, կ'քաշենք նաև Ժ—Ժ' փոքրիկ գիծը որ գրեթէ Ը—Ը' գծին հետ զուգահեռական դիմաց մունքուած թաթիկն ու լանջին վրայէն 2½ դիմաց մունքուած այս կարմէդի չափ կարձ ըլլայ, այսինքն 2½ դիմաց մունքուած ու ½ հարմէդի չափ կարձ ըլլայ, այսինքն 2½ դիմաց մունքուած այս կարմէդի մեղմ կոր գծով միրարու կ'միահարմէդ. ասպա Ը' և Ժ' կէտերը մեղմ կոր գծով միրարու կ'միահարմէդ. այս ալ 2½ հարմէդով կ'ձշտենք Ը' կէտը: Ուրեմն, 218րդ օր.), այս ալ 2½ հարմէդով կ'ձշտենք Ը' կէտը: Ուրեմն, հագագին դէմ տրուելքը բացութեան համեմատ՝ Ը' կէտէն մեղմ հագագին դիմաց մը կ'իջնենք կրծեղրին վրայ (Լա՛ւ դիեկ 218րդ օրինակին կից Ը'—Ե գիծը): Այս գծին ալ կարպատին դնելու պէտք չկայ: Հագուստին ուսը մինչեւ սոյն Ժ' և Ը' կէտերը կարուելով, կըռնամագին և ուլնստորին դէմ օձգոտն զձեւանայ: Հուսկ ուրեմն ծածանող թաթիկ կամ ուրարի ճեւ զարդերուն ծոծրակը Ը' կէտէն դիմաց կ'առնուի (Տե՛ս 215րդ և 216րդ օրինակները), ինչվերօք Ը' կէտը կ'առնուի (Տե՛ս 216րդ օր.): Միայն պէս նաև Ը' կէտը 2½ հարմէդ դրագը (Տե՛ս 216րդ օր.), մասը հագուստին առնելու կէտ մը կայ որ, ուրարին կռնամագի մասը հագուստին կցորդուած ատեն՝ այս վերջինը ուլնստորին դէմ թոյլ պիտի գայ. ուսամի ուրարին նոյն ասհմանը արդուկով ընդուղդանու է, որ դէպի վեր բարձրացող օձգոտն ձևանայ:

Մածանող բարիկները ձեւելու և կարելու կերպը. — Եթէ կերպասին լայնութիւնը թաթիկներուն ծաւալին կ'համապատասին լայնութիւնը թաթիկներուն, որ է Ը—Գ գիծը խանէ, այս վերջինին կռնամէջի ուղղութիւնը, որ է Ը—Գ գիծը (Տե՛ս 214րդ օր.) կամ, Ը—Ե գիծը (Տե՛ս 214րդ օր.) և կամ Ը—Դ գիծը (Տե՛ս 215րդ և 216րդ օր.) կ'հաւասարեցնենք կերպասի ծաւալի գիծը, ափապարին ստացած դիրքովը շուրջը կ'գծենք և մէյ մէկ քին, ափապարին ստացած դիրքովը շուրջը կ'գծենք և նիւթին նուազութեանը կարպատին ձգելով կերպասը կ'կարենք: Նիւթին նուազութեանը կամ լայնքը նեղ ըլլալու պարագային, կռնամէջը կարով ալ կրնայ կամ լայնքը նեղ ըլլալու պարագային, կռնամէջը կարով ալ կրնայ ըլլալ: Բարակ բրդեղէն կամ մետաքսեղէն կերպասներու համար ըլլալ:

լաւ է որ ներքեւը բամբակեղեն ասուեակէ կրկնում մը դրուի՝
թէ՛ իրեւ պնդածուէն և թէ՛ ուռուցիկ կենալու համար : Այս պա-
րագային ալ նախ պէտք է այն պնդածուէնը ձեւուի՝ միշտ տի-
պարին մեծութեամբը, յետոյ զայն կերպասին վրայ դերակարուի
ու կարաբաժիններ ճգելով չուրջը կտրուի : Վերջապէս, այս եր-
կու պարագաներուն ալ շուրջը խնամով դարձնել և մանր մանր
դերակարելու է, բացի փողեզրի սահմանէն, որ հագուստին կը-
ցորդուած ատեն այն տեղի կարաբաժինը չըջուի հագուստին շըր-
ջօնը և շեղ երիզ առքերանով մը փակուի : Ամէն առթիւ թաթիկ-
ներուն ներքեւը բարակ ու սահուն նիւթէ առքերան մը դնելը եր-
կու պատճառի համար անհրաժեշտ է, մէկ մը որ չըջօնի ծիւ շուր-
ջերը կ'ծածկուին ու ծածանելու ժամանակ մաքուր կ'երեւան և
մէկ աէ, քալելու ժամանակ շարժումնին անկաշկանդ կ'ըլլայ :
Անտարակոյս երեսի զարդն ընել և լաւ մը արդուկելէ ետք առ-
քերանը կ'դրուի :

ՄԱԿԱԴՐՈՒԹԻՒՆ ԶԵԼԱԳԾԵԼ, ԿՏՐԵԼ ԵՒ ԿԱՐԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Դերձակութեան արհեստին մէջ մակագրութիւն կ'ըսուի այն
աշխատութեան, որ հագուստին նիւթէն կամ տարբեր նիւթով ու
տարբեր գոյնով զարդեր կ'դրուին զգեստին սա ու նա կողմերը,
երբեմն եղլերուն վրայ դրասանքի ձեւով (Տե՛ս 222րդ պատ.),
երբեմն ուղիղ կամ կոր ձեւերով չերտեր կտրուած և հագուստի
կուրծքին, կռնակին, թեւերուն ու քլանցքին զանազան կողմերը
անով կ'զարդարուի (Տե՛ս 221րդ պատ.) և երբեմն ալ գծագիտա-
կան ձևերով կամ ազատգեղի նմանութեամբ կտրուած օրինակնե-
րով (Խնչպէս ԿԱ. տախակի 506րդ փոքրիկ նկարը) թեւին պաստա-
ռակներն ու կրծօձիքները կ'զարդարուին (Տե՛ս ԻԳ. տախ. 94րդ
օրինակին կրծօձիքը): Ասոնք երբեմն ուղղակի հաղուստի կերպա-
սին վրայ կ'դրուին ու եղլերը մետաքսէ բուծիններով, կամ մե-
քենայով կարգ կարգ թափանց կարեր երթալով կ'զարդարուին
ու երբեմն ալ հագուստին կերպասը ծակելով ներքեւէն թափան-
ցող կ'ցուցնեն:

Տակաւին անցեալ տարիներ պօլեօններու և հիմա ալ կպչուն
իրանազգեստներուն եղբերը և նոյն իսկ ուսերովը ըրջապատռուած
դարձդարձիկ ճեւերով ու տեղ տեղ անհաւասար լայնութիւննե-

բով մակադրութիւններ շինուեցան, որուն ձեւագծելու կերպին
համար նմոյց մը տալ բաւական կ'համարինք (Տե՛ս 215րդ պատկե-
րին մուք սուներով ձեւը): Օրինակի համար եթէ կպչուն պօլերօի
մը եղբերը պիտի զարդարուի, նախ այն տեղերը կարարաժիններ
ձգելու չէ՝ յետոյ սեղմօննը կարել և փողեղբին, կրծեղբին ու գօ-
տեղայրին ձեւերը օրինակելու է մակադրութեան համար գործա-
ծելի նիւթին վրայ ու եթէ ուսին վրայ ալ պիտի շարունակուի,
նոյն տեղի մակերեսը ներկայացնող Ծ'-գ գիծն ալ քաշելու է որ,
մակադրութեան տրամագիծը լու որոշուի. ապա հագուստը վեր-
ցընելով՝ մակադրութեան ձեւերը գծելու է, ինչպէս են ՚-ծ,
՚-ե, ՚-զ, ՚-լ, ՚-ի, ՚-ե, ՚-ը, ՚-իս, ՚-ն. որոնք պարզա-
ծեն գծագիտական ձեւեր են (Լա՛ւ դիտէ 215րդ օր. վրայ): Ապա
պէս գծագիտական ձեւեր են լայն հագուստին վրայ, շուր-
բաժիններ ձգելով կտրել ու ծածկելու է հագուստին վրայ, շուր-
բաժիններ զգելով կերպարել և շուրբերը լըջելու է հագուստի շրջօնին
կողմը, ամէնէն ետք թափանց կամ տարբեր իրերով
զարուանելու է:

Այս կարգի զարդերուն համար միշտ կանուխէն հաջուռը և
որ հագուստին շրթունքները կոչտ չըլլան. և ահա ասոր համար
էր որ ըսկինք թէ հագուստին եղրերը կարաբաժին ձգել պէտք
չէ. որպէս զի մակադրութեան նիւթին շրթունքը միայն շրջուի
դէպ ի ներս և յետոյ մէջի աստառը ասոր եղրին հետ ծալ կալով
մը փակուի:

¶ U U 2.

ગુરુત્વારા હસ્તક્રિયા

(Տե՛ս կթ. տախտակ եւ ուրիշներ)

Երբեւ տարածուն օձիք ծառայող կարգ մը ուսնոցար զան՝
որոնք զանազան ժանեալներով ու կերպ կերպ ասեղնագործու-
թեամբ կ'պատրաստուին և կ'անուանուին գարդօձիքներ (Տե՛ս ! Թ.
Տախ. 224, 225 եւ 226րդ օրինակները)։ Շատեր այս օձիքները
ձեռագործական մտու կ'նկատեն ու կ'կարծեն թէ ուրոյն կերպով
կ'պատրաստուին։ որովհետեւ երբեմն հագուստի փողեզրին կըց-
ուած կ'ըլլան կամ բոլորովին շարժական։ թերեւս այս վերջին

Ճեւին համար այնպէս նկատուած են : Մինչդեռ մեր տեսաէկտվ՝ քանի որ անոնք ամէն պարագայի մէջ փողեցրին և ուսերուն շուրջը պիտի պատեն, զայն կրող անձին տիպարներովը պէտք է յօրինուին, և ի՞նչ կերպ ալ զարդարել պէտք ըլլայ՝ նախապէս թղթէ տիպար մը պատրաստելու է :

Ուրեմն, ծածանող թաթիկներ ձեւագծելու սկզբունքին նըման, առաջամասին ու յետամասին տիպարներն առնելով կ'դընենք զանոնք օձիքին բաւարար տիպարցու թղթի մը վրայ, այնպէս որ ուղղութեած և մինչեւ ուսի երկայնութեան կէսը՝ մէյ մէկ հարմէդ զուգահեռաբար անջատ ըլլան (Տե՛ս ԼԹ. տախ. 223րդ օր.) իբրեւ ընդարձակութեան բաժին, և ստացած դիրքին մէջ՝ ներքելք գտնուած թղթին վրայ կ'օրինակենք փողեզրը. յետոյ քանակը կ'հաւասարեցնենք ծոծրակին ու Գ կէտէն 1½ հարմէդի չափ դրսօք ու կ'քաշենք Ը—բ դիմք՝ որ օձիքին կռնամէջի ուղղութիւնը կ'ներկայացնէ (Տե՛ս 223րդ օր.), հիմա ալ քանակը կը հաւասարեցնենք հագագին ու Զ կէտէն 1½ հարմէդ դրսօք նըշանակուած Զ' կէտին և կ'քաշենք Դ—ա դիմք. ինչպէս նաև ուսի մակերեսը ներկայացնող Ծ'—Խ'—գ դիմք (Տե՛ս 223րդ օր.): Ապա, օրուան նորաձեւութեան և ոճին համեմատ՝ արտաքին լայնութեան ձեւը կ'որոշենք. թերեւս ճիշտ ուսին լայնութեամբը և փողեզրին հետ զուգահեռական կիսաբոլորչի մը ձեւացնել ուղղուի. կամ յետսակողմի սահմանը Ե կէտը առնել ուղուի, ուսին վրայ Խ' և կրծեզրը դ (Տե՛ս 223րդ օրինակին բաց գոյն ստուերով ձեւը): Թերեւս մաս մը դէպի տիգերուն վրայ ծածանել ուղուի, այն ատեն կ'առնենք Գ կէտէն մինչեւ Զ' կէտ՝ գրէթէ փողեզրին հետ կիսաբոլորչի մը ձեւացնելով (Տե՛ս մուք ստուերով ձեւը): Թերեւս անութի բարձրութիւնն ալ ծածկելու չափ լայն ուղուի, այն ատեն ալ յետսակողմը Գ կէտէն 4—5 հարմէդ վարօք կ'առնենք Բ կէտը՝ և փողեզրին դիրքովը մինչեւ Ե կէտ կիսաբոլորակ մը կը ձեւացնենք (Տե՛ս 223րդ օրինակին զարդ ստուերով բ—գ—ե գիծը): Գուցէ կրծամէջը, կռնամէջը և տիգերուն վրայ անկիւնաւոր շինել ուղուի, որուն ամրագծութիւնը թաշկինակի մը ձեւն առնէ, և թերեւս մեզմ կորութիւններով (Տե՛ս 223րդ օրինակին բ—գ—ե մեղմ կոր զծերով ձեւը): Թերեւս յետսակողմն ու տիգերուն վրայ բոլորչի և առաջակողմը մինչեւ առաջակալման դօտեվայր

թաթիկ ձեւացնել ուզուի (ՏԵ՛Ս 223րդ օրինակին Գ—զ—ա գիծը): Թերեւս կանամէջը և տիպերուն վրայ խոտոր բացուածքներով գեղ ձեւացնել ուզուի և կրծամէջին վրայ ալ ծածանող թաթիկ (ՏԵ՛Ս ԼՂ. սախակ 212րդ օր.), “ր է Ե—զ’, զ’—Ե, Ե—Խ’, Խ’—զ, զ—Լ և Ե—Պ, Պ—Զ’, Զ—Ճ—Ծ’—Լ կամ Զ—Դ և Դ—Ծ’—Լ գծերով ձեւերը:

Թերեւս ուսին լայնութեամբ և խոտոքնակի փողեզրին կէսը շինել ուղուի (Տե՛ս Ա. Տախտակ 218րդ օրինակ), ո՞ր է Ե—Խ—ի, Խ—Ժ և Ճ—Ծ—Ղ գծերը:

Թերեւս տիգույօդին վրայ մեծ դրասանք մը ձեւացնելով՝
մինչեւ առաջակողման գոտեվայր ալ վէտկոր ու շեղանկիւն ու-
րաբ (Տիգույօդին աշխատական առաջակողման մօտք ստուերով ձեւր):

Թերեւս բոլոր շուրջը կիսաբոլորչի դրասանքներ ձեւացնել
ուղղուի (Տե՛ս Լ. Տ. Տախ. 2/4րդ օր.). այս պարագային նախ Ծ՝ Խ՝
գծին վրայ նշանակելու է դէպի տիգուսոյզ ծածանող երկայնու-
թիւնը, լ՝ զ՝ իս կիսաբոլորչի դիմը ներկայացնելով. ապա՝ Գ և
Լ կէտէրուն հեռաւորութիւնն երեք հաւասար մասերու բաժնելով,
լ միկնանկեան կողմի երկուերրորդ մասովը ձեւացնելու է լ՝ ի ա-
թիկնանկեան կողմի երկուերրորդ մասովը ձեւացնելու է լ՝ ի ա-

մին պէս բաժանում է առաջակա գործութիւններով ալիքներ ձեւացնել ուղուի (Յ Ա ԹԵՐԵՍ բազմանկիւններով ալիքներ ձեւացնել ուղուի Յ Ա Վ. ՏԻՄՈՒՆԻ 173րդ օրինակ, բազմանկիւն գանվլըն) որ է Պ", Է, Լ, Վ, Բ, Է և Զ' (փոխանակ Զ ի) անկիւններով ձեւը:

ինչպէս կ'առնուի, բոլոր այս ձեւերը սոյն գլխու Ի. Դամր
երկրորդ հրահանգին համեմատ՝ ոլոշ տեղէ մը կ'սկսին ու նպա-
տակաւոր կէտի մը վրայ կ'յանդին և ո՛չ թէ ըստ կամս լայնու-
թիւններով ու ծամածուռ գծերով. ուստի լաւ ուշադրութեան
առնելու է նորաձեւութեան նկարներուն նայուած ատեն և անոր
համեմատ առաջնորդուելու է յետամասին ու առաջամասին տի-
պարներով:


四

ԶԱՐԴՈՉԻՔՆԵՐԸ ԶԵԽԵԼ ԵՒ ԿԱՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ


Քանի մը տարի առաջ շատ նորաձեւութիւն էր այս զարդածիքները որ գլխաւորաբար կ'զարդարուէին ծակոտիէն ու թափանցիկ կարամէջերով (Տե՛ս 225րդ օրինակ) կամ էպրշումէ զարդասեղներով (Տե՛ս 224րդ օրինակին մեծագոյն մասը): Աշխատութեան մասին երկուքն ալ տարբեր ուղղութիւն ունին և ծայր աստիճան ինամբ կ'պահանջեն. ուստի նախ պիտի բացատրենք զարդասեղներով ցանցակերպ ձեւացած եղանակը:

Արդ, համարենք թէ զարդօծիքը կիսաբոլորչի և լայն ձեւով շինել կ'ուղենք. նախ կ'առնենք բ—գ—ե (Տե՛ս 223րդ օր.) տիպարը, ուշադրութիւն ընելով որ տիպարցու թուղթը կարծը և դիմացկուն տեսակէ ըլլայ. յետոյ կռնամէջի տրամադիծը ներկայացնող լ—բ գիծը ծալլելով զոյդ կ'կտրենք, այսինքն երկու կողմը միակտոր (ի՞նչպէս 224րդ օրինակին մեկ մասը կը տեսնուի): Ապա՝ օձիքին համար սահմանուած մետաքսեղէն կամ բրդեղէն նիւթը կ'ծածկենք թղթէ տիպարին վրայ և շուրջը վեր ի վերոյ կ'դերակարենք: Կ'դարձնենք տիպարին կողմը, իրուէ դուրս կարաբաժիններ ձգելով՝ կերպասին աւելորդները կ'յարդարենք ու վերստին կ'դարձնենք կերպասին կողմը. քանի կարգ ցանցակերպ և զանոնք ինչ լայնութիւններով որ կ'ուղենք, այնքան մասերու կ'բաժնենք՝ (եղբերուն կարաբաժինները միատեղ չհաշուելով). ուստի համարենք թէ երեք կարգ ցանցակերպ և չորս կարգ կերպաս ցուցնել որոշեցինք (ի՞նչպէս 224րդ օրինակը): Ուրեմն, կերպասին վրայ ամէն մէկէն ալ մէյմէկ բարակ գիծ կ'քաշենք, որ ներկայ ձեւին համար վեց կարգ ունեցած կ'ըլլանք, ջանալով որ բոլորն ալ համաչափ զուգահեռական ըլլան: Այժմ կերպասին ամէն մէկ երիզ ձեւացած մասերուն ճիշտ մէջտեղերէն մանր մանր կ'դերակարենք, այն է չորս կարգ: Յետոյ նեղաւարածու մը ամէն մէկ ցանցակերպ ձեւանալիք միջոցներուն ճիշտ մէջտեղերէն կ'կտրենք և իւրաքանչիւր եղբը ներս շրջելով՝ շըրթունքներէն մանր մանր կ'դերակարենք, այնպէս որ օձիքցու կերպասը կ'վերածուի չորս կարգ բոլորչի երիզներու և երեք կարգ թղթէ երիզ ճամբաներ կ'երեւան. (Կերպասը թղթին հետդերակարելու պատճառին համար էր որ քիչ մը վերը ըսինք թէ՝ տիպարցու թուղթը կարծը և դիմացկուն ըլլայ): Ալ հիմա ուղ-

ІІІ. СУПЛІКАЦІЯ



ІV. СУПЛІКАЦІЯ



ուած գոյնէ հաստ ու կակուղ մետաքս թելը ասեղին կ'անցնենք
և կերպասին խրաքանչնւր զթունքներէն յոյժ թափանցեղը
միելով՝ և փշակարի ձեւով դէմ առ դէմ ու խիտ առ խիտ կ'անց-
նինք ու կ'դառնանք, թելերն առանց կծկելու կամ թոյլ ձգելու,
մինչեւ որ երեք կարգերն ալ աւարտին։ Հուսկ ուրեմն, այս ցան-
ցակերպ թելերուն ճիշտ մէջտեղիրէն և դէմ առ դէմ գացող իւ-
րաքանչիւր թելերուն երեք թելը միատեղ ասեղին վրայ առնե-
լով՝ օղակի կապ կ'ձեւացնենք, և այսպէս առանց թելը կտրնելու
կանցնինք մէկէն միւսին որով կ'ունենանք ցանցակերպ հիւսկ մը
(ի՞նչպէս կ'երեւայ 22/րդ օրինակը): Այս ամէնէն վերջը բոլոր գե-
րակարները քակելով թուղթը ներքեւէն կ'անջատենք և ահա
կ'ունենանք լաթերիզներու մէկնդմէջ ցանցակերպ ու թափան-
ցիկ ասեղնագործուած զարդօձիքին նախաձեւը։ Կատարելապէս
ըիկ ասեղնագործուած զարդօձիքին նախաձեւը։ Կատարելապէս

Թերեւս ծակոտիէն կարամէջ գանեակնըրով լուր է և
սի (ՏԵ՛Ս 224րդ օրինակի լեսակողմին բաց զգուած փսք նմայը):
Այս պարագային համարենք թէ դարձեալ երեք կարգք կարամէջ
նել կ'ուղենք. ուրեմն բաժանումներն այս անդամ ուղղակի թըլ-
թին վրայ կ'կատարենք ու ասղենկար կարամէջը կամ ժանեակը,
արդ կարգ թղթին վրայ կ'ղերակարենք (Թինչիս կ'երեւայ 224րդ
օրինակի փոքր մասին վրայ): Յետոյ օձիքին բաւարար կ'երապուը
օձածկենք ամէնուն վրայ (Այսինքն 224րդ օրինակին 0—Ֆ մասը
անել ժանեակներուն վրայ զոցել), պարապ մասերը կարգ կարգ-
ղերակարենք, ու նախորդին պէս՝ ժանեակներուն կէս լայնու-
թեանց հաւասարութենէն կերպառը կ'կտրենք, և եղբերը կ'շր-
տենք ներս մինչեւ որ ըրթները հաւասարին ժանեակներու եղբե-
ռուն: Այս եղբերը մեքենայով թափանց կարեր կ'ընենք կամ
նեղ զարդասեղներով կ'կցենք. և այլ ևս ներքեւի թուղթը կը
հանենք, ու ըջօնի ծիւ եղբերը կ'խծպենք:
Քառանկիւն ձեւով ալ չինել ուղուած տաեն (ՏԵ՛Ս 225րդ օր.)

կարամէջ ժանեակները դարձեալ թուղթին վրայ դերակարելու է . իսկ կերպառը նախապէս շեղ երիզներ կարելով ծածկելու է իրենց պատկանած անցքերուն վրայ՝ ծայրերը շեղ անկիւն ծալլելով (Խնչպէս 225րդ օրինակին բ եւ գ անկիւններուն շարքերը կ'sեսնուին) ու եղբերը շրջել և թափանցկարերով վերջացնելու է (Խնչպէս 225րդ օրինակը): Եթէ ուզուի, նախորդներուն պէս միակը տոր ծածկել ու կտրտելով ալ կ'ըլլայ:

Թերեւս դրասանքի ձեւով զարդարել ուզուի (Տե՛ս 226րդ օր.): Եւ թերեւս կերպաս ծածկուելիք տեղերը՝ նապապէս կարուած ծալեր շինուի: Ամէն պարագայի մէջ թղթէ տիպարը բոլորցի ձեւով պատրաստելու է, յետոյ քառակուսի կերպասի մը վրայ նախապէս առէջքին երկայնութեամբ շատ նեղ կարուած ծալեր ընել և լաւ մը արդուելու է: Ապա, փողեզրին շուրջը քա՛նի կարգ կարամէջ որ կ'պարունակէ՝ տիպարին ծածանող շուրթն ալ այնքան մասի բաժնելով՝ անոնց լայնութեամբ զուգահեռական գծեր քաշելու է, որով երեւան կուգայ թէ ի՞նչ լայնութեամբ՝ կարուած ծալեր կտրել պէտք են (Խնչպէս 226րդ օրինակին Ը—բ մասը եւ միւսները): Ուստի նոյն մեծութեամբ թուղթ մը կտրելով բերել շեղ դիրքով դնելու է կարուած ծալերուն վրայ և շուրջը կարաբաժիններ ձգելով ու ծայրերն անկիւնաւոր դրասանք՝ ներ ձեւացնելով՝ մի առ մի կտրելու է: Եթէ ուզուի ծալերն իրարու հակոտնեայ ալ կրնան ըլլալ (Խնչպէս 226րդ օրինակը), Յետոյ միացնելու է կարամէջներուն ու շուրջը զարդարելու է ասղենկար դրասանքով կամ ժանեակով (Այս կարգի զարդերը կարելու մանրադրասանքով եւս Գ. հատոր):

Կցորդելու և կարելու սոյն գլխաւոր ոկղբունքներն ըմբռնելէ ետք, այլ ևս դժուարութիւն չմնար անոր ո՛ւ և է դարձդարձի ձեւերով շինելը:

Զարդօծիքներուն ծածանող եղբերը մասամբ խոպոպաւոր ալ կրնան ըլլալ (Տե՛ս յաջորդ հրահանքը):

Պ Ա Ս Լ ։

Թլիփներ եկ «ԳԼՕՇ» ՊԱՍՏԱՌԱԿ

(Տե՛ս լթ. տախտակ 227են մինչեւ 234րդ օրինակները)
Հագուստին կերպառէն շինուած ուսնոցի պէս ծածանող լայն

օձիքները թլիփ կ'անուանուին (Տե՛ս 227րդ պատ.) , որոնք թէ՛ բուրչի և թէ՛ զարդօծիքներուն ձեւերով ալ կրնան ըլլալ . ինչ պէս նաև՝ իրարմէ տարբեր երկայնութեամբ միակի, կրկնակի, պատեակի (ինչպէս 227րդ պատ.) ու քառակի ալ կ'ըլլան . և նորաեռակի (ինչպէս 227րդ պատ.) ձեւութեան համեմատ խոպոպաւոր զիօտ (ինչպէս 227րդ պատ.) կամ ուսերուն ձեւովը յարդ հաւասար, որոնք նորաձեւութեան կարգ անցած ատեն՝ ամէն տեսակ հագուստներու վրայ ալ կրնայ կարգ անցած ատեն՝ ամէն տեսակ հագուստներու վրայ ալ կ'պատշաճի:

Թլիփները ըլլան պարզ թէ խոպոպաւոր, տիպարը ձեւագծելու սկզբունքը նախորդ դասի հրահանգին նմանն է, միայն՝ եթէ վրանոց հագուստներու պիտի կցուի, մոռնալու չէ կոնսմէջէն ալ վրանոց հագուստներու պիտի կցուի կոնսմէջէն ալ գելու:

5 կամ 7½ հազմէդի չափ ընդարձակութեան բաժին ձգելու:

Արդ, համարենք թէ բոլորի ձեւով և եռակի թլիփներ շինել կ'ուղենք, որոնց ամէնէն երկայնը՝ ըլլայ անութներէն 4—5 միարմէդ վարօք (Տե՛ս 223րդ օրինակին բ—գ—ե զիծը), ամէնէն հարմէդ վարօք (Տե՛ս 223րդ օրինակին բ—ե—ի—դ զիծը) և միարձը՝ ուսերուն հաւասարութեամբը որ է ե—ի—դ զիծը և միարձը՝ ուսերուն հիշու մէջտեղէն, այն է գ—զ—ջ ջինն ալ՝ երկու նախորդներուն հիշու մէջտեղէն, այն է ահագիծը (Տե՛ս 223րդ օր.): Այս երեք տարբեր երկայնութեան սահմաններն ալ միեւնոյն տիպարին վրայ գծելէ ետք (Տե՛ս այժմ մաններն ալ միեւնոյն տիպարին բացութեամբ կ'ուղենք 228րդ օր.), եթէ առաջակողմը խոտոր բացութեամբ նպատաշինել (Տե՛ս 227րդ պատ.) և ո'րպէս զի այն բացութիւնը նպատաշինել (Տե՛ս 227րդ պատ.): Եթէ առաջակողմը հաւասարութեամբն ըլլայ, կ'ենթադրենք թէ կաւոր տեղի մը հաւասարութեամբն ըլլայ, կ'ենթադրենք թէ կաւոր տեղի մը հաւասարութեամբն է ու ամէնէն երկայն թլիփին ծայրը հագուստն երկու սեղմօնով է ու ամէնէն երկայն թլիփին մէջտեղը կ'հաստատենք Ա. սեղմօնի ցցունին հետ կամ երկուքին մէջտեղը (Տե՛ս 227րդ պատ.). ուստի տիպարին և կէտէն նոյնչափ ներսօք (Տե՛ս 227րդ պատ.), ուստի տիպարին և կէտէն նշանակարեցները և կէտը նշանակելով (Տե՛ս 228րդ օր.), քանակոր կ'հաւասարեցները կէտը նշանակելով (Տե՛ս 228րդ օր.), գանձակոր կ'հաւասարեցները թլիփին առաջակողմ է կէտերուն ու շեղ գծով մը կ'ձշտենք թլիփին նախորդը և ման շեղ անջատութիւնը (Տե՛ս 227րդ օրինակ), ուր գ—ե, ե—ե ման շեղ անջատութիւնը կամ յաջորդ հաջորդը առաջակողման նախորդը (Տե՛ս 227րդ պատ.): Թերեւս հագուստին եւ կէտէն նոյնչափ ներսօք (Տե՛ս 227րդ պատ.) ուսուերով սուրանկիւն մասը: Թերեւս հագուստին եւ կէտէն մուր սուուերով սուրանկիւն (Խնչպէս 227րդ պատկերը), այն դէմ ալ անջատ ձեւացնել ուզուի (Խնչպէս 227րդ պատ.) գ կէտէն ներսօք դըատեն հօն ալ պէտք եղածին չափ քանակոր գ կէտէն ներսօք և նելով քաշելու է թլիփին պատկանող առաջակողման շեղ շրթունքը:

Թերեւս չուզուի որ եռակի թլիփներն ալ առաջակողման ըրթունքներու իրաւութեան հաւասար կրնան, այս պարագային իւրա-

Քանչիւրն ալ աստիճանաբար մէջ մէկ խոտոր գծերով կ'անջատենք. օրինակի համար միջինը Դ—ը գծով և ամէնէն կարճը Դ—ը (Տե՛ս 228րդ օրինակը):

Եթէ թլիփները խոպապւոր պիտի ըլլան, զանոնք դիւրին
եղանակով մը կազմելու համար, նախ փողեզրը 5 հաւասար մա-
սերու կ'բաժնենք, որով կ'ունենանք խ ծ, ծ' և կ կէտերը. նոյն
պէս ալ կ'բաժնենք վարի եղրն և հոն ալ կ'հաստատենք ի, ծ, դ
և ն կէտերը (Տե՛ս 228րդ օր.) . և քանակն այս կէտերուն հաւա-
սարեցնելով՝ մէյ մէկ գիծ կ'բաշենք, ինչպէս են իւ—ի. ծ—ծ,
ծ'—դ և ե—ն, որոնք փողեզրին հետ ճառագայթաձեւ շառաւիղ-
ներ կ'ձեւացնեն : Այժմ ձեւիչով սոյն գծերէն կ'կտրենք, որով
ամէնէն երկայն տիպարը կ'բաժնուի հինգ մասերու, որոնք են
Ա. Բ. Գ. Դ. Ե. (Լաւ դիտե 228րդ օր.) : Ապա ուրեմն, ասոնց
Ա. մասին Ը—բ գիծը որ կռնամէջի ուղղութիւնը կ'ներկայացնէ,
ասոր Ը կէտը կ'հաւասարեցնենք կերպարի ծալքին և վարի կոզմի
խոպոպի բաժինին համար՝ բ' կէտը 4—5 հարմէզի չափ բ կէտէն
հեռու կ'դնենք (Տե՛ս 229րդ օր.) : Եւ այսպէս տիպարին միս չորս
մասերն ալ կ'փոխագրենք կերպարին վրայ, իւրաքանչիւրին
փողեզրի անկիւններն իրարու կից, իսկ վարի կողմերը՝ 4—5ական
հարմէզ խոպոպի բաժիններուն համար անջատ, որով փողեզրին
բնական ձեւը (Տե՛ս 228րդ օրինակին Ը—խ—ծ ծ'—կ դիմք) կը
կծկուի (բաղդատէ 229րդ օրինակին նէս) և վարի եղրը՝ բացուած
հողմայարի մը ձեւը կ'առնէ : Յետոյ չուրջը, կրծեղրը և փողեզրը
կարաբաժիններ ձգելով կերպարը կ'կտրենք: Տիպարը 5 մասի
բաժնել ու վարի եղրն իրարմէ . անջատ դնելն այն ապահովու-
թիւնն ունի որ խոպոպի բաժինները ըստ կամոջնեւեր չեն առներ,
այսինքն տեղ մը խճողուած ու տեղ մը յարդ հուասար չեն կազ-
մուիր . և թերեւս յետակողմէն դէպի առաջակողմ խոպոպի բա-
ժիններն աստիճանաբար նուազ ձեւացնել ուղուի . օրինակի հա-
մար բ—բ' միջոցը 5, հ—հ 4, ծ—ծ 3, դ—դ 2 և ն—ն 1 հարմէզ :

Իսկ համահաւասար և ամէնէն շատ խոպապներ ձեւացնելու աստիճանն ալ այն է որ, տիպարի Ե. մասին է կէտը մինչեւ կերպասսի ծալքին հաւասարի, այն է Դ—է դիճը Բ—Ը դիճն դիբըն առնէ. և Ա. Բ. Գ. Դ. մասերուն Բ', Բ, Ճ, Շ և ն միջոցները հաւասար անջատութիւններով զետեղուին:

Եթէ հագուստը կրծօձիք ունի, հագապին դէմ շեղանկիւն ձեւ-
ւանցնելու է որպէս զի օճիքի ըլջուածքին արդելք ըլլլայ:

Մէջտեզի թլիփը ձեւելու համար, տիպարին վրայ սախապէս
գծուած ծ—մ—լ—ն—ս—ը դէէն կտրելով կ'կարճցնենք (Տե՛ս
228րդ օր.) ու դարձեալ Ա. Բ. Գ. Դ. և Ե. մասերը կ'փոխադրենք
կերպասին վրայ. բայց գիտնալ պէտք է թէ վրայի թլիփին խո-
պոպի բաժինը ներքեւինէն աւելի ըլլալու է, այնպէս որ ներ-
քեւինները չիծկուին: Հետեւապէս Ք—ծ, մ—մ, լ—լ, ն—ն և ս—ս
միջոցները դարձեալ 4—5ական հարմէդ անջատ կ'դնենք (Տե՛ս
230րդ օր.), միայն թէ այս անգամ Ե. մասին Դ—ը գիծը կերպա-
սին լոյնքէն դուրս կ'մնայ. Եթէ նորաձեւութիւնը կ'պահանջէ որ
չափազանց խաղող ձեւացնել ուղարի, կոնամէջը կարով ընելու է
(Տե՛ս 230րդ օրինակին Փ—Ք գիծը): Ճիշտ միեւնոյն գործողու-
թեամբ կ'ձեւենք նաև ամէնէն կարճ թլիփը (Տե՛ս 231րդ օրինակ)
որ է Ք—ի, ս—ս, չ—չ, պ—պ և ջ—ջ անջատութիւններովք:
Ընթացք է 223ըն օրինակին

Թլիփին նախնական տիպարը (ինչպես և ՀՀՄՐ օրենքությունը գումարու բաժնելու ալ կրնայ խոպանի բաշ-ք—գ—Ե զիծը) առանց մասերու բաժնելու ալ կրնայ խոպանի բաշ-քիններ ձգութիւ, Զ. գլխու Ե. դասի հրահանդին նման թեւին տիպարը գնդառեղով շարժելու եղանակն ի գործ դնելով, ասոր ալ իս, ծ. ծ' և կ կէտերը յաջորդաբար շարժելով, բայց վարժ-կ աշլուրջ ըլլալու է որ մի գուցէ աննշարելի սխալ մը գոր-ծուի,

Թլիփնելուն եզրերն ալ կերպ կերպ դրասաքառ ։
Եղանակը համար այս ձաւունքուն կրնան շինուիլ :

թաթիկներ ու ասկախ ծայրեր վրան և բա-
նոյնպէս ալ զարդօձիքները կրնան մէջ մէկ մաս խոպոպի բա-
ժիններ ունենալ նորաձեւութեան ու պատշաճութեան համեմատ :
Ամէն առթիւ գիտնալ պէտք է թէ կրկնակի և խոպոպաոր թը-
լիքներն ու զարդօձիքները գէր կամ ուսերը բարձր կազմերու
վրայ լաւ չերեւար :

«Գոյօշ» պատառաւակի ձեւելու կերպը. — Համարենք մէ թեւ-
րերանը բազկին կէս բալը ըստ թեամբը (Տե՛ս 232րդ օրինակին Ը—Ե
միջոցը նշանակուած ա կէտր) կամ անոր վարի մէկերրորդին չափ
խոսպուառոր պաստառակ մը լըջէլ կ'ուղենք (Տե՛ս 227րդ պատկե-
րին թեւքերանը): Աւրեմն, նախապէս թեւքերանը պէտք եղած

լայնութեամբ շինելէ ետք, (լաւ է որ արմակալն ու ծղակարն ալ կարուած ըլլան), կ'զնենք զայն տիպարցու թղթի մը վրայ՝ նախ կ'օրինակենք Ե—Ժ գիծը (Տես 232րդ օր.). յետոյ Ե կէտէն դէպի ծղակարին ուղղութեամբ և պատառակին բարձրութեան դէմ 2 հարմէդի չափ դրսօք՝ քանակով կը քաշենք Ե—ա գիծը, նոյնպէս ալ Ժ կէտէն դէպի արմակարին ուղղութեամբ՝ Ժ—Բ գիծը: Թեւը կ'վերցնենք և թղթին վրայ ա և Ք կէտէրը մեզմ կոր գծով մ'իրարու կ'միացնենք ու շուրջը կ'կտրենք (Տես' 232րդ օր. մուր ստուերով ձեւը): Ապա, Ժ—Ե գիծն երեք հաւասար մասերու բաժնելով կ'ունենանք զ և դ կէտէրը, նոյնպէս ալ կ'բաժնենք ա—Բ գիծը և կ'ունենանք Ե և զ կէտէրը. սոյն զ, զ և դ, Ե կէտէրը մէյմէկ ուղիղ գծերով իրարու կ'միացնենք ու ձեւիչով կ'կտրենք, որով պատառակը կ'բաժնուի Ա. Բ. և Գ. մասերու (Լաւ դիտէ 232րդ օրինակը): Առոնք կ'փոխադրենք ուրիշ տիպարցու թղթի մը վրայ՝ Ա. և Գ. մասերուն զ և դ կէտէրը կ'կցենք Բ. մասի միեւնոյն կէտէրուն (Տես' 233րդ օր.) իսկ վերի կողմը զ և Ե անկիւները Բ. մասի նոյն անկիւններէն 21¹/2ական հարմէդի չափ իրը խոպոպի բաժին անջատ կ'զնենք, ու ներքեւի թղթին վրայ կ'օրինակենք Ժ—Գ—Դ—Ե գիծը վայելուչ կորութիւնով մը, ինչպէս նաեւ ա—Ե—Ե—Գ—Գ—Բ գիծը. իսկ Ժ—Բ և Ե—ա գծերը միշտ իրենց գիրքովը՝ ու ձեւիչով կ'կտրենք: Վերջապէս այս տիպարը կ'փոխադրենք կերպասին վրայ ու շուրջը կ'օրինակենք (Տես' 234րդ օր.), որոնք են ա—Ե—Բ, Բ—Ժ, Ժ—Ր—Ե և Ե—ա գծերը: Ո՞րպէս զի պատառակին միացումը ենթաթեւին կողմն ըլլայ՝ տիպարին ճիշտ մէջտեղէն երկու մասի կ'բաժնենք որ է Ե—Ը գիծը և իւրաքանչիւրը կ'ըջենք գուրա, այն է աա, ԵԵ' և ԺԺ' իրարու կցելով, որով երկու գլուխները կ'կազմուին Ե—Ե' և Ե—Ը' գծերով, որմէ ետքը բոլոր շուրջը կարաբաժիններ ձգելով կերպասը կ'կտրենք (Լաւ դիտէ 234րդ օրինակը եւ բախտակ 232րդ նախաձեւին ու 233րդ երկրորդ ձեւին նիս, որոնի աստիճանաբար աղեղնաձեւ դիրքեր առած են, բնւբերանի կողմը միւս միւնոյն մեծութեամբ մնայով):

Եթէ արմակարին կողմը գեղ կամ չափի նման դրաստանքի ձեւեր տալ ուզուի, այն ատեն և -ա գիծը (Տե՛ս 233րդ օր.) կերպասի ծալքին դնելու է. իսկ եթէ չափը ծղակարին ուզութեամբը

Ճգել ուղուի՝ այն ատեն ալ Փ-ի դիմք կերպասի ծալքին ուղ-
ղելու է:

፩፻፭፻

ԵՐԿԱՅՑՆՔԻՆ ՊՈՍՏՈՒՄՆԵՐՈՎ ՊՊՊՉԱԿ ԶԵՒԱՅՆԸ
ԻՐԱՆԱԱԶԳԵՍՆԵՐ

(Տե՛ս Խ. Տայսակ 235էն մինչեւ 240րդ օրինակները)

Պղպջակաւոր սուկաններն ու իրանազգեստները ո՞չ միայն
անի հորիզոնական աստիճաններուն ուղղութեամբը կ'ըլլան,
յլ եւ ժամանակ առ ժամանակ կ'ընթեղին, կուրծքին, կողանջա-
խն, թիկան և կռնամէջին ուղղահայեաց դիրքերովն աէ կ'ըլլան
ե՞ս 235 եւ 238րդ օր.): Ասոնք ընդհանրապէս մինչեւ գօտե-
այր կ'ըլլան կամ առ առաւելն առաջակողմն ու յետակողմը
յմէկ փոքր ծայրերով: Ներքեւն աստառէ իրանազգեստ մը
ըլլայ կամ ո՞չ բնաւ խնդիր չէ, միայն շինելու գլխաւոր դժուա-
ռթիւնը՝ կերպասը ձեւելուն մէջ կ'կայանայ, որ պէտք է յետ-
ամասի տիպարին կրկին երկայնութիւնն ունենայ և այս ալ զա-
պան աստիճաններու վրայ բաժնուած. ուստի համարենք թէ
ախ յետամասը ձեւել կ'ուզենք, հետեւապէս զայն դիրքացնե-
աւ համար՝ Զուաֆ կամ Ֆիկառօ. թիկնազգեստ ձեւելու հրահան-
ին նման՝ յետամասին ու կողամասին տիպարներն իրարու կը
ցենք (Տե՛ս ԻԳ. Տախ. 91 եւ 92րդ օր.), և միակտոր յետամա-
սի մը նոր տիպար կ'կարենք, նոյնիսկ կռնամէջը՝ այն է ծոծրակն
և յետամակողման գօտեվայրն ուղիղ գծով իրարու միացած (Տե՛ս
39րդ օր.): Եթէ կրկին՝ յետամասի դիրքով քանի մը կարգ
ողպջակ ձեւացնել կ'ուզենք (Տե՛ս 238րդ օր.): ոյն պարզուկ
տիպարին թիկնածագը կէս ընելով կ'ունենանք ա կէտ, և այս
էտը մեղմ կոր գծով մը կ'միացնենք Խ կէտին (Տե՛ս 239րդ օր.):
արձեալ ա կէտէն դրեթէ ուղղահայեաց դիրքով դէպի կռնա-
էջ ուղիղ գիծ մը կ'քաշենք, որ ծոծրակէն քանի մը հարմէդ
արթօք ի կէտը կ'կազմուի: Ե—Լ Գիծն արդէն ունինք. այժմ ու-
թշ նոր գիծ մը կ'ուզենք, այն է զ—դ. ուստի քանակը կ'հաւա-
րեցնենք Հ կէտէն Ա/2 կամ 2 հարմէդի չափ վարօք և լ—Ե

գծին հետ զուգահեռական դիրքով կ'քաշենք յիշեալ գ—դ դիմք : Այս ամէն գծերն ալ ձեւիչով կ'կտրենք, որով ախտարը կ'բաժնուի 7 տարբեր մասերու :

• Արդ, եթէ կռնամէջի ուղղութեամբն ալ 2—3 կարգ պղպջակ
ձեւացնել կ'ուզենք, ու եթէ անոնք երեսի կողմէն բուծիններ
ձեւացնելով պիտի կազմուին, այն ատեն տիտարին 1.ին մասին
կռնամէջի ուղղութիւնը կ'հաւասերեցնենք եերապասին ծալքէն
1½—2 հարմէդի չափ ներսօք և ուլնոտորը՝ կերպասին գաղաթէն
մէկ կարաբաժին դէպի վար (Տե՛ս 240րդ օր.): Հիմա ալ 2. մա-
սին կռնամէջի ուղղութիւնը դարձեալ 1½—2 հարմէդի չափ կեր-
պասին ծալքէն ներսօք կ'դնենք, իսկ լայնութեան ասափճանը
5—6 հարմէդ վարօք (Լա՛ դիտէ 240րդ օր.): Կ'դնեեք 3. մասը՝
կռնամէջի ուղղութիւնը միշտ նախորդներուն պէս. իսկ լայնու-
թեան աստիճանը 8—10 հարմէդի չափ վարօք: Մինչդեռ 4. մա-
սը կ'դնենք 17—20 հարմէդ վարօք: 5. Մասը կ'դնենք 2. մասէն
2½—3 հարմէդի չափ զուգահեռաբար անջատ, իսկ ուղղութիւնը
2.ին կատարելապէս հուասար: Այսպէս ալ 6. և 7. մասերը 3. և
4.ին դիմաց (Խնչպէս կ'երեւան 240րդ օրինակին վրայ՝ բաց զոյն
սուլերով): Այժմ կարգը կուգայ կերպասը կարելուն. հետիւապէս
կռնածագին կարաբաժինը ձգելով կ'կտրենք, իսկ թիկնածագը՝
ուլնատորէն մինչեւ ուսանկիւն որ երկարած է, ուրոյն վէտկոր
գծով մը կ'կտրենք. ուսանկեան կէտէն մինչեւ անթմէջ (Հ կէտ)
ընդարձակ թիկնաւարա մը կազմելով. իսկ կողանջատը՝ Հ կէտէն
մինչեւ Զ կէտ կարաբաժիններն ալ նկատողութեան առնելով ու
մեղմ գծով մը կ'կտրենք, առանց հաշիւի առնելու 7. մասի դ'
անկիւնին խուսափող դիրքը. գօտեվայրէն ալ կարաբաժին մը
պէտք է ձգել:

Ահա այժմ ունեցանք մօտառապէս տիպարին կրկին երկայնութեամբը կերպաս, որ է թիկնածագի, թիկնաւարտի և կողանջատի բարձրութեանց հաւասար ընդարձակութեամբ, որոնք յետոյ կծկուելով պիտի վերածուին բուն տիպարին մեծութեան:

Գալով առաջամասին, բնականաբար ասոր ալ կերպասը պէտք է տիպարին կրկին երկայնութիւնն ունենայ. ուստի նախ կարծ— իրանազգեստի պարզ տիպարին վրայ փոխանակ սեղմօններ ձեւագծելու, սղեմոնի խորութեան կէսը կ'դնենք Բ կէտէն ներա

ու կ'նշանակենք Բ' կէտը և միւս կէսն ալ ժ' կէտէն ներս ժ' կէտը (Տե՛ս 236րդ օր.) . յետոյ Զ և Բ' կէտերը վէտկոր գծով մ'ի-
րաբու կ'միացնենք, նոյնպէս ալ անթմէջը ժ' կէտին, իբր թէ
սեղմօններն այս երկու տեղերէն չփնել ուզած ըլլալով՝ անոնց
մեծութիւնները կ'չնչենք (Տե՛ս 236րդ օրինակին ստուերաւոր ձեւը) :
Եւ Ա. սեղմօնը մինչեւ ուսածադին կէսը շարունակուած եղանա-
կին նման կ'քաշենք ա—բ մեղմ կոր գիծը . յետոյ կ'քաշենք ե—դ
գիծը, որ փողեղը կէսէն ուղղահայեցաբար կ'երթայ դէպի
երբուծ տիգուսոյէն 1—2 հարմէդի չափ վարօք . է'—է. գիծն
արդէն ունինք. ուստի անթմէջէն 1½—2 հարմէդի չափ վարօք
զ կէտը կ'նշանակենք և ուղիղ գծով մը Զ կէտին հւառ կ'միացնենք
(Տե՛ս այս ամենը 236րդ օրինակին վրայ) : Այս բոլոր գծերը ձեւի-
չով կ'կարենք, որով առաջամասին ախալարը կ'բաժնուի 8 տար-
բեր մասերու :

կերպասը ձեւելու համար, եթէ հագուստը քովէն պիտի
կոճկուի. տիպարի 2. մասին կրծեղը կհաւասարեցնենք կերպա-
սի ծալքէն՝ այն է ա—բ գծէն 2 հարմէդի չափ զուգահեռարար
հեռու (ՏԵՇ 237րդ օրինակը), ասոր վրայի կողմը կ'դնենք 1.ին
մասը՝ 5—6 հարմէդ զուգահեռարար վերօք. 3. մասը կ'դնենք
2.էն 8—10 հարմէդի չափ վարօք. ու 4. մասը 17—20 հարմէդ
վարօք: 5. Մասը 2½—3 հարմէդի չափ 1.ին մասէն անջատ. 6.ը
2.ին դիմաց. 7.ը 3.ին և 8.ը 4.ին դիմաց. այնպէս որ 1. 2.
3. և 4. մասերուն նախնական ա—բ գծով բաժնուած եղբերը
հաւասար ուղղութիւն մունենան, նոյնպէս ալ 5. 6. 7. և 8.
մասերը թէ՛ նախորդներուն ճիշտ դիմացը գտնուին և թէ հորի-
զոնական անջատութիւնը զուգահեռական գնացք մունենան (Լաւ
դիտէ 237րդ օրինակին վրայ 8 մասերուն ալ սացած դիրեկտը).
որով կերպասը մօտաւորապէս տիպարին կրկին երկայնութիւնը
կ'ունենայ և համեմատաբար բաժնուած կ'ըլլայ փողեղբին, լանջ-
քին ու կողանջատին հաւասարութեանց դիմաց: Շուրջը կարա-
բաժնեներ ձգելով կերպասը կ'կտրենք, որ ընդարձակ փողեղբը մը
կ'կազմուի. տիգուսոգէն մինչեւ անթմէջ՝ ահագին երբուծով
անութ մը, առանձ ուշադրութեան առնելու 6. մասին դ անկիւ-
նը որ խոտորնակի դուրս կը մնայ. նոյնպէս ալ 8. մասին գ ան-
կիւնը: Եթէ կրծեղը՝ մինչեւ առաջակողման գօտեվայր կալչուն
կիւնը: Եթէ կրծեղը՝ մինչեւ առաջակողման գօտեվայր

ձեւով պիտի ըլլայ, Զ՝ կէտէն մինչեւ 4. մասին վարի կողմը 3 հարմէդի չափ զուգահեռաբար կ'կտըենք ու սեղմօնի պէս կարելէ ետք պղպջակիը կ'ձեւացնենք. իսկ եթէ անկունով պիտի ըլլայ՝ ա—բ ծալքն անփոփոխ կ'պահենք (Տե՛ս 237րդ օրինակին վրայ՝ այս երկուժին ալ ձեւերը սարբեր սուլերներով): Իսկ եթէ կրծեղ-ըն պիտի կոճկուի, առքերանի (և թերեւս ձախ կողմէն զերել-եակի կամ երկու եզրերը դէմ առ դէմ գլուխ ձեւացնելու) բաժին ալ ձգելու է:

Եթէ կռնամէջն ու կրծեղը կարգ կարգ պղպջակ ձեւացնել չուզուին՝ տիպարին մասերն այն տեղերէն անջատ դնելու պէտք չկայ: Իսկ Եթէ կրկին—յետսամասի ձեւեր տալ չուզուի: այն ատեն ալ յետսամասին ա—և և առաջամասին ա—բ գիծը (Տե՛ս 236 և 239րդ օրինակները) աւելորդ են, և այս պարագային, յետսամասը կ'բաժնուի 4 տարբեր մասերու՝ ինչպէս են 1.ինը 2.ը և 5.ը մէկ ամբողջ, 3.ը և 6.ը մէկ և 4. և 7.ըն ալ մէկ: Ինչպէս որ առաջամասն ալ կ'վերածուի 4 մասերու: 1.ինը և 5.ը մէկ ամբողջ, 2.ը և 6.ը մէկ, 3.ը և 7.ը մէկ և 4.ը և 8.ը մէկ:

Եթէ ասոր մէջ աստառէ իրանազգեստ պիտի դրուի, անոր մասերը պէտք է կտրուին սովորականին պէս, առաջամտսն ալ նոյն իսկ ընդարձակ սեղմօնով. և վրայի կերպասին պղպջակ ձեւանալիք տեղերէն զատ. թիկնածագը. թիկնաւարտը, կողանջատը, փողեզրին վերի կէսը, երբուժը՝ մինչեւ անութին մօտ և ասոր ալ կողանջատը ոլորակարով կծկելու է՝ մինչեւ որ այս ամէնուն արտակարգ երկայնութիւնները հաւասարին աստառի նոյն տեղերուն մեծութեան (Խ'նշպէս կ'երեւան 235 եւ 238րդ օրինակներուն վրայ), և անոնց եղբերուն հետ մանր մանր գերակարելու է: Իսկ եթէ աստառ չկայ, բոլոր կծկուելիք տեղերը տիպարին հետ չափելով հաւասարեցնելու է. և որպէս զի հագնուած ատեն անոնց կարին թելերը չփրթին՝ լաւ կ'ըլլայ որ $\frac{1}{2}$ հարմէդ լայնութեամբ նեղ երիգներու վրայ առնուին:

Այս ձեւերը շատ լաւ կ'վայելեն նիհար և իրանը երկայն
կազմերու։

P U B L I C

ԿՈՒՐԴԻ ՍԵՂՄՈՆՆԵՐԸ ԴՀՊԻ ՈՒՍՏՆ ԶԵՒԱՑՆԵԼՈՒ ԿԵՐՊԸ

(ՏԵ՛Ս Խ. ՏԱԿՈՒՏԱԿԻ 241 Եւ 242ՐԴ ՕՐԻՆԱԿՑԵՐԸ)

Միշտ ըմբռնել պէտք է թէ «Նորաձեւութիւն» ըստ ՀՀ լ տարորինակութիւն ըսել է, և այն ատեն չենք զարմանար որ հարությարաւոր տարուան ընկալեալ կուրծքի սեղմօններն օր մ'ալ կ'դառնան հակոտնեայ, այսինքն փոխանակ գօտեվայրէն դէպի կուրծքը բարձրանալու՝ ուստածագէն դէպի կուրծքը կ'ինընեն, ինչպէս որ աս' մէկ երկու տարուան մէջ տեսնուեցան կարճ «աղօէրօններու վրայ. որովհետեւ արդէն անկարելի է որ առանձ կուրծքի սեղմօններուն՝ կարենանք իրանազգեստին երկայնութիւնը դէպի քաղրթին վրայ շարունակել:

Արդ, կարձ—իրանազգեստի տիպարին սեղմօնները սովորական եղանակին պէս ձեւագծելէ ետք, ուսածագը կ'բաժնենք երեք հաւասար մասերու՝ որով երկու կէտ յառաջ կուգայ, և սեղմօններուն ցցունները կ'միացնենք այն տեղի երկու կէտերուն (Խնչպէս Փ. տախտակի 35րդ օրինակին Ա. սեղմօնը շարունակուած է դէպի ուսածագ): Յետոյ տիպարն այս գծերէն կտրուելով կը բաժնուին երեք տարբեր մասերու, ինչպէս են Ա. Բ. և Գ. (Տե՛ս 242րդ օրինակը):

Այժմ ասոնք կ'փոխադրենք կերպասին վրայ գտնեվայլը առ կիւնները և ցցուններուն չ և Զ կէտերն իրարու կ'կցենք, որով վերի կողմի ա, բ և գ, դ անկիւններն իրարմէ կ'անջատուին ու յակոտնեայ սեղմօններ կ'ձեւացնեն (Տե՛ս 242ը օրինակին մութ սուլեռով բացուրիւնները). տիպարին Ա. Բ. և Գ. մասերուն ստացած այս դիրքերուն մէջ՝ փողեզրէն, անութէն, կողանջատէն և ցած այս դիրքերուն մէջ՝ փողեզրէն, անութէն, կողանջատէն և գոտեվայրէն կարաբաժիններ ձգելով կ'կարենք. իսկ ընդարձակուած ուսածագին Խ և Ծ անկիւնները աղեղնաձեւ կարաբաժինով մը կ'կտրենք: Կրծեզրը պահանջուած ձեւին համեմատ կարաբաժին, վերելեակի բաժին կամ անկունով (Տե՛ս 242ը օրինակին առ ուշակողմի տարբեր սուլեռով մասը) ու քովէն կոճկուելու համար ալ Դ—Բ' գծով կ'կարենք: Թերեւս հագագը բաց շինել ուզուի, վրան կերպ կերպ օձիքներ կամ մակադրութիւններով զարդարուի ու

Ներքեւը բաձկոնակ մը ցուցնել (ի՞նչպէս կ'երեւայ 24րդ օր. վրայ):

Ուսին սեղմօնները կարելը մասնաւոր խնամք կ'պահանջէ .
օրինակի համար թերեւս երեք սեղմօն ձեւացնել ուզուի . այն ա-
տեն Խ—Ծ գիծը կ'չափենք, տիպարի ուսածագին երկայնութիւնը՝
այն է 14 հարմէդը նուազեցնելով՝ մնացածը որ սեղմօններու
բաժինն է, այն ալ կ'բաժնենք 2½ մասերու . յետոյ տիպարին
ուսածագն ալ 4 հաւասար մասերու կ'բաժնենք . ապա՝ Ծ կէտէն
դէպի Խ կէտ՝ ուսածագին $\frac{1}{4}$ ը, ասոր դիմաց՝ սեղմօնի մէկ մասը,
դարձեալ ուսածագին $\frac{1}{4}$ ը, դարձեալ սեղմօնի բաժինին մէկ մասը,
դարձեալ ուսածագին $\frac{1}{4}$ ը և ամէնէն ետք՝ սեղմօններու բաժինին
կէս մասը, որ մինչեւ Խ կէտ ալ կ'մնայ ուսածագին $\frac{1}{4}$ ը . ո-
րոնցմով կ'կազմուի երեք սեղմօն՝ չորս հաւասար բաժանումներու
մէջ (Տե՛ս 24րդ օրինակ) : Սեղմօններուն առաջինը շարունակելու
է մինչեւ կրծամէջի հաւասարութիւնը, երկրորդը մինչեւ անութի
բարձրութիւն և երրորդը երրուծի և անութի միջոցին հաւասա-
րութիւնը (ինչպէս կ'երեւայ 24րդ օրինակին վրայ) : Այս սեղմօն-
ներուն երեսի կողմը մեքենայով թափանց կարել ալ կրնայ ըլլալ .
իբր թէ կարուած ծալեր ըլլային :

TEN D.

ՄԱՍՆԻԿԻ ՊՐԵՍՈՒՐՆԵՐԸ «ՊՈԵՐԾ»ՆԵՐ

ԿԱՐ ՀԱՆԴԻՍԱԿԱՆ ԻՐԱՆԱԶԳԻԵԱՏՆԵՐ

(ՏԵ՛Ս Խ. ՏԱԿԻՏԱԿ 243 Եւ 244րդ օՐԻՆԱԿԱՆԵՐԸ)

Նորաձեւութիւնն իր խեղկատակ կողմերն ալ ունի: Օրինակի համար գերձակութեան մէջ շատ գոէհիկ ու անճարակ կարուածք կ'նկատուի առաջամասին ուսածագը փոթփոթուած ըլլալը (Տե՛ս 243րդ օրինակ), կամ սեղմօնին մէկ եղբը միւսէն կծկուած տեսնուիլը. բայց այժմ ասոնք ալ նորաձեւութիւն կ'ըլլան եղեր: Թերեւս անճարակ գործի մը հետեւանքէն յառաջ եկած ըլլայ. և սա՛կայն նորաձեւութիւն է:

Այս կամովին անձարակութիւնները ցուցադրելու համար, առաջամասին կերպասը կտրուած ատեն տիպարին բոլոր շուրջը գծերէ ետք, ունասորին ու հազարին դէմ Զական հարմէդ դրաօք

մէյ մէկի կէտ նշանակելով՝ տիպարին Դ և Ծ կէտերը կ'հաւասարեցնենք այս կէտերուն ու նոր փողեզը մը կ'գծենք և նոր հադադն ալ ուղիղ գծով մը կ'միացնենք Զ կէտին. Յ հարմէդ ալ Խ կէտէն դէպի դուրս նշանակելով՝ մինչեւ Ռ կէտ նոր երբուծ մը կ'գծենք (Տե՛ս 244րդ օր.) որոնցմով ուսածագը Ծ հարմէդի չափ կ'երկարի, և զայն բարակ պաստումով մը կ'հաւասարեցնենք ու կ'կցենք ներքեւի աստափին, թերեւս հագուստը մէկ սեղմօնով եղած ըլլայ, ուստի Հ—Ղ՝ դիմը 2—3 հարմէդի չափ՝ խոտորնակի կ'երկարենք, ու ծայրայեզ կորութիւնով մը կ'միացնենք Ժ կէտին, որ յետոյ սոյն Հ—Ղ՝ դիմը Հ—Ղ ին հետ կարուծ ատեն մեղմ պաստում մը կ'ունենանք (ինչպէս կ'Երեւայ 243րդ օրինակին սեղմօնը): Թերեւս կրծամէջէն մինչեւ առաջակողման գօտեվայր ալ միեւնոյն տեսակը ձեւացնել ուղուի, հետեւապէս Զ—Բ դիմն արտահակ կորութիւնով մը Յ—Գ հարմէդի չափ կ'երկարենք և կ'ունենանք Բ՝ կէտը, որ խոտորնակի կ'միանայ Ղ կէտին (Տե՛ս այս ամենը 244րդ օրինակին վեայ): Թերեւս կրծեզրէն դէպի երբուծին ուղղութեամբն ու մինչեւ կես լանջքի լայնութիւն՝ կերպասը փեռեկի պէս կտրուի, և վարի մասէն փոթփոթելու բաժին ձգել ուղուի, իրերեւ կէս գահվարի երեւոյթով, եւայլն, եւայլն:

፩፻፭ ዓ.ም.

ԿՐԾԱՄՔԵՐԻՆ ԴԻՄ ԽՈՐՃԽՈՐՃԱՆ ԶԵՒՍՅԱՌ ԻՐԱՆԱՉԻԵՍՏՆԵՐ
(Տե՛ս 245, 246 և 247րդ օրինակները)

Երբեմն բաճկոնաւոր իրանազգեստներուն առաջամասները դէպի կրծամկեցին դէմ խորշխորշաններ կ'ձեւացնեն (Տե՛ս 245 և 246րդ օրինակները), որ շատ կ'պատշաճի կուրծքը տափարակ կամ փոքր սահինքներով կազմերու համար:

Ասոնց առաջամասը թերատրական ձեւ մ'ունի, որովհանու
գօտեվայրին հետ չկցուիր. և կ'ընուի կարծ—իրանազգեստի մը
տիպարովը: Արդ, համարենք թէ կրծամէջին դէմ 3—4 խորշխոր-
շան ձեւացնել կ'ուղենք, որ Զ կէտէն 3—4 հարմէդ վարօք փոքր
միջացմը պիտի դրաւէ, ուրեմն այն տեղ կ'նշանակենք Զ՝ կէտը
(Տե՛ս 247րդ օր.): և Ծ—Զ և Զ—Ժ կէտը մէյմէկ ուղիղ դժերով

իրարու կ'միացնենք, որ խորշխորշանը ձեւացնելէ ետք՝ առաջա-
մասին կազմուելիք յատակաձեւը կ'ներկայացնէ : Այժմ մեղրական
երիզն իրբեւ կարկին ծառայեցնելով ու ժ կէտը կեդրոն, ԶՇ կէ-
տէն դէպի գօտեվայր աղեղ մը կ'դժենք որ է ք կէտը . նոյնակէս
ալ Ծ կէտն իրբեւ կեդրոն՝ Զ կէտէն աղեղ մը կ'բարձրացնենք
դէպի վեր որ է ա կէտը . այնակէս որ՝ Եթէ 4 հատ խորշխորշան
ձեւացնել կ'ուղենք ու ասոնց ամէն մէկը Յական հարմէդ խորո-
թիւն ունենան, այն ատեն կ'ըլլայ 12 հարմէդ և նոյնչափ ալ
անոնց ներքեւի կրկնութիւնը, որով ընդամէնը 24 հարմէդ կըր-
ծեզրի երկայնութիւն մը տալու ենք որ կարենանք 4 հատ խորշ-
խորշան կազմել . հետեւապէս սոյն 24 հարմէդին կէսը կրծամէջէն
դէպի գօտեվայր և կէսը դէպի վեր գնելով կ'ձշտենք ա և ք կէ-
տերն, ու գոգաւոր մեղմ կոր գծով մ'իրարու կ'միացնենք . և
խորշխորշանները կ'կազմենք կրծամէջին վրայ ու կրծեզրին հետ
հաւասար (Տե՛ս 245րդ օրինակի Զ կէտին դիմ եղած երեւոյթը),
որ անտարակոյս նախապէս ընդարձակ սեղմօնով իրանազգեստի
մը աստառին վրայ զարդարուած կ'ըլլայ զանազան գոյննէ մե-
տաքսեղէնով (Տե՛ս 246րդ օրինակ), կամ ժանեակահիւս ցանցա-
կերպ նիւթերով (Խնչակս 245րդ օրինակ):

թերեւս փոխանակ խորչխորշան ձեւացնելու ընդակաղամբի
(շուժիոն) կոկոն մը ձեւացնել ուզուի՝ ճիշտ կրծամէջին դէմ (Տե՛ս
24Երկ օր. գ—դ մասը). այս պարագային ա—բ գծէն 4—5 հար-
մէդ զուգահեռական լայնութեամբ կ'քաշենք գ—դ գիծը, որ
կոկոնին շուրթը կը կազմէ (Տե՛ս 247 օր.), և 5—6 հարմէդ դրսէն
ալ կ'քաշենք ե—ե' գիծը որ իրեւ առբերան՝ դէպի ներս շրջելու
կ'ծառայէ: Արդ Ծ—ա և բ—ժ գծերուն կարարաժինները ներս
շրջել ու գաղտնի ծալկարով մը գճգճուքները ամփոփելէ ետք,
գ—դ տրամագծէն դուրսը գտնուած առբերանցու մասը դէ-
պի ներս շրջելով՝ անգամ մ'ալ ա—բ գծէն կ'կոտրենք և այս
վերջին գծէն ոլորակար մ'ընելով կ'կծկենք, մինչեւ որ կոկոնի
արմատին լայնութիւնը բաւական համարուի. ապա՝ կ'տարածենք
դէպի դուրս, նոյն ոլորակարին ուզզութեան երկու ծայրերը մէյ-
մէկ փոքրիկ ճարմանդներ կ'կարենք, և երբ երկու առաջա-
մասներն իրարու դէմ ճարմանդներով փակուին, պիտի ունենանք
կրծամէջին դէմ փոքրիկ ընդակաղամբ մը:

Թերեւս ա և բ կէտերը 20—25 հարմէդ երկայնութեան մը
վրայ մէյմէկի մեղմ կոր գծերով մէկմէկու միանան ու կրծամէջին
դէմ իրարու ագուցուելով ծայրերը դէպի գօտեվայր ծածանին
իրբեւ փողկապ: Թերեւս աջ կողմը միայն երկայն շինուի, ծայրը
խորշխորշանով կամ կծկումով գայ հանդչի դէպի ի ձախ սահնքին
վրայ, եւայլն, եւայլն:

• १८७ •

ՀԱՆԴԻՍԱԿԱՆ ԻՐԱՆԱԶԳԵՍՏԻ ԿԱՄ «ՊՈԼԵՐՈ»Ի ԿՊՉՈՒՆ
ԹԵԽԱՎԱԿՈՎ ԳԱՀՎՐԱՆԵՐ

(Տե՛ս ԽՍՀ. Տախոսակ 248ին միջնեւ 252րդ օրինակներն ու պատկերները)

Քանի մը տարի է որ գահվրաներն ամէն տեսակ հագուստի վրայ ալ դրուեցան և ընդհանրապէս արտաքին զարդարանքներու պատշաճող իրանազգեստներուն ու «պօլէրօ»ներուն համար՝ կայչուն թեւակներ ալ շարունակուեցան, որոնք գահվրային հետ միակտոր կ'յօրինուին (Տե՛ս 251 և 252րդ պատկերներ):



Այս գահվրանելուն ուսը կարով կ'ըլլայ կամ թեւակը ոսղ-
մօնով. զանոնք չափական դրութեամբ յառաջ բերելու համար
նախ բացատրենք առաջին կերպը: Արդ, առաջամասին տիպարը
կ'դնենք տիպարցու թուղթի մը վրայ: Որո՞վկ'հետեւ տիգին վրայ
իջնող այս տեսակ զարդերուն համար ուսին կարը ճիշտ ուսի
մակերեսին հետ գտնուելու է, ուստի Ծ կէտէն 1 և Խ կէտէն
2 հարմէղ վարօք ուսին մակերեսը ներկայացնող Ծ'-Խ'-գ գիծը
կ'քաշենք: Յետոյ գահվրայի լանջքին դէմ արուելիք ձեւը կը
գծագրենք, ուստի համարենք թէ մէջտեղը սրածայր և բարեը
կիսաբոլորչի դրսանքով կ'ուզենք պատրաստել (ի՞նչպէս 254րդ
պատ.): Ուրեմն Զ և Է կէտերը շեղ լարով մ'իրարու կ'միացնենք
(Տե՛ս 248րդ օր.) և երեք հաւասար մասերու բաժնելով կ'նշանա-
կենք ա և Բ կէտերը, յետոյ Զ—ա գիծը կ'պահենք իր գիրքին
մէջ. իսկ ա կէտէն մինչեւ Ը կէտ կիսաբոլորչի աղեղ մը կ'քա-
շենք: Անութին վրայ կ'նշանակենք թեւին ծղակարը կցելու կէտը
որ է Ո, և պարզ թեւի տիպարին Զ կէտը կ'հաւասարեցնենք
սոյն Ռ կէտին ինչպէս նաև ցցունի գմբեթարդ գիծն ուր որ

հանդպի Խ' կէտին՝ թեւին տիպարը ստացած դիրքովը կ'փռենք (Տե՛ս 248րդ օր)։ Թեւին Ը—Ծ գիծը կէս ընելով՝ մէջտեղը կ'նշանակենք Ը' կէտը։ բանակը կ'հաւասարեցնենք Ը' և Խ' կէտերուն ու խոտոր գիծ մը կ'քաշենք։ և թեւակին համար փափաքուած երկայնութիւնը կ'նշանակենք Խ' կէտէն Խ'—Ը' գծին վրայ՝ որ մօտաւորապէս 10—12 հարմէդը բաւական կ'համարուի ու կ'հաստատուի դ կէտը։ այժմ Ը և դ կէտերը քառորդ շրջանակի մը ձեւով իրարու կ'միացնենք, և ամէնէն ետքն ալ Խ'—Ծ' ուսածագը կ'ներկայացնենք, այնպէս որ Խ' կէտը գմբեթարդ կորութիւն մը կ'ստանայ (Տե՛ս այս ամենը 248րդ օրինակին մուր ստուերով ձեւը)։ Կ'մասյ միայն սոյն գահվրային ձեւը փշանուակով օրինակել ներքեւի թղթին վրայ և չուրջը կտրել (Տե՛ս 249րդ օրինակ)։

Հիմա ալ յետսամասին տիպարը կ'դնենք տիպարցու թղթի մը վրայ, ժ կէտէն 1 և ի կէտէն 2 հարմէդ վերօք կ'քաշենք ուսին մակերեսը ներկայացնող Ժ—Ի—զ գիծը (Տե՛ս 250րդ օր.)։ Խ'— զ գծին վրայ կ'նշանակենք թեւակին երկայնութիւնը, որով կ'հաստատուի զ կէտը։ զ և լ կէտերը քառորդ շրջանակածեւ գծով մ'իրարու կ'միացնենք։ Յետոյ առաջակողմի գահվրային զ—դ միջոցը (Տե՛ս 248րդ օր), ուր զ եւ դ կիսերը կէտ կէտ գծով մը կ'երեւան) չտփելով անոր կէս մէծութիւնը կ'դնենք յետսակողմի զ կէտէն քառորդ շրջանակածեւ զ—լ գծին վրայ, որով կ'հաստատուի դ կէտը, թիկնածագին վէտկոր ձեւը Ժ—Ի' լարին վրայ օրինակելէ վերջ, Խ' կէտը փոքր կորութիւնովը կ'դառցնենք ուղղակի դ կէտը (Տե՛ս 250րդ օրինակ)։

Կ'մասյ այժմ թիկան դէմ գահվրային ձեւը գծելը, որ եթէ առաջամասին նմանցնել կ'ուղուի, նախ Ե—Լ գիծը կ'բաժնենք 3 հաւասար մասերու, որով կ'ունենանք ա և բ կէտերը, յետոյ կ'առնենք Գ—ա շեղ գիծը և ա—լ աղեղը, իսկ եթէ կ'ուղենք որ թիկան հաւասարութիւնը երեք դրասանք ներկայացուի (Խ'նշպէս 252րդ պատկեր)։ Գ—Ե գծին կէսէն մինչեւ ա կէտ դրասանք մը կ'գծենք (Տե՛ս 250րդ օրինակին մուր ստուերով ձեւը)։ ու գահվրային բոլոր չուրջը փշանուակով կ'օրինակենք ներքեւի թուղթին վրայ։ Ահա՝ այս եղանակով միայն կարելի է ուսին հետ միակտոր ու կազուն թեւակ ձեւացնելը։

Թերեւս ուսն ալ միակտոր ուղղուի, այն ատեն ալ նախորդ



գլխու Զ . դասի հրահանգին համեմատ գահվրան ձեւագծելէ ետք
թեւին ախպարը գարձեալ կցելու է Ռ և Խ կէտերուն (Տե՛ս 1.9.
տախ . 17Յրդ օր .) և ներկայ հրահանգին համեմատ ճշտելու է
առաջակողմին ու յետսակողմին թեւակներուն դ կէտերը (Տե՛ս 24Յրդ
օր .) և զանոնք միացնելու է Խ կէտին , որ ընդարձակ սեղմօնի մը
ձեւը կ'առնէ :

Թերեւս առանձ գահվրայ շինուելու հագուստին երբուծէն ու թիկնաւարտէն միակտոր կպչուն թեակ ձևացնել ուզուի (Ի՞նչպէս յետագայ դասով կ'sեսնուի), այն ատեն գահվրաները ներկայացնող գծերը զանց կ'առնենք:

Այս ձեւով գահվրաներն այն երեւոյթն ունին, որ կարծես
թէ դրասանքներով յօրինուած կպչուն զտրդօձիք մը կամ շար-
ժական ուսնոց մը դրուած է հագուստին վրայ։ Սոյն ձևը՝ ուսե-
րը բարձր կազմելու համար շատ վայելուչ կ'ըլլայ։

፩ በ የ ተ ቀ.

880իւն 0ի լրիվկայուր թեհակ եի սրածաթը ԶԳԵՍՏՆԵՐ

(ՏԵ՛Ս ԽԱՆ. ՏՎԱՅԻՆ 253, 254 Եւ 255րդ օՐԻՆԱԿՈՒՐԸ)

Ո՞վ գիտէ ո՞ր իշխանուհին ուսերը բնականէն շատ ցած եղած
է՝ անոր դերձակը մտադրեր է քրմական ձեւով ցցուած միակտոր
թեւակներ բուցնել հագուստին ուսերէն (Տե՛ս 255րդ պատ.)։ Եւ
ահա ցայտուն նորածեւութիւն մը, ա՛լ մարդ ինչ կազմի վրայ ալ
ըլլայ՝ նկատողութեան շառներ զայն՝ բաւական է որ նորածեւուա-
թեան հետեւած է. հե՛տեւինք ուրեմն։

Այսքան կարճ ծայրը՝ նոյն իսկ հագուստին յետսակողմը միակտոր եղած ատեն ալ կրնայ շինուիլ, կողամասին տիպարը յետսամասին կցելով (Տե՛ս 254րդ օրինակ), ու Կ—Լ անջատութիւնն ամփոփելով։ Միայն թէ Զ—Բ' գիծը քիչ մը կծկուած պիտի ըլլայ. ուստի արդուկով բնդձգտելու է։

Սնակուշտէն սկսող սրածայր իրանազգեստներն անպատճութիւն մ'ունին, որ հագնուած ատեն, ծղիներուն իւրաքանչիւր շարժումին հետ քովերը դէպի վեր խսյա կռւտան. նոյն իսկ մէջէն դրուած ամէնէն պիրկ գօտեպինդն ալ կարող չէ այս խուսափումը զապելու. Ուստի հագուստին երկու սնակուշտներուն վրայ մէյմէկ հակոնտնեայ ճարմանդ կարելու է և քդանցքի գօտիին նոյն հաւասարութեանը վրայ ալ մէյմէկ լամբակ շինելու է, որպէս զի հագնուած ատեն քովերն ալ անոնց կառջելով՝ միշտ ողորի մնան:

ՊԱՍ ԺԱ.

ՅՈՒՆԱԿԱՆ ԹԵՂԻ ԿԵՂԾՆՄԱՆԸ

(Տե՛ս ԽՍՀ. ավտոմակ 255 պատկեր և 256րդ օրինակը)

Յունական թեւ ըսելով պէտք է հասկնալ լայն թեղանիքով
թեւ (զոր պիտի ներկայացնենի աւելի եսթերը), որ ուրոյն ոճ մ'է և
զանազան կեզծնամանութիւններով ալ կ'պատրաստուի. օրինակի
համար թեւբերանը փոխանակ ամբողջապէս արձակ ձգուելու (Տե՛ս
255րդ պատ.). դաստակէն մինչեւ բազկին կէս բարձրութիւնը՝
կազուն պաստառակի պէս նեղ շինել և ապա ծածանող թեղանիք
մը ձեւացնել, իբր թէ ձարոն և Հնդիկ Բակոտեան քրմերու թե-
զանիքն յիշեցնել ուզուի: Որ տակաւին 3—4 տարի առաջ ծայ-
րայեղաբար մեծ թռիչ մ'առած էր ու շատ վայելուչ կ'երեւար
երկայնահասակ կաղմերու վրա:

Այս թեւը ձեւելու համար, նախ պարզ թեւի մը տիպարը շինելու է, նոյն իսկ արմուկը Ծ կէտին վրայ կազմելով։ Յետոյ կերպասին եղբէն մէկ կարարաժին ներսօք գիծ մը քաշելով՝ կ'ունենանք ա—բ (ՏԵ՛Ա 256րդ օր.)։ Տիպարին Զ և Ե կէտերը կ'հաւասարեցնենք սոյն ա—բ գծին ու ծզակարը նոյնութեամբ կ'օրինակենք։ Ապա, տիպարին վերի կողմը՝ այն է Զ—Լ գիծը կ'բաժ-

Դաստակը փեռիկի նման՝ կոճակներով կրնայ զարդարուիլ .
և ծածանող մասին մէջ ցայտուն գոյնով մետաքսէ աստառ մը
դրուիլ , որ խոպոպներուն միջոցէն ճոխ երեւոյթ մ'ունենայ :

Եթէ ուզուի ծածանող մասը մէջի կողմէն խորշխորշան ձեւա-
ցնելով ամփոփել , այն ատեն անկունով կ'ըլլայ (ի՞նչպէս 25 լրդ
պատկերին ձախ թեւը) : Եւ եթէ ուզուի խորշխորշանը երեսի կող-
մը շինել ու վրան ալ փոքրիկ թաթիկ մը , ծայրերը մէյ մէկ
կոճակով հաստատուած ալ կ'ըլլայ : Թէ՛ ծածանող և թէ՛ անկունով
ձեւին համար եթէ ընդարձակութիւնը շատ նկատուի , 8 հարմէ-
դով կատարուած շաբաթում կրնայ 6 կամ 4 ականի վերածուիլ :

¶ U U d b .

ԿԱՐՈՒԽԱԾ ԾԱԼԵՐՈՎ ԹԵՒԵՐ ԶԵՒԵԼՈՒ ԿԵՐՊԸ

(Տե՛ս ԽԱ. Տախտակ 257րդ պատկեր և 258րդ օրինակ)

Այն թեւերը որ կարուած ծալերով (ՏԵ՛Ս 257րդ պատ.) կամ միայն արդուկով կոտրուած ծալեր ու հակածալերով կ'ըլլան. նախապէս թեւին երկայնութեան բաւարար կերպասը կտրել ու յիշեալ զարդերը պատրաստելէ ետք կ'ձեւուի. ինչպէս կարուած ծալերով սուկանները:

Կարուած ծալերով շատ մը թեւի տեսակներ կան , որոնց
ամէնն ալ միեւնոյն ոկզբունքով կ'պատրաստուին . օրինակի հա-
մար , կան որ միայն մակաթեկին վրայ կ'ըլլան ու մինչեւ ծղակա-
րին վերի կէս բարձրութեամբը (Տե՛ս 258րդ օր . դ—Ե հաւասա-
րութիւնը) , կան որ այս մասին բոլոր շուրջն ու թերևս Զ—Ը գծին
վերի մէկերորդ հաւասարութեամբը (Խնչպէս 257րդ պատ.) . կան
որ արմուկին շուրջն ալ եղած կ'ըլլան (Ճիշտ 257րդ պատկերին նմանը) :
Վերջապէս այս ամէնը նորաձեւութեան նկարին վրայ լաւ մը
դիտել ու պարզ թեկի մը տիպարին վրայ իւրաքանչիւրին բարձ-
րութեան սահմանը նշանակելու է : Ու եթէ միջոցներն ուռուցիկ
և թերերանը անկուն ձևացնել պէտք են (Այն է նիշտ 257րդ
պատկերին նմանը) , անոնց ալ բաժինները միատեղ հաշուելով՝
բաւարար երկայնութեամբ կերպասը կ'կտրենք , և տիպարին վը-
րայ նշանակուած սահմաններն օճառով կ'օրինակենք կերպասին

Վրայ : Յետոյ առաջին ծալը կ'սկսինք կերպասին եղրէն 4 հարմէդի չափ ներսօք (Տե՛ս 258րդ օր.) , և միւսներն ալ յաջորդաբար : Թերեւս միայն մակաթեին վրայ ուղուի , որ է ա—բ ուղղութիւնը (Ի՞նչպէս 258րդ օր.) , կամ՝ ամբողջ շարունակել : Թերեւս արմուկին շուրջն ալ շարունակել ուղուի (Ի՞նչպէս 257րդ օպատ.) : Ապա , բոլոր կարուած ծալերը ըրջօքէն արդուկել ու փառլու է սեղանին վրայ այնպէս որ չկարուած տեղերուն տարածութիւնը՝ կարուածներուն պէս ամփոփ կենան : Մակաթեին տիպարն առնելով ասոր Զ և Ե կէտերը կ'հաւասարեցնենք ա—զ գծէն մէյ մէկ կարաբաժին ներսօք . Հուսկ ուրեմն , կ'առնենք ենթաթեին տիպարն ու ասոր Խ կէտը կ'հաւասարեցնենք Լ կէտին և եթէ թերերանը տարածուն կ'ուզենք՝ երկուքին Ծ կէտերը 4 հարմէդի չափ հեռու կ'դնենք (Ի՞նչպէս 258րդ օր.) , իսկ եթէ արմուկին դէմ ալ կարուած ծալերով շինուած է ու կպչուն կ'ուղուի , Ծ կէտերն ալ իրարու կցելու է , կը մնայ այժմ բոլոր շուրջէն կարաբաժինները ձգելով կերպասը կարել . միայն նկատողութեան առնելու է թերերանին պատշաճութիւնը , որ թերեւս նեղ գօտի մը գնել ուղուի ու թեին բոլոր շուրջը մեղմ անկուն մը կազմեն , այն ատեն տիպարին Ե—Ժ և Ե'—Ժ' գծերէն Զ հարմէդի չափ զուգահեռաբար երկայն կարելու Է՝ մէջտեղն աղեղնաձև գծով մը . իսկ եթէ անկունով կ'ուղուի , այն ատեն ալ մէջ տեղը 8—10 հարմէդի չափ երկայն ու ձուածե գծով մը :

P U B L I C

«ՊՈԼԵՐՈ»Ի ՏԵՍԱԿՆԵՐ

թեամբ . վասն զի 1580ին Փրանսական գօրաց հրացանաձիգները՝ մինչեւ գօտեվայր վերջացող , քովէն կոճկուած և առաջակողմբը փոքր անկունով կպչուն «պօլէրօ» կ'կրէին . թերեւս մեր այս յայտնութենէն «պօլէրօ»ն ատելի գառնայ իգական սեռի զարդասէրներուն կողմէ : Բայց երկնչելու տեղի չկայ , որովհետեւ այն «պօլէրօ»ն ծիրանագոյն ընտիր կերպասներովը՝ այնքան շքեղ տեսք մ'ունեցած է երիտասարդ զինուորին կրծեզըն աղեղնաձեւ դէպի դուրս հակումովը , որ նոյն խոկ այսօրուան ամէնէն լաւագոյն հագուող պչուհին նախանձը պիտի գրգռէր : Ուրեմն յարգենք հնամենի յիշատակն ու դրուատենք այժմու շփացած պէսպիտեթիւնները . որովհետեւ «պօլէրօ»ն կրկնաշար կոճկէնով ալ եղաւ , երբուծէն խոտորնակի մինչեւ գօտեվայր դահնվրայով , լայն փեղկով , կպչուն թեւակով ու միակտոր գահվրայով (Տե՛ս 262րդ պատ.) , փոքր կրծօճիքով , մինչեւ գօտեվայր շրջուն եղբով ու բարձր ծալ—օճիքով (Տե՛ս 265րդ պատ.) , ծիգ օճիքներով ու վտաւատով , ևն . ևն . Սակայն ասոնց և ոչ մէկը մեզի նոր բան մը կ'ըսեն , այլ ամէնն ալ զատ զատ ծանօթ կերառութիւններ են , որ եկած կառչած են «պօլէրօ» անունին հետ . և մենք զանոնք կ'յօրինենք մեր սովորական իրանազգեստին տիպարներովը :

Արդ , համարենք թէ առաջակողման գօտեվայր՝ միակտոր գահվրայով , թեւակով ու կրծօճիքով կէս փակած «պօլէրօ» մը շինել կ'ուզենք (Տե՛ս 261 եւ 262րդ պատկերները) :

Միայն պարզ—իրանազգեստի մը տիպարը կ'բաւէ այսքան բաղադրեալ կարծուած «պօլէրօ»ն ձեւելու համար , որովհետեւ առաջամասը մէկ սեղմօնով կ'գծենք և այն ալ սեղմօնի խոռոշութեան $\frac{1}{4}$ ը նուազ՝ քանի որ կէս փակած պիտի ըլլայ (Տե՛ս 259րդ օր.) . միայն Ղ. կէտը 10րդ չափին $\frac{1}{4}$ ովը կ'նշանակենք ու ցցունը 1 հարմէդ դէպի ետ , որով առաջին շրջագիծը չեղ դիրք մը կ'առնէ յոյժ մեզմ կոր գծով մը , մինչեւ երկրորդ շրջագիծը չափանց վէտկոր . որպէս զի կարենանք առաջակողմը խոտոր թափական մը ձեւացնել . միեւնոյն ատեն սեղմօնի ցցունը մեզմ կոր գծով մը կ'միացնենք երբուծին , որով Բ. առաջամասը գծով մը ձեւացնել . միեւնոյն ատեն սեղմօնի ցցունը մեզմ կոր ալ կ'առնէ՝ ու եթէ ուզուի որ ասոր առաջակողմը որածայր մը ձեւը կ'առնէ՝ ու եթէ ուզուի որ ասոր առաջակողմը որածայր իրանազգեստի նմանութիւնն ունենայ , գօտեվայրէն 3—4 հար-

մէդի չափ վարօք կ'կազմենք ու կէտը և շրջագիծը քաղլթին ձեւովը կ'խոտորենք ոյն ու կէտին վրայ (լաւ դիմէ 259րդ օրինակ) ու տիպարը կ'բաժնենք երկու մասի :

Այժմ Ա. առաջամասին տիպարը կ'փոխագրենք կերպասին վրայ՝ երրուծը , ուսածագը և փողեզը օրինակե՞ու ու առնջքին ընդարձակութեան բաժինը վար քաշելէ ետք . կրծամէջը մէկ կոճակով կոճկուիլ և չեղակի ձգուն ընելու համար ալ Զ և կէտերէն հական հարմէդ դիպի դուրս կրծափեղի բաժին դնելով , քանակը կ'հաւասարեցնենք այս երկու կէտերուն ու հագագի բարձրութենէն մինչեւ քաղլթին վրայ չեղ գիծ մը կ'քաշենք , որ է ա—բ (Տե՛ս 259րդ օրինակ) , սեղմօնին Հ—Ղ գիծը չեղակի կը տանինք մինչեւ բ կէտին հաւասարութիւնը , որ գրեթէ Յ կէտին կ'մօտենայ՝ գ անկիւնը փոքրիկ կիսարոլորակ մը ձեւացնելով : Այսն ձգուն թաթիկին ձեւը թերեւս մինչեւ կէս կոնքի հաւասարութիւն ուզուի (ինչպէս 262րդ պատկերը) :

Այժմ յետամասի տիպարին ուլստորը և մինչեւ թիկնածագին կէսը՝ այն է դ կէտը կ'միացնենք ուսածագին (Տե՛ս 263րդ օր.) , վերի մասերը կ'օրինակենք և Ե—Լ գծին ընդարձակութեան բաժինը դէպի վար քաշելով՝ Զ—Խ գծէն Յ—Գ հարմէդ վարօք ալ կիսարոլորակ մը կ'ձեւացնենք : Գալով ուսի թեւակին , Լ և Ը կէտերն աղեղնածեւ կ'միացնենք իրարու , Ե , Յ , Յ փոքրիկ սեղմօններ կաղմելով , որ միայն մէջի ասասուին վրայ պէտք է ըլլայ ու վրայի կերպարը արդուկով ամփոփուի :

Կրծօճիքին ծաւալը և բացութիւնը պէտք է գծել օրուան նորածեւութեան համեմատ և ըսլոր շուրջը կարաբաժիններ ձգելով կերպարը կտրել : Թերեւս կրծօճիքին եռանկիւն մասը մետաքս կերպասով ծածկել ուզուի (Տե՛ս 263րդ օրինակ) :

Քանի որ քովերը սնակուշտէն վար չպիտի ըլլան , Յ . առաջամասն ու կողամասը միակտոր ալ կրնան ըլլալ . ասոնց Հ , Լ և Զ , Ժ կէտերն իրարու կցելով (Տե՛ս 260րդ օրինակ) :

Եթէ յետամասին ու առաջամասին եղլերը բուծինով զարդարուի կտմ ներս ցընելով կողամասին ու սեղմօնին վրայ կցուի , կարծէս թէ ուլարաւոր անջատ ուսնոց մը կ'երեւայ : Կարծէս թէ ուլարաւոր անջատ ուսնոց մը կ'երեւայ : Եթէ ուզուի , միեւնոյն ձեւը ուսը կարտվ ու կպչուն թեւակ կով ալ կ'ըլլայ :

Թերեւս սեղմօնը մինչեւ երբուծ տանել չուզուի, և թերեւս կողամասն այ առաջամասին հետ մէակտոր շինել ուզուի:

Զիգօծիքով եւ վտաւատով «պօլէրօ» . — Բարեկրուն հետ շատ
անգամ հագուստներուն անուններն ալ իրարու կ'փոխանցուին,
ինչպէս հիմա կարճ թիկնազգեստը «պօլէրօ» կ'կռչուի (Տե՛ս 264րդ
պատ.) . ուստի եղաւ որ «պօլէրօ»ներու վրայ ամէն ընկալեալ ձե-
ւերով օժիքներ ու կրծօծիքներ ալ շինուեցան՝ նոյնպէս ձիգօծիքը :
Այժմ բազատիւնք թէ ի՞նչ է ձիգօծիքը :

Արդ , ձիգօձիքը երկու կերպով կ'ըլլայ . մէկ մը դէրձակական կերպով , այն է ճիշտ կրծօձիքով օձիքի պէս ներքեւն օձիք մը շինելով , ու վրայի ծածկոյթը կրծօձիքին հետ միակտոր դրուելով , ինչպէս պիտի տեսնենք Փ գլխու է . դասով . մէկ մ'ալ կնոջական հագուստներ կարելու եղանակով , որ է նաև առաջական օձիքի պէս շինծու , զոր ներկայիւս պիտի բացատրենք :

Արդ ուրեմն, համարենք թէ հագուստին վրայ պարզ եղա-
նակով ձիգօձիք շինել կ'ուզենք, դարձեալ այս եղանակը կրնանք
քիչ մը ազնուացնել ու իր տափակութենէն վեր հանել, թէ եւ
իսկզբան քիչ մը ճապազ թուի, բայց արդիւնքը շատ գնահա-
տելի կ'ըլլայ:

Ահա թէ ի՞նչպէս, Պարզ առաջամասի մը տիպարը կ'դնենք տիպարցու թղթի մը վրայ, յետսամասին ուլնստորը և մինչեւ կէս թիկնածագը $\frac{1}{2}$ հարմէդի չափ կ'հաւասարեցնենք ուսածագին դէմ (Տե՛ս Զենքը օր.), ու եթէ կոնածագէն դէպի վեր օճքոտն ձեւացնել կ'ուղուի, փողեղրին վրայ կ'ձտենք Ք կէտը. ինչպէս նաև կրծեղլին վրայ ալ կրծօձիքին բացութիւնը, որ թերեւս մինչեւ գոտեվայր ըլլայ՝ ու այն տեղ շրթունք շրթունքի

հպին, այսինքն առանձ վերելեակի բաժին ունենալու, բայց ամէն առթիւ իրրեւ թոյլ կեցող հագուստ՝ 2—3 հարմէդի չափ ընդարձակութեան բաժին մը ճգելու է. որով կ'կազմուի բ կէտը: Յետոյ կոնածագին մօտաւոր նմանութեամբը կ'քաշենք Ը՝ Ք գիծը և Ք կէտէն մինչեւ բ կէտ ալ մեղմ կորնթարդ ձեւով մը օձիքին շրթունքը ներկայացնող գիծը:

Այս տեսակ հագուստներն ընդհանրապէս մէկ սեղմօնով կ'ըլլան, և այն ալ խորութեան ½ ը պակասով կը շինուի. ու եթէ առաջակողմը չեղ բացութիւն մը կ'ուզուի և փոքր սրածայրով մը, կ'առնենք բ—գ, գ—դ և ե—ժ գծերը (Տե՛ս 266րդ օր.): Ապա՝ տիպարին վրայ կ'ձեւագծենք ձիգօձիքին չ'ջուելի չ'ձեւը, որ է զ—բ, այսինքն 4—5 հարմեդ լայնութեամբ շրջութը հաստատող կէտը նշանակելէ ետք՝ մինչեւ Ք կէտին դիմաց Ը—Ք գծին հետ գրեթէ զուգահեռաբար շարունակելով, տակաւ առ տակաւ կը լայնցնենք և աղեղնաձեւ դիրքով մը կ'միացնենք Ք կէտին: Յետոյ փշանուակով կ'օրինակենք Ը—Ք—բ, զ—բ և զ—Ը գծերը ներքեւի թղթին վրայ՝ ու կտրելով կ'շրջենք դիմացի կողմը, այնպէս որ 6—7 հարմեդի չափ ք կէտէն բ—Ք գծին հետ հաւասար դանուին, որով օձիքն առաջամասին հետ մաս մը տեղ միակտոր եղած կ'ըլլայ՝ վերի կողմը ահագին սեղմօն մը ձեացնելով, որ է Ը՝ անկիւնը և ուլնստորը (Լա՛ւ դիտէ 266րդ օր.): Կերպասը կը տրուած ատեն սեղմօն ձեւացած օձիքին մէջի եղը կարարատին ձգելու պէտք չկայ, միայն մոռնալու չէ ուլնստորէն մինչեւ Ք կէտ՝ օձգոտնին համար առաջամասին պատկանած բաժինը ձղել, ինչպէս նաեւ յետսամասն ալ ձեւուած ատեն կոնսածգի օձգոտ միակտոր ձեւելու:

Այժմ բացատրենք թէ ի՞նչ տուաւելութիւն ունի օգիքը սասմեղ միակտոր ձեւելու մեր սոյն եղանակը։ Ո՞րովհետեւ այս կարգի օծիքներուն վարի կողմը կրծօծիքէ տարբերութիւն չունի, հետեւապէս ուսին ու օծիքին համար պնդածուէն մը զնելու է թեթեւ լանջապահակի մը պատրաստելով (Տե՛ս Ճ. զիլու Բ. դասը), կերպասին կուրծքի սեղմօնը (Եթէ ունի) կարել և լանջապահակին հետ դերակարելէ ետք. օծիքը շրջելու է երեսի կողմն ու ծոծրակէն մինչեւ բացուածքը՝ սեղմօնի պէս կարելու է, ունասուրին դէմ քիչ մը ընդձգտել մոռնալու չէ։ Ապա՝ օծիքին երեսի

ծածկոյթը, — ըլլայ միեւնոյն կերպառէն կամ տարբեր նիւթէ, — կանցնենք շրթունքին կարը ցցուած դիրքին մէջ՝ ծածկոյթէն մաս մը դէպի ներս առբերան ձեւայնելով, իսկ կռնածագին մէջի կողմը նաւաստիսկան ձեւով օձիքին նման անջատ կտոր մը ծածկոյթ, այնպէս որ օձիքին վարի ծայրը միակտոր ու կրծօձիքի նման բնական ձեւ մը կ'ունենայ, փոխանակ մինչեւ վար կարելով կոչու ու տափակ երեւոյթ մը առնելու :

Թերեւս օձիքին վրայ կրկին—զարդ ծածկոյթ մը անցնել ուզուի, շրթունքին հետ մասնակի հեռաշորովեամբ մը կամ դրասանքի ձեւով (Ի՞նչպէս 264րդ պատկերին բաց զոյնով կրկին ծածկոյթը):

* *

Երջուն կրծեզրով «պօլերօ», — Հագուստին կրծեզրները վերէն ի վար կրծօձիքի նման վրան շրջուած ալ կ'ըլլան (Տե՛ս 265րդ պատկեր). ինչպէս 5—6 տարի առաջ շատ նորոգեւութիւնն էր. իսկ 20—22 տարի առաջ այսօրուան պօլերօներուն տեղ կար ձգուն թէ կնողգեստներ որոնք դարձեալ շրջուն կրծեզրով կ'ըլլային, և շատ անգամ անոնց ծածանող եզրը դրասանքի, գծագիտակտն կոր ու վէտիր ձեւերով և կրծօձիքի կրծենաման ունջեր կ'շինուէին (ի՞նչպէս իր կարգին պիտի խօսին):

Երջուն կրծեզրն եթէ անկունաւոր պօլերօի վրայ պիտի շինուի, նախ կրծեզրին Դ—Զ դիմք հորիզոնարար դէպի վար կ'երկարենք և համարենք թէ անկունին երկայնութիւնը մինչեւ Յ կէտին հաւասարութիւնը կ'ուզենք հաստատել (Տե՛ս 267րդ օր.), որ է ա կէտ, և համարենք թէ հագաղին դէմ 3—3½ հարմէզի չափ շրջել պէտք է. ուստի այն տեղ ալ կ'նշանակենք թէ կէտը. յետոյ քանակը կ'հաւասարեցնենք ա և Բ կէտերուն ու Կ քաշենք կրծեզրին բացութեան արամատիծը։ Հիմա կ'նշանակենք շրջուն մասին վերի լայնութիւնը, որ ընդհանրառէս թէ կէտէն շեղակի դէպի երբուծ կ'հակի և 7 հարմէզի չափ երկայնութիւնով մը կը ճշտենք գ կէտը. իսկ վարի կողմը, այն է դ կէտը և հարմէզով՝ ու կ'քաշենք գ—դ դիմք, որով կ'ունենանք շրջուն մասը (Տե՛ս 267րդ օրինակին մուր ստուերով մասը): Արդ, եթէ պօլերօին մէջ աստաւ կ'դրուի, ա—բ գիծն աստաւին վրայ օրինակուած ըլլարով՝ նախապէս դէպի դուրսը թողուած աստաւը նոյն գծէն կը

շրջենք առաջամասին ներքեւն ու փշանուակով կ'օրինակենք բ—գ, գ—դ և դ—ա գծերն և դարձեալ կ'բանանք, որով շրջուն մասով օրինակուած կ'ըլլայ դէպի ի դուրս, որ է բ—գ', գ'—դ' և դ'—ա գծերն : իսկ եթէ միայն կերպառը կ'կարուի ու փշանուակով չօրինակուիր, այն առեն ալ առաջամասին վրայի ձեւերն օճառով գծած կ'ըլլանք՝ դուրսի կերպառը կ'շրջենք վրան, բռունձքի քառնի մը թեթեւ հարուածներ կ'ուտանք, ու կ'բանանք, առով ալ օճառին գծերը կ'օրինակուին դէպի դուրս :

Դարձեալ թեթեւ լանջապանակ մը կարեւոր է, իսկ շրջուն մասոր ո՛չ միայն հագուստին կերպառէն կ'ըլլայ, այլ և տարբեր նիւթերով ալ. ինչպէս քանի մը տարի առաջ մոխրագոյն մետաքսով կ'ծածկուէր ու ասոր վրայ ալ ծակուակէն սեւ ժանեակ կ'անցուէր (Ի՞նչպէս 265րդ պատկեր):

Օձիքը բնականարար թէ կէտէն սկսելով կ'շրջապատէ վիզը, մինչեւ տիպարն ամէն առմիւ մինչեւ հագագ պատրաստուած կ'ըլլայ. ուստի հագագէն մինչեւ թէ կէտ վլարեկորին կազմած Դ—բ գծին բաժինը օձիքին տիպարէն ջնջելով կ'պատրաստուի:

Թերեւս անութիւն շուրջը մտհիկի ձեւով մակարութիւն մը շրնել ուզուի:

* *

Կանջին կամ կուրծին վրայ խորշխորշան ձեւացած զգացներ. — Բոլորովին տարբեր ու հին ոճ մ'է մէկ կողմի առաջամասով լանջքին կամ կուրծքին վրայ առիգածի ձեւով խորշխորշան ձեւացնել: Այս ոճն առաւելապէս ի կիր կ'տոնուի քղանցքի պարեզօտներու վրայ, ինչպէս 18—20 տարի առաջ բնդհանուր ու մեծ զարի մ'առած էր որ թէ եւ 3—4 տարի առաջ ալ նորաձեւութեան թերթերու մէջ սկզբանական վերերեւում մ'ունեցաւ, բայց լաւ ընդունելութիւն մը չգտնելուն՝ զանց առնուեցաւ. սակայն միշտ ի մտի ունենալու է անցեալը կամ հինը չարհամարել, քանի որ անոնք միշտ վերադարձ մ'ունին ուշ կամ կանուխ:

Արդ, կուրծքին վրայ խորշխորշանաւոր առիգած շրնել ուզուած աստեն, առաջամասին տիպարը կ'գնենք կերպառին վրայ, թերեւս առանձ օճգոտն ձեւանալու՝ փոքր ձիգօձիք մ'ուզուի, որ է Ծ—Ե և զ—Ե (Տե՛ս 239րդ օր.), կամ զ—Ե գծին ձեւովք բաց ձգել ուզուի, որ փողեզրին շուրջը մոնեկօձիք ձեւանայ (Ի՞նչպէս 268րդ պատ.). ևն. : Թետոյ քանակը Դ կէտէն 4½

հարմէդ՝ դրսօք հաւասարեցնելով կ'քաշենք Դ—ա գիծը, որ է սուկաններու կրծեզրին սովորական տրամագիծը. ապա՝ առաջակողմը գօտեվայրէն քանի մը հարմէդ կարճ ընելու համար, որ թերեւս նեքեւէն լայն գօտի մը ցուցնել կ'ուղուի (Տե՛ս 268րդ պատկերը), կ'նշանակենք բ կէտը. և այս կէտէն խոտորնակի կը քաշենք Բ—գ գիծը, ու ասոր զուգահեռական գնացքովն ալ ե—դ գիծը. որոնք մասնաւոր օրէնքի մը տակ չեն կրնար առնուիլ, այլ ամէնէն վերջի խորշխորշանը ո՛ր բան բարձր ձեւացնել ուղուի, խոտորումն ալ այն բան շատնալու է։ Արդ, համարենք թէ չորս խորշխորշան ձեւացնել կ'ուղենք և ասոնց վերի կողմի իւրաքանչիւրին խորութիւնն ըլլայ կական հարմէդ, ուրեմն $4 \times 4 = 16$ կ'ըլլայ և կրկինը 32 հարմէդ. հետեւապէս և կէտէն ե—դ գծին վրայ 32 հարմէդին հասած տեղը կ'նշանակենք դ կէտը (Տե՛ս այս ամենը 269րդ օրինակին վեայ)։ Վերջապէս Ժ կէտէն մեզմ կոր գիծ մը սկսելով՝ կ'հանդիպինք բ կէտին, անկից ալ աղեղնաձեւ կ'միացնենք դ կէտին, ու շուրջը կարարաժիներ ձգելով կերպասը կը կտրենք։

Թերեւս առիագծ կազմուող մասին մէջ՝ իրրեւ զարդ, տարբեր գոյնով մետաքսեղէն աստառով մը կրկնել ուղուի, որպէս զի չրթներուն ալեծածան ընթացքին մէջ գոյներու փոփոխակի տեսք մ'ընծայէ։

Կ'փութանք աւելցնել թէ այս խորշխորշանները համաչափ և վայելու կազմուելու համար, լաւ է որ նախապէս ե—դ գծին վրայ կական հարմէդով մէյ մէկ կէտ նշանակուի և Բ—գ գծին վրայ ալ նական. յետոյ քանակը վերի և վարի ամէն մէկ կէտերուն հաւասարեցնելով՝ մէյ մէկ գիծ քաշուի (Տե՛ս 269րդ օր.), ու կերպասը կտրելէ վերջն ալ իւրաքանչիւրէն մակենթակար անցուի, որ մէն մի աջ և ձախ կոտրուելիք խորշխորշանին տրամագրձերը ճիշտ ըլլան (յար եւ նման 268րդ պատկերին վրայ կազմուած ձեւին)։

Ուրեմն դիւրին է բմբանել թէ ո և է աեղի վրայ ալեծածան խորշխորշաններ ձեւացնել ուղուած ատեն, գլխաւորաբար ձածանող եղբը խոտոր կտրելով առաջ կուգան։

Պ Ա Ս Ֆ է.

ԿՈՆԻԿԻՆ ԿԱՄ ՔՈՎՔԻՆ ԿՈՃԿՈՒՈՒԵԼԻՔ ԻՐԱԱԶԳԵՍՑՆԵՐ
ՈՒ ՍՈՒԿԱՆՆԵՐ

(Տե՛ս ԽԳ. Տախտակ 270հն միջիւ 276րդ օրինակ ու պատկերները)


Կռնակին կոնկուուելիք իրանազգեատներ. — Հագուստը կռնակին կոճկուուելին առաւելապէս կ'պատկանի երախաններու ու տղոց, բայց իրրեւ նորածեւութիւն՝ ատեն ատեն չափահասուներն ալ կ'երեւի թէ տղայ ըլլալու փափաք մը կ'ունենան, ինչպէս անցեալ տարիներ շատ նորութիւն էր սպիտակ սուկանները կռնամէջէն կոճկուուելիք, արտաքուած ցուցագրուած սպիտակ գաղտակուրէ մանր ու խիտ կոճակներուն շարքովը։ Սակայն մեր սոյն գլխու առաջին դասը միտք բերելու է. որ այս կարգի արտակեդրոն կիրառութիւնները բարձր դասերէն կուգան և անոնք ալ իրենց որդուզարդը կատարող ու հագուեցնող սպասուհիներն (Ֆամ Տը Շամպո) ունին։ Ուրեմն ո՛ր բան ծաղրելի կ'ըլլան մատերնին ու ձեռքերնին կերպ կերպ աշխատութիւններով կոշտեր կապած մանկամարդք, որոնք կռնակին կոճկուուելիք շրջագայութեան զգեստներ կ'հանդիպին։

Արդ, չափահասուներու կռնակին կոճկուուելիք հանդիսական կազմուն իրանազգեատներն երեք կերպով կ'ըլլան։ Ա. — Կրծեզրը միակտոր և միայն սեղմօնները կարուած (Տե՛ս 270րդ պատ.). Բ. — Դարձեալ կրծեզրը միակտոր, իսկ սեղմօնի բաժինը առաջակողմի ստորոտին վրայ կծկուած (Տե՛ս 276րդ պատ.)։ Գ. — Հադագէն մինչեւ կրծամէջ միակտոր, ու կրծամէջէն մինչեւ վարի ծայրը սեղմօն մը ձեւացած, այնպէս որ առաջակողմը 5 սեղմօն կազմուած կ'ըլլայ։ Այս ամէնուն համար՝ առաջամասի տիպարն ընդդարձակ սեղմօնով պէտք է պատրաստել. և ամէն առթիւ նախ մէջի աստառը ձեւելու է։ Ուստի համարենք թէ Գ. կերպին նըմանը շինել կ'ուղենք, այն է կրծամէջէն մինչեւ վարի ծայրը 5րդ սեղմօնը ձեւացնել, որ է ամէնէն դիւրին կերպը։ Ուրեմն,


տռաջամասի տիպարին Դ—Զ(*) գիծը կ'հաւասարեցնենք աստառի ծալքին, որ է ա—բ գիծը (Տե՛ս 27 |րդ օր.): Փշանուակով կ'օրինակենք փողեզը, ուստածագը, երրուծը և սեղմօններուն առաջին, երկորդ ու երրորդ շրջագձերը: Ինչպէս նաեւ Զ—Բ—Բ' գիծը, որ իբր թէ կերպասին ծալքը սեղմօնի տրամագիծ եղած ըլլար ու Զ—Բ—Բ' գիծն ալ մէկ կողմի շրջագիծը (Տե՛ս 27 |րդ օրինակի բացուած դիրքին մէջ՝ կրծամեջին վար կազմուած 5րդ սեղմօնը): Կազմութեան համեմատ կողանջառի շարժումն ալ կատարելով, կ'օրինակենք Բ. սեղմօնի վերջին շրջագիծը անութը, կողանջառը և ստորոտն ու աստառը կ'կարենք: Իսկ եթէ Ա. կերպովը պիտի ըլլայ: որ է կրծեզը ամրող միակառը, այն տաեն խընդիրը բոլորովին կ'առարերի. ըստ որում գոտեվայրին ու քաղըրթին դէմ տիպարը խոտոր և անջոտ մնացած մասը կերպասին ծալքէն պէտք է ջնջել. ու զանոնք փոխագրելով Ա. սեղմօնի առաջին շրջագիծն մէջ: Հետեւապէս, Բ կէտէն մինչեւ ն կ'տգտնուած հեռաւորութիւնը չափելով՝ կ'փոխագրենք Ղ. կէտին դիմաց ու կ'նշանակենք Ղ' կէտը. նոյնպէս ալ քաղըրթին վրայ ն—Բ' փոքրիկ անջրպետը չափելով՝ կ'փոխագրենք Շ կէտին դէմ և կ'ունենանք Շ' կէտը. և այս անգամ նոր շրջագիծ մը կը քաշենք, որ է Հ—Ղ—Շ. որով Ա. սեղմօնին Հ—Ղ—Շ շրջագիծ ջնջուելով՝ ա'լ աւելի կ'ընդարձակուի (Տե՛ս 27 |րդ օր.): Թերեւս առաջակողը որածայր շինել ուղուի՝ քովը ճիշտ սնակուշտին հետ ու առաջակողը՝ ն' կէտէն Զ հարմէդի չափ վերօք, որ է զ կէտը: ուստի Ժ և գ կէտերը շեղ լարով մ'իրարու կ'միացնենք որ սեղմօններու շրջագձերուն վրայէն խոտորնակի անցնելուն առթիւ կ'կաղմուին նաեւ դ և զ կէտերը ուրեմն Ա. սեղմօնին Հ—Ղ—Դ գիծը չափելով՝ նոյն երկայնութիւնը դարձեալ Հ կէտէն կ'ունենք երկորդ շրջագիծն վրայ և հասած տեղը կ'ձշտենք ն կէտը. նոյնպէս ալ Բ. սեղմօնի Զ—Գ գիծը չափելով կ'ձշտենք չորրորդ շրջագիծն ն կէտը. վերջապէս Ժ—Է և զ—Է մեղմ կոր գծերովը կ'լրացնենք վարի շրթունքին ձեւը:

(*) ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿ ՄԲ. — Խնչպէս ըսինք, 27 |րդ օրինակին բուն տիպարը բնդարձակ սեղմօնով պէտք է ըլլայ ու այնպէս ալ շինած ենք. մինչդ, Բ եւ Բ' զրած ենք:

Խաղաղ ՍԱԿԱՎԻ



Խաղաղ ՍԱԿԱՎԻ



Այս կարգութրութիւններէն ետք փշանուակով կ'օրինակենք փողեզը, ուսածագը, երբուծը, սեղմօններուն ջրջագծերը, և անութի ծաւալին ու կաղմութեան պահանջըին համեմատ եթէ պէտք տեսնուի կողանջան ալ կ'շարժենք, տիպարը վերցնելով՝ չուրջի կարարաժենները ձգելով առառաք կ'կտրենք:

Ձգեստին միւս մատերն ալ պատշաճութեան համեմատ կ'կրտրենք, միայն կոնտէջը Յ կամ Կ հարմէդ տիպարէն զուգահեռաբար լայն կ'կտրենք ու փշանուակով կ'նշանակենք, որպէս զի երկու կողմի վերելեալի և առքերաններու բաժինի ծառայեն: Կցորդելու և կարելու կերպն ալ սովորական իրանազգեստներու եղանակէն առարերութիւն չունի. բայցի կոնտէջին վերելեալի բաժիններուն նկատմամբ քանի մը կարեւոր գիտելիքներէ:

Արդ, եթէ կոճակները թագուցիկ պիտի ըլլան, ձախ կողմի կոնտէջը միշտ տիպարին մեծութեամբը նշանակուած առամագծէն ներս ըրջելու է, և Յ հարմէդ լայնութեամբը առքերան մը ձեւացնելով՝ խծպելու է. իսկ աջ կողմի կոնտէջը ՀԱՅ հարմէդի չափ փշանուակի գծէն զուգահեռաբար դրասը կ'ձգենք իրրեւ կոճակափեղի բաժին և մնացածը կ'չըջենք ներս, իրրեւ առքերան: Եթէ կոճակները երկուն պիտի երեւան, ձախ կողմի չուրթը փշանուակի գծէն Վ հարմէդ զուգահեռաբար դրասը ձգելով մնացածը ըրջելու է ներս, որպէս զի օղակները չրթունքնեն Վ հարմէդ ներսօք դանուին. և այս պարագային է որ նախապէս տիպարէն Շ հարմէդ աւելի կտրելու է, որ հիմս ալ Յ հարմէդ դէպի ներս ըրջելով օղակներուն համար առքերանի ծառայէ: Իսկ կրնայ ըլլալ որ կոնտէջը հակածալ մը գտնուի. այս պարագային ալ երկու կողմի կոնտէջէն Յական հարմէդ միայն աւելի կը ձգենք ու դանոնք կ'չըջենք ներս որ կ'ձառայէ առքերանի, հարմանքները չրթունքներուն կ'կարենք, յետոյ ուղուած լայնութեամբը շինծու հոկածալ մը պատրաստելով՝ անոր կէս լայնքը կը կցենք ձախ կողմին ու երբ կոնտէջը հարմանքներով փակուին՝ հակածալին դուրս մնացած կէսն ալ կ'յանգի աջ կողմին վրայ:

* *

Քովի. Կոնկուս ելիք իրանազգեստներ կամ սուկաններ. — Ամէն կար կարող ընկալեալ կերպ մ'ունի քովէն կոճիուուելիք սուկաններուն ու իրանազգեստներուն համար՝ որ մենք անոր մէկ

մեծ անպատեհութիւնը տեսնելով բարձի թողած և լաւագոյն կերպը հնարած ենք, զոր քիչ մը վարը պիտի բաղդատենք իրարու հետ, ուրեմն հետեւինք այժմ մեր գրութեան։

Արդ, համարենք թէ դարձեալ առաջակողմն ու յետակողմը սրածայր և կպչուն զարդանքի իրանազգեատը քովէն կոճկել կ'ուղենք, ուստի նախորդ հրահանգին համեմատ ախարիին Դ և Զ կէտերն աստառի ծալքին հաւասարեցնելով (Խնչպի 271րդ օր.), միւս մանրամասնութիւններն ալ ի գ'րծ կ'գնենք ու աստառը կը կտրենք և բացուած ատեն կ'ունենանք երկու առաջամտոր միակտոր (Տե՛ս 271րդ օր. ինչպի նաեւ 275րդ պատ.)։ Ճիշտ այս շըրջագծերուն նման միատակ աստառէ առաջամաս մ'ալ կ'կտրենք ձախ կոխմին համար, միայն ասոր կրծեզրը Յ հարմէդի չափ առբերանի բաժինցու աւելի կ'ձգենք (Տե՛ս 274րդ պատ. Դ—Գ զձեն դուրս տեսնուած զիծը)։ Ահա թէ ի՞նչ պիտի ըլլան այս զոյդ և կոճատ առաջամասները։

Նախ զոյդ առաջամասի աստառին կրծեզրի, տրամագծին վրայ ձարմանդներ կ'կարենք, առաջինը հագաղէն Յ հարմէդ վարօք սկսելով և իւրաքանչիւրն Յական հարմէդ հեռաւորութեամբ մինչեւ իրանազգեատին վարի ծայրը քանի հատ որ պարունակէ, և գործը մաքուր ըլլալու համար, ասոնց կարուած մասերն երից զով մը կ'ծածկենք ու երկու շրմունքները կ'խծափենք, այնպէս որ միայն ձարմանդներուն տպուցող կէսիկ (չէնիկ) ծայրերը զուրու կ'մնան (Լա՛ւ դիտէ 275րդ պատ.)։ Յետոյ այս աստառը կ'գնենք կերպասին վրայ, շուրջը կ'դերակարենք ու աստառին հաւասարութեամբ կ'յարդարենք։

Եթէ օծիքին միացումը հաղագին վրայ տեղի պիտի ունենայ, ուրեմն ձախ կողմի փուեզրին ուստագին, երբուծին ու անութին և կողանջատին կարաբաժինները կ'շրջենք ներս ու խրնամով մանր մանր կ'դերակարենք. ներսի շրմունքը վրակարով մը կ'հաստատենք աստառին հետ. ապա հագուստի կերպասէն 4—5 հարմէդ զուգահեռական լայնութեամբ առբերանով մը կը ծածկենք (Տե՛ս 275րդ պատ.), որուն երկու եզրերուն կարաբաժինները ծալկարերով սպառելէ ետք, առբերանին զուտ լայնութիւնը գրեթէ կ'մնայ Յ—Յ₂ հարմէդ։ Եթէ օծիքի կցորդումն ուլնստորէն կ'ուղուի, այն ատեն փողեզրը ծալելու պէտք չկայ։

Ալ ժամանակն է որ այս զոյդ առաջամասին չորս սեղմօնները դերակարելով կցորդենք ու կարենք։ Յետոյ կ'առնենք աստառէ կոճատ առաջամասը, ասոր կրծեզրէն ձգուած Յ հարմէդ առերանցուն կ'շրջենք ներս, ճարմանդներուն լամբակները կ'կարենք ասոր եզրը՝ իւրաքանչիւրն ալ փոքր ինչ դուրս ձգելով, որ գործածութիւնը դիւրին ըլլայ. առբերանին մէկ մասը կ'շրջենք լամբակներուն վրայ ու շուրջը ոլորակար մը կ'ընենք, որ կարծէս թէ անջատ երիզ մը դրուած է (Տե՛ս 273 եւ 274րդ պատկերներ)։ Ապա՝ Բ. սեղմօնի վերջին շրջագծին հաւասարութենէն դէպի կըրծեզրը և հագաղէն 4—5 հարմէդ վարօք կոր գծով սահման մը կը գծենք ու վերի և քովի մասը հագուստին կերպասովը կծածկենք (Տե՛ս 274րդ պատ.)։ սեղմօնի ցցունէն մինչեւ կրծեզրը կաղմուած կոր ձեւին գծզնուող շուրջը ծալկարով մը կ'հաստատենք. սեղմօնները նախ պարզ մը կ'հարենք ու յետոյ մէկ կողմի վրայ կուրելով կարաբաժինն ծիւ եղրերը կ'խծափենք (կամ մէքենայով թափանց կարեր կ'անցնենք)։ Իրանազգեստին միւս մասերուն աստառները կերպասով կրկնելէ վերջ, ձախ յետուամասին թիկունացագծը կ'կցորդենք. կոճատ առաջամասի ուսածագին, նոյնոէս ալ կողամասներն ասոր կողանջատին (Տե՛ս 273րդ պատ.)։ իսկ աջ կողմի մասերն ալ կ'կցորդենք զոյդ առաջամասի աջ կողմին. ձախ կողմի ուսին ու կողանջատին զապտնակ կոճակներ կ'կարենք (Տե՛ս 273րդ եւ 275րդ պատկերներ) կամ մէկուն ձարմանդներ կ'կարենք (այսինքն 175ին) ու միւսին մետաքսէ փոքրիկ լամբակներ կը շինենք։

Այժմ դիւրին է ըմբռնել թէ հագնուած տաեն՝ նախ կոճատ առաջամասին կրծեզրը կ'ձարմանդնենք զոյդ առաջամասի տրամագծին հետ. որով իրանազգեստը կատարելապէս կ'հանգի չափատուին վրայ, յետոյ ասկախ մնացած զոյդ առաջամասին ձախ կողմի ուսածագն ու կողանջատը՝ զովանակ կոճակներուն միջոցաւ կ'փակենք. կոճատ առաջամասին վրայ։ Մինչդեռ ամէն կար կարող սովորական եղանակով երկու առաջամասի աստոտ կ'սունեն, մէկը աջ կողմի կերպասին հետ կ'կցորդեն այնպէս որ ձախ կողմի առաջամասին կերպասը կ'մնայ առանձին, տարակոյս չկայ թէ եղրերն ինքնիրմանվ պիտի խծափուին, նախ ասոնք ո՛քան ալ խնամով եղած ըլլան՝ դարձեալ երեսէն պիտի նշմարուին. երկ-

ըորդ՝ ձախ կողմի սոյն միատակ կերպասը պիտի ճարմանդուի նոյն կողմին վրայ, որ կազմուն իրանազգեստի մը համար պէտք եղած պրկումին գիմալքելու զուրկ կ'ըլլայ, երբ մանաւանդ կերպասն ալ նրանիուած ըլլայ: Մինչդեռ մեր դրութեամբ եղած ատեն ամէն անպատեհաթիւն բարձուած է: Նոյն խիլ պատշաճօրէն խնամեալ գործ մ'ըլլալու համար խորհուրդ կուտանք որ, ձախ առաջամասին եզրերը ըրջերէ առաջ, փողեզրին, ուսածագին ու երուժին բարակ ուղղմորիդ մը դրուի, որ նոյն տեղերուն շեղ դիրքերը գործածութեան ժամանակ շշողին: Այս ուղղմորիդն ալ հաստատելու համար մէջ տեղէն վրակար մը երթալու է մայր աստառին հետ ու յետոյ եզրերուն կարարաժինը ըրջել և անոնց վրակարն ալ ընելու է սեղմերիդին ու յատակի աստասին հետ:

Շատ լաւ կ'ըլլայ որ սրածայր իրանազգեստներուն վարի շուրթը 24^½ հարմէդ դուգահեռտական լայնութեամբ ու շեղ կըտրուած բարակ կանեփեայ կտաւէ կամ խուակտաւէ պնդածուէն մը դրուի ու թէ որ շուրջը թափանց կարեր չպիտի ըլլայ, շրթունքն այս պնդածուէնին հետ վրակարով հաստատուի, և յետոյ 3—3^½ հարմէդ լայնութեամբ ու միշտ շեղ կտրուած առբերանով մը ծածկուի:

Քանի որ իրանազգեստը գոտեվայրի սահման անցներով դէպի կոնքին վրայ կ'իջնէ, գրեթէ անհրաժեշտ է կիտոսկրներ դըները, մանաւանդ զոյգ առաջամասին մէջանզը, այնպէս որ Զ կէտին վրայ ճարմանդները փակով երիդը հորիզոնարար քանի մը կէտ կարով կ'հաստատենք յոտակի աստանին հետ ու վարի կողմէն կիտոսկրը կ'ասհեցնենք նոյն երիդին մէջ, որ այս պարագային ալ կ'ծառայէ իրեւ կոճան, միան գիտնոլ պէտք է թէ կիտոսկրը չափազմնց պրկուած պիտրով մը հաստատելու է որ հագնուած ատեն երեսի կողմը հորիզնական փոքր պաստումներ չդոյցանան:

Եթէ վրայի կերպասը առաջակողմին վրայ պռասումազ ձեւացնել կ'ուզուի (Խնչպէս 276րդ պատկերը), նախ կերպասը աստառին հաւասարութեամբը կտրելու է, այս վերջինին սեղմօններն առանձին կարել և յետոյ կերպասը կողանջատներէն դերակարել ու առելուրդը կծկելու է առաջակողմին վրայ:

Խսկ եթէ կծկումէն յառաջ գալիք կերպասին փոթթուածքը

քիչ ցուցնել ուզուի, այն ատեն աստառը պարզ սեղմօններով պատրաստելու է և փոխանակ տառաւը միակտոր շինելու՝ Զ կէտին վար ծրդ սեղմօնն ալ կարելու է, ինչպէս նաեւ կոճատ առաջամասի աստառին կրծեզրը կտրելու է Դ—Զ—Բ—Բ' գծին ձեւովը (Տե՛ս 271րդ օրինակ):

Եթէ թափանցիկ կերպասով սուկան մ'է որ քովէն պիտի կոճկուի ու մէջը բնաւ աստառ չպիտի դրուի, այն ատեն կոճատ աստառին վրայ ծածկուած կերպասին նման (Տե՛ս 274րդ պատ.) կառոր մը կըտրուի բելու է որ ձախ կողմի ուսը, կողանջատը և թեւը անոր կարուի:

Պ Ա Ս Ֆ Բ.

ՇԵՂ ԿԱՇԿԱՌՈՒԵԼՈՒՔ ԻՐԱՆԱԶԳԵՍՏՆԵՐ

(Տե՛ս ԽԳ. տախան 277հն մինչեւ 284րդ պատկերները)

Զախ ուսէն դէպի աջ ազգրին կողմը շեղ գիրքով կոճկուած (Տե՛ս 282րդ պատ.) կնոջական կարգ մը իրանազգեստներ ու թիկնողգեստները հետեւութիւն են Հանրիկոս Դ. ի ոճով սուկանին, որ մինչեւ մեր օրեւը՝ առաւել կամ նոտազ խոսորումներով շատ մը կեղծնմանները շինուած են, մինչեւ անդամ սուկաններ, այդպատկաններ, խցազգեստներ, ևն: Առայժմ բաւական համարեցինք՝ իրեւ նմայչ անոնց է առօրեայ ագանելի արդուզարդի կայչուն իրանազգեստներու չորս աստրեր ձեւեր ներկայացնել (Տե՛ս 281, 282, 283 և 284րդ պատկերները), որ ձեւազենու և ձեւելու մասին ամէնէն գժուարադոյն նկատուածներն են. բայց մենք ջանացած ենք զանոնք ամենապարզ եղանակով մը անթերի յառաջ բերել:

Աւրեմն, համարենք թէ ամէնէն գժուարին նկատուածը շինել կուզենք որ է սրածայր կաչուն իրանազգեստի մը ձախ ուսին կէտին շեղակի մինչեւ աջ կողմի Ա. սեղմօնին սուրբուը փակող ձեւը (Տե՛ս 282րդ պատ.), բնակունարար՝ իրեւ կնոջական հագուստ՝ օգակները աջ կողմէն եկաղ փեղկին վրայ ըլլալով մինչդեռ արական սեռին պատկանած ատեն, այս սկզբունքներուն հակառակը կ'ըլլայ:

Արդ, նախորդ դասի հրահանգին համեմատ, դարձեալ գոյգ

առաջամաս մը՝ պատրաստելու ենք. միայն թէ այս անգամ փոխանակ աստառի՝ մեծկակ թերթ մը թուղթը կ'ծալենք և ընդունակ սեղմօնով՝ պատրաստուած առաջամասի տիպարին Դ և Զ՝ կէտերը՝ հաւասարեցնենք տիպարցու թղթի ծալքին (ի՞նչպէս ԽԴ. Տախ. 274րդ օր.), Ն—Բ և Ն—Բ՝ միջոցները կ'փոխադրենք Ա. սեղմօնի Ղ և Ծ կէտերուն դիմաց ու կ'գծենք Հ—Ղ—Շ՝ գիծը. Բ. սեղմօնը կ'ընդարձակենք: Թերեւս քովի երկայնութիւնը սնակուածէն Յ—Գ հարմէդ վարօք և առաջակողմը մինչեւ Ն' կէտ շնել ուղուի, ուստի այն՝ շեղ գիծը կ'քաշենք, սեղմօններուն վըջգծերն իրարու կ'հաւասարեցնենք և զանոնք փշանուակով օրինակելէ ետք, առանձ ո և է կարարաժին ճգելու՝ շուրջը կը կարենք, վրայի հիմնական տիպարը կ'վերցնենք ու ներքեւի թուղթէ պատրաստուած զոյտ առաջամասը բանալով կ'տարածենք (Տե՛ս այժմ ներկայ հրահանգին համար սահմանուած տիպարը՝ ԽԴ. Տախտակի 277րդ օրինակը):

Զախ ուստածագն այն է Խ—Ծ գիծը կէտ ընելով՝ մէջ տեղը կ'անուանենք ա կէտ, աջ կողմի Ա. սեղմօնի առաջին շրջակդէն և հարմէդի չափ հեռուն ալ կ'նշանակենք Բ կէտը (Տե՛ս 277րդ օր.). քանակը կ'հաւասարեցնենք սոյն ա և Բ կէտերուն ու սոտացած շեղ դիրքովը գիծ մը քաշելով՝ նոյն գծէն կ'կարենք, որով զոյտ առաջամասը կ'բաժնուի երկու խոտոր մասերու, աջին վերի կողմը լայն և ձախին վարը:

Այժմ աստառին եղն Օ—Ֆ գիծ համարելով (Տե՛ս 278րդ օր.), աջ կողմի տիպարին ա—Բ խոտոր գիծը կ'հաւասարեցնենք սոյն Օ—Ֆ գծէն Դ հարմէդ զուգահեռարար լայնութեամբ ներսօք (Լաւ դիտէ 278րդ օր.), տիպարին բոլոր շուրջը փշանուակով կ'օրինակենք, ինչպէս նաեւ տիպարին սոյն մասին վրայ մնացած բուն կրծեղի տրամադրին մնացրութը՝ որ է Գ—Ե գիծը, ու բուրը շուրջը կարարաժիները ճգելով՝ աստառը կ'կտրենք (Խոչ դիտ 278րդ օրինակին վրայ գրած ենք, Ա.Զ ԿՈՂՄԻ Ա.ՍՏԱ.Ա.Բ.):

Հիմա ալ կ'առնենք ձախ կողմի խոտոր տիպարը և ասոր կրծեղին մնացրու ե—Գ տրամադրիծը կ'հաւասարեցնենք աստառին առէջի թելերուն ուղղութեանը (Տե՛ս 280րդ օր.): Յետոյ աջ կողմի տիպարին Դ—Ե ընդհատուած կրծամադրին առէջի անոր կողմի տիպարին Դ—Ֆ գծէն առէջի անոր կ'կրծելով՝ անոր փոքր մասին ա—Ե գիծը կ'բերենք ձախ

կողմի տիպարին միկնոյն տեղը, որով կ'ունենանք ուսածագին ամբողջն ու փողեղը (Տե՛ս 280րդ օրինակին մուլք սուերով մասը): Ապա, Դ և Բ կէտերը շեղ գծով մ'իրարու կ'միացնենք որով վերջնականապէս երեւան կուգայ ձախ առաջամասին ուրոյն կըրծեղը, ուրիէ գուրս Յ հարմէդի չափ զուգահեռաբար կ'աւելցնենք առբերանի բաժին որ է զ—Ե գիծը (Լաւ դիտէ 280րդ օր.): Այժմ փշանուակով կ'օրինակենք տիպարին բոլոր շուրջը, Դ—Բ գիծը, Գ—Ե—Գ գիծը որ բուն կրծեղին արամագիծն է, և մասնաւորապէս Ա—Ե—Բ խոտոր գիծը, որ յետոյ պիտի ծառայէ կոճակները կարելու ուղղութեան համար իրբեւ հիմնագիծ: Ուրեմն, բայց Պ և Վ բոլոր միւս կողմերը կարարաժիները ճգելով աստառը կ'կարենք (Լաւ դիտէ այս ամենը 280րդ օրինակին վրայ):

Եետուակողմի ձեւը բնաւ առնչութիւն չունի առաջամասին հետ, կրնայ այն կրինակողամասներով ըլլալ կամ արտաքին կերպար միակտոր. բայց երբ կարգը կուգայ առաջամասին կերպարը ձեւելու խնդիրը կ'փոխուի, որովհետեւ ինչպէս աստառին աջ ու ձախ կողմերը զատ զատ ձեւուեցան, նոյնպէս ալ վրայի կերպարաները. և մասնաւոր խնամք կ'պահանջեն, երբ մանաւանդիերպարը գծաւոր ըլլայ՝ քանի մը տարբեր գոյներու շարքով։

Արդ, համարենք թէ միակերպ գծաւոր կերպարով մը ձեւել կ'ուղենք. ուստի աջ կողմի աստառին վրայ նախապէս փշանուակով օրինակուած կրծեղին ընդհատուած արամագիծը՝ որ է Գ—Ե կ'հաւասարեցնենք կերպարին գծերէն մէկուն ուղղութեանը, գիտելով որ երկու կողմն ալ միեւնոյն աեսքն ունենայ (Լաւ դիտէ 279րդ օր.): բոլոր շուրջը խնամք կ'դերակարենք առանց մոռնալու աստառին ա—Բ գծէն մակենթակար մը անցնելը. յետոյ աստառին հաւասարութեամբը կերպարին աւելորդները կ'կտրենք. և այս կարգադրութեամբ փեղկին եղրը՝ այն է ա—Բ (և որ նոյնն է Օ—Ֆ) գծին հետ վերջացող կերպարին գծերը խոտոր վերջաւորութիւն մը կ'ունենան (Տե՛ս 279րդ օր.): Ճիշտ միեւնոյն զգուշութիւնը կ'ընենք ձախ կողմի կերպարին համար, այսինքն հիմա ալ ասոր աստառին վրայ փշանուակով օրինակուած Գ—Ե—Գ գիծը կ'հաւասարեցնենք կերպարի գծերուն ուղղութեանը, ուշադրութիւն ընելով որ աջ կողմի Գ—Ե արամագիծը կերպարին ո՛ր գծերուն հետ ու ինչ ներդաշնակութեամբ որ գտնուած է՝ նոյնը

ըլլայ նաեւ ձախ կողմի ՚ի—ե—զ տրամագիծը (Տե՛ս 280րդ օր.)։ Նոյն իսկ եթէ կերպասը բնաւ գիծ չունենայ, գարճեալ հոգ տանելու է որ երկու կողմի կրծեցրին տրամագիծը ալ կերպասին առէջի թելերուն հետ հաւասար գտնուին, որ յետոյ իրարու վրայ կոճկուած ատեն գոյները ներդաշնակ ըլլան։

Կ'մնայ ուրեմն շուրջը գերակարել ու աստափին հաւասարութեամբ կերպասին աւելորդները կարել։ Գլխառու պայմանն է նախագէս փշանուակով աստափին վրայ օրինակուած ա—ե—բ կողմանակի տրամագիծն մակենթակար մը անցնել որ նոյն գիծը կերպասին կողմէն աւենուի (լաւ դիտէ 280րդ օրինակը)։

Ասոր կարելու եղանակը բացառիկ հրահանգ մը չունի, ուստի առաջամասներուն սեղմօնները կ'գերակարենք ու կ'կցորդենք կողմանակուն, և ձախ կողմի զ—ե ասրերանցու մասը ՚ի—բ գծէն կ'շրջենք ներս ու ծալկուով մը կ'վերջացնենք։ Գալով աջ կողմի փեղին, որովհետեւ այս ձեւով կրցուն իրանազդեստներուն մասնաւոր հրապոյրն ընդհանրապէս մանր ու խիտ կոճակներով կոճկուաւելն է, և որովհետեւ օղակներուն սկզբնակէտերը պէտք է դանուին ա—բ խոտոր տրամագիծն վրայ (Տե՛ս 279րդ օր.)։ Ուստի իրեւ շրթունքի վերելեակի բաժեն՝ մակենթակարով ներկայացուած ա—բ խոտոր տրամագիծն ։ Հարմէդ զուգահեռաբար գէպի դուրս ձերով, նախագէս ասրերանի համար ձգուած ։ Հարմէդին (ինչպէս 278րդ օրինակը) ։ Հարմէդը կ'շրջենք գէպի ներս ու շուրթը ծալկարով մը աստափին հետ կ'հաստատենք ։ Եւ ահա տեղն է որ ըսկնք թէ ինչո՞ւ ա—բ գիծը աստափի եղերքին հետ ուղղվ դրինք (Տե՛ս 278րդ օր.)։ Վասն զի գիտնալով որ երեսի կերպասը շեղ պիտի վերջանայ, մէջի աստառն իրեւ սեղմերիզ ծառայէ որ չըզդի։ Եթէ օձիքին միացումը հագագին վրայ ըլլալ կ'ուզուի, այն ատեն ուսին ա կէտէն մինչեւ ուլնոտորն ու անկից ալ մինչեւ հագագը ձգուած կարաբաժինները կ'շրջենք ներս ու նեղ ասրերանով մը կ'ծածկենք։ Իսկ եթէ օձիքն ուլնոտորին վրայ միանալ կ'ուզուի, այս պարագային՝ միայն ուսին մասի կարաբաժինը ներս շրջելու է։ Եւ ձախ կողմի փողովին առանձնակի նեղ օձիք մը կցելու է, որ ներքեւէն խայս շտայ։

Կ'մնայ օղակներու մասին վերջին ինդիր մը, այն է թէ, առաջին օղակը ա կէտէն 1½ հարմէդ վարօք նշանակելէ ետք,

իւրաքանչիւր օղակին միջոցը 2½ կամ Յական հարմէդ հեռաւորութեամբ և ուսածաղին հետ զուգահեռական դիրքով նշանակելով (լաւ դիտէ այս ամենը 279րդ օր. վրայ) կ'իջնենք մինչեւ այն տեղ՝ ուր այլեւս օղակին երկայնութիւնը (որ կոճակին մեծութեան համեմատ թերեւս ըլլայ 1½ կամ 2 հարմէդ)։ Կ'հասնի սեղմօնի կարին, ալ կ'զադրեցնենք, որովհետեւ խոհեմութիւն չէ որ սեղմօնին կարը կտրելով օղակին մէկ մասն անոր սահմանէն անդին անցնենք. ուստի մինչեւ վարի ծայրը տակաւին քառնի հատ օղակի միջոց որ կ'մնայ, այնքան կոճակը վրան կ'կարենք (Խնչպէս որ 279րդ օր. վրայ 2 կոնակ կ'երեւայ), և անոնց ներքեւը կ'հաստատենք զսպանակ կոճակներ կամ փոքր ձարմանդներ ու փոխադարձն ալ ձախ կողմին վրայ կ'պատրաստենք։ Այս վերջին միայնակ կարուած կոճակներն առանց օղակի ըլլալով միւսներէն տարբեր ու լերկ չերեւալու համար օղաթերով երեսի կողմէն կեղծ օղակներ ալ կրնայ շինուիլ։

Մրածայր իրանազգեստներու պատշաճութեան համեմատ՝ վարի շուրթը խաւակտաէ պնդածուէն մը դնել, կիտոսկրներ հաստատել, գօտեպինդը կցել և վերջնական արդուկն ալ ընելէ ետք, ձախ կողմի կոճակները ճշտութեամբ կարելու համար՝ արդկատախտակ կամ լայն քանակ մասներով կ'գնենք իրանազգեստին մէջը։ Նախ ձախ կողմի առաջամասը կ'ծածկենք անոր վրայ, և աջ կողմի փեղկը՝ այս վերջինին վրայ։ յետոյ փեղկին ա կէտը կ'հաստատրեցնենք ձախ կողմի ա կէտին և օղակներուն սկզբնակէտերը կարգաւ կ'բերենք ձախ կողմի ա—ե—բ մակենթակարին վրայ ու մանր մանր կ'զերակարենք մինչեւ վարի ծայրը որ նախնական դգուշութեանց չնորհիւ երկու ծայրն ալ պէտք է ճիշտ վերջանան։ Հուսկ յետոյ, մատիտի մը ծայրովն ամէն մէկ օղակի սկզբնակէտէն վար մէջ մէկ կէտ նշանակելով՝ դերակարը կ'քակենք ու մակենթակարին ուղղութեամբը և կէտերուն հեռաւորութեամբը կոճակները կ'կարենք. եթէ օձիքը հագագին գէմ կ'միանայ, փոքր ճարմանդ մալ կ'կարենք ուլնստորի անկիւնին շրջօնը

* *

ԶԱՆԱԶԱՆ ԶԵՒԵՐՈՎ ՇԵՂ ԿՈՃԿՈՒՈՒԵԼԻՔ ԻՐԱՆԱԶԴԻԵՍՆԵՐ
 Կրնայ ըլլալ որ աջ կողմի փեղկին ծայրը ձախ տիգուզողէն սկսելով՝ արտակարգ չեղութեամբ մը իջնէ մինչեւ աջ կողմի Ա. սեղմօնին ստորոտը (Տե՛ս 284րդ պատ.). կամ ուսածագի լայնութեան այս կամ այն աստիճաններուն վրայ գտնուի :

Թերեւս իւրաքանչիւր օղակներուն դիմաց կիսաբոլորակ դրասանքներով շինել ուզուի (Ինչպէս 284րդ պատկերը):

Շատ անգամ հաստ կերպասէ թիկնազգեստներ ալ չեղ կը կոճկուին, ու թերեւս այս վերջինները մէկ սեղմօնով շինել ուզուի. այն տաեն պարզ առաջամասի տիպար պատրաստելով՝ Դ և Զ կէաերը հաւասարեցնելու է կրկնատակ թուղթի ծալքին, ու գօտեվայրէն ուղղահայեացարար մինչեւ թղթին ծալքը մնացած անջառութիւնը (ու ներկայ պարագային Յ հարմիգի. չափ կ'ըլլայ,) փոխադրելու է սեղմօնին մէջ. նոյնպէս ալ քալրթին վրայ գտնուած բացութիւնը (ծիս Ժ. սախտակի Յերդ օրինակին Հ—Ղ—Ն ցրազնով սեղմօնին նման՝ բացի կրծեզրին դրուած Զ—Ն—Ո մեղմ վեսկոր ձեւեն): Մոռնալու չէ նաեւ թիկնազգեստին վերաբերեալ սա ու նա կողմին ընդարձակութեան բաժինները. և բնականարար թիկնազգեստները խիտ կոճակներով չեն շինուիր, ու այս առթիւ ալ փեղկին ձեւը կրնայ քանի մը վէտ վէտ անկիւններով զարդարուիլ (Տե՛ս 277րդ օրինակին ա, բ, գ եւ բ անկիւնները): Թերեւս Խ, Ը, գ և բ անկիւններով կազմուի (Ինչպէս 283րդ պատկերին ձեւը): Թերեւս Ծ, Ը, գ և բ անկիւններով կազմուի: Թերեւս կէս փողեզրէն դէպի հ կէտին դիմաց բերուի, յետոյ Ա. սեղմօնին ցցունն ու վերջն ալ մինչեւ բ կէտ: Թերեւս հագագէն սկսելով խոտոր փեղկ ձեւացնել ուզուի:

Թերեւս ձախ ուսին կէսէն (կամ սա ու նա աստիճաններու վրայէն) իջնէ մինչեւ կրծեզրին ստորոտը (Ինչպէս 481րդ պատ.). կամ թերեւս փեղկը վերէն ի վար բոլորովին ուղիղ գծով մը իջնէ ու թերեւս պօլեր ըլլայ, նոյն իսկ առաջակողմն անկունով: Բոլոր այս պարագաներուն, պէտք չկայ կրկին առաջամասով տիպար ձեւացնել. այլ եթէ կաչուն իրանազգեստի համար է, գրեթէ քովէն կոճկուուելիք ձեւին նման, այսինքն ձախ կողմի առաջամասը կ'առնենք ճիշտ Դ—Զ—Ն—Բ ուղիղ կրծեզրով ու Ա. սեղմօնն ալ ընդարձակուած տիպարը (Տե՛ս Խ. սախ. 271րդ օր.).

իսկ աջ կողմին համար նոյն տրամագծէն դէպի դուրս կ'ձգենք փեղկին լայնութիւնը, զայն ծալելով ու ներքեւն օրինակելով փողեզրին և ուսին ձեւերը: Միշտ քովէն կոճկուուելիք հագուստին պէս ասոր ալ աջ կողմի տրամագծին ու ձախ կողմի եղրին ճարմանդ և լամբակ կարելու է: Եւ յետոյ փեղկին համար արտաքուստ կոճկուուելիք զարդ կոճակները շարելու է:

Եթէ պօլերօի ձեւ ու անկունով պիտի ըլլայ, մոռնալու չէ որ Զ կէտը կրծեզրի արամագծէն Ա^{1/2} հարմէդ հեռու դնելու է և սեղմօններ ալ կազմելու պէտք չմնար:

Փ Ա Ս Փ Փ.

«Ժ Ի Կ Օ» Թ Ե Ի Ե Բ

(Տե՛ս Խ. սախտակ 285ին մինչեւ 293րդ օրինակները)

Ժիկօ կ'անուանուի այն թեւը որուն տիգի կողմը ուռուցիկ ու հետղհետէ դէպի արմուկին վրայ նեղցած և մինչեւ դաստակ բոլորովին կաչուն ձեւ մ'առած կ'ըլլայ (Տե՛ս 286րդ պատ.): Ժիկօ անունն առած է խոզի կամ ոչխարի զատի ձեւ մ'ունենալուն համար (լաւ դիտէ 286, 288, 290, 292 և 293րդ պատկերները):

Ինչպէս սոյն գլխու Ա. դասով յիշեցինք, Ժիկօ թեւն առաջին անգամ ծագում առաւ շուրջ 10—12 տարի առաջ և 2—3 տարի մեծ թռիչ մ'առնել ու անցնելէ ետք, սա վերջին ժամանակներս վերստին երեւցաւ ու դարձեալ զանազան պէսպիսութիւններով ի գործ կ'գրուի, անխատիր ամէն կերպ հագուստի ալ կցելով: Նախ բացատրենք ուրեմն անոր ամէնէն հիմնական ձեւն ու յետոյ անցնինք զանազան պէսպիսութիւններուն:

* *

«Ժ Ի Կ Օ» Թ Ե Ի Ի Ն Ա Մ Ե Ն Ե Ն Ծ Ա Ն Օ Թ Զ Ե Ի Լ Կ Ե Ր Պ Լ

Նախ պարզ թեւի մը տիպարը կ'չինենք, այնպէս որ ի և կէտերը միանան Ծ կէտին վրայ. և եթէ սուկանի, պօլերօի կամ հանդիսական իրանազգեստի համար է, ընդհանրապէս դաստակն ալ փեռեկով կ'չինուի՝ որպէս ժիկօի նմանութիւնը կատարեալ կ'ըլլայ (Ինչպէս Խ. սախտակի 159րդ օր.): Սա ալ դիտնալ պէտք է թէ եթէ ձեռքի տակ պատրաստ ունինք հակեալ թեւի մը տիպարը,

դարձեալ միեւնոյն նպաստակին կ'ծառայէ՝ բաւական է որ անոր ալ դաստակը փեռեկով շինելու ձեւին վերածոի (ի՞նչտես 84 էջի զիտելիքին երկրորդ հատուածովը բացատրեցինք):

Ապա, գիտնալ պէտք է թէ թեւերուն վերի կողմը մեծ ու ուսցիկներով շինուած ատեն ընդհանրապէս հագուստին ուսի (այնութիւնը բնականէն նեղ կ'շինուի. ինչպէս Բ. գլխու Ե. դասի երկրորդ հրահանգով բացատրեցինք (Տես 82 էջ, եւ Ժ. եւ Ժ. Տախտակիներուն 45, 47 եւ 51րդ օրինակները). գործին պահանջըն ու ժամանակին նորաձեւութեան համեմատ 4րդ և 5րդ չափերը 1, 1½ և մինչեւ 2ական հարմէդ նուազ դնելով՝ անթաճրին վերի կողմը նեղցնելու է. ու թեւին արպարը (կամ մէջի աստառը) ձեւուած ատեն ալ Դ և Լ կէտերէն դուրս աւելցնելու է նոյն 1, 1½ կամ 2ական հարմէդները (նիւս Ժ. Տախտակի 51րդ օրինակին վերի կողմը մուր սուլերով ներկայացուած յաւելուածին նման. բէ եւ մենք «Ժիկօ» բեւերուն տիպարները սովորական ծեւովը գծած ենք, այն պահառաւ որ գծագրեալ օրինակները չինոլուինք):

Սրդ, չափազանց ընդարձակ ժիկօ թեւ մը շինելու համար, մակաթեւի տիպարին Ե կէտը կ'հաւասարեցնենք կերպասին եղրէն մէկ կարաբաժին ներսօք և Զ կէտը 8 հարմէդ հեռու. իսկ Դ կէտը՝ կերպասին գագաթէն 16 հարմէդ վարօք (Տես 285րդ օր.). այս երկու վերջին կէտերուն կարաբաժիններն ալ զատ հաշուելով՝ Տիպարին ստացած սոյն խոսոր դիրքին մէջ՝ կ'օրինակինք ծղակարին դաստակի մասը՝ այն է Ը-Ե գիծը. յետոյ գնդասեղ մը կ'ցցենք Ը կէտին վրայ և տիպարին Զ կէտը կ'գարձնենք դէպի կերպասին եղրը՝ մինչեւ որ 1 հարմէդ կարաբաժինը մնայ, և հիմա ալ կ'օրինակինք Զ-Ը և Զ-Դ գծերը, ու տիպարը կ'բերենք դարձեալ նախկին դիրքին մէջ, որով կերպասին վրայ յառաջ կուգոյ Զ-Ը և Դ-Զ գծերը (Տես 285րդ օր. ուր սոյն Դ-Զ զիծը կէտ կէտ ցուցուցած ենք). Այժմ ենթաթեւին տիպարն առնելով, (եթէ ասոր համար զատ տիպար կտրուած չէ, այն ատեն մակաթեւին ստացած վերջին դիրքին մէջ ամբողջ շուրջը կ'օրինակինք՝ ու զայն ենթաթեւի վերածելով, այսինքն մակաթեւին վերաբերած մասերը կտրելով՝ կ'ունենանք ենթաթեւին տիպարը.) ասոր Ժ կէտը կ'կցենք մակաթեւի Ժ կէտին և Շ կէտը Շ կէտէն 1 հարմէդի չափ հեռու. որով 2 տիպարնե-

րուն արմակարին վարի կողմերուն կոր ձեւերը մաս մ'իրարու վրայ կ'ելլեն և ենթաթեւը րոլորովին խոտոր դիրքով մը կ'հատի դէպի կերպասին լայնութեան աստիճանին վրայ՝ Լ-Ծ և Ի-Ծ' գծերը եռանկիւնաձեւ անջատութիւնը մը կազմելով (Տես 285րդ օր. տիպարներուն ստացած դիրքը որ ներկայացուցած ենք պարզ սուլերներով): Աղա, մակաթեւին Դ կէտէն հորիզոնական ուղղութեամբ և կերպասին գագաթէն մէկ կարաբաժին վարօք Դ' կէտը Ճառելէ ետք, վերջնականապէս կ'օրինակինք թեւբերանը՝ որ ընդհանրապէս երկու տիպարները միատեղ շեղ դիրք մը կ'առնեն, որոնք են Ե-Ծ-Ծ-Ե գծերը. ենթաթեւին ծղակարը, որ է Զ-Ը-Ե' գիծը, ենթաթեւին անթատակի կորութիւնը՝ որ է Զ-Ի գիծը և Ի գիտէն գէտի Դ' կէտը երթալու համար նախ ի կէտէն 8-10 հարմէդի չափ հորիզոնական գծով մը դէպի վեր կ'ելլենք ու տակաւ մէդի չափ հորիզոնական գծով մը դէպի վեր կ'երթանք մինչեւ Դ' կէտ առ ատկաւ ընդարձակ կորութիւնով մը կ'երթանք մինչեւ Դ' կէտ և անկից ալ կ'հակինք մինչեւ Զ' կէտ, այնպէս որ սոյն Ի-Դ-Զ' և անկից ալ կ'հակինք մինչեւ Զ' կէտ, այն է Դ' կէտէն գէտի Զ' կէտ երթալու մասը՝ այն է Դ' կէտէն գէտի Զ' կէտ երթալու մասնակ՝ մտու մը տեղ Դ'-Զ' օրինակուած գծին դրսէն անցնի:

Այժմ պարագայ մը կայ զոր ճշտելն անհրաժեշտ է՝ այն է թեւբերանի լայնութիւնը, որ ուղեցինք գաստակի վեռեկով ընել. մի՛ գուցէ տիպարին պատրաստութեան ժամանակ հաշուական մի՛ ախալ մը տեղի ունեցած ըլլայ. ուստի դաստակի ծիրը, որ է սիսալ մը տեղի ունեցած ըլլայ և մեծութիւնն է 16 հարմէդ, որ պէտք է հա-15րդ կրկին չափը և մեծութիւնն է 16 հարմէդ, յետոյ շուրջը մէյ ստամ ըլլայ Ե-Ծ-Ծ-Ե' գիծը (Տես օրինակը). յետոյ շուրջը մէյ մէկ հարմէդ կարաբաժին ձգելով կերպասը կ'տրենք, ճիշտ այս պահուն է որ Ե և Զ' կէտերը կ'հանգին կերպասին եղրին և Դ' պահուն է որ Ֆ և Զ' կէտերը կ'հանգին կերպասին եղրին և Զ' կէտ առ Դ-Ծ-Ծ-Դ գիծը (Տես դիտէն կէտը ա-Դ' ուղղահայեաց գծին (այն դիտէն օրինակը): Միեւնոյն կէտը ա-Դ' ուղղահայեաց գծին (այն դիտէն օրինակը): Միեւնոյն ատեն մոռնալու չէ ենթաթեւին դաստակին վեր և ծղակարին գէտ գրեթէ 4 հարմէդ լայնութեամբ վեռեկի բաժին մը ձգել. վեռեկին գրեթէ 4 հարմէդ լայնութեամբ չամար, ափնածրի մեծութիւնը՝ բարձրութիւնը չափաւոր ըլլալու համար, ափնածրի մեծութիւնը՝ այն է 15րդ չափը որ 22 հարմէդ է՝ թեւբերանէն գէտի վեր որ այն է 15րդ չափը որ 22 հարմէդ է՝ թեւբերանէն գէտի վեր որ աստիճանին վրայ որ հաւասարութիւնը կ'անուանենք Ք-Փ, և ահա սոյն Փ կէտէն 4 հարմէդ դրսօք ա-Դ ուանենք Ք-Փ, և ահա սոյն Փ կէտէն 4 հարմէդ դրսօք ա-Դ զուգահեռական լայնութեամբ կ'ձգենք կոճակափեղի բաժինը (այն զուգահեռական լայնութեամբ կ'ձգենք կոճակափեղի բաժինը (այն դիտէն 285րդ օր., ուր կերպասը գծաւոր յաւակով ներկայացուցած ենք), դիտէն 285րդ օր., *

b P b P *h U P b h o P* *g P s b l P*

Առաջին. — Գիտնական պէտք է թէ միակտոր ժիկօ թեւին ամէնէն փոքր ծաւալը Դ կէտէն վերը 12 հարմէդ կ'ըլլայ և ասոր կէսին շափ ալ Զ կէառ կերպասին եզրէն խոսոր, որ է 6 հարմէդ. հետեւապէս միջին աստիճանով շինելու համար 14 և 7, և ամէնէն ընդարձակին ալ 16ով 8 հարմէդ (Տե՛ս 285դ օրինակ ուր նշանակած են 12ին մինչեւ 16 եւ նեն մինչեւ 8 հարմէդ): Այս թիւերէն աւելի փոքր ժիկօ ձեւացնելու համար մակաթեւն ու ենթաթեւը զատ զատ ձեւել պէտք է. ինչպէս պիտի տեսնուի յաջորդ դասի մէջ:

Երկրորդ. — Ժիկօ թեւին պատշաճութիւնը գաստակէն մինչեւ արմուկ և նոյն իսկ քիչ մ'ալ գէպի վերը կպչուն բլալն է. ուստի եթէ հագնողին ծղին նիհար կազմով է, Ծ և Ծ' հէտերն ալ իրարու կից կրնայ գրուիլ, որով արմակարին Ծ—Ժ և Ծ'—Ժ գծերուն կորութիւնները զգալի կերպով իրաբու վրայ կ'ելլեն, հետեւապէս բազուկը մսոտ եղող կազմերուն համար թեւին սոյն մասը նեղ պիտի դայ. որուէ բոլորովին զգուշանալու է:

Երրորդ. — Փիկօ թեւն եթէ վրանոց հագուստներու համար շինել կ'ուզուի, ինչպէս են թիկնոց, կրկնոց, արտազգեստ. ևն. այն ատեն լայնութենէն ու երկայնութենէն ընդարձակութեան բաժիններ ձգելու է: Արդ, լայնութենէն ընդարձակութեան բաժին ձգելու համար ենթաթեւին Ծ' կէտը մակաթեւի Ծ կէտէն փոխանակ 1 հարմէդ անջատ դնելու՝ Յ—Յ $\frac{1}{2}$ հարմէդ անջատ կը դնենք և Ժ' կէտն ալ Ժ կէտէն Յ—Յ $\frac{1}{2}$, փոխանակ իրարու կից դնելու. որպէս թեւին լայնութիւնը Յ—Յ $\frac{1}{2}$ հարմէդ զուգահեռաբար լայն չինուած կ'ըլլայ, որպէս զի կարենայ ներքեւի սուկանին կամ պօլերօին թեւը պարփակել: Նոյնպէս ալ թեւբերանը Յ—Յ $\frac{1}{2}$ հարմէդ զուգահեռաբար երկայն կտրելուն է, Միեւնոյն ատեն սա՛ ալ գիտնալ պէտք. Ե թէ վրանոց հագուստներու համար թեւբերանը դաստակի չափին ալ վերածելու պէտք չկայ, քանի որ փեսեկով կոճկուուելու աստիճան նեղ շինել չպատշաճիր, միայն թէ այս պարագային ծղակարին վարի կողմը խոտորել պէտք է (Ասոր նրահանգը ՏԵ՛Ս յաջորդ դասի երկրորդ նրահանգը Եւ ԽԶ. Տախտակի 295րդ օրինակը): Նոյն իսկ թեւբերանը պատառակ ալ կրնայ դրուիլ:

Եզրակացութիւն . — Ներկայիս մէջ ժիկօ թեւին վարի կողմն իր նախկին պարզութեանը մէջ չնաց . թեւբերանը զանազան դրասանքներ շինուեցաւ , պատմառակ կցուեցաւ , կարամէջ ու ժանեակ կարուեցաւ , աստիճանաբար կարճ շինուեցաւ՝ նոյն իսկ մինչեւ արմուկ . որովհետեւ հագուստին թեւերը կարճ ու բազուկներուն մերկութիւնը ծածկելու համար ալ երկայն ձեռնոց կրելը շատ նորածեռութիւն եղաւ , եւ սակայն այս ամէնը յոյժ դիւրին է մեր ներկայացուցած օրինակներուն վրայ ձեւագծել , բաւական է որ նորածեռութեան նկարները դիտուած ատեն քիչ մը ուշիմութիւն ի գործ դրուի :

Քանի մը նորութիւններ ալ զերի կողմին վրայ տեսառուցան,
որ ի կարգին պիտի ներկայացնենք։

• •

«ԺԻԿՈ» ԹԵՒԸ ԿԱՐԵԼՈՒ ԿԵՐՊԸ



Ճիկո թեւն աստառով և առանց աստառի ալ կրնայ ըլլալ, առաջին կերպով ուղուած ատեն, տիպարներուն մեծութեամբ աստառները կ'կտրենք. չմոռնալով սակայն ենթաթեւի ծղակա- րէն ձգուելիք փեռեկի բաժինները: Արմուկը կ'կարենք և կեր- պասի լրջօնին կողմը ճածկելով, մակաթեւին ծղակարը կ'դերա- կարենք կերպասի նոյն եղրին, այս վերջինին գողաւոր ձեւը կարենք կերպասի ետ. ինչպէս նաեւ թեւրերանն ու ենթաթեւի ծղա- մղելով գէպի ետ. ինչպէս հաւասար դիրքով մը կ'դերակարենք: Յետոյ ծղա- կարին եղրերը հաւասար դիրքով մը կ'կարենք, թեւրերանի կարը կցորդելով՝ չորս եղրերը միատեղ կ'կարենք, թեւրերանի կարաբաժինը կ'ըրջենք ներս, Յ—Կ հարմէդ լայնութեամբ առքե- րանով մը կ'ժածկենք, նոյն պէս մակաթեւին փեռեկի եղրը. այս մատերը լաւ մ'արդուկելէ ետք, երկու զապանակ կոճակներ կա- րելով՝ կ'ըրջենք երեսի կողմը:

Այժմ կարգը կուգայ կերպասին վերի կողմի մտութիւնը կարգադրելու, որ կըլլայ երեք կերպով, որոնք են փոթփոթելով, բազմածալերով, կամ ցցունը հակածալով։ Այս երեք կերպով, սահմանն է մակաթեւին ծղակարէն՝ այն է պերուն ամփոփելու սահմանն է մակաթեւին ծղակարէն՝ այն է Զ կէտէն Զ հարմէդ վերօք սկսիլ ու շարունակուիլ մինչեւ կրկնակողամասին Ց կէտը, և հագուստը մէկ կողամասով եղած ատեն ալ կողնաւարտի կէտին դէմ։ Հետեւապէս եթէ փոթփոթելու կերպ

պովը կ'ուզուի, այն ատեն Զ կէտէն Զ հարմէդ վերէ սկսելով՝
կերպասին շուրթը մանր շուլլալ մը կ'ընենք մինչեւ ենթա-
թեւին այն աստիճանը՝ որ նախապէս անթատակին հետ չափե-
լով ու կրկնակողամասին միացած կարի աստիճանը նշանակած
ենք. թելը աստիճանաբար կ'կծկենք, մինչեւ որ կերպասին ըն-
դարձակութիւնն ամփոփուելով հաւասարի աստառին մեծութեան.
այն ատեն թելը կ'հասուատենք, և հիմա ալ փոթելը սահման-
ուած տարածութեանը վրայ աստառի շուրթին հետ կ'գերա-
կարենք (Տե՛ս 293րդ պատկերին Երեւոյը). և այլ եւս պատրաստ
է անթածրին կցորդելու: Միայն գիտնալ պէտք է թէ աստառի
մակաթեւին սեփհական աւելորդը իրեն պատկանած տեղին վրայ
ամփոփելու ժամանակ (Տե՛ս 94 էջի վերջին հատուածը) բնականա-
բար կերպասին փոթերն ա'լ աւելի կ'խոտանոն:

Իսկ միւս երկու կերպերուն համար խնդիրը կ'փոխուի. որով-
հետեւ. նախ աստառին աւելորդն իրեն պատկանած սահմանին չափ
տեղի վրայ՝ մանր շուլլալով մը առանձինն հաստատելու է, որ
յետոյ կերպասին բազմածալերը կոմ հակածալը պաստումներ
չունենան:

Արդ, եթէ ծիկօ ձեւը միտկերպ բազմածալով կ'ուզուի ներ-
կայցանել. այն ատեն առաջին ծալը պէտք է սկսիլ Զ կէտէն Զ
հարմէդի չափ վերօք և առաջակողմին վրայ հակած ըլլայ, ու
միւսները 3—3½ական հարմէդ լայնութեամբ շարունակելու է
մինչեւ կրկնակողամասին միացած կէտը (ու եթէ հազուստը մէկ
կողամասով է՝ անոր կէսին դէմ, և եթէ բնաւ կողամաս չներ-
կայցնէր, այն պարագային ալ յետոակողմին վրայ՝ անթատակի
հաւասարութենէն 2—3 հարմէդի չափ վերօք): Բայց թէ որ մի-
կօին մասը անթածրին կցուելիք սահմանին երեք անգամին հաւա-
սար ծաւալ չունենայ, բազմածալերուն երեսի լայնութիւնները
միակերպ ցուցնելու է ու ներքեւի կոտրուածքները փոքր առ փո-
քր նուազ. հակառակ պարագային ալ ներքեւի ծալերն աւելի
խոր ձեւացնելով՝ մէկը միւսին վրայ հանելու է. բաւական է որ
երեսի կողմը համաչափ լայնութիւններով 5, 6 կոմ 7 բազմա-
ծալեր կազմուին: Այս ա'էն կանխահոգ կարգադրութիւններն
ընել ու աստառին հետ դերակարելէ վերջ՝ կցորդելու է ան-
թածըրին:



իսկ եթէ տիգուսյօդին դէմ՝ երեսի կողմը հակածալ մը ձեւացնել ու մնացածն ալ երկու կողմին վրայ երկերկու (կամ երեքական) ծալերով կ'ուզուի. նախորդ հրահանգին համեմատ ենթաթեւը կ'կցորդենք անթատակին, որ է Զ կէտէն Չ հարմէդ վերոք դէպի մակաթեւը շարունակելով ու յետուկողմն ալ մինչեւ կողանջատի կէսին, Յետոյ երբուժի վերի կողմին վրայ՝ ուսին մակերեսը հաստատով բռն տիգուսյօդին կէտը կ'ձշոենք, որ ուսի կարէն Չ հարմէդ դէպի առաջակողմ կ'գանուի, զոր անուանած ենք կ'կտ (Տե՛ս Լ. Տ. ասխ. 173րդ օր): Ապա, մակաթեւի աստառին սեփհական փոթը չուլլել (լու եւս է ոլորակալով կծկել որ չշորժի) ու անթածրի վերի մասին հաւասարեցնելով, սոյն աստառը դարձեալ անթածրի վերի մասին հետ կ'չափենք ու կ' կէտը կ'օրինակենք ասոր վրայ. Ապա ուրեմն, կցորդուած երկու կէտերն իրարու բերելով, մակաթեւի կերպասին մնացած տարածութիւնը կէս կ'ընենք և նոյն կէտը կ'կցենք աստառին վրայ նշանակուած տիգուսյօդին, 21/2 կամ Յական հարմէդով երկու կողմին վրայ մէյ մէկ ծալ կ'կազմենք, որպէս զի երեսի կողմը 5-6 հարմէդ լայնութեամբ հակածալ ներկայացուի. և մնացածներն ալ երկերկու ծալերու բաժնելով, նախ կ'գերակարենք աստառին հետ (Տե՛ս 286րդ պատ. որուն զազարին վրայ սեւ կեսով մը ցուցուցած ենք հակածալին կեդրոնը՝ որ է բուն տիգուսյօդի կէսը, այսին և՛ կէսը՝ ինչպէս Լ. Տ. ասխակի 173րդ օրինակին վրայ ալ այսին և՛ կէսը՝ ինչպէս Լ. Տ. ասխակի 173րդ օրինակին վրայ ալ կ'սեսնուի). և յետոյ ամէնը մէկանց կ'գերակարենք անթածրի վերի մասին, շուրջը կ'կարենք, կարարածինին կէսը յալդարելով, և ապա նախապէս ներքեւը դրուած լոթերիզը շուրջը պատելով կ'խծապենք:

Եթէ թեւին մէջն աստառ չըլլայ. վերը յիշուած երեք կերպին համար ալ շատ աւելի դիւրին է, քանի որ կերպասը միայն անթածրին հետ պիտի կցորդուի և մակաթեւի աստառին աւելորդը նախապէս կծկելու տալուու կը չկայ:

Իսկ եթէ միկօ թեւը վրանոց հագուստի համար կ'պատրաստուի, մէջի աստառն ալ ճիշտ իր նմանը պէտք է կտրել՝ միայն վերի եզրը 11/2 հարմէդ երկայն. և անթածրին կցորդելու ժամանակ՝ կերպասն առանձին կորելու է ու աստառը յետոյ խծապելու է. երեսի կերպասին յար և նման, այսինքն փոթով, ծալով կամ հակածալով:

* *

«ԺԻԿՈ» ԹԵՂԻ ԾՂԱԿԱՐՈՒՆ ՎԼՇԻ ԿՈՉՄԱՆ ԽՈՐՃԻՈԾՇԱՆ, ԶԵՒԱՅՆԵԼ

Կընայ ըլլալ որ ժիկօ թեւի ծղակարին վերի կողմը խորշ-խորչան ձեւացնել ուղուի (Տե՛ս 288րդ պատկերը) :

Արդ, սովորական ժիկօ թեւին ձեւելու կերպը գիտնալէ ետք՝ շատ դիւրին է զայն խորչխորշանով յօրինելը. բաւական է միայն նախապէս մակաթեւի տիպարին Զ կէտը կերպասին եղրէն 13—14 հարմէդ հեռու դնել փոխանակ 6—8 հարմէդ դնելու. իսկ Դ կէտը գրեթէ անփոփոխ կերպով՝ 16 կամ առառաւելն 18 հարմէդ կերպասին գագաթէն վարօք դնելը։ Յետոյ գնդասեղը Ը կէտին ցցելով՝ տիպարին Զ կէտը դառձնելու ժամանակ՝ փոխանակ մինչեւ կերպասին եղրին տանելու, դարձեալ 8 հարմէդ կ'խոստորենք և ընդհանուր եղանակին համեմատ Զ—ա գիծն ու միւս կողմերը ձեւագձելէ վերջ. Համարենք թէ մակաթեւին Զ կէտէն 3—5 հարմէդ վարօք երեք հաս խորչխորշան կազմել կ'ուզենք, որոնց իւրաքանչիւրին խորութիւնն ըլլոյ 2½ական հարմէդ, ուրեմն $3 \times 2\frac{1}{2} = 7\frac{1}{2}$ կ'ուլլայ և ասոր կրկինը կ'ընէ 15 հարմէդ. Հետեւապէս մակաթեւի Ը—Զ գծին բնժացքը կ'շարունակենք 15 հարմէդ դէպի վեր (Տե՛ս 287րդ օրինակ), որ կ'հասնի կերպասի եղրին (անշուշտ մէկ կարաքաժին ներաօք) ու կ'կազմուի Զ” կէտը։ Հիմա ալ Ի—Զ գծին գրեթէ կէս եղած կէտէն մեղմ կոր գիծ մը կ'քաշենք մինչեւ Զ” կէտ (Տե՛ս 287րդ օրինակ, ուր սովորական «Ժիկօ» թեւին վրայ եղած սոյն լաւելուածք տարբեր սոււերով ներկայ սգուզած են):

Ասոր կարելու կերպն ալ ձիչտ նախորդին պէս է, միայն մակաթեւին ծղակարը աստառին հետ գերակարելէ առաջ խորշանները ձեւացնելու է (ի՞նչպէս 287րդ օրինակին վրայ՝ երեք խորշանք ձեւացնելիք սա ×. նունակիերը կ'երեւան): Եթէ թեւին մէջ աստառ ըըլլայ՝ խորշանները ձեւացնել ու կցորդելու է ենթաթեւի ծղակարին:

Ասոր ալ վերի շուրթը նախորդ երեք կերպերով ալ կ'ըլլայ, իսկ մենք հակածալով ներկայացուցինք ((Տիգ 288րդ պատկեր :)

ՄԻԱՅՆ ԱՌԱՋԱԿՈՂՄԻ ԾՂԱԿԱՐԸ ՓՈԹՓՈԹՈՒԽԾ «ԺԻԿՈ» ԹԵՇ

Այս թերւը կրնայ սիլուռն ըլլալ (Տե՛ս 290րդ պատ) եթէ մետաքսեղէն կամ բարակ բըդեղէն կերպարաներով ու մէջն աստառով

ըլլայ : Արդ . նախ պարզ թեւին տիպարներովը բռն ծիկօ թեւի մը թղթէ տիպարը կ'չինենք և առանց կարաբաժիններ ձգելու շուրջը կ'կարենք : Յետոյ Զ և Զ' կէտերէն 4—5 հարմէդ վարօք ուղիղ գիծ մը կ'քաշենք որ է ա—բ (Տե՛ս 289րդ օր.), ինչպէս նաեւ փեռեկի բարձրութեամբն ու թեւբերանին զուգահեռական գիրըովը կ'քաշենք գ—դ անունով ուղիղ գիծ մը . և տիպարն այս գծերէն կարելով կ'բաժնենք երեք տարրեր մասերու : Այժմ կ'փոխադրենք զանոնք կերպասին վրայ՝ բ կէտը կ'կցենք իրարու, իսկ մէջտեղի մասին ա' անկիւնը վերի մասին ա անկիւնէն 15 հարմէդի չափ կ'անջատենք (Տե՛ս 289րդ օրինակ) : Հիմա ալ թեւբերանի մասին դ կէտը հաւասար կ'պահենք ու գ' անկիւնը գ անկիւնէն 10 հարմէդի չափ կ'անջատենք . որոնցմազ մակաթեւին ծղակարը 25 հարմէդի չափ կ'երկարի . մինչդեռ ենթաթեւին ծղակարը կը մնայ միեւնոյն երկայնութեամբ : Այժմ թեւբերանը, փեռեկի մասը, ենթաթեւին դ—բ—Զ' գիծը և վերի տարածութիւնն իրենց ստացած դիրքին համեմատ կարաբաժիններովը կ'օրինակենք : Գալով մակաթեւի ծղակարին՝ բռն ինդիրն ասոր ձեւը տալուն վրայ է . ուստի տիպարին Զ անկիւնէն մէկ կարաբաժին դրաք մեզմ կոր գիծ մ'ակեւով՝ կ'իջնենք 3 հարմէդի չափ լ կէտին դիմաց և հեմայ ալ մեզմ վէտկոր գծով մը կ'միացնենք Ե կէտէն մէկ կարաբաժին դուրս . այնպէս որ տիպարին ա անկիւնը եռանկիւնաձեւ շէզօք կ'մնայ և գ' անկիւնը կերպասին հետ գտնուած կ'ըլլայ . և վերջապէս մակաթեւին ու ենթաթեւին ծղակարերն իրարու հակառական ձեւեր կ'առնեն՝ սուածինը երկայն վէտկոր դիրքով մը կ'վերջանայ և վերջինը բեկրեկ ու գողաւոր ձեւով մը (Լա՛ դիտէ 289րդ օրինակին գծաւոր սուերով ներկայացած կերպասին շրջագծերուն ձեւերը) : Այժմ քանի որ այս թեւին շրջագծերուն շրջագծերուն ձեւերը ձանչցուեցաւ, ըստնք թէ տիպարները կերպասին վրայ անջատելու ժամանակ դիտել պէտք է որ Զ և գ' անկիւնները կերպասին առէջի թելերուն ուղղութեամբը գտնուին :

Ասոր կարելու կերպը շատ դիւրին է, որովհետեւ նախ՝ սա-
կաթեւի ծղակարին կարաբաժինը կ'ըջենք երեսի կողմը և ոլո-
րակարով մը կ'ծծենք մինչեւ որ առատուն երկայնութեան հա-
ւասարի. յետոյ կ'ջանանք կարաբաժինը գուրս ցցել ու փոթերը
հաւասար կերպով լուսածել, աստատի շուրթին հետ դերակա-

բել. և ապա ենթաթերի ծղակարին հետ կ'կցորդենք. վերի կողմը կրնայ բազմածալով կամ հակածալով ըլլալ. բայց պատշաճը փոթփոթելով կազմելն է (ի՞նչպես 290րդ պատկերով Երկայնակողինել):

Թէ՛ ԾՂԱԿԱՐՔՆ ԵՒ Թէ՛ ԱՐՄԱԿԱՐՔՆ ՓՈԹՓՈԹՈՒՅԾ

«ԺԻԿՈ» թԵԽ

Ժիկօ թեւը յատուկ ձեւ մ'ալ ունեցաւ որ թէ՛ ծղակարէն և թէ՛ արմակարէն պռստումներով կ'ըլլայ և երթեմն ալ մակաթեւին մէջ տեղի երկայնութեամբը (Տե՛ս այս ամենը մէկանց 292րդ պատրակացութեամբ)։ Ասոր ձեւելու սկզբունքը յար և նման է Երկայնքին կըծկուած սուկաններուն։ Որովհետեւ նախ սովորական ժիկօ թեւի մը թղթէ տիպարը կ'չինենք (Տե՛ս 288րդ օրինակ), բացի խորշիւութան ձեւացած մասեն)։ և համարենք թէ մակաթեւին երկայնութեան մէջտեղէն ալ երկու կարգ պղպջակ ձեւացնել կ'ուղենք (Ի՞նչպես 292րդ պատրակացութեամբ)։ Ուստի նոյն տիպարին Զ—ի գիծը կէս կ'ընենք ուր կ'ունենանք աբ կէտը, նոյն պէս ալ արմուկի հաւասարութիւնը ներկայացնող է—ծ գիծը՝ և մէջտեղը կ'ունենանք գդ կէտը, ինչպէս նաեւ թեւբերանը կէս ընելով՝ մէջ տեղը կ'ճշտենք մի կէտը։ յետոյ աբ, գդ և մի կէտերը կոր գծով մը իրարու կ'միացնենք ու ձեւիչով կ'կտրենք, ինչպէս նաեւ է—գ և դ—ծ գծերը, այնպէս որ տիպարը կ'բաժնուի չորս տարբեր մասերու, որոնք են Ա., Բ., Գ. և Դ. (Տե՛ս 288րդ օրինակ)։

Այժմ տիսպարին սոյն չորս մասերը կ'փոխադրենք կերպասին վրայ, նախ Ա. և Բ. մասերուն ա—գ և բ—դ գծերն Զ հարմէզ զուգահեռաբար կ'դնենք իրարմէց անջատ (Տե՛ս 291րդ օր.). յետոյ Գ. մասը 25 հարմէզի չափ զուգահեռաբար Ա. մասէն դէպի վարօք, այսինքն լ—ե գիծը հ—գ գծին հետ զուգահեռական գիրքով ու ե և լ անկիւնները հորիզոնական աստիճանի մը վրայ. հիմա ալ Գ. մասին զ—ի գիծը կ'դնենք Գ. մասին ե—ծ գծէն Զ հարմէզ զուգահեռաբար անջատ (Տե՛ս 291րդ օրինակին բաց գոյն սուերով մասերը): Ապա, ե, թ և ծ, իս կիւնները մէյ մէկ հորիզոնական գծերով իրարու կ'միացնենք, ե—ը գծին մէջ տեղը կէտ մը նշանակելով կ'ունենանք Փ և ծ—իս գծին մէջ տեղն ալ Ք, ու այս վերջին կէտերն ալ ուղիղ գծով

Եթէ մակաթեւի երկայնութեան մէջ տեղէն պղպջակ ձեւա-
ցնել չուզուի, այն ատեն տիպարը չորս տարբեր մասերու բաժ-
նելու պէտք չմնար, այլ միայն արմուկի հաւասարութենէն՝ այն
է հ—ծ դէն կտրելով՝ կերպասին վրայ ալ միայն արմուկն ան-
ջատ կ'որուի:

շատ զդրուր։ Ժիկո թեւին այս անգամուտն վերերեւումը նորութիւն ու ունեցաւ որ դաստակէն վեր ալ կ'չինուի, նոյն իսկ մինչեւ արմուկի հաւասարութիւնը։ շատերուն վերջաւորութիւնը կերպ կերպ դրասանքներ կ'ձեւացնեն ու ոմանք ալ թէ՛ կարճ և թէ՛ բերանէն դէպի վեր՝ մասնաւոր բարձրութեան մը վրայ կարուած ծալիբով պատասակի կ'ձեւացնեն։ (Խնչպէս ԽԶ. տախտակի 297րդ պատիւթիւն վարի կողմէ կ'տեսնուի)։ Կարա էջ, ժապաւէն ու ժանեաներ եւս կ'կցեն։ Բոյր այս փոփ մասները շատ գիւրին է մեր օրինակներուն վրայ (մասնաւուագէս 285 և 296րդ օրինակները) ի գործ դնել՝ նորաձեւութեան նկարներուն նմանցնելով։

፩፻፭፻

ԿԵՍ «ԺԻԿՈ» ԿԱՄ ՈՒՍՈՒՑԻԿ ԹԵԽԵՐ

(Տե՛ս ԽԶ. Տախտակի 29 հետ մինչեւ 300րդ օրինակներն
ու պատկերները)

Ժիկօ թեւերը քանի մը տարբեր ձեւերով ալ կ'շինուի,
որոնք կէս ժիկօ կամ ուսուցիկ եւս կ'անուանուին։ Կէս ժիկօ
ձեւով շինելու համար արմաւկը կարով ըլլալու է, և այս պարա-
գային ալ հակեալ կա՞ կէս հակեալ տիպարով կ'շինուի։

Սրդ, համարենք թէ սովորական ժիկօ թեւին քիչ մը փոքրը շինել կ'ուղենք. ուստի եթէ արմակարը յետակողմէն ցաւցնելու մասնաւոր դիտում մը չունինք. այն ատեն ընկալեալ ձեւով հակեալ թեւի մը տիպարը կ'շինենք (ի՞նչպէս բացաւրած ենք 77 էջի Դ. դասով Ժէ. Տախտակի 56րդ օրինակը). ու եթէ դաստակը փեռեկով կ'ուղուի՝ թեւբերանը կ'վերածենք 15րդ կրկին չափին: Յետոյ կերպասին եզրէն մէկ կարստաժին ներսօք և նոյն չափ ալ վերի կողմէն մէյ մէկ գիծ կ'քաշենք, որ է ա—բ և ա—գ (Տե՛ս 294րդ օրինակը): Այժմ դիցուք թէ կէս ժիկօ թեւին ամէնէն մեծ ձեւը չինել կ'ուղենք. ուրեմն ա—բ գծէն 12 հարմէդ դէպի վարօք կ'քաշենք Փ—Բ գիծը. յետոյ տիպարի ծղակարին ստորոտը կ'հաւասարեցնենք բ գծին, Դ կէտը Փ—Բ գծին և Զ անկիւնը 6 հարմէդ ա—բ գծէն դէպի ետ, այսինքն գագաթի ուռուցիկին բարձրութեան դրուած 12 հարմէդին ձիշու կէսը: Տիպարին ստացած սոյն խոտոր գիրքին մէջ (Տե՛ս 294րդ օր.), Զ—Ը գիծն երեք հաւասար մասերու բաժնելով կ'ունենանք դ և Ե կէտերը. նոյն պէս ալ Լ—Ծ գծին վրայ զ և Ե կէտերը: Ապա, ծղակարը դ կէտէն մինչեւ վար, թեւբերանը և արմակարը մինչեւ զ կէտ՝ տիպարին նմանը օրինակելէ ետք. զնդասեղը կ'ցացենք դ կէտին և տիպարին Զ կէտը կ'դառնէնք. ա—բ գծին վրայ կողմի Զ—Դ գիծը կ'օրինակինք, այնպէս որ կերպասին վրայ առաջ կուգայ Զ—Դ և Զ—Դ գծերը (Այս վերջինը կէտ կէտ ներկայացուած է): Տիպարը դարձեալ կ'երերնք նախկին աեղն ու Դ կէտէն դէպի ա—գ գծին վրայ հորիզոնական գիծ մը բարձրացնելով՝ կ'ունենանք Դ՝ կէտը, հիմա ալ գնդասեղը զ կէտին ցցելով, տիպարին կ կէտը 6

Հարմէդ կ'դարձնենք դէպի դուրս ու կ'գծենք լ'—զ և լ'—Դ'' գծերը։ Յետոյ լ' կէտէն սկսելով և մաս մը տեղ լ'—Դ'' գծին հետեւելով՝ գմբեթարդ ձեւով մը կ'երթանք Դ'' կէտին վրայ, ու այս տեղ ալ փոքր ինչ Դ''—ա գիծը շօշափելով միշտ գմբեթարդ ձեւը պահելով՝ կ'ձգենք Զ' կէտին վրայ՝ վերջին մասը Դ''—Զ' գծին դիրքը պահելով (յաւ դիտ այս ամենը 294րդ օրինակին վրայ)։ Ապա, բոլոր շուրջը կարարաժիններ ձգելով կերպասը կ'կտրենք։ Խոկ ենթաթեւը ու և է փոփոխութեան պէտք չունենալուն համար, տիպարին ճիշտ նմանը կերպասը կ'կտրենք՝ կարարաժինները ձգելու պայմանով։

Եթէ ուռուցիկը գէպի արմուկը շարունակել ուզուի, գեղա-
սեղը և Մ կէտերուն ցցելով տիպարը կ'դարձնենք (ՏԵ՛Ա 296րդ
օրինակին ծղակարը):

Այս թեւն եթէ վրանոց հագուստի համար շինել կ'ուզուի,
լայնութենէն ու թեւբերանէն ընդարձակութեան բաժին ձգել
պէտք է . ուստի ծղակարին դարձնելու գործողութենէն ետք,
երբ տիպարը գարձեալ իր տեղը կ'ըերուի՝ ձիչս այս դիրքին
մէջ $\frac{1}{2}$ — $\frac{2}{3}$ հարմէգի չափ զուգահեռաբար դէպի ետ քաշելու է,
զ կէտէն մինչեւ դաստակ արմակարն օրինակել և յետոյ կ' կէտը
կազմելու է, նոյնպէս ալ ենթաթեւը:

ՓՈՔՐ ՈՒԽՈՒՑԻԿՈՎ ԵՒ ԾՂԱՌԱՐԻՆ ՎԱՐԻ ԿՈՂՄԸ
ԽՈՏՈՐԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Նորաձեւութեան կամ հագնողին կազմին պատշաճեցնելու համար եթէ ուզուի փոքր ուսուցիկով թեւ շինել (Տե՛ս 295րդ օր.): Այս պարագաներուն Դ կէտէն վեր ՞՞ կէտին բարձրութեան համար նշանակելու է 8 հարմէդ, 9' և 1' կէտերուն Կական հարմէդ մարդ նշանակելու է և տիպարին Զ—Ը ու Լ—Կ գծերուն կէտերէն գնդանշանակելու է ու տիպարին Հ—Ը ու Վ—Կ գծերուն կէտերը:

Աւազութիկն աւելի փոքր շինել ուղղութ տեսս ու դշտու
բարձրութեան կ'գրուի 6 հարմէդ ու Զ և Լ կէտերուն դիմաց
այ Յական հարմէդ :

Աւ աւելի փոքր շինելու համար ալ ի կէտրս չ
կէտերուն կյանալ նոյն խոկ Զական հարմէդով կազմուիլ:

Ծղակարին վարի կողմբ խստորելու պէտք . — Թէպէտեւ այս մասին արդէն խօսած ենք (Տե՛ս 85 էջի վերջին հատուածը), բայց կարծէ որ այս անգամ ալ օրինակներով բացատրենք (Տե՛ս 295, 298, 299 եւ 300րդ օրինակները) . որովհետեւ շատ անհրաժեշտ է զայն ի գործ դնել բոլոր վրանոց հագուստներու թեւերուն հազար : Արդ, մակաթեւին տիպարը կերպասին վրայ փոխադրուած ատեն վերի կողմին պահանջուած ուսուցիկի բաժինը նկատողութեան առնելով հանդերձ, և կէտն ալ կերպասին եզրէն $\frac{1}{2}$ — $\frac{2}{3}$ հարմէդ հեռու դնել պէտք է (Տե՛ս 295 եւ 300րդ օրինակները), կարաբաժինն ալ զատ հաշուելով: Յետոյ գնդասելը և կէտին վրայ ցցելով՝ ախպարին և կէտը կ'առնինք $\frac{1}{2}$, 2 կամ $\frac{2}{3}$ հարմէդ դէպի դուրս ու կ'օրինակնենք լ—ե դիձը, որով կ'կաղմուի լ—ե՛ դիձը: Խոկ ենթաթեւն ալ ձեռուած ատեն և կէտը կ'քաշնք $\frac{1}{2}$, 2 կամ $\frac{2}{3}$ հարմէդ դէպի ներս, և այս անգամ ալ կ'ունենանք լ—ե՛ դիձը . այնպէս որ մակաթեւի ծղակարը չափազանց գողաւոր կ'ըլլայ, մանաւանդ եթէ վերի կողմին ալ միկօ կամ ուսուցիկ եղած ըլլայ (Տե՛ս 298րդ օր. Զ'—լ—ե՛ զիծը) և ընդհակառակն ենթաթեւն ալ գրեթէ ուզիկ դիձք մը կ'առնէ (Տե՛ս 295րդ օրինակին Զ—լ—ե՛ զիծը):

* * *

ՄԻԱԿՑՈՐ ԿԵՍ «ԺԻԿՈ» ԹԵՒ ԵՒ ԴԱՍՏԱԿԲ ԿԱՐՈՒԱԾ ԾԱԼՈՎ.

Միակտոր կէս միկօ թեւ շինելու համար (Տե՛ս 293րդ օր.), Պ կէտէն վեր կրնանք 8—12 հարմէդ դնել և Զ կէտին դիմաց ալ կէտէն վեր կրնանք 8—12 հարմէդ դնել և Զ կէտին դիմաց ալ 4—6 (մենք սոյն 296րդ օրինակը ներկայացուցինք 12ով 6), և միեւնոյն ատեն արմակարին դաստակն ալ անջատ: Արդ, համարենք թէ ծղակարին ուսուցիկ մասը կ'ուղենք լ կէտէն յառաջ բերել . հետեւապէս ախպարը դարձնել և լ—Զ' դիձը քաշելէ ետք, ախպարը վերսափին կ'փոխադրենք նախակին տեղն ու ենթաթեւին Ծ կէտը կհաւասարեցնենք մակաթեւի նոյն կէտին և հիմա ալ ի կէտը 6 հարմէդ լ կէտէն հեռու դնելով՝ ստացած դիրքին մէջ կ'փուենք կերպասին վրայ, այսինքն ծղակարին դրուած ուսուցիկի բաժինին հաւասար: որով թեւերերանին ժ և ժ' անկիւնները զգալի կերպով իրարմէ անջատ կ'մնան (Տե՛ս 296րդ օրինակը):

Արդ ուրեմն, վերի կողմը ի կէտէն կոր դիձ մը սկսելով՝ կամարաձեւ կ'բարձրացնենք Դ' կէտին վրայ և նոյն դիրքով կ'դարձնենք Զ' անկիւնը՝ միշտ դիտելով որ վերջաւորութիւնը մաս մը տեղ Դ'—Զ' դէին հաղորդակցի (յաւ դիտէ 296րդ օրինակը):

Այժմ կարգն եկաւ վարի կողմի անջատ մնացած մասին, այս ալ երկու կերպով կրնայ ըլլալ: Նախ եթէ ուզենք թեւերերանը կ'թողունք սոյն տարածուած վիճակին մէջ և շուրջը կարաբաժիններ ձգելով կերպասը կ'կտրենք, միայն թեւերերանը որ է ի—լ դիձը՝ ժ և ժ' անկիւններէն Յ—Գ հարմէդի չափ զգալի կորութիւնով մը կ'վերջացնենք: Ապա, ծղակարին լ—ե դիձն երեք հաւասար մասերու բաժնելով վարի կողմը կ'անուաննենք ևս կէտ և այս կէտէն ու թեւերերանին զուգահեռական դիրքովը կ'քաշենք իս—ծ դիձը . յետոյ թեւերերանին շուրթէն մինչեւ սոյն իս—ծ դիձը հորիզոնական նեղ ծալեր կ'կարենք, իւրաքանչիւրը մէյմէկ հարմէդ բացութեամբ, մինչեւ որ դաստակի չափին հաւասարի: Եւ ո՛րովհետեւ նախապէս աստաղին ալ փեսեկով շինելու դրամթեամբ պատրաստած ենք (ինչպէս 296րդ օրինակի տիպարին վրայ կէտ կէտ գծերով ներկայացուցած ենք), արմակարը կ'կարենք ու ծղակարը կերպասին հետ դերակարելով՝ չորս շուրթը մեկանց կ'փակենք, և վերի կողմն ալ ճաշակի համեմատ՝ փոթթելով, բազմածալով կամ հակածալով կ'կազմենք (Ուռւն ամբողջութիւնը կ'ըլլայ 297րդ պատկերին նման): այնպէս որ թեւերերանը կարուած ծալերուն առթիւ պատրաստակի մը երեւոյթը կ'առնէ, զիչ մը վերն ուսուցիկ մը կ'ձեւանայ, արմուկը կաչուն և վերն ալ կէս միկօ կ'ըլլայ :

Երկրորդ կերպն ալ այն է թէ կերպասին վրայ մնացած Ծ—Ժ և Ժ—Ծ եռանկիւն մասը կտրելով կ'հանենք, այնպէս որ արմուկէն մինչեւ դաստակ մեծ սեղմօն մը կ'ձեւանայ, և զայն իրբեւ սեղմօն կարելով՝ վերի մասը կ'մնայ միականը . կուզէ դաստակը փեռելով ըլլայ, կուզէ ձեռքի մուտքին հաւասար:

* * *

ՈՒՐՈՌԻՑԻԿ ԹԵՒԵՐՈՒԽ ՎԵՐԻ ԿՈՂՄԸ ՍԵՎՄՈՆՆԵՐՈՎ ԱՄՓՈՓԵԼ
ԵՒ ԹԵՒԵՐԱՆԸ ԶԿՈՒԽ ՈՒ ԱՆԿՈՒԽ,
ՃԵՂ ԿԱՄ ԴՐԱՍՍԱՆՔՈՎ ՃԵՒԱՑՆԵՐՈՒ ԿԵՐՊԸ

Ատեն ատեն նորածեւութեան կարդ կ'անցնի թեւին վերի
Բ.—12

կողմի ուռուցիկ մասը փոքրիկ սեղմօններով ամփոփել (Տե՛ս 298 և 299րդ օրինակները)։ Այս սեղմօնները կ'պատշաճին հակեալ կամ կես հակեալ թեւերու վրայ ։ և ուռուցիկի բաժինն առառաւելն Դ կէտէն վեր 8 և երկու կողմերը 4ական հարմէդով ըլլալու է (ինչպէս 295րդ օր.) ու նուազագոյնն ալ նով Յական։

Արդ, համարենք թէ կէս հակեալ թեւի մը ուռուցիկն երեք սեղմօններով ամփոփել կ'ուղենք (Տե՛ս 298րդ օրինակը)։ մակաթեւին տիպարը կ'դնենք կերպասին վրայ, Դ կէտը 8 հարմէդով և Զ ու Լ կէտերը Յական հարմէդով ուռուցիկը կ'կազմենք. ծղակրին վարի կողմի 2 $\frac{1}{2}$ հարմէդով կ'քարձնենք դէպի դուրս թեւերեանը փոքր ձգուն մը կազմելու համար, Ժ կէտէն 2—3 հարմէդ վարօք սկսելով՝ որ է Ե կէտ։ հիմա ալ 4—5 հարմէդ Ժ կէտին դիմացէն (որ է զ կէտ) շեղ գիծ մը կ'ձգենք և անկիւնը. ապա Լ' կէտէն զգալի կոր գծով մը կ'իջնենք Ծ կէտէն 1 հարմէդի չափ բացութեամբ Է կէտին վրայ և անկից ալ դրեթէ ուղիղ գծով մը կ'միացնենք զ անկիւնին։ Բոլոր շարջը կարարաժիններ ձգելով կերպասը կ'կտուենք։ Թերեւս զ կէտէն դէպի զ—Ե գծին վրայ 5—6 հարմէդ բարձրութեամբ չաք մը ձգել ուղուի (Տե՛ս 298րդ օրինակին թեւերանի բարակ գծով ներկայացած սահմանը)։ Ենթաթեւին տիպարն ալ կ'դնենք իրեն բաւարար կերպասի մը վրայ, ծղակրին վարի կողմը 2 $\frac{1}{2}$ հարմէդ կ'քաշենք ներս, որ է Լ—Ե" գիծը (Տե՛ս 298րդ օր. ուր Ենթարեւը միւնոյն օրինակին վրայ լիս կէտ զծով ներկայացուցինք)։ Լ—Զ և Զ—Ի գծերը ճիշտ տիպարին նման, խակ Ի կէտէն կ'խոսուրինք դէպի և կէտ (փոխանակ Ծ կէտին) ուր թեւերեանի ձեւը տալու համար՝ մակաթեւին ձեւուած կերպասը կ'դնենք ասոր վրայ Եւ Լ—Պ, զ—Ե և Ե—Ե" գծերը նոյն նման օրինակելէ ետք, միւս կողմերուն կարարաժիններն ալ ձգելով կերպասը կ'կտրենք։

Թեւերեանի սոյն շեղանկիւն ու ձգուն ձեւը կրնայ վերածուիլ նաեւ դրասանքի (ինչպէս 299րդ օրինակը)։ միայն այս անգամ Ծ կէտին դիմաց Է կէտը 3 հարմէդի չափ դրաօք կազմելու է, որպէս զի կորնթարդ ձեւով մը դառնայ դրասանքին խոռոշը։

Գալով սեղմօններուն, ո՛րպէս զի ասոնք ո և է անյարմար տեղերու վրայ, քմահած երկայնութիւններով կամ դիպուածական խոտորութիւններով չըլլան, մասնաւոր եղանակով մը կ'ձեւագծենք։

Արդ, այս փոքր սեղմօններուն երկայնութիւնն ընդհանրապէս 5—6 հարմէդէն աւելի չըլլար. ուստի Զ—Դ—Լ' գծէն 6 հարմէդ ներսոք զուգահեռական գիծ մը կ'քաշենք, որ է զ—ք—ի—ծ—դ; Նախ մէջտեղի սեղմօնը պէտք է գծենք, որ գտնուելու է Դ կէտին վրայ և ուղղութիւնը ճշաելու համար՝ արմուկի հաւասարութիւնը ներկայացնող Ը—Ծ գիծը կէս ընելով մէջտեղը կ'անուաննենք Ը' կէտ, ու Դ կէտէն մինչեւ սոյն Ը' կէտը՝ ծղակարին դիրքով կոր գիծ մը կ'քաշենք. յետոյ Դ կէտին երկու կողմերը դրեթէ Ալական հարմէդ սեղմօնի անջատութիւններ նշանակելով՝ իւրաքանչիւրին շրջագիծը կ'միացնենք Դ—Ը' գծին վրայ, ուր որ ի կէտը կազմուած է, որով կ'ունենանք տիգուսյօդին դէմ կցուող սեղմօնը։ Ապա, երբուժին դէմ կազմուելիք սեղմօնը ձեւացնելու համար, Զ' կէտէն մինչեւ տիգուսյօդի սեղմօնին շրջագիծը կէս կ'ընենք ու նոյն կէտէն մինչեւ ը կէտ շեղ լար մը կ'քաշենք, որ է թ—ը և եղերքէն մինչեւ ը կէտ կ'քաշենք երկրորդ սեղմօնը, շրջագծերը միշտ Ալական հարմէդ արամագծէն անջատ. ապա՝ վերի եղբին վրայ այս սեղմօններուն իրալու դիմաց գտնուած հեռաւորութիւնը չափելով կ'փափաղրենք բ կէտին կողմը, Ե—Ծ հարմէդ վարօք կ'նշանակենք բ կէտն ու կ'քաշենք բ—Ծ շեղ լարը որով կ'կազմուի Ժ կէտը. հուսկ ուրեմն կ'գծենք նաեւ թիկնաւարտին դէմ կազմուելիք սեղմօնը։ Թերեւս բ կէտէն մինչեւ Լ' կէտ անհամեմատ հեռաւորութիւն մը մնայ, և սակայն անիկայ ար գելք մը չնկատուիր։

Այժմ ակներեւ է թէ սոյն երեք սեղմօններն ալ միեւնոյն երկայնութեամբ կազմուած են և իւրաքանչիւրը կեդրոնահայեաց կ'գտնուի ը կէտին վրայ (լաւ դիտէ այս ամենուն մաերամանութիւնը 298րդ օրինակին վրայ)։

Այս սեղմօններն հինգ հատ շինել ուղուած ատեն ալ Զ կէտէն մինչեւ տիգուսյօդի շրջագիծը չափելու է և այս կողմի սեղմօններուն խորութեան բաժինն իրեւ Յ հարմէդը նուազեցնելով՝ մնացած բաժնելու է երեք հաւասար մասերու են. (ինչպէս քղանցքի կողմամասին գտեվայրի սեղմօնները կազմելու եղանակը) միեւնոյն հեռաւորութիւններով ալ կ'կազմենք թիկնաւարտին դէմի Զ սեղմօնները։

Այս սեղմօնները կարելն ալ ինքնին կարեւոր գործ մ'է : Արդ մէն մի սեղմօնի շրջագձերէն կ'կարենք՝ ու ձեւիչին ծայրովը տրամագծէն կ'կտրենք՝ մինչեւ ուր որ կարելի է յառաջանալ . արդուկով կարը կ'բանանք ու ներքեւը կերպասի մասնիկ մը դնելով (Եթէ հագուստին կերպասն հաստ է՝ ներքեւի մասնիկը բարակ ասուելէն մը կ'դնենք) երեսի կողմէն մեքենայով նրաւարտ կարեր կ'անցնենք (Տե՛ս 29 րդ օրինակը) . Եթէ ուղուի, մէջմէկ ալ զոյդ թափանցկարեր կ'ընենք (ի՞նչպէս ԿՊ. տախ. 545րդ օր . ուսարկոին սեղմօնները) . և շրջօնի կողմը դարձնելով մասնիկներուն աւելորդները կ'յարդարենք :

Եղաւ ատեն մըն ալ որ այս սեղմօններն երեսի կողմէն կարուեցան ու արդուկելով հակածալ կազմուեցան :

* * *

ԱՐՄՈՒԻԿՆ ՎԱՐ ԱՐՏԱՀԱԿ ԲՈԼՈՐՃԻ ԶԵԽԱՑՆԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Տակաւին քանի մը տարի առաջ նորաձեւութիւն դարձաւ գաստակէն վեր չափազանց խոսոր ու կորնթարդ ձեւով ձգուններ շինելը : Այն ատեն այս թեւերուն վերի կողմը պարզ ձեւով էր (ի՞նչպէս 300րդ օրինակը), բայց պատճառ մը չկայ որ վերն ուռուցիկ ալ եղած ատեն արմուկէն վար արտահակ կորութիւնով ձգուն շինել կարելի չըլլայ :

Ասոր ձեւելու եղանակը շատ դիւրին է . որովհետեւ պարզ թեւի մը մակաթեւին տիպարը կ'փոխադրենք կերպասին վրայ, ծղակարին վարի կողմը 2½ հարմէդի չափ գուրս կ'դարձնենք և թեւերանն 2 հարմէդ զուգահեռարար կ'երկարենք : Յետոյ և կէտէն շատ մեղմ կոր գիծ մը սկսելով՝ Ծ կէտէն 2 հարմէդի չափ դրսօք կ'իջնենք և կէտին վրայ ու տակաւ առ տակաւ վէտկորի վերածելով կ'երթանք կ' կէտ, որ գրեթէ Ծ—Ժ գծին վարի կողմի մէկերրորդ բաժանման դէմ կ'դտնուի, ապա կորնթարդ ձեւով մը կ'դարձնենք Ժ կէտին մօտ՝ և հիմա ալ սաստիկ գոգաւոր վէտկորի մը Ժ կէտին վրայէն կ'իջնենք մինչեւ թեւերան (Տե՛ս այս ամենը 300րդ օրինակին վրայ) : Այլեւս կ'մնայ կարաբաժինները ձգելով կերպասը կտրել :

Ենթաթեւի տիպարին ծղակարը ներս քաշել, թեւերանն 2 հարմէդ երկարել ու վարի կողմերն օրինակելէ ետք, մակա-

թեւին կտրուած կերպասը կ'հաւասարեցնենք տոոր վրայ և ի—Ծ գծին վերջաւորութիւնը կ'խոսորենք գէպի և կէտ ու անկէց վար մակաթեւին նմանը կ'գծենք :

Այս թեւերուն վրայ զանազան ձեւերով պաստառակներ ալ դրուեցան (ի՞նչպէս Յակ. 1. սախակի 183, 184 և 186րդ պատկերներուն բեւբերանի պատառակները) :

Պ Ա Ս Ի Ա .

ԱՄԷՆՔՆ ՄԵԾ ՈՒԹՈՒՑԻԿ ԹԵՒԼ

(Տե՛ս ԽԶ. սախակ 301, 302 և 303րդ օրինակները)

Թեւ մը կայ որ ժիկօին և ռուսական թեւերուն նմանութիւնն ունի, այսինքն վերի կողմի լայնութիւնը նոյն իսկ ամէնէն մեծ ժիկօ թեւին ձեւը կ'գերազանցէ՝ որովհետեւ անթածրին բոլոր շուրջը ծալերով կ'կազմուի (Տե՛ս 303րդ պատկերը), և մակաթեւին կողմէն դիտուած տաեն կարծես թէ տիգի կէսէն մինչեւ դաստակը նեղ պատառակով մը պատրաստուած է ու վերի կողմը տարրեր մասով մեծ ուռուցիկ մը յօրինուած (Տե՛ս 304րդ պատկերը), մինչդեռ բոլորն ալ միակտօր կերպասով մը ձեւուած է . ինչպէս այժմ պիտի բացատրենք :

Արդ, պարզ թեւի մը տիպարը կ'պատրաստենք որ նոյն իսկ և և անկիւնները Ծ կէտին վրայ միացած ըլլան ու թեւերանն ալ դաստակի չափին վերածուած :

Կերպասին ծալքը մեր աջ կողմն հաւասարեցնելով, աջ կողմերնիս գտնուած վերի անկիւնը կ'համարենք ա կէտ՝ ծալքին հորիզոնական ուղղութիւնն ա—բ և կերպասին գագաթը ա—գ (Տե՛ս 302րդ օրինակ) : ա կէտէն ա—բ գծին վրայ ուռուցիկի բաժինին համար 30 հարմէդ նշանակելով կ'ունենանք դ կէտը, ու այս կէտէն ուղղահայեաց գիծ մը կ'քաշենք (Տե՛ս 302րդ օրինակին վրայ ձեւոցին պատկերը) : Յետոյ մակաթեւի տիպարին Ժ կէտին վրայ և Ծ կէտը 1 հարմէդ ներսոք՝ ու դիտելով որ և կէտն ալ վրայ և Ծ կէտը 1 հարմէդ ներսոք՝ ու դիտելով որ և կէտէն վրայ կ'հաւասարեցնենք Ծ կէտէն վարօք կերպասի ծալքին ու և կէտէն վրայասարի դ ուղղահայեացին (լաւ դիտէ օրինակը) : Այժմ ձեւոցը կ'հաւասարեցնենք Ծ կէտէն վարօք կերպասի ծալքին ու և կէ-

տին և կ'քաշենք Ը—Ե ուղղահայեացը : Մղակարին վարի մասը՝ (որ է Ը—Ե) և թեւրերանք (այն է Ե—Ճ') նոյնութեամբ կ'օրինակենք : Ապա, գնդասեղը կ'ցցենք Ը կէտին վրայ և տիպարին Զ կէտը կ'դարձնենք Ը—Ե ուղղահայեացին վրայ՝ ուր կ'հաստատուի Զ' կէտը . տիպարն այս վիճակին մէջ՝ կ'օրինակենք ծղակարին վերի մասը՝ որ է Զ'—Ը գիծը՝ և որ Ը—Ե ուղղահայեացին դէմ մեղմ կոր գիծ մը կ'ձեւանայ, կ'օրինակենք նաեւ Զ—Դ գիծը որով կ'կազմուի Զ—Դ' կէտ կէտով՝ գիծը . ու տիպարը դարձեալ կ'բերենք նախսկին տեղը :

Հուսկ ուրեմն, ա կէտէն դէպի ա—զ գծին վրայ յառաջանալով, տակաւ առ տակաւ գմբեթարդ կորութիւնով մը կը դառնանք Զ' կէտին վրայ, այնպէս որ մաս մը տեղ Զ'—Դ' գիծը չօշափէ, և ամբողջութիւնը գրեթէ քառորդ շրջանակի մը ձեւն առնէ (լա՛ դիտէ 302րդ օրինակը) . սոյն գիծը թեւին յետսակողմը կ'ներկայացնէ : Առաջակողմն ալ ձեւագծելու համար, կարկինք կը հաստատենք Ը կէտին վրայ ու Զ և Զ' կէտերն աղեղով մ'իրարու միացնելէ ետք, կ'բաժնենք զայն երեք հաւասար մասերու և կ'ունենանք զ և կ' կէտերը: Յետոյ Դ—Զ' գծին վրայ կազմուած ը կէտէն ներս 4 հարմէդ հետաւորութեամբ կէտ մ'ալ սահմանելով՝ Ժ կէտէն (որ գրեթէ ա—Զ' կորնթարդ գծին երկու երրորդ սահմանն է) մեղմ կոր գիծ մը կ'սկսինք ու կ'րերենք ը կէտին վրայ և հիմա ալ վէտկորի վերածեղով կ'հանդպինք զ կէտին՝ ու դոգաւոր ձեւով մը վերջնականապէս կ'միացնենք Զ' կէտին:

Կերպասը կտրելու համար, նախ ա—ծ—ը—Զ, գծին կարաբաժին ձգելով զոյգը մէկանց կ'կտրենք, և յետոյ ներքեւինք կը համարենք յետսակողման թեւ ու վրայինին ծ—ր—զ—Զ' գծին ալ կարաբաժին ձգելով աւելորդը կ'յարդարենք (Տե՛ս մութ ստուերով մասը): Ամէնէն վերջ, Զ—ը գծին կարաբաժինը, ծ—խ փեռեկի մասն ու թեւրերանի կարաբաժինները ձգելով կ'կտրենք (Օրինակը չխնողելու համար կարաբաժինը Ը—ծ ու քերերանին դիմ միայն ներկայացուցած ենք) :

Այս թեւին ուռուցիկն եթէ քիչ ընել ուզուի դ կէտէն վեր 20 հարմէդով կ'կազմենք (Տե՛ս կ կտը) . Զ կէտն ալ կ'դարձնենք Զ—Զ' աղեղին ասացին մէկ երրորդին վրայ, որ է կ կէտ, որով յետսակողմի թեւը կ'ունենանք կ—ծ—է և ծղակարին վերի մասը

կ—Ը գծերով . առաջակողմի վէտկոր ձեւն ալ իր կարգին ներկայացնելով (ի՞նչպէս այս ամենը տարբեր ստուերերով ներկայացուցած ենք 302րդ օրինակին վրայ) :

Սոյն երկու ձեւերուն միջինն ալ կրնայ ըլլալ դ կէտէն վեր 25 հարմէդ գնելով ու Զ կէտը մինչեւ զ կէտ գարձնելով (Օրինակը չխնողելու համար աւելորդ համարեցինք սոյն միջին ձեւը զծելը) :

ՈՒԹՈՒՅՑԻՑ ԹԵԽԼ ԿԱՐԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Սառողիւ կ'արժէ որ այս թեւին կարելու կ'երպը յատուկ խոսքով մը ներկայացնենք, որովհետեւ ինքնուրոյն և բաւական ալ կնձռուտ հանգամանք մ'ունի :

Արդ, այս թեւին մէջ աստառ դնելու է որ կարենայ պահանջուած դիրքը պահէլ: Հետեւապէս պարզ տիպարին նման մակաթեւին ու ենթաթեւին աստառները կ'կարենք՝ չմոռնալով շուրջի կարաբաժինները և թեւրերանը դաստակին չափովը (ի՞նչշուրջի կարաբաժինները և թեւրերանը կէտէն կ'ընենք որոնցմով կը կազմուի Ը' և ի կէտերը. Զ կէտէն կոր գիծ մը սկսելով գրեթէ ծզակարին զուգահեռական գիրքովը կ'իջնենք Ը': Է կէտ ու անկից ալ մինչեւ ի, և փշանուալով կ'հաստատենք զայն . ի կէտէն ի—Ը' գծին վրայ փեռեկի բարձրութիւնն ալ կ'նշանակենք ու ձեւիչով կ'կտրենք, որ է ի—լ գիծը (Տե՛ս այս ամենը 302րդ օրինակին բաց զոյն ստուերով ներարեւին վրայ) : Սոյն աստառներուն ծզակարերն ու արմակարերն ամբողջովին կ'կարենք . ինչպէս նաեւ կերպասին ծզակարերն ու այս վերջիններուն Ը կէտին դէմ կազմուած խոռոշը ձեւիչով քանի մը տեղէ կ'կտրտենք և արդուկով կը կտրերը կ'բանանք: Ապա, կերպասին Զ' կէտը կ'կցենք աստառի Զ կէտին . այնպէս որ կերպասին Զ—ը—ը գիծը առաջակողմին հետ գտնուի, այսինքն Զ—Զ' գծին կողմն ըլլայ և Զ—ը գիծը աստառի Զ—իլ—Դ գծին կողմը . այս կարգադրութենէն ետք, կերպասի ծզակարին բացուած արամագիծը՝ մասաւ մաս աստառի ենթաթեւին մէջանեղէն փշանուակով հաստառուած Զ—Ը—լ գծին հաւասարեցնելով, կարին շուրջէն փոքր փոքր ու հատ հատ կ'շուրջէնք, այնպէս որ կերպասին ծզակարը՝

այն է Զ'-Ը-ծ կարը հաւասարի աստառի Զ-Ը-լ գծին (Եթէ կերպասը փոքր ինչ երկայն գայ, Զ կէտին մօտերը կրնայ ամ-փոփելով դրուի)։ Հիմա կերպասը կ'շրջենք երեսի կողմը, որով աստառը խողովակի նման կ'մնայ միջեւը և կերպասը պատեանի մ'երեւոյթը կ'առնէ. և այժմ դիւրին է ըմբռնել թէ այս թեւին տարօրինակութիւնն այն է որ կերպասին ծղակարը կ'կցուի են-թաթեւի աստառին կէս լայնութեան հետ։ Ապա ուրեմն, կեր-պասին վերի ընդարձակ շուրթը Զ կէտին երկու կողմերէն և երարու հակադարձ բազմածալեր կ'կազմենք, (որոնք մօտաւորա-պէս Յ-Յ¹ական հարմէդ լայնութիւն մը կ'ունենան.) ու երբ տիգուսյօդին դէմ կ'հասնինք՝ բնապէս այն տեղ ալ երեսի կողմը հակածալ մը կ'կազմուի. լաւ է որ նախ գնդասեղներով դասաւո-րենք ու երբ ամէնն ալ ճշտենք, այն ատեն մանր մանր կ'դերա-կարենք (Լա՛ւ դիտէ ՅօՅրդ պատկերը)։ բայց կարեւորն այն է որ հակածալին մէջ տեղը համապատասխանելու է անթածրի Խ' կէ-տին, այսինքն ուսի կարէն Զ հարմէդ դէպ ի երբուծին կողմը, և այս ալ նախապէս աստառին մակաթեւը անթածրին հաւասա-րեցնել ու Խ' կէտը նշանակելով կ'ըլլայ. ինչպէս միկօ թեւին ժա-մանակ խօսեցանք։ Վերջապէս թեւբերանի կարաբաժինը կ'շրջենք ներս, և առբերանով կ'վերջացնենք. միայն դիտելի կէտն այն է որ փեռելը կ'գտնուի ճիշտ ենթաթեւի կէսին դէմ և կերպասէն ձգուած Խ-ծ մասը (Տե՛ս ՅօՅրդ օրինակը) մէկ կողմին համար կը ծառայէ իրբեւ առբերան և միւսին համար ալ իրբեւ ներքեւի կոճակափեղկ։

Ինչպէս ըսինք, այս միակոր ուռուցիկ թեւին հագնուած տեսքն այն պատրանքը կ'ունենայ, որ կարծես թէ երկայն պաս-տառակի մը վերի կողմն անջատ կտորով մեծ ուռուցիկ մը ձեւա-ցած է (Լա՛ւ դիտէ ՅօՅրդ պատկերը)։

Պ Ա Ս Ֆ Բ.

ԴԱՍՏԱԿԸ ԿՊՉՈՒՆ ՊԱՍՏԱՌԱԿՈՎ ՈՒԹՈՒՑԻԿ ԹԵՒԵՐ

ԶԵՒԵԼՈՒ ԿԵՐՊԸ

(Տե՛ս Խէ. տախ. 304, 305, 306, 318, 319 եւ 320րդ օր. ու նկար)

Թեւերու գլխաւոր ձեւերուն մէջ մեծ տեղ մը կ'բռնեն դաս-

տակը սեղմ պաստառակով ու վերի կողմը կարգ կծկում՝
ներով ուսուցիկ ձեւացած թեւերը (ինչպէս են 305 եւ 306րդ
պատկերները) և ասոնց ամէնէն պարզ ձեւն ալ ուսական թեւ
կ'անուանուի (Տե՛ս ԾԳ. ախտակի Յաջօրդ պատկերը), որոնց ամէնն
ալ միեւնոյն սկզբունքով կ'ձեւուին:

* *

ԴԱՍԱԿԱՐԱ ԿՊՉՈՒՆ ՊԱՍՏԱՌԱԿԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Այս ձեւերով թեւերուն նախ դաստակի պաստառակին բար-
ձրութիւնն որոշելու է, որ կրնայ ըլլալ բազկին երկայնութեան,
այսինքն արմուկէն մինչեւ դաստակ եղած երկայնութեան վարի
մէկերրորդին, կէսին, վերի մէկերրորդին ու նոյն իսկ մինչեւ
արմուկին բարձրութեան հաւասարութեամբը, որովհետեւ այս
պաստառակիները կպչուն ձեւով կ'ըլլան, հետեւապէս դաստակին
ալ փեռեկով պէտք է պատրաստուի: Ուստի պարզ թեւի մը
տիպարին թեւերանը դաստակի չափին վերածելէ ետք, աս-
տառները կ'ատրենք, պաստառակին բարձրութեան սահմանը փը-
շանուակով կ'որոշենք, և համարենք թէ բազկին երկայնութեան
վերի մէկերրորդին բարձրութեամբը շինել կ'ուզենք որ է ա—բ
վերի մէկերրորդին (Տե՛ս 320րդ պատկերը): Յետոյ աստառին ար-
հաւասարութիւնը (Տե՛ս 320րդ պատկերը): Յետոյ աստառին ար-
մակարը կ'հարենք ու բանալով սեղանին վրայ կ'փռենք, թերեւս
պաստառակը տարբեր նիւթով մը ծածկել ուզուի (ինչպէս 320րդ
պատկերը). թերեւս յատակը սնդուս կամ դիպակ ծածկելով ու
պատկերը). թերեւս պատառի սնդուս կամ դիպակ ծածկելով ու
անոր վրայ ալ ժանեակով պատել ուզուի (ինչպէս 305րդ եւ 319րդ
պատկերները): կամ նոյն իսկ հագուստին կերպասով ըլլայ ան
պատկերները): Ուրեմն պաստառակին բաւարար կեր-
(ինչպէս 306րդ պատկերը): Ուրեմն պաստառակին բաւարար կեր-
պասը կ'ծածկենք աստառին վրայ, (եթէ կ'կերպասը գծաւոր է,
ուշագրութիւն ընելու է որ գծերուն ուզութիւնը արմակարին
ուշագրութիւն ընելու է որ գծերուն ուզութիւնը արմակարինք, մաս-
դիրքովը գտնուի) ու մանր մանր շուրջը կ'զերակարենք, մաս-
նաւոր խնամք տանելով որ կերպասը քիչ մը պրկուած ըլլայ:
Մա՛ պարագան ալ կանխաւ մոռնալու չէ որ եթէ կերպասը բա-
րակ ու թափանցիկ չէ՝ աստառին արմակարը երեսի կողմը գըտ-
նուի, որպէս զի թեւին մէջը մաքուր ըլլայ. իսկ հակառակ պա-
տառի նկատումը զանց կ'առնուի: Եթէ ժանեակով ալ
բագային այս նկատումը զանց կ'առնուի: ճիշտ կերպասին վրայ ծածկելով՝
պատել կ'ուզենք՝ այն ալ ճիշտ ճիմա կերպասին վրայ ծածկելով՝

թերուն աւելորդներն աստառին հաւասարութեամբը կ'յարդա-
րենք, բացի թերերանէն, ուր կարաբաժին մը ձգելու է ինչ-
պէս նաև ծզակարին վարի կողմը կաղմանելիք փեռեկին բաժին-
ները, որ է կէտէն մինչեւ գ կէտ կ'գտնուի (Տե՛ս 320րդ պատ.),
որոնց մակաթեւէն դուրս ձգուածը կ'ծառայէ իբրեւ առերան-
դու և ենթաթեւինն ալ կոճակագեղիի:

Այժմ փեռեկին ու թերերանին կարաբաժնները կ'ըջենք
ներս, և եթէ երեսի կողմէն մեքենայով թափանց կարեր ընել
չուզուիր, այն ատեն մեջի վթունքները վրայի կարով մը առաջ-
ոին հետ կ'ամրացնենք, լաւ մը կ'արդուկենք, ու թերերանը
բարակ նիւթէ առերգանով մը կ'ծածկենք. և փեռեկին բարձրու-
թենէն մինչեւ պաստառակին բարձրութիւնը՝ մեջի կողմէն կ'կա-
րենք, ու եթէ վերի կերպով թափանցիկ չէ՝ աստառին այն
մասը երեսի կողմէն կ'կարնք (Ենցդես 320րդ պատկերը կ'երեւալ),
որով թերին վարի կողմը, այն է պաստառակը բոլորավին աւար-
տած կ'ըլլայ:

մաս զ լրից :
Թե թեւս վերի կողմն աստառ դ նել չուզուի : այն ատեն տիպարին վրայէն օրինակելու է միայն պաստառակին բարձրութիւնովը աստառ մը , որ նոյն իսկ արմաւկի կողմը ծալք՝ այսինքն միակտոր ալ կրնայ ըլլալ : Բացի այն պարագայէն , որ եթէ պաստառակը մինչեւ արմաւկի հաւասարութեաթը կ'ուզուի . հարկ կ'ըլլայ արմաւկէն վար 5—6 հարմէդ երկայնութեամբ սեղմօն մը ձեւացնել , ու վրայի կերպասն այն տեղ ամփոփել . և եթէ թեկին վերի կերպասէն ծածանող բազմափոթ մը պիտի կազմուի (Խնչպէս 318ը պատ.) , այն ատեն պաստառակին կերպասն ալ սեղմօնով կրնայ ամփոփուիլ , քանի որ չպիտի տեսնուի :

ՎԵՐԻ ՓՈԹԹՈՒԽԱԾ ՄԱՍԻ ԶԵՒԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Գաստակը կպչուն պառառառակով և վերի կողմը ուսուցիկ ձեւով թեւելուն կերպասը ձեւելն երեք գլխաւոր սկզբունքով կ'ըլլայ . Ա . — Անթածրին կցուելիք եղալը ամբողջ պատել . Բ . — Միայն մակաթեւը պաստել . Գ . — Տիգուսյօդին դէմալ բարձր ուսուցիկ ձեւացնել :

Արդ, ամէն առթիւ կերպասին եղբը կ'համարենք ա—բ զի՞ն
(Տե՛ս 30 էրդ օր.) և վերի կողմը ա—զ: Եթէ Գ. կերպին պէս չի-

նել կ'ուզենք, այն ատեն տիգուսյօդին դէմ բարձրանալիք ուռուց ցիկի բաժինին համար ա—զ գծէն 8, 10 և նոյն իսկ 12 հարմէդ վարօք ուղղահայեաց զուզահեռական գիծ մը կ'քաշենք, որ է դ—ե (Տե՛ս 304րդ օր., որ 8 հարմէդով ներկայացուցած ենք): Իսկ եթէ սոյն յաւելուածական բարձրագիր ուռուցիկը չուղուի, ան-համեմատարար կերպասին վերի կողմէն 5 հարմէդի չափ վարօք կ'ներկայացնենք նոյն զուգահեռական ուղղահայեաց գիծը, որ է կ'ուզենք. Այժմ համարենք թէ վերի կողմը պարզ կ'ուզենք. Ճի-նել. ուստի դ—ե ուղղահայեաց գիծը կ'նկատենք իբրեւ կերպա-սին վերի կողմն ու զ—ե ուղղահայեաց գիծն ալ իբրեւ հիմնա-գիծ: Հետեւարար մակաթեւի պարզ տիպարին Զ և Ե անկիւն-ները կ'հաւասարեցնենք զ—բ գծէն մէյլէկ հարմէդ ներսոք և Դ կէտը զ—ե գծին (Տե՛ս 304րդ օրինակ՝ բաց զոյն սուերով մա-կարեւի ի տիպարին առաջին դիրքո): ու այս գիրքին մէջ տիպարին կարեւի ի տիպարին Ապա, տիպարը կ'քաշենք դէպի ետ և այս անդամ Զ՝ կէտը կ'կցենք Լ—Ծ գծին ու կ'դիտենք որ Ե՝ կէտն ալ Զ՝ կէտին չափ դ—բ գծէն զուգահեռարար հեռու կէտն ալ Զ՝ կէտին չափ դ—բ գծին վրայ (Տե՛ս 304րդ գտնուի, ինչպէս նաեւ Դ՝ կէտն ալ զ—ե գծին վրայ Տե՛ս 304րդ գտնուի, ուր տիպարին երկրորդ շարժումը շետեալ տառերով ներկայա-ցուցին): Ցետայ ենթաթեւին տիպարն առնելով՝ ասոր ի կէտը կ'կցենք մակաթեւի Լ՝ կէտին և Ծ՝ կէտը Ծ՝ կէտէն 1 հարմէդի կ'կցենք մակաթեւի Ֆ՝ կէտին 2—3 հարմէդի չափ ներսոք ենթաթեւի Զ կէտին ու Ժ՝ կէտէն 2—3 հարմէդի չափ ներսոք հորիզոնական գիծ մը կ'քաշենք, որ է Զ—Փ, տիպարն այս գծէն հորիզոնական գիծ մը կ'քաշենք երկու մասի, որուն առաջին մասը՝ քիչ մա-կտրելով կ'քաժնենք երկու մասի, որուն առաջին մասը՝ քիչ մա-կտրելով կ'կցենք մակաթեւի Լ՝ և Ծ՝ կէտերուն ու ուղ ըստնուս պէս կ'կցենք մակաթեւի Լ՝ և Ծ՝ կէտերուն ու Երկրորդ մասն ամբողջին չափ զուգահեռարար հեռու, որով Զ—Փ՝ կ'մայ մակաթեւին կողմն ու Զ—Փ՝ եղբն անջատ (Տե՛ս այս ամենը 304րդ օրինակին վրայ, որ ներկայացուցած ենք բաց զոյն միտյն ուշադրութիւն ընելու է որ ենթաթեւի ծղա-կարին կողմի մասն անջատ դրուած ատեն՝ նախորդէն վեր կամ վար չուահի, ասոր համար ալ խոհեմութիւն ըրած կ'ըլլանք ձեւո-ցը Զ—Փ՝ գծին հաւասարեցնելով՝ Զ՝ անկիւնէն ուղղահայեաց

գիծ մը քաշել, ու Զ" անկիւնէն նոյն գծին վրայ դնել (Տե՛ս օրինակ, ձեւոցին պատկերը): Ե" և Զ" կէտերէն մէյմէկ կարաբաժին դրաօք ուղիղ գիծ մը կ'քաշենք, որ է ենթաթեւին ծղակարը: Թեւին վերի կողմը ձեւագծելու համար, Զ" անկիւնը փոքր չեղ գծով մը ճշտելով և Զ"-Զ" գծին զուգահեռարար կարաբաժին մը ճգելով կ'երթանք թ կէտ, նոյն կորութիւնը մաս մը տեղ եւս շարունակելով՝ կ'վերածենք վէտկոր մէւի մը ու գմբեթարդ դիրքով կ'բարձրացնենք թ կէտ, որ է և կէտին հորիշնական ուղղութեամբ դ—ե գծին կարած անկիւնը, և ընդարձակ սահմանի մը վրայ գմբեթարդ դիրքը պահելով կ'դարձնենք մինչեւ Զ կէտին դիմաց կարաբաժին ներկայացնող անկիւնը: Գալով թեւբերանին, Ե"-Փ" գծէն 2—3 հարմէդի չափ զուգահեռարար դէպի վարօք գիծ մը սկսելով, տակաւ կոր գծի մը կ'վերածենք ու կ'երթանք մենչեւ թ կէտ, որ է և Ծ' կէտերուն հորիզոնական ուղղութեան դիմաց, և ոյն կէտէն նախորդին հակադարձ ձեւովը կ'տանինք թ կէտ, այս անգամ ալ Ե—Ժ գծէն 2—3 հարմէդ զուգահեռարար դէպի վարօք: Ու կերպասը կ'կտրենք (Տե՛ս 304րդ օրինակին մութ սոււերով ձեւը):

Այժմ կ'մնայ կերպասին երկայնութիւնը պաստառակին բարձրութեան հետ համեմատել: Արդ, համարենք թէ նախորդ հրահանդին համեմատ՝ բազկին երկուերլորդ բարձրութեամբը պաստառակի մը կցել կ'ուղենք (ի՞նչպէս է 320րդ պատկերը). ուստի ծղակարին վերի ծայրէն (Զ կէտ) մինչեւ թ կէտ կ'չափենք ու եթէ բոլոր չորսը անկունով կազմել կ'ուղենք (ի՞նչպէս 318րդ պատկերը), անոր համար կ'աւելցնենք 6—8 հարմէդ. և եթէ ծածանող եղլ ալ ճգել կ'ուղենք (Տե՛ս դաշնալ 318րդ պատ.), այն ալ կ'աւելցնենք նախորդներուն վրայ, որ դարձեալ 6 կամ 8 հարմէդ կ'հաջուռի. այժմ համարենք թէ ծղակարին վարի ծայրէն մինչեւ պաստառակին եղը եկաւ 26 հարմէդ, 8ը անկունին և 8 ալ ծածանող եղը համար, որով ընդամէնը կ'ըլլայ 26+8+8=42 հարմէդ. ահա այս երկայնութեամբ կ'կտրենք կերպասի ծղակարին երկայնութիւնը:

Խոկ եթէ տիգի մասին վրայ կծկուած կարդ կարգ ուռուցիկներ ալ ձեւացնել կ'ուղենք (ի՞նչպէս են 305 եւ 306րդ պատկերները). ամէն մէկ ուռուցիկի համար պէտք է աւելցնենք 6—8 հարմէդ.

և եթէ իւրաքանչիւր ուռուցիկ քանի մը կարգ պղպջակներով պիտի շարունակուին՝ անոնց ամէն մէկ կարգին համար ալ մէյմէկ հարմէդ պէտք է աւելցնենք: Ուրեմն եթէ երեք ուռուցիկ ձեւացնել կ'ուղենք և իւրաքանչիւր երկերկու կարգ պղպջակով ու վարի շուրթն ալ ծածանող բազմափոթ մը (ի՞նչպէս 306րդ պատկերը). այն ատեն պաստառակին գէպի վեր՝ ծղակարին բարձրութիւնը հիմ բռնելով, որ քիչ մառաջ գտած էինք 26 հարմէդ. անոր վրայ կ'աւելցնենք երեք ուռուցիկներուն համար 8ականէն 2է, չորս կարգ պղպջակներուն համար 4 և ծածանող բազմափոթին համար ալ 8 հարմէդ, որով ընդամէնը կ'ըլլայ 26+24+4+8=62 հարմէդ: Հետեւապէս թեւի կերպասին ծղակարը՝ այն է Զ—բ գծին երկայնութիւնը պէտք ճշտենք 62 հարմէդով, և Բ—Բ գծին դիրքը զուգահեռարար փոխադրենք գէպի վար:

Կարելու համար եթէ վարի եզրը ծածանող բազմափոթ կայ (ի՞նչպէս 318րդ պատկերը), նախ չուրթը կ'խծպենք. (Թերեւս ասոր եղըն ալ ժանեսակէ դրասանք մը կցել ուղուի, զայն ալ այժմէն կ'կարենք:) Յետոյ անոր բարձրութիւնը զուգահեռական գծով մը ճշտելով շրջօնի կողմէն ոլորակար մը կ'ընենք ու կծկելով կ'հաւասարեցնենք պաստառակին կցուելիք աստիճանին մեծութեան: Գիտնալ պէտք է թէ այս ձեւով թեւերուն ծղակարն ամէն պարագայի մէջ առանձին կ'կարուի:

Եթէ վարը պաստառակ չկայ ու բազուկը մերկ պիտի երեւայ (կամ ձեռնոցով պիտի գոցուի), այն ատեն տիպարին հետ չափելով կ'կծկենք (Տե՛ս 318րդ պատ.): Եթէ վերի կողմը մէջէն չափելով կ'կծկենք (Տե՛ս 318րդ պատկերը), այն պարագային ալ ծղակարին ու արմակարին ընդհատուած բարձրութիւններուն չափովը մէյմէկ երբիդ կ'կտրենք ու վարի և վերի ծայրերը կ'կցենք ասոնց, որպէս զի հագնուած ատեն անկունի բաժինը վար չ'կախուի:

Եթէ վարի եղը ծածանող բազմափոթ չկայ՝ այն ատեն ծըղակարը կ'կարենք, որորակարը շրթունքն անցնելով, կ'դարձընենք շրջօնի կողմը՝ եղը կ'կցենք պաստառակի չուրթին, որ է ա—Բ գիծը (Տե՛ս 302րդ պատ.), կ'կարենք ու կ'շրջենք գէպի վեր: և հիմա ալ վերի եղը ոլորակարով կ'կծկենք ու կ'հաւասարին եղները աստառին մեծութեան որ է ամէնէն ծանօթ ուռսական լեցնենք թեւին ձեւը (Տե՛ս ԾԳ. տախ, 392րդ պատկերը): կոչուած թեւին ձեւը (Տե՛ս ԾԳ. տախ, 392րդ պատկերը):

Իսկ եթէ քանի մը կարդ ուռուցիկներ պիտի կազմուին. ասոնց աստիճանները աստառին վրայ (ու եթէ աստառ չպիտի գրուի՝ տիպարին վրայ) գծելով իւրաքանչիւր ուռուցիկի համար ձգուած բաժիններն ալ հաշուելով, վարի եզրին դիրքովը և կերպասի շրջօնին վրայ կարդ կարդ գիծեր կ'քաշենք. և ամէն մէկը ոլորակարելով կ'կծկենք ու կանցընենք աստառին վրայ, և գաղտնի կէտկարելով կ'հաստատենք աստառին հետ: Եթէ աստառ չկայ, երիզներուն վրայ կ'կցենք (Ուռւն լրացած ձեւը պիտի ըլլայ 305 կամ 306րդ պատկերներուն նմանը):

Այս ձեւով կարուած թեւը առաբեր կերպելով ալ կրնայ զարդարուիլ . օրինակի համար , նախ ողաստառակ մը՝ ասոր վրայ ուսուցիկ մաս մը , տիգի երկուերրորդ մասը զլօս կիսաթեւ մը ու անոր ներքեւի շուրթէն ալ ջանջիլէ բազմածալ մը ծածանուած (ՏԵ՛Ա ՅԻԳՐԴ պատկեր) :

Ասոր վերի մասն առնելու է ժԴ. դասով բացատրուած թեւին (Տե՛ս ԽԱ. Տախ. 25Երդ օրինակ) նման, տիպարը քանի մը անզամ դարձնել, և ծղակարին արմուկէն վեր կազմուած մասը կէս ընել ու խոտորնակի դէպի արմուկին կողմէը մեզմ կ'որ գծով մը վերջացնելով։ Կրնայ չեղակի բացուածք մ'ալ ունենալ (Ի՞նչ-պէս 31Երդ պատ.), որուն շուրթը նորաձեւութեան համեմատ երիզներ կարելով։ և մէջը նուրբ աստառով (լաւագոյնն է մետաքս) մը ծածկուիլ։ Պաստառակը պահանջուած բարձրութեամբ պատրաստելէ ետք, ասոր յաջորդող անկունով ուսուցիկ մասն ալ առնելու է ռուսական թեւին ընդարձակ ու անկունով ձեւէն (Տե՛ս 30Երդ օրինակին Ե'—լ—ն զիծը), տիգի կէսէն դէպի վերը կազմուած մասը ջնջելով։ Իսկ ջանջիլէ բազմածալն արդէն զանազան լայնութիւններով պատրաստ ծախուածը կ'զորիծածուի։

Եթէ ենթաթեւը փոթթել չուզուի, այլ եւս տիպարն ետքաշելու կամ երկու մասի բաժնելու պէտք չմնայ. այլ ինչպէս որ առաջին անգամ ենթաթեւի տիպարին ի և Ծ կէտերը կ'հաւասարեցնենք մակաթեւի և՛ և Ծ կէտերուն (այս վերջինը միշա Հարմէկի չափ անջատ), ահա ճիշտ նոյն դիրքին մէջ կ'օրինակենք Զ"-Զ-Ի դիմք. ինչպէս նաեւ ասոր ծղակարը:

Եթէ տիգուայօդին դէմ բարձր ուռուցիկ ձեւացնել ուղուի,
այն ատեն ալ՝ ինչպէս ըսինք, կերպասին վերի կողմէն 13 հար-

մէդիչ չափ վարօք կ'քաշենք զ—ե գիծը և Զ"—ը գծին շարունակութիւնը կ'բարձրացնենք մինչեւ Ժ ու գմրեթարդ շրջանով մը կ'ձգենք Զ հէտին դիմաց (Տե՛ս 30-րդ օրինակին վերի կողմի բաց զոյն լաւելուած ձեւը):

Եթէ թերերանը նեղ պատուռակով մը ու դաստակին դէմ
ալ անկունով շինել կ'ուզուի, ի կէտէն վար անկունին համար
սրէտք եղածին չափ վարօք կ'նշանակենք և կէտը՝ որ կրնայ 6,
8, 10 կամ 15 հարմէգ ըլլալ. և ընդարձակ վէտկոր գծով մը կը
տանինք մինչեւ բ կէտ (Տե՛ս 304րդ օրինակին թերերանին կողմի
տարբերակով կերպասի նկարին մասը):

Այս թեւին վերի մտար (այն է 30-րդ օրինակը) ուրիշ ձեւեւ-
րու ալ կ'վերածուի, օրինակի համար՝ առանց ենթաթեւին տի-
պարն ետք քաջելու՝ կերպասը կ'արենք. յետոյ երեսի կողմը
դարձնելով՝ արմուկի հաւասարութենէն 3—4 հարմէդ վարօք կ'որ-
գիծ մը կ'աքչենք ճիշտ բ—ի գծին զուգահեռական գիրքով։ Յե-
տոյ այն գծէն մինչեւ թեւրելանը Գալան հարմէդ հեռաւորու-
թեամբ հորիզոնական—զուգահեռական գծեր կ'աքչենք, և այս
ամէն մէկ գծերն իրբեւ տրամագիծ համարելով կ'ծալենք եւ մէյ
մէկ հարմէդ ներսոք դարձեալ ծալելով՝ ոլորակար կ'ընենք ու կը
կծկինք, որոնցմով թէ՛ թեւրելանը կ'նեղնայ և թէ՛ երկայնու-
թիւնը կ'արձնայ, բազին վրայ պաստառակի մը ձեւն առնելով
(Տե՛ս ԾՊ. տախակ 389րդ պատկերը):

Աւելի ձեւի մ'եւս վերածելու համար, կերպառը դարձեալ նախորդին եղանակովը՝ կ'կտրենք՝ միայն այս անգամ երկայնութենէն ալ 6—8 հարմէզ կարձ կ'կտրենք, որ է խ—ծ գիծը (Տե՛ս ԾԳ. ասխ. 391րդ օրինակ, որ տեղի անձկուրեան պատճառով վերի մասը չերեւար): Ապա, ափնածրի ամբողջ մեծութեան՝ այն է 22 հարմէզին և կ'դնենք խ կէտէն ներս ու կ'նշանակենք կ կէտը և 10—12 հարմէզ բարձրութեամբ խ—Զ գծին (մակարեւի ծակարին) դիրքովը զուգահեռական—հորիզոնական գիծ մը կ'քաշենք՝ որով կ'կազմուի կ—հ գիծը. իսկ ափնածրին մնացած $\frac{3}{4}$ ըն ալ ծ կէտէն ծ—ծ գծին վրայ կ'նշանակենք ու կ'քաշենք ծ—լ գիծը: Մակարեւին կողմը՝ այն է կ—հ գծին գէմ կիսարուրչի կամ անկիւնաւոր դրաստանք մը կ'ձեւացնենք՝ որոնք են և մ անկիւնները: Յետոյ հ—լ կէտերը կոր գծով մ' իրալու կ'միացնենք ու

կերպառը սոյն ելեւէջաւոր գծերէն կտրելով, պաստառով ձեւացած երկու անջատ մասերուն ներքեւը պնդածուէններ կ'զնենք, շուրթերը կ'պատրաստենք և դ—ի գիծը քանի մը խորչխորշան կազմելով հ—կ գիծը կ'հաւասարեցնենք դ—ձ գծին. դրանքներուն անկիւնները մէյ մէկ կոճակով կ'զարդարենք (Տե՛ս ծՊ. տախտակի 390րդ պատկերը) :

፩ ፻ ፭ ፻፭፻

բազմաւսնեաց թերե՛ր

(ՏԵ՛Ս ԽԵ. ՏԱՐԱԾԱԿ 307ԿԲ ՄԻԱՀԵԼ 315ՐԴ ՊԱՏԿԵՐՆԵՐՆ ՈՒ ՕՐԻՆԱԿՈՒԵՐԸ)

Բազմամասնեայ թեւեր ալ գոյութիւն ունեցան և անխտիր
ամէն հագուստի կցուեցան, միայն սա՛ էական սկզբունքով որ
կրկնողը, պօլիրօն կամ սուկանն ալ բազմամասնեայ եղած ըլլայ՝
Ասոնք միեւնոյն ատեն անկունով ու շրջուած պաստառակով ալ
եղան (Տե՛ս 307րդ պատ.)։ արմուկին դէմ խորչխորշանով ու ար-
տահակ կորութեամբ և արձակ պատառակով ալ (Տե՛ս 308րդ
պատ.)։ Ասոնց երկուքին ալ ձեւելու սկզբունքը գրեթէ նոյնն է։
ուստի համարենք թէ արմուկին դէմ խորչխորշանով և արտահակ
կորութեամբ թեւ մը շինել կ'ուղենք։ Այս պարագային նախ
պարզ տիպար մը կ'պատրաստենք (Տե՛ս 309րդ օր.)։ Ե—Ճ գիծն երեք
հաւասար մասելու բաժնելով՝ Ճ կէտին կողմինը կ'անուանենք Փ
կէտ, քանակը կ'հաւասարեցնենք Դ և Փ կէտելուն և ուղիղ գծով
մ'իրարու կ'միացնենք ու ենթաթեւին ալ տիպարը միատեղ սոյն
գծէն կ'կտրենք որով կ'բաժնուի 4 տարրեր մասերու։ Այժմ մա-
կաթեւի ծղակարին կողմի մասը կ'փոխադրենք կերպասին վրայ
(Տե՛ս 310րդ օր.)։ Դ—Զ, Զ—Ե և Ե—Փ գծերը նոյնութեամբ
կ'օրինակենք։ Յետոյ արմուկի հաւասարութեան գիծը դէպի
դուրս երկարելով՝ Ծ կէտին 3—4 հարմէդ մնալու Ք կէտը կ'նշա-
նակենք և Դ կէտէն վէտմոր գիծ մ'սկսելով՝ արտահակ կորու-
թիւնով մը կ'միացնենք սոյն Ք կէտին ու անկից ալ կ'դարձնենք
Փ կէտ (Սոյն Դ—Ք—Փ զծին վայելչութիւնը Տե՛ս 309րդ օրինակին
վրայ)։ Բոլոր շուրջէն կարաբաժին ձգելով մակաթեւին սոյն առա-
ջին մասը կ'կտրենք։

Այս մասէն փոքրիկ եռանկիւնածեւ թաթիկներ ալ կրնայ ձգուիլ, Զ հատ տիգին վրայ և մէկ ալ բազկին դէմ ու կոճակներով զարդարուիլ (Տե՛ս 308րդ պատ.)։ այս պարագային Դ—Բ—Փ գիծը քաշելէ ետք, գծագիտական նրբութիւններով ու վայելչութեամբ կ'ձեւագծենք նաեւ ուզուած քանակութեամբ փոքրիկ եռանկիւնածեւ թաթիկները (Տե՛ս 310րդ օր.), ու հիմա ալ ասոնց շուրջը կարարաժին ձգելով կերպասը կ'կտրենք, որ կարծես թէ դրասանք ձեւացած է։

Այժմ մակաթերէին ու ենթաթերէին արմուկի կողմին մասերը առնելով, ասոնց ի և լ կէտերը կ'կցենք իրարու, իսկ Ծ և Ծ' կէտերը 5—6 հարմէդի չափ իրարմէ անջատ (Տե՛ս 311րդ օրինակին բաց զոյն ստուերով մասերը). Ծ—Ծ' գծին մէջ տեղը կէտ մը նշանակելով՝ քանակը իլ և սոյն կէտերուն հաւասարեցնելով՝ դէպի թերերանին կողմը հորիզոնական գիծ մը կ'քաշենք և Ժ ու Ժ' անկիւններուն հաւասարութենէն դէպի վար յաւելուածական երկայնութիւնով մը կ'նշանակենք ա կէտը, այսինքն արմուկին դէմ քանի հատ խորչխորշան կամ ձալեր ձեւացնել կ'ուզենք ու անոնց խորութիւնը քանիական հարմէդով որ կազմել կ'ուզենք։ Արդ, համարենք թէ 4 ծալ ձեւացնել կ'ուզենք (Տե՛ս 308րդ պատ.) և ամէն մէկը Յական հարմէդ խորութեամբ ուրեմն $4 \times 3 = 12 + 12 = 24$ հարմէդ ա կէտը Ժ և Ժ' անկիւններուն հաւասարութենէն երկարելու պէտք կ'ունենանք. ու քանի որ թերերանի լայնութիւնը փոփոխութեան ենթարկել չուզուիր, ա կէտին երկու կողմը մէյ մէկ փոքրիկ կոր գիծ կ'քաշենք. Եւ Փ—Ժ և Ժ'—Փ" գծերուն մեծութիւնները կ'փոխադրենք ա կէտին երկու կողմերը՝ որպնց-մով կ'ունենանք Բ և Գ անկիւնները (Տե՛ս 311րդ օր.)։ Դարձեալ արմուկի հաւասարութեան գծին վրայ՝ Դ—Փ գծէն 4—5 հարմէդ դրսօք Ք կէտը նշանակելով, Դ կէտէն մեզմ գոգաւոր գծով մը կ'հանդպինք Ք կէտին ու արտահակ աղեղի մը վերածելով կ'անցնինք Փ անկիւնն և անկից ալ մինչեւ Բ կէտ (Սոյն Դ—Փ—Փ—Բ գծին վայելչութիւնը Տե՛ս 311րդ օրինակին վրայ)։ Միենոյն ձեւով ալ կ'գծենք ենթաթերէին 0—Բ—Փ"—Գ գիծը. իսկ ափարաններուն 0—Իլ—Դ գիծը կ'պահենք անփոփոխ, ու շուրջը կարաբաժիններ ձգելով՝ կերպասը կ'կտրենք (Տե՛ս 311րդ օրինակին մութ ստուերով սացած ձեւը)։ Գալով ենթաթերէի վերջին մասին (Տե՛ս 312րդ օր.)

այս ալ մակաթեւի առաջին մասին նման 0—Փ' գծէն դուրս Ք կէտը նշանակելով՝ 0—Բ—Փ' վէտկոր գիծը կ'քաշենք ու կարաբաժինները ձգելով, կերպասը կ'կտրենք։ Այժմ ակներեւ է թէ որքան որ նախապէս պարզ թեւին տիպարը կ տարբեր մասերու բաժնեցինք, սակայն արդի ձեւափոխութիւններով վերածուեցաւ երեք տարբեր մասերու, որոնց երկուքը (այն է 310 և 312րդ օրինակները) մակաթեւին ու ենթաթեւի ծղակարին կողմի մասերը կ'ներկայացնեն և մէկն ալ արմուկին դէմի մասը (որ է 314րդ օր.)։

Թերեւս ծածանող պաստառակ մ'ալ կցել ուզուի որ արմուկին կողմը խոտորնակի դէպի դուրս հակի ու ձեռքին վրայ իջնէ (Խնչպէս կ'երեւայ 308րդ պատկերը)։

Այս թեւն եթէ վրանոց հագուստի համար է ու մէջն ալ աստառ դնել կ'ուզուի, պէտք է այս վերջինն ալ ճիշտ կերպասներուն մեծութեամբը ձեւել. իսկ եթէ կոչչուն հագուստներու պիտի կցուի, մէջի աստառը պարզապէս տիպարին բնական մեծութեամբը ձեւելու է, և անոր վրայ փշանուակով օրինակելու է Դ—Բ—Փ գիծը, որպէս զի արմուկին մասը կցորդելու աշխատութիւնը դիւրանայ։

Արդ, կարելու համար՝ նախ մակաթեւին ու ենթաթեւին երկու մասերուն մակադիր ձեւացած շրթունքները մանր դերակարներով կ'ցընենք ներս, եզրերը մեքենայով թափանցկարեր կ'ընենք. յետոյ արմուկի մասին Դ կէտը կ'հաւասարեցնենք աստառի Դ կէտին և մինչեւ Ք կէտը կերպասին Դ—Բ գիծը կ'գերակարենք աստառի Դ—Բ գծին. ապա՝ կ'սկսինք Յական հարմէդ խորութեամբ կ հատ ծալերը ձեւացնել՝ շուրթերը դէպի վեր, մինչեւ որ Բ կէտը հաւասարի աստառին Փ կէտին։ Միեւնոյն կերպով ալ կ'գերակարենք 0—Բ—Փ—Փ՝ գիծը ենթաթեւի աստառին վըրայ. և ալէնէն վերջ ծղակարին կողմի մասերուն ծածանող եզրերը կ'գերակարենք անոնց վրայ ու ներքեւէն թագուցիկ կարերով կ'հաստատենք։

Թերեւս թէ՛ արմուկին դէմ ծալեր ձեւացնել ուզուի և թէ՛ դաստակին դէմ անկուն (Խնչպէս 307րդ պատկերը). զարձեալ պարզ թեւի տիպարին վրայ Դ—Փ գիծը քաշելով կ'կտրենք (Տե՛ս 313րդ օր.). մակաթեւի ծղակարին մասը կ'փոխադրենք կերպասին վրայ. Դ—Զ, Զ—Ը—Ե և Ե—Փ գծերը նոյն նման կ'օրինակենք (Տե՛ս

314րդ օր.)։ իսկ Բ գծին վլայ ակտը կ'նշանակենք՝ որ տիպարին Ծ կէտէն Յ հարմէդի չափ ներսօք գտնուի, ու Դ կէտէն մինչեւ ա կէտ կոր գիծ մը կ'քաշենք. ա կէտէն Յ—Յ հարմէդի չափ վարօք հողիզոնական գիծ մ'ալ քաշելով կ'ունենանք ա—Բ անկիւնները. ու Բ կէտէն գոգաւոր գծով մը կ'դասնանք Փ կէտին վրայ (Տե՛ս 313րդ օրինակին Դ—ա, ա—բ եւ բ—Փ գծերուն վայելութիւնը), շուրջը կարաբաժին ձգելով կերպասը կ'կտրենք։

Թերեւս ա—Բ գիծն եռանկիւնաձեւ թաթիկ մը ձեւացնել ուզուի, կամ պէս պէս դրասանքներ։

Ենթաթեւի ծղակարին կողմի մասը կ'ձեւենք ճիշտ տիպարին նման (Տե՛ս 314րդ օր.), միայն շուրջը կարաբաժին ձգելով։

Իսկ արմուկի մասը ձեւելու համար (Տե՛ս 315րդ օր.), տիպարներուն վերջին մասերը կ'կցենք իրարու՝ միշտ Ծ և Ծ' կէտերը 5—6 հարմէդ մէկմէկէ անջատ ու Ժ և Ժ' անկիւններուն հաւասարութենէն վար կ'դնենք արմուկին դէմ կաղմուելիք խորշխորշանի ծալերուն բաժիններն եղող 20—24 հարմէդը՝ որով կը կաղմուի դ կէտը։ Յետոյ քանակը կ'հաւասարեցնենք Դ կէտին ու Փ' կէտէն 6—8 հարմէդի չափ հեռու և կ'քաշենք Դ—Գ շեղ գիծը. նոյնպէս ալ 0—Ե, և Ե, Պ, զ անկիւններն արտահակ մեղմ կոր գծով մ'իրարու կ'միացնենք (Տե՛ս 315րդ օրինակին մուը սուերով յատակին ձեւը), ու շուրջը կարաբաժին ձգելով կերպասը կը կտրենք։

Ասոր կարելու եղանակը նախորդէն այն տարբերութիւնն ունի որ մէջ տեղի մասին (այն է 315րդ օր.) Ե—Պ—Գ գիծը՝ գ կէտին դէմ հակածալով խորշխորշան ձեւացնելու է, մինչեւ որ կէտը հաւասարի տիպարին Փ—Ժ գծին։

Պ Ա Ս Ֆ Պ .

ՅՈՒՆԱԿԱՆ, ՃԱԲՈՆԱԿԱՆ, ԲԱԿՈՏԵԱՆ ԵՒ ՈՒՍԱԴԻՐՈՎ

ԹԵՒԵՐ ԶԵՒԵԼՈՒ ԿԵՐՊԸ

(Տե՛ս 317, 321 և 322րդ պատկերներն ու օրինակները)

Յունական թեւ կ'անուանուի այն թեւի ձեւն որ թեզանիքը լայն, արմուկին կողմը երկայն ու միակտոր կ'ըլլայ (Տե՛ս 317րդ

պատ.): Այս թեւը ձեւելու կերպը նոյն և նմանն է ԺԴ. դասով բացատրուած թեւին (Տե՛ս ԽԱ. Տախ. 256րդ օր.). հետեւապէս, թեղանիքին համար ուզուածին չափ տարածութեան բաժին տրուիլը կախումն ունի մակաթեւին ու ենթաթեւին տիստաներուն մաս առ մաս դարձնելէն. յետոյ մակաթեւին Ե—Ժ և Ենթաթեւին Ժ'—Ե' գծերն իրալու կ'միացնենք, այնպէս որ թէ' արմուկը միակտոր կ'ըլլայ և թէ' սուրանկիւն մը կ'ձեւանայ, նոյն խակ ք կէտէն աւելի վարօք (Տե՛ս 256րդ օրինակը, շարունակ անոր ի—ը—ը զիծը դիպի վար եւ Ե—Ժ զիծն ուղղութիւնը միացուայս վերջինին): Այս թեւին տարբեր երեւոյթներով կիրառութիւնն ալ կայ զորս պիտի բացատրենք Ժ'։ գլխուն մէջ:

* *

Ճարոնական եւ բակոտեան բեւերը. — Ճարոնական թեւը յունական թեւին չափազանցեալ ձեւն է որ ընդհանրապէս վրանոց հագուստներու և առտնին հանդերձներու կ'դրուի:

Խակ Բակոտեան, այսինքն Հնդիկ քուրմերու վերարկուի թեւին մերձաւոր նմանութեամբ լայնաթեզանի թեւեր ալ կան որ առաւելապէս վրանոցներու կ'պատշաճի. այս թեւը սովորական թեւէն այն տարբերութիւնն ունի որ ծղակարին վարի մասը արմուկի հաւասարութեան հետ գրեթէ ուղղանկիւն մը կազմելու չափ խոտոր կ'շինուի, արմուկի կողմը միակտոր և թեւերանը քառորդ շրջանակի մը չափ տարածուն (Այս ձեւը շատ զորացական չըլլալուն համար օրինակ տինելն աւելորդ համարեցինք. մանաւանդ ժամանակին ԵԽԱ. Բ. հատորին ԽԱ. Տախտակի 346րդ օրինակովը գիտնականուն Ենթայցուցած ենք):

* *

Ուսաղիրով բեւեր. — Կարգ մը թեւեր եղած են որ իրենցմէ միակտոր ուսադիր կ'կազմուի (ի՞նչպէս 321 եւ 322րդ օրինակները եւ ԽԸ. Տախտակի 333րդ պատկերը): Ասոնք ալ երկու կերպով կ'ըլլան, պարզ կամ երկու կողմերը խորշխորշաններ ձեւացնելով։

Պարզ կերպը շինելու համար, գահվայէն միակտոր կպչուն թեւակ ձեւացնելու հարհանգին նման առաջամասի տիստարին երբուծը կ'հաւասարեցնենք մակաթեւի Զ և Դ կէտերուն (Տե՛ս ԽԱ. Տախտակի 248րդ օրինակը), և ուսի մակերեսին Խ'—Ծ' գիծը ստա-

ցած դիրքովը կ'օրինակենք թեւի տիստարին վրայ, որ է Դ—ա (Տե՛ս 321րդ օր.): Յետոյ ուսադիրին համար վավաքուած լայնութիւնը կէս առ կէս կ'բաժնենք Դ—ա գծին երկու կողմն ու զուգահեռարար կ'բաշենք Ե—Բ և Գ—Զ գծերը: Թերեւս ա կէտը ունատորին գէմ եռանկիւն ձեւով մը կազմել ուզուի, հետեւապէս Բ—ա և ա—զ հատուածակողմերով կ'ձեւադենք (ի՞նչպէս 321րդ օր.):

Թերեւս զուգահեռական լայնութեամբ կազմել ու արմատը նեղ եւ դէպի ուլնատոր հասնող ծայրը թաթիկի նման կոր գծերով ձեւացնել ուզուի (ի՞նչպէս 322րդ օրինակը):

Թերեւս նորածեւութիւնը պահանջէ որ ուսադիրը լայն թեւի վրայ ալ չինուի. այն ատեն տիստարը կ'փոխադրենք կերպասին վրայ, ծղակարը կ'օրինակենք՝ որ է Զ'—Ե' գիծը (Տե՛ս 322րդ օրինակը), և տիստարը պէտք եղածին չափ կ'բաշենք ետ. այս դիրքին մէջ կ'օրինակենք Լ'—Ժ' գիծը: Յետոյ Լ' կէտը մեղմ գծով մը կ'միացնենք զ կէտին և Ե կէտն ալ ընդհարձակ կորութիւնով մը Զ' կէտին. շուրջի կարաբաժնը ձգելով կերպասը կ'կտրենք (Տե՛ս 322րդ օրինակին մութ ստուերով ձեւը):

Երկութիւն ալ կարելու կերպը նոյն է, որովհետեւ ուսադիրին յատուկ պնդածուէն մը կ'դնենք, Ե և զ անկիւններուն կարաբաժնները կ'կտրենք, ուսադիրին շուրջը մանր մանր կը գերակարենք և եղարը թափանց կարով կ'զարդարենք (Թերեւս ներքեւն ալ աստառ մը անցուի): Այսեւ թեւը կ'կցորդենք անթածրին՝ երկու կողմի փոթերն ալ իրենց տեղերը դասաւորելով. կամ Ե և զ անկիւններուն ներքեւը մէկ երկուական խորշխորշան ծալեր ձեւացնելով (ի՞նչպէս ԽԸ. Տախտակի 333րդ պատկերը):

Նոյնիսկ ձիկօ թեւերուն վրայ ալ միակտոր ուսադիր կրնայ ձեւացուիլ:

Գ Ա Ս Ի Ե .

ԲԱԾԿՈՆՈՎ ԻՐԱՆԱԶԳԵՍՏՆԵՐ

(Տե՛ս ԽԸ. Տախտակի 323են մինչեւ 330

եւ 333րդ օրինակ ու պատկերները)

Կարգ մը հանդիսական և առօրեայ արդուզարդի կպչուն իրանզգեստներ կան որոնց լանջքը բաց կ'ըլլայ և ներքեւէն յատուկ

բաճկոն կամ բաճկոնակ մը կ'երեւայ (Տե՛ս 323 և 333րդ պատկերները):

Այս իրանազգեստները միաշար կամ կրկնաշար կոճկէնով ալ կ'ըլլան, մէկ սեղմօնով կամ երկու սեղմօնով. պարզ-կողամասով, կրկնակողամասով կամ կրկին—յետսամասով ալ կ'ըլլան:

Այժմ հարաբենք թէ նորաձեւութեան թերթի մը նկարը կը դիտենք ու կտեսնենք որ մէկ սեղմօնով ու չեղանկիւն կազմուած կրկնաշար կոճէլէնով և կրկնակի շինծու կրծոծիքներով, քովերն հազիւ աղդրերուն վրայ իջած և առաջակուզը սրածայր՝ կպչուն իրանազգեստ մը տեսանք (ի՞նչպէս 323րդ պատկերը եւ 324էն մինչեւ 327րդ օրինակները). ու անոր նմանը շինել կ'ուզենք:

Արդ, առաջամասին տիպարը մինչեւ կոնքի հաւասարութիւն և պարզ կրծեզրով մը կ'գծենք, ինչպէս նաեւ մէկ սեղմօն. ու եթէ անութն ամփոփելու պէտք կայ՝ անթմէջը 1 հարմէդ վեր հանելով լ՛ կէտէն մինչեւ երրուծ նոր անութ մը կ'գծենք, և կողանջատին հորիզոնական փոքրիկ սեղմօնն ալ ձեւագծելով՝ որ է թ-ծ (Տե՛ս այս ամենը 324րդ օրինակին վրայ), տիպարին շուրջէն կ'կտրենք ու կ'փոխադրենք զայն մէջը դրուելիք աստանցու հիւսակատաւին վրայ:


Նախ կ'ձշտենք կուրծքին բացութիւնը՝ որ հագագին ու կրծամէջին վարի կողմի երկու երրորդ աստիճանին վրայ կ'գտնուի, ուրեմն տիպարի Դ—Զ գծին վրայ կ'նշանակենք ա կէտը. քանակը կ'հաւասարեցնենք ա և ք կէտերուն (այս վերջինը որոշ ստհման մը չունենար, այլ քանակը կ'ուրծքին ո և է աստիճանով ուղաւած՝ բացութեան կէտին և վերի կողմն ալ ուր որ փողեզրի գիծը շօշափէ. թերեւս ուլնստորին շատ մօտ կամ զգալի կերպով վարօք հանդպի. միայն սա իրողութիւնը կայ որ կուրծքի բացութիւնը ո'րքան փոքր ըլլայ՝ ք կէտը ընդհակառակն ուլնստորէն կ'հեռանայ և բացութիւնը մեծ եղած տտեն ալ կ'մօտենայ) ու կ'քաշենք բ—ա գիծը և ընթացքը կ'շարունակենք գէպի վարորով կ'կազմուի բ—ա—զ ։ Նկատելով որ կրծափեղին ծայրը սեղմօնի Հ—Ղ գծին վերի $\frac{1}{3}$ ին գէմ կ'գտնուի. հետեւապէս այնաեղ կ'նշանակենք դ կէտը, կարկինին ոտքը կ'դնենք Բ կէտին վրայ և դ կէտէն ա—զ գծին կողմը կ'քաշենք դ—Ե աղեղը, այս աղեղը կրծեղրին վրայ կտրած կէտէն մինչեւ դ կէտ կ'չափենք ու նոյն մէծութիւնը կ'փոխադրենք դարձեալ կրծեղրը կտրած կէ-

տէն դէպի Ե աղեղին վրայ, ուր կ'հաստատուի Ե կէտը։ Հիմա
ալ նկարին վրայ կ'գիտենք կրծեղրին վարի եռանկիւնաձեւ բա-
ցութեան աստիճանը (Տէ՛ս 323րդ պատ.), և կ'տեսնենք որ առա-
ջակողման գոտեվայրին ու կոնքի հաւասարութեան վերի $\frac{1}{3}$ ին
դէմ կ'գանուի. ուրեմն տիպարին Բ—Յ գիծն երեք հաւասար
մասերու բաժնելով՝ վերի $\frac{1}{3}$ ին վրայ կ'նշանակենք զ կէտը. ապա
ուրեմն կ'քաշենք Ե—Յ—Է շեղ գիծը՝ որ կրծափեղին ըլթունքը
կ'ներկայացնէ, և կէտը կ'ճշտենք կոնքի հաւասարութենէն $\frac{1}{3}$ աս-
տիճան վերօք և քովի երկայնութիւնը սնակուշաէն $\frac{1}{3}$ աստիճան
վարօք՝ որ է՝ զ կէտ։ Սոյն լ և կ կէտէրը մեղմ կոր գծով մ'իրա-
րու միացնելէ ետք, սրածայր իրանազգեստներու հրահանգին
համեմատ Հ—Ղ—Լ գծին երկայնութիւնը սեղմօնի երկրորդ ըլշա-
գծին վրայ փոխադրելով կ'ճշտենք լ կէտն ու կ'քաշենք լ—Ե գիծը։
կրծօձիքը ձեւագձելու համար, նախ ա կէտէն մեղմ կոր
գիծ մ'սկսելով ա—Գ լարին առաջնորդութեամբ կ'տանինք մին-
չեւ Ե կէտ՝ որ է կրծափեղին վերի անկիւնը։ Միշտ նկարին
վրայ գիտելով կ'տեսնենք որ կրծօձիքունջին ծայրը կ'գտնուի
սեղմօնի ցցունին հաւասարութեամբ և քանի մը հարմէդ դէպի
առաջակողմ. հետեւապէս նոյն դատողութեամբ Հ կէտէն 2—Յ
հարմէդ հեռուն կ'նշանակենք լս կէտը. այս կէտը մեղմ կոր գծով
մը կ'միացնենք և կէտին, որ է կրծօձիքին եղրը. ապա՝ կրծօձի-
քունջին դիրքն աչքի համաչափութեամբ զննելով կ'քաշենք լս—Ժ
գիծը. հուսկ ուրեմն, կ'քաշենք՝ իրբեւ կրծօձիքի օձիք ներկա-
յացած օձիքին ըրջուն ձեւը, որ Ծ կէտէն քանի մը հարմէդ
դէպի ուսածադին վրայ յառաջացած նկատելով կ'անուանենք կ
կէտ. միեւնոյն տաեն սոյն օձիքին շարունակութիւնը գէպի կոնա-
ծագին վրայ ալ երթալուն համար՝ յետամասի տիպարին թ/կ-
նածագը կ'հաւասարեցնենք ուսածագին և կ'ունենանք օձիքին
ամբողջութիւնը, որ կոնամէջէն կ'բերենք մինչեւ կ կէտ, և այս
նախ մեղմ կոր և ապա չափագանց գոդաւոր կորութիւնով մը կը
միացնենք ծ կէտին Նկարը կ'ցուցնէ թէ սոյն կեղծ կրծօձիքին
վրայ կրկնակի եռանկիւնածեւ փոքրիկ կրծօձիք մ'եւս կայ, որ
փողեղրին դիմացէն սկսելով իջած է մինչեւ կուրծքի բացութեան
կէտը և ջջուած ծայրը կ'նայի դէպի լոնջքին դիմաց, ու օձիքին
եղրէն քանի մը հարմէդ ներսօք. ուրեմն նոյն համաչափութեամբ


կ'քաշենք թ—հ և հ—ա գծերը։ Երբեմն ալ նոյն ձեւով մետաքսեղէն կ'ծածկուի, այս պարագային հարկ չկայ տիպար հանելու, այլ հագուստն ամբողջապէս աւարտելէն ետք, մետաքսը նոյն ձեւով դերակարել ու շուրջը նուրբ ծալկարով մը վերջացնելու է։ Վերջապէս, աստառին ներքեւը տիպարցու թուղթ մը դընելով՝ նախ փշանուակով կ'օրինակենք շինծու կրծօձիքին շրջագըծերը՝ որ ծոծրակէն՝ այն է յետսամասին Ը կէտէն սկսելով կ'առնենք Ը—Ծ—բ—ա—ե գիծը, խ—ծ, խ—ե և կռնամէջէն մինչեւ կ—ծ գծերը։ Թուղթը հանելով՝ փշանուակին գծերէն կ'կտրենք ու կ'ունենանք կրծօձիքին ու օձիքին կրղծ նմանը (Տե՛ս 326րդ օրինակին բաց գոյն ստուերով ձեւը)։ Դարձեալ ներքեւը թուղթ մը դնելով՝ կ'օրինակենք եռանկիւնաձեւ կրծօձիքը, որ է բ—ա, բ—հ և հ—ա գծերը, և տիպարին շուրջէն կտրելով՝ կ'ունենանք եռանկիւն կրծօձիքին ձեւը (Տե՛ս 327 օրինակին բաց գոյն ստուերով մասը)։ Հիմա ալ բուն առաջամասին տիպարէն առնուած գըծերը փշանուակով կ'օրինակենք ներքեւի աստառին վրայ, ինչպէս են ուստագը, երբուժն ու անութը, կողանջատը մինչեւ ը կէտ, ը—լ և ի—ե, ե—զ—ե, Ծ—բ—ա—ե, սեղմօնին շրջագծերն և ծ—բ փոքրիկ սեղմօնը։ անհրաժեշտ է ունենալ նաեւ կրղջրին տրամագիծը, որ այս ալ կրկնաշար կոճկէնով հագուստներու համար ուղիղ գծով կ'ըլլայ. հետեւապէս, քանակը կ'հաւասարեցնենք Զ և զ կէտերուն ու կ'քաշենք Զ—զ տրամագիծը. տիպարը վերցնելով՝ ներքեւի աստառին վրայ կ'ունենանք ընտրուած նկարին ձեւովը առաջամասին ընդօրինակութիւնը, և շուրջը կարաբաժնեներ ձգելով կ'կտրենք (Տե՛ս 325րդ օր.)։ միայն թէ օձիքը կցուելիք եղը ամբողջապէս կարաբաժինի պէտք չկայ, այլ ե անկիւնէն 5—6 հարմէդի չափ վարօք այն է մինչեւ ն կէտ։ Սոյն աստառը (այսինքն 325րդ օրինակը) կերպասի շրջօնին վրայ դնելով շուրջը կ'դերակարենք։ կողանջատի փոքրիկ սեղմօնէն զատ երկու փոքրիկ սեղմօն ալ օձիքի բացուածքին դէմ կ'չինենք, որոնք են ձ և դ. որպէս զի Զ—զ տրամագիծին յառաջ բերած բնդայնումն ամփոփուի ու պարզ սեղմօնին հետեւանքը դարմանուի։ Կուրծքին սեղմօնը կ'կարենք, ինչպէս նաեւ ուսերն ու կողանջատները կռնակի մասերուն հետ։ և եղը կ'շրջենք ներս, կիտոսկրին անցքերը կ'ալատրաստենք եւ առբերանները կ'ծածկենք։

ՊԱԿԱՀԱԿԱՆԴՐԵՐ

ԵՐ ԶԱՆԱԶԱՆՆԵՐ



ԶԳՈՒՐ ԹԲՎԱՀԳԵՍ ԵՐ ՔԱՂԿՈՒՄԵՐ



Օձիքը պատրաստելու համար, նախ տիպարներուն նմանը պնդածուէններ կ'կտրենք և կերպասի շրջօնին կողմը շարելով շուրջերը դերակարելէ ետք, կարաբաժինները ձգելով՝ աւելորդները կ'յարդարենք, միայն թէ բուն օձիքին (Տե՛ս 326րդ օր.) վարի ծայրը 3—4 հարմէդ լայն կ'ձգենք, որ է մ—1 գիծը, մ անցիւնէն մինչեւ բ կէտին մօտերը բնաւ չենք ձգեր և անկէ մինչև կանկիւնը նեղ կարաբաժին։ Մինչդեռ եռանկիւն կրծօձիքին (Տե՛ս 327րդ օր.) ա—բ գծէն դուրս 4 հարմէդի չափ 6—7 գիծը լայն կ'կտրենք՝ որ նախորդին տեղը լեցնէ։ Ասոնց ծածանող շուրջերուն կարաբաժինները կ'շրջենք պնդածուէնին վրայ, և թէ թերուն կարաբաժինները կ'խօսի անոնք ալ ընելով՝ լաւ մը եղրերը թափանց կարեր կ'ուզուի անոնք ալ ընելով՝ լաւ մը կ'արդուկենք, ու մէջը նուրբ աստառ մը (մանաւանդ մետաքսեղէն) ծածկելով եղրերը կ'խօսի իրանազգեսղութէն) ծածկելով եղրերը կ'խօսի իրանազգեսղութէնին հաւասարութեամբը կ'կտրենք։ տին կցուելիք եղրը պնդածուէնին հաւասարութեամբը կ'կտրենք։ բացի վարի ծայրէն՝ ուր 4—5 հարմէդ երկայնութեան մը վրայ կարաբաժին կ'ձգենք որ դիւրաւ կցորդուի հագուստին։

Ա՛լ ժամանակ է որ օձիքը կցորդենք իրանազգեստին։ ուստի այս վերջինին ե—ն միջոցը ձգուած կարաբաժինը (Տե՛ս 325րդ օր.) մանը գերակարով մը կ'շրջենք ներս, և օձիքի աստառին կողմը մանը գերակարով մը կ'շրջենք ներս և օձիքի աստառին կ'կցենք օձիքի եղիմացնիս բռնելով՝ իրանազգեստին և կէտը կ'կցենք օձիքի աստառին ու ե—ն ծալլուած շուրջը զուգահեռարար օձիքի աստառին կարաբաժինին վրայ գնելով, այնչափ տեղը նուրբ ծալկարանուէնները մը կ'ընենք. այնպէս որ օձիքին երեսի կերպասը չէզօք մնայ և մը կ'ընենք. այնպէս որ օձիքին երեսի կերպասը չէզօք մնայ և միջեւը գտնուած պնդածուէնին ճիշտ եզրին հետ գտնուի։ Ապա՝ օձիքը կ'շրջենք երեսի կողմը, կերպասը կ'մղենք ետեւ՝ պնդածուէնները կ'կտրենք, սակայն զանց առնելու չէ այն չեւ ն կէտ կէտկար մը կ'ընենք. սակայն զանց առնելու չէ այն պարագան ուր հագուստին ձ և դ փոքրիկ սեղմօնները կարուելով՝ օձիքին բացուածքը կարճացած է և այժմ օձիքը քիչ մը երկայն պիտի գայ. բայց կամու թողած ենք զայն, որպէս զի հիմա այն աւելին կռնածագի կէտէն սկսելով մինչեւ բ կէտ՝ և ա կէտէն մինչեւ ե կէտ՝ օձիքը թոյլ կցենք, որ հագնուած ատեն օձիքին մինչեւ ե կէտ՝ օձիքը թոյլ կցենք, որ հագնուած ատեն օձիքին սոյն տեղերուն ծածանող շուրջերը մարմնին բոլորակ տեղերը սոյն տեղերուն ծածանող պարմին կրծօձիքն և ատոր պատած ատեն չկծկուի։ Հիմա ալ եռանկիւն կրծօձիքն և ատոր պնդածուէնին բ կէտը կ'կցենք հագուստի բ կէտին ու ա կէտը

աին. դարձեալ վրայի կերպասին մէջտեղը ետ մղելով՝ կէտկարով մը կ'հաստատենք ներքեւիններուն հետ։ Յետոյ բ կէտէն մինչեւ ե կէտ Յ—կ հարմէդ գանուած առերբանցու մասը կ'ըրջենք ներս, ինչպէս նաեւ կոնածագին դէմի սովորական կարտրաժինը և յատուկ առբելանով մը կ'ծածկենք։

Աջ կողմն երեք օլակ կ'շինենք, որուն մէկը և կէտէն 1 հարմէդի չափ վարօք, մէկը զ կէտէն 1 հարմէդ վեր և մէկն ալ այս երկուքին մէջ տեղը. յետոյ տրամադրէն բռներով փեղկը կ'շրջենք երեսի կողմը և մատիտով վերի երկու օղակներուն սկզբնակէտէն մէյ մէկ կէտ կ'դնենք. իսկ ձախ կողմը Յ հատ. այնպէս որ կոճկուած ատեն, իւրաքանչիւր կողմը Յ ական կ'համրուի:

Գմոռնանք ըսելու թէ կրկնաշար կոճկենով կպչոն իրանագ-
գեստները հագնուած ատեն՝ ներքեւը գնացող փեղիը . հանդարտ
չիենար . ուստի ձախ կողմի վերի անկիւնն ալ օղակ մը շինելու է
և աջ կողմի վերի կոճակին ներքեւն ալ շատ տափակ կոճակ մը
կարելու է , ու հագնուած ատեն նախ այս կոճկելու է և յետոյ
երեսի փեղիր :

ՄԻԱՅԱՐ ԿՈՃԿԵՆՈՎ ԵՒ ԵՌԱԿԻ ԵՌԱՆԿԻՒՆԱՁԵՒ ԿՐԾՈՉԻՔՈՎ

ԿՊԶՈՒՆ ԻՐԱՆԱՀԳ ԱՏ

Համարենք թէ նկար մը տեսանք (ՏԵ՛Ս 333րդ պատեհը) որ միաշար կոճկէնով, երկու սեղմօնով և երեք հատ իրարմէ փոքր եռանկիւնաձեւ կրծօձիքներով կլզուն իրանազդեստ մ'չ և տաշակողմն ալ կարծես թէ սրածայր բածկոն մը ձեւացած ու Ա. սեղմօնէն սիսելով կարճ թիկնազգեստի մը ձեւն առաջ է:

Արդ, քանի որ իրանազգեստն երկու սեղմօնով է, առաջամասին տիպարն ալ ընդդարձակ սեղմօնով կ'պատրաստենք (Տի՛ւ 328բդ օր.), ու կ'փոխադրենք մէջը դրուելիք աստաղցու հիւսուկտաւին վրայ. դիտելով որ կուրծքին բացութիւնը դարձեալ Դ—Զ գծին վարի $\frac{1}{3}$ ին դէմ կ'գտնուի. ուրեմն այն տեղը կ'անուանենք ա կէտ: Նախորդ հրահանդին համեմատ Բ—Ա գիծը կ'քաշենք մինչեւ Զ կէտին դիմաց, կըճեղլը միաշար կոճկէնով ըլլալուն համար. տիպարին Զ—Ե—Ո գծին դիմաց $1\frac{1}{2}$ հարմէդ զուգահեռական լայնութեամբ վերելեակի բաժինը կ'ձգենք և Բ—Ա գիծը

մինչեւ հոն շարունակելով՝ կ'ունենանք Զ' անկիւնը։ Դիտելով որ
եռանկիւն կրծօձիքներուն ծածառող ծայրերը հակած են դէպի
անթ մէջ, ուրեմն քանակը Դ կէտին (Ծերեւո քիչ մ'ալ վարոք) ու
անթատակին հաւասարեցնելով շեղ գիծ մը կ'քաշենք որ է ՚Ի—զ։
Ապա՝ կ'դիտենք որ գ անկիւնը մօտաւորապէս լանջքի լայնու-
թեան $\frac{1}{4}$ ին հաւասար աստիճանով երբուծէն հետո կ'գտնուի. հե-
տեւապէս այս հայեացքով կ'Ճշտենք զ կէտը, և եթէ սոյն կըր-
ծօձիքներուն ալէնէն ներքեւինը կոնածադը պատելով պիտի
շնուի (Ոլովկետեւ շատ անգամ այս կարգի կեղծ կրծօձիքները
ուլնստորէն ալ կ'սկսին։) յետուամասին տիպարն ուսածադին կցե-
լով, կոնածադէն վար ըրջուքի լայնութիւնը հաստատող դ կէտը
ուղղուածին չափ վարօք ճշտելէ ետք, կոնածադին առաջնորդու-
թեամբ՝ զուգահեռարար կ'ուզանք մինչեւ ուսածադ և մեղմ կոր
գծով մը կ'միացնենք զ կէտին. զ անկիւնն ալ գրեթէ ուղիղի
նմանող կոր գծով մը կ'միացնենք Զ' անկիւնին, որով կ'կազմուի
ամէնէն մեծ կրծօձիքը։ Երկրորդը կ'ճեւացնենք ՚Ծ—Ե, Ե—զ և
՚Ծ—զ գծով. ու երրորդը՝ այն է ամէնէն փոքրին ալ բ—Ե, Ե—ա
և բ—ա գծերով (Տե՛ս այս ամենը 328ը օրինակին վրայ). բայց
այս գծերը ներկայացնելու պահուն դիտելու ենք որ է և ան-
կիւնները Դ—զ լարին վրայ դտնուին և իւրաքանչիւրն ալ իւր-
ու զուգահեռական անջատութեամբ կազմուին։

Դարձեալ նկարը դիտելով՝ կ'տեսնենք որ սրամայր՝ ու
ձեւացած ծայրը կէս կ'նքի հաւասարութեան դէմ կ'գտնուի.
ուրեմն ախտաբանն Ն-Ո դիմը կէս ընելով կ'ունենանք ը կէտը. և
Ղ-Շ գծին վերի $\frac{1}{3}$ ովք ալ ը կէտն ու շեղ գծով մ'իլարու կ'միա-
ցնենք, վերջապէս, ծ-խ-լ-ի գծով ալ կ'ձեւացնենք կարճ
թիկնազգեստի հանգամանք ունեցով վէտկոր գիմը. և կ'սկսինք
փշանուակով օրինակել Խ-Ծ, Ծ-Զ', Զ'-ծ, ր-թ, ի-լ-խ-ծ
և եթէ անթմէջը դարձնելու պէտք չկայ՝ Խ-լ հ լ-ժ-ծ գծերն
ու սեղմօններուն շրջադերն ալ նոյնութեամբ Կ'օրինակենք, Մ-ի-
եւնոյն տուեն երեք կրծօձիքներն ալ զոտ զատ թուղթերու վլայ
կ'օրինակենք (օձիքին տիպարներն ամէնէն առաջ ալ կ'տունուի).
կ'առաջամասին տիպարը վերցնելով՝ շուրջի կտրաբաժները կը
ծգենք ու աստառուը կ'կտրենք (Տե՛ս 329րդ օրինակը), երեք կըր-
ծօձիքին ալ տիպարներուն նմանները պնդածուէններ կ'կտրենք

(Տե՛ս 330, 331 եւ 332րդ օրինակիներուն բաց գոյն ստուերներով ձեւերն եւ անոնց վրայ նշանակուած այբ բենական նշանակիները, որոնցմով կ'առաջնորդուի զանոնք 329րդ օրինակին կցորդելու տեղերը)։ յետոյ զանոնք կերպասներով կ'կրկնենք, յտջորդաբար իրարու ներքեւ գտնուած ներքին եզրերուն առբերանցու կերպասները ջնջելով, ի'նչպէս կ'երեւան կ—հ, ձ—լ, ն—մ առբերանցուները։ մինչդեռ ամէնէն փոքրը (որ է 332րդ օր.) լ—ն գծով ամբողջ կ'առնենք որ միւսներուն վրայ գտնուելով՝ անոնց թերին լրացնէ։ Ասոնք հագուստին կցորդելու եղանակը նախորդ հրահանգին նման կ'կատարուի։

¶ U. S. P. Q.

ԶԳՈՒՆ ԹԻԿԱԱԶԳԵՍ

(Տե՛ս ԽԹ. Տախտակ 337րդէն մինչեւ 341րդ պատկեր ու օրինակները)

Զգուն թիկնազգեստ կամ թիկնցցակ կ'անուանուի այն հագուստը որ կրծեզրն իրարմէ անջատ ու մշշէն բաճկոնը կ'երեւայ (Տե՛ս 337րդ պատ.). Երկայնութիւնը մօտաւորապէս մինչեւ կոնքի հաւասարութիւնը կ'ըլլայ և առաջակողմն ա'լ աւելի երկայն, յետսակողմը ձեւ տրուած մասերով. Ներքեւի բաճկոնը ուստագին, երբուծին ու կողանջատին հետ կցուած կ'ըլլայ՝ իրր թէ բաճկոնն առանձին հագած է ու թիկնազգեստն ալ առանձին. մինչդեռ իրողութիւնն այն է որ յետսակողմը բաճկոնին հետ կոճկուուելով կազուն իրանազգեստի դերը կ'ունենայ և առաջամասը շրջադայութեան ու առօրեայ արդաւզարդի պատշաճող թիկնազգեստի երեւոյթը:

Այս ձեւը 18—20 տարի առաջ ընդհանրացած նորաձեւութիւն մ'էր և ամէն տեսակ նիւթերով կ'չինուէր, բաց գոյն մետաքսեղէններէն սկսելով մինչեւ ամէնէն մութ գոյն ու միջին հաստութեամբ կերպաններէ: Քիչ անգամ բաճկոնը տարրեր նիւթէ կ'չինուէր. և գլխաւոր հրապոյրը կը կազմէր խիտ ու մանր կունտիկ կոճակներու միաշար տեսքը:

Ասոր ձեւելու եղանակը բացատրելէ առաջ չմոռնանք նաեւ բաելու թէ վերը յիշուած թուականներուն՝ ժողովրդեան ամէն

դասակարգն իր նիւթական կարողութեան ներած սահմանովը՝
սկսեալ հարազատ Հնդկական անխաշ մետաքսէն (Ենտիկն ըսուածը,
որ Եւրոպացիք անոր կեզդնմանը շինած ու կ'անուանեն սուա եգ-
ուիւ) մինչեւ ստորին նիւթերով պատրաստուածը կը հագնէին.
բայց առհասարակ թերութիւն մը տեղի կ'ունենար զորս կ'արժէ
յիշել իրբեւ ծիծագելի պարագայ: Այնպէս որ սոյն թիկնազգես-
տին առաջամասը կ'հակէր դէպի կողանջատ, և ազդրին դէմ
դուրս ցցուած անհաճոյ խոպոպ մը կ'ձեւանար. ամէն կար կարող
նախնական փորձի ժամանակ զայն տեսնելով կողանջատէն կը
ջնջէր, բայց զարմանալին այն էր որ հագուստն աւարտելէ ետք,
դարձեալ նոյն թերութիւնը կ'ունենար. և անշուշտ յաճախորդը
դիտել կուտայ ու կարողն ալ կ'ջանայ գոհացում տալ՝ դարձեալ
դիտել կուտայ ու կարողն ալ կ'ջանայ գոհացում տալ՝ դարձեալ
կողանջատը քակել ու նոյն խոպոպը ջնջել: Բայց, այս յարդա-
րումին պատճառով երբուծն ու անութիւն առաջակովմն ալ կ'հակի
տիգին վրայ, ու պէտք կ'ըլլայ թերեւ քակել և նոյն մասն ալ
փոքր ինչ կտրել, կարծելով որ ա՛ չարիքը դարմանուած է. սա-
կայն չափատուն հագած տտեն զարմանքով կ'տեսնէ որ միեւնոյն
թերութիւնը կայ ու կ'մնայ. թերեւս երբորդ ու չորրորդ անգամ
յարդարուի, այնպէս որ առաջամասին եզրը գայ կուրծքին վրայ
և լանջքի լայնութիւնը կէսը մնայ, բայց խոպոպը յամառաբար
միեւնոյն տեղը կ'կազմուի: Այս կարգի թերութիւններն ըստ ե-
րեւութիւն դատել ու զանոնք կարծուած միջոցներով ուղղելու
գաղափարը՝ արհեստին գաղտնեաց անտեղեակ ինքնակոչ կար կա-
րողներն են, որոնց համար իր թէ մարդոց մարմինը յարդ հա-
ւասար մակերես մ'ըլլար և կերպասն անոնց վրայ պատելով ուղ-
ուած ձեւն հրաշիւք իմն ստանար:

ԶԳԱՐԴ ԹԻԿՆԱԶԳԵՍՏԸ ԶԵՒԵԼՈՒ ԵՒ ԿԱՐԵԼՈՒ ԿԵՐՊԼ

Այս հազուստին յետսակողմը կրնայ օրուան նորաձեւութեան
մեմատ բազմամասնեայ ըլլալ. իսկ առաջամասին տիպարը ա-
պարագայի մէջ պարզ սեղմօնով կ'պատրաստուի (Տե՛ս 338րդ օր.)
իիեւնոյն տիպարով կ'ձեւուի, թէ ներքեւի բանկոնը և թէ
այի ճգուն առաջամասը (Տե՛ս 339րդ օրինակ) :

հիւսակտաւին վրայ՝ Յ կէտէն Յ հարմէդի չափ վերօք կ'նշանակենք ա կէտը (Տե՛ս 338րդ օր.) և Ժ կէտէն նոյնչափ վար ու Ք կէտը . սոյն ա և Ք կէտերը մեղմ կոր գծով մ'իրարու կ'միացնենք և գ ու դ անկիւնները կ'ձշտենք: Յետոյ կրծեզրին վերելեակի բաժինը կ'ձգենք, որ աջ կողմին համար Դ—Զ—Բ—Յ գծէն Ա հարմէդ զուգահեռաբար դրսօք կ'կազմուի Ե—Զ գիծը, իսկ ձախ կողմինը ՀՎ/Զ հարմէդով Ե—Ղ գիծը: Ծ Եւ զ անկիւններուն ստանալիք դիրքը ձեւացնելու համար, առաջակողման գտանվայրէն մինչեւ Յ կէտ՝ կրծեզրին տրամադէն դուրս դանուած բաժինները կ'շրջենք ներքեւն և վարի ծայրը Բ—Ա գծին դիրքով կը յարդարենք ու կ'բանանք, որով ա—զ—թ անկիւնները նմանածեւ օրինակուած կ'ըլլան բ—Ա գծին դիրքով և բանկոնը կոճկուուած տաեն խոտորնակի անկիւններ չերեւնար (Տե՛ս այս ամենը 338րդ օրինակին վրայ, ինչպէս նաև 337րդ պատկերը): Հուսկ ուրեմն, բոլոր շուրջը կարաբաժիններ ձգելով աստառը կ'կորենք ու կերպասին վրայ փոխադրելով կ'գերակարենք, սեղմօնները կ'կարենք, կրծեզրին ու վարի կողմի շուրժերը կ'շրջենք ներս, առարերաններով կ'ծածկենք և օղակները կ'շինենք:

Գալով վրայի թիկնազգեստին, համարենք թէ ուլստորէն մեղմ արտահակ կորութիւնով մը մինչեւ վար բաց կազմել կ'ուղենք. հետեւապէս առաջամասին տիպարը կ'դնենք հիւսակտաւին վրայ (Տե՛ս 339րդ օր.), ուսածազն ու անութը նոյնութեամբ կ'օրինակենք: Յետոյ սեղմօնի խորութեան կը սնակուշտէն՝ այն է Ժ կէտէն դէպի առաջակողմ երթալով կ'նշանակենք Ժ՝ կէտը. և տիպարին անթմէջը միեւնոյն տեղը պահելով՝ սնակուշտը կ'տանինք Ժ՝ կէտին վրայ ու տիպարին ստացած սոյն խոտոր դիրքին մէջ կ'օրինակենք կողանջատը, որ է Լ—Ժ՝ Մ՝ գիծը: Այս ձեւին համար անհամարշտ է կողանջատին փոքրիկ սեղմօնը, որ է թ-Ժ: կրծեզրին ձեւը տալու համար, Մ կէտէն սկսելով՝ մաս մը տեղ փողեզրին կ'հետեւինք որ է լ կէտ, և հետզհետէ կ'իջնենք լ, խ, ծ և կ կէտ, այնպէս որ Զ կէտին դէմ կէտին կազմուած բացութիւնը գրեթէ հաւասար ըլլայ Յ կէտին դէմ գտնուած ծ կէտին և Բ կէտին դիմացը կազմուող խ կէտը՝ երկու նախորդներէն փոքր ու ամրողջութիւնը, այն է Մ—ի—լ—խ—կ գիծը մեղմ կորութիւն մը ներկայացնէ. հուսկ ուրեմն, Մ՝ կէտը չեղ

գծով մը կ'միացնենք կ կէտին, որ առաջակողմը կոնքի հաւասարութենէն Յ—Ց հարմէդի չափ երկայն կ'ըլլայ:

Այժմ կարդն եկաւ որ բանք թէ ի՞նչ միջոց ձեռք կ'առնենք որ մել շինած ձգուն թիկնազգեստը գէպի կողանջատին կողմը չսահի: Ասոր հսմար կուրծքի ի—լ—խ գիծն վրայ երկու երեք փոքր սեղմօններ կ'շինենք, սրոնք են ն, մ և յ, և քանի որ վերէն ի վար շինծու կրծօձիք մը պիտի կցուի՝ այս սեղմօններն երեսի կերպասին հետ կրնայ կարուիլ. ուստի պարագային համեմատ սեղմօնները կ'կարենք, որոնցմով կրծեզրին կարութիւնը կը մեղմանայ ու տեղի չտար խոյս տալու:

Ահա հիմա է որ շրջուն կրծօձիքին տիպարը կ'ձեւազգենք. ուստի հագուստին ամփոխուած կրծեզրը կ'դնենք տիպարցութուզի մը վրայ և Մ—յ—կ գիծը կ'օրինակենք (Տե՛ս 340րդ օր.): Եթէ փոքր սեղմօնները կարելէ առաջ սոյն գիծն օրինակէինք՝ այն տաեն պիտի ունենայինք Մ—յ ձեւը որ անպատշաճ կորութիւնով մը կազմուած պիտի ըլլար (Տե՛ս 340րդ օրինակին վերի կողմի կետեկն զծով և երկայացած Մ—յ, Մ—հ և հ—ձ գծերը): Այս կերծ կրծօձիքներուն ծածանող շուրժը դրասանքի զանազան ձեւերով ալ կ'ըլլայ. ինչպէս Մ—հ, հ—ձ, ձ—դ և դ—կ. ուստի տիպարը նոյն ձեւով կարելէ ետք, մէջի պնդածուէնք ճիշտ նոյն մեծութեամբ կ'ձեւենք ու երեսի կերպասին ծածանող շուրժերուն մէյմէկ հարմէդ կարաբաժին կ'ձգենք, իսկ կրծեզրին շուրժէն մէ կէտէն կէտին դէպի չափ առերերանի համար ներս դարձնելու բաժին ու կ'հարմէդի չափ առերերանի համար ներս դարձնելու բաժին (Տե՛ս 340րդ օրինակին մութ ստուերով մասը):

Աւելի լաւ կ'ըլլայ կրծօձիքին վարի կողմը միակտոր ձեւացնել (Տե՛ս 341րդ օր.), ու վերի կողմը մեծ սեղմօնի մը երեւութովը կազմել՝ որ է Մ—ո և ո—Ց. և ն, մ, յ փոքրիկ սեղմօնները դարձեալ իրենց տեղերը ներկայացնելով: Մածանող շուրժը դարձդարձող կիսաբոլորչի ու սաստիկ վէտկոր գծերով կազմելը շատ կ'գնահատուի (լաւ ուսալրութեան առ սոյն 341րդ օրինակին գծապիտակն վայելչութիւնը):

Այս հագուստը կցորդելու համար, թիկնազգեստին կրծօձիքը կ'պատրաստենք և մէջի կրկին աստառու ալ կ'անցնենք, որ լաւագոյնն է մետաքսանման սահուն նիւթ մը ըլլալը. յետոյ ասոր կողութիւն է մետաքսանման սահուն նիւթ մը ըլլալը. երկու և ուստիագը կ'դերակարենք բանջատաը, անութը, երկու և ուստիագը կ'դերակարենք բանջատաը:

կոյնի նոյն տեղերուն , և ամէնէն ետք կ'կցորդենք կողամասին ու թիկնածագին : Սոյն հագուստին յետուակողմն ու բաճկոնը կպչուն ըլլալուն համար , կիտոսլլներ դնել պէտք է . ինչպէս նաեւ գոտեպինդ :

Պ Ա Ս Ի Է .

ԲԱՃԿՈՆ ԵՒ ԲԱՃԿՈՆԱԿՆԵՐ

(Տե՛ս ԽԲ. տախ. 334, 335 եւ 336րդ օրինակներն ինչպէս նաեւ ԽԹ. տախտակի 312հն մինչեւ 348րդ օրինակ ու պատկերները)

Բաճկոնը պարզապէս անթեւ իրանազգեստ մ'է , որուն առաջակողմն ընտիր կերպասներով ու կերպ կերպ զարդերով կ'ըլլայ (Տե՛ս 345 եւ 347րդ պատ.) . յետուակողմը աստառ կամ՝ դիպակի կ'ըլլայ (Տե՛ս 346րդ պատ.) : Մինչդեռ բաճկոնակ ըսոււածը միայն լանջը պատելու չափ փոքր ծաւալ մը կ'ունենայ (Տե՛ս 335 եւ 336րդ օր.) , որ կ'պատրաստուի վրայի հագուստին նոյն մասը բաց մնացած տեղէն ցուցադրուելու համար (Խնչպէս 323 եւ 333րդ պատ.) : Սոյն բաճկոնակն երբեմն մինչեւ գոտեվայր և նոյն խակ տեւելի վարօք ալ կ'ըլլայ (Տե՛ս 344րդ օր.) , որ կրծեզրը անջատ եղող հագուստներուն ներքեւէն կ'դրուի՝ բաճկոնի պատրանքով (Տե՛ս ԽԲ. տախտակի 262, 264 եւ 265րդ պատկերները) որ խնայողական միջոց մըն է :

* *

ԲԱՃԿՈՆԱԿՆԵՐ Պ ԼՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Բաճկոնակ պատրաստելու եղանակին վրայ արդէն խօսած ենք (Տե՛ս 177 էջ եւ ԽԲ. տախ. 131րդ պատ.) , բայց կ'արժէ որ այս անդամ տեւելի ընդարձակ բացատրութիւն մը տանք անոնց մասին :

Համարենք թէ մեծ ծաւալով բաճկոնակ մը շինել կ'ուզենք , որ նոյն իսկ կոնածագովը շրջապատուի . առիկա պատրաստելու համար , առաջամասի տիպարին 7—9 դիմը կ'հաւասարեցնենք աստառի ծալքին՝ որ է ա—՚ (Տե՛ս 334րդ օր.) . ապա՝ յետուամասի տիպարին ունստորը Ծ կէտին և թիկնածագի երկայնութեան մէկերրորդը ուսածագին , ուր կ'անուանենք գ կէտ : Տիպարներուն ստացած սոյն դիրքին մէջ կ'օրինակնենք Ը—Ծ—Դ դիմը , ը կէտէն

դէպ ի կոնամէջ երթալով՝ 7—8 հարմէդ վարօք Ը—Դ դիմը և Յ կէտէն դէպ ի գոտեվայրի գծին վրայ 8—10 հարմէդ հեռաւուրութեամբ ալ ե կէտը նշանակելով՝ դ կէտէն մինչեւ ուսին վրայ կռնածագին ձեւովը զուգահեռական դիմ մը կ'քաշենք ու նոյն կորութիւնը մինչեւ երրուծին դէմ շարունակելէ վերջ , մեզմ վէտկորավ կ'ձգենք մինչեւ ե կէտ և պարագային համեմատ ալ ե կէտէն 4—5 հարմէդ վարօք մինչեւ զ կէտ : Առաջակողմը սրածայր կազմել ուզուած տաեն զ կէտը՝ առաջակողման գոտեվայրէն 8—9 հարմէդ վարօք կ'միացնենք ա կէտին : Բոլոր շուրջը և փողեզը կարարածիններ ձգելով՝ աստառը կ'կարենք (Ասոր ամբողջ ձեւը Տե՛ս 344րդ օր.) . միայն պէտք չէ մոռնալ աջ կողմի կռնամէջէն՝ այն է Ը—Դ գծէն գուրլա կոճկուուելու բաժինի համար Զ հարմէդի չափ մեծ կտրել (Տե՛ս 336 եւ 344րդ օրինակները) :

Չափահաններու վրայ այսքան տարածուն բաճկոնակ շինուած տաեն վանդակածրին դէմ տճեւ խոպոպներ կ'ձեւանայ , ուստի Զ կէտին դիմաց 1¹/₂—2 հարմէդի չափ անջատութեամբ փոքրիկ սեղմօն մը կ'շինենք , որ է ե—թ :

Այս մեծ բաճկոններն ընդհանրապէս ապիղակ կ'ձեւացնեն (Տե՛ս 344րդ օր.) , որ կ'պատրաստուի նրբանկուած կերպասներէ՝ ինչպէս են ջանջիլ , շղարշատեռ , սնդուս , բեհեզ , դիպակ , ևն . . Եթէ կուրծքին կամ՝ գոտեվայրին դէմ խորշխորշաններ ձեւացնել կ'ուզուի՝ կերպասը բաճկոնին երկայնութենէն 25—30 հարմէդ տեւելի կտրելու է . թերեւս հագագին դէմ պղպջակ ձեւացնել ուզուի , Զ . գլխու Գ . հրահանգին համեմատ փողեզը կ'ձեւենք և ուզուած քանակութեամբ պղպջակներ կ'շինենք , ու աստառին վրայ դնելով կ'հաւասարեցնենք անոր մեծութեան : Թերեւս կրծամէջին դէմ ալ քանի մը կարգ պղպջակներ կազմել ուզուի (Խնչպէս 344րդ օրինակը) . այս պարագային կուրծքին երկու եղրերը փոթթելով հաւասարեցնելու է ներքեւի ստառին : Գուեկայրէն քիչ մը վերօք ալ 3—4 խորշխորշան կազմելու է , ու վարի կողմի լայնութիւնը հակածալերով հաւասարեցնելու է ստառին հետ :

Երկայն բաճկոնակները բարեձեւ կենալու համար՝ գոտեվայրին վրայ երիդ մը կ'կարենք , որ է Փ և Ֆ (Տե՛ս 344րդ օր.) , որ անոնց ծայրերը յետսակողմին վրայ կապուին :

Թերեւս առաջակողման երկայնութիւնը մինչեւ գօտեվայր հասցնել չուզուի: այն ատեն կ'առնենք դ—ե—բ գիծը՝ որ կ'յանդի մինչեւ Զ—Բ գիծն մէջտեղը (Տես 334րդ օրինակ եւ ասոր բացուած ամբողջ ձեւն ալ 336րդ օրինակը):

Թերեւս կոնածագին շուրջը պատել չուզուի, այն ատեն ալ ԾԺ կէտէն ասստիկ կոր գծով մը կ'դառնանք ք կէտ (Տես 334րդ օր: բաց զոյն ստուերով ձեւը եւ բացուած տեսն ալ 335րդ օր.):

Այս ամէնուն վրայ ալ օրուան նորաձեւութիւն եղած օձիքները կրնան դրուիլ, միշտ յետսակողմէն կոճկուուելով:

Այս բաճկոնակներն ամենապարզ զարդերով ալ կ'չինուին, օրինակի համար ճերմակի կամ դուռնաւոր ասուեակներէ, և կամ մետաքսեղններէ, որ չեղ, ուղղածիք կամ հորիզոնական դիրքով կարուած ծալեր ներկայացնեն ու մէջտեղը կեղծ հակածալ կաղմուին (ինչպէս 335 եւ 336րդ օրինակները): Սոյն հակածալերուն վրայ զարդ կոճակներ ալ կ'կարուին:

* * *

ԲԱՃԿՈՆ ՉԵՒԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

Բաճկոն շինելու համար նախ հետեւելու է պարզ-իրանապեստին ընդհանուր եղանակին, բացի յետսամասին վրայ կատարուելիք մէկ երկու շեղումներէ:

Արդ, պարզ-իրանապեստի նման յետսամասին կոնամէջը, կռնածագը և թիկնածագը գծելէ վերջ, 11, 12 և 12րդ կրկին չափերուն կէս մեծութիւններն ալ իրենց տեղերը կ'նշանակենք և թիկնատարած, կողնաւարտն ու կողանջատը կ'ձեւագծենք եւ Մ' կէտը մեղմ կոր գծով մը կ'միացնենք Շ կէտին (Տես 343րդ օր.): Եետոյ Զ—Մ' գիծն երեք հաւասար մասերու բաժնելով՝ վերի մասը կ'անուանենք ա կէտ, ու այս կէտէն փոքր չեղ գիծ մը կը քաշենք և երանի երկայնութեան վարի երկուերրորդին հաւասար բ կէտով կ'վերջացնենք. աղդրը ներկայացնող Զ—Շ գիծն վերի մէկերորդը գ կէտ անուանելով՝ բ կէտը չեղ գծով մը կ'միացնենք սոյն գ կէտին: Զ—Զ գիծը կէս ընելով՝ մէջտեղը կ'անուանենք դ կէտ և կորութեան չափին մնացած $\frac{2}{3}$ ը՝ այն է 4 հարմէդը կէս առ կէս կ'նշանակենք դ կէտին երկու կողմը, որոնցմով կ'կազմուին ե և զ կէտերը, ապա Մ'—Շ գիծը կէս ընելով կ'ունենանք է

կէտը, քանակը սոյն ե և դ կէտերուն հաւասարեցնելով հորիզոնական գիծ մը կ'քաշենք մինչեւ Գ—Հ գիծ՝ ուր կ'կազմուի ը կէտը. դ—ը գծին վերի մը կ'անուանենք ը կ'անուանենք ը կ'էտ. այժմ ը—ե—է եւ ը—զ—է կէտերէն մէյ մէկ վէտկոր շրջագծեր քաշելով սեղմօն մը կ'ձեւագծենք: Բաճկոններուն անթածիրը բնականէն մեծ կ'շինուի, որպէս զի կաշկանդումէ զերծ ըլլայ. ուստի Խ—Լ—Հ գիծը Զ հարմէդ զուգահեռաբար կ'նեղցնենք, և ահա կ'ունենանք բաճկոնին յետսամասը (Տես 343րդ օրինակին ստուերով ձեւը եւ հազնը-ուած երեւորն ալ 346րդ պատկերը):

Գալով առաջամասին, դարձեալ պարզ-իրանապեստի առաջամասին նման շրջագծերը կ'քաշենք, միայն կրկնակողամասի նման՝ վանդակի, գօտուոյ և կոնքի ծիրերուն կէս մեծութիւնները կ'նշանակենք՝ առանց մոռնալու վերջինին առաւել Զ հարմէդը (Այս չափերը կէս առ կէս դրուելուն պատճառը այն է որ առաջամասը նեղ կազմուի և անոր կերպասը քիչ սպառի): Սեղմօնը մէկ հատ կ'շինենք (Տես 342րդ օր.), և Խ—Բ—Լ գիծը Զ հարմէդ զուգահեռաբար կ'նեղցնենք: Յետոյ բուն բաճկոնին ձեւը տալու համար, նորաձեւութեան համեմատ նախ կ'ձշտենք օձիքին բացութիւնը. ուստի համարենք թէ Դ—Զ գիծն վարի մէկ երրորդ աստիճանին վրայ կազմել կ'ուզենք, որ է ծ կէտ. նոյնպէս ալ երկայնութիւնը, որ թէրեւս Յ կէտէն Զ—Յ հարմէդ վերօք ըլլայ՝ որ է ի կէտ. Ժ կէտէն վար աղդրին վերի երկուերրորդովը կը նշանակենք լ կէտն աւ վէտկոր ձեւով մը կ'միացնենք ի կէտին. ապա կ'ձշտենք սեղմօնին երկրորդ շրջագիծը և կ'քաշենք լ—ծ գիծը, որ կ'հաւասարի խ կէտին: Քանակը կ'հաւասարեցնենք Ժ կէտին ու փողեղրին՝ կ'քաշենք լ—ծ—ի գիծը. Եթէ բաճկոնը միաշար կոճկէնով պիտի ըլլայ՝ Ժ կէտէն փոքր խոտորում մը յառաջ բերելով՝ իրանազեստին տրամադէն 2 $\frac{1}{2}$ հարմէդ դրուք կ'ձշտենք ձ կէտն ու կրծեզրին զուգահեռական գնացքովը կ'իջնենք մինչեւ լ կէտ՝ որ է ծախ կողմի կոճակափեղին բաժինը, ուր թէրեւս փոքր ինչ բոլորակ ըլլայ. խակ աջ կողմը 1 հարմէդով:

Բաճկոնը օձիքով կամ կրծօձիքով չինել ուզուած ատեն (ինչպէս 345 եւ 347րդ պատ.) , յետսամասին կռնածագը կ'հաւասարեցընենք Մ կէտին ու կ'կազմենք ն—Մ գիծը. յետոյ օձիքին յետսակողմի լայնութիւնը 2 $\frac{1}{2}$ —Յ հարմէդով կռնածագին հետ զու-

գահեռութար կ'քաշենք մ—յ դիմը և աղեղնաձեւ դիրքով մը կ'մի-
ացնենք Ճ կէտին (Տե՛ս 342րդ օրինակին մուք սուերով ներկայա-
ցած ձեւը) , և մշանուակով կ'օրինակենք զայն ու կ'ունենանք
ձիգ—օձիքին տիպարը :

Բաձկոններուն յետսակողմը պարզ նիւթերով կ'ըլլայ, և բնդ-հանրապէս ալ կրկնատակ, թէեւ ուզուած ատեն միատակ ատտառով ալ կ'ըլլայ:

Բաձկոնին առաջակողմն ու օձիքը կարելու կերպը՝ բաճկոնով իրանազգեսաներ կարելու հրահանգին նմանն է :

Բաճկոնները կրկնաշար կոճկենով ուղուած տաեն , երկու գլխաւոր կերպով կ'ըլլայ . այն է կրծափեղիը կարով կամ միակտոր ; Առաջին կերպին համար՝ առաջամասին տիպարը բաժկոնի վերածելէ ետք (Տիւ 3:8րդ օր .) , համարենք թէ կրծամէջին բացութիւնը դարձեալ ծ կէտին վրայ շինել կ'ուզենք . ուստի կրծափեղիը ձեւացնելու համար՝ առաջակողմին ներքեւը տիպարցութուղթը մը կ'դնենք և սեղմօնին առաջակողմի շրջագծէն 1¹/₂—2 հարմէգի չափ զուգահեռական հեռաւորութեամբ փշոնուակով կ'օրինակենք՝ որ է ձ—դ գիծը . ինչպէս նաեւ ծ կէտէն մինչեւ վար կրծեղը կ'օրինակենք ու նոյն ձեւով կտրելով կ'ունենանք կրծափեղին նախաձեւը . կ'գառնենք զայն գիմացի կողմը որ սեղմօնի մը տեսքը կ'առնէ : Յետոյ քանակը կ'հաւասարեցնենք կ և ծ կէտերուն ու կ'քաշենք կ—ծ—հ գիծը որ կրծափեղին վրայէն կ'անցնի . արդ՝ եթէ օճիքը մեծ և կոճկեները քիչ շինել կ'ուզուի՝ այն ատեն ծ—հ գիծը ճիշտ ու ճիշտ կրծափեղին օճիքի բացութեան առաջինը կ'ներկայացնէ . իսկ հակառակ պարագային ձ կէտին բարձրութեան հաւասարութիւնը կ'առնենք՝ որ է ձ կէտ , և ձ՝ կէտը մեզմ կոր գծով մը կ'միացնենք ձ՝ կէտին . որ ամէնէն պատշաճն է : Թերեւս վարի կողմը շեղանկիւններ ձեւացնել ուղուի (ինչպէս 3:47րդ պատ .) . ուրեմն , քաղաքին դէմ սեղմօնէն մինչեւ կրծեղին ստորոտը կէս ընելով մէջտեղը կ'անուանենք իս կէտ և լ կէտը մեզմ գմբեթարդ գծով մը կ'միացնենք իս կէտին : բաճկոնին իսկական երկայնութիւնն ալ ի կէտը համարելով՝ քանակը կ'հափեցնենք իս և ի կէտերուն ու կ'քաշենք իս—իի՛—ն գիծը (ի՛—ն Գիծը իիչ մը վարօք գտնուելուն պահառը ի՛ եւ ի կէտերուն իրարմէ անջատ ըլլան և) : Թերեւս օճիքէն կրծօճիքունջ ձեւացնել

ուղուի. այն ատեն կ'զծենք 6-յ, յ-մ և մ-ձ' դիմը (Այս զծերուն վայելչութիւն տալու համար լաւ դիմէ 347 պատ. և 348-դ օրինակը)։ Կերպարը ձեւուած ատեն այս ամէնուն շուրջէն ալ կարարաժիններ ճգելու է։

Գանք կրծափեղկը միակոոր շինելու կերպին . Զ և ի կէտերը
արամալարով մ'իրարու կ'մրացնենք . յետոյ Բ կէտէն մինչեւ
արամալարը կադմուած բացութիւնը կ'փոխադրենք սեղօնին մէջ
ինչպէս քովէն կամ կռնամէջն կոճկուուելիք հագուստներուն ժա-
մանակ բացատրեցինք . յետոյ արամալարէն դուրս գտնուած
նիւթը կ'ձալենք առաջամասին ներքեւն ու կ'օրինակենք ձ—դ
գիծը , ալ միւս գործողութիւնները նախորդին նմանն են : Միայն
մոռնալու չէ օձիքը վրան առնուած ժամանակ բաճկոնին սահմանը
քիչ մը ամփոփել և առւենց օձիքի եղած ատեն ալ սեղմերիզով
մ'ամփոփել :

Թէ՛ միաշար և թէ՛ կրկնաշար կոճկէնով բաժկոններն առանց օձիքի ալ կ'չինուին, և ընդհանրապէս ձ' անկիւնը կիսաբոլորակ մը կ'ձեւացնեն :

(Տես Ծ. տախտակ 349ին մինչեւ 358րդ օրինակներն ու պատկերները)

Պահճաւանդը փոքր ստնամբարձի մը նմանութիւնն ունի ու գրեթէ լայն գոտիի մը պատրանքը կ'ընծայէ, ժամանակի նորաձեռնութեան համեմատ վարի և վերի բարձրութիւնները փոփօխութիւն կ'կրեն. օրինակի համար՝ երբեմն երանին կէս բարձրութենէն մինչեւ գոտեվայր կ'ըլլայ (Տե՛ս 354րդ պատ.), երբեմն ոնակուշտէն քիչ մը վարօք (Տե՛ս 353րդ պատ.) և երբեմն ալ մինչեւ ազդրերուն վրայ իջած կ'ըլլայ (Տե՛ս 356րդ պատկերը):

Պատճառաւանդը շատ հինուց ծանօթ զարդ մէ, նոյն խոլ քսանն եռսուն դար առաջ երթալով դարձեալ երկու սեռի ագանելեաց արդուզարդին հետ խտանուած կ'տեսնուի, մանաւանդ իշխանական ու ազնուապետական շրջանակներու մէջ։ Իր ծագումէն ի

վեր հարիւրաւոր շրջաններ ու զանազան ձեւալիուսութիւններ կրելով հանդերձ ։ այսօր դարձեալ նորաձեւութեան դէնիթն է ան ։ նոյն իսկ քղանցքներուն հետ կցուելով ։

Ընդհանրապէս պախճաւանդը միւս հագուստներէն բոլորովին անկախ դարդ մ'ըլլալով ։ շատ անդամ անոր ներքեւէն կրելիք սուկանին ու քղանցքին դոյներէն տարրել դոյն է ու նիւթէ կը շնուի ։ ձմռան եղանակի համար՝ առհասարակ թաւիչէ կ'ըլլայ ։ Գիշերուան երեկոյթներու համար՝ սնդուսէ և օրուան գործածելիները թերեւս քղանցքին կերպասէն ։ ևայն ։

* *

ՊԱԽՃԱԽԱՌՆԴԼ ԶԵԽԱԳԾԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Պարզ կամ կրկնակրղամասով իրանազգեստին տիպարներուն առաջամասը կ'զնենք տիպարցու թղթի մը վրայ (Տես 349րդ օր.) Բ. կողամասին Հ—Զ գիծը կ'հաւասարեցնենք առաջամասի Լ—Ժ գծին ։ Ա. կողամասին Յ—Պ գիծը Բ. կ'զամասի Յ—Զ գծին և յետամասի Կ—Խ գիծը Ա. կողամասի Կ—Ղ գծին ։ առանց կարեւութիւն տալու ազգերին ու երանին իրարու վրայ ելած դիրքերը ։ իրանազգեստին տիպարները պարդ կողամասով ալ եղած տաեն՝ տիպարները կցելու եղանակով դարձեալ նոյնն է (Տես 350 օր.)։

Արդ ։ համարենք թէ քովերը շատ ցած և յետակրղմու առաջակրղմը սրածայր պախճաւանդ մը շինել կ'ուղենք ։ ուրեմն յետակրղմի Գ կէտէն գոգաւոր կոր գիծ մ'սկսելով կ'էջեցնենք կողանջատին վարի մէկերորդ աստիճանին վրայ ու անկից ալ միւնյոյն գողաւոր դիրքովը կ'բարձրացնենք մինչեւ Զ կէտ (Տես 349րդ օր. ողբայսկերպ զծուած ձեւը) ։ Եթէ կը միւնքը միակտոր պակարը (Տես 351րդ օր.) ։ Ասոր մէջը բարտկ կանեփեայ կտաւէ անդածուէն մը կ'դրուի ։ զար կ'ձեւենք ճիշտ տիպարին մեծութեամբը ։ իսկ կարաբաժիններն երեսի կերպասէն միայն կը ձգենք ։ որ շուրբթերը կոչու ըլլայ ։

Պախճաւանդը լրացով եղած տաեն խոհեմութիւն չէ որ ամէն հազնիլ ու հանելու ժամանակ խրացը քակուի ու անցուի ։ մանաւանդ գոնաւոր եղած տաեն ։ քանզի կ'արտափու ու կ'ձմրթկի ։ ուստի աջ կամ ձախ կողմի Ե—Ճ գծէն բաց ձգելու է (351րդ օր.) ։

Եթէ քովերն ազգերուն վրայ իջեցնել ուղուի (ինչպէս 355 և 356րդ պատկերները) ։ այն տաեն անուսազն չորս մասէ կ'բաղկանայ (ինչպէս 357րդ օր.) ։ հետեւսպէս վերի կողմի բարձրութիւնն ու դարձդարձիկ ձեւերը տալէ վերջ ։ վարի կողմն ալ սրածայր իրանազգեստի նման կ'ձեւենք և իրաքանչչեւր մոսի վրայ ներկայացած ձեւերը փշանուակով կ'օրինակենք կանեփեայ կտաւին վրայ (Տես 357րդ օրինակը) ։

Թերեւս առաջակողմը միտւառը շինել ուզուի և սեղմօննեռուն վերի կողմը մանւածակապով (ինչպէս 356րդ պատ.) . այն ատեն սեղմօնին ցցունը 1^{1/2} հարմէգի չափ անջատելով՝ չ' կէտէն մինչեւ Վ' կէտ' կ'քաշենք Հ—Ղ' գիծը, որպէս զի վերի կողմն անջատ մնայ (Տե՛ս 349րդ օրինակը):

* * *

ԶԳԱՓՈԽ ԶԵԼՈՎԾԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Թէպէտեւ ձգափոկն ընդհանրապէս առտնին հագուստներու վրայ կցուելիք զարդ մ'է, բայց երբեմն արսաշին արդուզարդի զգեստներու վրայ ալ կ'գրուի եւ կարծես թէ անոնք մասնաւոր պատշաճութիւն և հրապոյը մ'ունին ձգափոկերով ուսերէն կախուած ցուցնելը. այս կարգէն է նաեւ պախճաւանդը (Տե՛ս 355 և 356րդ պատկերները): Ձգափոկը շատ անգամ առաջակողման գոտեվայրէն կ'սկսի և ուսին վրայէն դառնալով կ'յանդի մինչեւ յետսակողման գօտելայրը: Եւսերբեմն լանջքին ու թիկնամէջին դէմ իրար կ'խաչաձեւեն, այսինքն առաջակողմի աջ կողմէն սկսելով ձախ ուսին վրայէն դարձեալ կ'երթայ մինչեւ աջ յետսակողմ և փոխադարձը: Բայց այս ամէնուն ալ ձեւագծելու սկզբունքը նոյնն է:

Սրդ, համարենք թէ անութին առաջակողման հաւասարութենէն սկսելով, երբուծին, տիգուսյօդին ու թիկնաւարտին ընթացքով մինչեւ յետսակողման անութի հաւասարութիւնը ձեւացնել կ'ուզենք (Տե՛ս 350րդ օրինակին վրայ բաց գոյն ստուերով մասերը). ուստի Խ—Ը գծին դիրքը հորիզոնական ձեւովը՝ կ'ձեռք մինչեւ պախճաւանդին վերի եզրը՝ որ է ձ կէտ. յետոյ սոյն Խ—Ը—ձ գծէն 3^{1/2}—4 հարմէգ զուգահեռական լայնութեամբ կ'քաշենք կ—հ գիծը: Ճիշտ միեւնոյն եղանակով ալ յետսամասին վրայ կ'քաշենք Խ—Ը—Ը և Խ—հ գծերը:

Թերեւս ձգափոկին ծայրերը պախճաւանդին Հ' և Բ անկիւններէն տիգուսյօդը գգուելով անցնի. այս պարագային առաջամասին վրայ կ'ձեւագծենք Խ—Ը և կ—մ գծերն ու յետսամասին վրայ ալ Խ—Ը և Խ—Ը գծերը (Տե՛ս 350րդ օրինակին վրայ՝ ուր այս երկու վերջինները մուր ստուերով ներկայացւցած են):

Համարենք թէ այս վերջին ձեւը կ'նախնտրենք ձեւելու. ուստի ներքեւը ախալարցու թուղթ մը դնելով՝ փշանուակով կ'օրինակենք Խ—կ, կ—մ, Խ—Ը և յ—մ գծերը, ինչպէս նաեւ Խ—Ը,

ի—ն, ն—ը և ս—ն գծերը (Տես 350րդ օր.)։ Այս գծերէն խնամով կ'կարենք ու պնդածուէնցու բարակ կանեփեայ կտափ մը վըրայ փոխադրելով, և—կ գիծը կ'կցենք ի—ն, գծին (Տես 358րդ օր.)։ և ստացած ձեւովը կ'կարենք, որով ուսոր միակտոր կ'ըլլայ։ Թերեւս ձգափոկին ծայրերը պախճաւանդին վրայէն կոճակներով դնել ուզուի. այն ատեն ալ փոքր եռանկիւններ կ'ձեւացնենք (Տես 355րդ պատկերը և 358րդ օրինակը)։

Ահա միշտ այս սկզբունքով՝ ձգափոկին ծայրերն ուրիշ սկզել ու ուր որ յանդի կ'ուզուի, իրանազգեստի տիպարին վրայէն օրինակելով՝ զանոնք բերել կերպասին վրայ իրարու միացնելու է։ Թերեւս ուսին վրայ անջատ ըլլան ու այն տեղ կոճակով փակուին։ ինչպէս նաեւ ուսին վրայ ուրիշ մաս մ'ալ կցել ուզուի ու ծայրերը յետառակողմէն և առաջակողմէն ցուցնել ուզուի. այն ատեն մէն մի կողմի ձգափոկը երեք մասէ բաղկացած կ'ըլլայ, բայց տիպարը նախ միակտոր ձեւացնելու է և յետոյ ուզուած հաւասարութիւններէն բաժնելու է, առանց մունալու մէն մի ծայրէն վերելեակի բաժիններ ձգելը։

Եթէ պախճաւանդին ծայրերէն առնել ուզուի, այն ատեն ալ կ'օրինակենք ձ—ի, ի—կ, կ—ի և ի—ձ, ինչպէս նաեւ ի—ն, ի—է, է—զ և զ—ի գծերն ու կ'միացնենք իրարու (Տես 352րդ օրինակը), որ նախորդին հակառակ դիրքը կ'առնէ։

ՊԱՍ ԽՓ.

Մ Է Տ Ի Ս Ի Ս Ի Ս — Օ Զ Ի Ք Ն Ե Բ

(Տես Ծ. տախ. 359, 360, 361րդ պատկերները և 362րդ օրինակը)

Ժէ. Գարուն ապրող Ֆրանսայի Կատարինէ Մէտիսիս — Մէտիսի անուանի թագուհիին կրոծ օձիքը վերադարձ չըջաններովն արդէն ծանօթ է, ինչպէս 1890էն 92ին ալ շատ նորաձեւութիւն էր։ Այս օձիքին վերի եզրը վիզէն անջատ ձեւ մ'ունի և յետսակողմը շատ լայն կ'ըլլայ (Տես 360րդ պատ.), այնպէս որ կզերականներուն վակասին ներձաւոր նմանութիւնն ունի։ Ե՛ւ որովհետեւ նորաձեւութիւնը կայուն չէ, ուստի նոյն ոճին վրայ շատ մը ձեւեր յառաջ եկած են, օրինակի համար 1882—84ին յետ-

սակողը Յ—Կ հարմէդ բարձրութեամբ կ'չինուէր ու գէպի հագա-
գին վրայ աղեղնաձեւ կ'նեղնար (Տե՛ս 359րդ պատ.) : Մինչդեռ
1890—92ին 6—8 հարմէդ բարձրութեամբ շինուեցաւ (ի՞նչպէս
361րդ պատ.) և հետզհետէ այնպիսի ծայրայեղութեան հասաւ
որ մինչեւ 10—12 հարմէդ եղաւ անոր բարձրութիւնը (ի՞նչպէս
360րդ պատկերը) :

Այս օձիքն իր ժամանակին ամէն հագուստի վրայ ալ անխը-
տիր դրուեցաւ :

Արդ, Մէտիսիս օձիքը ձեւագծելու համար, ախշարցու թուղ-
թին վրայ կ'քաշենք Ա—Օ հորիզոնականն ու Ա—Ֆ ուղղահայեց
գծերը (Տե՛ս 362րդ օր.) : Այժմ համարենք թէ ամէնէն ցած ձեւը
շինել կ'ուղենք, ուստի բարձր օձիք շինելու եղանակին նման տի-
պարին փողեղը կ'չափենք, որ է 19 հարմէդ (Տե՛ս 145 էջի Է.
դասը) և սոսոր $\frac{1}{3}$ ը՝ այն է 6 հր. 3 հզ.ը կ'դնենք Ա. կէտէն Ա—Ֆ
գծին վրայ, որով կ'հաստատուի Բ կէտը : Սոյն Բ կէտէն շեղակի
Ա—Օ գծին վրայ ալ կ'նշանակենք փողեղը մեծութիւնն եղող 19
հարմէդը և կ'ունենանք Գ կէտը : Յետոյ Բ կէտէն մինչեւ Գ կէտ
աղեղնաձեւ զծով մը կ'ներկայացնենք օձիքին արմատը՝ սակայն
դիտնալ պէտք է թէ սոյն գմբեթարդ կորութիւնը փողեղը չա-
փէն երկայն եղած կ'ըլլայ. ուստի զայն ճշուէլու համար, երիզին
մաս առ մաս կոր գիծը չափելով 19 հարմէդին հասած տեղը կը
հաստատենք Գ կէտը. որ բնապէս Բ կէտէն ներսոք կ'մնայ և
վերջնականապէս կ'հաստատուի օձիքին ծոծրակը: Այժմ օձիքին
յետակողմի տրամադիծը կազմելու համար՝ քանակը կ'հաւասա-
րեցնենք Դ կէտին և Ա—Ֆ գծին հետ զուգահեռական դիրքով կը
քաշենք Դ—Ե փոքր ուղղահայեցը: Դ կէտէն Դ—Ե գծին վրայ
5 հարմէդ բարձրութեամբ Ե կէտը ճշուէլ ետք, սոյն Ե կէտէն
մինչեւ Գ կէտ ալ աղեղնաձեւ գիծ մը քաշելով կ'ունենանք օձի-
քին վերի շուրթը:

Եթէ միջին բարձրութեամբ շինել կ'ուղենք, այն տաեն Ա
կէտէն Ա—Ֆ ուղղահայեցին վրայ կ'նշանակենք փողեղը մեծու-
թեան $\frac{1}{2}$ ը, որ է Զ կէտը, և այս կէտէն շեղակի Ա—Օ գծին վր-
այ կ'դնենք փողեղը մեծութիւնը՝ որով կ'կազմուի է կէտը. Զ—
է աղեղը քաշելով բաղդասութիւնը. կ'ընենք, Բ—Թ գիծը կ'քա-

շենք և Թ կէտը ՅՎՀ հարմէդով հաստատելէ ետք՝ վերի եզրը ներ-
կայացնող Թ—Է գիծը կ'քաշենք, որ նախորդէն աւելի բարձր ու
աւելի կորնթարդ ձեւ մը կ'առնէ:

Եթէ շատ բարձր շինել ուղենք, այն ատեն ալ Ա—Ֆ գծին
վրայ կ'նշանակենք փողեղը մեծութեան $\frac{2}{3}$ ը (Տե՛ս 362րդ օր.),
ուր կ'հաստատուի Ճ կէտը, բայտ կարդին կ'նշանակենք Ի կէտն ու
կ'քաշենք Ճ—Ի գիծը որ գրեթէ քառարդ շրջանակի մը ձեւը կ'առ-
նէ եւ փողեղը մեծութիւնը ի կէտէն գէպի Ի—Փ գծին վրայ
բաղդատելու ժամանակ՝ Լ կէտը չափազանց ներսօք կ'մնայ. և սա-
կայն մենք միշտ Լ—Խ գիծը կ'քաշենք Ա—Ֆ գծին հետ զուգա-
հեռական: Թերեւս յետակողմի բարձրութիւնը 8 հարմէդ շինել
ուղուի, ուստի Խ կէտը կ'հայտնականապէս կ'քաշենք Խ—Ի
գիծը որ գէպի հագագին կողմը կիսաբոլորչի հակում մը կ'ունենայ:

Այժմ սոյն երեք տարբեր ձեւերէն յայտնի կ'տեսնուի որ, Մէ-
տիսիս օձիքին վերի շուրթը ո՛րքան վզէն հեռացնել որ ուղուի,
Բ, Զ և Ճ կէտերն ալ այնքան վերօք կազմուելու են. ինչ-
պէս նաեւ յետակողմը ո՛րքան լայն որ շինել ուղուի՝ արմատն ալ
այնքան Ա. կէտէն վերօք կազմելու է:

Ժամանակ եղաւ որ այս օձիքին առաջակողմն ալ բարձր շին-
ուեցաւ, անկիւնը ծալլուած (Տե՛ս 360րդ պատկերը) և մէջի կողմը
թաւիշ, փետուր, եւայլն զարդերով:

Այս օձիքը ձեւեր եւ կարելու եղանակը նոյն եւ նմանն է
բարձր-օձիքի հրահանգին:

Պ Ա Ս Ա.

ՊՈՍՏՈՒՄՆԵՐԻՎ ԳՈՏԻՆԻՐ

(Տե՛ս Ծ. ասիստենի 363րդ պատկերը եւ 364րդ օրինակը)

Պոստումներով գօտիները շատ անգամ նորածեւութիւն եղան
է, ինչպէս նաեւ սա վերջին ժամանակները, Այս գօտիները շըր-
ջաղգեստի կիրաբանէն ալ կ'շինուին ու տարբեր նիւթերէ ալ:

Զայն պատրաստելու համար գօտիի չափին երկայնութեամբն
ու 40 հարմէդ լայնութեամբ քառակուսի մը կ'կազմենք, որ է Ա—
Բ, Ա—Դ, Բ—Գ և Գ—Դ գծերը (Տե՛ս 364րդ օրինակը): Ա—Դ եւ
Բ—Գ գծերը կէս ընելով կ'քաշենք Ե—Զ գիծը որ քովի տրամա-

գիծը կ'ներկայացնէ : Արդ , համարենք թէ յետուակողմի և առաջակողմի մէջտեղերը երեքական կարգ պղպջակներ ձեւացնել կ'ուզենք . ուստի ՞—՞ գծէն Յ Հ արմէդ դրսօք կ'քաշենք Ի Ռ գիծը , և եթէ գլուխ ձեւացնել կ'ուզենք՝ Յ Հ արմէդ ալ ներս չընելու համար կ'դնենք ու կ'քաշենք Թ Ռ գիծը . նոյնպէս ալ Ի Ռ և Խ Ռ գծերը : Այժմ գիտնալ պէտք է թէ այսքանը կէս գոտին է , հետեւապէս նոյնչափ ալ միւս կէսին համար կ'առնենք՝ ամբողջութիւնը շեղ ըլլալու պայմանաւ : Յետոյ վերի և վարի եղանքը 2—Յական հարմէդ ներս կ'ըրջենք , պղպջակները կ'ձեւացը-նենք ու քովերը , այն է Ե Զ գիծը խորշխորշաններ կ'կազմենք . պայմանաւ որ մէջտեղին դէմ և ըրջոնին կողմը հակածալ մը ձեւանայ (Տե՛ս 364րդ օրինակին Խ Զ գիծի գիտ ցուցուած հօտանակ-ներուն շարքը) , եւ ընդամէնը վերածուի Յ Վ Զ գիտմէդի (Տե՛ս 363րդ պատկերին Փ կէտը) : Առաջակողմի , յետուակողմի եւ երկու քովերուն բարձրութիւնը պահանջուած լայնութեամբ կանգուն կեցնելու համար՝ մէյ մէկ կիտուկը դնելու է (Տե՛ս 363րդ պատկե-րին Զ եւ Բ անկիւնները) :

Այս գոտին մէկ քովէն ալ կրնայ կոճկուուի (Խ Ա Յ է 363րդ պատկերին Ժ Ե Ա Ժ Ջ այրերը) որպէս զի առջեկի զարդերը չվնասուին : Եթէ ուզուի ամրողութիւնը կանգուն կեցնել , այն ատեն ներքեւը ձեւ տրուած կանեփեայ կտաւ մը դնելու է եւ վրայի կերպան ուզուածին պէս պրկելու է , սա' ու նա' կողմին վրայ խորշխորշաններ ձեւացնելով :

ՊԱՍ ԼԱ.

Ա. ԹԱՆՅ ՄԵՂՄՈՆԻ ԿՊՉՈՒՆ ԿԱՐՃ—ԻՐԱՆԱԶԴԵՍՏ ԿՈՐ
«ՊՈԼԵՐՈ» ՇԻՆԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Տե՛ս ԾԲ . սախտակի 378 , 379 , 380 , 381 և 382րդ օր . եւ նկարները (Երբեմն կազուն կարճ—իրանազդեստները նորաձեւութիւն կ'ըլ-լան , (ինչպէս հիմա ալ Պոլերօները) ու անոնք ալ առանց սեղմօնի կ'շինուին :

Այս պարագային կարճ—իրանազդեստի առաջամասին ար-պարը սովորականին համեմատ չըջագծերը պատրաստելէ ետք , սեղ-

մօնի խորութեան ½ը՝ այն է 4 հարմէդը Բ կէտէն ներս նշանակե-լով՝ կ'ունենանք ա կէտը և միւս կէսն ալ Ժ կէտէն ներս երթա-լով՝ կ'հաստատենք Բ կէտը (Տե՛ս 378րդ օր .) : Յետոյ Զ կէտէն մինչեւ ա կէտ զգալի վէտկոր գիծ մը կ'քաշենք , և եթէ առա-ջակողմը փոքր ծայր մը ձեւացնել ուզուի , այն ատեն սոյն Զ—ա գիծը կ'չարունակենք 4—5 հարմէդ գէպի վար , որ է զ կէտ : Եթէ անթմէջը բարձրացնել պէտք է , Լ կէտը կ'կազմենք ու նոյն կէ-տէն մինչեւ Բ կէտ կողանջատին սովորական վէտկոր գծէն ա'լ ա-ւելի գտալի վէտկոր գիծ մը կ'քաշենք . և Բ կէտը մեղմ կոր գը-ծով մը կ'միացնենք զ կէտին (Տե՛ս այս ամենը 378րդ օրինակին վը-րայ բաց գոյն սուներով ծեւլ) , որով առաջամասին զօտեվայրի լայ-նութիւնը կ'վերածուի իսկական մեծութեան , իբր թէ սեղմօնները կարուած ըլլային :

Սակայն ակներեւ է թէ Զ—ա—գ և Լ—Բ գծերը չափէն ա-ւելի երկարեցան ու կարելի չէ զանոնք վարէն կարձցնել . ուստի կրծամէջէն ու կողանջատին դէմէն երկու փոքրիկ հարիզոնական սեղմօններ կ'գծենք , որոնք են դ—ե և Զ—ե , ինչպէս նաեւ զ—է և Է—լ . ասոնց անջատութիւնը 2—2½ական հարմէդ կրնայ ըլ-լալ . որովհետեւ այս սեղմօններն իբենց պարզ վիճակին մէջ ար-դէն մէյմէկ հարմէդ կ'ըլլան , մինչդեռ հիմա կրծեզրին ու կողան-ջատին խոսորումներէն յառաջ եկած տարբերութիւնն ալ 1½ական հարմէդ կուգայ , որով Զ—դ և զ—լ անջատութիւններն ալ 2½ ական հարմէդ ըլլալու են :


Այս իրանազդեստներուն կրծեզրը միակտոր չկրնար ըլլալ , այլ շրթունք չըթունքի կամ օղակ եւ կոճակներով կրնայ ըլլալ (Տե՛ս 382րդ պատ .) . հետեւապէս մէջի աստառը ձեւուած ատեն տիպուրին կրծեզրէն գուրս կ'աւելցնենք վերելեակի բաժիններն ու կարտրածիններ , և փշանուակով կ'օրինակենք փոքր սեղմօնները :

Ապա՞ աստառը կ'փոխադրենք կերպասին վրայ ու չուրջը կը դերակարենք , սակայն սեղմօններուն մասը հեռաւոր սահմանով մը կ'անցնինք , ինչպէս են թ—ծ և ի—լ (Տե՛ս 379րդ օր .) , այնպէս որ խ—Զ—ծ և Լ—Բ չուրիթերն արձակ կ'միան (Դերակարելու կերպը լաւ դիտ 379րդ օր .) : Այժմ սոյն արձակ մնացած կերպասներն ետ մղելով ներքեւի աստառին սեղմօններն առանձին կ'կարենք , յետոյ կերպասը գարձեալ վրան բերելով՝ ասոր արձակ մնացած

շլթունքին բնապէս ընդարձակ մնացած մասը մանր մանր գերակարելով կ'ամփոփենք (Տե՛ս սոյն զործողութիւնը 380րդ օր. Վրայ). աստառին կողմէնք քիչ մը ջուր քսելով կ'արդուկենք՝ մինչեւ որ կերպասին փոթերն աներեւութանան և ողորկ դիրք մ'առնեն։ Ամէնէն ետքը մոռնալու չէ բ—գ եզրը (Տե՛ս 378րդ օր.) քիչ մը ընդձգտելու, որպէս զի քաղրթին վրայ լաւ հանգչի. եւ փոքր սեղմօններուն մէջտեղէն մինչեւ գօտեվայլ՝ աստառին վրայ լաթէ կածան մը կարել ու մէջը կիտոսկը մը դնել՝ սաստիկ պրկուած որ երեսը պոստումներ չգոյանան :

Ծատ անգամ այս ձեւով պօլերօներ ալ կ'ըլլան մանաւա՞նդ
անցեալ տարիներ, միայն թէ գոտեվայրը քիչ մը թոյլ, ուստի Բ—
ա և Ժ—ը հէտերէն փոխանակ Յըդ կրիբն չափին $\frac{1}{2}$ ները ջնջելու,
1-1½ական հարմէդ նուազ կ'նշանակենք:

Թերեւս առաջակողմը բաձկոն ցուցնել ու զուի (Տե՛ս 382րդ պատ.). ուստի անոր պահանջած ձեւին համեմատ պօլերօին կերպասը նեղ պէտք է կտրել: Եւ թերեւս պօլերօին եղրը մակադրութիւնով շինել ուզուի, և անոր զանազան կողմերը դրասանքի ձեւեր տրուի (Տե՛ս 381րդ օր.): Այս պահանջումներով առաջամասը կրնայ երեք տարրեր գոյներով կազմուիլ. այն է պօլերօն, մակադրութիւնը և բաձկոնը (ի՞նչպէս կերեւայ 382րդ պատկերին վրայ). ասոնցմէ զատ բաձկոնին ու մակադրութիւններուն եղրերը տարրեր հիւսկէններով ալ կրնայ զարդարուիլ կամ ասղենկար զարդեր յօրինուիլ:



፭፻፲፯ : ፩

“ԲՈԵՆՍԵՍ, “ԱՄԲԻՌ, ՔՂԱՆՑՔՆԵՐ, ԼԵՀԱԶԳԵՍ,
ՊԱՐԵԳՈՏ, ԿԵՂԾՈՒԹԻԿ ԵՒ “ԳՈՒՆՈՒԻՆ,

፩ በ ወ

«Բ Ա Է Ն Ս Ե Ս» Տ Ր Ձ Ա Զ Գ Կ Ե Ս



ԱԼԽՍԸԿԱ», այսինքն իշխանուհւոյ զբջազգեստ կ'անուանուի այն տարազը, որ իրանազգեստը քդանցքին հետ միակողոր կազմվուած է (Տե՛ս 366 և 367րդ պատկերները):

Այս հագուստն ալ շատ մը շրջաններ բոլորած է, ճիշտ միւս արարողական հագուստներուն նըման շրջագայութեան, ընդունելութեան եւ արարողութեան հագուստ է, վերի մասը կպչուն իրանազգեստի նման կ'զարդարուի, պախճաւանդ ալ ձեւացած կ'ըլլայ. և վարի մասը քղանցքներու նման կարուած ծալեր, վերջաւորք եւայլն, ու նոյն իսկ նորաձեւութեան համեմատ՝ զառքաշ ալ կ'ըլլայ (Խնչպէս 368րդ պատ.) , զորս կարգաւ պիտի բացատրենք :

ՊԱՐԳ «ԲՈՒՆԱԼԻՍ» ՇՐՋԱԳԴԵՍՏ ԶԵԽԵԼՈՒ ԿԵՐՊԸ

(Տե՛ս ԾԱ. Տալիսակի 365հն մինչեւ 372րդ օրինակ ու պատկերներ)

Եշխանուհւոյ շրջապետատը կրնայ մէկ կողամասով , կրկնակողամասով , եռակողամասով , կրկին - յետամասով ըլլալ , բազմա-

մասնեայ ուզուած ատեն կրնանք զանոնք մինչեւ ուսածագը շարունակել՝ ժամանակի նորաձեւութեան համեմատ:

Արդ , համարենք թէ կրկնակողամասով պարզ բնենիս մը շինել կ'ուզենք , այսինքն ընդհասակով : Ու քանի որ այս հագուստին վերի կողմը ճիշտ կաչուն իրանազդեստի նման է . մինչեւ կոնքի հաւասարութիւն՝ ընտիր անսակ աստառ մը կ'դրուի . հետեւապէս յետսամասին ու կրկնակողամասներուն աստառները սովորական հրահանգին համեմատ կ'կտրենք : Եթէ առաջամասը միտակոր շինել ուզուի ու քովէն կոճկուուի (Խնչպէս ՅԵՇ պատկերը) . այն ատեն առաջամասի տիտարին Զ և Յ կ'էտերը կ'հաւասարեցնենք աստառի ծալքին (Տե՛ս ՅԵՇ պատկերի օրինակին լիւրի կողմի պարզ սուլերով մասը որ իբր քեմ միայն աստուը ձեւելու համար շինուած ըլլար) , և փշանուակով կ'օրինակենք Ծ—Դ , Դ—Զ , Խ—Ծ , Խ—Ը —Լ , Լ—Ժ—Մ և Մ—Յ գծերը , թէ որ անթմէջը բարձրացնել պէտք է՝ կ'առնենք Բ—Լ' գիծը և կողանջատին հորիզոնական փոքրիկ սեղմօնը : Գալով սեղմօններուն՝ քանի որ կրծեզրը միտակոր շինել կ'ուզենք . Բ կէտէն մինչեւ աստառին ծալքը մնացած աւելորդը չոփելով՝ նոյն մեծութիւնը կ'փոխադրենք Ղ կէտին գիծաց՝ ուր կ'հաստատուի Ղ՝ կէտը . հետեւապէս Ա . սեղմօնին առաջին շրջագիծը կ'անցնենք ճիշտ Ղ՝ կէտէն (Տե՛ս ՅԵՇ պատկերի ուր նախորդը կէտ կէտ զծով շինած ենք , այսինքն անգուծածելի համարած ենք) . իսկ միւս շրջագիծը կ'օրինակենք նախօնական ձեւովը : Յետոյ փողեզրին , ուստագիին , երրուծին , անութին ու կողանջատին մէյ մէկ հարմէդ կարաբաժին գծելով՝ աստառը կ'կտրենք : Այնպէս որ ա—Զ գիծն աստառին ծալքն եղած ըլլալով Դ—Զ գծէն անցուած փշանուակի գիծը սեղմօն մը ձեւացած կ'ըլլայ ու Յ—Յ գիծը կ'մնայ միակոտոր , զոր քիչ մը վարը պիտի բացատրենք :

Քանի որ բնենիս շրջագեստին վարի կողմը սովորական քըզանցքներուն նմանութիւնն ունի , ըսինք , հետեւապէս քզանցքի երկայնութեան երեք չափերն ալ նախապէս չափառուին վրայէն ասած կ'ըլլանք որոնք են Ա . չափ 102 , Բ . չափ 101 և Գ . չափ 100 հարմէդ : Արդ ուրեմն , երեսի կերպասը ձեւելու համար նախ յետսամասը կ'սկսինք , ուստի կերպասին գագաթը կ'ուզենք աջ կողմերնիս որ է ա—զ և ա—բ եղրն առաջակողմերնիս (Տե՛ս ՅԵՇ պատկերը) , ա կէտէն ա—բ եղրին վրայ իջնելով կ'չանակենք Առաջին

չափն առաւել Յով որ է 36+3=39 հարմէդ՝ որով կ'ունենանք դ կէտը . և սոյն դ կէտէն վար ալ կ'նշանակենք քզանցքին Գ . չափն առաւել Չով որ է 102 , ուր կ'հաստատուի ք կէտը : Յետոյ ճեւուած յետսամասին աստառն առնելով՝ ասոր Ը կէտը կ'հաւասարեցնենք կերպասին եղրին , Ժ կէտը ա—զ գագաթին իսկ Մ' կէտը որ կերպասին եղրէն խոտորնակի դէպի ներսօք պիտի գտնուի , նախապէս անոր աստիճանը ճշտուիր , այլ բաւական է որ քիչ մը խոտոր դրուի . և ապա՝ քանակը կ'հաւասարեցնենք Զ և Մ' կէտերուն ու կ'դիտենք որ քանակին վարի եղրը ք կէտին հանդպի . և Եթէ տեսնուի որ քանակը ք կէտէն դէպի ներս կ'մնայ , կ'հետեւի թէ աստառին Մ' կէտը նախապէս շատ խոտոր գրած ենք . ուստի կ'քաշենք դէպի դուրս . իսկ Եթէ պատահի որ քանակը ք կէտէն դուրս կ'մնայ , այն ատեն ալ կ'նշանակէ թէ Մ' կէտին խոտորումը քիչ եղած է , ուրեմն կ'մղենք ներս՝ մինչեւ որ Զ ; Մ' և ք կէտերը քանակին հաւասարին (լաւ դիտէ ՅԵՇ պատկերը) : Եւ ահա այս եղանակով կրնանք ճշտած ըլլալ թէ՝ Զ և Մ' կէտերը կերպասին եղրէն ո՛րքան խոտոր պիտի գտնուին : Այս շարժումներուն ժամանակ միշտ դիտելու ալ է որ Ը անկիւնը կերպասի եղրին հետ վեր ու վար երթայ և Ժ անկիւնն ալ ա—զ գծին վրայ ետ ու առաջ շարժի : Հիմա ալ քանակը կ'հաւասարեցնենք Խ—Յ գծին ու կ'քաշենք Խ—Յ—Ե գիծը . Գ . չափն առաւել Յով կ'նշանակենք Խ կէտէն Խ—Յ—Ե գծին վրայ և հասած տեղը կ'ձշտենք Ե կէտը , ամէնէն եաք ք և Ե կէտերը լարով մ'իրարու կ'միացնենք և դրաի կողմէն մեղմ կոր դիմ մը քաշելով՝ կերպասը կ'ձեւենք , վերի կողմը ճիշտ աստառին եղրերուն հաւասար և վարի կողմերը կերպասին վրայ քաշուած Մ'—Բ , Յ—Ե , և ք—Ե գծերէն (Յետսակողմը հ սկածալով շինելու եղանակը Տե՛ս յաջորդ նրանակը) :

Առաջին կողամասին աստառն առնելով կ'դնենք կերպասին վրայ (Տե՛ս ՅԵՇ պատկերի օր.) , Պ կէտին դիմաց կ'նշանակենք Յըդ չափին Յը , որ է Զ հարմէդ և ասոր կէտն ալ Մ կէտին դիմաց՝ որոնցմով կ'ունենանք և գ կէտերը . յետոյ քանակը կ'հաւասարեցնենք սոյն ա կ կէտերուն ու կ'քաշենք ա—զ—բ գիծը և Պ—Մ գծին կորութիւնն իր ընթացքովը կ'շարունակենք զ—բ Բ . - 15

գծին վրայ : Հիմա ալ քանակը կ'հաւասարեցնենք զ. և դ կէտերուն ու կ'քաշենք Ղ—դ—ե գիծը . յետամասին կողմնակի գծին նման Գ. չափն առաւել 4ով՝ 101 հարմէդը կ'դնենք զ. կէտէն Ղ—դ—ե գծին վրայ , որով կ'ձշտուի ե կէտը , խել Պ—Ռ—բ գծին վրայ կ'դնենք առանց առաւելի , այն է 100 հարմէդով կ'հաստատենք բ կէտը՝ քանակը ե եւ բ կէտերուն կ'ուղղենք ու լարով մը իրարու միացնելէ ետք , դրսի կողմէն մեղմ կոր գծով մը կ'լրացնենք Ա. կողամասին ստորոտք : Սակայն գիտնալ պէտք է թէ այս կարգի հագուստներուն կերպասը կտրելու ժամանակ մեծ հոգ տանելու է նիւթին խնայողութեանը , և միանդամայն եթէ կերպասոր գծաւոր է (ինչպէս 371րդ օր.) , անոնց ուղղութիւնն ալ պատշաճ գիրքով մ'ըլլալու են . հետեւապէս ա—բ գիծը կերպասին գծերէն մէկուն ուղղութեամբ գտնուելու է և անդիծ եղած ատեն ալ սուէջի թելերուն ըսել կ'ուղղենք թէ ա—բ գիծը կերպասի եղրին հետ զուգահեռտիան գտնուելու է , այսինքն 0—ֆ գիծը կերպասին եղրը համարելով՝ ա—բ գիծն ալ անոր հետ զուգահեռտիան ըլլալու է : Եւ ո՛րպէս զի վերի ծայրը դուրս չմնայ՝ նախնական քանի մը ողղաձեւէ ետք քաշելու է ա—բ գիծը :

Բ. կողամասը ձեւելու համար , կերպասին եղըն ա—բ գիծ համարելով (Տե՛ս 371րդ օր.) , աստաղին Զ կէտը՝ գօտիի և կոնքի չափերուն առարերութեան $\frac{1}{4}$ ը , այն է $5\frac{1}{2}$ հարմէդ ա—բ գծէն ներսոք կ'դնենք ու Շ կէտը 1 հարմէդ : Յետոյ Զ—Շ գծին կորութիւնը գ հաւասարութենէն գէպի վար՝ կերպասի եղրին Հետ ներդաշնակութեամբ շարունակել ու վերջացնելէ ետք . Բ. չափը Զ կէտէն շեղակի ա—բ գծին վրայ իջեցնելով՝ 101 հարմէդին հաստած տեղը կ'ձշտենք բ կէտը , որ է հագուստին քովի երկայնութիւնը . Այժմ քանակը կ'ուղղենք Զ—դ գծին ու կ'քաշենք Զ—դ—ե գիծը . և Գ. չափը Զ կէտէն սոյն գծին վրայ իջեցնելով՝ 100 հարմէդին հաստած տեղը ե կէտը ճշտելէ վերջ՝ ե և բ կէտերը լարով մ'իրարու կ'միացնենք : Բայց դիտնալ պէտք է թէ Ա. կողամասին ստորոտք , այսինքն ե—բ գիծն ի՞նչ լայնութիւն որ կազմուած է , Բ. կողամասին ստորոտն ալ նոյն ըլլալու է . ուստի Ա. կողամասին բ—ե գիծը կ'չափենք ու նոյն մեծութիւնը կ'դնենք Բ . կողամասին բ կէտէն գէպի բ—ե գծին վրայ՝ որով ե կէտէն գուրս կ'ունենանք զ կէտը . այժմ քանակը կ'հաւասարեցնենք դ և զ

կէտերուն ու շեղակի կ'քաշենք դ—զ գիծը , որով այն Բ. կողամասին յետասակողմը՝ երանի հաւասարութենէն դէպի ստորոտ կօհ ձեւ մը կ'առնէ (Տե՛ս 371րդ օրինակին ըլլայակերպ գիծը) . զ կէտը վայելուց կորութիւնով մը ե կէտէն միացնելով :

Եթէ նորաձեւութիւնը պահանջէ որ երանին դէմ հագուստը թոյլ կենայ . այն ատեն կ'քաշենք Զ—զ գիծը . միայն թէ այս պարագան նախատեսուած ըլլալու է որ աստառը ձեւուած ատեն Զ—ի գիծը լայնարածինով մը կտրուի և հիմա ալ պէտք եղածին չափ գործածուի :

Առաջամասին կերպասը ձեւելու համար , աստառին ա—Ց գիծը կ'հաւասարեցնենք կերպասի ծալքին (Տե՛ս ՅՅԵրդ օր . ուր կամաւ աստաղին օւուրջը կարաբաժին չեն ներկայացուցած , որպէս զի նկարը չխնողուի) , ու Ա. չափը Բ կէտէն գէպի վար 102 հարմէդին հասած տեղը կ'նշանակենք բ կէտը , որ է առաջակողման երկայնութիւնը : (Նիւթի խնայողութեան տեսակէտով՝ լաւ է որ քլանցքի առաջամաս ձեւելու նման , կերպասին ստորոտը բ կէտ համարինք և Ա. չափը նոյն կէտէն գէպի վեր նշանակելով՝ ստոտափին Բ կէտը դնենք այն տեղ) : Յետոյ գօտիի և կոնքի չափերուն տարբերութեան $\frac{1}{4}$ ը , որ է $5\frac{1}{2}$ հարմէդ՝ Ժ կէտէն դուրս կ'նշանակենք զ կէտը և $\frac{1}{2}$ հարմէդ ալ Մ կէտէն դուրս դ կէտը . քանակը կ'հաւասարեցնենք զ և դ կէտերուն ու կ'քաշենք զ—դ—Ց գիծը որով առաջ կուգայ կողմնակի ուղղութիւնն ու ստորոտի լայնութիւնը : Հիմա Ժ—Մ գծին կորութիւնը մեղմարար շարունակելով կ'միացնենք գ—դ—ը գծին : Նոյնպէս ալ սեղմօններուն վերջաւորութիւնը , այն է և զ ծայրերը կոնքի հաւասարութենէն 6—Ց հարմէդ վարօք իրարու կ'միացնենք : Գալով քովի երկայնութեան Բ—Ժ գիծը չափելով կէտ կ'ընկնէք ու մէջտեղը կ'նշանակենք Փ կէտը . յետոյ Փ կէտէն մինչեւ բ կէտ շնղակի չափելով , տեսնուած երկայնութիւնը դարձեալ Փ կէտէն շեղակի կ'նշանակենք գ—դ—Ց գծին վրայ , որով կ'հաստատուի Փ կէտը . ասու՝ Ք և բ կէտերը լարով մ'իրարու կ'միացնենք և մեղմ կոր գծով մը կ'աւարտենք :

Այժմ գիտնալ պէտք է թէ երկայն հագուստներուն առաջամասին կողմնակի երկայնութիւնը ուրքան որ Փ կէտէն մինչեւ բ կէտ չափելով՝ դարձեալ Փ կէտէն շեղակի գ—դ—Ց գծին վրայ

դնելով հաւասարեցուցինք. սակայն Բ. չափին հետալ բաղդատելու է. հետեւալէս Բ. չափը Ժ կէտէն շեղակի կ'զնենք դէպի գ—դ—Ք դժին վրայ և եթէ պատահի որ 101 հարմէդը Ք կէտէն քանի մը հարմէդ վերօք մնայ (որ քաղըթեզ կամ առաջակողման գոտեվայրը ցած եղող կազմերու կ'պատահի). այն ատեն նոյն աւելորդն ազգրին դէմ՝ այն է և—ը սահմանին մէջ ամփոփելու է (Տե՛ս 365րդ օր.), որ կողամասին հետ հաւասար դայ. ա՛պա թէ ոչ հագնուած ատեն առաջակողմի ստորոտը սրունքներէն խոյս տալով՝ տձեւ խոպողներ կ'ձեւանան : Խոկ եթէ Բ. չափը Ք կէտէն վարօք մնայ, այն ատեն նոյն կէտը կ'միացնենք Ք կէտէն, ու այլեւս ազգրին դէմ ալ ամփոփելու պէտք չմնար :

Հիմա կարգն եկաւ հագագին դէմ մնացած կերպասին աւելորդը ջնջելու. արդ, առաջամասին աստառը զուգահեռաբար կը տանինք դէպի գուրու մինչեւ որ Դ կէտը կերպասի ծալքին հաւասարի, և այս դիրքին մէջ փողեզրը որ է Ծ—ա, ուսածագը՝ որ է Ծ—Ա՛ գիծը նոյնութեամբ կ'օրինակենք, խոկ Խ' կէտէն մինչեւ Է կէտ նոր երբուծ մը կ'գծենք ու կարարաժինները ձգելով լկարենք :

Կցորդելու ժամանակ աստառին Դ—Զ սեղմօնը կ'կարենք ու կերպասի շրջօնին վրայ դնելով, շուրջը դերակարելու միջոցին անութներուն առաջակողմէն դէպի ի երբուծ իրարու աններդաշնակ ձեւը պրկելով կ'հաւասարեցնենք ու լաւ մը կ'արդուկենք : Ա առաջակողմը միակտոր հագուստներուն համար անհրաժեշտ է աստառին Զ—Յ ծալքին վրայ կիտոսիր մը դնել, սաստիկ ճգտուած :

Վերջին բաղդատութիւն մ'ալ ստորոտին ընել անհրաժեշտ է. վասն զի իւրաքանչւլու մասին ստորոտն առանձին գծուած ըլլալով՝ երկայնութիւններն իրարու կցորդուած ատեն թերեւս պատահի որ տձեւ վէտվէտումներունենան, զոր յարդարել պէտք է :

Քանի որ կրծեզրը միակտոր շինուեցաւ, բնականաբար քովէն պիտի կոճկուուի, ուստի, նախորդ գլխու Ժէ. հրահանդին համեմատ ձախ կողմի ներքեւը գանուելիք յաւելուածական առաջամասը կ'պատաստենք, միայն թէ քովի փեսեկը Մ կէտէն 7—8 հարմէդ վարօք շինուելուն համար՝ նոյն աստառէ առաջամասին կողանջատն ալ ճիշտ այնչափ երկայն ծայրով մը կ'կտրուի :

Ա. Բ. և Գ. չափերը մինչեւ գետին առնուած ըլլալով,

ստորոտը Զ հարմէդի չափ ներս շրջելու է որ երկայնութիւնը չափաւոր ըլլայ՝ եթէ քիչ ծալել ուզուի, այն ատեն ալ նոյն չփերը Ա կամ Դ' ամսան համէդ նուազով նշանակելու է :

Նորաձեւութեան սպահանջքին համեմատ, սովորական քանցքի նման ասոր ալ վարի կազմութը կօտկ կրնայ կազմուիլ (ի՞նչպէս 365րդ օրինակին վրայ թ—թ յաւելուածական զծով ու տարբեր ըստերով ցոյց տուած ենք. նիւն կերպով ալ տարունակելու է մեն մի մասի իւրաքանչիւր եզրին կամ միայն յետսակողմի կես երկայնութիւններն վար) :

Եթէ երանին դէմ փոքրը բարձիկ մը դնել չուզուի ու կպչուն ձեւով շինել նորաձեւութիւն ըլլայ, այն ատեն կողամասներուն Դ—Ռ և Զ—Ա գծերէն խոպոպի բաժիններ ձգելու պէտք չկայ. միայն թէ այս պարագային ալ ստորոտները նեզ կ'կազմուի. ուստի կոնքի հաւասարութենէն վար խոտոր ձեւելու Է ինչպէս Բ. կողամասին համար ըսինք (Տե՛ս 371րդ օրինակին դ—Գ զիծը, որ երանը կաշուն ուզուած ատեն ի կէտէն սկսելու է) :

Այս շրջագենատն եթէ կրծեզրը կոճակով փակել ուզուի (Տե՛ս 367րդ պատ.). աստառը ձեւուած ատեն՝ կրծեզրը, այն է Դ—Զ—Բ—Յ գծէն Յ հարմէդ զուգահեռաբար դէպի ի դուրս (Տե՛ս 372րդ օր.) վերելեակի բաժին ձգելու է: Այս ձեւին համար Ս. սեղմօնի առաջին շրջագիծը փոփոխելու պէտք չկայ, միայն թէ Զ կէտին դիմաց աստառին փոքր սեղմօնն անհրաժեշտ է (Այս մանրամասնութիւնը Տե՛ս 372րդ օրինակին վրայ) :

Իրանին աստառէն զատ թերեւս երեսի նիւթին բարակութեանը պատճառով (կամ ծակուակէն կերպասով եղած ըլլայ ու ներքեւէն տարբեր գոյնով մը թափանցել ուզուի), ընդհանուրին մէջ բարակ աստառ մ'ալ դնել ուզուի, այն ատեն ստորոտին շուրջը մը դնել պէտք Է երեսի նիւթէն կամ ուրիշ տեսակէ: Պատշաճութեան համեմատ համատեկը ալ կրնայ դրուիլ:

Դ Ա Ս Բ.

Պ Ա Խ Ճ Ա Խ Ա Ն Դ — «Բ Ա Ե Ն Ս է Ս» Ճ Ր Ճ Ա Զ Գ Ե Ս

ՈՒ ԹԵՐԵՒՄ ԶՍՈՒՑՈՇՈՎ ՁԵՒԵԼՈՒ ԿԵՐՊԸ
(Տե՛ս ՄԲ. Տախ. 373, 374, 375, 376 և 377րդ օրինակ ու պատկերները)

Իշխանուհւոյ շրջագեստին վերի կողմն եթէ պախճաւանդ

ձեւացնել ուզուի . նախորդ գլխու իջ . դասի հրահանգին համեմատ իրանազգեստին տիպարները քովէ քով շարելով (Տե՛ս Ծ . տախտակի 349, 350րդ օր.), պախմաւանդին վերի բարձրութիւնն ու սա կամ նա ելեւչաւոր ձեւերը տալէ ետք . իւրաքանչիւր մասին ստացած ձեւերովը՝ մինչեւ կոնքի հաւասարութիւն՝ մէջի աստառները կ'կտրենք, եթէ քովէն պիտի կոճկուուի՛ Ա . սեղմօնի առաջին շրջագիծն ալ կ'նորոգենք, (ի՞նչպէս 373րդ օրինակը) :

Համարենք թէ երեսի կերպասը ձեւելու առաջնութիւնը յետսամասին ընծայեցինք, ու կ'ուզենք ալ որ կոնամէջը՝ յետսակողման գոտեվայլը մինչեւ վար հակածալ մը ձեւացնենք . ուստի կերպասին ծալքը կ'ուղղենք մեր առաջակողմը, որ է 0—Ֆ գիծ (Տե՛ս 375րդ օր.) : Յետոյ մէջքին դէմ 10 և ստորոտին դէմ 15 հարմէդ ներսօք Զ և Ֆ' կէտերը նշանակելով՝ հորիզոնաբար իրարու կ'միացնենք որ է Զ—Ֆ' գիծը . աստառին Զ—Մ' գիծը (այն է կարաբաժին ճգուած եղբր) կ'հաւասարեցնենք Զ—Ֆ' գիծին ու կ'թողունք որ վերի կողմը պէտք եղածին պէս հանդչի . Ապա Գ . չափը գնելով՝ կերպասի ծալքին հետ կ'քաշենք Ֆ—Ֆ' ուղղահայեցը , քանակը Խ—Յ գծերուն հաւասարեցնելով կ'քաշենք Խ—Յ—Ե գիծը . Գ . չափով կ'ձշտենք Ե կէտը , Ֆ' և Ե կէտերը լարով մը կ'միացնենք ու մեզմ՝ կոր գծով մը կ'աւարտենք . որով կ'ունենանք բնդհասակով քղանցքին ձեւը : Օ կէտը շեղ գծով մը կ'միացնենք Զ կէտին ու Եթէ կոնամէջը մանուածակապով ներկայացնել կ'ուզուի . կ'առնենք Զ—ա գիծը և յետոյ ա—բ , բ—է և Է—Խ գծերը :

Եթէ զառքաշ ալ ուզուի , այն ատեն կ'որոշենք անոր երկայնութիւնը . համարենք թէ Գ . չափին կովը շինել կ'ուզենք . ուրեմն Ֆ կէտէն 0—Ֆ ծալքին վրայ իջնելով 25 հարմէդին հասած տեղը կ'նշանակենք լ կէտը . Ե կէտէն վար ալ կ'գնենք 25 հարմէդին 2/3 ըն ու կ'ձշտենք զ կէտը : Յետոյ լ կէտէն մեզմ կոր գիծ մը քաշելով կ'երթանք թ կէտ և գծին ընթացքը սաստկացնելով կ'բարձրացնենք զ կէտ :

Հագուստը զառքաշով եղած ատեն , յետսամասէն ետք առաջամասին կերպասը ձեւելու է :

Արդ , համարենք թէ զարձեալ կրծեղը միակտոր շինել կ'ուզենք . ուստի նախորդ դասի հրահանգին համեմատ առաջամասին

աստառը կ'հաւասարեցնենք կերպասի ծալքին , որ է 0—Ֆ (Տե՛ս 373րդ օր.) կողմանի ուղղութիւնը կազմով Գ—Ա—Բ գիծը կ'քաշենք ու Ֆ—Բ գիծը կ'ճշտենք : Եթէ և . սեղմօնին ցցուռնէն մինչեւ գոտեվայը մանուածակապով զարդարել ուզուի , այն ատեն 2—21/2 հարմէդի չափ Հ կէտը կ'անջատենք , որով պախմաւանդին վերի ձեւերը կ'կազմուին Խ—Բ . Բ—Հ' և Հ'—Գ' գծերով (Տե՛ս 373րդ օրինակին զծաւոր սուռերով ձեւը) : Իսկ Եթէ մանուածակապը մէջտեղը ձեւացնել ուզուի (ի՞նչպէս 377րդ նկարը) , այն ատեն ալ կ'առնենք լ—Կ գիծը (Տե՛ս Ծ . տախ . 350րդ օր.) : Յետսակողմը զառքաշ եղած ատեն , ոովորաբար առաջամասին սոսորոտը կերպասի ծալքին հետ ուղղահայեց գծով կ'ներկայացուի՝ որ է Ֆ—Բ' գիծը (Տե՛ս 373րդ օրինակին սուռերի մուր սուռերով արբերութիւնը) :

Համարենք թէ այս անգամ ալ մէկ կողամասով շինել կ'ուզենք . ուրեմն ընդհանուր սկզբունքին համեմատ՝ կողամասին աստառը ա—գ գծին հաւասարեցնելով (Տե՛ս 374րդ օր.) , մնանկուշտէն վար կ'նշանակենք Բ . չափը , որ է Բ կէտը . քանակը կ'հաւասարեցնենք Ղ—Դ գծին ու կ'քաշենք Ղ—Դ—Ե գիծը և Գ . չափով ալ կ'ձշտենք Ե կէտը : Եթէ հադուստն ընդհանուր պիտի ԲԼՄ' Ե—Բ լարը կ'քաշենք ու դրսի կողմէն մեզմ կոր գծով մը կ'աւարտենք : Իսկ զառքաշի վերածելու համար , Ե կէտէն վար կ'նշանակենք յետսամասին դրուած 25 հարմէդին 2/3 ը , որով կ'կազմուի է կէտը . գալով կողանջատին՝ առաջամասի Ժ կէտէն մինչեւ Գ' կէտ կ'չափենք ու տեսնուած մեծութիւնը կ'գնենք ասոր Զ կէտէն ա—Բ գծին վրայ և հասած մեզմ կ'ունենանք զ կէտը (Տե՛ս 373 և 374րդ օրինակները) : Յետոյ Է կէտն ընդարձակ ու սաստիկ վէտկոր գծով մ'իրարու կ'միացնենք :

Եթէ զառքաշն առաջամասի սաստիկին երկուերրորդէն սկսել չուզուի . այն ատեն կ'առնենք Ֆ—Բ գիծն ու կողամասն ալ Է—Բ վէտկոր գծովը (Տե՛ս 374րդ օրինակները) :

Սոյն պախմաւանդով շրջազգեստը քանի որ քովէն պիտի կոճկուուի , ձախ կողմի կողամասին կոճակափեղի մը կցելու է (Տե՛ս 376րդ օր.) . այս ալ ձեւելու համար՝ առաջամասի կողանջատին ներքեւը ախալացու թուղթ մը դնելով , նախ կ'օրինակենք Ե—Ժ—Մ—Ճ գիծը՝ որ Մ կէտէն 6—7 հարմէդ վարոք գտանուելու է .

յետոյ և հարմէդ զուգահեռական լայնութեամբ ալ կ'զծենք մ—
—ն գիծն ու փշանուակով օրինակելով կ'կտրենք, և նմանը երեք
հատ կերպաս կ'կտրենք, շարջը կտրաբաժիններ ձգելով (ինչպէս
376րդ օր.): Ասոնց մէկ հատը առաջամասին կողանջատի գիեռե-
կին առքերանի կ'ծառայեցնենք ու երկու հատն ալ կողամասի կո-
ղանջատին կ'կարենք, այս վերջիններուն միջոցը աստառէ պնդա-
ծուէն մը դնելն անհրաժեշտ է որպէս զի կ'աճակները հաստատուն
ըլլան (Երբեմն պախաւանդի բարձութիւնն անուրի հաւասարու-
թենեն ալ շինուելուն համար է որ կոնակիեղին երկայնուրիւնը
կ'կտեն առած ենք),

Զառքաշն եթէ կրկնակողմասով հագուստի վրայ շարու-
նակել ուզուի, այն ատեն Ա. կողամասի անջտութեան դէմ՝
այն է բ կէտէն վար (Տե՛ս. ԾԳ. տախ. 386րդ օր.) պէտք է դնել
զառքաշին երկայնութեան սահմանուած թիւին (թերեւս Գ. չափի
էլ, որ է 25 հարմէդ) $\frac{1}{4}$ ը, և բ կէտէն վար նշանակելու է բ' կէ-
տք. նոյնպէս ալ Բ. կողամասին զ կէտէն վար՝ զ' կէտք ձտել
(Տե՛ս 385րդ օր.). իսկ Ա. կ'զամասին յետակողմի ե—ե' գիծն ու
Բ. կողամասին Բ—Բ' գիծը կազմելու կերպերը քիչ մը վերը մէկ
կողամասին համար գործադրուած եղանակին նմանն է:

Ոյն բացատրութիւններէն յայտնի կ'աեսնուի թէ իշխանուհ-
ոյ շրջազգեստն ըլլայ' մէկ կողամասով կամ կրկնակողմասով,
կրնայ միեւնոյն ատեն վերի կողմը պախճաւանդ ձեւանալ (ինչ-
պէս 374րդ եւ ԾԳ. տախակի 385 եւ 386րդ օրինակները), մինչեւ
վեր շարունակել, զառքաշով շինուիլ, կուրծքէն, քովէն կամ
կոնամէջէն կոճկուուիլ, ևայլն, ևայլն:

Պ Ա Ս Պ .



ԲԱՀՄԱՄԱՍՆԵԱՅ ՔՂԱՆՑԲԻ ԶԵՒՈՎ

ՊԱԽՃԱԿԱՆԴ - ՇՐՋԱԶԴԵՍ ԶԵՒԵԼՈՒ ԿԵՐՊԸ

(Տե՛ս ԾԳ. Տախակ 383, 384, 385 եւ 386րդ օրինակները)

Իշխանուհոյ շրջազգեստներ կան որոնց վարի կողմը բազ-
մամասնեայ քղանցքի ձեւով կ'ըլլայ ու անոնց նման կ'զարդար-
ուի, ասոնց արդի ձեւին վերի բարձրութիւնը՝ մինչեւ կողանջա-
տին կէսը կ'ըլլայ (ինչպէս 383րդ օրինակը):

ԾԳ. ՏԵԽԱԾՈՒՅԻ



Այս կերպով պատրաստելու համար, նախ կրկնակողամասով ու թերեւս կրկին-յետսամաս կրկնակողամասով (որ է իբ Տախակի 87րդ օրինակը) տիգար մը կ'պատրաստենք. առաջամասի տիգարին Զ և Յ կէտերը կ'հաւասարեցնենք տիգարցու թուղթի մը ուղիղ եղրին, որ է ա—բ գիծ (Տե՛ս 383րդ օր.). ու նախորդ հրահանգներուն նման շրջազգեստին շրջագծերը կազմելէ ետք, ստորոտը կատարեալ զլօց քղանցքի մը պատրանքը տալու համար՝ Ք կէտէն 10—12 հարմեղ դրաոք կ'նշանակենք Ժ կէտը, ու Մ կէտէն մինչեւ Ժ կէտ մեզմ վէտկոր գիծ մը կ'քաշենք, այնպէս որ գրեթէ կօտէ ձեւ մուտենայ, Համարինք Թ Է պախճաւանդին բարձրութիւնն ալ կողանջատի կէս բարձրութենէն ներկայացնել կ'ուղենք, ուսար կ'քաշենք ի—Լ գիծը։ Այժմ ենթագրենք որ առաջամասին ամբողջը, այսինքն աջ ու ձախ կողմերը միանդամայն հինգ հաւասար մասերով ներկայացնել կ'ուղենք, հետեւապէս կէսը բաժնելու է երկուք ու կէս մասերու։ Արդ, ստորոտը ներկայացնող Բ—Ժ գիծը չափելով կ'բաժնենք 2½ մասերու. կէս մասը կ'նշանակենք Բ կէտէն ներս, որ է ը կէտը և մնացածին մէջտեղն ալ կ'նշանակենք թ կէտը (Տե՛ս սոյն մանրամասնութիւնը 383րդ օր.): Նոյնը կ'ընենք նաեւ գօտեվայրի Բ—Ժ գիծը, բայց այս տեղ սեղմօնները հաշուական գործողութիւն մը կ'պահանջեն. այն է թէ Յ—Ժ գիծը չափելով՝ տեսնուած մեծութենէն սեղմօնի խորութիւնը (8 հարմեղը) կ'նուռազեցնենք ու մնացածը կ'բաժնենք 2½ մասերու. կէս մասը կ'նշանակենք Բ կէտէն ներս Դ կէտին համար, Դ կէտէն ներս կ'դնենք սեղմօնի խորութեան կէսը և կէտին համար, և կէտէն ներս կ'դնենք կէս մասը զ կէտին համար. զ կէտէն ներս կ'դնենք սեղմօնի խորութեան միւս կէսը և կէտին համար և կէտէն մինչեւ Ժ կէտ ալ կ'մնայ միւս մասը (լա՛ւ դիտէ 383րդ օր.): Յետոյ մէն մի սեղմօնի խորութեան մէջտեղը մէյմէկ կէտ նշանակելով՝ քանակը կ'հաւասարեցնենք Ա, սեղմօնի կեղրոնին ու ը կէտին և սեղմօնի ցցունէն մինչեւ վար հորիզոնական գիծ մը կ'քաշենք, որով Թ Է սեղմօնին տրամադիծը ներկայացուցած կ'ըլլանք և թէ Ա, մասին բաժանումը. հիմա ալ քանակը Յ. սեղմօնի կեղրոնին ու ը կէտին հաւասարեցնելով կ'քաշենք ասսր արտմագիծը։ Այս գծերուն ընթացքը մինչեւ սեղմօններուն ցցունը բարձրանալուն առթիւ՝ այնտեղ ստացած ինքնարեր հեռաւորութիւները կ'համա-

րենք իրենց բնական դիրքն ու նոյն կէտերէն կ'քաշենք իւրաքանչիւրին շրջագծերը, որոնք կոնքի հաւասարութենէն 6—8տկան հարմէդ վարօք կ'միտնան տրամադերուն (լա՛ դիտէ 38րդ օրինակը): Այժմ այն առաջամտուին ե—լ գծէն սկսելով՝ իրանազգեստին վարի կողմի բոլոր գծերը փշանուակով ներքեւի թուղթին վրայ օրինակելէ ետք, շուրջերէն ու սեղմօնի շրջագծերէն կտրելով՝ կ'ունենանք Ա. Բ. և Գ. մասերը:

Կերպասոր ձեւելու համար, նախ Ա. մասը կ'փոխադրենք կերպասի ծալքին (Տե՛ս 384րդ օր.), ու եթէ կրծեղը միակտոր կազմել կ'ուզուի, Բ կէտին դիմացը գտնուած աւելորդը կ'փոխադրենք Հ կէտէն ներս: Թերեւս վարի կողմը՝ մէջի կամ վրայի կողմէն հակածալ մը ձեւացնել ուզուի. այն ատեն Ա—ը գիծն երեք հաւասար մասերու բաժնելով՝ վարի մէկերորդին դէմ խ կէտը կ'նշանակենք. ապա տիպարին Բ, մասն առնելով՝ մտորուը որ է ը՝ անկիւն, 20 հարմէդ ը կէտէն հեռու կ'դնենք ու ծ կէտը 16 հարմէդ. խ և ծ կէտերը մէյմէկ շեղ գծով կ'միացնենք դէպի կեդրոնը որ է ձ կէտ: Ճիշտ միեւնոյն կերպով ալ կ'կցենք տիպարին Գ. մասը. ինչպէս են թ—կ և թ—հ գծերուն դիրքն ու դ անկիւնը: Տիպարներն այս կերպով շարուելովք վերի կողմերն ինքնարերար իրարմէ առաւել խստոր դիրքեր կ'առնեն, բայց անոնք կը նկատուին իրեն պաշաճութիւն. միայն ուշադրութեան առնելու դիմաւոր պարագան ոտորոտի թ թ', թ, թ' և ծ կէտերը ներդաշնակ կերպով իրարու դէմ գտնութիւր, ու վայելուչ կորութիւն մը ներկայացնելն է. որպէս զի գոտեվայրի Ա, Ե, Ը, Է կէտերն ալ վեր ու վար չշարժին: Կ'մնայ ուրեմն վերի եղրին ու հինգ երկայնութիւններուն կարաբաժինները ձգելով կերպասը կտրել (լա՛ դիտէ այս ամենը 384րդ օրինակը):

Թերեւս կերպասին լայնութիւնը նեղ ըլլայ ու Գ. մասը միակտոր ձեւացնել կարելի չըլլայ. այն ատեն հակուծալին համար վարի կողմը դրուած 20 հարմէդին $\frac{3}{4}$ թ՝ որ 15 հարմէդը և վերի կողմի 16 հարմէդին $\frac{3}{4}$ թ, այն է 12 հարմէդը Բ. մասին հետ առնելու է, ու միւս $\frac{1}{4}$ ները Գ. մասին հետ: Կերպասը չափազանց նեղ եղած ատեն՝ նոյն իսկ կրնայ իւրաքանչիւր մասերը զատ զատ ձեւուիլ, հետեւելով հակածալերուն լ—ն և —ո գծերուն (լա՛ դիտէ 384րդ օրինակը):

Գուցէ քղանցքի երկայնութեան վերի մէկերորդին դէմ Ա. և Բ. մասերէն մէյմէկ զարդանկիւն ձեւացնել ուզուի, որոնք են և մ, կամ քանի մը դրասանքներով, ևն . ևն .

Կրկնակողամասներն ալ սովորական եղանակին համեմատ կերպասին վրայ գնելով երկայնութիւնները կ'ձատենք. ու վերի կողմերը կէս կողանջատի հաւասարութենէն միայն կ'կտրենք. այն է Բ. կողամասին համար (Տե՛ս 385րդ օր.) լ—խ և Ա. կողամասին համար ալ խ—կ (Տե՛ս 386րդ օր.): Աւելորդ է ըսել թէ յետամասին վերի կողմի բարձրութիւնն ալ նախորդներուն հաւասար ըլլալու է:

Պախճաւանդին վերի ձեւը կրնայ շատ մը տարրեր կերպերով շինուիլ: Օրինակի համար, կրծամէջը սրածայր կազմել, որ է խ—լ գիծը (Տե՛ս 383րդ օր.): կամ նոյն իսկ աւելի վերէն, այն է Դ—Զ գծին մէջտեղէն:

Թերեւս բոլոր մասերն ալ եռանկիւն դրասանքներ ձեւացնել ուզուի: Միայն կողամասներուն վրայ խօսելով՝ այն ատեն կ'առնենք լ—ծ և ծ—խ գծերով (Տե՛ս 385րդ օրինակը), ու խ—ն և ն—կ (Տե՛ս 386րդ օրինակը):

Կրնայ ըլլալ որ վարի կողմը բոլոր մասերէն ալ հակածալ ձեւացնել ուզուի, կամ միայն մէկ կողմի վրայ ծալ՝ ինչպէս կ—թ և ժ—ի (Տե՛ս 385 և 386րդ օրինակներուն վրայ բաց զոյն սոււերով ներկայացած ծայրերը):

Թերեւս առաջակողմի մէջտեղին դէմ՝ երեսի կամ մէջի կողմէն հակածալ ձեւացնել ուզուի, և թերեւս երկու երեքական ծալերու շարք մը:

Գուցէ ծալեր ու հակածալեր նորաձեւութիւն չըլլան և անոնց տեղ երիզներ, ժանեակներ, բազմափոթով վերջաւորք եւայլն դրուին:

Կրնայ ըլլալ որ սովորական իշխանուհւոյ շրջագգեստն ալ սոյն պախճաւանդով ձեւին նման առաջամտասը բազմամասնեայ շինել ուզուի. այն ատեն սեղմօններուն ցցունը շարունակելու է դէպի ուսածաղ ևլն. (ինչպէս Փ. տախակի 35 և 36:դ օրինակներուն վրայ ցցունցած են):

Սոյն պախճաւանդով շրջագգեստներուն իրանին վերի կողմի ընդհատուած մասն երբեմն առանձին սուկանով մը կ'վերջանայ.

կայ ալ որ նոյն մեծութեամբ կեղծ սուկան մը կ'շինուի ու կը կցուի պախճաւանդի վերի եզրին, և այն ատեն ամելողջ քունու չըջազգեստի նման գլուխէն կ'հագնուի:

Սովորական քղանցքն ալ կրնայ պախճաւանդի վերածուիլ, զոր պիտի բացատրենք Զ. դասով:

ՊԱՍ Պ.

«Ա.Մ.Բ.Ի.Ռ» Շ. Ձ. Ա. Զ. Գ. Ե. Ս. Ց.

(Տե՛ս ԾՊ. տախ. 393էն մինչեւ 404րդ օրինակներ ու նկարները)

Ամբիոն կ'կոչուի այն շրջազգեստը որ կողանջատի բարձրութենէն դէպի վերի մասը գրեթէ կպչուն Զուամ թիկնազգեստի մը ձեւն ունի, ու անկից մինչեւ սոսրոտ միակտոր և զլու, այսինքն տարածուն է (ինչպէս 401, 402 եւ 404րդ նկարները):

Այս ձեւն ալ նորաձեւութեան շրջաններուն մէջ իրեն յատուկ տեղն ունի, ինչպէս երկու տարի առողջ ալ ասուպի նման փայլեցաւ ու շիջաւ: Ամբիոն ձեւն երեք տռում ունի: Պարազային համեմատ իրեւ շրջազգեստ կ'շինուի, կայ որ իրեւ՝ աստնին հագուստ, այսինքն նոյն ձեւով խցազգեստ կ'շինուի և ընդհանրապէս ալ զառքաշ կ'ունենայ, ու կայ ալ որ իրեւ կրկնոց կամ փոշարգել կ'շինուի: Բայց ամէնուն ալ ձեւելու սկզբունքը նոյնն է, ինչպէս այժմ պիտի բացատրենք:

Արդ, ամբիոն շրջազգեստ ձեւելու համար, պարզ-իրանազգեստի կանոններուն համեմատ նախ յետսամասին ու կողամասին հիմնական շրջագծերը կ'քաշենք (Տե՛ս 394րդ օր.), որոնք են կը նամէջը, կնոնածագը, թիկնածագը, թիկնաւարտն ու կողնաւարտը. Մ' կէան ալ մեզմ կոր գծով մը կ'միացնենք Շ կէտին: Այժմ կ'որոշենք վերի կողմը ներկայացնող իրանազգեստին ձեւը, որ գրեթէ կարճ զուամ թիկնազգեստի կամ լայն գահվայի մը նմանութիւնը կ'ունենայ: Օրինակի համար ամէնէն ծանօթ ձեւը կ'առնուի կողանջատի բարձրութեան վերի մէկերրորդէն, որ է ա—բ ուղիղ գիծը (Տե՛ս 394րդ օր.). կամ Գ—Ե գծին մէջտեղէն, այն է զ կէտէն սկսելով՝ գոգուոր գծով մը կ'միացնենք ա կէտին (ինչպէս 401րդ նկարը). կամ Ե կէտէն 2—2½

հարմէդ նոյն գծին վրայ յառաջանալով՝ հորիզոնաբար կ'իջնենք Գ ուղղահայեացին վրայ, այս տեղն ալ 4—5 հարմէդ յառաջանալով՝ կ'իջնենք Բ—Ա գծին վրայ, որով կոնսմէջին ու թիկունքներուն գէմ ուղիղ անկիւն դրասանքներ կ'ձեւանան (ինչպէս 402րդ նկարը): Բնդհանրապէս առաջամասն ալ յետսամասին նմանը կ'ըլլայ, որ է ա—բ գիծը (Տե՛ս 393րդ օր.), կամ Գ կէտէն կորնթարդ մինչեւ ա կէտ, կամ Դ կէտէն քառորդ շրջանակի մը ձեւով մինչեւ ա կէտ եւ կամ լանջքին վրայ քառանկիւն դրասանքներ ձեւացնելով: Վերջապէս նորաձեւութեան հոմեմտութեան վերի ձեւը տիպարներուն վրայ ճշտէ ետք նոյն տեղերէն կարելով իրարմէ կ'բաժնենք: Այժմ համարենք թէ երկու մասերն ալ ա—բ գծերէն առնել կ'ուղենք: ուրիշն տիպարը նոյն գծերէն կարելով յետսամասին վերի կողմի Հ և անկիւնները կ'հաւասարեցնենք աստառի ծալքին (Տե՛ս 396րդ օր.) և Բ—Ժ, Ժ—Ի, Ի—Զ, Զ—Ա և ա—բ գծերէն կարարաժիններ ձգելով կ'կարենք: Եթէ քովէն կոմկուուի կ'ուղուի, առաջակողմի վերի մասին Դ—Բ գիծն ալ աստառի ծալքին գնելով շուրջի կարարաժինները ձգելով կ'կարենք (Տե՛ս 399րդ օր.), իսկ եթէ կրծեղը կոմկուուի կ'ուղուի՝ Դ—Բ գիծն վերելեակի բաժին ձգելու է: Այս առթիւ սոյն փոքր յետսամասն ու առաջամասը՝ Զուամ թիկնազգեստի նման կրնայ միակտոր ալ կտրուիլ, յետսամասին Հ—Ա գիծը առաջամասի Լ—Ա գծին կցելով (ինչպէս ԻԳ, տախակի 91րդ օրինակը), եթէ սոլիայն կերպամին լայնքը բաւէ: Սա ալ գիտնալ պէտք է թէ ինչպէս որ ամբիոնին վերի մասերը լայն գահվայի մը ձեւն ունին, բնական է որ ուսին կարն ալ մակերեսին վրայ ելլելու է (քեւ մենք 395 եւ 396րդ օրինակները սովորական ձեւով ներկայացուցինք):

Յայտնի է թէ այս հազուստին վարի կողմն երկու մասէ կը բարկանայ, այն է մէկ յետսամաս և մէկ առաջամաս, այս վերջինը կ'ձեւուի ճիշտ սովորական բռնսես շրջազգեստին նման. միայն ասոր զանազանութիւնն այն կ'ըլլայ որ թերեւս հագագէն դէպի կողանջատ բռնորդի ձեւացնել ուղուի, այն ատեն կ'առնենք Ծ—Դ, Ծ—Ե, Ե—Լ, և Դ—Ա գծերով ձեւը (Տե՛ս 394րդ օր.): Թերեւս Գ—Ա գծէն, որ է Ծ—Դ, Ծ—Ե, Ե—Լ, Լ—Ա, Դ—Ա գ—Ա գծէն (Տե՛ս 393 եւ 398րդ օրինակները). և կամ Բ—Ա գծէն առ-

նելով։ Միայն ուշադրութեան առնելու պարագան այն է որ, երբ առաջամսափն ընդհատուած շուրթէն մինչեւ գօտելայրին հաւասարութիւնը (կամ աւելի կարճ սահմանի մը վրայ) կարուած ծալեր շինել ուղուի, կամ սուկանի ձեւով՝ թեթեւ փոթ մը. առաջին պարագային՝ նախ կարուած ծալերը պատրաստելու յետոյ ձեւելու է, իսկ երկրորդին համար ալ տիպարը կերպասին ծալքէն ետ քաշելու է (ինչպէս Լ.Պ. տախանկի 177րդ օրինակը)։

Դալով յետուամսափն, արդէն ամբիու ձեւը ճիշտ այս մասովը կյատկանչուի, որ մասնաւորապէս ստորոտը շատ տարածուն ու վերէն ի վար զլօց կենալու է (ինչպէս 401րդ նկարը)։ Ասոր համար ալ տիպարի միօրինակական մեր դրութեամբ, շատ դիւրին է զայն ճշտի պատկերացնելը։ Արդ, յետուամսափն կատարեալ զլօց քղանցքի մը ձեւը տալու համար, տիպարին վարի մասը, այն է ա—բ գիծը չորս հաւասար մասերու բաժնելով (Տե՛ս 394րդ օր.), կ'նշանակենք ե, զ և ե կէտերը։ Նոյնպէս ալ Մ'—Շ գիծը՝ ու կ'նշանակենք ը, թ և ծ կէտերը։ Յետոյ վերի և վարի կէտերը մէյմէկ ուղիղ գծով իրարու կ'միացնենք, որոնք են, ե—թ, զ—թ և է—ծ գծերն, ու ձեւիչով կ'կարենք, և կ'ունենանք ե, թ. Բ. Գ. և Դ. մասեր։

Ապա, կերպասին ծալերը դէպի մեր կողմը կ'ուղղենք, որ է բ—բ' գիծ (Տե՛ս 403րդ օր.)։ և տիպարին Ա. մասն առնելով՝ ստոր բ կէտը կ'հաւասարեցնենք կերպասի ծալերին (եթէ կերպասին լայնքը նեղ է ու մէջտեղը կարով պիտի ըլլայ՝ այն ատեն ալ մէկ կարարաժին ներսօք.) ու Մ' կէտն Զ հարմէդի չափ ներսօք. և այսպէս կարգաւ Բ. Գ. և Դ. մասերուն վերի ծայրերը կ'կցենք իրարու, ու վարի կողմերը Յական հարմէդ անջատ, որոնք են ծ', Փ., Բ', Թ', և Բ', լ։ Սովորական եղանակին համեմատ կ'քաշենք կողմակի գիծը, որով կ'ունենանք թ—Փ, և Զ կէտէն վար կ'նշանակենք Բ. չափը, այն է 101 հարմէդը և Զ կէտէն վար ալ Գ. չափն առաւել Զով, որ է բ' կէտ։ Առորոտին կորութիւնը վայելուչ ըլլալու համար, բ' կէտէն կ'բարձրացնենք բ'—0 ուղղահայեաց գիծը, բ' և Փ կէտերը լարով մ'իրարու միացնելով՝ ասոր մէջտեղը կ'գտնենք որ է Ց կէտ, ուղղանկիւնը Ց—բ' գծին հաւասարեցնելով կ'քաշենք Ց—0 գիծը և այս ալ կէս ընելով մէջտեղը կ'ունենանք 0' կէտը։ Հուսկ ուրեմն բ', 0' և 0', Փ

կէտերը մէյմէկ լարով իրարու կ'միացնենք ու դրսի կողմէն կը քաշենք բ'—0'—Փ աղեղը։ Իսկ վերի կողմը որ Ա. Բ. Գ. և Դ. տիպարներուն է, զ և ե անկիւնները մէյմէկ բութանկիւն ձեւացուցած են, կերպասին կարարաժինը ձգելու առթիւ բ—է—զ—ե—ա գիծը վայելուչ կորութեան մը՝ կ'վերածենք (լա՛ դիտէ բոլոր սոյն մանրամատնութիւնը թիւն 403րդ օրինակին վրայ)։ Ամբիու շրջադպեսուը (կամ իրբու խցաղգեստ) զառքաշ ալ կ'ըլլայ. ուստի այն պարագային ալ կ'քաշենք բ'—Փ' վէտկոր գիծն ու կերպասը կ'կարենք։ Եթէ կանամէջին դէմ սրածայր անկիւնով կ'ուղղուի, ուրեմն վերի կողմին համար կ'առնենք ը—գ գիծն իրեւեւ ծալք, Բ—Ժ, Ժ—Ի, Ի—Զ, Զ—Ա գ—ա գծերը (Տե՛ս 394 և 395րդ օրինակները)։ Վարի մնացորդը դարձեալ չորս մասերու բաժնելով՝ նախորդին նման կ'փոխադրենք զանոնք կերպասին վրայ (Տե՛ս 400րդ օր.) թերեւս կռնամէջը կարով ընել ուղղուի, որ կերպասը գծաւոր եղած ատեն անոնց դէմ առ դէմ խոտոր յաջորդումը մասնաւոր հրապոյր մը կ'ունենայ. հետեւապէս այս պարագային կերպասին եղրը Թ—Փ գիծ համարելով՝ նախ տիպարի Դ. մասին Զ կէտը գտափի և կռնքի չափերուն տարբերութեան ½ին չափ ներս կ'դնենք ու Շ կէտը և հարմէդ (Տե՛ս 400րդ օր. ուր կարաբաժինն ալ զատ հաշուած ենք)։ Յետոյ Գ. Բ. և Ա. մասերուն ի, և իս անկիւնները կ'կցենք իրարու և վարի կողմերը Կական հարմէդ իրարմէ անջատ, ինչպէս են Բ, Բ', Թ, Թ' և Ժ, Ժ'։ Հիմա ալ քանակը կ'հաւասարեցնենք զ կէտին ու Մ' կէտէն 4 հարմէդ դրսօք և կ'քաշենք կռնամէջի ուղղութիւնը, որ է զ—0, և զառքաշով ըլլալու համար ալ զ—0' գիծը. ստորսի 0—Փ կամ 0—Փ' գծերը քաշելու եղանակը քիչ մը վերը բացատրուած հրահանգին նմանն է. գալով վերի կողմին՝ այն է Ց—Ց' գծին, այս ալ տիպարին վրայ կազմուած զ—ա գծէն (Տե՛ս 394րդ օր.) աւելի սաստիկ գողարսոր ձեւ մը կ'առնէ. որ յետոյ սոյն Ց—Ց' գիծը զ—ա գծին (Տե՛ս 395րդ օր.) կարուելով՝ նոյն հաւասարութենէն մինչեւ վար կանոնաւոր խոպոպներու շարք մը կ'կազմուի (ինչպէս 401րդ նկարը)։

Ինչպէս ըսինք, ամբիու ձեւով կրկնոց ալ կ'ըլլայ, միայն թէ այս պարագային մոռնալու չէ պէտք եղած տեղերուն ընդարձակութեան բաժիններ ձգելը. և սա ալ գիտնալ պէտք է թէ իրբեկրկնոց կամ իրեւեւ փոշարգել շինուած տաեն՝ առաջամսափն ու

յետուամասին սնակուշաները քիչ մը մեղմացնելու է, որ քովերը կովչուն երեւոյթ մը չառնէ ու կէս կողանջատէն մինչեւ ստորոտ բրդածեւ ձեւ մ'առնէ։ Նոյն խոկ կոնամէջէն հակածալ կրնայ շինուիլ։ կամ կարդ կարդ բազմածալերով։ Նոյնպէս առաջտ-կողմի մէն մի կուրծքին դէմ՝ երեսի կամ մէջի կողմէն հակածալ կրնայ շինուիլ, և իբրեւ կրկնոց՝ կրծօճիք ալ կ'շինուի։ Վերի մասին կցորդուած եզրէն եռանկիւն թաթիկներ ու դրասանքի ձեւով զարդեր կրնայ յօրինուիլ։ Եւ իբրեւ խցողգեստ ալ պատ-րաստուած ատեն ստորոտը կերպ կերպ վերջաւորը կրնայ կցուիլ։

Փ. Ա. Ս. Ե.

ԴԱՐՁԵԱԼ ՀԻՆԳ ՏԱՐՅԵՐ ԹԵՒԵՐ

(Տե՛ս ԾՊ. ԾՊ. Եւ ԾԲ. Տախտակիները)

Նախորդ հրահանգներով բացատրուած հագուստներուն կըց-ուելիք թեւերը ու է ոճ չունին, այլ օրուան նորածեւութեան համեմատ թեւեր կ'դրուին, ինչպէս ասկէց աստղ-շատ մը թեւեր ներկայացուցինք։ Թայց այս միջոցին թեւերու այնպիսի պէսպի-սութիւններ յառաջ եկան՝ որ հագուստին միւս մասերը կ'զերա-զանցեն։ ուստի կ'արժէ որ քանի մը նորոյթ ձեւերն եւս բացատ-րենք. թէ եւ նոր ձեւեր կարծուածները յառաջ եկած են սովո-րական միկօ կամ Ռուսական թեւերէն։

Ա.Ի.Ա.ԶԻՒ. — Ժիկօ թեւի ծղակարին կողմը սովորական պարզ թեւի մը ձեւը տալ և մակաթեւին դրեթէ կէսէն դէսի արմակա-րին կողմն ուղղածիդ կերպով բազմածալերու շարք մը ներկայացնել (ի՞նչպէս ԾՊ. Տախտակին 388րդ նկարը)։ Սոյն թեւը ներկայացնելու համար, նախ ծանօթ եղող ժիկօ թեւի մը տիպարը կ'շի-նենք (ի՞նչպէս ԽԵ. Տախտակին 285րդ օր)։ յետոյ Բ. Ծ գիծն երեք հաւասար մասերու բաժնելով Բ կէտին կողմի բաժանումը կ'ան-ուանենք Փ կէտ (Տե՛ս 387րդ օր)։ ուր սովորական «ժիկօ» թեւը կէտ կէտ զծով ներկայացուցած են)։ Փ կէտէն մեղմ կոր գիծ մը սկսելով կ'առանինք մինչեւ Դ կէտ ու նոյն ընթացքը կ'շարունա-կենք 12 հարմէդի շափ դէսի վեր և կ'ունենանք 0 կէտը։ Զ—Դ դիծը կ'առնենք ճիշտ պարզ թեւին ձեւովը. խոկ 0 անկիւնը կոր

գծով մը կ'միացնենք ժիկօ թեւի յետսակողմին (Տե՛ս 387րդ օր։ ստուերաւոր ձեւը, ուր տեղի անցկութեան պատճառով ենթարեւին մեկ մասը չերեւար)։ Այժմ սոյն տիպարը կերպասին վրայ կ'դնենք ու շուրջի կարաբաժնները ձգելով կ'կտրենք. ինչպէս նաև Դ անկիւնէն մինչեւ Դ—Փ գծին երեք չորրորդը՝ որ է Ք կէտ, փե-սեկի նման կ'կարենք. Եթէ սուկանի կամ շրջազգեստի համար է ու մէջն աստառ պիտի դրուի, պարզ ձեւով կ'կտրենք զայն։ խոկ եթէ արտազգեստի համար է, ճիշտ կերպասին նման ըլլա-լու է։ Այս թեւը կարելու համար, Դ—Օ գծով կազմուած 12 հարմէդ երկայնութիւնը Ք կէտէն վեր 6—7 հատ մանր բազմա-ծալեր կ'ձեւացնենք՝ մինչեւ որ 0 անկիւնը հաւասարի Դ անկիւ-նին, և յետոյ պարզ կողմը վրան դառցնելով՝ շրջնի կողմէն ներ մը կ'կարենք ու բանալով երեսի կողմէն մեքենայով նրբա-ւարտ կար մը կ'ընենք. հուսկ յետոյ՝ 0 կէտէն դէսի ենթաթե-ւին կողմը կ'շարունակենք ժիկօ թեւին պատկանած ծալերը։ Դաս-տակին վրայ ձեւուած երկայնութիւնը խաչածեւ զարդեր ալ կրնայ շինուիլ (ի՞նչպէս 388րդ նկարը)։

* * *

ԵՐԿՐՈՐԴԻ. — Դաստակին մէջտեղէն 8—10 հարմէդ ուղղա-ձիգ բարձրութեամբ փեռեկ ձեւացնել ու անկից վեր քանի մը խորշարշան կազմելու համար (ի՞նչպէս ԾՊ. Տախտակին 390րդ նկարը), նախ ուստական թեւին նման շրջազծերը կազմելէ ետք (Տե՛ս ԽԵ. Տախտակին 304րդ օր. առանց ենթարեւեն ես բանական), որ թեւեւս ներ-կայ ձեւին համեմատ երկայնութիւնը մինչեւ դաստակի կէտ բարձ-րութեամբը շինել ուզուի։ Այս պարագային բ—ի գիծն ուղղուա-ծին չափ զուգահեռաբար կ'կարձնցնենք և կ'ունենանք խ—ծ գիծը (Տե՛ս այժմ 391րդ օր.)։ Ավնածրին (կամ երկայնութիւնը կազմուած բարձրութեան ծիրը) ամերող մեծութեան, այն է 22 հարմէդին կ'դնենք մակաթեւի ծղակարէն ներս, այսինքն խ անկիւնէն դէսի ծ—խ գծին վրայ ու կ'նշանակենք կ կէտը. և ափնածրին մնացած չըն ալ ծ անկունէն դէսի ծ—խ գծին վրայ՝ ուր կ'ունե-նանք կ կէտը։ Եետոյ կ և ձ կէտերէն մէյմէկ հորիզոնական-գու-գահեռական գծեր կ'քաշնք, որոնք են կ—հ և ձ—դ ու 10ական հարմէդով կ'ճշտենք. Մակաթեւին կողմը, այն է հ—կ գծին դէմ
Բ.—16

և և մ անկիւններով դրասանքնել կ'ձեւացնենք . և ձ—ղ գծին դէմ 11/2—Չ հարմէդի չափ փեռեկի բաժին . հուսկ ուրեմն և և ո անկիւնները դոգաւոր գծով մ'իրարու կ'միացնենք ու այս վերջին գծերէն կարարաժիններ ձգելով կերպասը կ'կարենք (Տե՛ս 391րդ օրինակին սոււերաւոր ձեւը) : Կարելու ատեն, երկու կողմի ծածանող մասերուն ներքեւը մէյմէկ պնդածուէն կ'զնենք, ու ձ—ծ, խ—կ, կ—ն, ն—մ և մ—հ գծերուն կարարաժինները կը շրջենք ներս, շրջօնն առբերանով մը կ'ձածկենք ու մեքենայով թափանց կարեր ընելէ վերջ . հ—ղ գիծը չորս հատ շորչլորշան կ'ձեւացնենք՝ մինչեւ որ հ—կ գիծը լ—ձ գծին հաւասարի ու ն և մ դրասանքները դէպի արմակարին կողմը հանգչին . մէյմէկ փոքր կոճակներով զանոնք հաստատելով : Սոյն ն և և անկիւնները փոքր բոլորակներով ալ կ'ըլլան (ի՞նչպէս 390րդ նկարը) :

* *

ԵՐՐՈՐԴ. — Եթէ ուզենք դաստակը 5—6 կարգ պղպջակներով պաստառակ ձեւացնել (ի՞նչպէս 389րդ նկարը) : Այս ատեն կ'առնենք նախորդ ձեւին ամբողջութիւնը, որ է խ—ծ գիծը, այսինքն կ—ձ գիծն ամբողջովին (որ 391րդ օրինակին վրայ կէտ կծով ընդիատած ենք) . միայն թէ վարի կողմը 2—3 հարմէդ առբերանցու մը կ'ձգենք ու կարելու ժամանակ զայն ներս կը շրջենք . և շրջօնի կողմէն ոլորտարերով պղպջակներն ընելով կը կծիենք, մինչեւ որ թեւրերանը բազկի ծիրին հաւասարի :

* *

ՉՈՐՏՐՈՐԴ. — Ժիկօ թեւին վերի կողմը 4—5 հարմէդ լայնութեամբ գոտի մը ձեւացնել ու յետոյ ուռուցիկը կազմել (ի՞նչպէս ԾՒ. սախ. 406րդ նկարը) : Այս կերպին համար, նախ սովորական ժիկօ թեւի մը տիպարը կ'չինենք (Տե՛ս 405րդ օր. ուր Դ—ա—Դ” կէտէկտ գծով ներկայացուցած ենք) . յետոյ պարզ մակաթեւին Զ—Դ գիծը շափելով կ'նշանակենք սոյն ժիկօ թեւին Զ անկիւնէն դէպի Զ—ա գծին վրայ՝ ուր կ'ունենանք Դ’ կէտը . Հիմա ալ Դ կէտէն (դարձեալ պարզ թեւին) մինչեւ և կէտ կ'չափենք ու տեսնուած մեծութիւնը կ'նշանակենք ներկայ օրինակին (որ է 405րդ) ի կէտէն դէպի Ի—ա գծին վրայ և կ'ունենանք Դ” կէտը : Ի—ա—Զ գծէն 6 հարմէդի չափ վարօք զուգահեռական գիծ մը կ'քաշենք՝ որ է ե—բ, որ ենթաթեւի սահմանէն կ'սկսի ու կ'յան-

գի մակաթեւի ծղակարէն Յ հարմէդ ներսօք : Այժմ Դ’ կէտէն դէպի Բ—Ե գծին վրայ ուղղանկիւնածեւ գիծ մը կ'քաշենք, որ է Դ”—գ, նոյնպէս ալ Դ” կէտէն Դ”—դ գիծը և վերի կողմի Դ”—ա—Դ”, Դ”—գ, Դ”—դ և գ—դ գծելով կազմուած գրեթէ պայտի ձեւ մասը կ'ջնջենք (Տե՛ս 405րդ օր. սոււերաւոր մասը) : Կերպասը կարելու ժամանակ բոլոր սոյն ելեւէջաւոր եղբերուն կարարաժիւնը գծելէ ետք, գ—բ և դ—ե գծերն ալ փեռեկի նման կ'կտրենք : Այս թեւին կարելը մասնաւոր խնամք կ'պահանջէ, այնպէս որ նախ Դ”—գ և Դ”—դ փոքրիկ եղբերն իրարու կ'կարենք ու բանալով երկու եղբերէն մէյմէկ թափանց կար կ'ընենք . յետոյ ժիկօին ծաւալը կէտ ընելով՝ մէջտեղը երեսի կողմէն հակածալ մը կը ձեւացնենք և մնացածն ալ երկու կողմին վրայ երկուական ծաւալը՝ մինչեւ որ տարածութիւնը հաւասարի վերի կամարածեւ շուրթին, դիտելով միանդամայն որ հակածալին կեդրոնը ճիշտ ու ճիշտ զի կարին հաւասարի . ապա՝ մէջի կողմէն նեղ մը իրարու կ'կարենք, ուշադիր ըլլալով որ բ և ե ծայրերը սեղմօնի նման հատու ըլլան, ի վերջոյ կ'գառածնենք երեսի կողմն ու գոտի ձեւացած մասին շրթունքէն թափանց կարով մը կ'աւարտենք (Տե՛ս այս ամէն մանրամասնութիւնը 405 և 406րդ նկարին ու օրինակին վրայ) : Հարկ է գիտնալ թէ այս թեւն անթածրին կցորդուած ժամանակ պարզ թեւի նման քիչ մը մեծ պիտի դայ . ուստի այն ալ խնամով ամփոփելու է պատշաճ տեղը (ի՞նչպէս բացաւրած ենք 94 իջի վերջին նատուածով) :

* *

ՀԻՆԳԵՐՐՈՐԴ. — Ժիկօ թեւին երկրորդ ձեւին նման բազկին դէմ ուղղաձիկ փեռեկ մը ձեւացնել ու գագաթը քանի մը խորշիւրշան կազմել (Տե՛ս Ծէ. սախ. 445րդ նկարը) : Նախ պարզ մակաթեւին տիպարովը ժիկօ թեւին ծղակարը կերպասին վրայ ձեւագծելէ ետք, ենթաթեւին Ծ կէտը՝ մակաթեւի Ծ կէտէն 8 հարմէդ հեռու կ'դնենք ու Ժ կէտէն 7 հարմէդ և ստացած դիրքովը շուրջը կ'գծենք : Եետոյ Ե—Ժ գծին մէկերորդ աստիճանին վրայ (դէպի Ե կէտին կողմի) կ'նշանակենք Փ կէտն ու նոյն աստիճանէն հորիզոնաբար դէպի Լ—Ծ գծին Յ հարմէդ մնալու չափ ալ Ք կէտը, այս սահմանին մէջ դրասանքի ձեւով զարդանկարներ կ'ձեւացնենք . ինչպէս ա անկլիւնը և անոր յաջորդը . կամ երկու փոքր թաթիկ-

ներ կ'ձեւացնենք (Տե՛ս 445րդ նկարը) ու կերպառէն կարաբաժիններ ճգելով կ'կարենք : Այս դրասանքներուն եղրերը կարելէ ետք, Ք կէտին հաւասարութեամբ երեք մանր խորշխորշան կ'կազմենք՝ մինչեւ որ կերպասին աւելորդը տիպարին մեծութեան հաւասարի ու ծղակարին կողմը պատրաստուած զարդանկարները փեռեկի նման ենթաթեւին կողմն ելեն (յա՛ դիտէ 445 և 446րդ նկարն ու օրինակները) : Այս թեւին վերի կողմը կրնայ քանի մը կարդ պղպջակ ձեւացնելով շնորիլ կամ ծալերով :

Պ Ա Ս Զ .

ՔՂԱՆՑՔՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ՔԱՆԻ ՄԸ ԿԱՐԵՒՈՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳԻՑԵԼԻՔՆԵՐ

(Տե՛ս Ծէ. և ԾԶ. տախտակներուն 407էն մինչեւ 436րդ օր.)

Ճեւառու և վայելուչ քղանցք մը ձեւել ու կարելը կար ծուածին չափ դիւրին գործ չէ, որովհետեւ նկատողութեան առնելու երեք գլխուոր պարագայ կայ, այն է՝ ժամանակին նորոյթը, հագնողին կազմը և նիւթին տեսակը . վասն զի ամէն նորոյթ ամէն կազմի չպատշաճիր ու ամէն նիւթ ամէն ձեւի : Միայն նիւթին վրայ խօսելով՝ պէտք է գիտնալ թէ կարդ մը զարդեր՝ գծաւոր կերպառներու վրայ լաւ չեն երեւար, Նեղ լայնքով կերպառն այն ինչ ձեւին չհամապատասխաներ, թանցը կերպառն այս ինչ ձեւին ու բարակն այնինչին, ևն . ևն : Արդ, այս ամէն ներդաշնակութիւնները միատեղ գալու համար՝ երբ հագուստ մը պիտի չինուի, նախ ու է նորաձեւութեան թերթի մը մէջ անոր ձեւն որոշելու է, և յետոյ այն ձեւին պատշաճող կերպառն ու բաւարար քանակութիւնը : Եթէ ասոր հակառակը պատահած է, այսինքն առանց նախառէս շնորելիք ձեւն որոշած ըլլալու, ըստ բախտին կերպառ մը գնուած է, այն ատեն ալ նոյն կերպառին պատշաճող ձեւ մը որոշելու է . այն է ճաշակը նիւթին զոհել :

* *

Նախ խօսինք բազմամասնեայ քղանցքներու վրայ, որոնց վարի կողմերը ծալեր կամ հակածալերով կ'վերջանան, ընդհանրապէս ասոնց առաջամասին գոտեվայրը նեղ կ'ըլլայ, այն է գո-

տիի չափին $\frac{1}{6}$ ովը, $\frac{1}{6}$ ովը և առառաւելն $\frac{1}{3}$ ովը (Տե՛ս ԾԵ. տախ. 407րդ օր.) : Այս կարգի քղանցքներուն կողմամասին տիպարը պարզ զօտ կ'պատրաստուի, և յետոյ երեք հաւասար մասերու կ'բաժնուի, որ ինչպէս գիտենք, գոտեվայրի սեղմօնները նշանակել ու անոնց կեղբուններէն կ'քաշուի Զ և Ղ. գծերը (Տե՛ս 408րդ օր.) : Թերեւս ուղուի որ երկու առաջինները նեղ ըլլան ու վերջինը լայն . այն ատեն նախ Ժ—Դ գիծը կէս կ'ընենք՝ որ է Պ կէտ և հարիզոնական գծով մը կ'միացնենք թ՛ կէտին : Պ կէտին երկու կողմը կը նշանակենք գոտեվայրին վրայ չինուելիք սեղմօններու բաժինին կէսէն քիչ մ'աւելին ու Ժ կէտէն մինչեւ սեղմօնի կէտը կէս ընելով կ'ունենանք Զ կէտը, Ա—Թ՝ գծին մէջտեղն ալ Խ կէտը հաստատելով՝ կ'քաշենք Զ—Ռ գիծը . և սեղմօններուն բաժինին կէսէն նուազն ալ կէս առ կէս կ'նշանակենք Զ կէտին երկու կողմը (օրինակը չխնողելու համար՝ Զ եւ Պ. կէտերուն երկու կողմերը շինուելիի սեղմօններուն ցցագծերը չներկայացուցին):

Այժմ այս բաժանումներով կը նաև չառ մը քղանցքի ձեւեր ներկայացնել : Թերեւս առաջամասէն սկսելով՝ երկայնութեան վարի մէկերրորդ հաւասարութեամբը ծալեր ձեւացնել ուղենք կամ ու է զարդանկիւններ, այն ատեն առաջամասին վրայ կ'քաշենք Ղ—Ճ և կողմամասին վրայ ալ Յ—Ն՝ (Տե՛ս 407 և 408րդ օրինակները) . իսկ Եթէ գէպի յետսակողմ հետզհետէ բարձրացնել ուղուի, այն ատեն ալ կ'քաշենք Յ—Ճ գիծը, որոնք յետոյ իւրաքանչիւր մասին վրայ չինուելիք զարդերուն աստիճանները կ'ներկայացնեն :

Արդ, համարենք թէ առաջամասին Ճ կէտէն զարդանկիւն մը ձեւացնել կ'ուղենք, ուրեմն Յ—Ճ հարմէգ խոսոր գծով մը կ'կազմենք Մ կէտը, և է կէտէն մինչեւ Մ կէտ՝ գոդաւոր գիծ մը կ'քաշենք, այսպէս ալ Ա. և Բ. արէզներուն վրայ կ'ձեւացնենք . որ յետոյ մանր կոճակներ ալ կրնայ կարուիլ (ի՞նչպէս 407րդ օրինակին Ճ—Մ գծին վրայ կ'երեւալ) :

Գուցէ զարդանկիւններուն վերի գոդաւոր գծերը գէպի ստորա ալ գարձնել ուղուի, Ա. արէզին վրայ Զ—Ս և Ս—Ռ (Տե՛ս 409րդ օրինակ) գծերով ու Բ. արէզին վրայ Պ—Վ և Վ—Թ՝ գծերով (Տե՛ս 410րդ օր.) գուցէ կոճակներն այս անգամ վերի կողմի եղբերուն կարել ուղուի :

բորդ ու երրորդ թափանցկարերն ընելու է, որով չարժական երեւոյթ մը կ'ունենայ: Նրաւարտ թափանցկարեր ընել չուզուած ասեն՝ դարձեալ չարժական երեւոյթը կրնայ պահուիլ (ի՞նչպէս 434 եւ 436րդ նկարները):

Վարի կողմը ծալեր ձեւացնել ու վերի կողմը թափանցկարերով զարդարել ուզուած ասեն, աս վերջիններուն ծայրը մասնաւրապէս շեղանկիւն վերջաւորութիւն մ'ունենալու են (ի՞նչպէս կ'երեւան 433, 434 եւ 436րդ նկարներուն վրայ):

Թերեւս կարերուն կամ մէն մի տրէզի վրայ իր կերպասէն կամ տարբեր նիւթով մակադրութիւն ձեւացնել ուզուի (Տե՛ս 425րդ օր.) և անոնց վերջաւորութիւնը գալարուն ու կիսաքոլորշի. որ է ա—բ և գ—դ—ե—բ գծերը: Այս կարգի զարդերը պարզապէս գծագիտական ձեւեր ըլլալով՝ զանոնք դիտելու է նորաձեւութեան նկարներուն վրայ և ուզուած լոյնութեամբ խսկան մեծութիւնները ձեւագծելէ ետք, կարարաժիններ գծելով կարելու է: Եթէ եզրերը թափանցկարերով պիտի գորդարուին, առաջինը միշտ առանձին ընել ու երկրորդը կամ երրորդը հագուստին հետ որ չարժական երեւնալու պատրանքն ունենայ:



Գուցէ քղանցքին այս կամ այն կողմերն եռանկիւն ծայրերով կերպասէ աղխեր դրուի ու կոճակներով կցորդուի (Տե՛ս 429րդ նկարը): Այս կարգի աղխերուն վայելչութիւնը կ'կայանայ մէն մի ծայրի երկերկու հատուածակողմերը հաւասար մեծութեամբ ու մէջտեղը կէս լոյնութեամբ կազմելը: Սոյն աղխերուն բնական երեւոյթ տալու համար՝ օղակ ալ կ'շնուի, կամ գոնէ կեղծ օղակ:

Կրնայ ըլլալ որ ծալերուն մէջէն դուրս ցցուած կէս աղխեր շինել ուզուի (ի՞նչպէս 433րդ նկարը): Եւ կայ ալ որ դէպի վրայի կողմը դառձուի:

*

ՔՂԱՆՑՔԻՆ ՊԱԽՃԱԽԱՆԴ ԶԵԽՄՅՆԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Քղանցքէն պախճաւանդ ձեւացնելու համար, չարժեր որ դիտական կերպով շինուի, այլ քղանցքը քանի՛ մասէ որ պիտի բաղկանայ նախապէս անոնց տիպարները պատրաստելով կերպասին վրայ դնել. աղա գօտեվայրէն դէպի ի իրանին վրայ բարձրացած մասերը դրսօք կտրելու է (ի՞նչպէս ԾԳ. Տախ. 384րդ օր.) և դերակարելով չափատուին վրայ փորձի ենթարկելու է:



թերեւս առաջամասը վտաւատով ձեւացնել ուղուի, կամ առաջամասն ու յետսամասը միակտոր և քովերը առանձին պախճաւոնդ. այս պարագային զանոնք իրանազգեստին տիպարէն հետեւցնելու է,

* * *

ԿՈՆՔԻՆ ՇՈՒՐՋԸ ՊՂՊՉԱԿ ԿԱՄ ՃԱՌԱԳԱՅԹԱԶԵՒ ԿԱՐՈՒԱԾ
ԾԱԼԵԲ ԶԵԽԱՑՆԵԼ

Շատ անգամ կողմամասին կոնքի հաւասարութեամբը պղպջակ կ'չինուի (ի՞նչպէս Ծն. տախ.ի 418րդ նկարը). այս ձեւին համար կողմամասի տիպարն երեք մասի բաժնելով՝ Ա. տրէզին Ա կէտը կ'հաւասարեցնենք կերպասի եզրին (Տե՛ս 420րդ օր.) և Ժ կէտը 6—8 հարմէդ ներսոք. յետոյ Բ. տրէզին վարի ծայրը կը կցենք Զ կէտին ու Ծ կէտը Խ անկիւնէն 8—10 հարմէդ անջատ. նոյնպէս ալ Գ. տրէզը, որ է Հ—Դ: Եթէ պղպջակն առատ ձեւացնել ուղուի՝ Դ անկիւնէն 5—6 հարմէդ գէպի դուրս ալ կրնայ շարունակուիլ ու մեզմ կոր գծով մը Դ—Զ գծին վարի երկու երրորդին վրայ շարունակուիլ: Արդ, մէն մի պղպջակի կարգին համար 1 հարմէդի չափ հաշուելով՝ համարենք թէ 5 կարգ կազմել կ'ուղենք. ուրեմն Ժ—Խ, Ծ—Կ և Հ—Դ գծերուն ստացած գիրքովը 5 հարմէդ բարձրութեամբ կերպասը կ'կտրենք, որ է Փ—Բ գիծը՝ Ե՛ւ որովհետեւ ստորոտի Զ և Դ անկիւնները փոքր խոռոչներ կ'կազմուին, ուստի կերպասէն կ'լրացնենք զանոնք (յա՛ւ դիտէ 420րդ օրինակին վրայ տիպարներուն դիրքն ու կերպասը, որոնք սարքեր ստուերներով ներկայացուցած ենք):

Եթէ ուղուի որ վարի կողմն ալ տարածուն ըլլայ (ի՞նչպէս 422րդ նկար). այն ատեն Բ. և Գ. տրէզները 10—12ական հարմէդ իրարմէ անջատ կ'զնենք (Տե՛ս 421րդ օր.) ու դարձեալ Փ—Փ գծէն կ'ձեւենք: Պղպջակներուն բաժինը չափական կերպով ձշելու համար, առառաւելն տիպարին դօտեվայրի լայնութեան չափ ձգելու է: Այս կերպով քղանցքներն առաւելապէս կը պատշաճին նիհար կամ փոքր աղդրերով ու տափարակ երանով կազմերու:

Սոյն երկու ձեւին համար ալ նոյն պղպջակները շրջօնի կողմէն ոլորտակարով կարգ կարգ ընել ու կծկելէ ետք, առաջամասին

նենանք Ք կէտը : Հիմա ալ կարկինին մէկ ոտքը կ'հաստատենք Ք կէտին վրայ և մինչեւ Դ կէտ բանալով կ'քաշենք ստորտին Դ—Խ գիծը . բայց զանազան կազմութիւններու առթիւ , դէպի Խ կէտին կողմը տանելու ժամանակ թերեւս ճիշտ ու ճիշտ Խ կէտին չմիանայ . այս պարագային Խ կէտէն մեզմ կոր գիծ մ'սկսելով կ'միացնենք աղեղին : Սոյն Դ—Խ գծին գրեթէ կ'ին վրայ կ'նշանակենք Ծ կէտն ու այն տեղէն դէպի վեր կ'նշանակենք Բ . չափը Զ—Ժ գծին մէջտեղը և 101 հարմէդով կ'ձշտինք Կ կէտը : Եթէ Կ կէտը Զ—Ժ գծէն վեր ելլէ , Խ—Ժ գծին դիրքը փոխելով՝ գօտեվայրը կազմելու է Խ—Կ—Ջ գծով . բայց թէ որ տարրերութիւնը շատ ըլլայ (որ կ'պատահի չափազանց աղդրեն կազմերու) . այն տեսն մէկ մասն ալ Ծ կէտը վարոք տանելով կարգագրելու է : Այլեւս կ'մնայ կերպասը կարել , առանց ո և է տեղէ մը կարարաժին ձգելու :

Գիծելիթ . — Զ—Կ—Ժ—Ի գծին վրայ գօտոյ չափին դրուած առաւել Զ հարմէդը կ'ծառոյէ գօտին կարելու ժամանակ քղանցքըն աղդրին վրայ քիչ մը ամփոփելու . բայց թէ որ չափատուն աղդրեղ է , լաւ կ'ըլլայ որ այն տեղ սեղմօն մը շինուի՞ որ է Ո—Ժ (Տե՛ս 431րդ օրինակին վրայ) :

ՏԱՐԲԵՐ ԶԵԽԵՐԸ . — Ա.յժմ գիտեալ պէտք է թէ այս ձեւով յառաջ կուգան կարգ մը տարրեր երեւոյթներով քղանցքներ : Օրինակի համար , առջեւի ձախ կողմը և գրեթէ մէկ ու կէս կոնքի հաւասարութեան աստիճանին վրայ վեր քաշելով Զ—Յ խորշիորշան կ'շինուի 6—7 հարմէդ հորիզոնական լայնութիւնով մը մը (Տե՛ս 432րդ նկարը) , որով վարի կողմը վեր առնուած վարագոյրի մը ձեւը կ'առնէ . իսկ վարէն կարցած բաժինը ներքեւէն յաւելուածական մասով մը կ'լրացուի , թերեւս տարրեր նիւթով ու վրան երիշներու կերպ կերպ զարդերով , որ ներքեւէն ուրիշ քղանցք մ'ալ հագած ըլլալու պատրանքը կուտայ (լաւ դիմէ 432րդ նկարը) :

Դարձեալ միեւնոյն տիպարով այնպիսի ձեւ մը կ'տրուի որ շրջապատին վրայ չորս ծածանող ծայրեր ունենայ : Թերեւս վեց անկիւն կազմել ուզուի , կամ յետակողմն ու առաջակողմը միայն ծայրեր ձեւացնել (Տե՛ս 435րդ օր . մուր ստուերով ձեւը) եւ նոյն իսկ այս ձեւին կարձն ալ կ'ըլլայ , որ է լ—Ժ գիծը :

Դարձեալ միեւնոյն տիպարէն կ'առնուի ծածանող թաթիկներով վտաւատ , բոլորն ալ միակտոր (որ 435րդ օր . վերի կողմը բայց զոյն ստուերով ԵԵրկայացուցած էնի) : Վտաւատին սահմանն արդէն լ—Դ կիսաշրջանակածեւ դժովը ճշտուած է . կ'մնայ թաթիկները ձեւացնելը , որ նորաձեւութեան համեմատ անոնց քանակութիւնն որոշելէ ետք , ալէտք է ստորտին հետ ճառագայթաձեւ դիրքերով կազմուին : Արդ , համարենք թէ բոլոր զըջապատին վրայ 7 թաթիկ ձեւացնել կ'ուզենք , հետաւապէս կէս քղանցքին վրայ 3½ հատ , այն է կէսը յետսակողմին մէջտեղը : Եւ համարենք թէ թաթիկներուն վարի լայնութիւնը 10ական և վերի լայնութիւնը 5ական հարմէդով կազմել կ'ուզենք . ուրեմն տիպարին կոնքի հաւասարութիւնը , այն է կ—Գ գիծը չափելով 3½ թաթիկի համար 17½ հարմէդը կ'զեղջենք ու մնացածն 3½ մասերու բաժնելով՝ կէս մասը կ'նշանակենք Գ կէտին դիմաց եւ կ'ունենանք ա կէտը , Ա . թաթիկին համար 5 հարմէդով բ կէտը , Բ . թաթիկին հեռաւորութեան համար մէկ մասովը գ կէտը , Եւ այսպէս կարգաւ կ'նշանակենք դ , Ե , զ և է կէտերը : Նոյնպէս ալ ստորտի Դ—Խ գիծը , սա՛ տարրերութեամբ որ 3½ թաթիկի համար 35 հարմէդը զեղջելէ վերջ՝ մնացածը կ'բաժնենք 3½ մասի և կ'նշանակենք ը , թ , ի , խ և ծ կէտերը : Այժմ ա և ը , բ և թ , զ և ծ , դ և ի , ե և լ , զ և ի խ և է ծ կէտերը մէյմէկ լարով իրարու կ'միացնենք : Թաթիկներուն երկայնութիւնը թերեւս առաջակողմն երկայն ու գէպի յետսակողմ աստիճանաբար կարձ շինել ուզուի . այն տաեն կ'առնենք Ն—Շ գիծը և ասոր վրայ կ , հ և ծ անկիւններով կ'կազմենք թաթիկին ծայրերը , դարձեալ 40 հարմէդ տրամադով : Ճիշտ այնպէս ալ դ , ն և մ թաթիկները : Եետոյ այս ամէն գծերը փշանուակով ճշտութեամբ կ'օրինակիւնք ներքեւը դրուած թղթի մը վրայ ո շուրջերէն կ'կարենք . հիմա ալ ասոր Ի—Մ գիծը կ'փոխադրենք կերպասի ծալքին , բացի Ի—Մ գծէն՝ շուրջը կարստաժիններ կ'ձգենք (Տե՛ս 426րդ օր .) , ու կերպասը կ'կարենք : Այս թաթիկներուն վրայ կոճակներու շարքերով ալ կրնայ զարդարուիլ , իւրաքանչիւրը յաջորդաբար իւրարմէ փոքր (ի՛նչպէս 426րդ օրինակին վրայ կ'երեւայ) :

Վտաւատով թաթիկներ կազմելու այս եղանակն ըմբռնելէ ետք . գիւրին է այլ եւս տարրեր քանակութեամբ , տարրեր տես-

քով ու տարբեր երկայնութեամբ գծագիտական ձեւերով յօրինել :

* * *

ՎՏԱՀԱՏՈՎ ՄԻԱԿՏՈՐ ՔՂԱՆՑԲ ԶԵՒԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Վերը բացատրուած եղանակին համեմատ գօտեվայրն ու կոնքի հաւասարութիւնը ներկայացնելէ ետք, որ է Զ—ի, Զ—ի, Գ—լ, և ի—լ գծերը (Տե՛ս 431րդ օրինակ), վտաւատը պատրաստուած կ'ըլլայ: Վարի մասը, այսինքն, բուն քղանցքն ալ շինելու համար, Զ—Դ գիծն երեք հաւասար մասերու բաժնելով կ'ունենանք չ և Զ կէտերը. կարկինը կ'դնենք չ էտին վրայ ու մինչեւ լ կէտ բանալով կ'քաշենք լ—Զ աղեղը. հիմա ալ Զ կէտին վրայ փոխադրելով՝ կ'քաշենք Խ—Մ աղեղը (լա՛ւ դիտէ 431րդ օր. վրայ կարկիններուն նկարներն ու սոյն աղեղները): Այժմ գօտիի և կոնքի չափերուն տարբերութեան $\frac{1}{3}$ ը կ'նշանակենք լ կէտէն դէպի լ—Զ աղեղին վրայ, որ է Ճ կէտ, սոյն կէտը կոր գծով մը կ'միացնենք-Գ կէտին. յետոյ ի—լ գծին երկայնութիւնը չափելով Ճ կէտէն դուրս կ'ձգենք և Գ . չափն առաւել Չոլ կ'տանինք Խ—Մ աղեղին վրայ ու հպած տեղը կ'նշանակենք Յ կէտը. Ճ և Յ կէտերն ուղիղ գծով մ'իրարու կ'միացնենք և Յ կէտէն մինչեւ Դ կէտ ստորոտին աղեղը կ'նորոգենք (Տե՛ս 431րդ օրինակին զծւուր ստուերով ձեւը):

Եթէ զլօշը քիչ ձեւացնել ուղուի, այն ատեն լ կէտէն լ—Զ աղեղին վրայ կ'նշանակենք տարբերութեան $\frac{2}{3}$ ը և կ'ունենանք Ն կէտը, ուրիէ կ'շարունակենք Ն—Գ, Ն—Շ և Շ—Դ գծերը (Տե՛ս 431րդ օրինակին բաց գոյն ստուերով ձեւը):

Եթէ վտաւատն առաջակողմին վրայ քղանցքէն բաժնել չուզենք, որ մաս մը տեղ միակտոր ձեւանայ. այն ատեն լ և Ճ անկիւները սեղմօնի մը ձեւը կ'առնեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ. — Բոլոր սոյն քղանցքներն ալ կրնան զառքաշով շինուիլ:

Այս առթիւ փութանք յիշել թէ հարսանեկան կամ մեծ արարողութեանց համար մեծ զառքաշով շինուած քղանցքները՝ որ միեւնոյն ատեն արժէ քաւոր նիւթերով կ'պատրաստուին ու մեծամաս կ'ըլլան, և կ'ծառայեն միայն նոյն նպատակին: Ո'րպէս զի այս կարգի հագուստներն ուրիշ նոււազ արարողական ատեններ ալ կարենայ հագնուիլ, կրնայ զառքաշը շարժական շինուիլ (ի՞նչ-

պէս ԾԵ. տախ. 419րդ նկարը), այնպէս որ նախ օրուան նորաձեւութեան համեմատ՝ ընդհասակով աստառէ կամ թեթեւ մետաքսեղենէ հատակ քղանցիկ մը կ'չնուի. և զատ ալ զառքաշ մը կ'պատրաստուի, որ գօտի մը կ'ունենայ և քանի մը կոճակիներով կ'կցորդուի. հատակ-քղանցիկին (լա՛ւ դիտէ 419րդ նկարը). յետոյ դարձեալ ընդհասակով զարդարուն քղանցքը կ'պատրաստուի՝ նախորդին վրայէն հագնելու համար:

Պ Ա Ս Ա.

Լ Ե Հ Ա Զ Գ Ե Ս

(Տե՛ս ԾԵ. տախակ, 437էն մինչեւ 444րդ օրինակներն ու նկարները)

Լեհազգեստը սկզբամբ բուենսէսին կ'նմանի, որովհետեւ ասոր ալ իրանն ու քղանցքը միակտոր է, միայն սա՛ տարբերութիւնն ունի որ լեհազգեստին քղանցքի մասը պարեգօտի նման՝ տեղ աեղ վեր առնուած կ'ըլլայ շատ մը զանազան ձեւերով. ինչպէս վերջին անգամ տեսնուեցաւ 1882—84 թուականներուն. իրեւ ընդունելութեան, ըլջագույութեան և հանդիսական արարողութեան զգեստ: Արդ, քանի որ պատճառ մը չունինք չհաւատալու թէ լեհազգեստն ալ նորաձեւութեան վերադարձ կ'ունենայ. հետեւապէս կ'փութանք այժմէն քանի մը նմոյշներ ալ անո՞ր մասին ներկայացնել (Տե՛ս 438, 439, 440, 441 եւ 443րդ նկարները):

Լեհազգեստն ալ իրանազգեստին ախարաներովը կ'ձեւուի, և կրնայ ըլլալ պարզ-կողամասով, կրկնակողամասով, կրկին-յետսամասով, ևայլն, ևայլն:

Այժմ համարենք թէ կրկնակողամասով լեհազգեստ մը ձեւել կ'ուզենք, որուն առաջակողմին իրանազգեստի նման միաշար կոճ-կէնով պիտի ըլլայ (ի՞նչպէս 438րդ նկարը): Արդ, ասոր ալ մէջի աստաները մինչեւ կոնքի հաւասարութիւն կ'ըլլայ և առաջամասը պարզ սեղմօններով: Ո'րպէս լեհազգեստին յետակողմին առաջակողմին ընդհանրապէս տարբեր երկայնութիւններ ու տարբեր ձեւեր կ'ունենան. ուրեմն նախ տիպարներուն նման՝ աստառը կ'ձեւենք: Յետոյ կերպասին եղրը դիմացնիս ուղեղելով՝ զայն կ'համարինք ա—բ գիծ (Տե՛ս 437րդ օր.), Վերելեակի

բաժիններուն համար տիպարին Զ և Յ կէտերն Յ^{1/2} հարմէդ ա—բ գծէն ներսօք դնելով շուրջը կ'օրինակենք ու սեղմօններուն շրջա-
գծերը կոնքի հաւասարութենէն Յ—Յ հարմէդ վարօք իրարու կը
միացնենք . յետոյ Յ կէտէն ա—բ գծին վրայ կ'նշանակենք քղանց-
քին Ա. չափն և բ կէտին ճշտուած անկիւնէն կ'քաշենք Բ—Գ ուղ-
ղահայեցը : Եթէ առաջակողմի քղանցքն աղղրին վրայ հաւա-
քել կ'ուզուի , իշխանուհույ շրջաղգեստին նման գ—Կ—Ք գիծը
կ'քաշենք : Խոկ Եթէ դէպի երանին կողմը պիտի հաւաքուի , այն
ատեն Բ. կողամասն ալ առաջամտուին հետ միակոտր կ'ձեւացնենք :
Արդ , Բ. կողամտուին Հ և Շ անկիւններն առաջամտուին Լ և Մ
անկիւններէն Զական հարմէդ հեռու հաւասարեցնելով (Տե՛ս 437րդ
օր.) , քանակը կ'ուղղենք Զ կէտին և Խ կէտէն Ա հարմէդ անջատ
ու կ'քաշենք Զ—Գ գիծը . ու երր տիպարին շուրջէն կարաբաժին-
ներն աւելցնենք , Լ , Հ և Մ , Շ անկիւններն իրարու կ'հանդիպին ,
այնպէս որ կարելու ժամանակ Հ և Մ անկիւնները 5—6 հարմէդ
դէպի աղղրին վրայ շարունակելով սեղմօնի նման հատու ձեւ մը
կ'ստանան (լաւ դիտե սոյն կերպը 437րդ օր. վրայ , ուր կէտ կէտ
գծով ներկայացուցին): Մինչեւ այս տեղ եղած գործողութիւնները
գրեթէ բունսկս շրջաղգեստին նմանն է , այժմ լէ հաղցեստի վերա-
ծելու համար նկարին վրայ նոյելու է թէ առաջամտուին ծայրը գե-
տինէն սօրչափ կարճ է և սօրքան անջատ (Տե՛ս 433րդ ն.) : Արդ , ինչպէս
կ'երեւայ , քղանցքին երկայնութեան կ'ը կարճ է ու ճիշտ առաջա-
կողմի կէսին դէմ կ'գտնուի , ուստի նախ այս յատակագիծը կ'ներ-
կայացնենք որ է դ—Գ և Գ—Ե գծերը (Տե՛ս 437րդ օր.) : Այժմ նկատե-
լով որ դէպի երանին վրայ չորս խորշխորշան ձեւացնելու համար ,
Եթէ իւրաքանչիւրը Զական հարմէդ խորութեամբ կազմել ուղ-
ուի՝ կրկինը կ'ընէ $10 \times 4 = 40$ հարմէդ . Հետեւապէս և կէտէն
նոյնչափ վար կ'նշանակենք լ կէտը . և որովհետեւ խորշխորշան-
ները կազմուած ատեն առաջամտուին զ անկիւնը թէ՝ ետ պիտի
սահի և թէ՝ պիտի կարճնայ ու նողատակէն պիտի չեղի , ուստի
խորշխորշանին համար դրուած 40 հարմէդին կէսը . այն է 20
հարմէդ զ անկիւնը նախառապէս դէպի առաջ կ'տանինք ու նոյն
չափ ալ վար կ'իջեցնենք , որով կ'ունենանք և անկիւնը . և դ կէ-
տը մեղմ կոր գծով մը կ'միացնենք սոյն և անկիւնին . յետոյ զ—Ե
գիծը չափելով և անկիւնէն կ'փոխադրենք լ անկեան վրայ . այս

գործողութիւնն ալ երկու աղեղներ ձգելով կ'կատարուի (մանրա-
մանուրիւնը Տե՛ս յաջորդ դասը) :

Թէրեւս առաջակողմը միակոտր շինել ուղուի և գլուխէն
հագնուի (ինչպէս 441րդ նկարը) . այն պարագային տիպարին Զ և
Յ կէտերը կցելու է կերպասին ծալքին ու վերեւեակի բաժիննե-
րը զատ կտոր կցելով կազմելու է :

Գալով յետուամասին , այս ալ երկու գլխաւոր սկզբունքով
կ'ըլլայ , այն է երանին մէջ տեղը հակածալով կամ պարզ : Արդ ,
պարզ ձեւը շինելու համար (Տե՛ս 442րդ օրինակը և 443րդ նկարը) ,
աստառին լ անկիւնը կ'հաւասարեցնենք կերպասին եզրին որ է
ա—բ գիծ և Մ անկիւնը Յ հարմէդ ներսօք . յետոյ Ա. կողամա-
սին Ո անկիւնը կ'կցենք ճիշտ ու ճիշտ Յ անկիւնին և կողնազեղն
ալ կ'հակեցնենք և անկիւնին , որով կողածագը թիկնանկիւնէն
քանի մը հարմէդ դէպի վեր կ'երթայ ու կ'կալծես թէ սխալ մը
տեղի կ'ունենայ . ասկայն երր նկատողութեան առնենք կոնակո-
րին պտուտաւոր ձեւն ու կողնազեղին կարճ գնացքը՝ մա՞ստանէ
կարաբաժինները ջնջուած երեւոյթին մէջ , տարակոյս չկայ թէ
կարուած ատեն հաւասար պիտի գան . բաւական է որ Ո և Յ ան-
կիւններուն կարաբաժինը 6—8 հարմէդի չափ վարօք՝ այն է մին-
չեւ զ կէտ սեղմօնի նման նուրբ վերջաւորութիւն մունենայ ,
Յետոյ Յրդ չափին կ'ը կ'շանակենք Պ կէտին դիմաց զ կէտը կադ-
մելով ու ասոր կէսը այն է Ա հարմէդ ալ և կէտին որ է դ կէտ ,
և քանակը սոյն երկու կէտերուն հաւասարեցնելով կ'քաշենք Գ—
Ե գիծը . Պ—Ծ գծին կոր դիրքը՝ սեղմօնի շրջագծի նման կ'ը
շարունակենք Պ—Ե գծին վրայ , նոյնպէս ալ կոնամէջը : Մէջքէն
շարունակենք Պ—Ե գծին վրայ , որոնք գետինի հաւասարութիւնը կ'ներկայացնեն .
Բ և Ե կէտերը , որոնք գետինի հաւասարութիւնը կ'ներկայացնեն .
այժմ սոյն Բ—Ե գծէն գոնէ 30 հարմէդ աւելի վարօք կարելու է
որպէս զի կոնքի հաւասարութեան դէմ երեք խորշխորշան ճեւա-
ռնելու ժամանակ , ստորտը քղանցքի եզրին հաւասարի (ինչպէս
443րդ նկարը) :

Եթէ կոնամէջէն վար հակածալ ուղուի՝ որ յետուակողմն ալ
ւելի ուռուցիկ ըլլայ (ինչպէս 439 և 440րդ նկարներ) . այն ա-
տեն կերպասին ծալքը ա—բ գիծ համարելով՝ 10 հարմէդի չափ
զուգահեռաբար դէպի ներսօք կ'քաշենք զ—Գ գիծը (Տե՛ս 444րդ
թուղահեռաբար դէպի ներսօք կ'քաշենք զ—Գ գիծը)

օր.), յետուամասի տիպարին Զ և Մ' կէտերը կ'հաւասարեցնենք սոյն գ—դ գծին և Զ կէտէն մինչեւ և կէտ՝ շեղ գծով մը հակածալը կ'որոշնք. Եթէ երանի մասն ամբողջ կայչուն ուղուի (ի՞նչպէս 443րդ նկարը), այն տաեն հակածալը Մ' կէտէն կ'առնենք. Եղած ալ է որ Զ և Մ' կէտերուն մէջտեղէն սկսած է: Այժմ քանակը կ'հաւասարեցնենք և Յ կէտերուն ու կ'քաշենք Խ—Յ—զ լարն ու քղանցքին Գ. շափովը կ'ձշտենք դ և զ անկիւնները. ձեւոցին անկիւնը Յ—զ գծին հաւասարեցնելով՝ Յ կէտէն ուղղահայեաց մը կ'բարձրացնենք որ է Յ—Ռ, նոյնպէս ալ զ կէտէն զ—է (Տե՛ս 144րդ օրինակին վրայ ձեւոցներուն նկարները). Յ կէտէն Յ—Ռ գծին հեռաւորութիւնը կ'ձշտենք 20 հարմէդով՝ նոյնպէս ալ է—զ գիծը, և ո և է կէտերը լարով մ'իրարու կ'միացընենք: Յետոյ Ա. կողամասին Ո կէտը կ'կցենք Յ—Ռ ուղղահայեացին ու Ղ—Ռ գիծը Ո—է գծին, և ստացած դիրքովը շուրջը կ'գծենք. իսկ՝ կողմանակի Պ—Խ—Ժ գծին քաշելու եղանակն արդէն ծանօթ է՝ որ յառաջ կուգայ լ—ր—ժ գծով: Եթէ հակածալը գոտեվայրէն սկսել կ'ուզուի՝ Խ և Ղ կէտերը մէյմէկ շեղ գծով հակածալի կէտ լայնքին վրայ իրարու կ'միացնենք, որ է ի կէտ: Ստորոտի Բ—Դ—Գ—Է գիծը վայելուչ կորութիւնով մ'իրարու կ'միացնենք ու կերպասը կ'կտրենք (մի՛ մոռնար կարաբաժները):

Սոյն ձեւն իրար կցորդել և հակածալերը շրջօնի կողմէն կարգադրելէ ետք. Երկու անջատ խորշամ կ'ձեւացնենք ծալքին վրայ և երեք հատ խորշխորշան ալ Ռ կէտէն վար (լա՛ւ դիտէ խորչխորչանի նեանակիներուն գտնուած տեղի ու անոնց ընթանալիք կողմը, ինչպէս բացատրած ենք 180 էջի երրորդ հատուածով), որով շափաւոր ուղուցիկներ կ'ձեւանան (ի՞նչպէս 440րդ նկարը): Իսկ շափազանց ուղուցիկ ուղուած տաեն, հակածալերուն քանակութիւնը կրկնելու կամ եռապատկելու է, և քովի հակածալերէն ալ քանի մը խորշամ կազմելու է (ի՞նչպէս 439րդ նկարը): Տարակոյս չկայ թէ լեհազգեստին երկայնութիւնը միշտ պէտք է չամեմատել քղանցքին երկայնութեան հետ՝ և յետոյ խորշխորշանի բաժիններն աւելցնելու է:

Ներկայ օրինակը (Տե՛ս 444րդ) ինքնին քանի մը ձեւեր կ'ներկայացնէ. օրինակի համար, ժ անկիւնը կրնայ քառորդ շրջանակի մը ձեւով կարուիլ. յետուամասը Խ—զ գծէն միայն առնելով ու

մէջտեղը կրկնակի կամ եռակի հակածալ կազմելով՝ թիկնոցի նման ողորկ ձգել: Թերեւս հակածալերուն մէջտեղերէն դէպի Ո կէտին վրայ՝ երեսի կողմէն 2—3 խորշխորշան կազմել (ի՞նչպէս 439րդ նկարը): Վերջապէս ապագայ նորաձեւութիւնը պիտի ըսէ թէ մէն մի մասին ի՞նչ ուղղութիւն տալու է:

Լեհազգեստը կրծօձիքով ալ կրնայ ըլլալ. ինչպէս նաեւ կըրկնաշար կոմէնով. իսկ թեւերն ու օձիքներն օրուան նորաձեւութեան համեմատ կ'ըլլան:

Ընդհանրապէս լեհազգեստին ներքեւն աստառէ քղանցք մը կ'շինուի ու անոր ստորոտին վրայ կերպ զարդեր կ'ըլլայ, իւրաքանչիւր կողմի երեւցած սահմաններուն համեմատ:

Պ Ա Ս Ը.

Ա. Ռ Ի Գ Ա Ծ Ե Կ Պ Ա Ր Ե Գ Օ Տ Տ

(Տե՛ս ԾԲ. տախտակ 447են մինչեւ 456րդ օրինակներն ու նկարները)

Առիգած=բապիկ կ'անոււանուի քղանցքին առաջակողմը գոգնոցի ձեւով մաս մը որ ընդհանրապէս մէկ կամ երկու քովը խորշխորշաններով վեր առնուած կ'ըլլայ (ի՞նչպէս 447 եւ 453րդ նկարները). Երբեմն վարի կողմը սրածայր կ'ըլլայ՝ մէջտեղին դէմ կամ մէկ քովի վրայ և երբեմն կիսաբոլորակածեւ: Երկայնութիւնն ալ զանազան աստիճաններու վրայ կ'ըլլայ. կայ որ վարի ծայրը մինչեւ քղանցքի եղթին կ'հաւասարի և աստիճանաբար կարճ կ'ըլլայ. այնպէս որ գոտեվայրէն գետին եղած երկայնութեան մինչեւ վերի մէկերարդ բարձրութեամբը տեսնուած է, սակայն այսպէս կարճ եղած ատեն ՍՓԱԾԱՆԵԼԻ=հեարփ կ'անոււանուի: Գոտեվայրի լայնութիւնն ալ մասնաւոր տեղերու վրայ կ'ըլլայ, կայ որ հիմակուան քղանցքներուն նեղ առաջամասին չափ տարածութեան մը վրայէն դէպի վար կ'կախուի, կայ որ դէպի աղդըրերուն վրայէն ու կայ ալ որ մինչեւ յետուակողման գոտեվայր կ'յանդի:

Արդ, համարենք թէ առաջակողմը քղանցքէն 7 հարմիդի չափ կարճ ու սրածայր և վերը մինչեւ յետուակողման գոտեվայր հասած ձեւով առիգած մը ձեւել կ'ուղենք (ի՞նչպէս 447րդ եւ 448րդ նկարները, ուր կ'տեսնուին որ առիգածին ծայրը պարեգօտին

ներթեւեն դեպի յեսակողման զօտվայր հասած է): Ասոր համար երեք չափ պէտք է, 12րդ, 12րդ կրկին և բացառիկ չափ մ'ալ առկագածին ծածանող եղբին տարածութիւնը. ուրեմն մեղբական երիզին ծայրը յետակողման գօտեվայրը գնելով՝ կոր ընթացքով մը կ'ըերենք մինչեւ առաջակողմ, որ է Գ—Դ (Տե՛ս 449րդ նկարին վրայ), և համարենք թէ եկաւ 115 հարմէդ:

Արդ, կերպասին ծալքը կ'նկատենք իրեւ Ա—Բ գիծ ու գագաթը Ա—Գ (Տե՛ս 451րդ օր.): Ա կէտէն Ա—Բ գծին վրայ Դ կէտին համար կ'նշանակենք 12 և 12րդ կրկին չափերուն տարբերութեան կէսը, որ կ'ընէ 11 հարմէդ, և այս կէտէն վար ալ կ'նշանակենք առիգածին պահանջուած երկայնութիւնը՝ զոր քզանցքէն 7 հարմէդ կարձ ընել կ'ուզենք. հետեւապէս 102—7=95 հարմէդ կ'ընէ. սակայն՝ ինչպէս նախորդ գասով տեսանք, քովին վրայ կազմուելիք խորշխորշաններուն քանտկութեանն ու անոնց իւրաքանչիւրին խորութեան համար գրուելիք գումարին կէսին չափ ալ առաջակողմն երկայն շինելու է, որ յետոյ մեր ուզած տեղը կենոյ, և որովհետեւ յետակողմն երեք խորշխորշան պիտի կազմենք ու ամէնուն համար 30 հարմէդ սահմանենք. ուրեմն ասոր կէսը նախորդ թիւին վրայ գումարելով՝ կ'ունենանք 95+15=110 հարմէդ, որով կ'հասաւատուի Բ կէտը (Տե՛ս 451րդ օր.): Յետոյ Դ կէտէն շեղակի Ա—Գ գծին վրայ կ'նշանակենք 12րդ չափը և ասոր ու 12րդ կրկին տարբերութեան կէսն ալ միասեղ, որ է 28+11=39 հարմէդ, որով կ'հասաւատուի Գ կէտը: ինչպէս քիչ մ'առաջ հաշուեցինք, յետակողմին վրայ կազմուելիք երեք խորշխորշաններուն համար սահմանուած 30 հարմէդն առաւել 5ով (որպէս զի վերջին եզրը 8—10 հարմէդ ծաւալ մ'ունենայ) 35 հարմէդով Գ կէտէն փոքրիկ աղեղ մը կ'քաշենք, որ է ա—Բ: Հիմա ալ բացառիկ չափն առնելով՝ ասոր վրայ կ'աւելցնենք խորշխորշաններու գումարին կէսը և 115+15=130 հարմէդը Բ կէտին վրայ դնելով երիզին ծայրը ա—Բ աղեղին կտրած տեղը կ'անուանենք Ծ կէտ: Ծրջագծերը ներկայացնելու համար, Գ կէտը մեղմ գողաւոր գծով մը կ'միացնենք Դ կէտին. Ե կէտը մեղմ գմբեթարդ գծով մը Գ կէտին և Բ կէտն ալ ընդարձակ մեղմ կոր գծով մը Ե կէտին, ու կերպասը կ'կարենք:

Առիգածին ծածանող շուրթը՝ այն է Բ—Ե գիծը թերեւս

ժանեակ կամ խանթուաք կարուի, կամ իր կերպասէն 6—8 հարմէդ լայնութեամբ բազմագով վերջուորք մը և կամ լայն խճիս ու մեքենայով կարդ կարդ թափանց կալերով զարդարուի (ի՞նչպէս 447րդ նկարը), այս վերջինին համար, կերպասը կտրուած ատեն մոռնալու չէ Բ—Ե գծէն առբերանի բաժին ձգել. որ մինչեւ վերջին թափանց կարին հասնի:

Ասիգածը գօտեվայրէն մինչեւ կոնքի հուասարութիւն՝ վտաւատի նման կպչուն կենալու համար, գոնէ Յ սեղմօն շինել պէտք է, և արդէն ալ այս մոոք էր որ 12 և 12րդ կրկին չափերուն տարբերութեան կէսը մեծ շինեցինք սոյն Զ, Ե և Ը սեղմօնները ձեւագծելու համար, գօտիի չափը 4 հարմէդ նուազեցնելով մացած 24 հարմէդը չորս հաւասար մասերու կ'բաժնենք, և Դ կէտէն ներս կ'նշանակենք առաջին ¼ը, յետոյ սեղմօններուն համար գրուած 11 հարմէդին ½ը, և այսպէս մինչեւ Ը սեղմօնը հասնելով՝ դէպի Գ կէտ՝ 4 հարմէդ մեծ կ'մնայ, որ է երանին տափարակ մասը: Որովհետեւ առիգածը չափատուին վրայ գրուելով յետակողմի խորշխորշանները կ'կազմուի. ուրեմն լաւ կ'ըլլայ որ գօտեվայրին սեղմօններն ալ ճիշտ այն պահուն գործնական կերպով կարգի գրուի:

ՊԱՐԵԳՕՏ ԶԵԽԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Պարեգօտ=բիւնիկ կ'անուանուի հագուստին այն մասը որ կ'գանուի քզանցքի յետակողմին վրայ՝ գօտեվայրէն դէպի վար կախուած. որ կ'ձեւուի ինչ ինչ մեծութեամբ ու տարբեր ձեւերով, և այս կամ այն կողմերէն խորշխորշաններ կազմուելով՝ ուռուցիներ կ'ձեւացնէ (ի՞նչպէս 448 և 451րդ նկարները):

Ընդհանրապէս առիգածն ու պարեգօտը միատեղ կ'ըլլան, որոնց վերջին երեւումը տեղի ունեցաւ 1884—88 թուականներուն և մեծ ընդունելութիւն գտաւ Յ—Գ տարուան շրջան մը բոլորելով. ու նոյն իսկ չենք սխալիր, եթէ մօտաւոր տպագայի մը անոր վերադարձը գուշակել ուղենք:

Արդարեւ առիգածն ու պարեգօտը բազմածախս են. նախ անոր համար որ, ստորին տեսակ նիւթեր չեն պատշաճիր այս ձեւերուն, և երկրորդն ալ այն է որ ասոնց ներքեւն ուրիշ քայլունց մ'ալ գտնուելու է, թէ եւ այն ըլլայ պարզ նիւթէ մը. բայց ստո-

րին եղբելն ու առիգածին և պարեգօտին բաց թողած տեղերը հագուստին կերպասէն կամ ուրիշ ընտիր նիւթերով զարդարուած ըլլալու է (ի՞նչպէս 453 և 454րդ նկարները):

Ուրեմն անպէտ չպիտի նկատուի պարեգօտին ձեւել և կցորդելու եղանակին վրայ քանի մը հարահանգներ ներկայացնելը:

Ինչպէս լեհադգեստն ու առիգածը, նոյնպէս ալ պարեգօտը ձեւելու դրական եղանակ մը չունին, բայց մենք ջանացինք քանի մը հիմնական սկզբունքներու ներքեւ առնել զանոնք, «որով կ'դիւրանայ նորաձեւութեան առաջ բերած այս կամ այն փոփոխութիւններն ի գործ դնելը»:

Պարեգօտին յատակածեւն երկու որոշ ձեւ ունի՝ քառակուսի դիրքով կամ ձեւ արուած: Այժմ համարենք թէ ձեւ արուած պարեգօտ մը չինել կ'ուզենք որ վերի կողմն երանը պատէ և վարի եղբը քղանցքն Յ հարմէդի չափ կարճ րլլայ (ի՞նչպէս 448րդ նկարը). ուրեմն կերպասին ծալքն Ա—Բ և գագաթը Ա—Գ դիծ նկատելով (Տե՛ս 450րդ օր.), Ա կէտէն Ա—Բ գծին վրայ կ'նշանակենք քղանցքին Գ. չափէն 5 հարմէդ հուաղ, որ է 95 հարմէդ ու կ'ձշտենք Յ կէտը: Գօտեվայրին կեդրոնի շրջօնին կողմն 8ական հարմէդ խորութեամբ երեք խորշխորշան ձեւացնելու համար՝ Ա կէտէն Ա—Գ գծին վրայ կ'նշանակենք $8 \times 3 = 24 + 24 = 48$ և կարաբաժինն ալ միատեղ առնելով գրեթէ 50 հարմէդ, որով կ'հաստատուի Գ կէտը: Հիմա գիտնալ պէտք է թէ պարեգօտի ստորոտին եղբը մինչեւ գօտեվայր ելած է (լաւ դիտէ 448րդ նկարը). ուստի անոր համար չափատուին վրայէն բացառիկ չափ մը կ'առնենք, մեղրական երիդին ծայրը սնակուշտին ու յետակողման գօտեվայրին մէջտեղը դնելով՝ պարեգօտին ծածանող շրթունքին ձեւովը կ'երթանք մինչեւ ստորոտին մէջտեղը որ է Ա—Բ եղբը (Տե՛ս 449րդ նկարը), և համարենք թէ եկաւ 120 հարմէդ: Արդ, Բ կէտէն Բ—Գ ուղղահայեացը քաշելով՝ 120 հարմէդն առաւել հոյ հաւասար 125ը կ'գնենք ոյն գծին վրայ ու կ'ձշտենք Դ կէտը (լաւ դիտէ 450րդ օր.), և կարկինը Բ կէտէն մինչեւ Դ կէտ բանալով կ'քաշենք Դ—Ե աղեղը: Այժմ կարգն եկաւ գօտեվայրին վրայ երեք որոշ խորշխորշան ալ կազմելու պէտքին, որ շրջօնի կողմէն մեծ լամբակով մը կ'սկսի: ուստի Ա—Գ գծին համար գրուած 50 հարմէդը կըկնելով՝ $50 + 50 = 100$ հարմէդը Գ կէտէն դէպի Դ—Ե աղե-

ղին վրայ հպած տեղը կ'հաստատենք Ե կէտը: Հուսկ ուրեմն, Բ կէտէն սկսելով, մաս մը տեղ Բ—Դ ուղղահայեացին հետեւելով՝ տակաւ առ տակաւ կոր գծի մը կ'վերածենք ու գողաւոր ձեւով մը կ'միացնենք Ե կէտին: ինչպէս նաեւ Գ կէտը մեղմ գմբեթարդ գծով կ'միացնենք Ե կէտին, ու կերպասը կ'կտրենք:

Բնականաբար նոյն իսկ ամէնէն լայն կերպասին կէս լայնքը 125 հարմէդ չկրնար ըլլալ. հետեւապէս ծուէն մը դնելու է: Եթէ ծածանող շուրթը լայն խծիպ մ'ընել կ'ուզուի ու թերեւս անոր երեսի կողմնալ 4—5 կարգ թափանց կարեր (ի՞նչպէս 418րդ նկարը), ասոր համար Բ—Ե գծէն 6—8 հարմէդ վարօք կ'կտրենք:

Այս պարեգօտը կարել և կցորդելու համար, նախ ծածանող շրթունքն ձգուած խծիպի բաժինը ներս կ'չընենք ու թափանց կարերն ալ ընելով՝ լաւ մը կ'արդուկենք: Յետոյ, Ա էն մինչեւ Գ կէտ՝ աջ և ձախ կողմերն երեք քարկան խորշխորշան կ'ձեւացնենք, այնպէս որ շրջնի կողմը բարդ ի բարդ հակածալ մը կազմուի: ապա՝ մէն մի կողմի Գ կէտը կ'բերենք Գ կէտին, ասով ալ շրջոնի կողմը գրեթէ 20 հարմէդի չափ կախուած լամբակ մը կ'ձեւանայ: Հուսկ յետոյ՝ Ե անկիւնը 8 հարմէդի չափի ուղիղ թողելով մինչեւ Գ կէտ մնացած տարբերութիւնը դէպի առաջակողմ հակած երեք խորշխորշանի կ'վերածենք ու կ'կցենք ներքեւի քղանցքին գօտեվայրը. և կ'ունենանք ընտրուած նկարին (որ է 448րդ) ձեւովը պարեգօտը:

Քառակուսի հատակածեւով պարեգօտներ ձեւելն աւելի դիւրին է, օրինակի համար կերպասին ծալքը Ա—Գ ու գագաթը Ա—Բ գիծ համարելով (Տե՛ս 455րդ օր.), գօտեվայրը հինգ փոքր բաղմածալեր ձեւացնելու համար՝ Ա—Բ գիծը կ'ձշտենք 55 հարմէդով: և Եթէ երկայնութիւնը քղանցքէն 5—6 հարմէդ կարճ կ'ուզուի, ու մէջտեղին դէմ ալ երեք ծալ: ուրեմն Գ. չափը՝ որ է $100 + 30$ կ'ձշտենք Գ—Դ ուղղահայեացը: Բ և Դ անկիւներն ուղիղ գծով մ'իրարու կ'միացնենք՝ որ 55 հարմէդով զուգահեռական է Ա—Գ գծին:

Ասոր կցորդելու եղանակը շատ դիւրին է երբ ուշադրութեան առնուի օրինակին վրայ ցուցուած նշանակնելուն քանակութիւնն ու գանուած տեղերը. որովհետեւ գօտեվայրին մէն մի

կողմը հինգական բազմածալ կ'ձեւացնենք, այնպէս որ մէջտեղը . (Ա կէար) երեսի կողմէն հակածալ մը կ'ձեւանայ : Յետոյ, Գ. չափին $\frac{1}{3}$ երկայնութեան հաւասար, այն է 33 հարմէդի չափի Բ կէտէն վարօք կ'սկսինք երեք հատ գէպի վար հակած բազմածալ ձեւացնել, այնպէս որ Գ. չափի $\frac{1}{2}$ ին՝ այն է 50 հարմէդի չափ ուղիղ մնայ : Այս այս գիրքին մէջ կ'կցենք գօտեվայրին, ու Գ կէտէն սկսելով գէպի վար հակած երեք բազմածալ կ'կազմենք, որ գրեթէ գօտեվայրէն $30+35=65$ հարմէդ վարօք աւարտի : Այս բազմածալերուն խորութիւնը ճշտելու համար, նայելու է որ Դ անկիւնը քղոնցքին ստորոտէն 5—7 հարմէդ կարճ մնայ . հակառակ պարագային բազմածալերը մեզմացնել կամ խորցնելու . է, որով աջ ու ձախ կողմի Դ անկիւնները մէյմէկ եռանկիւն ծայրեր ու վերի կողմն ալ սիրոն վէտվէտումներ կ'ձեւանան (ի՞նչպէս 45 Երդ նկարը) : Եթէ ուղուի ծածանով եղրերը նախապէս կրնայ խծիպի բաժիններ ձգելով՝ բատ այնմ պատրաստուիլ :

Կրնայ ըլլալ որ առիղոծն ու պարեգօտն տռանձին գօտիի մը վրայ առնուի և քղանցքին անկախ ըլլայ . սա՛ նկատումով որ տարրեր քղանցքներու վրայ ալ կրնայ հագնուիլ :



Թերեւս մէկ կողմը միայն ծածանել ուզուի և անոր եզրը մեծ օղոկներ շինուի (նոյն կերպասէն բուծին ձեւացնելով), և հեռուէն ալ կոճակներ կարուի (ի՞նչպէս 45 Երդ նկարը) . ու թերեւս վարի ծայրը կրծօծիքի նման պատրաստելով՝ վրան շրջուի և կոճկուի : Միեւնոյն զարգը լեհազգեստներու առաջամասին վրայ ալ կրնայ ըլլալ :

Պ Ա Ս Բ.

ԿԵՂԾՈՈՒԻԿ ԵՒ ԿԵՂԾՈՈՒԻԿՈՎ ՔՂԱՆՑԻԿՆԵՐ

(Տե՛ս ԾԷ. Տախ. 452 եւ 457էն մինչեւ 461 Երդ օրինակ ու նկար)

Կեղծոռիկ կ'ըսուի յետակողմի ա՛յն դիրքին որ գօտեվայրէն գէպի երանին վրայ բարձր ցուցնել կուզուի : Այս ձեւը մանաւանդ կ'յարմարի անոնց որոնց երանը բնականէն տափարակ կ'ըլւայ, և ստնամբարձին կամ քղանցքին ներքեւէն փոքր բարձիկ



մը կ'գրուի, ինչպէս պիտի խօսինք ԺԲ. դլխու Ը. գասով։ Բայց այս փոքր բարձիկն երբեմն այնպիսի ստուար համեմատութեաններ կ'առնէ որ յետակողմտն գօտեվայրէն մինչեւ ստորոտ կիսագլնաձեւ դէպի դուրս կ'կենայ. 1872—74 թուակոններուն այս նորածեւութեան ահուելի տեսարանը որ նողկոնք ազդելու չափ ծայրահեղութեան հասած էր. ապա տեղի տուաւ երանը տափարակ ցուցնելու ձեւին, որ նոյնիսկ քզանցքին մէջի կողմէն կարգ կարգ խժերիզներով կ'կաշկանդուեր, որպէս զի հնոր եղածին չափ կոնքի շրջապատին ծաւալը փոքր երեւայ. այնպէս որ տիկնայք ո'չ միայն սանդուխներու ելեւէջին համար չառ ժամանակ կ'կորսնցնէին՝ այլ և հասարակ քայլափոխն ալ կ'դժուարեցներ, որունքներուն կաշկանդուած ըլլալէն։ Կարծես յատկապէս կեղծուիկն արհամորհել տալու համար եղած ըլլար ոյն կծկումը. բայց հակառակ այս ամէնուն, կեղծուիկիը վերստին ծայր տուաւ և 1883—85 թուականներուն դարձեալ ծայրայեղութեան գագաթնակէտն հստաւ, պարեգօտին ու առիգածին հետ խառնուելով։

Անցողակի կերպով յիշենք թէ նորածեւութեան նմանը չտեսնուած պարզութիւնը տեղի ունեցաւ 1887էն 90, որ տաեն կանանց շրջագայութեան տարազը կ'բազկանոր ամէնտպարզ քզանցքէ մը և նոյնչափ ալ անսեթեւեթ թիկնազգեստէ մը։

Սոյն քանի մը յիշատակութիւններն անոր համար ըրինք որ գիտցուի թէ ո'չ մին պարսաւելու է ո'չ ալ միւսը գովարանել. քանի որ ամէնէն ծաղրելի նկատուած նորածեւութեան անդամ ամէնէն յետինն ու ամէնէն սկեպտիկն օրուան նորութեան հետեւելու մարմաջն ունի. Հետեւինք ուրեմն ինչ որ ծանօթ է։

Արդ, կեղծուիկն ընդհանրապէս երեք կերպով կ'պատրաստուի. կամ շարժական կ'ըլլայ ու կտպիչով մը մէջքին կ'կապուի, կամ քզանցքիի հետ պատրաստուած կ'ըլլայ (ի՞նչպէս 461րդ նկարը) և կամ քզանցքին հետ (ի՞նչպէս 452րդ նկարը), որոնց կիրառութիւնը հագուստին նորածեւութենէն կախումն ունի զոր մի առմի պիտի բացատրենք։

Նախ սկսինք քզանցքով պատրաստելու եղանակէն։
Դ. Գլխու Գ. զասի հրահանգին համեմոտ աստառէ պարզ քզանցք մը կ'ձեւագծենք (ի՞նչպէս Ի. սախ. 72 և 73րդ օր.), այն է մէկ առաջամտու և երկու կողմամասներ. միայն սա տարբերու-

թեամբ որ առաջամասին գօտեվայրը կ'կազմենք 12րդ չափին կէ-սովը՝ որ է 1/4 հարմէդ. և ստորոտը ճիշտ նոյն չափովը, այն է 28 հարմէդ. (Տե՛ս 457 օր.), ինչպէս նաև կաղմամասին գօտեվայրն ալ 12րդ չափին կրկինովը, որ կ'ընէ 56 հարմէդ. Աստաւին լայնքն եթէ կողմամասին պահանջած լայնութիւնը չունենայ, կրնայ չորս կողմամասով ալ ըլլալ, այսինքն մէն մի կողմն երկերկու հատ, Այժմ սոյն պարզ քղանցքը կեղծութիւնի վերածելու համար յետապաղմը 3, 4 կամ 5 կարգ զսպանակ կ'դրուի. Համարենք թէ 5 կարգ դնել կ'ուղենք, ուրեմն դիտնալ պէտք է թէ մէն մի զսպանակի համար 2 $\frac{1}{2}$ հարմէդ յետսակողմն երկայն ձեւելու է, որով $5 \times 2\frac{1}{2} = 12\frac{1}{2}$ հարմէդին կէսը կ'դնենք Դ կէտէն վեր ու կ'կազմենք Դ' կէտը և միւս կէսը Զ կէտէն վար ու կ'ունենանք Զ' կէտը (Տե՛ս 457րդ օրինակ ուր նեանակած ենք Յ $\frac{1}{2}$ ական): Յետոյ սոյն Դ' և Զ' անկիւնները մէյմէկ կոր գծերով կ'միացնենք նախորդ գծերուն (Տե՛ս 457րդ օր. մօր գոյն ստուրով սոյն յաւելուածները), որոնցով քղանցքին յետսակողմը 12 $\frac{1}{2}$ —13 հարմէդ կ'երկարի: Ահա սոյն յաւելուած գծերէն աստաւը կը կարենք. երկայնութիւնները կցորդելով կ'կարենք, միւռեկն առաջամասին կարէն կ'պատրաստենք (ի'նչպէս 461րդ նկարը), և ստորատին շուրջը նորաձեւութեան համեմատ կ'զարդարենք (ի'նչպէս կ'երեւան 452, 453 եւ 454րդ նկարներուն սորոտը): Ապա, զսպանակներուն դրուելիք տեղերն որոշելու համար, առաջամասին ծալքն ու յետսակողմի կարը բռնելով կ'փռենք գործառնակին վրայ (ի'նչպէս 457րդ օրինակը). նախ Բ—Դ' և Ս—Զ' եզրերը կէս ընելով կ'քաշենք ա—բ ուղղածիգ գիծը. յետոյ զայն երեք հաւասար մասերու բաժնելով՝ կ'նշանակենք պ և դ կէտերը. զ—դ գծին մէջտեղը կ'նշանակենք Ե կէտը. և հիմա ալ Բ—գ միջոցն երեք հաւասար մասերու բաժնելով կ'կետադրենք զ և Է կէտերը: Ճիշտ միեւնոյն գործողութիւնը կ'կատարենք Դ'—Զ' գծին վրայ ու այն տեղ ալ կունենանք բ. թ, ծ, ի և Է կէտեր. և կ'սկսինք այս ամէնք մէյմէկ կոր գծերով իրաբու միացնել ինչպէս են լ—ե, ի—զ, թ—գ, ծ—ե, թ—դ, ու փշանուակով կ'օրինակենք ներքեւի մասին, որով կ'ձշտուին զսպանակներուն ստհմանները: Յայտնի է թէ կեղծութիւնի համար պատրաստուած զսպանակը 1 կամ 1 $\frac{1}{2}$ հարմէդ լայնութիւն կ'ունենայ և մանածէ հիւսկէնով

մը պատած կ'ըլլայ, որպէս զի հագուստին ժանդ չտայ: Արդ, զսպանակը քղանցքին կցելու համար նախապէս անոնց գլուխելիք անդերը լաթէ կածաններ կարելու է, և այս կածաններուն լայնութիւնը՝ եղբերուն կարարաժինէն զատ զսպանակին կրկինը ըլլալու է (ի'նչպէս կ'երեւայ 457րդ օր. դ—ը զծին վրայ): Զսպանակներուն երկայնութիւնն ալ մասնաւոր չափերով պէտք է ըլլայ, և այս ալ չատ գիւրին է, որովհետեւ, իւրաքանչիւ, կարգին իր մէծութեամբը կ'կտրուի, այսինքն 1.ին կարգին՝ այն է դ—ը գծին մեծութեամբը կ'կտրենք 1.ին զսպանակը, և—ծ գծին մեծութեամբը 2. զսպանակը և այսպէս ալ 3., 4. և 5.ը (Տե՛ս 458րդ նկարը, ուր նինգ զսպանակներն ալ կարգաւ ներկայսուցած ենի): Առոնց ծայրերը մէյմէկ փոքր լաթէ ծուէններով կ'պատենք ու քանի մը վրայիարով կ'հաստատենք զսպանակի հիւսկին (ի'նչպէս ցուցուցինք 459րդ նկարով): Յետոյ իւրաքանչիւրն իր կարգին կ'սահեցնենք կածաններուն մէջ ու ծայրերը վրայիարերով կ'հաստատենք կածանին ու քղանցքին հետ, այսպէս որ քղանցքը մէկին մէկ կ'փոթթուի: Զսպանակներն իրենց մեծութեան համեմատ աղեղնածեւ կենալու համար (Տե՛ս 460րդ նկարը), իւրաքանչիւրին երկայնութեան չին հաւասար մեծութեամբ իւժերիզներ կ'կտրենք (սոյն խժերիզին լայնքը ճիշտ զսպանակին լայնութեան հաւասար ըլլալու է որ կարող ըլլայ կեղծութիւն ձեւը չափաւոր կեցնելու), ու քղանցքին մէջի կողմէն կ'կցենք զսպանակներուն գտնուած ծայրերուն:

Գոտին՝ որ զսպանակները դնելէ առաջ կ'կարուի, փոթերը բ կէտէն սկսելու է, որպէս զի կածաններուն ձեւացած պոստումներուն հետ ներգաշնակ ըլլայ. և ահա կ'ունենանք մեծ կեղծութիւնի քղանցքը (Տե՛ս 452րդ նկարը):

Կեղծութիւն ա՛լ աւելի բարձր կենալու համար, քղանցիկի հետ ալ կրնայ պատրաստուիլ ու կարգ կարգ բաղմագոթ վերջաւորք կարուի (ի'նչպէս 461րդ նկարը): Իսկ եթէ աստիճանաբար փոքր ձեւացնել ուզուի. փոխանակ հինգ զսպանակի՝ չորս կամ երեք համար կ'պատրաստենք. այնպէս որ չորսի համար՝ կ'առնենք դ—ը, և—ծ, գ—ը և մէկ ալ զ—դ միջոցէն. երեք հատի համար ալ կ'առնենք դ—ը և բ—դ գիծն երեք հաւասար մասերու բաժնելով՝

մէյմէկ ալ այն տեղերէն։ Ամէն առթիւ զսպանակներուն ու խժերիզներուն չափերն իրենց գտնուած տեղին համեմատ կ'առնուր։

Պ Ա Ս Ժ .

«Պ Ռ Ի Ն Օ Լ Ի Ն»

(Տե՛ս ԾԲ. տախտակ 462Ն. մինչեւ 466րդ օրինակ ու նկարները)

ԳՐԻՆՈԼԻՆ=Մալազօֆ կ'անուանուի այն քղանցիկի ձեւը, որ գօտեվայրի շրջապատէն սկսելով հետզհետէ մինչեւ ստորոտ անցուն համեմատութիւնով մեծ կողովի մը ձեւը կ'առնէ (ի՞նչպէս 466րդ նկարը)։

Գոփնօլինը վերջին անդամ տեսնուած է 1852էն 58, որ յետոյ կեղծոռիկի վերածուած է։


Գոփնօլինը պարզապէս կ'նշանակէ ձարապաստառ և ոչ մասնաւոր ձեւ մը։ որովհետեւ ոյն ուռուցիկ քղանցիկին յատակը կ'պատրաստուի ձարապաստառով, և ծայրայեղութեան հասցնելու համար ալ աստիճան առ աստիճան զսպանակներ կ'գրուի (լա՛ դիտէ 466րդ նկարը). իսկ Մալազօֆ անունն առած է Սեւաստուրովի համանուն բերդէն։ Գոփնօլին քղանցիկն ա՛լ աւելի ուռուցիկ կենալու համար, ընդհանրապէս անոր վրայեն հագնելիք քղանցքը բազմակարգ վերջաւորքներով կ'զարդարուի։

Մենք այժմ չպիտի խօսինք գոփնօլին քղանցիկին ու քղանցքին ձեւելու եղանակներուն վրայ. այլ պիտի բացարենք իրանգգեստին վրայ կտարարուելիք յաւելուածները։

Ինչպէս արդէն ըստ ենք, իրանազգեստին ախտարները, ձեւագծելու մեր հիմնական եղանակը սա՛ ու նա՛ ձեւին հետ առնչութիւն չունի. ուստի զայն կ'պատրաստենք միշտ ընդհանուր եղանակին համեմատ, ըլլայ պարզ—կողամասով՝ կրկնակողամասով կամ կրկին—յետսամասով. միայն կերպասը ձեւելու ժամանակ՝ կոնքի ծիրն անդամ մ'ալ գոփնօլինին վրայէն կ'առնենք։ Համարենք թէ նախորդէն 18 հարմէդ աւելի եկաւ. ու նկատելով որ առաջամասն ընդարձակ սեղմօններով պատրաստուած է։ Ուրեմն առաջամասին կոնքի հաւասարութեան վրայ գտնուած վեց անկիւններուն դէմ մէյմէկ հարմէդ դրաօք կէտեր նշանակե-

լով, և գօտեվայրի հաւասարութիւններէն լոյնցնելով կ'իջնենք դէպի վար (Տե՛ս 462րդ օր.), որոնք են ա, բ, գ, դ, ե և զ անկիւնները։ Նոյնպէս ալ Ա. եւ Բ. կողամասներուն Պ—ծ և Զ—լ գծերը (Տե՛ս 463 և 464րդ օր.)։ Այս ուժի անկիւններուն դրուած 8 հարմէդը 18 հարմէդէն համելով՝ միացած 10 հարմէդը չորս հաւասար մասերու կ'բաժնենք, երկու մասը կ'յատկացնենք յետսամասին երկու կողմերուն, որոնք են Խ—ը և Զ—է գծերը (Տե՛ս 465րդ օր.)։ և միւս երկու մասերուն մէկը կ'սահմանենք Բ. կողամասի Զ—ի գծին ու մէկ մասն ալ Ա. կողամասի Ղ—ը գծին։

Մէկ խօսք զոփնօլինին վրայ իջնող հագուստներուն շրջապատը վլու զգեստներուն նման, գօտեվայրէն սկսելով պէտք է տարածուին։



ԳԼՈՒԽ Պ.

ԱՐՏԱՔԻՆ ԶԳԵՍՑՆԵՐ

Պ Ա Ս Ա.

Թ Ի Կ Ն Ո Յ

(Տե՛ս ԾԹ. Տախտակ 467էն մինչեւ 481րդ օրինակներիցու նկարները)



ԻԿՆՈՅՑ կ'անուանուի այն հագուստը, որ ընդհանրապէս մինչեւ կոնքի հաւասարութիւնն իրանազգեստ մը կ'ունենայ և անկէց վար զատ քղանցք մը կցուած կ'ըլլայ (Տե՛ս 480 և 481րդ նկարները)։ Թիկնոցը զուտ առնական հագուստ մէ որ շուրջ 30 տարիէ ի վեր կիներն ալ խրացուցին, և շրջագայութեան հագուստներուն գլխաւորներէն մին եղաւ. ու քանի մը տարին անգամ՝ մը նորաձեւութեան շրջան կ'բոլորէ, իբրեւ կրկնոց՝ միշտ թարմ ու միշտ վայելուչ համարուելով, մանաւանդ նիհար ու բարձրահասակ կազմերու։

Նախ բացատրենք թիկնոցին ամէնէն պարզ ու ընկալեալ ձեւը կտրելու եղանակը և յետոյ անոր պէսպիսութիւնը։

Այս հագուստն ալ կազմութեան ու նորաձեւութեան համեմատ կրնայ պարզ—կողամասով, կրկին—յետսամասով ու կրկնակողամասով ըլլալ, Շրջագայութեան համար սահմանուած թիկնո-

ցին երկայնութեան ամէնէն կարձ սահմանը կ'ըլլայ միջնամատին հաւասար, ծունդին վերի եզրը, վարի եզրը, կէս դնաղուցը. իսկ ճամբորդութեան համար ալ գետնէն 10—12 հարմէդի չափ կարձ կամ նոյն իսկ մինչեւ գարշապար, այն է գետնէն 3—4 հարմէդ կարձ։

Թիկնոցին առաջակողմը միաշար կամ կրկնաշար կոճկէնով կ'ըլլայ, մանաւանդ վերջինին ժամանակ կրծափեղկով, այսինքն վերելեակի բաժինը զատ կտորով (Տե՛ս 481րդ նկարը), որ ամէնէն յարգին է ու կարելու տեսակէտով ալ ամէնէն առուեստագիտականը։

Շրջագայութեան թիկնոցն ընդհանրապէս միջին թանցրութեամբ ասուեցէն կերպարէ կ'շինուի։ Ուրեմն ենթագրենք թէ կրկնակողամատով, կրծափեղկով և մինչեւ ծունդի հաւասարութիւն իջնող շրջագայութեան թիկնոց մը ձեւել կ'ուզենք։ Բնդհանուր եղանակին համեմատ տիպարները կը պատրաստենք, միայն թէ վրանոց հագուստ ըլլալուն համար, յետսամատով բնական մէջըով կ'պատրաստուի (Եթէ սակայն կեղծոուիկ չպիտի գործածուի)։ և թիկնոցին յետսամասն ագեւոր ըլլալուն համար՝ երանին վերջաւորութիւնը մէջքի լայնութենէն քիչ տարրերութիւն ունենալու է, որպէս զի ագիին շարունակութիւնն ալ համեմատական վայելչութիւն մը պահէ։ օրինակի համար յետսամասին մէջքի լայնութեան Յ հարմէդ դրուած տաեն վարն ալ Մ' կէտէն ներս Յ հարմէդով կազմելու է (Տե՛ս Կ. Տախ. 485րդ օր.)։ Ինչպէս նաեւ առաջամասը մէկ սեղմօնով կ'ձեւագծենք. և այն ալ Յրդ կրկին չափին չովը (Տե՛ս 468րդ օրինակը)։

Կերպարը ձեւելու համար, նախ առաջամատին տիպարը կը դնենք անոր վրայ (Տե՛ս 468րդ օրինակ)։ ուսածագը, երբուծն ու փողեղբը կ'օրինակենք և Բ—Տ գծէն 1 հարմէդի չափ ընդորձակութեան բաժինը վար քաշելէ ետք, կ'օրինակենք նաեւ միւս կողմերն ու տիպարը կ'վերցնենք. յետոյ կրծեղբէն ու կողանշատէն մէյմէկ հարմէդ ընդարձակութեան բաժին կ'ձգենք կրծօծիքը վայելուչ կազմուելու համար հագագը 1 հարմէդի չափ կ'բարձրացնենք ու նոյն չափ ալ դէպի դուրս մղելով՝ շուրջի կարաբաժինները նկատողութեան կ'առնենք, և կերպարը կ'ձեւենք։ Սակայն գիտնալ պէտք է թէ այս կարգի հագուստները սովորական եղանակով չեն կարուիր։ Թերեւս կամերուն յետսակողմի եզրերը դէպի առաջակողմին վրայ կոտրելով՝

Երեսի կողմէն թափանցկարերով զարդեր ձեւացնել ուզուի . այն պարագային կողանջատի , ուսածադի ու կոնքի հաւասարութիւն-ներուն կարաբաժնները 1½—2 հարմէդի չափ ձգելու է , որոնք են զ—ե , ե—ը և լ—բ գծերը : Եթէ անութն ամփոփելու պէտք են զ—ե , ե—ը և լ—բ գծերը : Կամ մէջ տեղն հողանջատի հողմանք կողազմենք :

Կրծափեղիը ձեւելու համար՝ նախ Զ կէտին դէմ սպունգով կ'թրջենք ու արդուկով ամփոփելով՝ կորութիւնը կ'մշենք դէպի կուբճքին կերպոնը , որով կրծամէջի կորութիւնը կ'մշեմանայ և ծիշտ նոյն աեղի հորիզոնական փոքր սեղմօնին դերը կ'կատարուի :

Առաջամասին ստացած սոյն դիրքին մէջ կրծափեղին բաւար կերպաս մը կ'դնենք ներքեւը , որուն վրայ կ'օրինակինք կրծեղը , վարի կողմը և լ—ի—ծ—բ գիծը՝ որ սեղմօնի և . շրջագծէն Հ հարմէդի չափ զուդահետարար ներսօք կ'գտնուի (լա՛ւ դիտէ 468րդ օր.) . և ապա առաջամասը վրայէն վերցնելով կրծօդիքունջին արուելիք ձեւին համեմատ ա անկիւնը կ'միացնենք իս ծիքունջին արուելիք ձեւին համեմատ ա անկիւնը կ'միացնենք (Տե՛ս 467րդ օր . ուր իբր քէ առաջամասին Զ կէտը ներս մըրուած րլայով՝ կրծափեղին Զ կէտն ալ մերմ կորութիւնով մը կազմուած է) . առոր ալ շուրջի կարաբաժնները կարելու պատշաճութեան համեմատ ձգելով՝ կերպասը կ'կարենք :

Կողմանները բնաւ փոփոխութիւն չեն կրեր , բացի կարելու կերպէն . որ եթէ քիչ մը վերը յիշուած եղանակով պիտի կարուի , այն ատեն առաջակողմի եղբերուն 3—4տկան հազմէդ կարաբաժին կ'դնենք ու յետակողմի եղբերուն 1½—2ական հարմէդ , ինչպէս են ո—ս—վ և ս—ր—ց գծերը (Տե՛ս 469 և 470րդ օրինակներուն վրայ) :

Ամէնէն ծանօթ և բնկալեալ ձեւով թիկնոցներուն յետսամասը կոնածագէն մինչեւ վար միակտոր կ'ըլլայ և մէջքէն դէպի վար շարունակուած ձեւը կ'անուանուի ագի : Արդ , ագին ագեծալերը թիկնոցին յետսակողմի գլխաւոր հրապոյը կ'կազմեն , և ասոնք ալ զանազան առումներ ունին . նախ ագին վրայ խօսելով՝ ամէնէն շատ ի կիր առուած ձեւը՝ մէջտեղը փեռեկ կազմելն է , որ ամի կողմը տրամագծէն 1½—2 հարմէդի չափ կորսօք կ'ծածանի աղ կողմին վրայ (Տե՛ս 480րդ նկարը) , այն է դիշտ այլերու թիկնոցին նման . կամ կոնամէջի կարին ուղղու-

թեամբը կ'իջնէ մինչեւ վար (ի'նչպէս 479րդ նկարը) , այս պարագային անշուշտ աջ կողմինը միայն արամագծէն գուրս կ'ծալուի . կամ ձախ կողմի եղբը՝ աջ կողմի ագեծալին հետ կ'գտնուի , որ այս պարագային ալ կոնամէջը միակտոր կ'ըլլայ ու աջ կողմի ներքեւը միայն յաւելուածական ագի մը կ'ունենայ . կամ մէջ տեղն հակածալով (որ դարձեալ 479րդ նկարին երեւոյթը կ'ունենա) . և կամ ագին անջատ կ'ձեւուի ու յետսամասն եռանկիւն ծայրով մը կ'կցորդի անոր վրայ : Գալով ագեծալին , ասոր ալ ընկալեալ ձեն այն է որ քղանցքն ագիին վրայ ծալ մը կ'ծեւանայ . բայց երբ այլերուն սոյն պատկառելի հագուստն իգական սեռին նախանձը շարժեց ու զայն կրել սկսան , խե՞ղճ ագեծալն ալ այն օրէն սկսաւ իր գարաւոր ձեւէն ելլել . ու եղաւ որ քղանցքը կրկնակի ու եռակի ծալերով կազմուեցաւ , և նոյն իսկ եղաւ ալ որ ագին քղանցքին վրայ ծալ ձեւացաւ , այսինքն հակառակ ուղղութեամբ . ու դեռ եղաւ ալ որ բնաւ ագի չունեցաւ , և քղանցքը մինչեւ յետսակողմի մէջ տեղը շարունակուեցաւ՝ փեռեկով մը կամ հակածալով :

Արդ , ընկալեալ ձեւով յետսամասն ու ագին ձեւելու համար՝ կերպասին եղրէն 5 հարմէդ զուգահեռաբար դէպի ներսօք ա—բ գիծը քաշելով (Տե՛ս 472րդ օր .) , տիպարին և անկիւնը կը հաւասարեցնենք սոյն գծին և Ռ' անկիւնը Հ հարմէդ ներսօք . վերի մասը կ'օրինակենք ու Ե—Լ գծէն ¼—1 հարմէդ ընդարձակութեան բաժինը ձգելէ ետք , կոնամէջին համար ¼ հարմէդի չափ ձգուելիք ընդարձակութեան բաժինը Զ—Մ' գծին մեղմ կոր գնացքովը կ'իջեցնենք ա—բ գծին վրայ որ կ'ներկայացնէ ագիին արամագծը (Տե՛ս 472րդ օր . սա .—.—.— գծին վայելչութիւնը) , և Մ' կէտէն կ'քաշենք Ռ'—զ փոքր շեղ գիծը՝ 5 հարմէդ լայնութեամբ կ'ձատենք ու գ անկիւնը մեղմ կոր գծով մը կ'միացնենք կերպասին եղրին , այնպէս որ Մ'—բ գծին հետ զուգահեռական գիրք մունենայ . սոյն 5 հարմէդ յաւելուածը կը ծառայէ փեռեկին վերելեալի և առերեանի բաժիններուն : Յետոյ կ'ձգենք շուրջի կարաբաժնները՝ որոնք են կոնամէջը , կոնածագը , թիկնածագը , թիկնաւարտն ու կոնակորը : Ապա՝ մէջքին դէմ Զ հարմէդ նշանակելով կ'ունենանք դ կէտն ու Ե կէտին դէմ ալ հարմէդով Զ կէտը , և կ'քաշենք դ—զ—ե գիծը . ու իրանին Բ. — 18

կոր ձեւը Յ կէտէն վար կ'շարունակենք դէպի զ—ե գծին վրայ որ է Յ—ը—ե, որ կ'ներկայացնէ ագեծալին տրամագիծը։ Զ կէտէն դէպի ա—բ գծին վրայ կ'նշանակենք Զրդ կրկին չափը. որ է 52 հարմէդ, ուր կ'ծշուփի բ կէտը. յետոյ Ս'—բ գիծը չափելով՝ տեսնուած մեծութիւնը կ'դնենք Յ կէտէն Յ—ը—ե գծին վրայ, և կ'քաշենք բ—է գիծը. Յ—ը—ե գծէն 4 հարմէդ զուգահեռական լայնութեամբ ալ կ'քաշենք բ—ծ գիծը, որ կ'ներկայացնէ ագեծալին բաժինը. և ծ—ի գծէն 2 հարմէդ շորջքի բաժին ձգերով՝ կերպասը կ'կտրենք (Լաւ դիտէ 472րդ օրինակին սոււերով յատկածեւր)։

Գալով քղանցքին, կերպասը շոայլաբար չվատնելու համար, լաւ է որ նախ անոր թուղթէ տիպարը շինենք. ուստի տիպարցութղթին եղրը ա—բ գիծ համարելով (Տե՛ս 476րդ օր.), ագիի Ս'—բ չափուած մեծութիւնը առաւել 1ով կ'դնենք ասոր բ կէտէն վեր ու կ'նշանոտկենք գ կէտը (Լաւ դիտէ 476րդ օր.). յետոյ առաջամասի տիպարին Յ կէտը կ'դնենք գ կէտէն 1 հարմէդ ներսոր ու նոյն չափ ալ Զ կէտը ա—բ գծէն՝ և Յ կէտը մեղմ կոր գծով մը կ'միացնենք գ—բ գծին, որ փոքր սեղմօնի մը շրջագծին երեւյթը կ'առնէ։ Առաջամասի տիպարին ստացած դիրքին մէջ Բ. կողամասին Շ կէտը (Թիրեւս տիպարը պարզ կողամասով եղած ըլլայ, դարձեալ գործոլուրիւնը նոյն է, ինչպէս սոյն 476րդ օր.) կ'կցենք առաջամասի Մ կէտին ու Ժ և Զ կէտերը 12 և 12րդ կրկին չափերուն տարբերութեան $\frac{1}{3}$ ին չափ իրարմէ հեռու. յետոյ Ա. կողամասին Պ—Ռ գիծը Բ. կողամասին Զ—Ի գծէն 2 հարմէդ զուգահեռաբար հեռու կ'դնենք (իսկ մէկ կողամասով եղած ատեն 2 հարմէդ ետ կ'քաշենք, իրո թէ մէջտեղէն կտրելով անջատ դրած ըլլայինք՝ ուր պիտի կազմուէր դ—ի և զ—ե միջոցը), և Ղ կէտին դիմացը լ կէտը կ'նշանակենք Յրդ չափին $\frac{1}{2}$ ովք որ է 3 հարմէդ, և $\frac{1}{6}$ ՝ այն է 1 հարմէդ ալ Ո կէտին դիմաց նշանակելով՝ կ'ունենանք Թ կէտը. քանակը կ'ուղղենք լ և թ կէտերուն կ'քաշենք լ—բ—ծ գիծը. ապա՝ Ո կէտը մեղմ կոր գծով մը կ'միացնենք բ—ծ գծին, դարձեալ ազիի Ս'—բ գծին երկայնութիւնը կ'դնենք քղանցքի Ո կէտէն Ո—ծ գծին վրայ, որով կ'ծշուփի Ժ կէտը։ Ստորոտը վայելչապէս ներկայացնելու համար, նախ Ժ և Բ անկիւնները լարով մը կ'միացնենք ու կէս ընելով՝ մէջ տեղը կ'ու-

նենանք ի կէտը, ուրկէ փոքր հորիզոնական մը կ'քաշենք մինչեւ բ—բ' գծին վրայ և կ'ունենանք լ կէտը. յետոյ ի—լ գիծը կէս ընելով կ'ունենանք խ կէտը ու կ'քաշենք ծ—խ—բ կոր գիծը։ Կը մնայ կոնքի հաւասարութիւնը, որ այս ալ Ո կէտէն մինչեւ Յ կէտ մեղմ գողաւոր գծով մը կ'կազմուի։

Քղանցքին կերպասը ձեւելու համար (Տե՛ս 475րդ օր.), կերպասին եղրը ծ—կ գիծ նկատելով՝ առբերանի համար ծ կէտէն ներս 4 և կ կէտէն ներս ալ Յ հարմէդ նշանակելով՝ կ'քաշենք հ—ձ գիծը. յետոյ կրծափեղկին բ—բ' գիծը չափելով՝ կ'դնենք հ և ձ կէտերէն ներս և զուգահեռաբար կ'քաշենք գ—բ գիծը. որ քղանցքի առաջակողման տրամագիծը կ'ներկայացնէ. Այժմ տիպարին առաջակողմը կ'հաւասարեցնենք սոյն գ—բ գծին. Յ կէտը մեղմ գողաւոր գծով մը կ'բարձրացնենք մինչեւ լ կէտ, և կրծափեղկի բ—բ' գծին լայնութեամբը կ'ծշունք լ կէտը և 4 հարմէդով ալ ն կէտը. ապա՝ ն, լ և Յ կէտերը մէյ մէյ մեղմ կոր գծերով կ'միացնենք նախնական ուղիղ գծերուն, Յետոյ ագեծալի բաժինին համար Ո—ծ գծէն 4 հարմէդ զուգահեռաբար գրուք կ'գծենք մ—լ գիծը. ստորոտի շորջքին համոր ծ—խ—բ—կ գծէն 2 հարմէդ զուգահեռաբար աւելի ձգելէ զատ՝ լ կէտէն 1— $1\frac{1}{2}$ հարմէդի չափ վարօք այն է ն անկիւնէն լայնարածին մը կ'թողունք, և Ո—Յ—η գծէն կարաբաժին ձգելով՝ կերպասը կը կտրենք (Լաւ դիտէ 475րդ օրինակը)։

Այժմ գիտնալ պէտք է թէ քղանցքն իրանազգեստին կոնքի հաւասարութեան կցորդելու ժամանակ ազդրին դէմ քիչ մը ամփոփելու է, որովհետեւ քղանցքին վերի եղրն 5 հարմէդի չափ մեծ կազմուցաւ, 3 հարմէդ սեղմօնին անջատութենէն յառաջ եկաւ և 2 հարմէդ ալ կողամասն ետ քաշելով. արդ, 2 հարմէդն իրանազգեստի կրծեղրին ու կողանջատին ընդարձակութեան բաժիններուն համար սահմանուած կ'ըլլայ. իսկ Յ հարմէդն ալ կը ծառայէ ամփոփելու։ Սակայն խիստ անկուած կերպասներն ամփոփելու արամադրութիւն չեն ունենար, այն ատեն երկու փոքր սեղմօններ կ'չինուի, որոնք են և և դիտելով որ ս սեղմօնը կրկնակողամասին դէմ գտնուի և և սեղմօնը դէպի առաջամասին դէմ։

Թիկնոցին երկայնութիւնը նոյն իսկ մինչեւ կոճղն եղած

ատեն, ագին ու քղանցքը դարձեալ միեւնոյն եղանակով կը ձեւուին:

Թիկնոցներուն ազգրին դէմ երբեմն դրանափեղի մ'ալ կը կցուի (Տե՛ս 476 օր. և 480րդ նկարը). ինչպէս չ—ու և ջ—ու գըծերով ներկայացուցինք. որուն միջին ծաւալը կ'ըլլայ 17 հարմէդ երկայնութիւն և 8 հարմէդ լայնքով, ու հագուստի եզրին նման կ'զարդարուի, երիզով կամ թափանց կարով:

Թիկնոցներուն ագեծալին մէջէն ցայտող փոքրիկ զսրդափեղի մ'ալ կրնայ դրուիլ (Տե՛ս 474րդ օր.). զայն ձեւելու համար կ'օրինակենք ագիին Յ—ը գիծը. յետոյ պահանջուած ձեւը՝ ինչպէս են Յ—ը՝ գիծն իրեւու տրամադիծ, Յ—կ և կ—ը՝ գիծը՝ ագիին վրայ ծածանող մասն ու ծ—խ գիծն ալ ագեծալին հետ հաղորդակցելու բաժինը: Այս փեղկերուն վրայ կոճակներ ալ կրնայ կարուիլ:

Իգական սեռի թիկնոցներուն քղանցքի կցորդումը ոչ միայն կոնքի հաւասարութենէն կ'ըլլայ, այլ և գօտեվայրէն, կէս կոնքի հաւասարութենէն կամ յետսակողմն ու առաջակողմը սրածայր ձեւով (ինչպէս 478 և 479րդ նկարները). մանաւանդ այս վերջինն ամէնէն շատ տեսնուածն է: Օրինակի համար առաջամատին Զ—Մ, Բ—Յ և կողամասին Ղ—Ո գծերն երեքական հաւասար մասերու բաժնելով, կրնայ առնուիլ Ո—Մ'—Յ գմբեթարդ ձեւով (Տե՛ս 476րդ օր.), կամ Ո—Մ'—Յ' գծով: Այս ձեւերը տալու համար, նախապէս իրանազգեստին տիպարները քովէ քով շարելով՝ ուղուած աստիճաններէն սրածայր իրանազգեստի կ'վերածենք, և յետոյ քղանցքին տիպարը կ'ձեւագծենք: Միայն ոս պարագան ուշադրութեան առնելու է որ, քանի քղանցքին կցորդումը կոնքի հաւասարութենէն վերօք կաղմել ուզուի: այնքան ալ ազգրին դէմի ամփոփումը կ'շատնայ, և հարկ կ'ըլլայ ո և ո սեղմոնները մեծ անջատութիւններով շինուիլ (Մանրամասնորին և Տե՛ս յաջորդ դասը):

* *

Թիկնոցին թեւերը բացառիկ ձեւեր չեն ունենար, այլ ինչ որ է օրուան թեւերու նորաձեւութիւնը, օրինակի համար, պարզ, հակեալ, կէս հակեալ, միկօ, ուսուցիլ ևն. ևն.: Այս առթիւ կը փութանք միկօ թեւի մը տարբեր ձեւն եւս ներկայացնել որ ար-

տաքին հագուստներու վրայ շատ սիրուն կ'ըլլայ՝ այն է մակաթեւին վերի կողմն ուսագերի նման շերտ մը ձեւացած ու անոր երկու քովերը երեքական ծալերով ուսուցիկներ (Տե՛ս 471րդ նկարը):

Այս թեւը ձեւելու համար. նախ սովորական ձեւով միկօ թեւի մը տիպարը կ'պատրաստնենք. միայն թէ վրանոց հագուստի կցուելուն համար ենթաթեւին Մ' կէտը մակաթեւ Ծ կէտէն Յ հարմէդ հեռու կ'գնենք ու Ֆ' կէտը Փ կէտէն Հ հարմէդ (Տե՛ս 473րդ օր.), որպէս զի ընդարձակութեան բաժին ունենայ. ինչպէս նաև Ե—Ե' գծէն Զ հարմէդ վարօք կ'քաշենք ի—խ գիծն ու Յ հարմէդ ալ առերեանի համար Ղ—Ծ գիծը: Գալով վերի կողմի նորերեւոյթ ձեւին, մակաթեւին Դ կէտէն հորիզոնական գիծ մը կ'քաշենք, որ է ա—զ, այնպէս որ Յ—Գ հարմէդ Դ կէտէն վեր ա կէտը կազմուի ու Զ—Բ գծին վերի մէկերրորդին դէմ ալ Գ կէտը. որյն ա—զ գծէն Յ հարմէդ զուգահեռական լայնութեամբ կ'քաշենք Բ—Գ հորիզոնականը, որ կ'ներկայացնէ ուսագիր ձեւանալիք շերտին լայնքն ու սահմանը: Ապա՝ ա և Բ կէտերէն ծական հարմէդ գրաօք մէյ մէկ շեղ գծեր կ'քաշենք, որոնք են Ե—Գ և Պ—Ղ, առօնք ալ կ'ծառայեն ուսագիրին կարարաժինները: Որովհետեւ մակաթեւին վերի կողմը ծալեր ձեւացնել չուզուիր, հետեւապէս Դ—Զ գիծը չափելով՝ և Յ—Գ հարմէդ առաւելով կ'գնենք Զ' անկիւնէն դէպի Զ'—Դ' գծին վրայ (Տե՛ս 473րդ օր. ուր սովորական միկօ բեւին վերի ձեւը կէտ կէտ գծով ներկայացուցած ինք) և կէտը նշանակելով, գ կէտէն գմբեթարդ գիծ մը մկանով կ'երթանք մինչեւ կ կէտ և Յ—Գ հարմէդ դէպի գուրու շաբանակելով կ'հաստատենք ը կէտը. հիմա ալ ը անկիւնը մեղմ կոր գծով մը կ'միացնենք Զ' անկեան գիմացի կարարաժիննին: Ճիշդ միեւնոյն եղանակով ալ կ'գծենք Դ—Բ և Յ—Ծ գիծը, և կերպարը կ'կտրենք (Տե՛ս 473րդ օր. սպիտակ ձեւը), վերի կողմի որյն վեսեկ տուած ձեւը կցորդելու համար, և կէտէն մինչեւ գ կէտ ձեւացած կոր գիծը երեք ծալեր կ'կազմենք Ա և Բ Զ և Յ Յ գծին և Յ գծին երկայնութեան հաւասարի: Ճիշտ միեւնոյն գործողութիւնն ալ կ'ընենք Ժ գիծը ա—զ գծին երկայնութեան հաւասարի: Յետոյ ուսագիրին ա—զ Բ—Գ գծերէն ձգուած սրածայր կարարաժինները ներս շրջելով կ'կերպարենք մէն մի կողմի ծալերուն վրայ ու թափանց կարերով կ'զարդարենք (ինչպէս 471րդ նկարը):

Պ Ա Ս Բ .

Թ Ի Կ Ն Ո Ց Ա Կ Ն Ե Ր

(Տե՛ս ԾԹ . տախտակ 477 , 478 , 479րդ նկարներն ու Կ . տախտակի 482հն միջնեւ 489րդ օրինակներն ինչպէս նաև 494 եւ 495րդ նկարներ)

Թիկնոցակը թիկնոցին կրծատեալ ձեւն է , այսինքն թիկնոցին այն տարբերութիւնն ունի որ ասոր քղանցքը կարճ կ'ըլլայ , առ հաւարակ առաջակողմն անջատ ու կցորդումը կոնքի հաւասորութենէն վերօք (Տե՛ս ԾԹ . տախտ . 477 եւ 478րդ նկարները) և կ'անուանուի վատաւատ=պասգ . յետսակոզմը բնաւ տարբերութիւն չունի՝ որովհետեւ ագի և ագեծալ կ'ունենայ (ինչպէս 479րդ նկարը) . միայն կուրծքն ընդհանրապէս միաշար կոնկնով կ'ըլլայ , երեսէն աեսնուած կամ թագուցիկ (ինչպէս 477 եւ 479րդ նկարները) : Թիկնոցակին ամէնէն երկայն ձեւը աեսնուած է մինչեւ միջնամատին ծայրը և ամէնէն կարճն ալ դաստակի հաւասարութիւն :

Ասոր ձեւելու եղանակը թիկնոցին բնաւ տարբերութիւն չունի . ուստի զանազանութիւն մ'ըլլալու համար ենթադրենք որ իրանազգեստին կուրծքի սեղմօնը մինչեւ ուսուը շարունակել կ'ուզենք և յետսակոզմը կրկին—յետսամասով ու մէկ կողամասով , բայց սովորական եղանակին քիչ մը տարբեր . օրինակի համար , յետսամատին հիմնազծերը քաշելէ ետք (Տե՛ս 485րդ օր .) . կռնամէջը , կռնածագը , թիկնածագը , թիկնաւարտն ու կողանջատը կը ձեւագծենք (առանց մոռնալու որ ներկայ պարագային 11 , 12 և 12րդ կրկին չափերուն $\frac{1}{2}$ —1ով կ'նշանակուի) : Յետոյ մէջքի լայնութեան 3 հարմէդն ու անոր դիմաց 3րդ չափին $\frac{1}{3}$ ը նշանակելէ վերջ՝ ինչպէս նախորդ դասով յիշեցինք . Մ' կէտէն Մ'—Շ գծին վրայ ալ 3 հարմէդ կ'նշանակենք . որպէս զի ագիին վերջաւորութիւնը լայն չըլլայ : Գալով Բ . յետսամատին , փոխանակ ընդհանուր եղանակին պէս ասոր ալ մէջքին ու կոնքին հաւասարութեանց լայնութիւնները Ա . ին մեծութեամբը չինելու . Ղ—Զ և Ռ—Շ գծերն երկու հաւասար մասերու կ'բաժնենք և կրկնակողամատի նման կ'ձեւացնենք Ց—Պ—Ռ և Ց—Զ—Ի գծերը (Լա՛ դիշ 485րդ օր .) : Այժմ համարենք թէ իրանազգեստը սրածայր

ձեւով շինել կ'ուզենք . կ'առնենք ուրեմն առաջամասը ե—զ—է գծով (Տե՛ս 482րդ օր .) և յետսակոզմը Հ—Ք և Փ—Բ գծերով (Տե՛ս 485րդ օրինակը) :

Եթէ ագին հակածալով կազմել ուզենք , կերպոսին ձալքը ա գիծ համարելով (Տե՛ս 487րդ օր .) , 8 հարմէդ ներսոք զուգահեռարար կ'քաշենք զ—դ գիծը , և Ա . յետսամատին Զ և Մ կէտերը կ'հաւասարեցնենք սոյն զ—դ գծին , կռնամէջին ու թիկունքին ընդարձակութեան բաժինները ձգելէ ետք . բանակը կը հաւասարեցնենք Խ—Ց գծին և կ'քաշենք Խ—Ց—Ր գիծը , և Տիկ շեղ գիծը քաշելով՝ հակածալին սահմանը կ'ձաւենք . և ագեծալի բաժինին համար ալ թ—ծ և Ժ—ի գծերը Զ . կէտէն վար 40 հարմէդ երկայնութեամբ կ'վերջացնենք : Բայց պէտք չէ մոռնալ որ հակածալին բուն տրամագիծը Ե—զ գծով ներկայացածն է (Լա՛ դիշ 487րդ օրինակը) :

Բ . Յետսամատը (Տե՛ս 484րդ օր .) , կողամասը (Տե՛ս 483րդ օր .) և Բ . առաջամասը (Տե՛ս 486րդ օր .) կ'ձեւենք իրենց պատկանած կարստագծիններով ու ընդարձակութեան բաժիններով , և սըրածայրը ըլլալուն համար , կ'հետեւինք լ—բ փ—բ , և զ—է գծերուն (ինչպէս կերեւան սոյն օրինակներուն վրայ) :

Գալով Ա . առաջամատին , գիցուք թէ այս ալ վտաւատին հետ միակտոր ձեւել կ'ուզենք . ու եթէ թիկնոցակը միաշար կոնկնով պիտի ըլլայ , կերպամատին եղբէն՝ այն է ա—բ գծէն 5 հարմէդ ներսոք զ—դ քիծը քաշելէ ետք (Տե՛ս 482րդ օր .) , Ա . առաջամատի տիպուրին Զ և Ց . կէտերը մէյլէկ հարմէդ սոյն գծէն ներսոք հաւասարեցնելով՝ նախորդ դասի հրահանգին համեմատ ասոր կ'կցենք Բ . առաջամատը (Տե՛ս 482րդ օր . ուր այս վերջինք ձևեր կէտ ձգելով ներկայացնեած ենի) , կողամասը՝ որ Ժ և Զ կէտերը միշտ 12 և 12րդ կրկին չափերուն տարբերութեան $\frac{1}{3}$ ը անջատ կ'գլուխ , ինչպէս նաև Բ . յետսամատին Պ—Ռ գիծը 2 հարմէդ գուգացեսար Զ—ի գծէն հետու : Ժ—ի—լ գիծն արդէն ծանօթէ է որ Ղ—Յ—Ռ—լ գծով կ'ձաւուի ագեծալէն տրամագիծին ու թ—իս և խ—ծ գծով ալ ծալքին բաժինը . և ապա՝ քանի որ իրանազգեստը կռնքի հաւասարութենէն մէկ երլորդ աստիճան վերօք սրածայր կազմած էինք , հիմա ալ վտաւատին վերի ձեւը պէտք է առնել թ—ը—հ—զ գմբեթարդ գծով , որ կ'հանգի

Զ-Հ-Ղ-գ գծին : Եթէ առաջակողմին վարը կիսաբոլորակ ուզուի կառնենք հ-ձ-ղ-մ, իսկ եթէ չեղ անկիւն բացութիւնով ուզուի, կ'հետեւինք լ-ն գծին (լաւ դիտէ 482րդ օր . մանրամանութիւնը) : Արդ, այս գլխաւոր գիտելիքներէն վերջ, այլևս գիւրին է զայն օրուան նորաձեւութեան համեմատ կազմել :

* *

Թիկնոցին քղանցքը կամ թիկնոցակին վտաւատն եթէ քիչ մը զլօց շինել ուզուի, այն ատեն իրանազգեստի տիպարներուն գօտեվայրէն մինչև կոնքի հաւասարութիւնները կ'շարենք քովէ քով (Տե՛ս 488րդ օր.) . այնպէս որ սեղմօնին չըջագծերն իրարուգան, նոյնպէս ալ կողամասներուն Պ եւ Ռ գծերը . իսկ ազդրերուն ՄՇ անկիւններէն մինչև կէսն իրարու կից գտնուին ուժ և Զ անկիւններուն (այն է սնակուշտներն) իրարմէ անչատ մնացած միջոցը կտրելու ժամանակ ամփոփելու է (լաւ դիտէ 488րդ օր.) : Ղ կէտին դիմաց Զ հարմէդով զ կէտը կ'նշանակենք ու քանակը զայն զ և Ռ կէտերուն հաւասարեցնելով կ'քաշենք զ-Ռ-դ գիծը : Եթէ կէս կոնքի բարձրութենէն առնել ուզուի, կ'հետեւինք Է-զ գծին ու ագեծալի բաժինին համար ալ Է-ը և ը-թ գծերուն : Առաջակողմի տրամագիծը ճշտելու համար, քանակը կը հաւասարեցնենք Զ և Ց կէտերէն մէյմէկ հարմէդ գրսօք ու ա-բ գիծը քաշելէ ետք. Բ-Ց գծին կոր ձեւը կ'շարունակենք մինչև բ կէտ. և այն գծէն դուրս կամ ներս կ'ձեւացնենք վարի խոտորումները :

Եթէ քղանցքը մինչև յետսակողմ շարունակել ուզուի, ագիւն լայնութիւնն ալ միատեղ առնելու է, որ է ծ-ի գիծը (Տե՛ս 488րդ օրինակին սա—օ—օ—օ— զիծը) :



* *

Նորաձեւութիւն մ'ալ եղաւ վտաւատը բոլորշի շինուելը, որպէս զի չափազանց զլօց ըլլայ (Տե՛ս 494 եւ 495րդ նկարները) :

Այս ձեւով վտաւատներն ընդհանրապէս գօտեվայրէն կ'սկսի և երկայնութիւնն ալ մինչեւ դաստակի հաւասարութիւն կ'ըլլայ : Հետեւապէս վերի կողմը կարձ իրանազգեստի տիպարով կ'պատրաստուի, առ առաւելն առաջակողմը փոքր ծայր մը կազմելով (ինչպէս 494րդ նկարը) :

Բոլորշի վտաւատ ձեւելու համար, տիպարցու թղթին վրայ

ԹԻԿՍՈՅ



ուղիղ գիծ մը քաշելով՝ կ'անուանենք Ա—Բ, և մէջտեղը Գ կէտ (Տե՛ս 489րդ օր.): Գօտոյ չափին $\frac{1}{3}$ ը, որ կ'ընէ Զ հարմէդ Յ հազմէթ, կ'նշանակենք Գ կէտին երկու կողմերը, որոնցմավ կ'կազմուի Դ և Ե կէտերը, համարենք թէ Զրդ կրկին չափն եկած է 20 հարմէդ. այս ալ կ'նշանակենք Դ՝ կէտէն Դ—Ա գծին վրայ՝ ուր կ'հաստատուի Ա. կէտը, նոյնպէս ալ Ե կէտէն Ե—Բ գծին վրայ՝ Յետոյ կարկինին մէկ ծայրը կ'զետեղենք Գ կէտին վրայ և միւս ծայրը մինչեւ Դ կէտ բանալով՝ բոլորչի մը կ'քաշենք որ կ'ներկայացնէ գոտեվայրի ծիրը, այն է 56 հարմէդի հաւասար. հիմա ալ կարկինը կ'բանանք մինչեւ Ա. կէտ ու կ'քաշենք Ա—Բ բոլորչին, որ այս ալ վտաւատին ծածանող եղրը կ'ներկայացնէ: Առաջակողմը վայելուչ կենալու համար, Բ կէտին երկու կողմը 8ական հարմէդով Զ և Զ՝ կէտերը կ'նշանակենք ու Ե կէտէն մէյմէկ լար կ'քաշենք՝ որոնք մէն մի կողմի շուրթերը կ'ներկայացնեն. Է և Է գծերով ալ առերանի բաժինները կ'սահմանենք:

Եթէ իրանազդեստին առաջակողմը սրածայր ձեւացած է, ճիշտ նոյնչափ Ե կէտը վար կ'իջնենք ու կ'նշանակենք Ը—Ը՝ կէտերը, և մէջի գիծը կը ներկայացնենք Ը—Թ—Դ: Այժմ սոյն տիպարը կ'փոխադրենք կերպասին վրայ, գիտելով որ Ա—Բ գծին դիրքը կերպասին առէջի թերերուն ուղղութեամբը գտնուի. և մէջի ու գուրախ կարաբաժինները ձգելով՝ կերպասը կ'կտրենք:

ՊԱՍ Պ.

Ա Մ Ա Զ Ո Ն Ա Զ Գ Ե Ս

(Տե՛ս Կ. սահման 488, 490, 491, 492, 493րդ օրինակներն ու 496 և 497րդ նկարները)

Եւրոպացի տիկիններ ու օրիորդներ ձի հեծնելու համար մասնաւոր ապարագ մ'ունին, որ հին ժամանակներէ ի վեր անոնց բարքերուն մէջ մեծ տեղ մը բռնած է ու կ'կոչուի Ամազոն կամ ամազոնազգեստ. որովհետեւ Ամազոն կ'կոչուին Սկիւթացի այն կիները՝ որոնք մանկութեան հասակէն աջ ստիճնին կ'խարէին որպէս զի չափահասութեան ժամանակ կարենային այրերու նման

հագուելով ձիամարտիկներու մասնակցիլ ու դիւրութեամբ նիզակ վարել. ինչպէս ըսուած է «Ամազոնք միասոնիք», և անցած է յատուկ անուններուն կարգը:

Այս տարազը ներկային մէջ կ'բազկանայ կողչուն իրանազգեստէ մը՝ որ ընդհանրապէս թիկնոցակի նման վտաւատ մը կ'ունենայ, որուն առաջակողմը կարճ ու յետուակողմը երկայն կ'ըլլայ (Տե՛ս 496 եւ 497րդ նկարները). ինչպէս մեր տեղացիք ալ այս ձեւը կ'անուանեն Արլը պիշխմի: Եթէ իրանազգեստը կրծօձիքով ըլլայ ու լանջքին վրայ բաց մնայ, ներքեւէն բաճկոն մ'ալ կը հագնուի: Յետոյ մասնաւոր ձեւով քղանցք մը և ասոր տակէն ալ այրերու տարատին նման տարատ մը կ'կրեն (ի՞նչպէս 497րդ նկարին վարի կողմը կ'նշմարուի):

Մոյն առնաձեւ տարազը զուտ դերձակակերպ պահանջուելուն համար, ընդհանրապէս այր դերձակները կ'շինեն զայն րսել կ'ուղենք թէ Ամազոնին տարազը թէպէտե ըստ երեւոյթին շատ պարզ է, բայց խանմեալ աշխատութիւն կ'պահանջէ:

Արդ, ամազոնազգեստը կ'պատրաստուի ճիշտ թիկնոցակին նման, միայն իրանազգեստը շատ կարճ կ'առնուի, ու որածայր այն է մ—լ—ն—ս, ո—չ և պ—զ գծերէն (Տե՛ս ԾՓ տախ. 468, 469 եւ 470րդ օր.). և ընդհանրապէս ալ միտչար կոճկէնով կ'ըլլոյ ու փոքր կրծօձիքով (ի՞նչպէս ԾՓ. տախ. 477րդ նկարը). կամ ձիգօօձիքով (ի՞նչպէս 496րդ նկարը): Երբեմն ալ կէս կոնքի հաւասարութեամբը՝ բլորչի ձեւով կ'առնուի իրանազգեստը:

Մասնաւորութիւնը վտաւատին վրայ է, որ ինչպէս քիչ մը վերը յիշեցինք, առաջակողմը կարճ ու յետուակողմը տառուն մը կ'ձեւանայ (Տե՛ս 488րդ օրինակին մուը սուերով ձեւը): Ու եթէ իրանազգեստը կէս կոնքի հաւասարութեամբն առնուած է, այն ատեն վտաւատն ալ կ'առնուի զ—խ—է, զ—թ, թ—ր, ը—դ և է—դ գծերովը:

Մոյն թիկնոցակին մօտաւոր ձեւերն երբեմն քաղքենիի սովորական արգուզարդի կարգ անցած է, որ կ'ըսուի ՖՕՌՄ ՏԱՄԱԶՈՒ. և մերոնք ալ այս մասնաւոր ձեւէն հետեւցուցած են ԻՐԱՆԱԶԳԵՍՏՆ ընդհանուր առումով ամազոն անուանելու, և գուհիկ ըսուածքով ալ արլը պիշխմի:

Այս տարազին բաճկոնը կ'պատրաստուի ճիշտ նախորդ գլխու

իժ. դասի հրահանգին նման, բաւական է որ օրուան նորաձեւութիւնը նկատողութեան առնելով, օձիքին բացութիւնը և միաշար ու կրկնաշար կոճկէնով ըլլալու պարագաները ճշտուին (ի՞նչպէս են նմ. տախտակ 345 եւ 346րդ պատկերները):

Ներքեւէն հագնուելիք տարատը թէպէտ և սոյն տարազին գլխաւոր մասը կ'կազմէ, բայց անիկա ուրոյն հագուստ մ'ըլլալուն համար, այս տեղ ներկայացնելը զանձ կ'առնենք (մանաւ անդ տեղին անձկու թեան պատճառով, ուսի զայն դասաւորեցինք Գ. հատուին մէջ անդրավալտիքներուն կարգը):

Գոլովի քղանցքին իրաւ է թէ արտաքին երեւոյթով ընթացիկ զառքաշ քղանցքի մ'երեւոյթն ունի ան (ի՞նչպէս են 496 եւ 497րդ նկարները). որ ընդամենը կ'բազկանայ երկու գլխաւոր մասերէ, որոնք են առաջակողմ և յետուակողմ, բայց հիմնապէս բոլորովին տարրեր կերպով կ'պատրաստուի, և ամէն դերձակի ու կարողի գործ չէ Ամազոնազգեստի մը քղանցքը ձեւելը. որովհետեւ այս քղանցքին առաջակողմը, յետուակողմը և աջ ու ձախ կողմերը տարրեր երկայնութիւններ ու մասնաւոր ձեւեր ունին, ինչպէս նաև զօտեվայրն առանց փոթթուելու՝ կազուն վտաւատի մը պէս կոնքին բնական ձեւը ցուցադրելու է, ձին հեծնելու ժամանակ զառքաշ ըլլալու է և շրջագայութեան ատեն ալ ընդհատակով, որ առաջակողմը մեղմ առիգած մը կ'ձեւանայ (Տե՛ս 496րդ նկարը): Ահա սոյն պայմաններով Ամազոն քղանցքի մը ընդունուած ձեւեր կան բայց մենք կ'ներկայացնենք ամէնէն բարեձեւն ու դժուարագոյնը, որ պատիւ կը բերէ զայն ձեւել գիտցողին:

Մոյն քղանցքին համար երեք չափ միայն կ'առնուի, որոնք են 12, 12 կրկին և քղանցքին Ա. չափը:

Արդ, ձեւագծելու համար, կերպատին ծալքը Ա—ի և վերի կողմը ձեւոցով ուղղանկիւն մը կազմելով կ'անուանենք Ա—Դ գիծ (Տե՛ս 490րդ օր.), ու միեւնոյն գծերուն վրայ կ'շարունակենք քըղանցքին թէ՝ առաջակողմը և թէ՝ յետուակողմը, պարզապէս Ա—Է գիծը այս երկու մասերուն ալ մէջ աեղի արամագծերը համարելով, 12րդ չափը որ 28 հարմէտ է, կ'հանենք զայն 12րդ կրկին չափէն որ է 50—28=22 և սոյն տարրերութեան $\frac{1}{8}$ ը կ'նշանակնք Ա. կէտէն դէպի կերպասի ծալքին վրայ իջնելով Բ կէտին

համար, որ կ'ընէ 2 հր. և 2 $\frac{1}{2}$ հր. և կ'ներկայացնէ առաջակողման գոտեվայրի հաւասարութիւնը՝ Բ կէտէն վար կ'նշանակենք Ա. չափը, որ է 102 և 4'ունենանք Գ. կէտը. և սոյն չափին $\frac{1}{4}$ ով ալ կ'նշանակենք զառքաշին երկայնութիւնը՝ որ է Գ' կէտ։ Բ կէտէն չեղակի Ա—Դ գծին վրայ երթալով՝ կ'նշանակենք 12րդ չափին $\frac{1}{2}+2$, որ կ'ընէ 16 հարմէդ, ու Դ կէտը՝ հասուաելէ ետք, Բ կէտը մեղմ գողաւոր գծով մը կ'միացնենք Դ կէտին. յետոյ Բ կէտէն 1 հարմէդի չափ ներսօք և կէտը նշանակելով՝ Դ' կէտէն 2 հարմէդ վարօք կ'որոշենք Զ կէտը որ է յետուակողմի ստորոտին կեդրունը և միշտ Գ' կէտէն 5 հարմէդ վար ալ կ'նշանակենք Է կէտն ու կ'քաշենք Է—Ը—Թ ուղղահայեացը, որուն վրայ Է կէտը կ'ձշտենք 12րդ կրկին չափամիշ ու Թ կէտն անոր կէտովը, որ կ'ընէ 25 հարմէդ և քղանցքի ստորոտին մէկ չորբորդ լոյնութիւնը կ'ըլլայ 75 հարմէդ, Թ կէտէն Թ—Հ հորիզոնականին վրայ ելլերով՝ 3 հարմէդ բարձրութեամբ Ժ կէտը կ'նշանակենք, ու Գ', Ը և Ժ կէտերը վէտկոր գծով մ'իրարու կ'միացնենք։

Դարձեալ Ա. կէտէն կերպասի ծալքին վրայ իջնելով՝ 12 և 12րդ կրկին չափերուն տարբերութեան $\frac{1}{3}$ ով կ'նշանակենք Ի կէտըն ու կ'քաշենք Ի—Լ ուղղահայեացը, Հիմա ալ Ա. կէտէն 12րդ կրկին չափին $\frac{1}{4}$ ով կ'նշանակենք Խ կէտն և սոյն կէտէն չեղակի Ի—Լ գծին վրայ 12րդ կրկին չափին $\frac{1}{2}+2$ ով կ'հասուատենք Լ կէտը, որով կ'կազմուի կոնքի մեծութիւնը։ Միշտ Ա. կէտէն Ս—Ե գծին վրայ իջնելով Ա. չափին $\frac{1}{5}$ ով՝ որ կ'ընէ 10 հարմէդ, կը նշանակենք Ծ կէտն ու կ'քաշենք Ծ—Կ ուղղահայեացը Ծ կէտէն Ծ—Կ գծին վրայ 12րդ կրկին չափին $\frac{1}{2}+\frac{1}{6}$ ով կ'ձշտենք Կ կէտը։ Յետոյ Թ կէտէն Թ—Հ հորիզոնականին վրայ բարձրանալով կը նշանակենք Ա. չափին $\frac{1}{5}$, որով կ'ձշտուի Հ կէտը. ոյժմ քանակը կ'հաւասարեցնենք Կ և Ժ կէտերուն ու կ'քաշենք աջ կողմանակի գիծը և ապա կ'քաշենք Կ—Հ ճախ կողմը և Գ' կէտը գորդաւոր գծով մը կ'միացնենք Հ կէտին։ Զ կէտը որ յետուակողմի մէջ տեղը կ'ներկայացնէ (*), անկէ կոր գիծ մը կ'ատանինք գէպի Հ կէտ և ուրիշ մ'ալ գէպի Ը, որոնք քիչ մը հեռուն իրար կը

(*) Կ'ցաւինք որ 491րդ օրինակի յետուակողմին վարի կողմոնը Զ կէտ նըշանակելու տեղ՝ վրիպմամբ է նշանակած ենք, ուստի կ'խնդրենք որ ճշտուի զայն, որպէս զի բացատրութիւնը հակասական չըլլայ։

խաչաձեւեն մէն մը կողմի առաջակողմն ու յետուակողմը ներկայացնելով (ի՞նչպէս կ'երեւայ 491րդ օր. վրայ Հ—Զ—Ժ' Ժ—Հ գծերով)։ Յետոյ Դ, և Կ կէտերը գմբեթարդ գծով մ'իրարու կ'միացնենք որ կ'ներկայացնէ մէն մը կողմի ազդրին ձեւը։

Զ կէտը որ յետուակողման գոտեվայրը կ'ներկայացնէ, պէտք է կէտ ըլլայ 12 և 12րդ կրկին չափերուն տարբերութեան $\frac{1}{4}$ ը Ա. կէտէն վարօք, և 1 $\frac{1}{2}$ հարմէդի չափ ալ ներսօք սեղմօն մը ձեւատէն 1 հարմէդի չափին մինչեւ Ծ կէտ կ'վերջացնենք. ապա՝ Դ կէտէն 2 հարմէդի վարօք Ղ կէտը նշանակելով՝ Զ կէտէն մեղմ գողաւոր գիծ մը կ'տանինք մինչեւ Ղ կէտ, որ յետուակողմին գոտեվայրը կը կաղմէ։ Այժմ սոյն Զ—Ղ գիծը կէտ կ'ընենք և մէջ տեղը կ'նշանակենք Ճ կէտը՝ նոյն պէս ալ Ծ—Կ գծին վրայ Ռ կէտը սոյն և Ռ կէտերը լորով մ'իրարու կ'միացնենք ու կէտ ընելով կ'ունենանք Վ կէտը, Ճ կէտին իւրաքանչչիւր կողմը 1 $\frac{1}{2}$ ական հարմէդի մէդ անջատութիւնով սեղմօն մը կ'ձեւագծենք որ կ'յանդի մինչեւ Վ կէտ։ այնպէս որ՝ յետուակողմի գոտեվայրին դէմ երեք սեղմօն ձեւացած կ'ըլլայ (ի՞նչպէս կ'երեւայ 491րդ օր. վրայ) որոնք են Ղ, Ճ, Վ, Զ, Չ, Ճ, Վ տառերով։

Հիմու կարգն եկաւ բուն էական կէտին։ Արդ, ինչպէս յայտնի է ներոպացի կիներուն ձի հեծնելը մասնաւոր կերպ մ'ունի, որ է քրիստի նստիլ և երկու տաքերնին մէկանց ձիուն ձախ կողմէն գէպի վար կախել. այնպէս որ աջ ծունդերնին ցցուած դիրք մը կ'առնէ, և միեւնոյն ատեն ալ քղանցքին ստորոտը հաւասար տեսք մը կ'ունենայ. հիանեւապէս տառաջակողմի աջ եղրէն ծունդի բաժին ձեւացնելու է։ Ուստի նախ Ա—Գ գիծը կէտ ընելով մէջտեղը Մ կէտը նշանակելով կ'քաշենք Մ ուղղահայեացը որով Կ—Ն գծին կտրած տեղը կ'կազմուի Յ կէտը. ձեւոցը հաւասարեցնելով Յ—Ն գծին կտրած տեղը կ'կազմուի Յ կէտը. Ճ կէտը հաւասարեցնելով Յ—Կ գծին կ'քաշենք Յ—Կ ուղղահայեացը և 10 հարմէդով կ'ձշտենք Ն կէտը. Յ կէտէն Յ—Կ գծին վրայ կ'նշանակենք Ա. չափին $\frac{1}{5}$, որով կ'կազմուի Շ կէտը. և Շ—Ո փոքր ուղղահայեացը քաշելով, Շ կէտին դիմաց Յ հարմէդ հեռաւորութեամբ կ'ձշտենք Ո կէտը։ Ճիշտ միեւնոյն կերպով ալ կ'նշանակենք Զ կէտն ու անոր գիմաց Պ և Զ կէտերը։ Յետոյ Կ կէտէն մեղմ կոր գիծ մը սկսելով մինչեւ Ո կէտ կ'տանինք և վէտկոր ձեւով մը կ'բարձրացնենք Ն կէտ ու հակադարձ ձեւով կ'ձգենք

Զ—Ժ գծին վրայ (Գծերուն իրար խաչաձեւող մանրամասնութիւնը
Տե՛ս 490րդ օրինակին վրայ)։

Մէն մի կողի կերպասը ձեւելու համար, բոլոր շրջագծերն ալ
կ'օրինակենք նաեւ ուրիշ կերպասի մը վրայ և իւրաքանչիւրն իր
պատկանած կողմին կարաբաժիններ ձգելով կ'կտրենք, ու եթէ
երկու մասերը բանալով աջ կողմն իրարու կցենք, ստորոտը ալե-
ծածան ձեւ մը առած կ'ըլլայ (Լա՛ դիտէ 491րդ օրինակին Երշա-
զրձերը)։ Երբ բազդատենք գետնի հաւասարութիւնը ներկայա-
ցընող Ք—Գ—Տ՛Տ—Ք գծին հետ (Տե՛ս սա օ—օ—օ գծով)։

Կարելն ալ բաւական խնդիր մ'է, որովհետեւ առաջակողմի
ազդը բրուն գծերը կամաւ 2 հարմէդի չափ երկայն ձեւացուցած
ենք որ ամփոփելով կարուին (ի՞նչպէս 493րդ օր) ու քաղըթին
վրայ չկծկուին. նոյնպէս ալ աջ կողմէն ձեւացած ծունդի բաժինը
արդուկով լաւ մը ամփոփելէ ետք կցորդելու է յետսակողմին
(Լա՛ դիտէ այս ամենը 491րդ օրինակին վրայ)։

Փեռելը ձախ կողմէն կ'ըլլայ, որ է Փ կէտ, (այսինքն 4 կէ-
տին հաւասար) և ներքեւը կոճակիեղի մը կ'կցուի, որուն վրայ
գրպան մ'ալ կ'շինուի (Տե՛ս 492րդ օր) ու կը կցուի ձախ յետսա-
մասին։ Սոյն փեղկը ձեւելու համար նախ Դ—Փ գիծը սեղմելի-
ղով ամփոփել ու լաւ մ'արդուկելէ ետք, օրինակելու է կէս առա-
ջակողմէն (Տե՛ս 493րդ օր)։ Որ է Դ—Փ—Ֆ, Դ—Օ և Ե—Ֆ գծերը։
0 ծայրը 1½ հարմէդի չափ և կէտէն վերօք կազմելու է որ յետոյ
3 հարմէդ լայնութեամբ ձեւացած գօտիի կէսին վրայ կոճկուի։

Որպէս զի ձին վազած ատեն սոյն քղանցքին ստորոտը վեր
շծածանի. մէջի շրթունքէն մասնաւոր ձեւով պատրաստուած կա-
պարներ կ'կարուի. իսկ շրջագայութեան ժամանակ ալ շրջագա-
տին զառքաշը նեղութիւն չպատճառելու համար. յետսակողմն
ու աջ կողմը լամբակով ու կոճակով կ'կոճկուին, որոնք են Զ և Բ
և Ց և Ւ (Տե՛ս 490րդ օրինակին վրայ)։

Պ Ա Ս Պ.

Պ Ա Ր Կ Ա Զ Ե Ւ Ա Ր Տ Ա Զ Գ Ե Ս Ն Ե Ր

(Տե՛ս ԿԱ. Տախ. 498, 500, 501, 507. և 508րդ օր. ու նկարները)

Քիչ մի բառագիտուրին. — Ինչպէս յայտնի է Փրանսերէն
սագ բառը պարկ ըսել է և այն հագուստը որ իրանին ձեւը չցու-
ցագրեր, այսինքն պարկի մը պէս ուսուերէն վար կ'կախութի՝ ֆում-
սազ=ՊԱՐԿԱԶԵՒԻ կ'անուանուի. և եթէ հագուստն ամառն եղա-
նակի համար բարակ կերպասէ իրեմւ վրանոց շինուած է. կ'ան-
ուանութի բառ սրուի-սազ=ՊԱՐԿԱԶԵՍ. ու եթէ հաստ
կերպասէ իրեմւ ձմրան վերարկու շինուած է, կ'անուանութի բայի-
թօ-սազ=ՊԱՐԿԱԶԵՍԻ ԿՐՎԱԾՅ, իսկ կարճ. այսինքն մինչեւ կոնքի
կամ դաստակի հաւասարութիւն եղած ատեն ալ վեսր կամ վես-
րօն-սազ=ՊԱՐԿԱԶԵՍԻ ԹԻԿԱԶԳԵՍԻՏ, եւ թէ բուն պարկածեւ հա-
գուստին կանալէջն ասանց կարի կ'ըլլայ, այնպէս որ ամբողջու-
թիւնը կ'բազկանայ մէկ յետսամսէ ու երկու առաջամասներէ։
Արդ, հագուստի մանունը ձիշտ ըսուած ատեն, ա'լ դիւրին է
գիտնալ անոր ոճն ու ձեւելու եղանակը մեր տուած հրահանգ-
ներուն համերմատ։

Ինչպէս Ե Գլխու Փ գասին նախագիտելիքներովն ըսած ենք,
արտազգեստն ու կրկնոցը տարբեր ձեւեր չեն ունենար, այլ գըլ-
խաւորաբար իրալմէ կ'զանազանուին կերպասին հաստ ու բարակ
ըլլալէն՝ մին ձմրան ու միւսը ամրան եղանակին համար, բացի
այն պարտգայէն, ուր ընդհանրապէս ձմրանները կրկնաշար
կոճկէնով, մեծ օձիքներով, ու շատ երկայն կ'ըլլան մինչդեռ
ամռանները փոքր օձիքներով, կէս երկայնութեամբ՝ այսինքն
մինչեւ դնաղուցը. և միաշար ու թագուցիկ կոճկէնով։

* * *

Արդ, համարենք թէ կռնալէջն առանց կարի, կրկնաշար կոճ-
կէնով ու կէս երկայնութեամբ՝ այն է մինչեւ ծունգին վերի եղբն
իջնող արտազգեստ կամ կրկնոց մը ձեւել կ'ուղենք (ի՞նչպէս 507
և 508րդ նկարները)։ Այս հագուստը կը ձեւուի պարզ=իրանազ-
գեստին ախարներովն ու նախ կը ձեւագծուի յետսամասը. յետ-
սապէս կերպասին ծալքն ա—բ գիծ համարելով (Տե՛ս 500րդ օր),
յետսամասի տիպարը կ'առնենք ու ½ հարմէթ լ կէտը և 1½ հար-
մէթ ալ Մ' կէտը կ'հաւասարեցունենք կերպասին ծալքէն ներս,

որ է կռնամէջի ընդարձակութեան բաժինը (Հաստ կերպասներու համար Յ—Կական հարմէդ աւելի դնել պէտք է). տիպարին ստացած դիրքին մէջ կռնածագը, թիկնածագն ու թիկնաւարտն օրինակելէ ետք, Ե—Լ գծին ճգուելիք ընդարձակութեան բաժինին համար ալ 1 հարմէդի շափ տիպարը կ'քաշենք դէպի վար, Այժմ կառնենք կողամասին տիպարն ու ասոր կողածագը կ'կցինք լ' կէտին և Ո կէտը 1^{1/2} հարմէդ Յ կէտէն անջատ (այս մանրամասնութիւնը Տե՛ս 501րդ օր. վրայ): Տիպարներուն ստացած սոյն դիրքին մէջ (Տե՛ս 500րդ օր. ուր տիպարները ներկայացուցած ենք կէտին զարմէդով), քանակը կ'հաւասարեցնենք Հ կէտէն 1^{1/2} հարմէդ հեռու (Տե՛ս այս վերջինը 504րդ օր.), կ'քաշենք Հ—Դ գիծը որ կ'ներկայացնէ տարկամեւ հագուստին կողանջատը. այս դիրքով կ'շարունակուի նոյն խակ մինչեւ կոճղն իջնող երկայնութեան համար: Այժմ Զ կէտէն դէպի ա—Բ գծին վրայ կ'նշանակենք Զրդ կրկին չափը որ է 42 հարմէդ, ուր կ'հնչուի բ կէտը (այս գործողութիւնը Տե՛ս 501րդ օրինակին վրայ), Եթէ կարձ կրկնոց կամ արտազգեստ շինել կ'ուզուի, որ է մինչեւ դաստակի հաւասարութիւն, թերեւս Զրդ չափն ըլլայ 22 հարմէդ (Տե՛ս 500րդ օր.). դարձեալ գործողութիւնը նոյնն է: Արդ, Մ' կէտէն մինչեւ բ կէտ կազմուած երկայնութիւնը կ'չափենք ու տեսնուած մեծութիւնը կ'փոխադրենք Շ անկիւնէն Հ—Դ գծին վրայ (Տե՛ս այս գործողութիւնը 501րդ օր. վրայ, ուր չափել եւ զնել բառերով ցուցուցած ենք): Ապա, բ և դ կէտերը մեջմ կոր գծով մը իրարու կ'միացնենք ու Զ հարմէդ վարօք ալ շուրջքի բաժին (Տե՛ս 501րդ օր.). յետոյ կռնածագէն (որ է ա—Գ), թիկնածագէն, թիկնաւարտէն ու կողածագէն և Հ—Դ գծէն կարարածիններ ձգելով՝ կերպասը կ'կտրենք (Տե՛ս 500րդ օրինակը):

Առաջամասը ձեւելու համար, կերպասին եզրը կ'համարենք ա—Բ գիծ (Տե՛ս 498րդ օր.), ու Եթէ հագուստը միաշար կոճկենով կ'ուզուի՝ ա—Բ գծէն 5 հարմէդ զուգահեռաբար դէպի ներսօք կ'քաշենք գ—Դ գիծը, որ է վերելեակի բաժին. խակ Եթէ կրկնաշար կոճկենով է, այն ատեն ալ կրծափեղկին լայնութեան համար 10 հարմէդ ներսօք կ'քաշենք Ե—Գ գիծը՝ որով կ'ունենանք կրծեղրին տրամագիծը (Տե՛ս այս գիտելիքները 498:րդ օր. վրայ, ուր բառերով ցուցուցած ենք): Առաջամասին տիպարն առնելով Զ և Յ կէտերը մէյմէկ հարմէդ ներսօք կ'հաւասարեցնենք տրամա-

գծին դիմաց՝ որ է կրծեղրի ընդարձակութեան բաժինը (Հաստ հաստ կերպասներու համար 1^{1/2}—Զ հարմէդ). փողեղրը, ուսուծագն ու երբուծն օրինակելէ ետք, Ե—Լ գծին հաւասարութեանէն ձգուելիք ընդարձակութեան բաժինին համար տիպարը Ա հարմէթի չափ զուգահեռաբար կ'քաշենք դէպի վար, այս վերջնական դիրքին մէջ կողանջատին ընդարձակութեան բաժինը կ'ունամաննենք՝ զ կէտէն 1 հարմէդ և Մ կէտէն 1^{1/2} հարմէդ դուրս ու քանակը սոյն կէտէրուն հաւասարեցնելով՝ կ'քաշենք Է—Ր գիծը, որ կ'ներկայացնէ պարկածեւ հագուստին կողանջատին ձեւը: Երկայնութիւնն ալ ճշտելու համար, յետսակողմի Մ'—Բ գծին կազմած երկայնութիւնը հիմա ալ կ'դնենք տուաջամասին Մ կէտէն Է—Ր գծին վրայ՝ ուր կ'հաստատուի բ կէտը. միեւնոյն թիւը կ'դնենք նաև Յ կէտէն Ե—Գ տրամագիծն վրայ ու հասած տեղը կ'ունենանք զ կէտը. յետոյ ը և զ կէտերը գոգաւոր մեղմ կոր գծով մը իրարու կ'միացնենք ու անկից ալ ուղղահայեաց գիրքով կ'տանինք մինչեւ բ կէտ: Կ'միայ փողեղրին, ուսածագին, երբուծին ու անութին և կողանջատին (որ է Է—Ր գիծ) կարարածիններն ու ստորոտին Զ հարմէդ շուրջքի բաժինները ձգել և կերպասը կտրել (լաւ դիտ 498րդ օրինակին վրայ առաջամասի տիպարին դիրքը, որ կէտ կէտ զարմէդու ներկայացուցած ենք, եւ ի'նչպէս վերածուած է պարկածեւ արտազգեսի):

Պարկածեւ թիւնազգեստն ալ միեւնոյն կերպով կ'ձեւուի, ուրուն ամէնէն կարձ ձեւը կ'ըլլայ կոնքի հաւասարութեամբ կամ Զ հարմէդ աւելի, միայն գիտնալ պէտք է թէ կողամասին Շ—Ո հետեւելով զուգահեռաբար երթալու է մինչեւ կերպասին ձալքը՝ փոխանակ յետսամասի Մ'—Յ գծին հետեւելու, որ բնապէս նախորդէն կարձ կ'միայ. խակ առաջամասը պարզապէս Մ—Յ գծէն վերջացած կ'ըլլայ (օձիքներուն նկատմամբ Տե՛ս յաջորդ հրահանգը):

Պ Ա Ս Յ .

Կ Ր Կ Ն Ա Կ Ա Ր Ա Ր Տ Ա Զ Գ Ե Ս Ս

(Տե՛ս դարձեալ 498 և 501րդ օրինակներն ու 511րդ նկարը)

Կրկնակար արտազգեստը պարկածեւին կոկուածն է, որովհետեւ ասոր կոնամէջը կարով կ'ըլլայ՝ կողանջատին կարը քիչ մը դէպի յետուակովմ հակած ու մեզմ կորութիւնով կտրուած, այնպէս որ զայն կրողին քսմակին ձեւը թեթեւ կերպով մը կ'ցուցադրուի (Տե՛ս 511րդ նկարը): Այս ձեւը ֆրանսերէն կ'կոչեն դուին, այն է Անգլիերէն տառը=երկորեակ բառովը՝ որ նմանողաբար ըսած են կոնամէջը կարով ըլլալուն ու երկու յետուամաները կողանջատներուն կողմէն որոշ տեսնուելուն համար. ուստի մենք ալ անուանեցինք կրկնակար:

Կրկնակար արտազգեստն երկար ժամանակներէ ի վեր ծանօթ և երկու ուսուէ ամէն տարիքի համար ալ տեւական ձեւ մ'եղած է:

Արդ, յետուամասը ձեւելու համար, կերպասին եղրը ա—բ և գագաթն ա—գ գծեր համարելով (Տե՛ս 501րդ օր.), յետուամասի տիպարին լ կէտը 1¹/₂ և Մ' կէտը 2¹/₂ ական հարմէդ ա—բ գծէն հետու կ'գնենք, ուշադիր ըլլալով որ ժ կէտն ալ ա—գ գծէն մէկ կարաբաժին վարօք գտնուի: Յետու լ—ե, լ—ժ, ժ—ի և ի—լ գծերն օրինակելէ ետք, ե—լ գծէն ձգուելիք լնդարձակութեան բաժինը դէպի վար կ'քաշենք ու կ'օրինակենք նաեւ ե—Զ—Մ' գիծը (Տե՛ս 501րդ օր. ուր կետ կետ գծով ներկայացուցինք). այս գծէն 1¹/₂ հարմէդ զուգահեռաբար կ'գծենք կոնամէջի լնդարձակութեան բաժինը, և ապա 1 հարմէդ ալ կարաբաժին. այնպէս որ լ կէտը կ'հաւասարի կերպասին եղրին ու Մ' կէտը 1 հարմէդ անջատ, զոր երանի կորութեան գիրքովը կ'շարունակինք դէպի վար ու տակաւ առ տակաւ կ'միացնենք կերպասի եղրին (լաւ դիտէ այս գծերուն ներբութիւնը 501րդ օր. վրայ): Եսխորդ դասի հրահանգին համեմատ կողամասը կ'գնենք ու կ'քաշենք Հ—Ե գիծը՝ իբր թէ պարկածեւ շինել ուղեինք:

Այժմ կողանջատին այն շեղ գիծը դէպի յետուակովմ մղելու համար, նախ պէտք է ճշտենք կողնաւարատին ե կէտը, որ լ կէտէն վարօք՝ դէպի անթմէջ յառաջացող փոքր յակում մը կազմուած

տեղին վրայ կ'ըլլայ. ուստի քանակը կ'հաւասարեցնենք ե կէտին ու կ'գիտենք որ դէպի վարը Հ—Ե գիծն հետ զուգահեռական գիրք մ'առնէ, և այն ատեն կ'քաշենք Ե—Գ գիծը. որ կազմէ ի կազմ առաւել կամ նուազ անջատութիւն մը կ'ունենայ Հ—Ե գիծն: Յետոյ կողամասի տիպարին սնակուշտին դէմ կ'նշանակենք ը կէտը, և Յրդ չափին $\frac{1}{2}$ (որ է 3 հարմէդ) ը կէտէն դէպի ետ գտալով կ'նշանակենք ը կէտը. ապա՝ ե կէտէն մեղմ կոր գիծ մ'սկսելով կ'ձգենք ը կէտ ու անկից ալ արտահակ մողմ կորութիւնով մը կ'քաշենք ծ կէտ՝ այն է կոնքի հաւասարութեան վրայ Ե—Գ գծէն 1 հարմէդ ներսոք և կորութիւնը շարունակելով կ'միացնենք Ե—Գ գծին. այնպէս որ Ե—Բ—Ժ—Գ գծով կազմուած կ'ըլլայ կրկնակար արտազգեստին կողանջատը (Տե՛ս 501րդ օրինակին սուներով ձեւը): Նախորդ դասի հրահանգին համեմատ երկայնութիւնն ալ կ'ճշտենք. իսկ կարաբաժինները ձգել ու կերպասը կտրելէ առաջ՝ ձեւոցին անկիւնը կ'հաւասարեցնենք Հ կէտին և ուղղութիւնը Հ—Ե գծին ու կ'քաշենք Հ—Ե փոքրիկ ուղղահայեաց գիծը, որ Ե—Բ—Գ գծին միանալով կ'ունենանք ե կէտը. այժմ ե կէտէն մինչեւ ե կազմուած փոքր հորիզոնական գիծը չափելով՝ տեսնուած թիւը տեղ մը կ'արձանագրենք, որ յետոյ պիտի ծառայէ առաջամասին ի կէտը ճշտելու (սոյն 501րդ օրինակը չսեղողելու համար Ե—Բ—Ժ—Գ գծին կարաբաժինը փոքր մաս մը միայն ցուցուցինք):

Նորաձեւութեան համեմատ կրկնակար արտազգեստին կամ կրկնացին ու թիւնազգեստին կոնամէջը միակտար ալ կ'ըլլայ (Տե՛ս 500րդ օրինակին կոնամէջի ծալին ու Ե—Բ—Ժ—Գ ես մղուած կողանցար):

Առաջամասը նախ պարկածեւին նման կ'ներկայացնենք մինչև Ե—Բ գիծը (Տե՛ս 498րդ օր.): Յետոյ յետուամասին Ե—Գ գիծը քանի հարմէդ որ Հ—Ե գծէն ներսոք կազմուած է, ճիշտ այնքան ալ առաջամասին Ե—Բ գծէն գրոք զուգահեռաբար կ'քաշենք Բ—Ժ գիծը, որով նախորդէն պակսածը լրացուցած կ'ըլլանք վերջնին վրայ, իբր թէ յետուամասին Հ—Ե և Ե—Գ գծիրը փոխադրած ըլլացինք առաջամասի Ե—Բ և Բ—Ժ գծերուն տեղը: Զեզը Ե—Բ գծին հաւասարեցնելով ե կէտէն կ'քաշենք Ե—Բ փոքրիկ ուղղահայեացը որ Բ—Ժ գծին միանալով կ'կազմուի ը կէտը: Արդ, քիչ մ'առաջ յետուամասի Ե—Ե փոքր գծին չափուած ու արձանագ-

բուած թիւը կ'նշանակենք թ կէտէն գէպի վեր թ—ժ գծին վրայ, ուր կ'հաստատուի ի կէտը՝ որ համապատասխան է յետսամասի ե կէտին բարձրութեան։ Հուոկ ուրեմն, ի կէտէն մինչև լ կէտ՝ կողնաւարտին ձեւ կ'գծինք. և ի կէտէն մինչև լ կէտ՝ այն է Ժ կէտին դիմաց, արտահակ մեղմ կորութիւն մը կ'ներկայացնենք, այնպէս որ զրեթէ Բ. կողամասի Յ—Ռ—Զ գծին դիրքն ունենայ։ Ալ կ'մայ նախորդ դասի հրահանգին համեմատ երկայնութիւնը ճշգել ու կարաբաժինները ձգելով կերպասը կորել (Տե՛ս 498րդ օր. ստուերով ձեւը)։

Եզրակացուրիւն։ — Պարկածե կրկնոցին կամ արտազդեստին ալ կողանջատի կարերը կրնայ գէպի յետսակողմ ներկայացուիլ, կրկնակարին նախաձեռովը, յետսամասին ե—զ գիծը և առաջամատսին ի—թ—լ—ժ գիծն առնելով։ Այս ձեւերուն վարի կողմը փոքր զլօշներ ալ կրնայ կազմուիլ, յետսամասը ժ—դ գծով և առաջամասը խ—ծ (Տե՛ս 498 և 501րդ օրինակներուն սա օ—օ—օ—գծերը)։

Գալով օձիքին, այս ալ օրուան նորոյթին համեմատ կ'ըլլայ։ Թերեւս բնաւ օձիք ու կրծօձիք շինել չուզուի, և հագաղէն վար շեղ վերջաւորութիւն մը տրուի (ինչպէս 503րդ նկարը), որ է կ—դ գիծը (Տե՛ս 498րդ օր.)։ Միաշար կոճկէնով եղած ատեն գուցե քառանկիւն ունցերով փոքր կրծօձիք ձեւացնել ուզուի (ինչպէս 502րդ նկարը), կամ փոքր ձիգ օձիք (ինչպէս 504րդ նկարը). այս երկու ձեւին համար ալ կ'առնենք հ—դ գիծը (Տե՛ս 498րդ օր.)։ Թերեւս կրկնաշար կոճկէնով ըլլայ և ուզզանկիւն ձիգօձիքով (ինչպէս 507րդ նկարը), կամ այս ձեւ փեռեկ ձեւացնել ուզուի (ինչպէս Ծթ. տախ. 518րդ նկարը). այս ձեւերուն համար ալ կ'առնենք ձ—դ—ը գիծը (Տե՛ս 498րդ օր.)։ Իսկ եթէ լնկալեալ ձեւով կրծօձիք ձեւացնել ուզուի (ինչպէս իԴ. տախ. 404 և 105րդ օրինակներուն ու Ծթ. տախ. 481րդ նկարը). այն ատեն ալ կէտէն շեղակի գէպի վերօք կ'կտրենք մինչև կրծեղը (Զիգօձիք ձեւելու կերպը Տե՛ս Փ. գլուխ Փ. դասը)։

Պ Ա Ս Զ.

ԶԱՆՑԱՆ ԶԵԽԵՐՈՎ ԱՐՑԱՋԳԵՍՑՆԵՐ, ԿՐԿՆՈՑՆԵՐ ՈՒ
Թ Ի Կ Ն Ա Զ Գ Ե Ս Տ Ե Ր

(ՏԵ՛Ս ԿԱ. ԵԼ ԿԲ. ՏԱԽ 499, 502ԷԿ ՄԻՆՉԵԼ 536ՐԴ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ
ՈՒ ԱԿԱՐԵՒԵՐԸ)

ԿՐԿԻՆ—ՅԵՑՍՍԱՄՍՍ ԱՐԱՆՑ ԿՈՂԱՄՍՍԻ. — Պարկածե կամ կրկնակար արտազգեստն ա՛լ աւելի աչքառու ձեւի մը վերածելու համար կրկին—յետսամասով ալ կ'շինուի (ինչպէս 512րդ նկարը). բայց առանց կողամաս ներկայացնելու։ Ուրեմն պարզ—երանազգեստի յետսամասին ու կողամասին շրջագծերն ընդհանուր եղանակին համեմատ ձեւագծելէ ետք (ՏԵ՛Ս 505րդ օր.)։ Խ կէտը կ'նշանակենք 4 հարմէգով Ծ կէտը գարձեալ Յրդ չափին $\frac{1}{3}$ ովը, Յ կէտը կ'նշանակենք մէջքի լայնութեան 4 հարմէգին ու Յրդ չափին $\frac{1}{2}$ ովը, որ կ'ընէ 7 հարմէգ. յետոյ Ժ—Ի գիծը կէտ ընելով մէջ տեղը կ'նշանակենք Ք կէտն ու Ք—Խ լարին առաջնօրդութեամբը կ'քաշենք Ք—Կ—Խ—Յ—Յ գիծը, որ կ'ներկայացնէ Ա. յետսամասին ձեւը, և Կ—Ծ—Ղ—Ռ գծով ալ կ'անջատենք Բ. յետսամասը (լա՛ւ դիտէ 505րդ օր. սոյն գծերուն վայելչութիւնը)։

Եթէ այս ձեւին կանամէջը միակառը շինել կ'ուզենք (ինչպէս 512րդ նկարը), այն ատեն կերպամասին ծալքն ա—թ գիծ համարելով (ՏԵ՛Ս 516րդ օր.), Ա. յետսամասի տիպարին Ը և Զ կէտերը ա—թ գծէն կէտ կէտ հարմէգ ընդարձակութեան բաժինի համար ներսօք հաւասարեցնելով, վերի կողմը մինչև Ե գիծ ընդորինակելէ ետք, նոյն գծէն ձգուելիք Ա հարմէգ ընդարձակութեան բաժինին համար տիպարը գէպի վար քաշելով՝ կ'օրինակենք Ք—Խ—Յ գծին ամբողջութիւնը; Ինչպէս կ'երեւադ, տիպարն այս դիրքին մէջ՝ Մ' կէտը կերպամասին ծալքէն դրսօք կ'մայ. ուստի կերպամասին ծալքէն $\frac{1}{2}$ հարմէգ ընդարձակութեան բաժինը նկատողութեան առնելով կ'նշանակենք գ կէտը, այժմ Մ' կէտէն մինչև գ կէտ գտնուած հետառորութիւնը չափելով, նոյն թիւը կ'փոխադրենք Յ կէտին գիմաց ուր կ'կազմուի դ կէտը։ Յետոյ Խ կէտին գիմաց Յրդ չափին $\frac{1}{3}$ ովը կ'նշանակենք ե կէտն ու դ կէտին գիմաց ալ անոր

կէսովը (որ է 1 համեց) զ կէտը . քանակը ե և զ կէտերուն հաւասարեցնելով կ'քաշենք ե—զ—ե գիծը , և տիպարի ի—Յ գծին ընթացքը փոխելով՝ կերպարին վրայ կ'քաշենք ե—զ մեղմ կոր գիծն ու կորութիւնը կ'շարունակենք ե—զ—ե գիծը , և տիպարի ի—Յ գծին ընթացքը փոխելով՝ կերպարին վրայ կ'քաշենք ե—զ մեղմ կոր գիծն ու կորութիւնը կ'շարունակենք ե—զ—ե գիծը , և գծին վրայ՝ անդգալի կերպով կ'ձուլենք անոր հետ։ Ապա , ուզուած երկայնութեամբ՝ այն է Չրդ կրկին չափին համեմատ Զ և ի կէտերէն վար կ'ձշտենք բ—ե կէտերը՝ կոր գծով մ'իւարու կ'միացնենք ու կարաբաժնները ձգելով (Սոյն 516րդ օրինակը չխնդիրու համար վերի լույսը միայն կարաբաժին զծեցին), կերպարը կ'կտրենք։

Եթէ կոնսմէջը կարով ընել ուզուի , այն ատեն ալ կ'հետեւինք կրկնակար արտազգեստի հրահանգին (Տե՛ս 501րդ օրինակին Ը—Յ գծին)։

Բ . Յետսամարը ձեւելու համար , տիպարը կ'դնենք կերպարին վրայ (Տե՛ս 514րդ օր) , վերի կողմը կ'օրինակենք և լ գծէն ձգուելիք 1 հարմէտ ընդարձակութեան բաժնը գէպի վար քաշելով՝ Բ—Ղ—Ռ գծին կարաբաժնն ալ կ'գծենք , և Ղ կէտին դիմաց Յրդ չափին կ'ովը կ'նշանակենք ա կէտն ու Ո կէտէն դուրս ալ անոր կէսովը (որ է 1½ հարմէտ) բ կէտը նշանակելով (այս թիւերը կարաբաժնի գծէն գուրս պէտք է նշանակել) , քանակը կ'հաւասարեցնենք ա և բ կէտերուն ու կ'քաշենք ա—բ—զ գիծը . յետոյ Ղ—Ռ գծին ձգուած կարաբաժնէն գիծը կ'շարունակենք գէպի բ—զ գծին վրայ։ Առոր կողանչատը կրնայ ճիշտ պարկածելի նման Հ—Դ—Ե գծով ներկայացուիլ . կամ սնակուշտին վրայ 1½—2 հարմէտով քիչ մը ձեւ գրուելով՝ որ է Հ—զ—Ե գիծը . կամ ճիշտ տիպարի կողանչատին նման , որ է Հ—Զ—Ե—զ գիծը . և կամ կրկնակար արտազգեստին նման ետ մղելով (ի՞նչպէս 504րդ օր . Ե—զ գիծը կամ Ե—Բ—Ճ—զ գիծը)։ Յետոյ Ա . յետսամարի տիպարին Մ—Բ գիծը չափելով կ'դնենք ասոր (514րդ օրինակին) Ո և դ կէտերէն վար , գ և ե կէտերը կ'ձշտենք ու կոր գծով մը երարու միացնելէ ետք , միւս կարաբաժններն ալ ձգելով՝ կերպարը կ'կտրենք։

Թերեւս առաջամասն ալ ուսածազին կէսէն երկու մասով չի-նել ուզուի կամ միակտոր , ամէն պարագայի մէջ կողանչատը

պատշաճեցնելու է քիչ մ'առաջ Բ . յետսամարին համար որոշուած ձեւերուն։

Այս ձեւին գլխաւոր կէտը կ'կայանայ Ա . յետսամարին կոնամէջը միակտոր ըլլալուն վրայ , որ եթէ գերձակակերպ կարել ուզուի՝ ի կէտէն Յ—Կական համարէտ վեր ու վար քիչ մը թրջելով ու արգուկով լնդագտելու է (Տե՛ս 515րդ օր.) , և ծալքն ամփոփելու է , այնպէս որ տիպարին հետ բաղդատուած ատեն կերպարին ծալքն անոր մէջի կոր ձեւին համապատասխան է : Ու եթէ հագուստին մէջ ասասա պիտի դրուի , տարակոյս չկայ թէ այս վերջինն արգուկով չընդգտեր . հետեւապէս կերպարին ստացած կոր ձեւովը կտրելու է (Տե՛ս 514րդ օր . մուր սուերով ը—թ եզրը Եւն.) , որ կարով կ'ըլլայ : Այս գործողութիւններն յաջողութեամբ կատարուելով հազնուած ատեն մէջի մէջ անպէս մը կ'երեաց որ իրը թէ կոնսմէջը կարով պատրաստուած է :

* *

Կոնսմէջը հակածու ձեւացնել . — Ժամանակ կ'ըլլայ որ պարկածեւ հագուստներուն կոնամէջը երեսի կամ շրջօնի կողմէն հակածու կ'ձեւացնեն (ի՞նչպէս 509 եւ 517րդ նկարները) . Շրջօնի կողմէն եղած ատեն լնդհանրապէս թիկնամէջին հաւասարութենէն կ'ըլլայ , այն է Ե կէտէն (Տե՛ս 510րդ օր.) և Երեսի կողմէն եղած կ'ըլլայ , այն է Ե կէտէն (Տե՛ս 510րդ օր.) և Երեսի կողմէն եղած կ'ըլլայ . Առդ , կերպարին ծալքը ա—բ գիծ ու նազգեստի տիպարներով : Արդ , կերպարին ծալքը ա—բ գիծ ու գագաթն ա—զ գիծ համարելով , ա կէտէն ա—բ գծին վրայ կը նշանակենք Առաջին չափն առաւել կով , որ է $36+4=40$ հարմէտով կէտը (Տե՛ս 510րդ օր.) . այս կէտէն կ'քամէդ , և կ'ունենանք դ կէտը (Տե՛ս ձեւոցին նկարը) . յետոյ հակածու վերի լայնութեան համար ա կէտէն ա—զ գծին վրայ 10 հարմէտով կ'ձշտենք գ կէտը , և դ կէտէն դ—Ե գծին վրայ ալ 12 հարմէտով կ'էտը . քանակը կ'հաւասարեցնենք գ և ե կէտերուն ու կ'քաշենք գ—Ե—զ խոտոր հորիզոնականը որ կներկայացնէ հակածական տրամագիծը : Այժմ սոյն գծէն ներս կ'շարունակենք պարկածեւ արտազգեստի համար յետսամարին ու կողանչատին զեղեղելու գործողութիւնն ու կ'քաշենք կողանչատը ներկայացնող

Հ—է գիծը (լա՛ւ դիտե օրինակին մանրամասնութիւնը): Տեղն է որ ըսենք թէ Առաջին չափը կերպարի ծալքին վրայ ի՞նչու համար առաւել կով նշանակեցինք. վասն զի յետասամասի տիպարին ուլունըստորի բարձրութիւնը, կարաբաժինը և թիկան դէմի բնդարձակութեան բաժինը առնելէ ետք, Զ կէտը կ'հաւասարի և կէտին: Եւ եթէ հակածալը չրջօնի կողմը պիտի կազմուի ու թիկնամէջի հաւասարութենէն շինել կուզուի, նախ տիպարին և կէտին $\frac{1}{2}$ հարմէգ գրաոք ընդարձակութեան բաժինը կ'նշանակինք, յետոյ և հարմէգ ալ կարաբաժին և զուգահեռաբար կ'իջնենք մինչեւ Ե կէտին գիմաց, որ է թ կէտ, և այս կէտէն շեղ գծով մը դէպի ծալքին վրայ կ'քաշենք թ—թ գիծը. ապա երկայնութիւնը ձշտելով, կերպասը կ'կտրենք (Տե՛ս 510րդ օր. սուերով ձեւը): Եթէ վարօի ձեւով ուզուի, այն աստեն ալ ծոծրակէն շեղակի առ կէտ երթալով կ'առնենք (ի'նչպէս 520րդ օր. ա—0 գիծը):


Թերեւս կողանջատի կորը գէպի յետակողմ մզել ուզուի որ է ժ—ի—լ (Տե՛ս 510րդ օր. սա \times — \times — \times — գիծը):

Կարելու ժամանակ, եթէ հակածալը չրջօնի կողմը ձեւացնել կուզուի, ընդհանրապէս ծոծրակէն մինչև թիկնամիջոցը կարուած կ'ըլլայ (Տե՛ս 510րդ օր. Ե կէտը), հետեւապէս նախ զայն վերջնական կերպով կ'կարենք յետոյ հակածալին թ—զ գիծը գերակարելով՝ երեսի կողմը կ'ծածկենք սեղանին վրայ, թ—բ ծալքը կ'հաւասարեցնենք թ—զ գերակարին՝ որով հակածալի բաժինը կէս առ կէս կ'տարածուի երկու կողմի վրայ. ահա ճիշտ այս գիրքին մէջ ծալերուն երկու եղբերն ալ երեսի մասին հետ կ'գերակարենք ու լու մը կ'արգուկենք: Ապա, կ'ըրջենք երեսի կողմը և ծոծրակէն մինչև հակածալին ծայրերուն հաւասարութիւնը՝ մեքենայով կերպ կերպ գարձ գարձիկ թափանց կարեր կ'բնենք (ի'նչպէս 509րդ նկարը): Եթէ հագուստին մէջ աստառ պիտի գրուի, այն ալ ճիշտ կերպասին նմանը պէտք է ձեւել ու հակածալը միատեղ կազմել:


*

Կէս Փակած կրկնոցներ.—Բանի մը մասերէ բազկացած ու մինչև մատին ծայրը կամ ո՛լ աւելի երկայն կէս Փակած վրանոց հագուստներ կ'ըլլան որոնք յետակողմէն դիտուած ատեն կըրկնակար արտազգեստի տեսքն ունին: Ասմենք կ'ձեւուին կրկնակողամասով պատրաստուած իրանազգեստի տիպարներով՝ Ա. կողա-

ԿԱ ՏԱՐԱԾՈՒՅԻ



ԿԱ ՏԱՐԱԾՈՒՅԻ



մասը յետուամասին հետ միակուր և Բ. կողամասն ալ առաջամա-
սին հետ . կամ Բ. կողամասն առանձին կ'ձեւուի :

Արդ , համարենք թէ կանամէջը վարօի հակածալով շինել
կ'ուզենք . այս պարագային կերպասահն ծալքը 0—3 գիծ համարե-
լով (Տե՛ս ԿԲ . Տախ . 520րդ օր .) , նախորդ հրահանգին համեմատ
կ'քաշենք ա—բ—գ շեղ հորիզոնականը , որ է հակածալին տրամա-
գիծը , բայց թէ որ կերպասը բարակ է , ծոճրակին գէմ 8 և մէջ-
քին գէմ 10 հարմէդ հակածալի բաժին ձգելը կ'բաւէ : Յետոյ յետ-
ամասի տիպարին թէտը 1½ և Մ' կ'էտը 1½ հարմէդ ա—բ—գ
տրամագիծն ներսոք , և գծին ընդարձակութեան բաժինն ալ վար
քաշելէ ետք , Ա. կողամասին վերի ծալքը կ'կցենք թիկնանկիւն
կէտին ու Ո կ'էտը Յ կ'էտին 1½—2 հարմէդի չափ անջատ (Ա.աւ
դիտ . 520րդ օր .) : կանոնագին , թիկնաւարտին ու Յ—Պ—Ռ գծին
կարաբաժինները ձգելէ վերջ՝ Պ կէտին գիմաց դ կ'էտը կ'նշանա-
կենք Յոր չափին 3ովը և Ծ կէտին գիմաց ալ անոր կ'էտիլը և կէտն
կ'քաշենք Պ—Ե—Գ գիծը . Պ—Ռ գծին կարաբաժինը մեղմ կո-
րութիւնով մը կ'ձգենք Ե—Պ գծին վրայ , երկայնութիւնը ճշտելով՝
կերպասը կ'կորենք , անողէս որ կրկնակար տրտագգեատի յետու-
ամասէն աւելի գոգաւոր ձև մը կ'ունենայ (բաղդակ սոյի 518րդ օրի-
նակին Յ—Պ—Ռ գիծը 504րդ օր . Ե—Բ—Ժ—Գ գծին հետ) :

Առաջամասը ձեւելու համար , կերպասին եզրը ա—բ գիծ
նկատելով՝ Եթէ կրկնաշար կոճկէնով շինել կ'ուզուի , 10 հարմէդ
զուգահեռաբար գէպի ներսոք կ'քաշեն Պ—Դ գիծը (Տե՛ս 518րդ օր .) ,
և վրանոցներու կանոնին համեմատ առաջամասին տիպարը կ'գը-
նենք Պ—Դ գծին գիմաց : Յետոյ Բ. կողամասին տիպարն առնելով՝
առողջ Հ և Ծ կէտերն առաջամասին Լ և Մ կ'էտերէն Յական հար-
մէդ հեռու կ'դնենք կերպասին վրայ . Ի կ'էտէն 1½ հարմէդ գրաք
զլօշի բաժին ձգելով , Յ—Զ—Ղ կարաբաժինը կ'գծենք և քանակը
Զ—Ղ գծին հաւասարեցնելով կ'քաշենք Զ—Ղ—Բ—Պ գիծը . Երկայ-
նութիւնները ճշտելով կ'քաշենք նաև Բ—Ե—Դ կոր գիծը որ դ
կ'էտէն մինչեւ Բ կ'էտ ուղղանկիւն ձեւով մը պէտք է վերջանայ :

Եթէ կրծօձիք պիտի շինուի , հագագը քիչ մը կ'բարձրացը-
նենք , ուստագին , երբուծին ու անութիւն կարաբաժինները
մինչեւ Յ կ'էտ կ'գծենք . գալով կողանշատին . նախ առաջամասի
Ե—Ժ—Մ գծէն 1 հարմէդ ընդարձակութեան բաժին կ'գծենք ու

Հ հարմէդ ալ կարաբաժին . յետոյ կ'զծենք Հ—Զ—Շ գծին կարաբաժինը՝ այնպէս որ այն կարաբաժինները անթմէջին ու կոնքին վրայ երարու միանալով բազկին գէմ սեղմօն մը կ'ձեւացնեն (Տե՛ս 518րդ օր.), խոկ գարի մասը միակտոր կ'կաղմուին :

Եթէ չափատուին անակուշտը շատ խոր ու աղգրեղ է կամ քովերը կպչուն չուզուի՝ Ժ և Զ անկիւնները մեղմացնելու է (Տե՛ս այն տեղի կետ կետ զծերը) :

Թերեւս Բ. կողամասն առանձին ձեւել ուզուի (Տե՛ս 519րդ օր.), Զ—Ի գծին 4—11½ հարմէդ խոպոպի բաժինը ձգել ու 3—Զ—Պ կարաբաժինը գծելէ ետք, Պ—Դ գիծը կ'քաշենք . Հ—Շ գծին կարաբաժինէն գուրու կ'քաշենք նաեւ ա—Բ գիծը որ առաջ կուգայ քանակին անթմէջին ու Շ կէտէն 11½ հարմէդ գրսօք Գընելով : Եւ քանի որ Բ. կողամասն առանձին կ'ձեւուի, առաջամասին կողանջատն ալ առնելու է Պ—Ե գծով (Տե՛ս 518րդ օր. կետ կետ զիծը) :

Կէս փակած հագուստներուն առաջակազմը շատ անդամ մեզմ անջատութիւնով շեղ սեղմօն մը կ'շնուռի (Տե՛ս 518րդ օր.) : Այս սեղմօնը պատշաճ դիրքովը գծելու համար, Բ—Ժ գիծն երեք հաւասար մասերու կ'բաժնենք ու Ժ կէտին կողմի բաժանումը կ'անուանենք և կէտ . Ե—Կ գծին մէջտեղն ալ Հ կէտ նշանակելով՝ քանակը կ'հաւասարեցնենք Հ և Ե կէտերուն և ստացած դիրքովը կ'քաշենք Հ—Ե—Ե՝ գիծը, որ կուրծքի բարձունքն շեղակի կ'իջնէ ազգրին կողմը : Յետոյ սեղմօնին անջատութիւնը Յ հարմէդ սահմանելով՝ կէս առ կէս կ'նշանակենք և կէտին երկու կողմն ու մեզմ վէտկոր գծերով շրջագծերը կ'քաշենք . Եթէ հագուստն երկայն ու կոնքի հաւասարութենէն վարօք հորիզոնական դիրքով գրպան շինել կ'ուզուի (Տե՛ս 518րդ օր.), սեղմօնին վերջաւորութիւնն ալ պէտք է գրպանին վերի եղբին համար : Այս սեղմօնը նախ կարելու և յետոյ տրամագծէն կտրելով, կարը արդուկել և ներքեւը շեղ կտրուած սասուելին երիզ մը դնել ու ելեսը թափանց կարերով զարգարելու . է :

Այս հագուստին կոնամէջն ալ կրկնակար արտազգեստի նման կարով կրնայ ըլլալ :

* *

ՄԱՍՆԱԿԻ ԳԱՀԱՐԱՅՆԵՐՈՎ ԱՐՏԱԶԳԵՍՏՆԵՐ

Աս քանի մը տարուան մէջ արտազգեստները, կրկնոցներն ու թիկնազգեստները մասնակի կամ ամբողջ գահվաններով ալ շինուեցան : Թէ ի՞նչ է մասնակի ու ամբողջ անուանուած գահվարան : Ամբողջ գահվանն արգէն բացուարած ենք (Տե՛ս Զ. զուխ Զ. դասը) ու հիմա գարձեալ պիտի խոսինք (ուրով Են 499, 502 և 524րդ նկարներ) . խոկ մասնակին ալ այն է որ թիկան կամ լանջքի լանջութեան կէսերէն կ'ոկոխ (ի՞նչպէս 504, 521, 530 և 535րդ նկարներ), կամ միայն առաջամասին հետ կ'ըլլայ (ի՞նչպէս 522րդ օր.) և կոմ յետամասին հետ : Ասոնց պէսպիտութիւնն որոշ կերպով բարունելու համար, հարկ կ'ըլլայ հետեւեալ գասակարգութիւնն լնել :

Ա. Գահնիվայով ու բազմածալով վրանցներ . — Սա վերջին քանի մը տարուան մէջ գահվայով ու բազմածալով թիկնազգեստ ու նայն խոկ կէս երկայնութեամբ (այն է մինչեւ ծունդը) կրկնոցներ ու արտազգեստներ շինուեցան (ի՞նչպէս 499 և 502րդ նկարներ) : Ասոնց գահնիվաները սուկանի գահնիվանելուն նման կրնայ ուսոն առանց կարի ըլլալ կամ կարով . առաջին պարագային հետեւելու է Զ. գլխու Զ գտուին (Տե՛ս 1. Տ. ասի. 172 և 173րդ օր.) . Խոկ վերջին կերպն արգէն շատ տւելի դիւրին է, որովհետեւ յետամասին ու առաջամասին վրայ առանձին առանձին կ'գծենք : Օրինակի համար Եթէ յետամասին գահնիվան ծշտել կ'ուզենք . նախ յետամասին ու կողամասին շրջագծերը կ'քաշենք (Տե՛ս 525րդ օր.), ապա համարենք թէ Ե—Լ գծին մէջ տեղն անկիւնաւոր գահնիվայ մը ձեւացնել կ'ուզենք . կ'առնենք ուրիմն Ե—Կ և Կ—Լ կոր գիծերը : Նոյնպէս ալ առաջամասին Բ—Ե գիծը կէս ընելով՝ մէջ տեղն անկիւն մը կ'ձեւացնենք ու երկուքին ալ այս մասերը կտրելով կ'բաժնենք : Յետոյ գահնիվայի հաւասարութենէն վարհագուստին երկայնութեան բաւարար կերպարը կ'կարենք . առաջակողմը միաշար կամ կրկնաշար կոճկէնով շինելու պարագան ալ նկատողութեան սահմելով՝ վերեւեակի բաժինը պարզ կ'թողունք (ի՞նչպէս 502րդ նկարը) ու պահանջուած քանակութեամբ բազմածալերը վերէն մինչեւ վար հատ հատ կ'գերակարենք : Գիտնալ պէտք է թէ յետամասին ծալերն եթէ թիկանց կողմէրէն գէպի կոնամէջ կոտրուին, շրջօնի կողմը հակածալ կ'ձեւանայ ու եթէ

դէպի թիկանց կողմը կոտրուին՝ այս անգամ ալ հակածալը երեսի կողմը կ'ձեւանայ (ի՞նչպէս 499րդ նկարը): Հուսկ ուրեմն շըջօնի կողմէն լու մը կ'արդուկենք ու ստրկածեւ հագուստի հրահոմն-գին նման՝ տիպարին փարի մասը սոյն ծալերուն վրայ զնելով շըջագծերը կ'ձենք և կերպասին աւելորդները կ'առենք: Գալով գահվաճներուն, մասնալու չէ որ ուսին կարը մակերեսին վրայ գտնուելու է, այսինքն թիկնածագն առնելու է ժ—ի գծով (Տե՛ս 525րդ օր.) փոխանակ ժ—ի գծին. և առաջամասն ալ Ծ՝ Խ՝ գծով (ի՞նչպէս 526րդ օր.): Գահվայէն զանազան ձեւերով փոքր կրծօձիքներ ալ կրնայ ձեւանակ (ի՞նչպէս 502 եւ 507րդ նկարները):

Բ. Գահվայով ու բազմամասնեայ թիկնազգեան. — Յետուակողմը կրկին—յետուամասս պարզ կողամասով վրանցներ ալ կ'ըւլ-լան (ի՞նչպէս 524րդ նկարը): Գահվային ձեւը գծելէ ետք փորի կողմը կ'բաժնենք կրկին յետուամասի (Տե՛ս 525րդ օր. և զօտվայրին վրայ բաժնելու կերպուն 134—135րդ էջերուն հրահանգները). միայն եթէ գահվաճն թիկան դէմ զարդանկիւնով ձեւոցած է Ա. յետուամասին բաժանումն ալ անոր ծալրէն սկսելու է, որ է Կ—Խ—Յ գիծը (Տե՛ս 525րդ օր.): Թերեւս յետուամասին մէջտեղը միակոր ձեւել ուզուի (ի՞նչպէս 524րդ նկարը). զոր քիչ մ'առաջ բացտրեցինք (Տե՛ս 515 եւ 516րդ օրինակները):

Գ. Առաջամասին հետ միակոր գահվայ. — Գահվաճներ կը կազմուին սրանք առաջամասին հետ միակոր կ'ըլլան (ի՞նչպէս 522րդ օր.) և կամ ալ որ յետուամասին հետ միակոր կ'շմնուին: Այս երկութին ալ ձեւագծելու ոկզբունքը նոյնն է. ուստի և համարենք թէ առաջամասին հետ միակոր ձեւացնել կ'ուզենք, ուշրեմն գահվայ գծելու ընդհանուր եղանակին համեմատ յետուամասի տիպարին թիկնածագը կ'ցցենք առաջամասի ուստածագին ու կ'շարունակենք անոր վերաբերած հաշխները ձեւագծել՝ յետուակողմի գահվային Ը—Ե, Ե—Լ և Լ—Ը գծերը (Տե՛ս 522րդ օր. ուր վրիպմամբ Ժ, Ե Եւ Լ նշանակած են, փոխանոկ Ը, Ե, Լ): Եթէ թիկան դէմ անկիւնաւոր ուզուի, այն ատեն ալ կ'առնենք Ե—Ե և Ե—Լ գծերով: Եւ եթէ առաջամասը սեղմօնենք բաժնել կ'ուզուի, լանջքին դէմ մասնակի գահվայ մը կ'ձեւանայ՝ Ը—Ա՝ փոքրիկ ուզահայեաց գիծը կողմուելով: Թերեւս այն փոքրը գիծն եռանկիւն մը ձեւացնել ուզուի, այն ատեն ալ կ'առնենք Ը—Ա և

պ—ա՝ գծերով: Յետոյ սոյն տիպարը կերպասին վրայ փոխագրելով՝ եթէ միաշար կոձկէնով կ'ուզուի, ա—բ գծէն Ծ հարմէղ ներսոք կը քաշենք զ—դ տրամազգիծը ու տիպարին Զ և Յ կէտերը մէյմէկ հարմէղ ընդպարձակութեան բաժէնէ նաւար ներսոք հաւասարեցնելէ վերջ, լանջքին ու կոնսմէջին կէտերը և կմնքի հաւասարութեան վրայ ալ Յ կէտը. յետոյ ա կէտէն մեղմ կոր գիծ մը կ'քաշենք մինչեւ լի և անկից ալ մինչեւ Յ կէտը: Ալ գիւրին է ըմբռնել թէ ա—և Գ—Հ գծերուն իրար կտրած կէտը կ'անուանենք Կ և նոյն կէտէն կ'քաշենք Կ—Ծ—Ղ—Ռ գիծը որ Բ. յետուամասին անջանութիւնը կներկացնէ և միանգամայն լայն կողամասի մը երեւպթը կ'ունենայ: Այժմ մասնակի թիկնաւարոը կրնանք ձեւացնել ա կէտէն աղեղնաձեւ մինչեւ ի կէտ միացնելով. կամ ա—և ուղիղ գծով և կամ ա կէտէն շեղակի մինչեւ բ կէտ՝ այն է Գ—Հ գծէն Հարմէղի չափ գէպի վերօք (Տե՛ս այս ամենը 527րդ օր.): Առաջամասն ալ թերեւս կէս փակած ձեւով շինել ուզուի, այն ատեն Յրդին չափին կ'աղմէնք սեղմօն մը կ'կազմենք (Տե՛ս 526րդ օր.), ու անոր ցցունը կ'շարունակենք մինչեւ լանջքի լայնութեան կէտը, որ է ա կէտ. և յետուամասին նման աղեղնաձեւ կ'առնենք ա—և զիծը, կամ ա—Բ ուզահայեացը և կամ ա—Ռ շեղ գիծը, այն է ծղակարին կցորդուելք կէտը (Տե՛ս այս ամենը 526րդ օր.):

Այժմ համարենք թէ սոյն մասնակի գահվաճներուն շեղ ձեւն առնել կ'աւզենք, ճիշտ այն աղեղն տիպարները կ'բաժնենք ու կ'փոխագրենք կերպասին վրայ, Եթէ կանամէջը միակոր կ'ազմէլ ուզուի (Տե՛ս 534րդ օր.), պէտք է հետեւել պարկազմել արտազգետի հրահանգին, և ապա ընդձգտելով վերածել տիպարի ձեւին (ի՞նչպէս 515րդ օր.): Եթէ կարով կ'աւզուի՝ այն ատեն ալ հետեւելու է կրկնակար արտազգետի հրահանգին (ի՞նչպէս 504րդ օր.): Միայն մոտնալու չէ Ժ—Ի գիծը վերածել Ժ—Ի գծին որ ուսին կարը մակերեսին վրայ կազմուի: Բ. յետուամասը որ միանգամայն կողամաս ալ է (Տե՛ս 533րդ օր.) ասոր ա՛—Բ', Բ'—Հ և ա՛—Ղ—Ռ գծերուն կարաբաժները ձգելէ ետք՝ մէջ-քին գէմ Յրդ չափին կ'նշանակենք զ կէտն ու անոր կէսով ալ դ կէտը, և կ'քաշենք զ—դ—Ե լարն ու Ղ—Ռ գծին գիրքը կը չարունակենք այն լարին վրայ. Հ—Պ—Կ գիծն ալ կ'քաշենք ու երկայնութիւնը ձշտելով կերպասը կ'կտրենք: Կրնայ սոյն կողմա-

սին Բ' կէտէն սկսելով կը կնակար արտազգեստի ձեւ տըռութ (ի՞նչ-պէս 504րդ օր . Ե—թ—ծ—զ զիծը) . և նեղցած մասը բարդել առաջամասի կոպանցատին :

Գալով առաջամասներուն, կրծեղբլին վերելակի բաժինը ձգելէ ետք՝ Ա. առաջամասին տիպարը կ'զնենք զ—ի գծին դիմաց (Տե՛ս 531րդ օր.), ուսածաղը ցածցնելով կ'առնենք ՞—՞ գիծը և շուրջի կարպաժինները ձգելէ վերջ, զ—ի—ը գծով կ ներկայացնենք սեղմօնին տրամագիծն ու Դ—Շ գծին հարաբաժինը կ'միացնենք ի—ը գծին։ Եսյնը կ'ընկնենք նաեւ Բ. առաջամասին համար (Տե՛ս 532րդ օր.), որ է զ'—ի—ը՝ տրամագիծը, որ Ք'—ի գծին կարպաժինը կ'միանայ ի—ը՝ գծին։ Ասոր կողանջանն ալ պարկածելի (ինչպես ԿՈ. տախ. 498րդ օր. ի—ը զիծը) կամ կրկնակար արտազգեստի նման կ'արունակենք (ՕՐԻՆԱԿԻԵՐԸ շնուրվելու համար թիկունքին, լանջերն ու կողանջատին ընդարձակութեան բաժինները շներկայացուցինք։ ուսի ձեւ ելու ժամանակ զանոնի մոռնարու չէ)։

Եթէ կողամասն ու Բ. առաջամասը բաղմածալով շինել ուզ-
ուի (ի՞նչպէս 533րդ նկարը). այն ատեն առաջամասին վրայ սեղ-
մօնի անջատութիւն ձեւացնելու չէ և կողմասին Կ—Ո գիծն ալ
(Տե՛ս 527րդ օր.) ուղիղ կազմելու է:

Հայն մէջքով յետսամաս . — Վրանոց հագուստներ կ'ըլլան՝
ըսոց յետսամասին մէջքը սովորականէն քիչ մը լայն կ'պահանջութ ,
այսինքն իս կէտը փոխանակ Յ հարմէգով կազմելու , Յ—Ե հարմէգ
կ'դրութ (Տե՛ս 528րդ օր .) . բնականաբար Յ կէտն ալ կ'կազմութ
նոյն թիւին վրայ աւելցնելոս Յրդ չափին $\frac{1}{2}$ ը (ի՞նչպէս ներկայ օրի-
նակին նշանակեցին Յի համար Պ հարմեղ) : Բայց գիտնալ պէտք է
թէ յետսամասին մէջքը սովորականէն լայն եղած առևն կռնակորն
ալ թիւկնանկեան կէտէն համեմատաբար վարօք կազսելու է . և
առող համար կ'առնենք Ք կէտը՝ այն է թիւկան և անութի մէջ-
տեղը . որով կողամասն ալ կ'նեղնայ ու կ'ցածնայ , և գրեթէ կըրկ-
նակողամասի Բ . մասին ձեւը կ'առնէ (լա՛ւ դիտէ 528րդ օր .) : Ալ
գիւղին է սոյն տիպարներով ուզուած երկայնութեամբ կրկնոց ,
արտազգեստ կամ կրկնոցակ ձեւելլ՝ հետեւելով նախապէս տրուած
հրահանգներուն (աչքէ անցնել 162 եզի Փ դասը եւ 167 եզի սկիզբը) :

Պարկածեւ «Գյօշ» կրկնոցներ . — Քանի մը տարի է որ թէ՝ արանց և թէ՝ կանաց համար կոնածագէն և ուսերէն սկսուած պարկածեւ զլօս վրանացները շատ նորածեւութիւն եղան , մանաւանդ կնոջականները վերչէն ծպըրահեղութեան հասան (ի՞նչպէս 513րդ նիստը) : Ամէն ձեւողի համար խրթին գործ մը նկատուած է այս ձեւը , որոնք անարամաբան միջացներով կ'ձեւեն ու վերջապէս նպատակին ալ չեն հասնիր . մինչգեռ մեր գրութեամբ շատ դիւրին է ուզուած աստիճանով զլօս ձեւացնել :

Գլուխ կրկնոց շինելու համար, նախ յետամասի ու կողմանի տիպարներուն ըրջագիծը կ'ձեւագծենք (ՏԵ՛Ս 529րդ օր.). յետոց կռնածագը կէս լնիլով մէջտեղը կ'անուանենք ա կէտ, Ժ—Ի գծին բաժանումներն ալ Բ և զ: Ապա, Մ—Շ գիծը 9 հաւասար մասերու բաժնելով՝ առաջ եկած չորս կէտերը դ, Ե, զ և Կ կոչ-չելով, վերի և վարի կէտերը մէջ մէկ ուղիղ գծով իրարու կ'մի-ացնենք, որոնք են ա—դ, Ժ—Ե, Բ—Պ և զ—կ գծերը, այս ա-մէնն ալ ձեւելով կ'կարենք՝ որով կ'բաժնուին Ա. Բ. Գ. Դ. և Ե. մասերու (լու՛ դիտ 529րդ օրինակը):

Հուսկ ուրեմն, սոյն հիմնգերիցի վերածուած մասերը կերպասին վրայ փոխագրելով (Տե՛ս 53Երդ օր.), Ա. մասին ծոծրակը ½ և Մ' կէտը կ հարմէդ կերպասին ծալքէն՝ այն է 0—Ձ գծէն ներառք կ'զետեղենք, Բ. մասին ա կէտը կ'կցենք Ա. մասի ա կէտին՝ խակ վարի կողմը դ կէտէն կ հարմէդ հեռու, և այսպէս ալ Գ. Դ. և Ե. մասերուն Ժ., բ և զ կէտերն իրարու կից ու վարի կողմէրը կական հարսէդ անջատ (յա՛ւ դնե՛ք 53Երդ օր, ուր տիպարները բաց գոյն ստուերով ներկայացուցած են): Մոռնալու չէ ամէն մէկն ալ զետեղելու ժամանակ Ե—Լ, գծին ընդարձակութեան բաժինը վար քաշել: Տիպարներուն ստացած սոյն դիրքին մէջ կանածագին, թիկնածագին, թիկնաւարտին ու կողնաւարտին կարաբաժնները գծելէ ետք, Շ կէտի կարաբաժնին դիմաց 1½ հարմէդը նշանակելով քանակը կ'հաւասարեցնենք Հ կէտին կարաբաժնին և 1½ հարմէդը ին ու կ'քաշենք Հ—Լ գիծը և երկայնութիւնը ճշտելով՝ կերպասը կ'կտրենք (Տե՛ս 53Երդ օր. մուր ստուերով ձեւը): Հոս ուշագրաւ պարագան այն է որ, կանածագը սովորականէն աւելի գոգաւոր ձեւ մը կ'առնէ, թիկնածագին վէտկոր գիծը կ'վերածուի մեղմ կոր ձեւ մը և կողանջատն ալ

չափազանց չեղ կ'կազմուի. որոնք կոնածագէն ու թիկնածագէն ու կսած մինչեւ հագուստին երկայնութիւնը՝ խոպսաներու շաբք մը առաջ կ'բերեն: Այս խոպսաներուն առաւել կամ նուազ ըլլալը կախումն ունի կոնքի հաւասարութեան վրայ տիպարներուն անշատ կենալէն որ կրնայ Գականէն աւելի կամ պակաս դրուիլ:

Եթէ առաջակողմն ալ զիօց շինել ուզուի, միեւնոյն կերպով
կընլաւ:

۹۸۰

ԱԽՍԱՐԿՈՒՅԵՐ

(ՏԵ՛Ս ԿԳ. ԵՒ ԿՊ. ՏԱԽՏԱԿՆԵՐՈՒՆ 537ԿԸ ՄԻՒՅՆԵԼ 552ՐԴ ՕՐ. ԵՒ ԱԿԱՐԵՒՐԸ)

Ուսարկութելիքը կ'անուանուի այն վերաբերուն որ առանց
թիւի, գրեթէ չուրջառի նման կիսաբոլորչի ձեւ մը կ'ունենայ՝
ուսերէն մինչեւ դնտղուց կամ մինչեւ կոճղը շարունակուած եր-
կայնութեամբ և ծղիներովը մարմինը կ'պատէ։ Ուսարկուն Սպա-
նիական ծագում ունեցող ազանելի մ'է և ասպետներուն գլխաւոր
պահուձանքը, որ կ'ըսուի նաև Սպանիական վերաբերութեամբ
էսպանեօլ՝ որուն երկայնութիւնը կ'ըլլաց մինչեւ զնդղուցը։ Խոկ-
բելրոին անուն առած է 1096 թուին՝ առաջին խաչակիրներու
ժամանակ ուխտաւորներուն զայն իրքեւ պարկեցտ պատտառելի
վերաբերու կրտծ ըլլալուն համար։ Եւ յետոյ քաղաքակրթութեան
առաջացման հետ ուսարկուն ալ կոկուելով՝ խառնուած է ընդ-
հանուր արդուզարդի ագանելեաց կարգին մէջ, ու այսօր սահման-
ուած է իբրեւ կրինոց, արտագգեստ կամ թիկնազգեստ ծառացող
վերնազգեստ։ Կիրառութեան պարագային, նիւթին ու ձեւին հա-
մեմատ անունն ալ կ'փոխուի. օրինակի համար հաստ կերպասով
ու մինչեւ կոճղը իջած ձեւը կ'անուանուի ճամբորդի ուսարկու.
նոյն նիւթով մինչեւ դնտղուց եղած ատեն քաղքինքի ճմրան ու-
սարկու. թաւիշով, սնտուսով ու ժանեակներով զարդարուած ու
մինչեւ միջնամատին ծայրը հասածն արդուզարդի ուսարկու կ'ըս-
ուի. մինչեւ մէջքը կամ մինչեւ կոնքի հաւասարութիւն շինուած-
ներն ամրան ուսարկու. մինչեւ թիկանց հաւասարութիւն եղած
ատեն (ի՞շապէս 552րդ նկարը) ուսնեցակ, թանկարժէք նիւթերով,

մինչեւ ձեռքին վրայ ու մուշտակապատ շինուածներն ալ հանդես-
ամենաց . և վերջապէս Եւրոպացւոց մեզի ներկայացուցած
ուսարկուներու թոհ ու բահին մէջ տեղի կուտայ նաեւ մեր տե-
ղականը , որ ասուի կամ մետաքսեղէն վառ գոյնով նիւթերու վրայ
Արեւելքան նուրբ ճաշակով ու համակ ոսկեթել բանուածքով ու-
սարկուներու մեծաքանակ արտածում կ'ըլլալ գէպի Սնգդիա և
Ամերիկա , որոնց գեղեցիկ սեռը փառք կ'սեպէ զանտնք կրելը մեծ
արարողութեանց ժամանակ :

Միջանկեալ կերպով փութանք ըսել թէ զարմանալի է այս
իրողութիւնը, որ մենք մեր արտադրութեանց յարգը չենք չանչ-
նար, մինչդեռ այնամութեան գագաթնակէտը հասած օտար
ժողովուրդներ մեր շինածը կ'փնտռեն, կ'գնահատեն ու կրեն զայն.
իսկ մենք ափերով դրամ կուտանք ժանեակներու, ժապաւէններու
և ուղանքներու, որպէս զի պուտըրիկներու պէս զարդարուինք. չէ:

Գանձք այժմ ձեւելու եղանակին։ Հարլւրաւոր ուսարկություն
ձեւելու երկու գլխաւոր սկզբունքով կ'ըլլայ՝ ուսը սեղմօններով,
ինչպէս արդի ձեւերը։ Կամ առանց սեղմօնի, որ կ'անուանուի
նաև Բոլորչի վերարկումանք ոօն, ինչպէս Յ—Յ տարի առաջ
կ'գործածուէր։ Թերեւս զարմանալի թուի երբ ըսենք թէ ուսար-
կուներն ի՞նչ ձեւով ալ ըլլան, մենք զանոնք դարձեալ կ'ձեւենք
իրանազգեստի յետսամասին ու առաջամասին տիպարներովը, ինչ-
պէս կարգաւ պիտի բացատրենք։

Ուսն երկու սեղմօնով եւ ամէ՛ՅԱ Ենդ ձեւով ուսարկու ձեւելու եղանակի. — Ինչպէս ըսլինք, չափական դրութեամբ ուսարկու- ներ ձեւելու համար եթէ զայն կրողին ու է ձեւով իրանազգեստի մը տիպարն ունինք՝ գործն ինքնին կ'դիւրանայ, եթէ ո՛չ, նախ կարճ—իրանազգեստի յետսամասին ու առաջամասին տիպարները կ'պատրաստենք. և նոյն իսկ ասոնք ալ կընանք կրծատել, այն- պէս որ յետսամասին կռնամէջը, կռնածագն ու թիկնածագը գծելէ ետք, ուսանկեան կէտէն մինչեւ յետսակողման գօտեվայր շեղ գծով մը կ'կտրենք. և առաջամասին ալ փողեզրը, ուսածագն ու երբուծը գծելէ վերջ՝ մինչեւ գօտեվայր շեղ գծով մը կ'վերջա- ցնենք (Տե՛ս 537րդ օր. Ռ—Բ գիծը): Տիպարներուն այսքանը մի- այն շինելու համար չափերն ալ կընան կրծատուիլ. այն է 1ին,

2րդ, 4րդ, 5րդ, 6րդ, 7րդ, 8րդ, 9րդ և 10րդ չափերը միայն առնելով: Խոկ ուսարկուին երկանութեան չափը պէտք է առնել հագագէն ուղղաձիգ կերպով մինչեւ ուզուած հաւասարութիւնը. ուրեմն համարենք թէ մինչեւ ծունդին վարի հաւասարութիւնը կ'պահանջուի և ունեցանք 82 հարմէդ:

Արդ, առաջամասի տիպարին փողեղը կէս ընելով մէջտեղը կ'նշանակենք 0 կէտը (Տե՛ս 537րդ օր.). յետոյ Ծ—0 գիծն իր կոր ձեւովը կ'չափենք ու տեսնուած մեծութիւնն առաւել 2ով կ'դնենք և կէտէն դէպի երբուծին վրայ և հասած տեղը Յո՞ կէտը նշանակելով՝ քանտեղ կ'հաւասարեցնենք 0 և Յ կէտերուն, ուղիղ գիծ մը կ'քաշենք ու ձեւիչով կ'կտրենք զայն. իր թէ ուսագիրի ձեւով վերի կողմէն մաս մը բաժնած ըլլայինք:

Եթէ ուսարկուն զոյդ լայնքով առուեղէն կերպասէ պիտի շինուի, նիւթին քանակութիւնը պէտք է լլայ հագագէն վար առնուած երկայնութեան չափին երկու անգամին հաւասար և 50 հարմէդ ալ աւելի, ազինքն մէն մի երկայնութեան 25 հարմէդ. հետեւապէս 82+82+50=214 հարմէդ, որ լսել է իրեւ բուրակ թիւ՝ 2,15 մետր կերպաս:

Այժմ կերպասին լայնքը բանալով երկու գլուխներն իրարու կ'հաւասարեցնենք. և եթէ կերպասն հերք ունի՝ ծալք ձեւացած միւս կողմը կտրելով կ'դարձնենք միւս գլխուն, որպէս զի երկուքին ալ հերքը մէկ կողմ գտնուի: Ուրեմն, կրկնատակ կերպասին եղը կ'ուղղենք զիմացի կողմերնիս որ է ա—բ գիծ (Տե՛ս 538րդ օր.), շոյուած կողմը կ'առնենք զէպի ծախ՝ որ է բ անկիւնը: Եթէ ուսարկուին կրծեղը առանց վերելեալի պիտի շինուի, այսինքն շրթունք շրթունքի, այն առելն ներս շրջուելիք առքերանի համար ա—բ գծէն 3 հարմէդ զէպի ներսոք կ'քաշենք զ—դ գիծը, և կրծեղը ընդարձակութեան բաժինին համար ալ զ—դ գծէն 2 հարմէդ զուգահետարար զէպի ներսոք կ'քաշենք և հորիզոնանական գիծը: Սարստէն շուրջքի բաժինի համար 2 հարմէդ բ անկիւնէն վեր զ կէտը ճշտելով՝ հագագէն վար առնուած երկայնութեան չափը կ'դնենք սոյն զ կէտէն զ—դ հորիզոնականին վրայ և 82 հարմէդին հասած տեղին դէմ կէտ մը նշանակելով՝ կ'ունենական հագագի բարձրութիւնը. հետեւապէս առաջամասի տիպարին Դ—Զ գիծը կ'հաւասարեցնենք և հորիզոնական զծին (լա՛ւ

դիտէ այս ամենը 538րդ օր.): Յետոյ մեղքական երիզն իրբեւ կարկին գործածելով ու Յ կէտն ալ կերպոն համարելով՝ 0 կէտէն կ'քաշենք 0—0' աղեղը, և 10րդ չափին $\frac{1}{2}$ ովը՝ որ է 9 հարմէդ հետաւորութեամբ 0' կէտը կ'ճշտենք. ապա՝ տիպարին փողեղը առնելով՝ ասոր Յ ու երբուծէն բաժնուած վերի փոքր ուսամասն առնելով՝ ասոր Յ կէտը կ'կցենք Յ կէտին, խոկ փողեղը անկիւնը 0' կէտին հաւասարեցնելով շուրջը նուրբ գծերով կ'օրինակենք կերպասին վրայ. որպէս փողեղը կէսին դէմ 9 հարմէդ անջատութեամբ դէպի երբուծ կ'ձեւանայ առաջին սեղմօնը: Երկրորդ սեղմօնն ալ կ'աղմելու համար, և կէտէն կ'քաշենք Ծ—Ժ աղեղն ու 4րդ չափին $\frac{1}{2}$ ովը (կամ $\frac{1}{2}$ առաւելով) կ'հաւասարեցնենք Ժ կէտին հեռաւորութիւնը: Հիմա ալ յետսամասի տիպարին Խ կէտը կ'կցենք առաջամասի Խ կէտին և ունսաստրը Ժ կէտին, և ահա կ'կազմուի ուսին երկրորդ սեղմօնը: Յետսամասին ստացած խոտոր դիրքին մէջ Զ կէտին գիմաց Յըր չափին $\frac{1}{2}$ ովը Զ կէտը կ'նշանակենք ու մէջ Զ կէտին գիմաց Յըր չափին $\frac{1}{2}$ ովը 3/2 հարմէդ ընդարձակուքանակը կ'հաւասարեցնենք և կէտէն $\frac{1}{2}$ հարմէդ ընդարձակութեան բաժինի համար գրառօք և Զ' կէտին ու կ'քաշենք Ը—Զ' ծ—կ չեղ գիծը, որ ուսարկուին կռնամէջը կ'ներկայացնէ: Միեւնոյն ատեն կռնամէջի կարաբաժինն ալ կ'ձգենք, ինչպէս նաեւ Բ—Ժ, Ժ—Ի, Խ—Ծ, Ծ—Օ', Օ'—Ֆ, Ֆ—Օ, Օ—Դ—Ե—Դ գծերուն և դ կէտէն շեղակի կ'անցնինք մինչեւ ա կէտ: Անշուշտ նկատողութեան պէտք է առել թէ, սեղմօններուն կարաբաժինները մինչութեան պէտք է առել թէ, սեղմօնները մինչեւ կէտը մինչեւ ա կէտը մինչեւ զ կէտը բանալով՝ դէպի անութիւնն առեկան պէտք է առել թէ, երկրորդ անգամ կարկինին տակ աղեղ մը կ'քաշենք որ է ե—ը, երկրորդ անգամ կարկինին ոտքը կ'հաստատենք զ կէտին վրայ ու դ կէտէն հակադարձ աղեղ մը կ'ձգենք զէպի ե—ը աղեղին վրայ որ է բ—Ժ, և ասոնց իրարկուած կ'եղբանը կ'անուանենք Ք կէտ. երբորդ անգամ կարկինին ոտքը կ'հաստատենք Ք կէտին վրայ (Տե՛ս կարկինին նկարը) և մինչեւ դ կէտ բանալով՝ կ'քաշենք դ—Ե աղեղը. սոյն աղեղը կէս ընելով կ'ունենական Ք կէտը, և 4 հարմէդ դէպի ի—դ մասին

վրայ իջնելով ալ կ'նշանակենք և կէտը . և վերջապէս չորրորդ անգամ ըլլալով կարկինին ստքը կ'հաստատենիք և կէտին վրայ (Տե՛ս նկարը) և մինչեւ գ կէտ բանալով կ'քաշենք զ—ծ աղեղը՝ որ ստորոտին նախաձեւը կ'ներկայացնէ (Տե՛ս բոլոր սոյն մանրամասնութիւնները 538րդ օրինակին վրայ եւ այս վերջին աղեղը՝ որ կէտ կէտ գծով շինած են): Այս աղեղն անոր համար նախաձեւ անուանեցինք որ եթէ ստորան իրապէս զայն նկատած ըլլայինք՝ ծ կէտը , այն է կոնամէջի վերջաւորութիւնը խոռոշ մը ձեւացած պիտի ըլլար: Հետեւապէս ծ կէտէն 8 հարմէդ վարօք կ կէտը նշանակելով՝ այս անգամ ձեռքի ճարտարութեամբ կ'քաշենք կ—ի աղեղը , որ գրեթէ գ կէտէն 20 հարմէդի չափ հեռուն կ'խառնուի նախկին աղեղին: Կը մնայ կ—ի—գ աղեղին 2 հարմէդ գուգահեռարար շուրջքի բաժին ձգել ու կերպար կարել:

Այժմ դիւրին է ըմբռնել թէ երկայնութեան չափին վրայ բարդուած 25 հարմէդ աւելի կերպարն ինչի կ'ծառայէ . որովհետև ծոծրակը , աղն է զ կէտը հագագէն (որ է դ կէտ,) 20—22 հարմէդ վերօք կ'կազմուի ու 3 հարմէդ ալ շուրջքի և կարաբաժինի կ'սպառի:

Սա ալ կարեւոր է գիտեալ թէ զոյգ լայնք՝ այն է 140—144 հարմէդ լայնք ունեցող կերպարներուն վրայ՝ հագագէն վար մինչեւ 140 հարմէդ երկայնութիւն կընայ շինուիլ , առանց յետակողմը ծուէն գրուելու :

Ուսարկուներուն ամէն տեսակ օծիքներ ալ կընայ դրուիլ , օրուան նորաձեւութեան համեմատ :

Եզրակացութիւն .— Ուսարկու մը ձեւելու համար թերես չափազանցութիւն համարուի այսքան մանրամասնութիւն . բայց գիտնալ պէտք է թէ մենք գրեթէ չտեսանք ուսարկու մը որ զայն կրողին վրայ ներդաշնակորէն կեցած ըլլայ , այլ ոմանց վրայ իսոպուղները դէպի կոնամէջ սահած են ու ծղիներուն դէմ կծկուած , ոմանցն ասոր հակառակը , ոմանցն առաջակողմերը շեղակի բայց մնացած , ոմանց ուսին սեղմօններն աննպատակ տեղերու վրայ վերջացած , ոմանց քովը կախ , ոմանց յետակողմը կարճ , ևն . ևն .: Մինչդեռ մեր սոյն չափական գրութիւնը՝ որ չափատուին տիպարներով ու եռանկիւնական սկզբունքով կ'ձեւուի , վերը յիշուած բոլոր տգեզութիւնները կ'բառնայ և առանց փորձի կը կարուի ու կ'հագնուի : Ասոր ալ ապացոյցը սա՛ է թէ մեր դրու-

թեամբ ձեւուած իւրաքանչիւր ուսարկու՝ կարելի չէ ուրիշի մը հագցնել որ վայելուչ կենայ , բաց ի այն անձէն՝ որուն վրայէն սունուած են չափերը: Սա ալ չմոռնանք ըսելու թէ սոյն տաղուածութիւնով՝ վարժ ձեւողի մը համար , չափառութիւնովն համդերձ առ առաւելն կէտ ժամ միայն կ'տեւէ . և ա՛լ ամէն ապահովութիւն ձեռք բերուած կ'ըլլայ :

* *

Ուսն երկու սեղմօնով կէտ «զլօշ» եւ «զլօշ» ուսարկուներ . — Այս երկու ձեւերն ալ շինելու եղանակը նախարդ հրահանգին նամանն են , բաց ի ուսին սեղմօններէն , զոր կէտ զլօշ ձեւելու համար 7ական հարմէդով կազմելու է (Տե՛ս 547րդ օր .) և զլօշ շինելու համար ալ հական հարմէդով (ինչպէս 550րդ օր .): Որովհետև քանի ուսին սեղմօններուն անշատութիւնները փոքրանան , այնքան կոնամէջը ներկայացնող զ—կ գծին շեղութեան աստիճանը կ'նուազի , մանաւանդ զլօշ շինուած ատեն զ—կ գծին շեղութիւնը հակառակ կոզմը կ'կազմուի (լաւ բաղդատէ 538 , 547 եւ 550րդ օր , զ—կ զծերուն սասցած դիրերը): Այս պարագալին կերպարն քանակութիւնն ալ պէտք է աւելնայ , այսինքն փոխանակ մէն մի երկայնութեան 25 հարմէդ աւելի հաշուելու՝ 30—35 ըլլալու է :

* *

Կրծիզրի զանազան ձեւերը . — Ուսարկուներուն կրծեզրն ալ կրկնոցի կամ արտազգեստի նման միաշար կոճկէնով (ինչպէս 547րդ օր .) ու թագուցիկ օղակներով կ'շինուին . ինչպէս նաև կրկնաշար կոճկէնով ու կրծօծիքներով (Տե՛ս 544րդ նկարն ու 550րդ օրինակը):

Կրնայ ըլլալ որ բարձր-ծալօծիք դրուի ու հագագէն մինչեւ կրծամէջ՝ կրծօծիքը շինուի (ինչպէս 547րդ օր .): Այս ձեն ընդհանրապէս կոճատ կ'ըլլայ , այսինքն միայն օղակին կողմը կրծօծիք կ'շինուի , որ կրնայ զանազան համեմատութիւններ առնել . օրինակի համար , միաշար կոճկէնին վերելակի բաժինը կազմող 5 հարմէդ լայնութեան հաւասար կոճատ կրծօծիք մը բաւական համալրուի (գրեթէ 547րդ օր . ե—յ—ա ձեւը) , երբեմն ալ վերելակի սահմանէն գուրս կ'ըլլայ (ինչպէս ե—ն—ա ձեւը) , ու երբեմն ալ ար ձեւը մեծ համեմատութիւններ կ'առնէ՝ մինչեւ երբուծ շարունակուելով ու տարբեր նիւթերով ծածկուելով :

Բոլորչի կամ անկիւնաւոր գահվաներով ալ կրնայ շինուիլ .

նոյն իսկ գահվրային առաջակողմն ուրարի նման մինչեւ ստորոտ շարունակուելով (ի՞նչպէս ԿԲ. տախ. 53Երդ նկարը): Այս կերպով ձեւելու համար, նախ ուսարկուին տիպար մը կ'ձեւագծենք, յետոյ գահվրային պահանջուած ձեւը տալով կ'բաժնենք և ուսին սեղմօններն իրարու միացնելով՝ գահվրան միակտոր կ'ձեւենք, իսկ մարմինն ալ մնացած գերքովը կ'ձեւենք: Թերեւս վարի կողմն ա՛լ աւելի զլօս շինել ուզուի. այս պարագային վարի կողմի տիպարը կերպասին վրայ փոխադրելով, չորս հինգ անգամ մաս կ'գարձնենք (ի՞նչպէս ԽԱ. տախ. 25Երդ թեւին տիպար): Թերեւս այս վերջինին կունամէջը կամ առաջակողմը ծողեր ալ ձեւացնել ուզուի, կամ փոխփոխումներ, որոնց համար սպառելի բաժինը զատ հաշուելու է:

* * *

ՄԵԼ ՍԵՂՄՕՆԵՎ ՈՒՍԱՐԿՈՒ.— Ո՛րպէս զի սեղմօնը ճիշտ ուսի մակերեսին վրայ գտնուի, առաջամասի տիպարին Ծ կէտէն 2 և և կէտէն ալ 3 հարմէդ վարօք ուսումնու մը կ'բաժնենք (Տե՛ս 54Երդ օր.), որ է օ—ֆ: Կրծեզրի բաժինը կարգագրելէ վերջ, տիպարին Դ—Զ գիծը կ'հաւասարեցնենք Ե—Գ գիծն, ու Ֆ կէտէն կ'քաշենք 0—0' աղեղը և 10րդ չափին $\frac{1}{2}+2$ հարմէդ անջատութեամբ կ'հաստատենք 0' կէտը: Յետոյ տիպարէն անջատուած ու սամասի տիպարին Ժ կէտը կ'կցինք Ծ կէտին ու թիկնածագին երկայնութեանն ուսածագին՝ որ է Փ կէտ. ու այլևս ուսարկուն կազմուած կ'ըլլայ. բացառութիւնը միայն լ կէտն է որ այս անգամ ի—զ լարին կողմը նշանակելու է և այն ալ 2 հարմէդով միայն. ինչպէս նաև յետուակողմը պէտք չկայ երկարելու, որ է խ կէտ (լա՛ւ դիտ սոյն 54Երդ օրինակը):

* * *

ՀԱՅՈՒՍԱՄԵԼՅՈՆ.— Ուսն երկու սեղմօնով ու ուսարկուի Ճև հանդիսամեկնոց=սօռքի ՏՐ պալ ալ կ'ըլլայ (Տե՛ս 550րդ օր.), ու թանկարժէք կերպասներով. և այս կարգի կերպասներուն շայնքն ալ ներ ըլլալով՝ հարկ կ'ըլլայ ուսարկուն քանի մը մարով կազմել, և այս ալ այնպէս մը որ, նոյն մարերը թէ՛ վայելուչ ըլլան և թէ՛ ծուէն ծուէն չերեւան: Ուստի նախ ուզուած երկայնութեամբ ու զլօսին ընդարձակութեանը համեմատ ուսարկուին թուղթէ տիպարը կ'շինենք. յետոյ անոր ստորոտը կերպասին լայնութեան

համեմատ բաժնելով կնշանակենք և և ձ կէտերը (Տե՛ս 550րդ օր.), և ստոնց և կէտը Ձ կէտին ու ձ կէտն ալ և կէտին հետ ուզուի գծերով կ'միացնենք ու կտրելով իրարմէ կ'բաժնենք: Այս մէն մի մասը նեղ կերպասին երկայնութեանը դնել և անջատուած եղբարէն կարաբաժիններ ձգելով կերպասը կ'կորենք: Կերպասը գծուոր եղած տակն՝ անոնց ուզութեանը մասնաւոր հոգ տանեցնութեամբ առաջ առաջ լու է (ի՞նչպէս կ'երեւայ սոյն 550րդ օր. վրայ): ու անգիծ եղած լու է կ'կամ կ'երեւայ սոյն 550րդ օր. վրայ): ու անգիծ եղած լու է կ'կամ կ'երեւայ հետեւելու է, որ մէկ եղրը չափացնուց շեղ ու միւսն ուզուի չկազմուի:

* *

Եղորշի ուսարկուներ.— Լաւ է որ բոլորչի ուսարկուներն ալ պատրաստաւին թլիփներու նման (Տե՛ս 1.թ. տախ. 229րդ օր.), որպէս զի զլօսին խոպոպները վայելուչ կերպավ կազմուին: Ասոր ստորոտին աղեղը գծելու համար, և և Դ կէտերը լարով մը Ասոր ստորոտին աղեղը գծելու համար, և և Դ կէտերը լարով մը նշանակելով կարկինին երարու կ'միացնենք ու մէջտեղը կէտ մը նշանակելով կարկինին ստրը կ'հաստատենք անոր վրայ. այս գործողութեամբ քովը կարձ կ'կազմուի. ուստի ետեւի և առջեկի կէտերը նոյն աղեղին վրայ կ'կազմուի. ուստի ետեւի և առջեկի կէտերը նոյն աղեղին վրայ կ'պահենք ու քովը Յ—Կ հարմէդ վարօք կէտ մը նշանակելով մահիկի ձեւ գծով մը կ'վերջացնենք:

* *

Ուսարկուները կարելու բանի մը կարեւոր հրահանգներ.— Գըլիսաւոր ուշագրութեան առնելու պարագան ուսիր սեղմօններուն մէն մի կողմի իւրաքանչւրին ալ վերջաւորութիւնը իրենց ասհամանուած տեղերէն երկայն կամ կարձ կարուելու չեն, սրոնք են մի ից ցցունները. ուստի նախապէս այն տեղերը մակենթակարով խաչածն գծեր կազմելու է. յետոյ շրջօնի կողմէն մինչեւ նոյն խաչերուն կերպոնը կարելու է:

Եթէ կերպասն հասա ըլլայ ու մէջն անտառ դնել չուզուի, այն ատեն կանամէջին ու սեղմօններուն կարերը բանալով երեսի կողմէն երկու կողմէնը թափանց կարերով զարգարելու է (ի՞նչպէս կ'երեւայ 54Երդ նկարին վրայ), սեղմօններուն եռանկիւն կ'երեւայ 54Երդ նկարին վրայ), սեղմօններուն եռանկիւն ծալքեր ձեւացնելով. Ո՛րպէս զի շրջօնի կողմը բացուած կարերուն շուրջը լերի չերեւայ, նախապէս անոնց տակը իր կերպասէն չեղ կտրուած երկայններ դնելու է ու թափանց կարերը միատեղ ընելով՝ վերջին թափանց կարէն 5—6 հազմէդ զուգահեռարար աւելի

ՃԳԵԼ ու մնացածն յարդարելէ ետք, շուրջը փոքր մանուածանկիւն կտրտելու է (ի՞նչպէս 545րդ նկարը): Եթէ երեսի կերպասը շատ հաստ ըլլայ, ներքեւինը բարակ ասուիէ դնելու է: Եթէ երեսի նիւթը գճգճուող տեսակէ է, շրջօնի եզրերը նախապէս շեղ կտրուած դիպակէ երիզներով բուծիններ շինելու է: Մէջն առառ եղած ատեն գարձեալ անհրաժեշտ է սեղմօններուն տակը բարակ ասուիէ երիզներ դնելը, որպէս զի ցցուններուն թափանց կարերը միատակ կերպասի վրայ չըլլան:



Պ Ա Ս Ը.

«ԳԼՕՇ» ՕՉԻ ՔՆԵՐ

— (Տե՛ս դարձեալ ԿԳ. ԵԼ ԿԴ. Տախտակները)

Գլօշ օձիքը բարձր օձիքին չափազանցեալ ձեւն է ու վերի շուրջը զլօշ ձեւացած, որուն կէուը 2 կամ 3 մասերով կը բաղկանայ, որպէս զի կարենայ դէպի գուրս հակիլ (Տե՛ս 551 և 552րդ նկարները): Այս օձիքը 8—10 տարի առաջ շատ նորաձեւութիւն էր և ամէն տեսակ հագուստի վրայ ալ կ'դրուէր. միայն թէ կաչուն հագուստներուն դրուածն արտազգեստներուն դրուածէն տարբեր սկզբունքով կ'ձեւուի. ուստի նախ բացատրենք այս վերջինը:

Արտարին հագուստներու վրայ դրուելիք «զլօշ» օձիք. — Ամբողջ օձիքը վեց մասէ բաղկացած միջին բարձրութեամբ զլօշ օձիք մը ձեւագծելու համար, հագուստին փողեզրի մեծութիւնը չափելով համարենք թէ գտանք 22 հարմէդ: Արդ, տիպարցութղթի մը վրայ նախ ձեւոցով Ա.—Բ հորիզոնական և Ա.—Ե ուղղահայեաց գծեր կ'քաշենք (Տե՛ս 539րդ օր.): Ա. կէտէն Ա.—Բ գծին վրայ կ'նշանակենք հագուստին փողեզրի մեծութիւնն եղող 22 հարմէդն ու կ'հաստատենք Բ կէտը, և այս կէտէն կ'քաշենք Բ—Զ փոքր ուղղահայեացը: Ա. կէտէն Ա.—Ե գծին վրայ 2½—3 հարմէդ բարձրութեամբ կ'նշանակենք Գ կէտն ու մեղմ կոր գծով մը կը միացնենք Բ կէտին որ կ'ներկայացնէ օձիքին արմատը: Գ կէտէն վեր կ'նշանակենք սովորական բարձր օձիքի մը միջին լայնու-



թիւնը՝ որ է Յ^{1/2} հարմէդ ու կ'ունենանք Դ կէտը . և Բ կէտէն
Բ—Զ ուղղահայեացին վրայ ալ կ'նշանակենք նստազ ՚/ցով՝ այն է
5 հարմէդով Զ կէտն ու Դ և Զ կէտերը մեզմ կոր գծով մ'իրա-
րու կ'միացնենք (Տե՛ս 539րդ սպիտակ օրինակին Դ—Ժ—Թ—Զ կէտ-
կէտ զիծր): Յետոյ, Գ—Բ գիծը՝ կ'բաժնենք երեք հաւասար մա-
սերու և կ'նշանակենք ի, Բ կէտերը, ինչպէս նաև Դ—Զ գծին
վրայ ալ Թ, Ժ: Քանակը կ'հաւասարեցնենք ի և Թ կէտերուն ու
կ'քաշենք Է—Թ—Ի գիծը: Այժմ յետսակողմի վլօօին բարձրու-
թեանը համար միջին հաշուով Դ, կէտէն 8 հարմէդ վերօք կ'ճըշ-
տենք Ե կէտը, նոյնչափ ալ Ժ կէտէն վեր կ'դնենք Լ կէտին հա-
մար. իսկ Թ կէտէն Թ—Ի գծին համար 1 պակաս՝ որ է 7 հար-
մէդ: Ապա՝ կարկինը Դ կէտին վրայ զետեղելով, մինչեւ Ե կէտ
կ'բանանք ու կ'քաշենք Ե—Խ փոքր աղեղը. Ժ կէտէն կ'քաշենք
Լ—Ծ և Լ—Կ ու Թ կէտէն ալ Ի—Հ և Ի—Զ: Ապա ուրեմն, Դ—Ե
գծին կէտ մեծութիւնը՝ որ է 4 հարմէդով կ'ճշտենք Ե—Խ, Լ—Ծ
և Լ—Կ աղեղներն ու Թ—Ի գծին կէտ չափովը, այն է Յ^{1/2}ական
հարմէդով ալ Ի—Զ և Ի—Հ աղեղները: Արդ, ԽԴ, ԿԺ, ԾԺ, ԶԺ
և ՀԺ կէտերը մէյ մէկ գոգաւոր գծերով իրարու կ'միացնենք,
և ամէնէն վերջ Խ կէտէն զմրեթարդ կոր գիծ մ'ոկոելով Ե կէտէն
1/2 հարմէդ վերօք կ'անցնինք դարձեալ 1/2 հարմէդ վեր ու կ'ձգենք
Ծ կէտին վրայ, նոյնպէ՛ ալ կ'քաշենք Կ—Հ զմրեթարդ գիծը.
իսկ Զ—Զ գիծը զրեթէ քառորդ բոլորակի մը ձեւը պէտք է առնէ:
Ահա մինչեւ արտեղ կ'աւարտի կէտ օձիքին Յ մասերը, որոնք են
Ա. Բ. և Գ. (Տե՛ս այս ամեն մաերանանութիւնները 539րդ օր վրայ):

Այժմ այս տիպարին ներքեւն ուրիշ տիպարցու թուղթ մը
զնելով՝ նախ փշանուակով կ'օրինակենք Գ—Ը, Դ—Դ—Խ, Խ—Ծ
և Ծ—Ժ—Ը գծերը, որ է Ա. մասը. յետոյ ներքեւի թուղթը ետ-
քաշելով՝ պարապ տեղի մը վրայ կ'օրինակենք Ը—Կ, Ը—Ժ—Կ,
Կ—Հ և Հ—Ժ—Կ գծերը, և կունենանք Բ. մասը. դարձեալ պա-
րապ թուղթի մը վրայ կ'օրինակենք Ե—Բ, Ե—Ժ—Զ և Զ—Զ—Բ
գծերը, որ է Գ. մասը: Այս ամէնուն շուրջը ձեւիչով կտրելով՝
երեք մասերն ալ կունենանք անջատ (Տե՛ս 540րդ Ա. Բ. և Գ.
մասերը զնուեն): Այս մասերն իրարու կարուած ատեն
վերի եղու բացուած հողմահարի նման գրեթէ կիսաշրջանակ մը
ձեւացնելու է, ուստի կերպարը ձեւելէ առաջ տիպարներուն վե-

բի կողմերը մէյմէկ մաս իրարաւ կցելով բազգատելու է (Տե՛ս
54 լրդ օր.) , միւնչո՞ն ատեհն Ա. մասը եղած տեղին վրայ և—Ծ
գիձն օրինակել և տիպարը գարձնելու է դէպի գուրաւ՝ որ է Ա.
մաս , ու մէջտեղի կարն ալ բազգատելու է , որպէս զի Խ՛ի , ԾԿ և
ՀԶ անկիւնները խոռոշ կամ ծայր ձեւացած ըլլան : Կակառակ
պարագային յարգարելու է (Լա՛ դիտէ 54 լրդ օր . ուր մեն մի մա-
սին անկիւններն ալ որու կ'տեսնուին իրենց Եւանսկ տաներով ,
ուսոն կարծես խղուցի մը ձեւն առած են :

Կարելու կիրապը .— Սոյն օձիքին կարելը շատ խնամք կ'առահանջէ : Արդ, մէջի պնդածուէնը պատրաստելու համար, այս ամէն մէկ տիպարին բաւարար չորսական հատ լաւ տեսակ կանեփեայ կտաւ կ'առնենք, ու զոյգ զոյգ ընելով՝ մեքենապվ կարգ կարգ թափանց կարեր կ'ընենք որ կարծրանան . լաւ մը կ'արդուկենք և տիպարները գնելով՝ շուշը խնամով կ'գծենք ու աւելորդները կ'արգարինք (Տե՛ս 54Հրդ օր, մութ սուեռով Ա. ծեր) : Յետոյ ամէն մէկ պնդածուէնը կերպասի շրջօնին վրայ դնելով շուրջը կ'գերակարենք՝ երկայնութեան վրայ կարելի եղածին չափ կերպասը պրկելով, որպէս զի գեպի իր վրայ դառնալու արամագրութեւնն ունենայ: Եթէ կերպասը գունանոր է՝ մէն մի մասին մէջաեղի հորիզոնական արամագիծը կերպասի գծերուն ընթացքով ըլլալու է (ի՞նչպէս 54Որդ օր, Ա. Բ. եւ Գ. մասերը): Հոսկ յետոյ, շուրջը կարաբաժին ճգելով՝ կերպասին աւելարդները կը յարգարենք (Տե՛ս 54Հրդ օր, շուրջի սպիտակ ցըսնակը, որ է կերպասին կարաբսժինը): Հիմու ալ իւրաքանչիւր մասն իր յարակից մասին դնելով՝ պնդածուէններուն արմատէն կերպասներն իրարու կ'կարենք ու բանալով շուրջերը կարով կ'հասատատենք պընդածուէնին հետ: Այս կարերուն ներքելը հիւսակտուէ շնորհիղներ դնելով՝ երեսի կողմէն մէջմէկ նրբաւարտ ու մէյրէկ ալ լայն թափանց կարեր ընելէ վերջ, բոլոր շուրջի կարաբաժինները կը շրջենք պնդածուէնին վրայ ու մանր մանր կ'գերակարենք, և բարձր օձիք կցորդելու նման հագուստի փողեղրին կ'կցենք, ինչպէս նաև արմատն ալ զոյգ թափանց կար կ'ընենք: Այս օձիքին առ բերանը որ կը ճօձիքի նման վերի կողմն երեսէն պիտի տեսնուի (Տե՛ս 55Իրդ նկար), հագուստին կերպասէն ալ կ'ըլլայ ուրիշ զարգանիւթով ալ, ամէն պարագայի, վերի շուրջը միակասր

պէտք է ծածկել, ու միմյայն ետեւի չորս մասերուն արմատը մահկիլի ձեւ զատ կառուվալ մը, և շրթունքին թափանց կարերը շրջօնի կողմէն բնելու է, որ գէպի երեսը պիտի հակի:

Կազմուն հագուստներաւ վրայ դրաւելիք «զլօշ» օձիքները .— կըպ-
չուն հագուստներւ վրայ դրաւելիք զլօշ օձիքները սովորական
բարձր օձիքի տիպարով շինելու է (ինչպէս 548րդ օր.), որպէս զի-
նուխ վիզին շուրջը լաւ մը պատէ և փերի կողմը միայն գէպի
դուրս հակի, մինչդեռ վրանցներուն արմատէն սկսելու է զլօշը
որ հագուստին օձիքը չկաշկանդուի, ու ասոր համար է որ նա-
խորդ հրահանգի Գ—Ը—Ե—Բ գիծը (ՏԵս 539րդ օր.) կորնթարդ
ձեւով շինել պէտք կ'ըլլայ: Իսկ փերի զլօշ ձեւը գծելու եղանակը
նախորդ հրահանգին նման է (Լ.ա՛ւ բաղդատէ 539րդ օրինակին սոյն
548րդ օրինակին նետ):

Ար օձիքը չորս մասով ալ կ'ըլլայ (Տե՛ս 54րդ օր), որ
կ'առնուի լ—ժ—լ, գծին բաժանումով, այնպէս որ Ա. մասը փոքր
կ'ըլլայ ու Բ. մասը մեծ, որով զօւք գէպ ի յետսակողը կ'կազմուի:

Կ' ԸԼԼՊՎ ալ որ վերի շուրթը փոխանակ աղեղնաձեւ շինուելու
մէն մի մասը գոգաւոր գծերով առնուի (Տի՛ս 55Յրդ օր.), ինչպէս
են Խ—Ծ, Կ—Հ և Զ—Ղ գիծերը. որոնք իրարու միացած ատեն
մէն մի կարին վերէ ծալրն անկիւններ կազմուին ու մէջտեղերը
դրասանդգի նման ալիքներ: Թերեւս Գ. մասին Ղ. անկիւնը կազ-
մել չուզուի ու Զ—Ղ կոր ձեւովն առնուի (Լա՛տ դիէն 55Յրդ օր.
Գ. մասին կետեկ գծով ձեւը):

«Գլու» օձիքը ուսարկուին հետ միակառը կազմելու կերպը . —
Եթէ ուսարկուին զլօշ օձիք գնել ուզուի՝ երեք մտոչ բաղկացած
զլօշ օձիքը կրնայ անոր հետ միտկասր ալ ըլլալ (Տե՛ս 54Երդ օր),
պայմանաւ որ ուսի սեղմօնները 10րդ և 4րդ չափերուն կէտ
մեծութիւններովը կազմուած ըլլան (ի՞նչպէս 538րդ օր.), կամ զատ
զատ մարերով (ի՞նչպէս 550րդ օր.) որպէս զի օձիքին վերի զլօշը
բաւարար տարածութիւն ունենայ :

Արդ, այս գասի առաջին հրահանգին համեմատ ուսարկուն
կերպասին վրայ ձեւագծելէ ետք, չ, Ծ և Օ', Օ անկիւները
մերմէկ ուղիղ լարերով իրարու կ'միացնենք. Ենչպէս նաեւ գ—դ

տրամագիծը կ'չարունակենք դէպի վեր՝ որ է զ—դ—է։ Յետոյ ձեւոցին անկիւնը 0 կէտին ու եղրը դ կէտին հաւասարեցնելով կ'քաշենք 0—զ փոքր ուղղահայեացը՝ ապա ձեւոցին անկիւնը կ'գործ ձլնենք 0' կէտին ու եղրը Ծ կէտին՝ կ'քաշենք 0'—է զիծը, ճիշտ այսպէս ալ ձեւոցը Ծ և 0' կէտերուն ուզգելով կ'քաշենք Ռ—Ռ, ժ և լ կէտերուն գնելով ժ—թ զիծը, չ եւ ժ կէտերուն առաջնորդութեամբն ալ Ռ—ժ զիծը։ Այժմ բարձր օձիքի լայնութեան համար յետասկողմին սահմանուած 54¹ հարսէգովը կը ճշտենք լ—ժ գծին բարձրութիւնը, միեւնոյն չափով ալ ժ—թ և Ծ—թ գծերը։ իսկ նզ հարմէդ պակասով՝ այն է նական հարմէգով ալ 0'—է, 0—զ և դ—է գծերը։ Ապա՝ թ, թ և է, զ կէտերը, մէյմէկ ուղիղ լորով իրարու միացնելէ վերջ, 0—0' լորը կէս լը նելով մէջտեղը կ'նշանակենք ի կէտը, նոյնպէս ալ զ—է լորին մէջտեղը լ կէտն, ու քանակը ի և լ կէտերուն հաւասարեցնելով կը քաշենք ի—լ—լ տրամալարը. ճիշտ միեւնոյն եղանակով ալ կ'քաշենք խ—ծ—ծ' տրամալարը։ Ապա ուրիմն, համարենք թէ զլուին բարձրութիւնը 7 հարմէդ շինել կ'ուզենք։ հետեւապէս ժ—լ, թ—հ. ը—ծ, է—զ և զ—ն կոր գծերը 7ական հարմէգով կ'կազմենք։ և կ—հ, ձ—դ և ն—է աղեղները գծելով կ'վերջացնենք։ Միայն սա՝ պարագան նկատողութեան առնելու է որ ն, ձ, դ, դ և ն անկիւնները և ծ' տրամալարեն կէս կէս հարմէդ հետու գտնոււին, որպէս զի կարաբաժինի նիւթ մնայ (լ.ա'ւ լիտէ 546րդ օրինակին բոլոր մանրամասնութիւնները, ինչպէս նաեւ կարաբաժինները, որ մի այն երկու կողմերը գծած ենք)։

Ասոր ալ պնդածուէնները ճիշտ նոխորդին նման կ'պատրաստենք և զանոնք կ'կցենք լ—ժ, ծ—0' և 0—դ գծերուն հաւասարութենէն դէպի վեր։

Պ Ա Ս Պ Բ.

Ն Ե Զ Ն Ա Փ Ո Ր Տ

(Տե՛ս ԿԵ. Տախ. 556(*) և միջեւ 564րդ նկաներն ու օրինակները)

Նեղ նափորաք վրանոց հագւաստներուն կարգին կ'վերաբերի, այնպէս որ նորածեւութեան բերումով ուսարկուին կամ կրկնոցին տեղը կ'անցնի։ Այս վրանոցը պարզապէս ուսարկուին բարեփոխ-

(*) Նախորդ ԿԴ. տախտակէն սոյն իԵ. տախտակէն անցնելու ժամանակ 2 թիւի վրիպում մ'ունեցեր ենք, այսինքն 553էն 556 փորագրեր ենք փախանուկ 554ով սկսելու։

ուած ձեւն է. որովհետեւ յետուակողմը մասնաւոր ձեւով յետասամս մ'ունի և անավ կրազին կոնակին ու մէջքին ձեւը կպչուն կերպով ներկայացնէ (Տե՛ս 564րդ նկարը)։ Սոյն վրանոցին մէկ ու բիշ ձեւն ալ կայ, որ ուսուշ'ութիւն նման մէկ կտորէ կ'բաղկանաց ու կէս փակած երեւայթ մունի (Տե՛ս յաջորդ դասը)։ և ահա ասոր համար է որ ներկայ ձեւը նեղ, նԱ.ՓՈՒԾԸ կ'անուանուի։ Նափորան աշնան և ձմրան եղանակի պատշաճող վերաբկու մ'է և ընդհանրապէս շատ երկայն կ'շինուի՝ նոյն իսկ մինչեւ կոճղը (ի'նչպէս 557, 563, և 564րդ նկարները). մինչեւ անգամ մէջը թանկարժէք բարակ մուշտակով ալ կ'պատուի։ Վերջապէս՝ ըստ մեր ճաշակին, նեղ նափորալ ուսարկուէն գերազանցապէս բարեձեւ, վայելուչ ու պատկառագգեցիկ վրանոց մ'է։

Նեղ նափորաին ափաբրը ձեւագծելու կերպը. — Մեր հիմնական սկզբունքին համեմատ նափորան ալ կպչուն իրանազգեստին չափերովը կ'ձեւուի, բացի Յրդ կրկին, 11, 12 և 12րդ կրկին չափերէն, որոնք չեն գործածուիր. բայց առանց տեղ ալ բացառիկ չափ մ'ունի, զոր կ'անուաննենք մեծ վանդակածիր կամ 11րդ կրկին չափ։ Արդ, սոյն չափն առնելու ժամանակ չափատուէն կ'խընդրենք որ բազուկներն առաջակողման գոտեվայրին վրայ դնէ, և մինք մեդրական երիզը թիւխոնց ու տիգերուն վրայէն (դարձեալ անութներուն բարձրաւթեան հաւասարութեամբը), կ'պարինք վանդակի ծիրը, և թոյլ կ'բազմ ստինքներուն ամէնէն արտահակ հաւասարութեան վրայ իրար կ'միացնենք։ Համարենք թէ եկա 102 հարմէդ, հետեւապէս չափատերին մէջ կէսը կ'նշանակենք 51, հարմէդ, իրրեւ մեծ վանդակածիր կամ 11րդ կրկին չափ։

Ասոր տիպարը բացառաբար առաջամասսէն ձեւագծել կ'սկսուի. ուստի ընդհանուր եղանակին համեմատ Ա, Բ, Գ, Դ, Ե և մինչեւ Զ կէտ կ'չարունակենք (Տե՛ս 556րդ օր.)։ իսկ Դ—Զ զիծն ընդարձակ սեղմօնով իրանազգեստին նման կ'շարունակենք մինչեւ քաղրթին զէմ որ է Դ—Զ—Ն զիծ։ Դարձեալ ընդհանուր եղանակ կին նման կ'քաշենք Է—Է և Լ—Թ զիծերն ու կ'նշանակենք Թ, և Թ' կէտերը՝ և ձեւոցը միշտ Լ—Թ' զիծն հաւասարեցնելով, այս անգամ Ի, Թ և Թ' ուղղահայեաց զիծերը կ'քաշենք մինչեւ յետուակողմ, որոնք են Ի—Գ, Թ—Բ և Թ'—Զ (Տե՛ս սոյն մանրամասնութիւնները 556րդ օր.)։ Թ'—Բ—Ն աղեղն ալ քաշելէ ետք,

Արդ կրկին չափը որ է $51+2=53$ հարմէգը առաջակողմի Զ կէտէն շեղակի կ'րերենք ի—Գ ուղղահայեացին վրայ և կ'հաստատենք յետսակողմի Գ կէտը . միեւնոյն թիւը կ'նշանակինք նաեւ առաջակողմի Բ կէտէն Թ—Բ գծին վրայ ու կ'ձշտենք յետսակողմի Բ կէտը : Հիմա ալ կ'սկսինք յետսամասը ձեւագծել . ուրեմն քանակը կ'հաւասարեցնենք յետսակողմի Բ և Գ կէտերուն և ստացած խոտոր գիրքովը կ'քաշենք Ա—Գ—Բ—Ձ խոտոր հորիզոնական՝ որ կոնամէջի հիմնագիծը կ'ներկայացնէ . միեւնոյն ատեն գօտեվարը , անութի բարձրութիւնն ու կոնքի հաւասարութիւնը պատրաստ ըլլալով , առաջին չափը որ է ՅՅ հարմէգ՝ հակադարձ կերպով կ'գնենք Բ կէտին վրայ ու երլիքին ծալլը Բ—Գ—Ա գծին վրայ բարձրացած տեղը կ'ձշտենք Ա կէտը : Այլեւս սովորական եղանակին համեմատ կ'քաշենք Ե , Դ , Ե , Բ , Թ , Ժ , Ֆ , Ի և Մ՝ գծերը . իսկ Զ կէտին դիմաց մէջքի լամութիւնը կ'նշանակինք Կ հարմէգով , որ է Խ կէտ . և Ծ կէտը կրկնակողմասի նման՝ Յրդ չափին ։ ովկը և անոր համեմատ կ'քաշենք Գ—Ծ—Յ գիծը : Գալով կոնակորին՝ ար հագուստին համար թիւնանկեան կէտը նշանակելու պէտք չկայ . ուստի քանակը ի և Խ կէտերուն հաւասարեցնելով կ'քաշենք Խ—Խ լարն ու Կ կէտն ընթացիկ կերպին համեմատ նշանակելով կոնակորը կ'քաշենք Խ կէտէն , որ գարձեալ Կ կէտին հանգիպելով կ'միանայ Խ կէտին և անկից ալ մինչեւ Յ կէտ , այնպէս որ յետսամասն ուստածագէն սկսելով եռանկիւն ձեւ մը կ'առնէ : Հիմա ալ կ'անցնինք առաջամատին թիրի մնացածը լրացնել : Արդ , Գ—Խ աղեղը քաշելով՝ Խ կէտը կ'ձշտենք ու երրուծը կ'գծինք մինչեւ Բ—Ի գծին մէջ աեղը , որ է ա կէտ : Այժմ առաջամատին ու յետսամասին անջրաբետը մնացած մատին վարի կողմը մակաթեւի վերի կողմին ձեւը տալու համար , նախ Ի—Ը գիծը մաս մը գէպի վեր կ'շարունակինք որ է Ի—Ը—Բ գիծ յետոյ թեւին Բ կէտը կազմելու հրահանգին համեմատ՝ տիպարնեներուն Գ—Ը—Ի (Տե՛ս 73 էջ Բ . օրինակը) գծին ։ այն է 10 հարմէգն այս անգամ առաւել Չով կ'գնենք Ի կէտէն Ի—Ը—Բ գծին վրայ և կ'հաստատենք Բ կէտը , ապա ձեւոցը Բ—Թ գծին հաւասարեցնելով՝ Բ կէտէն ուղղահայեաց գիծ մը կ'քաշենք որ յետսամասի կրնակորին միանալով կ'կազմուի գ կէտը (Զանազան կազմութեանց վրայ կ'պատահի որ սոյն գ կէտը ուստանկեան կամ թիկ-

նածագին հանդպի) : Ապա ուրեմն , Բ—Գ գիծը կէս կ'ընենք ու մէջտեղը դ կէտ անուանելով՝ յետսամասին Ե ուղղահայեացը կտրած տեղէն , այն է Ե կէտէն գմբեթարդ կոր գիծ մը մ'սկելով կ'տանինք մինչեւ դ կէտ և մ'չա գծին գմբեթարդ ձեւը պահելով՝ կ'ձգենք մինչեւ Ա կէտ : Ճ—Յ գիծը կէս կ'ընենք ու մէջտեղը զ կէտը նշանակելով՝ կոնակորին՝ այն է Լ—Կ—Խ գծին շարունակութիւնը կ'էտէն կ'փոխագրենք մինչեւ զ կէտ . և զ կէտէն մինչեւ Բ' կէտ մեղմ գոգաւոր գծալ մը կ'քաշենք կոնքի հաւասարութիւնը : Այժմ ակներեւ է թէ Խ—Պ և Խ—Յ գծերն իրալու վրայ ելած ըլլալուն պատճառաւ՝ տիպարն իրարմէ չենք կրնար բաժնել (Տե՛ս 556րդ օր . մոր ստուերով մասը) . ուստի ներքեւը թուղթ մը զնելով յետսամասին ձեւը փշանուակով կ'օրինակենք ու կ'կորենք . և ապա առաջամասն ու թեւը կ'մնան միակտոր , երբուծէն վարօք հատու սկզմոն մը ձեւացնելով :

Աերպար ձեւելու կերպը . — Համարենք թէ նախ յետսամասը ձեւել կ'սուզենք ու անոր ալ կէս կոնքի հաւասարութենէն վար՝ կոնամէջը հակածալով և քովիրը թիւնացի նման ծալեր ձեւացընելով (Տե՛ս 564րդ նկարը) . հետեւապէս կրկնոց ձեւելու հրահանգին համեմատ (Տե՛ս 163րդ էջ) , կերպարին ծալքը Փ—Բ գիծ անուանելով (Տե՛ս 578րդ օր.) 10 հարմէգ ներսօք կ'քաշենք հակածալի բաժինին տրամագիծը ներկայացնող Օ—Ֆ գիծը : Տիպարին Զ և Մ' կէտերը կ'հաւասարեցնենք Օ—Ֆ գծին , Խ—Ե գծին ու կոնամէջին ընդարձակութեան բաժինները կ'ձգենք . ինչպէս նաև կոնամէջին , կոնածագին , թիւնածագին ու կոնակորին կարաբաժիններն ալ գծելէ ետք , Խ կէտին կարաբաժինը գուրու կը նշանակենք Յրդ չափին կէտը՝ որ է Յ հարմէգով ալ բ կէտը և այս թիւին կէտը՝ այն է 1 $\frac{1}{2}$ հարմէգով ալ բ կէտն ու քանակը ա բ կէտերուն հաւասարեցնելով կ'քաշենք ա—բ—գ գիծը . յետոյ Խ—Յ գծին կարաբաժինը կ'շարունակենք բ—գ գծին վրայ և Զ կէտէն Զ—Յ գծին վրայ Յրդ կրկն չափը՝ այն է 7 $\frac{1}{2}$ հարմէգով կ'ձշտենք Յ կէտը (Տեղի անձկութեան պատճառով երկայնութիւնը 7 $\frac{1}{2}$ հարմէգ նշանակութիւնին , երեւ ոչ մինչեւ 9 $\frac{1}{2}$ հարմէգ կրնայ ըլլալ . այսինքն զետինեն 5—6 հարմէգ կարգին) , ու միեւնոյն թիւով ալ կ'ձշտենք Խ—Գ գիծը , և կ'քաշենք սոսորափ Բ—Ֆ ուղղահայեացն ու Ֆ—Գ մեղմ կոր գիծը : Բովի ծալին համար 5 հարմէգ զուգահեռական

լայնութեամբ կ'քաշենք նաեւ դ—դ' գիծն ու կերպառը կ'ձեւենք (Լաւ դիտէ 558րդ օր . սուեւրով ձեւը , որ կերպասին կտրուած դիրքը կ'ներկայացնէ): Միայն մոռնալու չէ և կէտին վրայ ձեւիչով հատ կէտ մը նշանակել , որ յետոյ թեւին հետ կցորդելու աստիճանը ճշուի :

Նեղնափորտին առաջամասն երկու կերպով կ'ըլլայ , մէկ մը ճիշտ տիպարին նման ուղիղ և մէկ մ'ալ ուղնտորէն դէպի սոսորոտը շեղ դիրքով ծալ մը ձեւացնելով (ի՞նչպէս 563րդ նկարը) , որ կարծել կուտայ թէ երկու վրանոց իրարու վրայ հազնուած է :

Արդ , համարենք թէ այս վերջին կերպովը շինել կ'ուղենք . ուստի Զրդ կրկին չափին երկայնութեամբը և գոանվայրէն մինչեւ ուղնտոր ու քանի մը հարմէդ ալ կարաբաժին հաշուելով՝ երկու երկայնութիւն կերպաս կ'կտրենք : Ասոնց մէկ հատին եզրը Ա—Բ գիծ համարելով (Տե՛ս 569րդ օր . ուր միայն վերի կողմի մէկ մասը ներկայացնցած ներ) , երէ կրծելոր ըրթունքի կենալ կ'ուղուի , ուրեմն Յ հարմէդ զուգահեռաբար ներս ծալելով վերէն մինչեւ վար կ'դերակարենք , որով կ'ունենանք Գ—Դ' գիծը (Յ60րդ օրինակին վրայ ի—լ զիծ) : Յետոյ տիպարին Դ—Ն գիծը կերպառուն Գ—Դ գծէն 1½—2 հարմէդի չափ ընդարձակութեան բաժինը ներսոք և ուղնտորն ալ մէկ կարաբաժին վարօք հաւասարեցը նելով՝ Ծ կէտը նշանակելէ ետք . Դ' կէտին դէմ՝ Ե կէտին համար 10րդ չափը կ'նշանակենք որ է 18 հարմէդ (Յ60րդ օրինակին վրայ Լ—Խ) . 7½ական հարմէդ հեռաւորութեամբ կ'նշանակենք Ծ կէտին Զ և Զ կէտէն Ը (Տե՛ս 559րդ օր .) . Խակ սոսորտին վրայ 10ական հարմէդով Ե կէտէն Է և Է կէտէն Խ : Այժմ Ծ , Ե և Ը , Թ կէտերը մէյ մէկ ուղիղ գծալ իրարու կ'միացնենք , Ը—Թ գծէն բռնելով ծալք մը կ'ձեւացնենք ու կ'րերէնք Ծ—Ե գծին կ'դնենք , և վերէն ի վար կ'դերակարենք , նոյնպէս ալ միւս կողմն ըլլալով՝ շրջօնի կողմէն զատ զատ լաւ մը կ'արգուկենք ու կ'դնենք իրարու վրայ (Այժմ Տե՛ս 560րդ օր . ուր Ծ—Խ զիծը ծալքին երեխի ուուրը կ'ներկայացնէ եւ ծ—կ զիծը որ է կէտ կէտ՝ ուրջոնի ուրուենի) . այնպէս որ ծալին վերի կողմի սկզբնուղնտորէն սկսած կ'ըլլայ ու սոսորտը 10րդ չափին հաւասար թիւով հեռու , և ծալին վերի խորութիւնը 7½ ու վարի կողմը 10 հարմէդ : Ապա , տիպարը ի—լ գծէն (Տե՛ս 560րդ օր .) 1½—2 հարմէդ հեռու գնելով՝ փողեղ-

ըլ , ուսածագը և երբուծը կ'գծենք և է—Ը գծին ընդարձակութեան բաժինը վար քաշելով՝ մինչեւ ա կէտ և ա—Ե—Զ գիծը կ'օրինակենք կերպասին վրայ , ինչպէս նաև այս ամէնուն կարպաժինները գծելէ վերջ . քանակը մէջքին ու երանէն և հարմէդի շափ դրսօք հաւասարեցնելով կ'քաշենք հ—ծ գլուծը ; որ յետսակողմի ուղղութիւնը կ'ներկայացնէ : Ապա ուրեմն յետսամասին Յ—Գ գիծը չափելով համարինք թէ եկաւ 62 հարմէդ , նոյն չմփով ալ կ'ձշտենք հ—ծ գծին երկայնութիւնը : Ստորոտը յար և նման է ուրիշ աղեղնածեւ ստորոտներուն ձեւագծելու եղանակին , որ է լ—լ' ուղղահայեացը , ծ—լ լարն ու ասոր կէտը լ' կէտ , լ'—լ' նետը և ծ—ո—լ աղեղը : Ամէնէն վերջ յետսակողմի լ—ն գծով 5 հարմէդ լայնութեամբ կազմուելիք ծալին բաժին կ'ձգենք ու կերպառը կ'կտրենք . Ե կէտին հատկէտը չմունալով :

Ընդհանրապէս ասոր մինչեւ կոնքի հաւասարութիւնն ստուամը կ'գրուի , ասանց կուրծքին ծալը ձեւացնելու : Կցորդելու համար նախ ուսուը կ'գերակարենք , յետոյ յետսամասին Ե կէտը առաջամասի Ե կէտին կցելով՝ մինչեւ ծալին գլուխը՝ յետսամաս ու կողամաս իրար առնելու նման կ'գերակարենք , յետոյ թիւին Ե—Ը գիծը սովորական թիւի նման աւելուրդը փոթթելով կ'գերակարենք թիւնաւարտին ու երբուծին . խոկ Ը—ա գիծը սկզմնի պէս սրածայր կը վերջացնենք : Առաջակողմի մէն մի ծալքին մէջ շըրթունքէն և գոտելվայրին դէմ գրպանի շրթունքի նման բացուածք մը կ'ունենայ՝ ուրկէ ձեռքը դուրս կ'հանէ (Տե՛ս 557րդ նկար .) . մանաւանդ ձեռնամառշատ գնելու նորածեւութեան համար : Այս բացուածքը պէտք է ըլլայ 12 հարմէդի չափ , և կէտ առ կէտ Թ գծին հաւասարութենէն վեր ու վար , որ է մ—լ գիծը (Տե՛ս 560րդ օր .) : Մէջի աստան ալ նոյն ձեւով կարել և շուրթը երիզ մը կարելու է (ի՞նչպէս 559րդ օր . վրայ ցուցուցած ներ) : Անհրաժեշտ է մէջքը գոտելվինդ մը դնել , երեք կարերուն ու մէն մի կողմի թէ վերջը գոտելվինդ մը դնել , երեք կարերուն ու մէն մի կողմի թէ կէտին դէմ զարդասեղով փակցնել : Սա ալ զիտրացուածքին թէ վրանոց հազոււսներուն գոտեպինդն ընտիր տեսալ պէտք է թէ վրանոց հազոււսներուն գոտեպինդն ընտիր տեսակ ըլլալու է որպէս զի այցելութեանց ատեն հանելու պարպային վայելուչ երեւալ :

Օրուան նորածեւութիւն համեմատ օձիքն կ'գրուի , բայց ընդ-

հանրապէս պարզ ծալօծիքով շատ վայելուչ կ'ըլլայ (Տե՛ս 563րդ նկարը), ինչպէս նաև բարձր ծալօծիքով (որ է 557րդ նկարը):

Ինչպէս ըստինք, այս հագուստը շրթունք շրթունքի կ'կոճկուի և երեսի կողմէն դէմ առ դէմ զարդ գինդեր կ'գրուի (Տե՛ս 557 եւ 563րդ նկարներ):

Երբեմն առաջամասին ծալին մինչև ներսի շուրթը տարրեր նիւթերով կ'շինուի (Խնչպէս 560րդ օր. բառակուսեակ գծերով): Այս կերպարվ կ'ձեռուի նաև նեղ կերպասով շինուած ատեն, այն է առաջակողմը ծ—կ գծէն առնելով ու թեւին մասը՝ Ծ—իս գծէն 7½ վերը և 10 հարմէդ զարը լայն առնելով:

Շուրջը մուշտակ, փետուր, թաւիչ կամ գեղմնաւէտ նիւթերով կրնայ զարդարուիլ. և կամ մեքենայով թափանց կարեր ըլլաւ:

Կոնամէջի հակածալը կրնայ երեսի կողմէն ալ կոտրուիլ. միայն թէ վերի ծայրը ծածկելու համար հիւսկէնով կամ ուլունկով պատրաստուած զարդ մը կ'գրուի:

Թերեւս յետսամասը մինչև կոնքի հաւասարութիւն շինել ուզուի ու զարի մասը բազմածալով շարունակուի (Խնչպէս 562րդ նկար): Այս պարագային յետսամասը մինչև կոնքի հաւասարութիւն կ'գծենք և տիպարը կտրելէ առաջ՝ նախորդ եղանակին նման ձեւագծութիւնը կ'շարունակենք մինչև ստորոտ, իրը թէ միակտոր շինել ուզէինք և այն ատեն Ֆ—գ գծին կազմած լայնութիւնը (Տե՛ս 558րդ օր.) չափելով համարինք թէ գտանք 18 հարմէդ. այլևս յետսամասը կոնքի հաւասարութենէն կ'կտրենք. կրնայ ըլլաւ որ այն տեղ դրասանք ձեւացնել ուզուի (Խնչպէս 562րդ նկարը): Արդ, վարի բազմածալցու մասը ձեւելու համար, կերպասին ծալքը կ'նկատենք Ա.—Բ գիծ ու գագաթը Ա.—Գ (Տե՛ս 561րդ օր.). 2րդ չափը, այն է 75 հարմէդը Ա. կէտէն Ա.—Բ գծին վրայ դնելով կ'քաշենք Բ—Ե ուզզահայեցը. այժմ քիչ մ'առաջ առնուած 18 հարմէդին երեք անգամը կ'դնենք Բ—Գ գծին վրայ և 5 հարմէդ ալ ծալի բաժինին համար որով կ'ըլլայ 59 հարմէդ ու կ'քաշենք Դ—Ե հորիզոնական գիծը՝ Ա.—Բ գծին հետ զուգահեռական, և կերպասը կ'կտրենք: Յետոյ Ա.—Գ գիծը շրջօնի կողմը հակածալ մը կ'ձեւացնենք ու երկու քավերն երեքտկան ծալ. միայն թէ վերի կողմի մէն մի ծալին շրթունքը նախորդ ծալի կէսին վրայ հանելով կոտրելու ենք, որպէս զի վերի կողմը նեղնայ ու

հաւասարի յետսամասի Յ—Մ' գծին լայնութեան (Լա՛ւ ուշադրութեան առ 561րդ օրինակին նորիզնական դիրքով հաւուած կէտ կէտ գծերը, ծալերուն տրունքը ներկայացնող բարակ գծերը եւ ծալերուն ուղղութիւնը ցուցնող նշանակիները): Սոյն ծալերը դերակարել ու լաւ մ'արդուկելէ վերջ կ'կցենք յետսամասին ներքեւի կողմէն ձիչտ գոտեվայրին, որպէս զի գոտեպինդ ասոր շրթունքին կցուի և միանգամայն իրանը տափարակ չերեւայ: Բնդհանրապէս կոնքի հաւասարութեամբ վերջապէս յետսամասին եզրը կերպ կերպ զարդեր կ'գրուի (Խնչպէս 562րդ նկարը):

Միեւնոյն ձեւով նափորտ ալ կ'ըլլայ որ առաջակողմերը անջատ կ'ձեռուի և հասակն ալ քիչ մը կարճ, ու ներքեւ պարկածեւ կամ կրկնակար արտազդեստ մը կ'ունենայ, արտինքն՝ նափորտը ուսարկուի նման կ'կցուի կրկնոցի փողեզրին (Տե՛ս 557րդ նկարն ու 560րդ օրինակին ն—դ զիծ):

Պ Ա Ա Ֆ.

ՆԱՓՈՐՏ ԵՒ ՈՒՄՆՈՑ

(Տե՛ս ԿԶ. տախտակ 573, 574, 575, 576 եւ 577րդ օր. եւ նկար)

Նափորտ ձեւելու կերպը. — Միայն կոնամէջը կարով նափորտ (Տե՛ս 577րդ նկարը) ձեւելու համար, տիպարին ձեւագծելու սկզբունքը նախորդին նմանն է միայն փոխանակ յետսամաս ձեւելու՝ 4րդ չափն ալ կ'դնենք և թիկնաւարտը՝ այն է ի—լ, գիծը (Տե՛ս 578րդ օր.): կ'շարունակենք մինչեւ Ե—Գ գծին կէուը, որ է գ կէտ. և սոյն գ կէտէն կ'քաշենք Գ—Գ—Բ գմբեթարդ գիծը, որ մակաթեւին մերձաւոր նմանութիւնը կ'ունենայ. անշուշտ նըկատողութեան կ'առնուի որ թ կէտը ի կէտէն Զ հարմէդի չափ վերօք կը գտնուի: Այժմ նեղ նափորտի հրահանգին նման սոյն տիպարը կ'փոխադրենք կերպասին վրայ (Տե՛ս 579րդ օր.), Է—Լ, Լ—Ե և կոնամէջի ընդուրձակութեան բաժինները գծելէ ետք, Մ' կէտին դիմաց (ընդարձակութեան բաժիննէն վատ) և հարմէդ դլօշի բաժին կ'գծենք և ամէնէն վերջն ալ կոնամէջի կերպատմէնը, որով կ'ունենանք է կէտը: Յետոյ է կէտին գիմաց Յրդ չափին ¼ովքը կ'նշանակնք թ կէտն ու քանակը գ կէտին դիմաց՝ չափին ¼ովքը

կարաբաժինի կէտին և ը կէտին հաւասարեցնելով կ'քաշենք
Գ—ը—ը գիծը որ կռնամէջի վարի կողմին նախաձեւը կներկայա-
ցընէ (լ.ա'ւ դիտէ 575րդ օր.) . ապա՝ իրանին կոր ձեւը՝ և կէտէն
վար կշարունակենք ը—ը գծին վրայ և Զրդ կրկին չափը այն է
84 հարմէցը Զ կէտէն վար նշանակելով կ'ձատենք թ կէտը . հուսկ
ուրեմն ե—ը գծին կազմած երկանութիւնը չափելով տեսնուած
թիւը՝ որ է 71 հարմէցը կ'նշանակենք առաջակողմին՝ Ն' կէտէն
վար ու կ'ունենանք ծ կէտը . և թ կէնտէն մինչեւ ծ կէտ կոր
գծով մր կներկայացնենք ստորանն ու կերպարը կ'կտըենք :

Թեւին գաղտնին ուսուցիկ ձեւացնելու նորածեւութեան ժամանակ կ'առնենք զ' աղեղը

կեղծոռիկի նորածեւութեան ժամանակ է կէտին գիմաց 4 և
ասոր կրկինը՝ այն է 8 հարմէդ ալ թ կէտին զիմաց նշանակելով
կ'քաշենք Զ—ի գիծը (Այս գծին պատշաճ ձեւը տալու նամար յաւ
դիտելով և 575րդ օրինակը), ինչպէս նաևս ստորոտին ի—ծ գիծը։
Սակայն գիտնալ պէտք է թէ կեղծոռիկի բաժինը կախումն ունի
օրուան նորածեւութեան ներկայացուցած ծաւալէն, որ փոքր,
միջին ու ծայրայիղ ըլլալու աստիճաններուն համար՝ և կէտին
գիմաց 2, 4 և մինչ 6 հարմէդ կրնայ գրուիլ, ու վարն ալ միշտ
անոնց կրկինը։

Արդարեւ ասոր կարելը շատ դիւրին է, միայն թեւին զ—զ—բ
գիծը թիկնաւարտին ու երբուծին կարելու ժամանակ՝ անոր աւե-
լորդը լաւ կերպավ ամփոփելու է և բ ու զ անկիւնները սեղմօնի
ցցուններու նախն նուրբ կարերով վերջացնելու է, ս'րպէս զի սոյն
զ և բ ցցուններն իրենց սահմանն ու դիրքը չխախտեն՝ խոհեմու-
թիւն կ'ըրլար որ նախապէս մակենթակարերով զանանք նշանակուի :

Օւսինց ձեւելու կերպը . — Նախորդին վեր ձեւովն ուսմացներ աւ կ'ըլլան (ի՞նչպէս 573 եւ 574րդ նկարները), որոնց ամէնէն երկայնն եղած գօտեփալրէն 4—5 հարմէդ կործ : Ասոր տիպարը կը վերջացնենք հազարէն, այն է ՚ Ի կէտէն մինչեւ թ կէտ (Տե՛ս 576րդ օր . սա — օ — օ — օ — զիծը՝ ուշ ՈՒՍՆՈՅ բառով ցուցուցած են): Այս ուսմացներուն առաջակողմը շրթունք շրթունքի աւ կ'ըլլայ շեղ անջատութեամբ աւ (ի՞նչպէս 573րդ նկարը) ու կլաստոլորակ աւ (ի՞նչպէս 576րդ օրինակին):

Լայն կերպասէ շինուած տաեն կոհամէջը միակոսր կաղմելու է (ի՞նչպէս 574-դ նկարը). հետեւապէս ծոծրակն ու ը կէտը կերպասի ծալքին հաւասարեցնեալ կ'ձեւուի:

Սովորութիւն յետակողմբ ներ նախորդտին ձեւովը յետա-
մաս ալ կրնայ ըլլալ ինչպէս այս օրուան կարծ պօլեռներուն
կրկին—յետամասի նմանութիւնը։ Եւ գարձեալ կրնամէջը միա-
կառը կազմելու է։

Կայ ալ որ նախկին ձեւովը կ'ըլլայ ու երեսն ամբողջ մուշտակով կով կ'ծածկուի : Այս պարագային, նախ տիպարին ձեւովը ընտիր տեսակ կանեփեալ կտաւ կ'ձեւուի, մէջը մետաքս տատառվ կը ծածկուի . նոյն խոկ այս վերջինը վատկապով շախճ կ'ըլլայ . յետոյ աստառին կարաբաժինները կ'ըջուի կանեփեալ կտաւին վրայ . օրուան նորածեւութեան համեմատ օձիքն ալ կանեփեալ կտառվ պատրաստելէ վերջ, կ'յանձնուի մուշտակագործին : Սակայն լու է որ տիպարը միտուեղ յանձնուի ու պատուիրուեի անոր որ մուշտակը տիպարին նմանը ձեւէ և յետոյ վրան ծածկէ, որպէս զի չձեւափախուի :

¶ ॥ ७ ॥

բլոգը Դիմերուհ Պէսպիսութիւններ

(Sib'u 49 . swabu . 570 , 571 , 572 , 576 , 578 , 579 b . 580 r q or . m . 61q r .)

Ժամանակ կրոգոց որ ԲԱԶԿԱԴԻՐ=օլման անուանուած հա-
գուստը նորաձեւութիւն կ'ըլլաց, Ե՞նչպէս 1880—82 թուականնե-
րուն մեծ թակէ մ'ուները : Բաղկազդիրն երկու սկզբունքով կ'ըլլաց,
մէկ մինչև կոնքի հաւասարութեամբ, որ թիկնազգեատի կամ
կարճ ուսարկուին տեղը կ'անցնի, կայ ալ որ աշխան ու ձմբան
երկայն կրկնացներու վրաց կ'կցուի (ի՞նչպէս 578 և 579րդ նկար-
ները) : Առաջ կ'ձեւուին նախորդ երկու նախորդներուն տիպոր-
ներովը . որովհետեւ յետամասով ալ կ'ըլլաց (ի՞նչպէս 578րդ նկարը)
ու միան կռնամէջը կարող ալ (Այս և 580րդ նկարին տեսնովը) :

Արդ, յետամասով բազկադիր ձեւելու համար, նախ կ'ձեւա-
գծենք նեղ նսփորտի տիպարին ճիշգ նմտնը (Տի՛ս Կի. այսի.
556րդ օր.) յետոյ ասոր վրայ կ'աւելցնենք բազկադիրին պատշա-

նող մասնաւոր ենթաթերի մը ձեւը . արդ ուրեմն փողեզը կէս ընելով մէջտեղը կ'անուանենք և կէտ , և Ծ կէտին դիմաց Յրդ չափին մնացած չոչին ալ կ'նշանակենք լ կէտն ու սոյն կէտէն գոգաւոր գիծ մը քաշելով՝ Ի—Թ գծին գրեթէ վարի երկու եր- բորդէն կ'անցնինք և մեղմ կորութիւնով մը կ'միացնենք և կէ- տին , ինչպէս նաև ը կէտը շեղ գծով մը կ'միացնենք Յ կէտին (8b և 556րդ օրինակին վրայ սա—օ—օ—օ—զիծը) :

Այժմ տիպարին նախկին ձեւը կերպասին վրայ փոխադրելով (Տես. ԿԶ. Տախ. 574րդ. օր), 6—η գծէն 5 հարմէդ զուգահեռաբար գէզը ը վարօք կ'քաշենք թ—ծ զիծը, և ընդհանուր կանոնին համեմատ առբերանի և ընդարձակութեան բաժիններն ու կարաբաժինները գծելով՝ կերպասը կ'կտրենք (Տես 574րդ օրինակին առուերով ձեւը): Յետոյ ոյն տիպարին (Տես 556րդ օր.) վրայ ներկայացած Յ—ը և թ—է գծերէն կտրելով՝ վարի կողմը մնացած մասը կ'վերածուի ենթաթեւի, կ'փոխադրենք իրեն բաւարար կերպասի մը վրայ, և Հիմա ալ 6—զ գիծն 5 հարմէդ զուգահեռաբար գէզի վերօք կ'քաշենք ի—լ գիծը (Տես 572րդ սպիտակ օրինակը), և 8—կ գծէն դուրս ընդարձակութեան առ առ բերանի բաժինը՝ ինչպէս նաև լանջքին ընդարձակութեան բաժինն ու շուրջի կարաբաժինները գծելով, կերպար կ'կտրենք.

Յետուամասն ալ կ'ձեւուի ճիշտ վրանոց հագուստներու նման, կոնամէջին ու թիկան ընդարձակութեան բաժիններ ձգելով. միայն թէ իրանին վերջաւորութիւնը սրածայր ձեւացնել ուզուած ատեն (Խնչպէս 578րդ նկարը), կոնամէջի ձեւը ՛ կէտէն 6—8 հարմէդ վարօք կ'շարունակինք մինչեւ ծ կէտ (Տես 570րդ օր.) և ծ կէտն ալ մեղմ կոր գծով մը կ'տանինք Յ կէտին:

Սոյն բազկագերը հարելու համար, եթէ մէջն աստան պիտի դրուի, նախ զայն կ'ձեւենք մէն մի մասին ձեւովը. յետոյ ենթաթեւին և կէտը զնդասեղով մը կ'կցենք մակաթեւի ծ կէտին, և ի կէտը թ կէտին հետ առնելով՝ ի—լ գիծը կ'գերակարեհնք ո—ժ գծին. բայց այս վերջինն 5—6 հարմէդ երկայն ըլլալուն համար՝ երկու ծայրերը 3—4ական հարմէդ հանդարս կ'գերակարենք ու մնացածը հաւասար փոթփոթումով (Տե՛ս 571րդ օր. թ—ծ զծին վրայ փոքր զծերով ցուցուած փորփորելու սանիւսնը). ապա ենթաթեւին կէս փողեզրը կ'գերակարենք մակաթեւի կէս փաղեզրին, ու հանդարս գիրքով սեղանին վրայ փռուած ատեն պիտի տեսնենք

որ ն—զ գիծը տրամադիծ կ'կազմուի և թ—ծ գիծը հակեալ թեփ
նման 5 հարմէդ դէպ ի վեր կ'կինայ. որով թէ՛ երեսի կողմէն վա-
րի շուրթը միակոսր կ'երևայ և թէ՛ մեղմ կորութեամբ կ'կազմուի,
ինչ որ այս հագուստին համար մասնաւոր հրապոր մը կուտայ:
Ապա ուրեմն, կունամէջը և ուսերը գերակարելէ ետք, ենթաթեխն
ը կէտը կ'եցենք մակաթեւի ի՛ կէտին ու այս երկուքը մէկէն
յետստամասի լի կէտին. ինչպէս նաև և և՛ հատկէտներն իրարու
և զ կէտը Յ կէտին ու այս ամէնը կ'գերակարենք իրենց տեղերը.
այնպէս որ ի—Յ գիծը երեք շրթունք միատեղ առնուած կ'ըւ-
լայ, այն է ի—Յ, ի—զ և ը—ի—բ—զ գծերը: Այժմ կ'մնայ են-
թաթեւին և—ը գիծն երեք չորս փոքրիկ սեղմօններով կծկելու
գործողութեւնը (Տե՛ս 572րդ օր.), որոնք են խ, ծ, կ և հ: Յայտ-
նի է թէ առանց այս սեղմօններուն՝ ենթաթեւին այն և—ը գիծը
հագնողին վրայ թոյլ կ'մնայ, քանի որ տիպարը կ'պատրաստուի
մեծ վանդակածրի չափովը և այժմ կ'պատէ բուն իսկ վանդակը.
հետեւապէս երկու հարմէդ խորութեամբ և 5—6ական հարմէդ
երկայնութեամբ կ'կազմինք նոյն փոքրիկ սեղմօնները (Անոնց տեղն
ու դերը լաւ դիմ: 572րդ օրինակին վրայ):

Յետուակողմը կպչուն ըլլալուն համար՝ գօտեալինդ զնեին ան-
հրաժեշտ է: Օծիքն ալ օրուան նորաձեռքեան համեմատ կը լլայ:

Այժմ ակներև է թէ հագնուած ատեն ծղիները պիտի անցնին
ենթաթեւի շրթունքին մէջէն ու բազուկները պիտի հանգչին առ-
ջևի կրկնատակ պարապութեանը մէջ, իրրև բազկադեր որ կար-
ծես թէ զայն կրողին բազուկները վիրարուժական գործողութեան
մ'ենթաթրկուած և ուսուերէն կախուած բազկադեր պատասներու
մէջ առնուած են:

Նորածեռութիւններ ալ եղան որ ենթաթեւեն կէս փողեղը
է—Ծ գծով առնուեցաւ, ու մակաթեւին փողեղը է կէտէն ընդար-
ձակ վէտ կօր գծով մ'իջաւ մինչեւ ն կէտ, որպէս զի մէջը դըր-
ուած վառ գոյնով մեւաքսէ աստառը՝ լսոնջքին վրայ ներքեւէն
թափանցող բաճկոնակի պէս ցուցադրուի, նոյն խոկ մեթենայով շոխէ-
ներ բանուած: Կամ նոյն վէտկոր գիծը հազարէն սկսելով ելաւ ն
կէտ Խնչպէս 579րդ նկարին մակաթեւի կրծեղթին վարի կաղմի վե-
կոր անջատութիւնը):

Միայն կռնամէջը կարով բազկադեր ձեւելու համար ալ կ'հետեւինք նախորդի տիպարին (ՏԵՌ 57ԵՐԱ ՕՐ.), և ենթաթեւը կ'առնենք և կէտէն մինչև Զ. կէտ (Առ X—X—X— ձեւով զիծը) ու Զ—Մ գծէն 4—5 հարմէդ զուգահեռաբար նեղ կ'օրինակենք, որպէս զի մակաթեւին վարի շուրթը նախորդին սիէս դարձեալ քիչ մը փոթփոթուի: Արդ, կերպառը ձեւելու ժամանակ մակաթեւին հակելու բաժինը կ'ձգենք Մ'—Ն' գծէն վար և մակաթեւն ալ 5 հարմէդ զուգահեռաբար կարճ: Ասոր կարելը նախորդէն ա'լ աւելի գիւրին է՝ քան որ անջատ յետսամաս չկայ: Գոտեկինդը պէտք է կցել միայն Զ կէտին:

Սոյն երկու ձեւով բազկադերներն ալ առանց ենթաթեւի կրնան ըլլալ, այսինքն ուսարկուի նման վարի շուրջն արձակ ծրգուած (ի՞նչպէծ 580րդ նկարը), կոնամէջը ըրջօնի կողմէն հակածալով կամ շեղանկիւն կտրուած (ի՞նչպէս 580րդ նկարը):



ՊԱՍ ԺԲ.

«ԺԱԲՈՒՅՑ»

(Տե՛ս ԿԶ. տախ. 565, 566, 567, 568 և 576րդ օր. ու Եկարները)

Ժաքոնեղը ուսարկուի տեղ անցնող վրանոց է (Տե՛ս 568րդ նկարը): Զափահասներ կյիշեն անշուշտ 1890—91ի Զին և ձարունական պատերազմին ժամանակ այս ձեւին ստացած ընդհանուր թռիչը, որ ամէն տարիքի մանկամարդք կրեցին զայն, ամուսն եղանակին համար բարակ բրդեղէն կերպաներով ու աշնանն ալ բարակ ասոււի. ընդհանրապէս հողագոյն, արծաթագոյն կտմ պայծառ շագանակագոյնով: Հակառակ իր գտած ջերմ ընդունելութեան, շատ վայելուչ ձեւ մը չէ, բայց խստովանիլ պէտք է թէ ուսարկուէն սիրուն է: Ժաքոնեղին երկայնութիւնն ընդհանրապէս մինչեւ դաստակի հաւասարութիւնը կըլլայ կտմ մինչեւ ձեւքին վրայ:

Ասոր տիպարը կ'պատրաստուի պարզ նափորտին նման (Տե՛ս 576րդ օր.): Միայն թէ ժաբոնէզը գահվրացով կ'ըլլայ և կրծեզրը շրթունք շրթունքի. ուստի առաջակողմի գահվրան կազմելու համար՝ բ կէտն ուղղահայեաց գծով մը կ'միացնենք կրծեզրին, որ է



ա—բ գիծը . յետուակսղմինն ալ զ կէտը լ—Ե գծին հետ զուգահեռ-
ուական գծով մը կ'միացնենք կոնսամէջին , որ է զ—Ե գիծը : Այժմ
տիպարին վրայէն սոյն թիկնամասն ու լանջամասը կտրելով կ'ան-
ջատենք : Արդ , եթէ գահվրային ուսը միակտոր կազմել ուզուի ,
այն ատեն կ'հետեւինք Զ . զլիսու Զ . դատին . իսկ եթէ լանջա-
մասն ու թիկնամասն անջատ անջատ կ'ուզուի . այս պարագային
ալ մոռնալու չէ թիկնածագն ուսի մակերեսին բարձրացնել (Տե՛ս
566րդ օր.) , այսինքն ժ կէտը և և ի կէտը Զ հարմէգ բարձրա-
ցընելով կ'առնենք Ժ—Ե գիծը . կոնսամէջին ու թիկան հաւասա-
րութեան ընդարձակութեան բաժիններն ու կարաբաժինները
ձգելով կերպասը կ'կորինք : Թիկնամասին կոնսամէջը միակտոր
կազմել ու զուած ատեն՝ Ը—Ե գիծը կերպասի ծալքն ½ հարմէգի
չափ ընդարձակութեան բաժինի համար ներսոք գնելու է : Կան-
չափ ընդարձակութեան բաժինի համար ներսոք գնելու է : Կան-
չամասին ալ Ծ—Ե գիծը ջնշելով կ'առնենք Ծ—Ե գիծը (Տե՛ս
565րդ օր.) , լանջքի հաւասարութեան ու կրծեզրին ընդարձակու-
թեան բաժինը , կրծեզրին Յ հարմէգ առբերանի բաժինը և միւս
կարաբաժինները գծելով կերպասը կ'կարինք : Սոյն գահվրանները
սրածացը ալ կ'ըլլայ (ի՞նչպէս 568րդ նկարը) դրասոնքի ձեւով ալ :

Գտըրդ բուն մարմինը կազմող մասին (Տե՛ս 567րդ օր), առոր
ալ թիկունքին ու լահջքին հաւասարութիւններն երկու կերպով
կ'ըլլայ, այն է գահընացած սուկանի նախն փոթփոթուած կամ բազ-
մածալով (ի՞նչպես 568րդ նիստը). Խոկ կողմանակի թիւին մասն իր
ծաւալին չափ փոթփոթուած կ'ըլլայ: Բաղմածալով կերպին հա-
մար՝ նախ կըծեղրին շուրջքի բաժինը, այն է Յ հարմէդ կերպա-
սին եղրէն կ'ըրջենք ներս ու կ'գերակարենք, յետոյ լահջքին
գէմ, այսինքն ա—բ գծին վրայ քանի ծալ որ ձեւացնել կ'ու-
զենք, այնքան մասերու բաժնելով նոյն լայնութեամբ դէպի առա-
զենք, այնքան մասերու բաժնելով նոյն լայնութեամբ դէպի առա-
զակողմ բազմածալեր կը կազմինք և խրաքանչիւրն ալ վիրէն
չակողմ բազմածալեր կը կազմինք: Սակայն մոտնալու չէ գլխաւոր պա-
մինչեւ վար կ'գերակարենք: Սակայն մոտնալու չէ գլխաւոր պա-
րագան որ ամէն առթիւ բ կէտը բազմածալի մը ըլթունքը կազ-
րագան որ ամէն առթիւ բ կէտը բազմածալի մը ըլթունքը կազ-
րագան որ ամէն առթիւ բ կէտը բազմածալի մը ըլթունքը կազ-

օրինակելէ ետք, թեւին տիպարը 15—20 հարմէդ փոթի բաժինին համար գէպի ետ կ'քաշենք. կամ գաղափարը կատարեալ ըլլուու համար տիպարին դ կէտէն մինչեւ Ն'—Մ գիծ հորիզոնաբար կը կտրենք, որ է դ—Ք և կոնսակի մասը՝ այն է դ—Ք' գիծը 15—20 հարմէդ դ—Ք գծն զուգահեռաբար հեռու կ'դնենք (ի՞նչպէս 567րդ օր): Ապա ուրեմն, դ—գ գիծը կ'օրինակենք ու գ անկիւնէն սկսելով յետուակողմի ծալերէն ալ կ'գերակարենք, այնպէս որ կոնսամէջի շրջնին կողմը հակածալ կ'ձեւանայ, եւ Մ' կէտերն ուղիղ գծով մը վերջացնելով:

Ժաբոնեզին թեւն ընդհանրապէս բարձր ուռուցիկով կ'ըլլոյ, ուստի դ և դ' կէտերուն մէջտեղէն գէպի վեր 12—15 հարմէդ բարձրութեամբ հորիզոնական գիծ մը կ'քաշենք՝ որ է թ—ծ, և գ, ծ, բ կէտերը կիսաբոլորակի մը ձեռով կ'միացնենք իրարու, և կարաբաժնը ձգելով կերպասին աւելորդները կ'կտրենք:

Այս հագուստի մարմինին աստառ չգրուիր, մինչդեռ գահը վրային մէջ թէ՛ բարակ պնդուածուէն մը դնելու է և թէ՛ մետաքս աստառ մը: Եւ որպէս զի թեւին ուռուցիկը գէպի վեր կանգուն կենայ (ի՞նչպէս 568րդ նկարը), գ—ծ—բ մասին մէջ՝ ալ խաւակուած մը դնելու է, բ և գ կէտերէն զոգաւոր գծով մը սահմանուած և միան այս մասն աստառով մը ծածկելու է, վարի եղրը խաւակուանին վրայ շրջելով ու փշակարով մը վերջացնելու է:

Լանջքն ու թիկունքը փոթփոթելով շնչել ուզուած ատեն, սուկան ձեւելու նման փոթի բաժինը տիպարին լայնութեան չափ ետ քաշելով գծելու է: Իսկ թէ որ մարմինը գահվրային վրայ եւ լած գլուխ ձեւացնել ուզուի, որ շատ անգամ թեւն ալ անոր կը հետեւի. գլուխի բաժինէն զատ՝ ներս շրջելու բաժին ու կարաբաժինն ալ զատ հաշուելու է, այն է խ գիծն իրբեւ գլուխին տրամագիծը (Տե՛ս 567րդ օր. յետուակողմի մեկ մասին վրայ ներկայացուած կէտ գիծը) և ներս շրջելու բաժինն ալ կ—հ եւ հ—ձ զծերը: Կարելու ժամանակ ալ ն անկիւնը մինչեւ գլուխին տրամագիծը ձեւիչով շեղակի կտրելու է որ կարելի ըլլոյ ներքեւի բաժինը տրամագծերէն ներս շրջել, ու ե—գ գծին շրջնին կողմէն ուրակար ընել և կծկել, նորմէս ալ թեւն ու լանջքը:

Ժաբոնեզի գահվրային կրծեղրը միայն շուրթ շուրթի կ'կոճկուի, մէջի կողմէն փոքր ճարմանդներ գրուելով:

ՊԱՍ ԺՎ.

Ա. Յ Յ Ե Լ. Ա. Զ Գ Ե Ս Ն Ե Բ

(Տե՛ս ԿԶ. Տախ. 569 օրինակ եւ 581, 582 եւ 583րդ նկարները)

Կարգ մը հագուստներ կան որոնց ձեւն անհունապէս կ'տարբերի սովորական հագուստներէն, այս կարգէն է այցելազգեստ անուանուած փոքր վրանոցը (ի՞նչպէս 581, 582 եւ 583րդ նկարները), որ իր ժամանակի նորաձեւութեան ատեն ամռան թիկնոցակին, թիկնազգեստին, կարծ ուսարկուին, ժաբոնեզին կամ բաղկագիրին տեղը կ'անցնի, ինչպէս 1884—87 թուականներուն ջերմ ընդունելութեան արժանացաւ: Ստուգիւ այցելազգեստը բազկագիրէն, ուստարկուէն ու ժաբոնեզին շատ աւելի ցայտուն ձեւ մը կուտայ իրանին, մանաւանդ փոքր կեղծուիկով մը հագնուած ատեն:

Այս հագուստին տիպարը կ'բաղկանայ երեք մասերէն, որնք են յետուամաս: առաջամաս և ատարձուուն թեւէ մը (Տե՛ս 569րդ օր.), որ արմուկի անկիւնէն կանցնի գէպի յետուակողմ ու բազուկը կը մայ գուրուը (ի՞նչպէս կ'երեւայ 582րդ նկարով): Եւ թէ այցելազգեստին գիրքը կ'պահանջէ որ զայն կրողը բազուկները գոտեկայրին վրայ բարեւ բունած ձեւով մը դնէ: Եւ ահա աւելին է որ թէի բառն իր տառական իմաստովն առնուի, այսինքն թըռչունի թեւ=Քանաս=ալլե նշանակութեամբ և ո՛չ թէ ծղիին պատեանն եղաղ գոլ բառին հաւասար, որ գժբախտաբար նուիրագործուած ոխալ մ'է. որովհետեւ ԾՂԱՊԱՏԵԱՆ շատ աւելի պատշաճ պիտի ըլլոյր գօլ=մանե նշանակութեամբ:

Արդ, այցելազգեստին հագնուածքն ալ բազկագիրին նման կ'պահանջէ որ բազուկները գոտեկայրին վրայ ծալլուեած իրակին ալ պարը ձեւագծելու եղանակը նեղ նափորախն սկզբունքովն է և ալ պաղացը ձեւագծելու եղանակը նեղ նափորախն սկզբունքովն է, այն է բազուկին գիրքը ճշտող չափ մը՝ զոր կ'անուաննք իրակին Ա. ԶԱ. ՓԱ. կամ ԲԱ.ԶԿԻՆ Դ.Ի.Բ.Բ. Արդ ուրեմն, չափատուին բազուկը գոտեկայրին վրայ ծալլուեած գիրքով կ'կեցնինք ու մեղրական երիղին ծայրը ծոծրակին վրայ հաստատելով՝ նրգ ու շափին առնելու նման, աջ ուսին վրային անցնելով կ'հանգպինք շափին առնելու նման, և ափիին սողութեամբը կ'իջնենք մինչեւ տիգին ու բազկին ծալլուած վրայի անկիւնը. համարենք թէ եկաւ 38 հարմէդ:

Ինչպէս ըստինք, տիպարը ձեւագծելու հիմնական սկզբունքը ճիշտ նեղ նափորտին նմանն է. հետեւապէս առաջամասին լ.—թ՝ գիծը քաշելէ ետք, կ'շարունակենք յետուամասին ձեւագծութիւնը (Տե՛ս 569րդ օր.), որ գարձեալ կանամէջի գիրքը յառաջ կուգայ 44րդ կրկին չափով ու կռնակորը կ'կազմուի ուսանեկան կէտէն։ Այժմ քաղկին դիրքը ճշտող Ա. չափը կ'հանենք 6րդ չափէն, ուրոնք են 46—38=8, և սոյն 8 հարմէդ տարբերութիւնը կ'նշանակենք թ-կէտէն թ-ը. գծին վրայ՝ որ է ա կէտ. ասոր երկու կողմէն մէյմէկ փոքր ուղղահայեաց գծեր քաշելով՝ կ'անուանենք ա-ը և ա-գ գծեր. ա-գ գիծը կ'ձշտինք 7 հարմէդով ու ա-գ գիծը 6 հարմէդով։ Յետոյ կ'կազմենք թեւին վերի բարձրութիւնը որ է $10+2=12$ հարմէդով դ ուղղահայեացը քաշելէ վերջ, երբուծը՝ այն է առաջամասի և—ը գծին շարունակութիւնն անութիւնքը ձեւով մը կ'միացնենք մինչեւ Գ կէտ ու թեւին զ—ը. գիծն ալ գոգաւոր ձեւովը կ'ձգենք մինչեւ բ կէտ. այնպէս որ լ—գ և թ—ը գծերը միեւնոյն գոգաւոր ձեւն ունենան (յաւ դիտէ 569րդ օր.)։ Այլեւս կ'մնայ առաջամասին ու թեւին վարի կողմի ծածանող եղբերուն նորածեւութեան համեմատ ձեւերը տալ. և նախ թեւին վրայ խօսելով՝ կրնայ ըլլալ որ բ կէտը աղեղնաձեւ է կէտին միացնել ուզուի ի՞նչպէս 583րդ նկարը)։ Թերևս բ—ը հորիզոնականով մը բ'—ը և թ—է անկիւնները կազմել ուզուի (ի՞նչպէս 584րդ նկարի թեւին վարի ծայրը)։ Գուցէ թեւը մէջքին գէմ երկք փոքր խորշխորշան ձեւացնել ուզուի (ի՞նչպէս 581րդ նկարը). այսպարագույին մէն մի խորշխորշանի համար կական հարմէդ հաշուելով՝ և—է գծին ընթացքը 12 հարմէդ երկարելով կ'նշանակենք լ կէտը, նոյն թեւին կէտը՝ այն է 6 հարմէդ ժ անկիւնը թ անկիւնէն գէպի առաջակողմ կ'մղենք ու քառորդին չափ ալ երկան. որպէս զի իրանին գէմ խորշխորշանները ձեւացած ատեն ժ անկիւնը թ անկիւնին հաւասարի (Մաներամասնութիւնը Տես յաջորդ դասը)։ Գուցէ առաջամասին, կրնայ ըլլալ որ ն—ի զ—ի չեղ գծերով քովմտի ծածանող ծայր մը ձեւացնել ուզուի (ի՞նչպէս Կէ. տախ. 597րդ նկարը). կամ կրծեղբին դիրքը ուրարի ձեւով շարունակուի գէպի վար (ի՞նչպէս ԿԲ. տախ. 592 նկարը), որ է Դ—Զ—Ն—Լ և գ—իս գծերը։ Գուցէ ուրարին վարի կողմը բոլորչ ձեւացնել ուզուի (ի՞նչպէս 582րդ նկարը)։

Վերջապէս օրուան նորաձեւութեան համեմատ թեւին ու առաջամասին ծածանող եզրերուն ձեւերը զծելէ ետք, ներքելը տիպարցու թուրզի դնելով յետամասն ու թեւը փշանուակով զատ զատ կ'օրինակենք, իսկ առաջամասն ալ բուն տիպարը կորելով՝ զատ կ'արամէ կ'անջատենք ու կ'փոխագրենք կերպա- երեք մասերն ալ իրարմէ կ'անջատենք ու կ'փոխագրենք կերպա- սին վրայ, իւրաքանչեւրին շուրջէն կարաբաժիններ ձգելով կեր- պասը կ'կորենք: Զմռանալով վրանոց հագուստի պատկանած ըն- դարձակութեան բաժիններ ալ ձգելու, և յետամասին ու թեւին ե՛, ե՛ հատկէտներուն նման՝ ի կէտին վրայ ալ առաջամասին ու թեւին մէյմէկ հատկէտ նշանակել, որ կցորդելու ժամանակ մէն մի մասին գիրքը չխախտի: Առ հասպանկ կրծեզրը շուրթ շուրթի կ'կոճկուի, թաքուցիկ ձարմանդներ կարելով, կամ ձախ կոզմի ներքեւէն Յ հարմէզի չափ գուրս ցցուած կոճկափեղկ մը կցուի անող ժամանակուի զապանակ կոճակներ:

Ասոր կցորդել ու կարելլ մասնաւոր գիտելիք մը չունի, բա-
ւական է որ ուսերը կցորդելէ ևտք, եւ և ի կէտերն իրենց նման-
ներուն կցուին և ի կէտէն վար թեւին ի-ք գողաւոր գիծն առա-
ջամասին ի-գ գողաւոր զծին կարուի: Մ'էջի առաւոր մետաքսե-
ղաղաւոր կ'ըլլաց, ու շուրջը խանդութք կամ ժանեակ կ'կարուի: Ժա-
ղէն պաւակինդէն զատ. գ անկիւնէն հօրիզոնաբար մինչև
պաւէնէ գոտեավինդէն զատ. գ անկիւնէն հաւասար երկայնութեամբ
կոնսակարը եղած ուզզութեան զին հաւասար երկայնութեամբ
ու 1—4½ հարմէգ լայնութեամբ խժերիզ մը կարելով՝ ասոր մէկ
ծայրը կցելու է ք-գ անկիւնին ու միւս ծայրն ալ նոյն հաւասա-
րութեամբ կոնսակորին, որպէս զի հագնուած ատեն ք գ անկիւնը
արմուկին ներքեւ խրի:

Սոյն այցելազգեասին յետօսմասը մինչև գօտելայր ալ կ ըլլայ .
հետեւապէս թիւին վերջաւորութիւնն ալ մինչև Խ կէտ կյանդի :

四二四

(Տե՛ս Կէ. Տալի. 584էն մինչեւ 597 և 603րդ օր. Եերն ու Եկարները)

Մեկնոցակը այցելազգին բաղադրեալ ձեւն է և հագուստ-ներուն ամէնէն խրթինը : Որովհետեւ ասոր թեզանիքը՝ բազկին ծալլուած գիրքովը կ'հասնի մինչեւ դաստակ (Տե՛ս 592, 594, 597 և 603րդ Եկարեները), և իրեն յատուկ ենթաթեւ ու կողամաս ունենալով՝ կպչուն իրանազգեստի նման կ'հագնուի . ասոնցմէ զատ թեւն ալ երկու գլխաւոր սկզբունքով կ'ըլլայ, մ'չկ մը այցելազգեստին նման արձակ ձգուած (Տե՛ս 60յն Եկարեները), կամ բազկագերին նման ամփոփ, որ շատ կ'նմանի կղերականներուն վերաբերին լայնարերան թեւին : Այս երկու ձեւն ալ բազուկներն այն աստիճան կ'կաշկանդեն որ զայն կրողը ո՛չ միայն ձեռքը գէպի գլուխը չի կրնար բարձրացնել, այլեւ երեսն անդամ չի կրնար խաչակնքել . և սակայն չի գագրիր ամրան փոքր վրանոց մ'ըլլալու մեծ նորածեւութենէն, ինչպէս տեսնուեցաւ 1881-82 թուականներուն և հարիւրաւոր պէսպիտութիւններովը 5 6 տարի շարունակ կեղծուիկին ու պարեգօտին հետ շփացած գոռոզութիւնով մը անբաժան ապրեցան, թանկարժէք կերպասներով, զարդերով ու ժապաւենեակներով պճնուած :

Արձակ բեւոյ մեկնոցակ ձեւելու կերպը . — Մեկնոցակին տիւպարները ձեւագծելու համար , իրանազգեստին ամրողջ չափերէն դատ (բացի թեւկին չափերէն) , երեք բացառիկ չափեր ևս առնել պէտք է , որոնց երկուքն արգէն ծանօթ են , այն է 14րդ կրկին չափ՝ մեծ վանդակածիրը՝ որ է 51 հարմէդ . և նախորդ դասով բացատրուած Ա . չափը՝ որ է բազկին ծալլուած գիրքը 38 հարմէդ : Իսկ երրորդը կ'անուանուի իրԱՆԻՆ Բ . ԶԱՓԸ կամ ԲԱԶԿԻՆ ԵՐԿԱՅՆՈՒԹԻՒՆԸ , որ գարձեալ չափատուին բազուկը գոտեվայրին վրայ բարեւ բանած գիրքին մէջ՝ տիգին ու բազկին ծալլուած վրայի անկիւնէն ոկսելալ՝ բազկին ուղղութեամբը կուգտնք մինչեւ վրայի գտառակը , համարենք թէ եկաւ 18 հարմէդ :

Այս հագուստին տիպարն ալ առաջամատէն ձեւագծել կ'սկսուի .
ուստի պարզ իրանազգեստի առաջամատին հրահանգին նման փո-
ղեցրն ու մինչեւ ի—լ և լ—թ գծերը քաշելէ ետք (Տե՛ս 584րդ

օր.), աղցելազգեստի հրահանգին համեմատ յետուամասը կ'ձեւագծենք ու կ'դասնանք առաջամասին ուսածագը և փողեվրը կը գծենք. թեւին գագաթը ներկայացնաղ գ—ի՝ գիծը կ'քաշենք. ինչպէս նաև Ա. և Երդ չափերուն տարբերութիւնը՝ այն է 8 հարմէցը թ կէտէն թ—ի գծին վրայ ու կէտը նշանակելով, ուրկէ գէպի կրծեզրին կողմը կ'քաշենք ա—բ ուղղահայեացը։ Միշտ պարզ իրանազգեստի եղանակին նման յետուամասին Հ, Զ, Ղ և առաջամասին, Լ, Ժ և Մ կէտերը նշանակելով՝ երկուքին աշխանջատները կ'գծենք. յետոյ Հ—Զ և Լ—Ժ գծերը կէս ընելով կ'քաշենք թ և լ փոքր գծերը, որոնք մէկնոցակին անթատակի հաւասարութիւնը կ'ներկայացնեն (Լ.ա՛ւ դիտէ այս ամենը հջերգ օր.), հետեւալպէս երբուժին շարաւնակութիւնը ընդարձակ անութի մը ձեւով կ'միացնենք թ կէտին և ուրիշն ձեւով մ'ալ կ'գծենք կողամասին կողածագը, որ Կ կէտէն ակսելով կ'իջնէ մինչեւ Լ կէտ պէտք չունենար անութի բաղդատութիւն։

Այժմ թեւին առաջակազմի ձեւը տալու համար ի կէտին դիմաց 2 հարմէգով թ կէտը կ'նշանակենք ու քանակը թ և թ կէտերուն հաւասարեցնելով կ'քաշենք Ը—թ—ժ շեղ գիծը մինչեւ ա—բ գծին վրայ, ուր կ'կազմուի ժ կէտը, յետոյ Բ. չափը՝ այն է բազկին երկայնութիւնը հաստատող 18 հարմէզը ժ կէտէն ժ—բ գծին վրայ նշանակելով կ'ճշտենք բ անկիւնը, և ձեւոցը ա—բ գծին վրայ կ'համարեցնելով կ'քաշենք բ—գ հորիզոնական գիծն ու 20 հարմէզով կ'համարեցնենք թեզանիքին լայնութիւնը՝ որ է գ կէտը։ Ապա՝ թեւին յետակազմը կ'առնենք ե—կ—խ—ե գծով, գտաթը ե—զ—Ը, առաջակազմը՝ այն է ծղակարը Ը—թ և ժ կէտին դիմաց սաստիկ գոգաւոր ձեւով մը մինչեւ բ, ինչպէս նաև բ—գ և վարի կողմը՝ ե և գ կէտերը մեղմ գոգաւոր գծով մ'իրարու միացնելով։ Խոկ եթէ թեւին կողմնակի ձեւը սրածայր ուզուի (ի'նչպէս 593րդ նկարը), քանակը կ'հաւասարեցնենք զ կէտին ու լ—ժ լարին (առաջամասի կողանջւտին) հետ զուգահեռաբար կ'քաշենք զ—ի (առաջամասի կողանջւտին) համար կ'առաջամասի ձատելէ ետք, տրամադրեն և ի կէտն ուզուած երկայնութեամբ ձատելէ ետք, ե—ի և ի—գ գծերով կ'միացնենք իրարու։ Կրնայ զ անկիւնը կորձեւով առաջակազմը առաջարկուի (Տե՛ս 584րդ օրինակը)։

Գալով ենթաթեւին, կողամասին Ղ—Ռ գծէն և հարմէդ դու-
գահեռաբար գէպի ներսօք կ'քաշենք խ—ծ գիծը և Խ կէտը մեղմ
գոգաւոր գծով մը կ'միացնենք Ժ կէտին. խակ միւս կողմերը կ'օրի-
նակենք առաջամասին ու թեւին զանազան գծերէն, ինչպէս քիչ
մը վարը պիտի խօսինք: Վերջապէս բարդ ի բարդ ձեւագծուած
ոյն մասերն իրարմէ բաժնելու համար, ներքեւն ուրիշ ախար-
ցու թուղթ մը գնելով՝ փշանուակով նախ կ'օրինակենք առաջա-
մասը, որ է ուսածագը Խ—Ծ գծով, փողեզը Ծ—Դ, կրծեզը Դ—Զ—Բ—Յ, մինչեւ կէս կողանչատ բացուած ընդարձակ անու-
թը Խ—Ի—Ր, կէս կողանչատն ու ազդը Ա—Ռ—Մ և կոնքի
հաւասարութիւնը Մ—Յ (ՏԵ՛Ա 585րդ օր.): Յետոյ կ'օրինակենք
յետամասը (ՏԵ՛Ա 586րդ օր.): Ապա մակաթեւը, որ է Բ—Գ, Գ—Ի,
Է—Ւ, Ե—Խ—Կ և Ե—Ր—Բ գծերով (ՏԵ՛Ա 587րդ օր.), կ'օրինա-
կենք նաեւ կողամասը, որ է Կ—Ղ—Ո, Կ—Լ, Լ—Զ—Ե և Ո—Ե
գծերով (ՏԵ՛Ա 588րդ օրինակը):

Այս հազուուտին կուրծքքը սեղմօնով ալ կ'ըլլաց (ի՞նչպէս 585րդ օր . վրայ կէտ կէտ գծով կ'երեւայ) : Եթէ քովածի ծածանող ծայրով ուզուի (ի՞նչպէս 597րդ Եկարը) , Ժ—Մ գիծը 6—7 հարմէդ աւելի վարօք շարունակելով՝ կ'առնենք Ժ—Մ—6 գիծը , յետոյ 6—1 և 8—1 գծերը . բայց մոռնալու չէ սեղմօնին անջատութեանը համար Յ—Ն խոտորումը կազմելու (Տե՛ս 585րդ օր) : Խսկ եթէ միայն կրծեղըին վարի կողմը ծայր ձեւացնել ուզուի , այն ատեն ալ կ'առնենք Բ—Յ—մ և 6—1 գծերը (Տե՛ս 585րդ օր . մուր ստուերով ձեւը) : Երբ առաջամասին կողանջատն առնենք . 6—7 հարմէդ երկայն , նոյն չափ ալ կողամատին կողանջատն երկարելու ենք , որ է 9—6—դ և 0—դ գծերը (Տե՛ս 588րդ օր.) : Ցետամասին կոնքի հաւասարութիւնն ուղիղ ալ կ'ըլլաց (ի՞նչպէս 595րդ Եկարը) սրածայր ալ (ի՞նչպէս 593րդ Եկարը) , այս վերջինին համար՝ տիպարը կ'առնենք Յ—կ գծով (Տե՛ս 586րդ օրինակը) :

Գալով ենթաթեւին (Տի՛ս 589րդ օր)։ գարձեալ նախնական
տիպարէն կ'օրինակենք թ—բ զիծն իբրեւ ծղակար, ի—ը գիծը՝
որ է կէս անութթը, ը—մ գիծը՝ որ է կողանջատը, մ—իս գիծը՝
որ է գօտեվլայրը և իս—ծ գիծը՝ որ է իրանը. իսկ վարի եզրը՝
թ—ծ կորնթարդ գիծը։ Սակայն գիտնալ պէտք է թէ 2 հարմէդով
կազմուած ի—ը փոքր միջոցն ենթաթեւին համար բոլորովին ա-

ւելորդ է. ուստի զայն չնչելու համար, ի կէտէն մինչեւ արմու-
կին անկիւնը մեղմ կօր գծով մը կ'միացնենք ծղակարին. սրավ-
հառեւ այս վերջինն ալ երկարած կ'ըլլոյ, հետեւսպէս բ կէտէն
ԱՊ հարմէզի չափ ներսօք և կէտը նշանակելով կ'միացնենք թե-
զանիքի կօր գծին. և ահա կ'ունենանք իրրեւ ենթաթեւ ծառա-
զող ելեւէջաւոր անձանաչ մաս մը: Ու երբ ասոր բալոր շուրջի
կարարածիները ծգենք, ի ծայրն անսնցմավ գարձիալ Զ հարմէզ
լայնութեամբ զլուխ մը կը ձեւանաց (Լ.ա՛. դիւկ 58)ը որ.):

չափ աստառը աւելի ձգելով կ'կտրենք : Ասոր կցորդելը բաւական գործ մ'է , ուստի մասնաւոր կարգ ու սարքով պէտք է ձևոնարկել անոր : Նախ կոնամէջը կ'գերակարենք , յետոյ ուսերը և ապա՝ ենթեթեւին ի կէտը մակաթեւին թ հատկէտին և ո կէտն ալ բ կէտին կցելով՝ ծղակարը կ'գերակարենք . վերջապէս նր միացած կէտը գնդասեղով մը կ'կցենք առաջամասի ի հատկէտին ու և հատկէտ , յետսամասի ե հատկէտէն և սովորական մակաթեւի նման փոթերը սոյն տարածութեան մէջ բաժնելով կ'գերակարենք թիկնաւարտին ու երբուծին , ինչպէս նաև ենթաթեւին թ—ը գծով ձեւացուցած մահիկի ձև անթատակն ալ առաջամասի նոյն գծին (Լաւդիտ 585 և 589րդ օրինակները) : Միեւնոյն ատեն կողամասին և անկիւնը առաջամասի ը սանկիւնին կցելով՝ սոյն երեք մասերուն կէս կողանջաները միատեղ կ'գերակարենք մինչեւ սնակուշտ . ենթաթեւին ժ խոռոչին կարաբաժինը ձեւիչով կ'կտրենք (Տես 589րդ օր.) ու դայն թողելով՝ առաջամասին ժ—Մ—ն և կողամասին Զ—Ղ գծիրը միայն կ'գերակարենք իրարու :

Արդ , կոնսկարին հետեւելով ե հատկէտէն մինչեւ կ կէտ (Տես 584րդ օր.) մակաթեւն իրեւ կողամաս նկատելով իրարու գերակարելէ ետք (Լաւ է որ յետսամասը ձեւուած ատեն կ կէտն ալ հատկէտով մը նշանակուի) , կողամասին կ անկիւնն ալ միատեղ կ'առնենք և սոյն երեք մասերը մէկանց կ'գերակարենք մինչեւ գոտելայր , այնպէս որ յետսամասին ու մակաթեւին և կէտերը և կողամասին Ղ կէտը միանան իրարու . ճիշտ այս կէտին կ'կցենք նաև ենթաթեւին խ անկիւնն ու հիմա ալ չորս մասերը միատեղ կ'գերակարենք մինչեւ երանին վարի ծայրը . այն է յետսամասին Խ—Յ գիծը մակաթեւի Խ—Է գծին , — Եթէ թեւին այս մասը խորշխորշանի համար ձեւուած է (Խնչակս ցուցոցին 587րդ օրինակն Խ—Է՝ զիծը) , անոնք ալ հիմա կարգագրելու է , — Կողամասին Ղ—Ղ գիծն ասոնց վրայ և ենթաթեւին Խ—Ճ գիծն ալ ամէնէն վրան գտնուելով (Խւագրութեամբ դիտէ 586 , 587 , 588 և 589րդ օրինակները) : Կմայ ենթաթեւին ժ—Խ գիծը կարգագրելու խնդիրը , որ թէեւ ներքուստ կողամասի Զ—Ղ գծին՝ այն է գոտելայրին գէմ չէզոք պիտի մնայ , բայց իր մեծութիւնը կողամասի գոտելայրէն լայն կազմուած ըլլալուն համար , երեք փոքր ծալելով կ'հաւասարեցնենք կողամասին (Տես 589րդ օր . սոյն ծա-

լերուն նշանակները) և ասով կ'աւարտի մեկնոցակին կցորդումը . բայց չըսմինք թէ ի՞նչ կերպով կ'կարուի : Ասիկա երկու կերպով կրնաց կարուիլ : Սուաջին , եթէ երեսի կերպասն հաստ ըլլայ . աստառները չէզոքացնելով՝ միայն կերպասը կ'կարենք ու արդու կով բանալով , աստառն մէկ եղբը միւսին վրայ ծալկար կ'ընենք : Երկրորդ , եթէ նիւթը բարակ է չորսը մէկանց կ'կարենք , աստառներուն կարաբաժինները կարերուն արմատէն կ'կտրենք , ու երեսի կերպասի կարերը բանալով՝ մէն մի շուրթն իր բացուած կողմին վրայ նեղ մը ծալելով կ'խծպէնք , այնպէս մը որ կարերն երկու կողմին վրայ երեսի կերպասէն կէս կէս հարմէդ լայնութեամբ երիգներ ձեւացնէն :

Գոտելայնն արժէքաւոր ժապաւէն մ'ըլլալու է և օձիքն ալ օրուան նորածեւութեան համեմատ :

Կէս եղանակի համար պատրաստուած մեկնոցներուն մէջ ընդհանրապէս վագկայով շուրծուած աստառ կ'գրուի և կցորդուած կարերն երկրորդ եղանակին համեմատ կ'պատրաստուի :

* *

Ամփոփ թեւով մեկնոցակ ձեւելու կերպը . — Ասոր ալ տիպարները նախորդ եղանակով պատրաստելէ ետք (Տես 584րդ օր.) , թեւին տիպարը կ'փոխադրենք կերպասին վրայ (Տես 590րդ օր.) թեւին առաջարկ կ'գոտելայր կ'գոտելայր կ'գոտելայր գէպի և բաղկաղերին նման հ—Գ գծէն Յ հարմէդ զուգահեռաբար գէպի վարօք ո—Հ կոր գիծը կ'քաշենք (Տես 590րդ օր . մուր ստուերով զարօք ո—Հ կոր գիծը կ'քաշենք ձգելով՝ կերպասը կ'կտրենք : ձեւը) , ու շուրջը կարաբաժիններ ձգելով՝ կ'կտրենք : Եթէ թիվը (Տես 591րդ օր . բաց զոյն ստուերով Յետոյ ենթաթեւին տիպարը (Տես 591րդ օր . բաց զոյն ստուերով կ'գոտելնք իրեն բաւարար կերպասի մը վրայ , Ճ—Գ գծէն Յ ձեւը) կ'գոտելնք իրեն բաւարար կերպասի մը վրայ , գիծը գոտելնք զուգահեռաբար գէպի վերօք պ—Հ կոր գիծը քաշելով , հարմէդ զուգահեռաբար գէպի վերօք պ—Հ կոր գիծը կ'կտրենք : Կարելու համար ալ շուրջը կարաբաժիններ ձգելով՝ կ'կտրենք : Կարելու համար ալ շուրջը կարաբաժիններու կցելով՝ բաղկաղերին նման երկու ս , պ և չ , պ կէտերն իրարու կցելով՝ բաղկաղերին նման երկու ս ամառն հարմէդ հաւասար կ'կտրենք ու մակաթեւին ածայրերը Կական հարմէդ հաւասար կ'կտրենք ծալելով կ'կարենք , որով գրեթէ ւելորդը կ'փոթթենք : Ապա՝ կ'կարենք ծղակարը , որով գրեթէ սովորական թէւի մը ձեւը կ'առնէ : Ամբողջութիւնը կցորդելու սովորական թէւի մը ձեւը կ'առնէ : Կցորդելու սովորական թէւի մը ձեւը կ'առնէ :

Մեկնոցակներուն յետսամասը թեւին հետ միակտոր ալ կ'ըլլայ (Խնչակս 596րդ նկարը) . այն ատեն նախորդին նման , սոյն երկու (Խնչակս 596րդ նկարը) . այն ատեն նախորդին նման , սախ . 576րդ մասին համար թիկնանկիւն ձեւացնելու է (Տես ԿԶ . տախ . 576րդ մասին համար թիկնանկիւն թիկնանկիւն ձեւացնելու է :

օր. զ կեր): Մակաթեւին արձակ եղրը դրսանքի ձեւով մտնուած անկիւններ ալ կրնաց կաղմուիլ (Խնչպէս 596րդ նկար): Իսկ առաջամտին անութը ձգելու է մինչև մտակուշու և կողամասին ու յետամասին գոտեկայրներէն գէպի վարի կողմերը միայն առնելով, յետակողման գոտեկայրը ներքեւէն կցելու է թեւին հետ ձեւացած նոյն կէտին, ինչպէս նաև գոտեկինդին:

Պ Ա Ս Ժ Յ .

Մ Ե Կ Ն Ո Յ Ն Ե Բ Ր

(Տե՛ս Կէ. տախ. 598, 599, 600, 601, 602, 604,
և 605րդ օրինակ ու նկարներ)

Մեկնոցը պարզապէս մեկնոցակին երկայնն է, այսինքն կէս եղանակի և ձմրան համար (Խնչպէս 600, 602, 604 և 605րդ նկարներ): Հետեւապէս տիպարը ձեւագծելու եղանակն ալ անոր նման է (Տե՛ս դարձեալ 584րդ օր.): Թեւը արձակ կոմ ամփոփ ձեւով շինելէ ետք, յետամտուը, կողամտուը և առաջամտուը կըրկնոցի հրահանդինդն համեմատ չարտանկելու է մինչև ուղուած երկայնութիւնը: Բայց մեկնոցներ ալ կան որ բոլորավին տարրեր երեւյթներ կունենան. և սակայն միշտ միեւնոյն տիպարէն կը բխին: Օրինակի համար արձակ թեւին յետակողմը՝ լինաց մինչև ստորոտին հաւասարելու չափ երկայն առնուել ու յետամտուին հետ կարսեիլ, կոմ կմնքի հաւասարութիւնն վար շեղ կտրուածքով մը ծածանիլ (Խնչպէս 600 և 604րդ նկարներ):

Կան ալ որ կէս փակած ձեւով կ'ըլլան: Այս պարագային տառչամտուին անութը մինչև Մ կէտ կ'ձգենք (Տե՛ս 59.իդ օր.), ու վարի կողմը կ'առնենք Մ—ո, օ—թ և ո—թ գծերով. և մակաթեւր կողամտուին հետ միակտոր (Տե՛ս 601րդ օր.). Որ է հ—ի—ս, Ս—լ և Մ—լ գծերով, ու ենթաթեւն ալ կ'առնենք ի—լր գծով (Տե՛ս 601րդ օր. կէտ կէտ զծով ներկայացած ձեւը): Թեղանիքը արձակ ձեւով շինելու համար կ'առնենք թ—գ—ա և ա—ր գծով. և ենթաթեւին շուրթը ք կէտէն քառորդ շրջանակի մը ձեւով մինչև Մ կէտ. իսկ յետամտուն վարի կողմը կ'ձեւենք կըկնոցի նման,

կրմոյ ըլլան որ յետամտու, կողամտու և թեւը մի կտոր ըլլայ (Տե՛ս 598.րդ օր.), ու թեւիւս թեւն ամփոփ ձեւով (Խնչպէս 602 եւ 605րդ նկարներ): այն ատեն ենթաթեւին տիպարը կ'ըջնք գլխիվար և թեւբերանն ու արմակտորը միակտոր կ'կազմինք, ու բայց ամբողջ միկնոցը ձեւացած կ'ըլլայ երկու մասէ (այն է 598 եւ 599րդ նկարներ):

Այս ձեւով կողմուած մեկնոցներուն կերպառը բարակ եղած ատեն, թեւբերանը քանի մը կարդ պղպջակով ալ կլմաց կողմուիլ (Խնչպէս 601րդ օր. վեալ զու զու զինի):

Մեկնոցին հետ եթէ ձեւամտուակ ալ գործածել նորածեւութիւն ըլլայ՝ ընդհանրապէս այս վերջինը դէպի քաղրթին վրայ կ'կեցնին, որով բազուկները շեղանկիւն մը կ'կազմին. ուստի թեւին ծզակարն ալ ք անկիւնէն Յ—է հարմէդ վարօք պէտք է կազմէլ, որ է լ—բ՝ զիծը (Տե՛ս 598րդ օր. ուր կիտ զծով զուցու զինի):

Կարեւոր զիաելիք. — Մեկնոցին կերպառը ձեւուած ատեն ընդպարձակութեան բաժինները ձգել մասնալու չէ (Խնչպէս 558 եւ գործակութեան բաժինները ձգել մասնալու չէ (Խնչպէս 558 եւ 559րդ օրինակներուն բանի մը կողմերը զու զու զինի): Ինչպէս նաև 559րդ օրինակներուն բանի մը կողմերը չէ, որ կատիպարները կտրուած ատեն միակուշտները չնշելու չէ, որ կարելի ըլլայ անոնց առաջնորդութեամբ և կըկնոցներուն հրահանգին համեմատ դէպի վար երկարել:

Վերջապէս փութանք եղրակացնել թէ յաջորդական երեք գասկերով բացատրուած այցելազգեատին, մեկնոցակին ու մեկնոցին այն հրահանգներն անոնց հիմանական ձեւերէն է որ ներցին առաջացուցինք. ուստի վերագարձ նորածեւութեան ժամանակ ու կայտուցինք. հետեւելու է սա՛ ու նա՛ մասերն անջատ կամ միակուր շնուռած ըլլալու պարագան, այս կամ այն կողմին վրայ եւ զած ծալեր, կամ դրասանքներ ձեւացնելը, եալին:

Պ Ա Ս Ժ Յ .

ԱՄԴԱՆ ԵՒ ՄԻՍԿՑՈՐ ԿՐԿՆՈՑ

(Տե՛ս Կէ. տախ. 606, 607, 608 և 609.րդ նկարներն ու օրինակներ)

Ամգան ձեւելու կերպ. — ԱՄԴԱՆ=զար կ'անուանուի այն վրանց հագուստները, որ ընդհանրապէս թիկունքին, տիգուսյօղին

ու լանջքին սահմանէն վար զիօտ ուսարկուի նման կ'կախուին իւրանին շուրջը (Տե՛ս 606 և 607րդ նկարները). ինչպէս նաև կընդուղաւոր ուսարկուները, կրկնոցներն ու թիկնազգեստները (Տե՛ս 613, 614, 619 և 620րդ նկարները):

Բուն իսկ ամղան կոչուածն առաջին ձեւն է (ի՞նչպէս 606 և 607րդ նկարները), ուստի զայն ձեւելու համար, իրանազգեստի յետսամասի տիպարը կ'զնենք տիպարցու թուղթի մը վրայ և առաջամասի տիպարին ուսածագը կ'կցենք թիկնածագին (Տե՛ս 608րդ օրինակը): Յետոյ է կէտէն 2—3 հարմէդի չափ ներսոք սկսելով ու գրէթէ փողեզրին զուգահեռական ձեւովը կ'քաշենք ե—կ գիծը որ կ'յանդի լանջքի լայնութեան գէպի կրծեզրին կողմի սէկերորդ աստիճանին վրայ: Ապա՝ առաջակողմին վրայ խոսքը գիրքով մը կ'քաշենք ե—կ գիծը և յետսակողմին վրայ ալ ե—կ գիծը, և ուզուած երկայնութեամբ կ'քաշենք նաև ն—ի ուղիղը: Կողմանկի տրամագին վրայ սրածայլը ալ կրնայ ըլլալ: Արդ, սոյն ե—կ, կ—ի, ե—ն և ն—ի գծերը փշանուակովներքնի թուղթին վրայ օրինակելով կ'ունենանք ամղանին տիպարը:

Առ հասարակ ամղանին մէջ վառ գոյն մետաքսելիքնով կը կրկնուի. ու կ'կցուի հագուստին վրայ նախապէս մակենթակարով մը նշանակուած ե—կ գծին, որ Ալպանական չեփիենի թեւին նման ծղին ծածկելով՝ առաջակողմին ու յետսակողմին վրայ կ'ծածանի:

Կրնայ ըլլալ որ ե—կ գծէն սկսելով 3—4 հարմէդ լայնութեամբ գոտիի ձեւ երիզ մը գրուի, որ է ե—կ և մ—լ գիծը. ու ծալըն ալ կոճակը կ'կարսուի (Տե՛ս 608րդ օրինակը):

Այս ձեւով ամղանը փոթփոթուած ալ կրնայ ըլլալ (ի՞նչպէս 606 և 607րդ օրինակները). այն տաեն ամղանին տիպարը քանի մը մասերու կ'բաժնենք և իւրաքանչիւրն իր լայնութեան չափ իրարմէ զուգահեռարար անջատ գնելով՝ կերպանը կ'ձեւենք:

Երբեմն ալ միայն ծղին ծածկելու չափ սահմանով մը կոր ձեւով կ'առնուի, որ է դ—թ—ի և ն—լ գծերը (Տե՛ս 608րդ օրինակը):

Ամղանի ուրիշ ձեւ մ'ալ կայ որ ուսարկուի նման կ'կցուի հագուստին ու ներքեւն ալ սովորական թեւ գնելու պէտք չմնար: Այս ձեւն ընդհանրապէս կէս ուսէն կ'առնուի, և չատ զիօտ ըրւալու համար, առաջակողմը ն' և յետսակողմը դ կէտերը կ'առնենք, որոնք շեղակի կը բարձրանան գէպի վեր և կամարածե կ'միանան

կէս ուսին վրայ, որ է դ—ս—ո—ն' գիծը. և ուսի կարին երկու կողմերը մէյմէկ փոքր սեղմօններ կ'շինուի, որոց առաջակողմինը մինչեւ երբուծին կէսը կ'յանդի՝ որ է ո և թիկան կողմինը մինչեւ կէս թիկնաւարու՝ որ է օ (և՛ս դիտ այս ամեն մանրամասնութիւնը 608րդ օրինակին վրայ): որպէս զի վարի ծայրերը չխուսափին ու տիգի գագաթն ալ գմբէթարդ յօրինուի: Եթէ սեղմօնները ներկայացնել չուզուի, ասոնց անջատութեան բաժինն ամփոփելու է: Վարի շուրջը կրնայ աղեզնածե ալ ըլլալ ու ծայրավ ալ, ինչպէս դ—ն' կամ դ—չ և չ—ն' գծերը: Այս թեւին վերի կողմը միայն կ'կցուի հագուստին, այն է թիկնանկեան հաւասարութենէն մինչեւ գումարու կ'ման արձակ: Ծղիին շարժումը երբուծին գէմ ու միւս կողմերը կ'ման արձակ: Ծղիին շարժումը երկանի գիծը փառական համար, ներքեի հագուստին անութը կրնայ սովորականէն մեծ բացուիլ, մանուանդ անթատակը:

* *

ՄԻԱԿՏՈՐ ՄԵԿՆՈՑ ԶԵԿԵԼՈՒ ԿԵՐՊԼ

Կերպասին եզրը ա—բ գիծ ու գ—դ գիծն ալ կրծափեղկին արամագիծն ըլլալով (Տե՛ս դարձեալ 608րդ օր.), արտազգեստի հրատապատճեն բարձրութիւնը գ—դ գիծն համարական առաջամասին տիպարը կ'զետեղենք գ—դ գիծն գիւմաց, լանջքին ընդարձակութեան բաժինը կ'ձգնք և կողանջատի գիծը կ'առնենք՝ կամ պարկածեւի նման շեղ գծով և կամ սնագիծը կ'առնենք՝ կամ պարկածեւի նման շեղ գծով, որ է ե—ե—զ: Ապա՝ միաւղացարին գէմ փոքր ինչ ձեւ տալով, որ է ե—ե—զ: Ապա՝ միաւղացարին գէմ փոքր ինչ ձեւ տալով, որ է ե—ե—զ: Հիմա ալ մակաթեւին Դ կէտը 1 հարմէդ լի կէտին վրայ կ'հանենք ու Զ կէտը 1 հարմէդի չափ անուշագութիւն անջատ. ենթաթեւի տիպարին թ և Ծ' կէտերը Յական հարմէդ մակաթեւին թ և Ծ կէտերէն անջատ գնելով՝ կ'օրինակենք, բայց այս կերպով Զ կէտը յետսամասին վրայ կ'կլէ զոր բառնարաց անկիւնը ծուէն մը կ'զնենք (Տե՛ս 609րդ օր. ինչպէս նամար անկիւնը ծուէն մը կ'զնենք և նամար անկիւնը ծուէն մը կ'զնենք 608րդ օրինակի սուերով ձեւին բարը ուրցի մանրամասնութիւնը, ուր միայն կարաբինեները չեն ներկայացուած՝ օրինակն ա՛ւելի չխնողելու համար):

իսկ, ինչպէս բոլինք, ու և է ձեւով վրանոց հագուստի կնդուղ կցուտծ տոտին ալ՝ ամբողջութիւնը ամզան կ'կոչուի. հետեւապէս կ'մայ կնդու ձեւելուզ եղանակը գիտնալ. զոր պկատի բացատրենք յետագայ ԺՀ. դասով:

Պ Ա Ս Ծ Կ.

ԼՕԴԻԿ—ԲԱԿԱՆԻ ԵԽ ԿՐԿՆՈՅ ՄԵԾՆ ԿԱԶՈՂՈՍԻ

(Տե՛ս ԿԸ. տախ. 610, 611, 612, 621 և 622րդ օր. ու Ելարները)


Ֆրանտացի ծանօթ Բակլան զօրապետին անուամբ յորջորջուած վերարկուի մը ձեւը կայ որուն մակաթեւին ցցունը կ'համնի մինչեւ ուղնատոր. և այս ալ ուրիշ զգեստներու նման՝ կանանց հագուստի կարգն անցուծ օրէն՝ սկսու թեին առանձնայատուկ այն ցցունը զանազան ձեւերու վերածուիլ:

Լօդիկ—Բակլանը իրը վրանոց հագուստի ընկալեալ ձեւ, կրկնաշար կամ միաշար կոճկէնով կ'ըլլայ ու պարկածեւ կրկնացի նման, այն է կոնամէջ առանց կորի ու կողանչատը շեղ զծով. բայց նուրածեւութեան բերումավ կրնայ կոնամէջը կարով ու կողանչատն ալ կրկնակար արտազգեստի նման ըլլալ:


Լօդիկ—Բակլանի առաջամասն ու յետամասն օրուան նորոյթին համեմատ ձեւագծելէ ետք, ուսին կարը մակերեսին վրայ կը հանինք, այսինքն յետամասին թիկնածագը կ'բարձրացնենք, որ է ա—բ զիծը (Տե՛ս 614րդ օրինակ) ու առաջամասին ուսուծագը կ'ցածցնենք, որ է դ—ե զիծը (Տե՛ս 610րդ օր.): Յետոյ յետամասին ժ կէտէն 1 հարմէդ զէպ ի ծոծրակին կողմը մզուելով գ կէտը կ'նշակինք. և այս կէտէն շեղ զիծ մը կ'սկսինք ու զէպ ի ուսումնկեան գմբեթարդ ձեւի մը վերածելով կ'ձգենք և կէտին վրայ, ուր թիկնածագն ու կողնաւարան իրար կ'խառնուին, որ է զ—!—Զ զիծը (Տե՛ս 611րդ օր.), և կարաբաժինը ձգելով կերպասը կ'կըուրինք: Հիմտ ալ առաջամասին դ կէտէն Զ հարմէդի չափ վարօք զ կէտը կ'նշանակինք ու մեղմ վէտկոր գծով մը կ'ձգենք Ռ կէտին վրայ, որ կ'խառնուի անթատակին հետ, և ամբողջութիւնը կ'կազմուի զ—Ռ—և, գծով (Տե՛ս 610րդ օր.):

Թեւը ձեւելու համար, մակաթեւին ու ենթաթեւին ի և կէ-

ՀԱՅԱՍՏԱՆԻ



¶. SULLIVAN



տերն Զ հարմէդ և Ծ ու Ծ' կէտերն ալ Յ հարմէդ անջառ գնելով
(Տե՛ս 61 Հրդ օր.), արտաքին շուրթերը կ'օրինակենք, վրանց հա-
գուսաներու վերաբերած կանանին համեմատ ծղակարին վորի
կողմը կ'խոսուրենք ու եթէ թեւբերանն անկիւնաւոր ձևացնել
կողմը կ'խոսուրենք ու եթէ թեւբերանն անկիւնաւոր ձևացնել
կուզուի, Յ—Յ գիծը կ'քաշենք և արմակարին վարի ծայրը կը
հաստատենք Ֆ անկիւնավի:

Եւ սրովհետեւ առաջանախն վերի կողմէն չնշուած մասը նա-
խապէս թուզթի մը վրայ օրինակած ենք, այժմ նոյն մասին Ռ
կէտը կ'հաւասարեցնեք մակաթեւի Զ կէտին ու անոր և կէտը
կ'ուզգենք գարձեալ մակաթեւի Դ կէտին կողմը և շուրջը կ'օրի-
նակենք. նոյնապէս ալ յետամասին վերի կողմէն չնշուած մասին
Բ կէտը կ'կցենք մակաթեւին վրայ կարմուած և կէտին ու Վ կէտը
կ'ուզգենք գէպ ի մակաթեւի Լ կէտին, սրոցմով վերի կողմը ա—Ք
Ե—Դ գծերով սեղմօն մը կ'ձեւանայ: Կ'մայ շուրջի կարաբածին-
ները ձգել ու կերպասը կորել (Առ դիեկ 612 դ օրինակին ման-
րամասնութիւններ): Եթէ ու զուի բան բականին ձեւովը ներկա-
յացնել. այն առեն յետամասին վերի կողմը Ֆ կէտին սկսելով
կ'իջեցնենք ու առաջանան ալ Պ կէտին, և երկու մասերը միա-
կամորի վերածելով՝ կ'կցենք մակաթեւին ցցունը, այնալէս որ թե-
ւին փողեղրին գէմ Զ—Յ հարմէդի չափ փաքրիկ միջաց մը միայն
ստացած կ'ըլլայ և առանց սեղմօնի:

ԿՐԿՆՈՅ ՄԵԾՆ ԿԱՐՈՂՈՍԻ

ԺԱ. Դարուն սկիզբները համբաւաւոր միջն կարողութիւննո-
ցին ձեւն իրուեւ ուսարկու կամ իրրիւ տամեկարգել շատ անգամ
նորաձեւութեան շարքավ երեւան կուզայ: Այս հազուստին մար-
մինը նոյն և նմանն է կրկնաշար կոճկենավ պարկածե կրկնոցին,
ու երկայնութիւնն ալ առ նուազն կ'ըլլայ մինչեւ գնդզուցը, միայն
կոզանջաներուն վարի կողմն ընդարձակ կ'ձեւուի, ստորաբը տա-
րածուն ըլլայ:

Այս հազուստին գլխաւոր ու աչքառու մասը թեւն է (Տե՛ս
622 Հրդ օր.), որ բոլորպին տարբեր երեւոյթ մը կուտայ անոր.
զայն ալ ձեւելու համար, նախ սպարական պարզ թեւի մը տի-
պարը կ'պատրաստենք (Տե՛ս 621 Հրդ օր.), մակաթեւին վերի կողմը
կ'բաժնենք վեց մասերու որով առաջ կուզայ Զ, ա, թ, դ, գ, դ

և կ կէտերը . ենթաթեին վերի կողմն ալ կ'քաժնենք չորս մասերու և կունենանք Զ, և, 0, Զ և ի կէտերը . ապա՝ Ե—Ժ գիծը կէս ընելով մէջտեղի Ֆ կէտը 0 կէտին հետ ուղիղ գծով մ'իրարու կ'միացնենք ու կ'կտրենք : Յետոյ այն երեք մասի վերածուած տիպարը կ'փոխադրենք կերպասին վրայ և վերի կողմերը մէն մի կէտերէն մաս առ մաս թեւբերանը դարձնելով՝ գրեթէ քառորդ շրջանակի մը ձեւը կուտանք անոր (Տե՛ս 622րդ օր . մանրամասնութիւնը) : Ի վերջու, 0—Ֆ և 0' Ֆ' գծերէն խոտորնակի գէպ ի գրասօք կ'քաշենք 0—Ր և 0'—Լ գծերն ու զանոնք իրարու կարելով՝ վերի կողմը կ'կցենք անթածրին, իրրեւ սովորական պարզ թեւ . և հագուստած ատենն 0—Օ'—Ր—Լ կորը բաղկին ներքեւը կը կենայ, ու թեւբերանն ալ վէտ վէտ խոպոպներ կ'ձեւանան :

Պ Ա Ս Փ Բ .

Կ Ա Գ Ո Ւ Ղ Ա Բ Ե Խ Ե Խ Ե Լ Ո Ւ Կ Ե Ր Պ Պ

(Տե՛ս 613էն մինչեւ 620 և 623 ու 224 նկարներն ու օրինակները)

Կնգուղն երկու գլխաւոր սկզբունքով կ'ըլլալ, մէկ մը որ հառ գուստին փողեղրին կցուելով և ուղուած ատեն գլուխը կ'անցուի ու կ'ծառայէ իրրեւ անձրեւանոց կամ օգի բուռն յարձակմանց գէմ պաշտպանուելու (Ի՞նչպէս 613 և 623րդ նկարները) . կամ իրրեւ զարդ կ'կախուի հագուստին ուսերէն գէպի կոնամէջին վրայ (Ի՞նչպէս 614 619 և 620րդ նկարները) :

Նախ բացատրենք գլուխ անցուելիք տեսակը՝ որ ընդհանրապէս բոլորչ ձեւ մը կ'ունենայ ու շրթունքը փոթփոթուած :

Այս կարգի կնգուղներուն համար զայն կրողին գլխուն չափն առնել պէտք է : Ուստի մեղրական երկող ծոճրակին վրայ գնելով՝ գլխուն վրայէն կ'գարձնենք մինչեւ յօնքերուն հաւասարութիւնը, և համարինք թէ եկաւ 45 հարմէգ : Արդ, առաջամասին տիպարը կ'գնենք թուղթի մը վրայ և յետուածասի տիպարին թիւնածագը, զարդ օձիքներ ձեւագծելու հրահնագին նման՝ կ'հաւասարեցնենք ուսածագին (Տե՛ս 615րդ օր .) . փողեղրը կ'օրինակենք մինչեւ ա կէտ, այն է Դ կէտէն 3—4 հարմէգ գէպի դուրս, և քանակը լ և Զ կէտերուն հաւասարեցնելով՝ կ'քաշենք լ—Զ—Բ

գիծը : Այժմ գլխուն չափին վրայ 5 հարմէգ ալ բարդելով՝ 45+5=50 հարմէգը կ'գնենք լ կէտէն Լ—Բ գծին վրայ, որով կ'հաստատուի բ կէտը : Յետոյ բ կէտէն մինչեւ ա կէտ կիսաշրջանակածե կը քաշենք կնգուղին արտաքին շուրթը և փշանուակով կ'օրինակենք Լ—Ա, Լ—Բ և Բ—Ա գծերն ու կ'ունենանք կնգուղին տիպարը՝ և Լ—Բ գիծը կերպասի ծալքին դնելով՝ շուրջը կարաբաժններ կը ձգենք ու կ'կտրենք :

Կարելու համար, նախ ա—Բ եղրը 2 հարմէգ լայնութեամբ խծիպ մը կ'ընենք, յետոյ Լ—Բ գծին մէկ հինգերորդը լ կէտէն վար գ կէտը նշանակելով՝ մինչեւ ա կէտ՝ կիսարուրշի գիծ մը կը քաշենք և այս գծին երկայնութեամբը (բնականաբար միւս կողմն ալ միատեղ հաշուելով) զօրաւոր տեսակ խծերից մը կ'կարենք ու կ'անցնինք շրթունքի խծիպին մէջ, և կծկելով՝ երկու ծալքերը լաւ մը կը հաստատենք : Եւ յետոյ կ'կցենք փողեղրին . այնպէս որ կոնակէն վար ձգուած ատեն՝ կծկուած շրթունքը կ'հաւասարի զ—Ա գծին և վարի եղրը կ'կազմուի դ—Ա գծով (Ի՞նչպէս 613 և 624րդ նկարները) :

Երբեւ զարդ շինուելիք կնգուղները .— Համարինք թէ սրածայր կնգուղ մը ձեւելը կ'ուղինք (Ի՞նչպէս 614րդ նկարը) որ միանգաւման փողեղրին հետ շրջապատուելով մինչեւ հագագը միանայ . այս ձեւը կ'կազմուի երկու մասով . ամէն առթիւ իրանազգեստին տիպարները գարձեալ նախորդ հրահնագին համեմատ թղթին վրայ կ'գնենք և ուղիղ գծով մը կ'օրինակենք Լ—Զ գիծը (Տե՛ս 618րդ օր .), փողեղրին ձեն ու կրծկողէն 2 հարմէգի չափ զուգահեռաբար գէպի գրոսօք ա—Բ գիծը, որ 4—5 հարմէգ երկայնութիւն մունենայ . յետոյ Զ կէտէն սրածայր գծով մը կ'բարձրացնենք ուսէն 2—3 հարմէգ անջատ և աղեղնաձև գծով կ'միացնենք բ կէտին, որով կ'ունենանք սրածայր կնգուղին յատակածեւը : Ապա Ե կէտէն գոգաւոր գիծ մը սկսելով կ'միացնենք վզարեկորին ու ասով ալ կ'ձշգուի երեսի մասին շրթունքը :

Արդ, յատակածեւին տիպարը կ'գնենք կերպասին վրայ ու շուրջն օրինակելէ ետք, 2 $\frac{1}{2}$ հարմէգի չափ արտաքին շուրթը նեղցնելով, կերպասը կ'կտրենք (Տե՛ս 616րդ օր . ուր բուն տիպարին մեծութիւնը կէտ կէտէն մասը կերպասին վրայ դնելով (Տե՛ս 617րդ օր .), 2 $\frac{1}{2}$ հարմէգ արտաքին շուրթը զուգահեռաբար մեծ կը

կտրենք. բայց ի Զ ծայրին՝ երկու կողմէն, որոնք շեղանկիւններ կազմուելու հն Յատակի մասին նեղ ու երեսի մասին լոյն կը տրաւելուն պատճառն այն է որ, իրարու կարուած ատեն երեսի մասը դէպի յատակի ու շրթունքը միավառը երեւաց :

Զարդի համար շինուած կնգուղներուն յատակի մասին վրայ ընդհանրապէս ընտիր ու վառ գոյնով մետաքս կ'ձածկուի, նոյն իսկ վատկոյուած դուիճով կամ պղպղակներ կազմելով :

Կրնաց ըլլու որ երեսի մասը չ'ող գծով կազմուի ու կը ծօծիքի նման շրջուքներ յօրինուի: Եւ զացէ վարի ծայրը փոքր կիսու բոլորակ կազմել ու զուի (Խնչպէս 6 Զ-դ նիար):

Թերեւս արտաքին շրթունքն իրար խաչածեւղ շրթունքներ կազմել ու զուի (Խնչպէս 6 Զ-դ նիար):

Վերջապէս կնգուղն ի՞նչ ձեւով տղ շինել ու զուի, անոր ձեւը նախ օրուան նորածեւութեան թերթին մէջ ընտրելէ ետք, դիսելու է երանին-վրայ զանուած սահմաններն և ըստ այնմ ձեւագծելու է տիպարը:

* * *

Դ Ի Մ Ա Կ Ա Զ Գ Ե Ս

Դիմոկաւոր պարահանգէսներու մէջ զանազան տղի ու երերի տարագներով ցուցադրուելէ զատ կայ նաև մասնաւոր հաւզուս մը Տօմինօ=ԴիՄԱԱԱՁԳինօ կոչուած ձեւը, որ երկու սեռին համար ալ զրեթէ միեւնայն է, ուսերէն մինչեւ գեանի հաւզուած թիւն իչած ու կամ գունաւոր լոթեղէն և կամ մետաքս եղէն լոյն շապիկ մը, փոթփոթուած կնգուղով (Խնչպէս 6/3 Եւ 624րդ նիարեր): միան թէ կնոջական դիմոկագեստը փոքր զառքաշ մ'ալ կրնաց ունենալ (Խնչպէս 624րդ նիար):

Ասոր մարմնն երեք մասէ կ'ըստկանայ, որոնք են առաջամսու ու մէկ յետամսու, առաջակողմը կ'փակուի միաչար կոճկէնով (Խնչպէս 6/3րդ նիար): իսկ յետակողմը վարուի կրկնակի հակածուով կ'ըրլու ու կազմնչառներն ալ պարկածեւ հակածուի նման կ'կտրուին (Խնչպէս ԿԱ. 510րդ օր, կամ ՀԱ. Տախ. 649րդ օր): որպէս զի ստորածը տարածուն ըլլոյ:

Թեւն ալ սուսական շապիկի թեսի նման կ'ըլլոյ (Տե՛ս ԻԵ. Տախ. 424րդ օր.), ու ծալօծիքով մը կ'վերջանայ կամ կնգուղին փողեզրը շատ տարածուն կ'ձեւուի և 6—7 հարմէգ ալ զուգահառար մէծ կ'կտրուի ու բան հետաւոր թենէն փոթփոթելով կը կցուի շապիկի փողեզրին, անոքէս որ փղին շուրջը բազմափոթ վերջաւորք մը կ'կազմուի (Խնչպէս 623րդ նիար):

Պ Ե Ջ Ա Վ Ը Ը

ԴԵՐՁԱԿԱԿԵՐՊ ԿԱՐԵԼՈՒ ԵՂԱԱԿՆԵՐ

Ն Ա Խ Ա. Դ Ի Տ Ե Խ Լ Ք



ԲկԱՐ ԴԱՐԵՐէ ի վեր երկու սեռին ալ հաւզուածներ ձեւել և կարելու արհեստը թէ՛ Արեւելքի և թէ՛ Եւրոպայի մէջ այլերուն յատուկ էր որոնք կ'կոչուէին ԴԵՐՁԱԿԱԿՆԵՐ դայլու: Եւ հազիւ 70—80 տարի կայ որ տաջին անգոտ Բարիզուէիք սկսեցին իշրենց սեռին հագուստ շինելու արհեստին ձեւնարկել, ու անոնք ալ կոչուեցան գուրիւթէ=ԿՈՐԱԲԻՆԻ: Ու եզաւ որ շաւրջ քսան տարիէ ի վեր կիները սկսան հագուստներուն սձերովը ձեւուած ու կարուած հագուստներ կրել, այս ալ կոչուեցաւ ժօն—դայլու, զարիւմ դայլու կամ Խօպ—դայլու=ԴիԲՁՈԱԿԱԿԵՐՊ, որով այս ձիւզը գարձեալ անցաւ գերձակներու: Որավհետեւ կնոջական լընթացիկ տարագներու զլիստուոր բար շուլլել, փաթթել և սո՛ ու նո՛ կովերը ժանհակներ, ժապաւէններ ու տարրեր գոյնէ մետաքսի կարուածնք փա՛ցնելէն անդին չէր անցներ. մէկ խօսքով, արաւեստէ զուրկ պուարիկի սեթեւեթներ էին անոնք: Մինչգեա զերձակակիերա հագուստները մշակուած ու դրական ձիւզ մ'ըլլալով՝ կարուէիք գասալիք եղան անոր մասին և ամփափուեցան միայն իրենց պարզ ձիւզին մէջ:

Արդ, լինչպէս զանազան տափիներով յիշած ենք, գարձեալ կ'կրկնենք թէ հագուստ կարելը զերձակութեան արհեստին զըլլաւոր ու գմւարագոյն ձիւզն է. որտիհետեւ հագուստ ձեւելն այսօր զիտութիւն մ'եղած է, զոր քիչ շատ զարգացաւմ ունեցող մըն ալ կարծ ժամանակի մէջ կրնաց սորվիլ, նոյն լակ 14—16

տարեկան պատանին։ Մինչդեռ կարելու արհեստը՝ նոյն տարիքն եղող մը 4—6 տարիներ վարպետի քով յարատե աշխատելսվ հազիւ կրնայ ձեռք բերել։

Եւ տակայն կ'զարմանանք մեր միջավայրը գտնուած լինքնակոչ գերձակուհիներու վրայ, որոնք իրերավարժութեամբ կ'փոխանձեն իրենց աշակերտներուն, այն ամէն կոշտ ու կոպիտ կարելու կերպերը՝ որոնք արհեստաւորին համար քոթուածք միայն կնկատուին։

Մենք չտեսանք Օրիորդ մը կամ Տիկին մը որ չբաղձայ լաւ կարուած հագուստ մ'ունենալ, մանաւագ կրծօձիքներով, և չտեսանք գերձակուհի մ'ալ որ յաւակնութիւն չունենայ թէ լինքը կրնայ լաւ հագուստ կարել, նամանաւանդ կրծօձիքներով ու նոյն իսկ գերձակակերպ։ Ասոնց արտադրութիւններն ամէն օր կ'տեսնենք իրենց յաճախորդներուն վրայ, — ըլլայ կնոջական կերպով կարուած թէ ըլլայ գերձակակերպ, — ու առաջին ակնարկով տպաւորութիւննիս այն կ'ըլլայ՝ ինչ որ չմարսուած կերակուրի մը ստամոքսէն ետ դառնալու պահուն կ'զգանք։ Նոյնպէս գործէ հատկող ամէն արհեստաւորի վրայ ալ միեւնոյն տպաւորութիւնը կ'թողու, նաև շատեր բանիւ բերանայ մեզի հաղորդած են այն բոլոր անձարակ ձեռքերէ ելած լրճառուկ գործերը, որոնք հագուստ կ'կոչուին։

Կ'հասկնանք թէ ապրուստը ճարելու համար ամէն ջանք ներելի է, բայց անվարժ աշխատութեամբ ուրիշն նիւթերը հագուստ անունին տակ տձեւ ու անսարուեստ պատրաստութիւններով լրճառուկ ու փոխարէնն ալ վարձք ստանալ։ Խղճի ալ գէմ է, երբ մէկը չգիտցած գործին կ'ձեռնարկէ ու վարձք կ'ստանայ։ Միայն սա վերջին 8—10 տարուան մէջ է որ մեր ժողովրդեան զարգացեալ մասը հասկնալ սկսաւ թէ մօսիսդրա կոչուած գերձակուհիները կարող չեն գերձակակերպ հագուստներ շինել, — իբր թէ սովորականը լաւ գիտնային — ու կ'դիմեն գերձակներու։

Ստուգիւ շատ ամօթ է չգիտցածը գիտցածի պէս ծախելու յաւակնութիւնն ունենալ։ Զանալու է նախ արհեստին ծառայել, անոր զարանեացը թափանցել ու տիրանա՛լ, և ապա՝ շահագործելու համար ալ պահանջկոտ ըլլալ։

Ահա սոյն գլխուն մէջ պիտի խօսինք գերձակակերպ կարելու

էական ձիւղին վրայ. ուստի արհեստը սիրող և ուշիմ հետեւողը մնձապէս պիտի կրնայ օգտուիլ մեր տուած հրահանգներէն, զոր ջանացինք գծագրական խնամեալ աշխատութեամբ և իր բոլոր մանրամաննութիւններու ուղարկերացնել, որոնք գործին արհեստագիտական մասը կ'կազմեն։

Պ Ա Ս Ա.

ԶԱՆԱՑԱՆ ՁԵՒԵՐՈՎ ԳՐՊԱՆՆԵՐ ՊԱՏՐՄԱՏԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

(Տե՛ս ԿԹ. Եւ Հ. Տախ. ներուն 625էն մինչեւ 643րդ օրինակները)

Գերձակակերպ վրանոց հագուստ կարելու ժամանակ եթէ երեսի կողմը գրպաններ. շինել կ'ուզուի, նախ զանոնք պէտք է պատրաստել, Գրպանները եօթը գլխաւոր կերպով կ'ըլլան։ Ա. — Շրթունքը նեղ բուծինով. Բ. — Լայն բուծինով. Գ. — Առերանը ուրարկարով գարձնել. Դ. — Մտած ելած փեղկով. Ե. — Փեղկը վրայէն գրուած. Զ. — Վեր կեցած նեղ գրպանափեղկով. Է. — Մակաղբութինով։

Գրպանին տեղն ու գիրքն ալ օրուան նորաձեւութեան համամատ կ'ըլլայ, որ է հորիզոնական, չեղ, կոր կամ ուղղաձիգ։ Բացուածքն ալ մասնաւոր մեծութիւններով կ'սահմանուի, որուն վրայ արգէն գաղափար մը տուած ենք (Տե՛ս 161 Եւ 166րդ հջերը)։ Հիմա ալ կ'փութամք աւելցնել թէ մեծ կրկնոցներու և արտազգեսաններու վրայ հորիզոնական գիրքով շինուելիք գրպաններուն մուտքը կ'ձշգուի՝ 13րդ չափն ուսածագին կէսէն ուղղաձիգ կերպով զէպ ի վար 4—5 հարմէգ պակասով հասած տեղին վրայ. և բացուածքն ալ 13րդ չափէն 2 3 հարմէգ մեծ, որպէս զի ձեռքին մուտքը գիւրին ըլլայ։

Առաջին կերպը. — Գրպանին շրթունքն այն ատեն նեղ բուծինով կ'շինուի՝ երբ կերպասը բարակ կամ առ առաւելն միջին հաստութեամբ է ու գծգծուող տեսակէ չէ։ Արդ, գրպանին տեղն ու գիրքը հագուստին երեսի կողմը ձեւագծելէ ետք, նոյնը կ'օրինակինք միւս կողմը և համարենք թէ ունեցանք Ա.—Բ գիծը (Տե՛ս 625րդ օր.)։ Միեւնոյն կերպասէն առէջքին ուղղութեամբն և 3—4 հարմէգ լայնութեամբ երիզներ կ'կարենք, որոնք գրպա-

Նին մուտքէն կ—օ հարմէդ երկայն ըլլան։ Սահմ երեսը կ’ծած-
կենք հաղուստին երեսին, ուզիզ եղբերը դէմ առ դէմ Բ—Ա.
գծին, և երկիցներան կ—օ հարմէդ երկայնութիւնը կէս առ կէս
երկու կողմին վրայ հաւասարակշռելով (լիչպէս ՅՀրդ Գ—Դ եւ
Ե—Ը ուրբերը)։

Այս գիրքին մէջ լու է որ խըստքանչիւր չէրտին սէջտեղի-
րէն մէրմէկ գերակար ընենք. յետոյ մեքենապին ներքեւը զնելով
Ս.—Բ զծին մէն մի եղրէն շրթնաւարտ կ'կարմէք, ծայրերը 4—5
ական տակ թափադարձ կարելով, որպէս դի չքակուին:

Ա—Բ գիծը ձեւելով կ'կարենք ու Երիտարենք, կ'շընէնք,
շուրջը նեղ բաժին մը ձեւացնելով մանր մանր կ'զերակացնեք
(Տե՛ս ՅԵՅՐ օր.)։ և բաւծինին շրթունքը կրկնակի վրայիսրապէ լ-
րարու կ'կցենք (Լա՛ւ դիտէ 6 նոր օրինակին վրայ սոյն պիտար-
հերուն սրբազն կերպը)։ Այժմ յայտնի է թէ 3—4 հարսէգ լու-
նութեամբ առնուած կերպասէ երիտարեն երկու գեր ունին, նաև
շրթունքը բաւծին կ'ձեւացնեն, և երկրորդ՝ շրջօնին կողմն առե-
րան (Խոչպէս ՅԵՅՐ օր. Թ—Ժ եւ 6—9 եղեւը)։

Նախագես որսչուած ըլլուլով թէ հագուստին շուրջը քա՞նի
կարդ թափանցկար պիտի ըլլայ ու ի՞նչ լայնութիւնով, անոր հա-
մեմտատ ալ զրաբանին շուրթերը միենայն ձևով պէտք է զարդար-
ուի: Արդ, համարենք թէ երկու կարդ լնել կ'ուզենք՝ մէկը թա-
փանցելը ու միւսը 7—8 հազմէդ լայն. որպէսիւու զրաբանին
շուրթը բուծին ձևացած է՝ առաջինը մարմնին եղրէն կ'ընենք ու
երկրորդն ալ անկէց վար: Նկատողութեան առնելու է նաեւ
երկու ծալրերուն տրուելիք ձևուը, որ կրնայ կրծեղրին զերքովիլ
ուզգանկիւն կազմուիլ (ինչպէս 637րդ օր. զ—լ), եթէ զրաբանը
խոտոր բացուած է՝ զարձեալ կրծեղրին հետ զուզահետական զծով
մը կազմէլու է, ասով ալ չեղ անկիւններ կ'յօրինուին (ինչպէս
642րդ օր.). կամ եռանկիւններ կազմել ուզուի (ինչպէս 629րդ
օր. զ, ի եւ ու անկիւններ):

Պարզ գերակարերը կ'քակենք ու շրջոնին կտղմէն լու
մը կարդուկենք։ Յետոյ խրաքանչիւր զբանին համար մէյ-
մէկ զոյտ բաւարար մեծութեամբ տատառ կտրելով՝ մէկ հասը
վարի շուրթի առքերանին առկախ եզրին հետ ծալ կար մը կ'ընենք

Կթէ գրպանը խոտոր բացուած է՝ աստառն ալ անոր ձեւովը կը կտրենք որպէս զի յատակն ուղիղ կազմուի, որ է Ա, Բ և Գ, Դ անկիւնները (Տե՛ս Եկշրջությունը): Գրպանին յատակը միակտոր ալ կըր- նալ ըլլալ:

Հիմա ալ հագուստին կերպասէն 5—6 հարմէդ լայնութառաւը
ու թեղանին ուղղութեամբը շերտ մը ձեւելով՝ կ'զնինք միւս
գրապանցուին վրայ, վարի եզրը մեքենայով կ'կարենք (եթէ կեր-
պասը գճգնուող տեսակէ է վշարկար մը կ'ընենք), ու կ'ծածկենք
նախորդին վրայ, և այս անգամ ալ վերի կողմին հետ (Տե՛ս այս
ամենը ԵՇրդ օր.): Երեսի կողմը դարձնելով՝ երկու ծայրերը պլան-
դակէտ կոչուած գործողութիւնը կ'ընենք: Այս ալ պարզապէս օ-
գաթելով զ—ը և Ա.—ե գծերուն (Տես ԵՇրդ օր.) ուղղութեամբն
ասեղը վերէն վար և վարէն վեր միսել ու քաշելով մանր թա-
փանց կար մը կ'ընենք և յետոյ երկու երեք անգամ նոյն երկայ-
նութեան վրայ թել ձգել ու ոլորտակարով նուրբ բուծին մը կ'ձեւա-
ձնենք: Նոյն թելով եռանկիւնաձեւ ասղենկար ալ կրնայ բանութիւ-
նաւը:

գոհհեռական ըլլան, որով գրապանին դիրքը հորիզոնական եղած ատեն քառանկիւններ կ'կազմէն (ի՞նչպէս 637րդ օր.) և խոտոր եղած ատեն ալ շեղ անկլոններ (ի՞նչպէս 642րդ օր.): Արդ, հագուստին շուրջն ի՞նչ լայնութեամբ թափանց կար որ պիտի ընկած, հիմա ալ ձիշտ նոյն լայնութեամբ մեքենայով կ'կարենք, որոնք են ե—զ և ե—ը, իւրաքանչիւրին սկիզբն ու վերջը 4—5ական ասեղ վերագարձ կարելով, ու մեծ խնամ տանելով որ ա—բ և գ—դ գծերուն սահմանը չանցնին (լաւ դիտէ 627րդ.): Յետոյ ձեւիչին ծայրը զ—պ գծին 1½ հարմէզի չափ հեռուէն գրապանին շրթունքի գծին մխրճելով ուղիղ մը կ'կարենք, մինչեւ ա—բ գծին ալ նոյնչափ մնալու, ինչպէս նաեւ իւրաքանչիւր կողմի առերեանին ծայրը վեր գարճնելով՝ մինչեւ կարուած անկիւնը շեղակի կ'կարենք (Այս գործուլութեան շրջօնի կողմի երեւոյքը տե՛ս 628րդ օր. եւ թ, եւ զ, թ, ժ կտրուածքները): Երկու շուրջին կարերն ալ նախ մատերովմիս կ'բանանք, ու երեսի կողմէն եղնդահարելէ ետք, լաւ մը կ'արդուկենք, ու առբերանները գէպի մէջ շրջելով՝ լայն բուծիններ կ'ձեւացնենք. այնպէս որ շուրջերը ոչ իրարու վրայ ելն և ոչ ալ անջատ մնան. արդէն կերպասին թանձրութեան բաժինին համար կանխամտածութիւնն ունեցանք իրարմէ 5—6 հարմէզ հեռու գնելու՝ որ ներս շրջուած ատեն շուրջերաւն առաջ բերած բնական լնդլայնումն արգելք չըլլայ: Դարձեալ երկու շուրջերը կրկին վրայկարով իրարու կ'միացնենք, ու եռանկիւն մնացած ծայրերը (ի՞նչպէս 629րդ օր. ե, թ, հ) ներս ծալելով, հագուստը կ'շրջենք գրապանին վրայ և մեքենայով կ'կարենք, որով երեսի կողմը ուղղանկիւն գծեր կ'ձեւանան (ի՞նչպէս 629րդ օր. զ—ը զիծր): Ապա երեսի կողմին երկու շուրջերէն մէյմէկ թափանց կար կ'ընենք, ինչպէս նաեւ բացուած կարերուն կամ մէջի կողմէն կամ հագուստին կողմէն (ի՞նչպէս 629րդ օր.): Միւս գործողութիւնները նախորդին նման են:

Ծրբորդ կերպը. — եթէ կերպասը թանցը տեսակէ է ու չը գծածուիր. այս պարագային նախ գրապանին բերանը՝ այն է Ա—Բ զիծը կ'կարենք. նոյնպէս ալ 3—4 հարմէզ լայնութեամբ առբերանցու երկինները, և ասոնց ամէն մէկուն եղրը գրապանին շրջունի կողմի շուրջերուն հետ մնտաքս թելով խիտ ուրակար մը կ'ընենք, կ'արդուկենք ու կ'գարճնենք շրջօնին վրայ՝ մանր

մանր կ'գերարակարենք, ոլորտկարը երկուէն չտեսնուելու չափ շրջօնին կողմը սահեցնելով: Երեսի կողմէն դարձեալ երկու շուրջը կրկնակի վրայկարով իրարու կ'ցցենք. միայն թէ այս կերպին մէջ անպատեհութիւն մը տեղի կ'ունենայ, այն է հագուստէն մէյմէկ մաս ներս սահեցւն պատճառով՝ երկու ծալրերը փոքր ուռուցիլիններ կ'երեւան. այս ալ կ'անհետանայ շրջօնի կողմէն թեթեւ մը թրջել ու լաւ մը արգուկելով: Յետոյ երեսի կողմէն ուզուած լայնութեամբ թափանց կարերը կ'ընենք. և միւս գործողութիւնները կ'շարունակինք Ա. եղանակին նման: Զորբորդ կերպը. — Մտած ելած գրապանափեղկ շինելու համար, նախ բերանը պէտք է պատրաստել. ապա բացուածքին մեծութիւնէն ½ հարմէզ մեծ և 7, 8 կամ 10 հարմէզ լայնութեամբ փեղկին կերպը կ'ձեւենք, երեք կողմի եղբերէն կէս կէս հարմէզ անլայնութեամբ ներս շրջելով մանր մանր կ'գերակարենք. եթէ անկեւնները փոքր բուրբակներ ընել կ'ուղուի՝ անօնք ալ նկատողութեան կ'առնենք (ի՞նչպէս ինչ. տախ. 114րդ օրինակին գրապաղութեան կ'առնենք): կամ գուցէ միայն առաջակադմը բուրբակ ու յետուանափեղկը). կամ գուցէ միայն առաջակադմը բուրբակ ու թէ շուրջը նրբաւարտ մեքենայով կ'ուզուի, այն ալ կ'ընենք ու թէ շուրջը նրբաւարտ մեքենայով կ'արդուկենք: Հագուստին մէջ գրուելիք աստանէն շրջօնի կողմէն կ'արդուկենք: Հագուստին մէջ գրուելիք աստանէն շրջօնը կը ծածկենք ու շուրջէն չտեսնուելու չափ ներսօք ծալեցնը կը ծածկենք նուր կ'ընենք, գերակարները կը բաշելով՝ նոյն գիծը կ'հաւասարեցնենք գրապանի բացգիծ մը բաշելով՝ նոյն գիծը կ'ընենք (8Ե՛ս 639րդ օր., և որովհետեւ կէս հարմէզ ուացքին՝ որ է Ա—Բ (8Ե՛ս 639րդ օր. և որովհետեւ կէս հարմէզ ու զարձեալ կ'արդուկենք: Ապա ուրեմն, 5, 6 կամ 8 հանենք ու գարձեալ կ'արդուկենք: Ապա ուրեմն կողմէն զուգահեռական հարմէզ վարի շուրջէն վեր և աստանին կողմէն զուգահեռական հարմէզ վարի շուրջէն վեր կ'ընենք կ'ընեղենք, մինչդեռ երկու կողմէն կէս կէս կարաբաժին ծգած էնքինք, մինչդեռ երկու կողմէն զուգահեռական հարմէզ գարճնելով, փեղկը բացուածքէն ½ հարմէզ փոքր կ'ըլլայ, զոր կամաւ այնպէս ընել ուզեցինք, որ կազմուած կ'ըլլայ, զոր կամաւ այնպէս ընել ուզեցինք, որ կազմուած փեղկը բացուածքին երկու կողմէրէն 2—3ական պէս զի այժմ փեղկը բացուածքին զուգահեռակար կ'ընենք կ'հասենք. հիմա ալ փեղկին վերի շուրջը կրկին վրայկարով մը կ'հասենք.

տատեհնք գրպանի վերի շուրթին հետ (Տե՛ս այս ամեն մանրա-
մասնութիւնը 634րդ օր՝ վրայ): Կ'մնայ երկրորդ գրպանցուին վերի
կողմը հագուստին գոյնէն աստառ առբերան մը կարել (Եթէ հա-
գուստին կերպասը բարսկ է՝ լսու կ'ըլլայ որ սոյն առբերանցուն
նոյն նիւթէն գրուի), ու ծածկել փեղկին վրայ, ասոր ալ վերի
կողմը փեղկին հետ խիս վրայկարով մը հաստատել (ի՞նչպէս 643րդ
տեսիր): Ասոնցմէ ետքը պնդակէտը կ'ընենք ու աստառին շուրջը
յայտարարելով կ'կարենք: Աստառին շուրջը յարդարելու ժամա-
նակ մասնաւոր ինամք կ'պահանջէ վերի կողմի յարդարումը: ո-
րովհետեւ երբ նկատողութեան առնենք առբերանը, գրպանա-
փեղկին կերպան ու կրկնումը, վրայի աստառը և անոր կար-
ուած մասնիկը, որսնք բարդ ի բարդ իրարու վրայ գալով թանցը
պատռւար մը կ'կազմեն: ուսարի ամէն մէկը 2—Յական հազմէդ
իրարմէ երկայն թողելու է, որ աստիճանաբար յարդ դիրք մ'առ-
նէ: Այս ձեւով շինուած փեղկին ուզուած ատեն դուրս կ'հանուի
կամ գրպանին մէջ կ'պահուի, ասոր համար որ ՄՏԱԾ ելԱԾ Փեղկ
կ'անուանուի:

չի թօքերարդ կերպը . — Կայ որ փեղկը մնայուն կերպով երեսի
կողմը կ'մնայ . այս ալ Դ . կերպին նման փեղկը կ'պատրաստենք
ու վերի կողմը գնենեավ կ'կարենք և գէպի վար կ'դարձնենք (ի՞նչ-
պէս ՀԵ . Տախ . 709րդ օր .) Այս ձեւով ուզուած ատեն գրպանին
բացուածքը փեղկէն Զ հարմէդ փոքր ըլլալու է որ փեղկին անոր
պահուի : Կայ ալ որ ներքեւը գրպան չուզուիր այլ փեղկն իբրեւ
զարդ կ'դրուի :

Վեցերորդ կերպը . — Դէպի գեր կեցած նեղ զբանափեղկով գրպան մը շինելու համար՝ նախ գրպանին տեղն ու դիրքը հագուստին երեսի կողմը կ'գծենք : Արդ, համարենք թէ կուրծքին վրայ շեղ դիրքով փոքր գրպան մը շինել կ'ուղղենք (ի՞նչպէս 630րդ նկարը), հետեւապէս 10 հարմէդ երկայնութեամբ ու երեք հարմէդ լայնութեամբ երիդ մը կ'կտրենք (Տե՛ս 631րդ օր.), բայց կերպասը գրպանի դիրքին նման շեղութիւն ունենալու է, մանաւանդ կերպասը գծաւոր եղած ատեն փեղկին գծերը բացարձակապէս հագուստին գծերուն հետ համանման դիրքով ըլլալու է և երկու ծայրերը կրծեղրին հետ զուգահեռական, այնպէս որ բացուածքը շեղ եղած ատեն՝ գրպանափեղկին ծայրերն ալ շեղան-

կիւններ ձեւանոն որ է Ա.—Պ. և Դ.—Բ., միանդամայն, վերի շուրջ՝ այն է Գ.—Դ գիծը արտահակ մեղմ կորութիւնով մը կորելու է (Տե՛ս այս ամենը ՅՅլրդ օր.), որպէս զի կարուելէն ետք ուղիղ երեւալ:

Այժմ Ա.—Բ, Գ—Դ և Դ—Բ գծերը կէս կէս հարմէդ լայնութեամբ ներս շընելով շատ մանր կ'գերակարենք, երեսը կ'ծածկենք հագուստի երեսին և Ա.—Բ գիծը կ'հաւասարեցնենք մուտքի զծին (Տե՛ս 632րդ օր.), ու կէս հարմէդ լայնութեամբ կ'կարենք. ուրիշ կտոր մ'ալ վերի կողմը գնելով, որ է Ե—Զ և Է—Ը, անոր ալ Թ—Ժ գիծը կ'կարենք (Այս վերջինին կարելու սահմանը տե՛ս նոյն օրինակին վեայ ուր Ժ կէտը Բ կէտեն 1 հարմէդի չափ ներսօն կ'գտնուի): Այժմ Ժ կէտին հաւասարութենէն մինչեւ Թ. կէտ՝ բացուածքին գծէն կ'կարենք, զորս անկիւններուն կարարաժինները կ'ճղքենք ու արգուկով կարերը կ'բանանք և և վերի կտորը կ'մղենք շրջօնին մէջ (Տե՛ս այս երեւոյթը 633րդ օր. Ե—Է և Զ—Ը ծայրերն ու համեմատին բացուած կարը Թ—Լ գծով): Յետոյ գրպանցու աստառը (թերեւս բարակ մետաքսերէն առքերանով մը կրկնուած) ծալկա- րով մը կ'հաստատենք գրպանափեղկին վերի շուրթին հետ ու բաց- ուած կարին վրայ այ վշակարով մը: Ծայրերուն աւելորդները կը յարգարենք ու կ'մղենք դէպի շրջօնին կողմը, երեք կողմի զյու- թափանցկարերն ընելով՝ հիմա ալ մէջի կողմի երկրորդ աստառը կ'գնենք՝ վերի կողմը բացուած կարին հետ վրայկարով մը կ'հաս- տատենք. գտրձեալ երեսի կողմը գարձնելով՝ ծայրերուն թափանց- կարերուն մէջէն գաղտնի կէտ կարերով իբրեւ պնդակէտ կ'հաս- տատենք հագուստին հետ, և մէջի աստառը կ'յարգարենք ու շուրջը կ'կարեք:

Նորներորդ կերպը .— Գրպանը մակագլութեամբ ալ կ'ըլլայ ,
և այն ատեն ոչ բերան շինելու պէտք կը մնայ և ոչ ալ փեղի .
այլ գրպանի միջութեամբ կերպաս կարելով երեք կողմերը նեղ
կարաբաժններով կ'ծալենք , ու բերանին կողմը գոնէ Յ հարմէդ
լայնութեամբ իրբեւ առերան ներս կ'շրջենք , (նախապէս բերա-
նի գծին սեղմերիկ մը անցընելու է) , նոյն լայնութեամբ ալ թա-
փանց կար կ'ընենք . թերևս դրասանքի ձեւեր ալ յօրինելով : Լաւ
մը կ'արգուկենք և կ'գնենք հագուստին վրայ ու հիմա ալ զոյդ
թափանց կարերը կ'ընենք :

Գիտելիք.— Եթէ հագուստին մէջ ընդհանուր կերպով առառա չպիտի ծածկուի, այն ատեն մէջը կախուած աստառ գրպանները լու նիւթէ ըլլալու են ու շարթերն ալ մէջ ծալլուած։

Դրպաններ ալ կան որ սեղմօնի կարերէն կ'ըլլան, նոյն իսկ ուղղաձիգ դիրքով նեղ գրպանափեղկեր ալ դրուելով, ևայն ևն։

Պ Ա Ս Բ .

ՀԱՆՁԱՊԱՆԱԿԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

Դերձակակերպ կարուելիք բոլոր հագուստները լանջապանակ պէտք է ունինան, ըլլան պօլեր, ցալգանց, թիկնոց, թիկնազգեստ կամ կրկնոց։ Որովհետեւ կօշիկին փայտէ կաղապարն ի՞նչ դեր որ ունի կօշիկին համար, նոյնն է նաև լանջապանակը դերձակակերպ հագուստներ պատրաստելու գործին մէջ։ Արդ, լանջապանակը կ'պատրաստուի ընտիր տեսակ դերձակի յատուկ կանեփեայ կտաւով, այն է խիտ անկուսած բարակ և միանգամայն քիչ մ'ալ կարծր։ Այս նիւթը փոքր զգեստներու համար 70 հարմէգը բաւական կ'համարուի, իսկ երկայն վրանոցներու համար մէկ մէգը։ Կանեփեայ կտաւը խոնաւութենէ չափազանց կ'քաշուի ուստի և նախապէս լաւ մը թրջելու է, և առանց քամելու՝ (որովհետեւ այս նիւթն առաջին անգամ թրջուած ատեն եթէ ճմոթկի, ա'լ անկարելի է ողորկել,) ողորկ կերպով փռելու մինչեւ որ պարզ խոնաւուխիւն մը մնայ, ու այն ատեն արդուկով լու մը կ'չորցնենք։

Կանեփեայ կտաւը ձեելու համար՝ առաջամասին ուսը կ'ուղղենք առէջին ու կրծեզրը թեզանին, այսինքն կտաւին լայնքը հագուստին երկայնութեանը կ'հաւասարցնենք (Տե՛ս 633րդ օր.)։ յետոյ կրծեզրը՝ որ է ա—բ, փողեզրը, ուսածածագը՝ որ է զ—դ (Տե՛ս 634րդ օր.) և երբուծն ու անութը՝ որ է դ—ե, մէյմէկ հարմէգի չափի չափ մեծ ձգելով կ'կտրենք։ իսկ ե կէտէն, այն է ընդմէջէն 5 հարմէգի չափ ներսօք սկսելով՝ վէտկոր գծով մը կ'իջեցնենք մինչեւ սեղմօնին ստորոտը՝ որ է զ և գարի կողմը 3 հարմէգի չափ կարճ, ինչպէս բ—զ։ Սեղմօնին վրայէն անցած մասը շրջագծերուն ձեռվը կ'կարենք, որոնք են ե—բ, եթէ առանց սեղմօնի

ըլլայ այն ատեն կ'թողունք վէտկոր ձեխն մէջ։ միայն գիտնալ պէտք է թէ երկայն հագուստներան մինչեւ ստորոտը շարունակելու է (որ կտաւին լայնքն անբաւական ըլլալով՝ ծուէն մը դնելու է) և գոնէ 8—10 հարմէգ լայնութիւն մ'ունենալու է։ Ու եթէ հագուստը կրկնաշար կոճկէնով է, կոնքի հաւասարութիւն վրայ փեղկին կրկին լայնութիւնն ունենալու է (Տե՛ս 633րդ օր.)։

Ապա ուրեմն, ուսածագին, երբուծին ու սեղմօնին բարձրութեամբը և սւլսատորին հաւասարութեամբը կանեփեայ կտաւէ խիթեամբը (ի՞նչպէս կ'երեւայ 63 քրդ օր. վրայ)։ Այնպէս զիփ մ'ալ կ'կտրենք (ի՞նչպէս կ'երեւայ 63 քրդ օր. վրայ)։ Այնպէս որ ուսածագին ու երբուծին կողմերը 1½ հարմէգի չափ փոքր ըւլայ։ որպէս զի նոյն չուրթերը կոշտ ըւլան։ Սոյն խիզիփը երտեղին վրայ գերակարելով՝ մեքենային կարը կ'մեծցնենք ու երտեղին վրայ գերակարելով՝ մեքենային կարը կ'մեծցնենք լայնութեամբ կարդրուծին գիրքով և գրեթէ կէս հարմէգ լայնութեամբ կարդրուծին գիրքով կարերով կ'լեցնենք (լաւ դիտէ 634 եւ 633րդ օրինակները)։

Եթէ հագուստն արժէքաւոր է ու ծախսք չխնայուիր՝ այն տեին սոյն խիզիփին տեղ ձարապաստառ պէտք է գրուի։ Արդ, ձարապաստառը յատուկ նիւթ մ'է, որ առէջի թելերը մանած է ու թեզանը կարով անկուտծ, որուն ամէնէն լաւագոյն տեսակին մեղրը կ'արժէ 30—34 գահեկան։ 15 հարմէգը կ'բառէ զգեստի մը մեղրը կ'արժէ 30—34 գահեկան։ Այս պատառին կարերը ուսին ուղղութեամբը լանջանակին։ Այս պատառին կարերը մասը զապանակի նման կանգուն գնելու է որ հագուստին լանջքի մասը զապանակի նման կանգուն գնենէ այս ալ նախորդին պէս մեքենայով կարելու է։ բայց խոկեցնէ այս ալ նախորդին պէս մեքենայով կարելու է։ մը հեմութիւնը կ'պահանջէ որ չուրջը շեղ կտրուած լաթերիզով մը որպէս զի կտաւին շրթունքն անկուտծի պէս ըլլայ։ Այս ամէնը որպէս զի կտաւին շրթունքն անկուտծի պէս ըլլայ։ Եւ ահա լանջապանակը պատրաստուած է։

Եթէ լանջապանակը սեղմօն ունի (ի՞նչպէս 633րդ օր.), երկու չուրթն երարու բերելով վրան լաթերիզ մը կ'ծածկենք ու երկու չուրթն երարու բերելով կ'կտրենք։ ինչպէս նաև երկողին սոմբոզջ լայնութեամբը կրկնակի օձապտոյս ալ կ'կարենք (ի՞նչպէս 642րդ օր.)։ նութեամբը որպէս կ'կարենք կ'կարենք (ի՞նչպէս 633րդ օր.)։ որպէս զի կտաւին շրթունքն անկուտծի պէս ըլլայ։ Այս ամէնը լաւ մը կ'արդուկենք։ Եւ ահա լանջապանակը պատրաստուած է։ Եթէ ամսան եղանակին համար բարակ նիւթէ ու մէջն առանց կանեփեայ կտաւին տեղ մոխրագոյն յաստառի հագուստ ըլլայ, կանեփեայ կտաւին տեղ մոխրագոյն յաստառի լաթ մը կայ, եռահիւսակ կոչուած՝ ուրկէ կ'պատրաստուի լանջապանակը։

Պ Ա Ս Պ .



ԱՌԱՋԱՄԱՍԸ ԼԱՆՉԱՊԱՆԱԿԻՆ ՀԵՏ ԱՍՏՐԵԼՈՒ ԿԵՐՊԸ

ԵՒ ԿՐՄՕՉԻՔԻՆ ՅՈՒՆԱԿԱՐԵՐԸ ԲԱՆԵԼ

Դերձակութեան մէջ մասնաւորապէս ԱՍՏՐԵԼ կ'անուանուի առաջամասին կերպասը լանջապանակին հետ գերակարելու աշխատութիւնը, որ արդարեւ ստինքեան լուրջ գործ մ'է որ յատուկ վարժութիւն ու մասնաւոր խնամք կ'պահածցէ:

Արդ, համարենք թէ նախ ձախ կողմը կ'ուղենք գերակարել, ուրեմն լանջապանակին կրծեզրը կ'ուղղենք դիմացնիս և ուսածագն աջ կողմերնիս (Տե՛ս 638րդ օր.), կերպասը կ'փռենք վրան, տիգուսողէն 5—6 հարմէդ վարօք ու երբուծէն 2 հարմէդի չափ ներսօք, այն է գ կէտէն սկսելով՝ ուսածագին դիրքովը զուգահեռաբար կ'սկսինք մանր մանր գերակարել մինչև ե կէտ, որ գրեթէ փողեզրէն 2 հարմէդ հեռու մնայ. և նոյն ասեղներու զարմուած տեղերէն. Կ'վերագաւնանք դարձեալ գ կէտ, որոնք շղթայակերպ ձեւ կ'առնեն: Առանց գերձանը կտրելու՝ երբուծին ու անութիւն զուգահեռական դիրքովը կ'շարունակենք մինչև դ կէտ. և հիմա ալ ձախ ձեռքի ցուցամատերնուս շփումովը ներքեխ լանջապանակին խոտոր եզրը վնասելով՝ կ'դերակարենք մինչև ե կէտ, ամէն մէկ ասեղի ելեէջին ժամանակ կերպասն ալ մեզմիւ չոյելով, որպէս զի երկայնքին քիչ մը պիրկ ըլլայ:

Այժմ է կէտէն սկսելով կ'իջնենք մինչեւ թ կէտ, կերպասը միշտ երկայնքին չոյելով, մինչդեռ դէպի լայնքին քիչ մը ներս մղելով (Լաւ դիտէ 637րդ օր.), կրծեզրէն 8—10 հարմէդի չափ զուգահեռական դիրքով կ'իջնենք մինչեւ ժ: Ժամանակն է որ կրծօձիքին բացութիւնը որոշենք. ու թ և Զ' կէտերը սեղմ գոգաւոր գծով մ'իրարու միացնենք և նոյն գծին վրայէն մանր գերակար մը կ'ընենք որ առաւելապէս լանջապանակին կողմը յատակ ըլլայ ու մակենթակարի մը գերն ունենայ՝ իբր թէ նոյն գիծը փշանուակով միւս կողմը թափանցել ուղէինք: Հիմա ալ կրծեզրէն 3½—4 հարմէդ ներսօք այն է ի կէտէն սկսելով, զուգահեռաբար կ'իջնենք մինչեւ 1 կէտ, կերպասը միշտ երկայնքին չոյելով ու լայնութենէն քիչ մը ներս մղելով (Լաւ դիտէ 637րդ օրինակին կերպասը ներս մղուած ըլլալու ստուերները:)



Աջ կողմն ալ ճիշտ ալս կերպով կ'գերակարենք, դարձեալ
կրծեզրը մեր առաջակողմը և ուսածագը աչ կողմիրնիս առնելով,
միշտ տիգուցյօդի կողմէն դէպի ունուսոր գալ ու վերագառնութնով
ուսին շղթայակերպը կազմելէ ետք, շարունակելու է երաւծն
և այլն:

Ահա այս է կերպասը լանջապանակին հետ ասուելու գործողութիւնը, բայց առ այս քանի մը լրացուցիչ գիտելիքներ անհրաժեշտ են: Նախ՝ այս գերակարներն սահմանները նախապէս օճառով կրնայ ձևագծուիլ: Երկրորդ՝ հագուստը կրկնաշար կոճկէնով եղած ատեն, կրծեզրին հետ երեք կարգ գերակար ընելու է: որոնց առաջինը իւ—ծ (Տե՛ս 639րդ օր.), երկրորդը տրամագծին հետ ու երրորդը կրծեզրին. և այս ամէն կարգին ժամանակ ալ կերպասն երկայնքին շայելով ու լայնքին թոյլ գնելով: Երրորդ՝ հագուստը սեղմօնով եղած ատեն, երբ առաջամասը լանջապանակին վրայ կ'գնինք՝ գոտեվայրը դէպի ներս գողաւոր գիրք մը կ'առնէ, ուստի հոգ տանելու է որ այս անպատեհութիւնը տեղի չունենայ, ու շարունակ գիտել և հոկելու է որ կրծեզրը քանակով քաշուած ուղիղ գծի գիրքն ունենայ: Չորրորդ՝ հագուստը սեղմօնով եղած ատեն մէկ անդամէն վերէն ի վար չկրնար գերակարութիւն: ուստի սեղմօնի ցցունէն դէպի վերը զատ գերակարելու է, և նոյն մասը, այն է ուսը վեր վերցնելով ներքեն առարկայ մը գնելու է որ բարձր մնայ և յետոյ շարունակելու է վարի կողմի գերակարերը:

Կրծոձիթին յոզեակարը բանելու կերպը .— Բարտկ կերպաներու
համար 8 թիւ ասեղ 70—80 թիւ թել ու հաստ կերպաներու ալ
7 թիւ ասեղ և 50—60 թիւ գուճի թել պատրաստելով, հագուս-
տին լանջապանակի կողմը դէպի վեր, ամբողջութիւնը աջ կող-
մերնիս ու կրծօձիքին մասը ձախ ձեռքերնիս ուղղելով՝ կ'ահնդչե-
ցնենք ծունդերնուս վրաւ, այնպէս որ Ք—Զ' գծով կազմուած մա-
կենթակար-գերակարը մեր գիրքին հետ գրեթէ ուղղանկիւն մը
կազմուե՛ :

Ապա , կրծեղըէն և հարմէցի չափ ներսոք և ստկնելթակարին Ապա , կրծեղըէն և հարմէցի չափ ներսոք և ստկնելթակարին (ՏԵ՛Ս 63ԹՐԴ ՕՐ .) կ'սկսինք առեղը կանեփեայ կտաւին մխել՝ վրայէն (ՏԵ՛Ս 63ԹՐԴ ՕՐ .) կ'սկսինք առեղը կանեփեայ կտաւին մխել՝ ներքակի կերպասին կէս թանձրութեան մէջէն խայթել ու գարծեալ կանեփեայ կտաւէն կ'հանենք , և այսպէս համաշափ մեծութիւն-

ներով ու խիտ առ խիտ կ'հաճինք մինչեւ Ք կէտին մէկ կարարարաժին մնալու : Հիմա ալ 1—2 հարմէդ հեռաւորութեամբ ու նախօրդ կարերուն կէս երկայնութեանց գէմերէն կ'վեռադառնանք կրծեզրը . բայց այս անգամ ամէն մէկ ասեղը կտաւին միսելու ժամանակ՝ ներքեփի կերպասը ձախ ձեռքի ցուցամատով պրկել և վրայի կտաւը բութամատով թոյլ ձգելու է . այսպէս երթ ու դարձով հասնելու է մինչեւ Փ անկիւնը , որոնց ամբողջութիւնը ցանցակերպ երեղիթ մը կ'առնէ , միենոյն ատեն կշծօձիքը կ'կարծրանայ և ինքնին գէպի երեսի կողմը գտանալու կ'միտի :

Երկու կողմի կրծօձիքները բանալէ ետք , կանկիեայ կտաւին կողմէն թեթև մը կ'թրշենք ու լու մը կ'արդուեկինք , պայմանաւոր երրուծին ու կողանջատին կողմերը կորակոնցին կոթնած ըլլայ՝ մանաւանդ հագուստը սեղմօնով եղած ատեն , որպէս զի կուրծքին գմբեթարդ ձեւ չխանգարուի . միենոյն ատեն կ'արդուեկինք նաև կրծեզրին ամբողջութիւնը մինչեւ իւ—ծ սահմանը (Տի՛ս 639րդ օր.) :

Պ Ա Ս Պ .

ԴԵՐՉԱԿԱԿԵՐՊ ՎՐԱՆՈՑ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԸ ՓՈՐՉԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

Այն հագուստները որոնք գոտեպինդ չեն ունենար , այսինքն գոտեվայրը թոյլ սիտի ըլլայ , բոլոր անոնք ալլեալլ պատճառին չափատուին վրայ փորձելու պէտք կ'ունենան : Արդէն գերձակութեան մէջ հագուստը կարելէ առաջ՝ ամբողջ մասերն իրարաւ կ'երակարուի ու չափատուին վրայ կ'փորձուին , անոր ո և է թերութիւնները ուղղել և յետոյ կարելու համար . բայց սենք գերձակակերպ թոյլ հագուստներուն կողանջատը , ուսն ու կրծեզրը միայն փորձի կ'ենթարկինք , այսինքն եթէ հագուստին յետսակողմը բազմամանեայ է՝ զանոնք վերջնականապէս կ'կարենք , գրպանները կ'շինենք , առաջամասները լանջապանակին հետ կ'աստուենք , կրծօձիքները կ'բանինք ու կ'արդուեկինք . և ապա կողանջատներն ու ուսերը գերակարելով (մանաւանդ երեսի կողմէն՝ որպէս զի անոնք շրջօնի կողմը ցցուած կենալով շփոթութիւն չպատճառէն) , կոնածագին սեղմերիզ մը կ'երակարենք որ հագնուած ատեն փողեզրը չըղի ու կոնածագը չպատռի :

Արդ , չափատուն սոյն վրանոցն ի՞նչ սուկանի կամ ի՞նչ պօլերօի վրայ է որ պիտի հագնի , սոնամբարձով կամ ո՛չ , պէտք է այժմ նոյն կերպարանքով ներկայանայ և մենք վրանոցը հագցնելով , նախներքեւի հագուստին թեւերուն վերի կողմերը գուրս կ'հաճինք . մանաւանդ ուռուցիկ թեւեր եղած ատեն՝ որպէս զի վրանոցին անթածիրը լաւ հանգչի . յետսակողմը անցնելով կ'դիտենք որ կոնածագը ծոծրակին վրայ կեցած ըլլայ ու թիկունքներուն վրայէն կ'շոյենք գէպի անութիւններուն ներքեւը . նոյնպէս ալ մէջքին վրայ : Այս խնամքն այն ատեն կ'պահանջուի , երբ ներքեւի հագուստը բրդեզէն է ու վրանոցն ալ ասուեղէն , որոնք իրարու կը կուչին և տգեղ երեւայթներ կ'ներկայացնեն :

Կ'գառնանք այժմ առաջակողմը և կրծամէջին գէմ երկու կըրծեզրը շուրթ շուրթի բերելով՝ վերելեակի բաժինները կ'հաւաքենք ձախ ձեռքի բութամատ և ցուցամատերմուս մէջ , և յատակին վրայ գնդառեղ մը կ'շուլինք , գիտելով որ կուրծքին վրայ կծկուած ըլլայ , նոյնը կ'ըլլայ նաեւ քաղրթին վրայ . բայց թէ որ չափատուին ստինքները շատ բարձր են ու քաղրթեղ կազմով՝ առաջակողմին վարի ծայրերը գէպի առաջ և կրծամէջին գէմ պարագալին , զանոնք բերելու է գէպի առաջ և կրծամէջին գէմ հորիզանական փոքր սեղմօն մը ձեւացնելու է՝ երկու կողմն ալ նոյն խորութիւննեւով մէլյմէկ գնտասեղ շուլլելով : Խնչպէս ըսինք չափատուն քաղրթեղ եղած ատեն կրծամէջի սեղմօնն ալ անբաւական կ'ըլլայ կրծեզրը ուղղելու , հետեւապէս քաղրթին գէմ ալ փոքր սեղմօն մը ձեւացնելու է , որ յետոյ գիտնանք թէ սեղմերիզն ի՞նչ քանակութեամբ պիտի կրկնենք : Թերեւս լանջքին հաւատարութեան գէմ ձգուած 1 հարմէդ ընդարձակութեան բաժինը շատ եկած կ'ըլլայ . այս ալ առածագութէն վեր առնելու է : Թերեւս կողանջատին ընդարձակութեան բաժինն ալ շատ եկած ըլլայ , ու կողմեակի ուղղութեան գէմ հագուստը թոյլ կ'ենայ . ուստի այն միայն առաջամասէն ջնջելու է , սակայն կրնայ ըլլալ որ սնակուշտին վրայ լաւ կեցած ըլլայ և աղդրին ու անթմէջին գէմերը թոյլ կ'ենան , կամ ասոր հակազարձը պատահի , այն ատեն իւրաքանչիւրն իր պատկանած սեղմին վրայ յարգարելու է : Ապա , գիտելու է որ ծոծրակին մինչեւ Ք կէտ՝ փողեզրը ճիշտ վզի շուրթը ջն հետ լաւ շրջապատուած ըլլայ , անթմէջը բարձր եղած ըլլայ ,

այսինքն ծղիները վար ձգած դիրքին մէջ կողանջատը դէպի վար հրուելով պոստումեր չգոյանան. հակոռատկ պարագային անթատակէն կտրել պէտք է, որ երկու պատճառէ առաջ եկած կ'ըլլաց՝ Զրդ չափը բարձր առնուած ըլլալէն և կամ լանջքին դէմ դրուած 1 հարմէդ ընդարձակութեան բաժինը քիչ եղած ըլլալէն։ Վերջապէս ամէն կողմն ալ լու մը աչքէ անցնելէ վերջ. կրծամէջին ու քաղրթին դէմ հագուստին կրծեզրի տրամագծերը ճշտող կէտերն օճառով կնշանակինք։ Եթէ օճառ քսելով կերպառը կ'արատի կամ ճերմակ է և օճառին նշանակը չերեւար, նոյն տեղերը մէյմէկ գնդասեղ կ'շուլլենք, ու հագուստը կ'հանենք։

Պ Ա Ս Ե .

ԿՐԾԵԶՐԸ ՅԱՐԴԱՐԵԼ, ՄԵՂՄԵՐԻԶԸ ՀԱՍՏԱՏԵԼ

ԵՒ ՇՈՒՐԹԵՐԸ ԾԱԼԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Ուսերուն ու կողանջատներուն գերակարները կ'քակինք, և անոնց վրայ տեղի ունեցած փոփոխութիւնները խնամով կ'զծենք ու կարաբաժինները հաշուելով աւելարդները կ'կտրենք։ Ապա, քանակը կ'հաւասարեցնենք կրծամէջին ինչպէս նաեւ քասրթին դէմ նշանակուած կէտէն ½ հարմէդի չափ դրոօք ու կ'քաշենք Զ—Օ զիծը (Տե՛ս 639րդ օր. ուր սոյն զիծը կոնկիեայ կտաւին կողմէն ցուցուցած ենք. մինչդեռ երեսի կողմն ըսկել կ'ուզենք)։ յետոյ գոտեկայրի հաւասարութենէն մեզմ կոր զիծ մ'սկուլով կ'միացնենք Բ' կէտին ու կորութիւնը պահելով կ'շարունակինք մինչեւ ստորոտ՝ որ է Զ—Բ'—Ֆ, որ կ'ներկայացնէ կրծելորին տրամագիծը։ Ապա ուրեմն, պատշաճութեան համեմատ վերելեակի բաժինը ճշտելով Զ—Բ'—Ֆ զծին զուգահեռական դիրքովը կ'յարդարենք նաեւ կրծեզրը, որ է Զ—Ֆ զիծը, փոխանակ Զ—Օ զծին. միեւնոյն տաեն նկատողութեան կ'առնենք կրծօձիքին ձեւը, դիտելով որ կրծօձիքունջը՝ այն է Փ կէտը մեզմ կոր զծով մը միանայ Զ' կէտին, կ'ուզէ կրկնաշար կրծէնով ըլլայ (ինչպէս 639րդ օր.)։ Բացի այն պարագային որ կրծօձիքին վերի կողմը շատ լայն շինել կ'ուզուի,

այն ատեն օձիքունջէն մինչեւ Զ' կէտ արտահակ գծով մը կ'կազմուի, ու կրծեզրին հետ Զ' կէտը խոռոչ մը կ'ձեւանայ։

Կրծօձիքունջին ալ պէտք եղած դիրքը կ'սւտանք, ամէն առթիւ ի—Փ գիծը քանակի մը շուրթին նման ուղիղ յարդարելով։

Կ'գարձնենք շրջանը կողմն ու կանեփեայ կտաւը Բ' կէտէն մինչեւ ստորոտ 6—7 հարմէդ լայնութեամբ զուգահեռաբար կարաբաժինը կտրելով կ'չնչենք (Տե՛ս 639րդ օրինակը)։

* *

Սեղմերիզը եւ շրջունքը ծալելու կերպը։ — Դերձակութեան մէջ սեղմերիզ կ'կոչուի եռահիւսակի կամ մետաքսեղէնին եղրէն գրեթէ 1 հարմէդ լայնութեամբ կտրուած երիզը, որ հագուստին ամփակելու կամ պիսկ կեցնելու պէտք տեսնուած եղրերն անով կ'կծկուի, մասնաւորապէս կրծեզրը։ այս նիւթերէն չգտնուած ատեն բամբակէ կամ քթանէ ճերմակ երիզներ ալ կրնան գործածուիլ։ բայց բնաւ բրդեղէն նիւթի եղրեր։

Արդ, ինչպէս ըսինք, եթէ չսփատուն կրծարերձ կազմութեան կ'վերաբերի ու կրծամէջին դէմ ¼—2 հարմէդի չսփատու պէտք ունի, լաւ չէ որ այսքանը սեղմերիզով կծկուի։ այլ մէկ մասը լանջապանակին վրայ հորիզոնական փոքր սեղմօն մը շինելու է (Տե՛ս 639րդ օր. Ժ. սեպտեմբեր)։ հետեապէս՝ նախ նոյն մասը քառորդ շրջանակածեւ գերակար մը կ'ընենք ու եղրին գերակարը քակելով՝ կանեփեայ կտաւին կրծամէջին դէմ գրեթէ 1 հարմէդ անջատութեամբ ու 7—8 հարմէդ երկայնութեամբ հորիզոնական սեղմօն մը կ'շինենք։ և երիզով կ'կցորդենք իրարու, ինչպէս լանջապանակին ուղղաձիք սեղմօնը (Տե՛ս 639րդ օր. Ժ. սեպտեմբեր, եւ որ նոյնն թ—է)։ Յետոյ, երեսի կողմէն կերպասը մանր մանր գերակարելով կ'ամփոփինք ու շրջօնի կողմէն թեթև մը թթիւլով կ'արդուկինք։ (Կարգ մը գէր կազմիր կան որոնց վիզը շատ կարճ կ'ըլլայ և չսփազանց կրծարերձ, ու պէտք կ'տեսնուի փոքրիկ սեղմօն մ'ալ Բ' կէտէն շեղակի գէպի երփուծ ձեւացնել, որուն մնջատութիւնը 1—1½ հարմէդ կ'ըլլայ և երկայնութիւնը 4—5 հարմէդ, այնպէս որ օձիքին ներքել պահուի։ Ապա, սեղմերիզն առնելով՝ բունեզրը կ'ուզզենք շրթունքին կողմն ու ծիւ եղրը կանեփեայ կտաւին, և Բ' կէտէն սկսելով կերպասին եղրէն կարաբաժին մը ներսօք (կանեփեայ կտաւին շուրթը չտեսնուելու կարաբաժին մը ներսօք)

չափ) և հանդարտ գիրքով կ'գերապեկարենք վզարեկորչն, ույս է Ք—Դ գծին (Տե՛ս 642րդ օր.): Եթէ կրծօձիքունչը վզարեկորչն հետ ուղիղ գծի վրայ կ'գտնուի՝ այն պարագալին ալ միջչեւ անկիւնը կ'շարունակենք որ է Ք—Ֆ—Ֆ (Տե՛ս 643րդ օր.): Խոկ կրծօձիքունչը սրածայր եղած ատեն (Ինչպէս 642րդ օր.), ՚ Կէտին գէմ սեղմերիզը ձեխով կ'ձղկենք ու կ'գարձնենք գէպի կրծօձիքունչին՝ որ է Ք—Փ, բայց այս շուրթը չեղ ըլլալուն համար առածգական կ'ըլլայ, հետեապէս սեղմերիզը քիչ մը պրկուած կը գերակարենք: Հիմա ալ սեղմերիզը Փ անկիւնին վրայ չեղ ծալ մը կազմելով կ'գառնանք կրծեզրին վրայ և մինչեւ կրծօձիքին վերջաւորութիւնը մեղմ պրկումով մը կ'գերակարենք խոկ նոյն կէտէն մինչեւ գոտեվայրին հաւասարութեան գէմ կրծեզրը մէն մի գերակարին հետ փոքր փոքր կ'կծիենք, գոտեվայրին գէմ դարձեալ հանդարտ ու քաղրթին գէմ դարձեալ կ'կծիենք (Տե՛ս 642րդ օր. նոյն տեղերուն պատումներ), մինչեւ որ կրծեզրին կոր գիրքը (Ինչպէս 639րդ օր. Զ—Ֆ գիծ) ուղիղ գծի մը վերածալի: Այս աշխատութեան գժուարագոյն պարագան միւս կողմն ալ ասոր նմանցնելուն մէջ կ'կայանայ:

Արդ ուրեմն, խնամով պատրաստուելիք գործերուն վրայ սեղմերիզն արտաքին շուրթը կերպասին հետ ծալ կար մը կ'ընենք՝ առանց երեսէն տեսնուելու. ներքին շուրջը. և ներքին շուրթը կանեփեաց կտաւին հետ վրայկար մը (Տե՛ս այս ամենը 642րդ օր.): Դերակարը կ'քակենք, կողանջատն ու երբուծը կորակոճին կոթնցնելով՝ սեղմերիզը սպունքով թեթեւ մը կ'թրջենք ու լաւ մը կ'արգուելով: Յետոյ Դ կէտէն սկսելով մինչեւ ստորոտ հագուստին շուրթը կ'շրջինք սեղմերիզին վրայ ու շատ մանր կ'գերակարենք: Ալ ժամանակն է որ կողանջատը կցորդենք և եթէ երեսի կողմէն թափանց կարերով պիտի զարդարուի, կարաբաժինին լայն շուրթը սնակուշակն վրայ ձեւիչող կ'ձեղկենք՝ որ չփոթթուի, և նոյն բացուածքը փոքր ձգտամասնիկով մը կ'լրացնենք (Ինչպէս կ'երեւայ 643րդ օր. Ճ հւ Զ ձգտամասնիկներ): Եթէ հագուստին մէջի աստան արձէքաւոր մետաքսեղէն է ու մանաւանդ ալ գունաւոր, շատ վերջը պէտք է ծածկել զայն որպէս զի չաղարտի. ուստի այժմէն ուսն ալ կ'կարենք, լանջապանակին եղըն անջատ ձգելով:

Ստորոտը յարդարելու համար, նախ երկու կողմի կրծիքունչն իրարու կցելով կրծեզրները մինչեւ ստորոտ կ'բազդատենք, որ մի գուցէ մէկը միւսէն երկայն եղած ըլլայ. յետոյ երեսի կողմը գէպի վեր՝ կ'փուենք սեղանին վրայ ու լաւ մը տարածելով, կ'գիտենք որ ամբողջութեամբ վայելուչ աղեղ մը ներկայացած ըլլայ, առանց երկայնութեան կարերուն գէմ խոռոշներ կամ ցցուած անկիւններ կազմուած ըլլայ. հակառակ պարագային ձեւիչով կը յարդարենք: Միեւնայն ատեն վերցնելով՝ երկու կրծեզրին տրամագծերն իրարու վրայ գնելով կ'նայինք որ առաջակողման վարի ծայրերը ստորատի շուրթին հետ հաւասար ըլլան (Եթէ անկիւնները բալորակ ընել ուզուի, ի՞նչպէս 643րդ օր. այս գործողութեան պէտք չ'մնար): Եւ այժմ վարի շուրթը Զ հարսէդ լայնութեամ կ'շրջինք գէպի ներս ու մէջտեղէն մանր մանր կ'գերակարենք: Յետոյ ալ կողմի կրծօձիքին անկիւնը (Զ կէտը) մեքենային ներքեւը գնելով՝ նրբաւարտ թափանց կարը կ'սկսինք ընել կըրծեզրէն իշնելով մինչեւ վարի ծայրը, ստորոտէն դառնալով կ'ելլենք մինչեւ ձախ կողմի կրծօձիքին սահմանը և շրջնի կողմէն շուրջերը լաւ մը կ'արգուելոնք:

Փ Ա Ս Ջ.

ՕՂԱԿԱՓԵՂԿԸ ԵՒ ԱԼԲԵՐԱՆԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Վրանաց հագուստներուն օղակները վրայէն եղած ատեն աշխատութիւնը շատ կ'գիւրանայ, բայց ընդհանրապէս միաշար կոճկէնով վրանացներուն օղակները թագուցիկ կ'ըլլան, և շուրջ 10—12 տարի կայ որ կրկնաշար կոճկէնով հագուստներունն ալ որ փոխանակ օղակ շնելու կրծեզրին շուրթէն գէպի գուրս մետաքսէ բուծինով լամբակներ կարուեցան: Վրանաց հագուստները կոճկուելու ոսին երեք գիսաւոր կերպերուն ամէնէն խրթինը թակնակներու կողմէն օղակներով պատրաստենէ, ի՞նչպէս այժմ պիտի բացատրենք:

Կնոջական հագուստներուն օղակները որ ընդհանրապէս ալ կողմը կ'շնուրի, հագուստին մէջ գրուելիք աստանէն 8—9 հարմէդ լայնութեամբը զոյգ մը երեկ կարելով (Եթէ մէջի աստանը կերպասի գոյնէն շատ տարբեր է կամ նիւթը թանցը, այս պարագաներուն ուրիշ յարմարագոյն բարակ նիւթ մը կ'ընտարենք): Ասոր

մէկ հատին շուրջը կ'հաւասարեցնենք աջ կողմի կրծքավանք, մէջ-
տեղէն կ'գերակարենք և կրծօձիքին արմատէն սկսելով մինչեւ
գրպանի յատակլին հաւասարութիւնը՝ նրբաւարտ կրապին ուղղու-
թեամբը ծալ կար մը կնենք (Տե՛ս 643րդ օր. Զ'-լ եւ ձ-զ բաց
գոյնով երիզը): Կ'գարձնենք երեսի կողմն ու նոյն սահմանին երկ-
րորդ թափանցկարը կ'հանենք և աստառին կողմէն վերջնական
կերպով լու մը կ'արդուկենք:

Յետոյ կ'ձեւենք զսյդ մը առեթերանցու հերպանը, ուլնատորէն
4—5 հարմէդ գէպի ուսածագ երթաշավ՝ որ է գ—ժ (Տե՛ս 634րդ
օր.), հագուստին ստրոտին վրայ 8—10 հարմէդ լայնութիւն մը
կ'ուտանք՝ որ է ի և սոյն ի և ծ կէտերը վէտկոր գծով մ'իրա-
րու կ'միացնենք (Եթէ նիւթը սակաւ ըլլայ քանի մը կտորներով
ալ կրնայ կազմուիլ, բաւական է որ կրծօձիքի սահմանէն քանի
մը հարմէդ վարօք միակտոր մաս մը կարենանք ունենալ). մի-
այն գիտելու ենք որ կրծօձիքի արտաքին շուրթին սահ-
մանը սովորական կարաբատինէն ալ 1—2 հարմէդ լայն ըլլայ, որ
ծածկելու ժամանակ սակաւ չըլլայ:

Արդ, օղակափեղիլը պատրաստելու համար (որ է 638-րդ օր.), սոյն առքերանցուներուն աջ կողմինը կ'գնենք առաջամասին ներքեւի կողմը, շուրթը մէկ կարաբաժին դրոք, միշտ կրծօձիքին սահմանն ա՛լ տւելի գուրս. և օճառով հագուստին շուրթը կ'օրինակենք առքերանի շրջօնին վրայ, և կրծօձիքին ու կոնքի հաւատրութեան վարի մէկերրորդին դէմ ձեւիչով մէյմէկ կէտ կը նշանակենք՝ որ է Զ' և լ, և սոյն Զ'—լ գծէն Դ₂ հարմէգ կարաբաժին ձգելով՝ աւելորդը կ'յարդարենք (Տե՛՛ 518-րդ օր.): Այժմ, իբրեւ առքերանցու կտրուած աստառ երիզին միւս կոճատը կը դնենք ասոր ներքեւը, ինչպէս նաև նոյն լայնութեամբ յաւելուածական հիւսակտաւ մը՝ որ օղակները տոկուն ըլլան: Ապա, Զ' կէտէն մինչեւ լ կէտ՝ կ'գերակարենք ու աստառները կ'շրջինք ներս, եզրը կ'գերակարենք և շուրթին զյզք թափանցկարերը կ'ընենք (ի՞նչպէս 638-րդ օր. ուր Երջօնի կողմէն կ'երեւայ, միջոցէն եռահիւսակը և—մ ուրբով, օղակին առբերանցու աստառը լ—ն եւ Զ'—լ ալ ուրբին զոյթ բախանզկարերը):

Կարձ թիկնազգեստներուն թափանցիկ օղակներն առհասարակ հատ կ'ըլլայ. ասոնց առաջինը կնշանակենք ԶՇ կէտէն 1 հար-

մէզի չափ վարօք, վերջինը և կէտէն Յ հարմէզի չափ վերօք և այս երկուքին հեռաւորութիւնն երեք հաւասար մասերու բաժնեւ լով կ'ունենանք միւս երկուքը։ Օղակներուն սկիզբը պէտք է գունուի շուրջէն Ա½ հարմէզ ներսօք ու մեծութիւնը կոճակին տրամադէն և հարմէզի չափ աւելի։ ուրեմն եթէ 22 թիւ կոճակ պիտի կարենք, օղակին մեծութիւնն ալ պէտք է բանանք 2½ հարմէզ (Մանրամասնուրինը և 237րդ եզի Թ. Իրահանով)։

Արդ սւրեմն, օգակները շնորհէ ետք, չըջօնի կողմէն լու մը կ'արդուկենք. ու ասոր Զ' կէտը կ'կցենք աջ առաջտմասի Զ' կէտին և հագուստի շուրթէն 1—2 հարմէզի չափ ներսօք բռնելով՝ կ'գերակարենք մինչեւ կէտ (Տե՛ս 634րդ օր.): Դերակար մ'ալ կ'ընենք օգակներուն արմատէն քիչ մը ներսօք, լինչէս նաև ներսի շուրթէն՝ որ է ծ—ի, բայց միշտ առբերանը լայնութեանը վրայ քիչ մը պիրկ. և այս վերջնը վրակարով մը կ'հաստատենք լանջապահակին հետ (Լա՛ւ դիտէ 634րդ օր.): Յետոյ կրծօձիքի ներքին սահմանէն կ'գերակարենք, կրծօձիքը կ'ըշընք երեսի կողմը և ծածկովին ստացած լինքնին թոյլ գիրքին մէջ՝ քսմի մը հարմէդ հեռուէն ուրիշ գերակար մ'ալ կ'ընենք. դէպի ունջին մօտ կարգ մ'եւս կ'ընենք (Լա՛ւ դիտէ 634րդ օր.): Ամէնէն վերջ՝ շրթունքէն 2 հարմէզի չափ ներսօք ուրիշ կարգ մ'ալ կ'ընենք, ու կ'գարձնենք կազմը, լայնկեկ կորաբաժին մը ձգելով տեկորդը կ'յարերեսի կողմը, լայնկեկ կորաբաժին մը ձգելով կ'յարերեսի գարենք և գարձեալ կրծօձիքին կողմէն ու զ կէտէն սկսելով՝ առբերանին շուրթը ներս ըլշելով փողեզրին ձեւովք մանր առբերանին շուրթը 1—2 հարմէդ դրսօք դնելով (Լա՛ւ դիտէ այս ամենը 634րդ օր.), Առբերանին վարի կողմն ալ կարգագրելով՝ շուրթը ծալիկարով մը կ'վերջացնենք: Նոյն կերպով ալ ծախ կողմի շուրթը ծալիկարով մը կ'վերջացնենք: Նոյն կերպով առաջն սա առբերանը կ'ծակենք, միայն սա առբերանութեամբ որ նախ ներքին եղոր գերակարելով կուգանք դէպի շուրթը: Եւ հիմու աջ քիչ մինչեւ ձախ կողմի կրծօձիքին արմատը՝ լոյն կողմի և կէտէն մինչեւ ձախ կողմի կրծօձիքին արմատը՝ լոյն թափանցկարը կ'ընենք, ու այն մասերուն գերակարելով՝ կ'համակարգ կարերը օձիքին հետ կ'ըլլայ: Կակ կրծօձիքներուն թափանց կարերը օձիքին հետ կ'ըլլայ: Բայց հիմա է որ աջ կողմի կրծօձիքին թափանցկարը կ'ընենք՝ 5 հարմէզի չափ ներսօք՝ որ է ծ—դ (Տե՛ս 634րդ օր.), և մէն մի

օղակին միջոցները քանի մասեղ կ'փակցունենք, որոնք են ծ, կ և հ կէտերը:

Դիակելիք.—Եթէ հագուստին կերպասը թանձր ու չգճգճուող տեսակէ է, առբերաններուն վարի շուրթերը անծալ կարսվ կը պատրաստուի. բացի օղակափեղին եղբէն նոյնպէս ալ կրծօձիքին ներքեխ շուրթին կարարաժինը կտրելու է և միայն առբերանին շուրթը ներս ծալելով պատրաստելու է որ գործը նուրբ ըլլայ:

Պ Ա Ս Ա.

ՕՉԻՔԸ ԵՒ ՄԵԶԻ ԱՍՏԱՌԵՐԸ

Կրծօձիքի օձիքներ ձեւելու և կարելու եղանակն արդէն բացարեցինք Ե. գլուու Հ. դասով (Տե՛ս 150—156 էջ), մայց գարծեալ կը փութանք քանի մը լրացուցիչ գիտելիքներ ևս հազորդել:

Արդ, ինչպէս ըսած ենք օձիքին տիպարը կ'ձեւագծուի հագուստին սեղմերիզը քաշելէ ետք, կամ նոյն խկա առբերաններն ալ անցած ըլլալով (ինչպէս 634րդ օր.): Այժմ գիտնալ պէտք է թէ օձգոտնը արգուկով ընդձգտելու աշխատութիւնը գիւրացնելու համար՝ Ն կէտէն Ն—Շ աղեղին վրայ կ'նշանակենք օձգոտնին կըրկնը, այսինքն եթէ օձգոտնը Յ հարմէգով կազմել կ'ուզենք, անոր կրկննը՝ այն է Յ հարմէգով կ'նշակենք Շ կէտը (Տե՛ս 636րդ օր.). և միւս գործողութիւնները կ'շարունակենք ըստ առաջնոյն. որով օձիքին արմատը քիչ կորութիւն կ'ստանայ: Մանաւանդ օձգոտնը 4—4½ հարմէգով կազմել ուզած ատեն:

Զիգ-օձիքի համար ալ միեւնոյն եղանակին կ'դիմենք, միայն թէ սեղմերիզը անցուած ըլլալու չէ. և օձիքին վզարեկորի մասը շարունակելու է մինչեւ Փ կէտ (Տե՛ս միւս 636րդ օր.): Հրջուքին լայնութիւնը, այն է Պ կէտէն նախ մեղմ կոր գիծ մ'սկսելով՝ կըրծօձիքին մօտերը զգալի կորութիւնով մը միացնելու է Փ կէտին (փոխանակ Զ—Դ գծին): Անոր համար սեղմերիզն անցուած ըլլալու չէ ըսինք, որպէս զի օձիքը փողեղբին կցորդելէ ետք, ձիգ-օձիքին ձել միատեղ արուի, որ թերեւ Փ անկիւնը յարդարելու պէտք ունենայ:

Գալով բանուացքին, այս ալ երկու կերպով կ'ըլլայ, մէկ մը հոգնակարով (ինչպէս 640րդ օր.): որուն շրջուքին ընթացքը կը բանուի զ—Ռ գծին գիրքով ու ոտքը անոր հակառակը: Իսկ մեքենացով բանուած ատեն, արմատի կեգրոնէն, այն է Զ կէտին երկու կազմը եռանկիւնած շարունակելով մինչև ծայրը (Ա.ա. դիտէ 641րդ օր.): որպէս զի արմատն ընդձգտելու ժամանակ թափանց-կարերու թելերը չփրթին:

Ամէն առթիւ կոնածագին դէմ Յ—Է հարմէդ լայնութեամբ չեղ կտրուած կանեփկայ կտաւ մը կ'գնենք, երկու ծայրերը լանջաւանակին հետ վրայկարով մը հաստատելով՝ որ կ'անուանուի կրկնԱկ:

Կրծօձիքին օձիքը կցորդելէ ետք, երեսի ծածկոյթէն արմատի շուրթը զ—Դ գծին (Տես 634րդ օր.): հակառակ կողմը կ'ծալենք ու դէմ առ դէմ կ'զօղենք: Իսկ ձիգ-օձիքով եղած ատեն ծածկոյթը կրծօձիքին հետ միակտոր կ'ըլլայ:

* * *

Մէջի աստար.— Հագուստին մէջի աստատին ընտրութիւնը նկատողութեան առնելու գլխաւոր կէտ մէջ. որովհետեւ աստաւան երկու նպատակի համար կ'գրուի, մէկ մը որ մէջը մաքուր երեայ և մէկ մ'ալ տաք պահելու համար: Առաջին ահսակէտին համար, ընտրելի նիւթը սահուն ահսակէ ըլլալու է որ իրանի շարժումը նիւթը սահունը մնկաշկանդ ըլլայ, և ամէնէն լաւագոյնն է մեներուն ատենը մնկաշկանդ ըլլայ: Գոյնին ալ մասնաւոր ուշադրութիւն կ'ընծայացուելիքն ըլլալը: Գոյնին ալ մասնաւոր ուշադրութիւն կ'ընծայացուելիքն ըլլալը: Գոյնին ալ մէկ երկու տարի կայ որ նոյն խկ ամէնէն կ'ընտրուէր. մինչդեռ մէկ երկու տարի կայ որ նոյն խկ ամէնէն մութ գոյն կերպասներով պատրաստուած հագուստներուն մէջ ճերմակ կամ հողագոյն նիւթեր կ'գրուի: Խսկ տաք պահելու համար, մակ, կամ հողագոյն նիւթեր կ'գրուի: Խսկ տաք պահելու համար, առանձին կ, երկու կողմասներայ է, երկու կողմասներն ու կոնսմէջը առանձին կ'կարենք ու կարեն արգուկով կ'բանանք. խսկ միւս մասերը ծալկարով կ'միացնենք:

Արդ, նախ հագուստին մէջը լու մը կ'արգուկինք և յետոյ կ'սկսինք երկու առաջամասներուն աստառները գերակարել միշտ


երկայնքին ու լայնքին վրայ քիչ մը թոյլ գնելով . ապա կողամաս-
ներն ու ամէնէն վերջն ալ յետամասը . բայց լաւ կ'ըլլոյ որ այս
վերջինին կռնամէջը կանխաւ Զ հարմէգի չափ լայն կտրենք և
ապա վերէն ի վար վրայծալ մ'ընենք , որպէս զի հազնուած ա-
տեն թիկունքներուն ու վանդակածրին դէմ չկծկուի : Ստորոտը
Դիզ հարմէգի չափ վերէն անցնելու ենք որ կերպասն առերան
ձեւանալ :

Եթէ հագուստին մէջ աստառ գնել չուզուի, գոնէ լանջապանակը ծածկելու չափ գրուելու է (Խնչպէս 643րդ օր. սպիտակ մասը). և ե—դ գծին կողմը ներս շրջելով՝ միայն կանեփեայ կտաւին հետ փշակար մ'ընելու է:

Շատ անգամ իրը կ զարդ աստավին լանջապահների սահմանը մեքենայով գարձղարձիկ կ'բանուի (Խ'նչպիս 643րդ օր)։ Նախապէս ներքեւը կակուզ ասուեակ մը կամ անջատուած վատկայ մը գնենով, որ թափանցկարերը խրին ուշ շաճածել յօրինուին։

Այլևս ժամանակ է որ թեւերը կցորդուին, միայն մոռնալու
չէ որ վրանոց հագուստներուն թեւի աստառին վերի կողմը 4½
հարմէգի չափ երկայն կ'թողուի, կերպարն առանձին կ'կարուի ու
աստառն առանձին ծայկարով կ'գոցուի:

Ընդհանուր կերպով զերջին արդուկ մալ կ'ընենք, և երեսի կողմերը, կրծօձիքն ու օձիքը փայլամբոքով շոգիի գործողութեան ենթարկելէ ետք, կոճակները կ'կարենք: 5 Հարմէդ կրծափեղիկի լայնութեան համար կոճակը նոյնչափ կրծեղբէն ներսօք պէտք է գտնուի:



ԱՐՏԻՒՐ ԶԳԵՍՆԵՐ ԵՒ ԶԱՎԱՋԱՆՔ



۲۰۰

«ՎԱՐԺՈ»ի ՀԱԿԱԾԱԼՈՎ ԽՑԱԶԳԵՍՏՆԵՐ ԵՒ ՄԱՍՆԱՀՈՐ ԹԵՒ ՄՀ

(ՏԵՇԱ ՀԱ. ՏՎԱՅԻ. 644ԿԵ ՄԻՒՀԾԵՒ 658ՐԴ ՕՐԻՒԱԼԻ ՈՒ ԵԿԱՐԵՒԵՐԸ)

Առաջնին հագուստները կ'բաղկանան խցազգեստներէ, այդապահներէ, ու մուշտակահանդերձներէ:

Նախ խցագգեստին վրայ խօսինք, որոնք չորս զլաւոր ձեռք կ'ըլլան, ինչպէս «ԱԱԹՕ»ի ՀԱԿԱԾԱԼՈՎ, ԿՊՉՈՒՆ ՁԵՒԽՎ, ԳԱՀՎՐՅՅՈՎ, և ԱՄԲԻՇ ՁԵՒԽՎ, որոնք փոխարերաբար նորածեւութեան կարգ կ'անցնին: Ասոնց իւրաքանչիւրն ալ իր մասնաւոր հրապոյրն ունի, երբ մանաւանդ ընտրուած ձեւը հաղնողին կազմին համապատասխան ըլլայ: Այժմ բացատրենք վարօի հակածալով խցագգեստ ձեւելու կերպը:

ինչպէս թ. զլսու գասով յիշեցինք, Վարօի հակառակ կ առ
ուահուի այն ձեւ որ կոնածագէն մինչև ստորոտ՝ երեսի կողմէն
հակածալ մը կ'ունենայ (ին'չպէս ԵօՅրդ Եկար), վերը նեղ և հետ-
զէսէ դէպի վար լայնցած. բայց կարժէ որ գիտնանք թէ այս
ձեւն ի՞նչու վար կոչուած է: Վաթօ ԺԼ. գարուն սկլզբներն
ապրող վալանսիէնցի նկարիչ մ'էր, այն ատենուան Բարիզի Օրե-
րայի թատրոնին վարագործներն ու զարդերը կ'գծագրէր, և ի մէջ
այլոց ուեցած է զանազան գործեր ալ, որոնք նոյն ժամանակի
արքունեաց պատուակալ տիկիններուն արգուզարդը կներկայա-
ցնէն: Վաթօ հարազատ օրինակող մ'լլլալով՝ ինչ որ տեսաւ նոյնը
նկարեց. ժամանակ անցնելով, կոնածագէն կազմուած հակածալն
երբ վերատին նորաձեւութիւն եղաւ՝ վաթօի հակածալը անուա-

նեցին զայն, փոխանակ ԺԸ. դարսու արգունեաց տարապին ձեւը կոչելու:

Վարօի հակածալով խցագգեստը պարզ կողամասով ալ կըլլայ, կրկնակողամասով ալ: Արդ, համարենք թէ վերջին կերպովը շինել կ'ուղենք, մինչեւ կոնքի հաւասարութիւն աստաներ կ'ձեւնք: Եւ եթէ կրծեղրէն պիտի կոճկուի, առաջամասին աստառը կ'կորենք և հարմէդի չափ կրծեղրէն ճարմանդներու բաժին ձգելով (Տե՛ս 644րդ օր.): Կողամասերուն ալ Զ—ի և Ղ—Ռ զծերէն մէրմէկ հարմէդ զլօօի բաժիններ (ի՞նչպէս 645 և 646րդ օր.): Գալով յետումասին. տիպարին Գ և Զ կէտերը կ'հաւասարեցնենք աստառի ծալքին՝ որ Է ա—բ (Տե՛ս 647րդ օր.), այնպէս որ Բ կէտն աստառին ծալքէն ներսոք կ'մայ ու Մ' կէտը դէպի դուրս, այս դիրքին մէջ փշանուակով կ'օրինակենք տիպարին Ը—Ե գիծը, որ թիկնամէջին դէմ սեղմօն մը կ'ձեւանայ. Խոկ Մ' կէտին ծալքէն դուրս մնացած մասը՝ այն է Մ'—բ միջոցը կ'չափենք և առաւել Զ հարմէդով կ'փոխադրենք Յ կէտին դիմաց, որով կ'կազմուի գ կէտը. քանակը Խ և Գ կէտերուն ուղղելով կ'քաշենք Խ—Գ գիծը, Խ—Յ զծին երկայնութիւնը կ'չափենք և փոխադրելով սոյն Խ—Գ զծին վրայ, կարարաժինները կ'ձգենք ու կ'կորենք (Լա՛ դիտէ 647րդ օր. մանրամասութիւնը). և վերջնականապէս կ'ունենանք կոնամէջը միակտոր ու կոնակորին ստորոտն Զ հարմէդ զլօշի բաժինով յետումասին աստառը (Տե՛ս 648րդ օր.):

Վարօի հակածալով խցագգեստն ընդհանրապէս զառքաշով կ'ըլլայ. ուրեմն կերպասը ձեւելու համար, ծալքը կ'նկատենք Փ—Բ գիծ (Տե՛ս 649րդ օր.), և կերպասի գագաթին վրայ 10 հարմէդով կ'ճշգենք հակածալին վերի լայնութիւնը, որ է Փ—Օ գիծը. Փ կէտէն դէպի ի ծալին վրայ կը նշանակենք Աին չափին առաւել 4 հարմէդով Փ' կէտը, և այս կէտէն վրա ալ կ'գնենք քզանցքին Գ. չափն ու զառքաշի բաժինը միատեղ աւելցնելով կ'ունենանք Ք կէտը, որ թերեւ Կ կամ ԿՇով շինել ուղուի (ի՞նչպէս կ'երեւայ 649րդ օր. Ք կէտին դիմաց). Ք կէտէն ուղղահայեաց գիծ մը կ'քաշենք ու հակածալին վերի լայնութեան կրկինը՝ այն է 20 հարմէդով կ'ճշտենք Յ կէտը: Բանակը կ'հաւասարեցնենք Օ և Ֆ կէտերուն ու կ'քաշենք Օ—Ֆ գիծը՝ որ հակածալին տրամագիծը կ'ներկայացնէ: Այժմ յետումասի աստառին ծալքը՝ այն է ա—բ

գիծը կ'հաւասարեցնենք Օ—Ֆ գծին և Ժ կէտը Փ—Օ զծին. քանակը կ'ուղղենք Խ—Գ գծին ու կ'քաշենք Խ—Գ—Ե գիծը, կանամէջին գրուած զառքաշի բաժինին ԿՇ Գ չափին վրայ աւելցնելով՝ գումարը կ'նշանակենք Խ կէտէն Խ—Ե գծին վրայ՝ որով կը ճշտուի Ե կէտը: Յ կէտէն Յ հարմէդ վերօք զ կէտը նշանակելով՝ Ե կէտին հետ լարով մ'իրարու կ'միացնենք ու Ք կէտէն սկսելով՝ կ'քաշենք ստորոտի Բ—Գ—Ե աղեղը և կերպասը կ'կորենք, որ է Փ—Ա, ա—Փ—Փ—Ի, և այլն:

Ապա, կ'ձեւենք առաջամասը, եթէ հագագին գէմ փոխթել կ'ուղուի (ի՞նչպէս 652րդ նկարը), կերպասին ծալքը կ'առնենք գիմացի կողմերնիս որ Է ա—բ գիծը (Տե՛ս 650րդ օր.), և 40—42 հարմէդ ներսոք ալ կ'քաշենք Գ—Դ գիծը՝ որ փոթի բաժինը կ'ներկայացնէ: Գ կէտէն վեր կ'նշանակենք Ա. չափը՝ որ է 402 հարմէդ, և տիպարին Զ և Յ կէտերը կ'հաւասարեցնենք Գ—Դ գծին, միեւնոյն ատեն գիտելով որ Բ կէտն ալ Ա. չափին երկայնութեան դիմացը գտնուի. Ժ կէտին դիմաց կ'նշանակենք գօտիի և կոնքի չափերուն տարրերութեան ԿՇ, որ է զ կէտը և քանակը սոյն զ կէտին և Մ կէտէն Ա հարմէդ գրոօք հաւասարեցնելով՝ կ'քաշենք Գ—Ե կողմակի գիծը. և Ժ—Մ գծին դիրքը կ'շարունակենք անոր վրայ: Զառքաշ ձեւին համար ստորոտը կ'առնենք Բ—Ե ուղղահայեաց գիծը, խոկ պարզ ձեւի համար՝ Բ—Ի մեղմ կոր գիծը: Ձեւոցը կ'հաւասարեցնենք ա—բ գծին ու Դ կէտէն ուղղահայեաց մը քաշելով՝ Ծ կէտէն մինչև Ք կէտ տիպարի փողեղրին ձեւովը կարարաժինը կ'գծենք և Ք կէտէն մինչև ա կէտ՝ մեղմ կոր գծով մը կ'վերջացնենք: Այն հագուստները՝ որոնք հագագին դէմ պիտի փոթփոթուին ու առաջակողման գօտեվային դէմ ձգուն պիտի ըլլան, լաւ է որ երկրորդ սեղմօնը կերպասին հետ կարուի՝ որպէս զի թէ՛ փոթերը դէպի քովերը չափին և թէ՛ բարեձեւ երեւան (ի՞նչպէս 650րդ օր. Բ. սեղմօնը կերպասին հետ օրջուած զու զու ըած ենք): Փեռեկը կրծեղրէն ձեւացնելու համար՝ Յ կէտէն 8 հարմէդի չափ վարօք ա—ծ ծալքը կտրել ու ասոր աշ կողմի եղրին Յ հարմէդ լայնութեամբ առբերան մը գնելու է. Խոկ ձախ կողմին համար ալ 10 հարմէդ լայնութեամբ երիդ մը նախ շրջօնի կողմէն կարել և յետոյ շրջուելու է երեսի կողմն ու շուրթը ծալելով՝ կարելու է:

Գալով կողամասերուն՝ կրնայ տռանձին առանձին ալ ձեւուիլ
ու միակտոր ալ. արդ, համարինք թէ այս վերջին կերպովը շե-
նել կուղենք (Տե՛ս 654րդ օր.). ուրեմն կերպասին եզրը ա—ք
զիծ նկատելով՝ և. կողամասին Զ կէտը կերպասին եզրէն 12 և
12րդ կրկին չափերուն տարբերութեան 4/օը ներոք կ'հաւասարե-
ցնենք. իսկ առանին հագուստներու համար՝ Շ կէտը Զ հարմէգ.
և Զ—Շ գին գիրքը կ'շարունակենք կերպասին եզրը։ Յեաց, Ա.
կողամասը կ'հաւասարեցնենք Բ. կողամասին (ի՞նչպէս 165րդ եօի
կողամասները ձեւ ելու հրահանգը). քանակը կ'հաւասարեցնենք Ա.
կողամասի երանին ու կ'քաշենք Պ—Գ գիծը։ Առաջամասին Ժ—Ե
գիծը չափելով՝ նոյն երկայնութիւնը կ'գնենք կողամասի Զ կէտն
վար ու կ'ձշգենք բ կէտը, և Ղ կէտէն վար ալ Գ. չափն առաւել
զառքաշի բաժինին 4/օը և կնշանակենք գ կէտը. ապա՝ սոյն գ
կէտը վէտկոր գծով մը կ'միացնենք բ կէտին, ու կերպասը կը
կորենք։ կողամասներուն անշտառութիւնը՝ կոնքի հաւասարութե-
նէն 6—8 հարմէգի չափ վարօք սեղմօնի ձեւով իրարու կ'միա-
ցնենք, որ է զ կէտ։


Եթէ զառքաշ ձեւացնել չուզուի, այն առան յետսամասը պէտք
է առնել ե—դ գծով, կողամասը ե—դ գծով և առաջամասն ալ
ե—բ։

Այս հազուստին հակածալլ ձեւացնելու համար, նախ երեսի
կողմէն Ա—Ֆ գծին գիրքը մինչև կոնքի հաւասարութիւն կ'գե-
րակարենք, և երկու կողմի յետսամասները բանալով կ'փռենք
սեղանին վրայ և հակածալի բաժինն երկու կողմի բաժնելով՝ եղ-
բերէն կ'գերակարենք ու շրջօնի կողմէն կ'արդուկենք. ապա՝ յետ-
սամասի սատառին (Տե՛ս 648րդ օր.) Ը—Ե սեղմօնը կարելով, կը
ծածկենք կերպասին վրայ և թիկնածագէն վար կ'գերակարենք.
որովհետև սատառի ծոծրակին գէմ կաղմուած սեղմօնին բաժնը՝
կերպասին կոնածագը լայն կ'մնայ. հետեւապէս, հակածալին գե-
րակարները մինչև Ե կէտին հաւասարութիւնը կ'քակենք ու ներ-
քեւի շուրթերն իրարու վրայ կ'գրկենք, մինչև որ սատառին կը ս-
նածագի լայնութեան հաւասարի։

Առաջակողմի գոտեվայրին փոթերն ամփոփելու համար ժա-
պուէնէ գոտի կրնայ դրուիլ, կամ սնակուշտէն սկսելով և կամ
յետսակողի հակածալերուն ներքեւէն. շատ անգամ առաջակողմը


SUSANNA

ՀԱՅՈՒԹԻ ՀԱԱՍՏԱԼՈՎ, ԽՑԱԶԳԵՍ



Տ. ՏԱՐԱՏԱԿ

ԿՈՂՈՎԻ
ԽԱՅԱՀԵՍ



կրկնակի ու եռակի ծայրեր առկախ ձեւացնելով (Խճչպէս 652րդ նիստը):

Վարօի հակոծալով խցազգեստներուն թիվնաւարտի զշամ
կինայ մանկօձիք կազմուիլ, որ է ը-ը (Տե՛ս 649 և 650րդ օրինա-
կիներուն վեայ կես կես զծեռով): Թերեւս սոյն մասերը կարամէջ
ժանեակներով ու կարուած ծալերով զարդարել ուզուի (Խճչպէս
654 և 655րդ նկարները, ուր կ'երեւան նախորդ օրինակներուն այ-
բուբենական նշանակները): Այս պարագային յետամասի կերպա-
բուբենական նշանակները պահպան պահպան ածով Տե՛ս 656րդ (օրինակը):

սին ձեւը կ'կարենք օ—թ—թ գուշ
վարօի հակածալը կրկնակի ու եռակի ալ կ'ըլլայ (Ե՞նչպէս
653 և 654րդ Ցկանեներ), այն տաեն յետամասի Փ—0 գծին դըր-
ուելիք 10 հարմէղը կրկնել կամ եռապատկելու է, ինչպէս նաև
ոսորսոտի թ—թ գծին 2) հարմէղը 40 կամ 60ի վերածելու է:
Ժիշտին վրաց (Տե՛ս 654րդ օր.) լոյն ժապաէնէ միծ վարդա-
ժ կէտին վրաց կապ մալ կրկայ գրաւիլ, որուն ծայրերն ա'յնքան երկայն ըլլան
կապ մալ կրկայ գրաւիլ, որուն ծայրերն ա'յնքան երկայն ըլլան
որ մինչեւ զնտղուց համուելով՝ առկախ ծածանին:

ԱՐՏՈՒՐ ՀԱԳՈՒԽՍՆԵՐՈՒ ՊԱՏՇԱՋՈՂ, ԹԵՒ ՄԸ

կ'առնենք : Ե—զ—Ե' Կիսաբոլորակ ձեւով տև կրնայ ըլլալ (Տե՛ս
այս ամենը 657րդ օր .) . ապա շուրջի կարաբաժինները ձգելով կեր-
պասը կ'կտրենք :

թեւբերանիը ժանեակ կարելը շատ վայելուչ է և ամեն պարագայի մէջի առերանցուն մատնաւորապէս վառ գոյնով մնտաք սեղէն մըլլալը այս թեւին գլխաւոր հրապոյրն է, որ հազնուած ատէն պիտի երեւալ:

Հակածալերը պատշաճապէս գասաւորելու համար, թե գծին կէսէն մինչեւ թ' ե՛ զի՞ծ աղեղնաձև գիծ մը կ'քաշենք, որ է թ—թ : Եւ այս գծին կերպոնին երկու կողմը երեքական խորշխորշան կ'ձեւացնենք, որով երեսի կողմը հակածալ մը կ'ձեւանայ (Լա՛ դիտէ թ—թ գծին վրայ ցուցուած խորչիութեաներուն նեանակեներ) : Խորշխորշաններուն խորութիւններն այնպէս մը կազմելու է, որ նոն հաւասարութիւնը ափնածրի չափին վերածուի, որպէս զի թէ՛ լայն եղած չըլլաց և թէ՛ նեղ, որ ձեռքը գիւրին մուտքանէ : Հակածալին վրայ ժապաւէնէ վարդակապ մ'ուլ կրնայ դըրուիլ (Մ'Յշպէս 058րդ նկար) :

Q U U F.

ԿՊՉՈՒՆ ԽՅԱԶԳԵՍՏՆԵՐ ԵՒ ՄԻԱԿՏՈՐ ԲԱՐՁՐ ԾԱԼՈՁԻՐ
(Տե՛ս Հ. Բ. Տախոսակի 659հ միջեւ 671րդ օրինակ ու նկարները)

Ճաշակի, կազմի և նորաձեւութեան բերումով խցաղքեսաներն
աւ իրանազգեստի նման կպչուն կրնան ըլլալ . նոյն խոկ պարզ—
կողամասով, կրնակսղամասով, հօհեն— կրուսճուսում է

Արդ, համարինք թէ կրկնակողամասով, կրկնի—յետսամասով, և այլն։ Արդ, համարինք թէ կրկնակողամասով կպչուն խցագգեստ մը ձեւել կուզենք, որ միեւնոյն ժամանակ կրծեղրէն կոճկուռի (Ի՞նչպէս են 670 և 671րդ նկարները)։ Նոխ մինչեւ կոնքի հաւասարութիւն իրանազգեստին աստաները կ'ձեւենք, բնակտնարար առաջամասը պարզ սեղմօններով ու կրծեղրէն Յ հարմէդ վերելեակի բաժին ձգելով։ Միեւնոյն տառեն կողամասներուն Զ—ի և Ղ—Ո գծերէն մէյմէկ հարմէդ զլօրի բաժին կ'ձգենք, ինչպէս նաև յետսամասին Զ—Մ' և Խ—Յ գծերէն (Տե՛ս ԵՅՆդ օր) սրոնք Զ—Օ և Խ—Յ յաւելուածական գծերը, որպէս զի ստորոտը զգալի տարածութիւն մ'ունենալու։

Առաջամասին կերպասը ձեւելու համար, (Տե՛ս 662րդ օր.) տի-
պարին Դ և Զ կէտերը կերպասին եղրէն, այն է ա—բ գծէն Յ
ական հարսէդ ներսօք հաւասարեցնելով՝ կ'ունենանք կրծեղրին
վերելեակի բաժինը, յետոյ Դ—Զ—Բ—Յ գծին զուգահեռական
գիրքովն աւելորդները կ'արդարենք և կ'ունենանք Գ—Դ—Ե—Բ
գիծը. իսկ միւս կաղմերուն գործողութիւնը նախորդ հրահանգին
համեմատ շարունակելով՝ կերպասը կ'կտրենք: Թերեւս ունատո-
րէն մինչեւ ստորատ ու նոյն խոկ վարի շուրթին հետ շարունակ-
ուած տարբեր նիւթէ մակագլուխիւն մ'ուզուի (Խնչպէս 670րդ
նկարը). այս ալ վայելուչ ու համեմատական ստուիճաններով կազ-
մելու համար, Ծ—Դ, Զ—Հ, Բ—Ղ և Յ—Շ գծերը կէս ընելով կը
քաշենք Ք—Ւ—Լ և մեղմ շեղութիւնով մը կ'շարունակենք մինչեւ
ստորատ, որ է խ, ու բոլորակածեւ խ—ծ գիծը: Մէջի կողմն ալ
կ'առնենք ուսածաղին մէկերրորդին մեղմ կորութիւնով մը երբու-
ծին գէմ, որ է Բ—Ժ և Ժ—Ղ—Ն—Կ—Ի գծերը. այս ձեւը կ'օ-
րինակենք զարդանիւթի վրայ: Ք—Խ գծէն Յ հարմէզի չափ ներս
շրջուելիք առուերանի բաժին կ'ձգենք, որ է Ճ—Ղ (Տե՛ս 663րդ օր.),
ու միւս կողմերը պարզ կարաբաժններ: Գուցէ ունջերով կրծօ-
սւ միւս կողմերը պարզ կարաբաժններ: Պայտէ Յ Ճ—Ղ, Ճ—Մ,
Ճիքի ձեւերը տալ ուզուի, այն ատեն ալ կ'առնենք Բ—Ղ, Յ—Մ,
Մ—Ի, Ի—Կ և Կ—Ի գծերով (Խնչպէս 663րդ օր.): Կրնաց լլլլլ որ
սոյն մակագրութենէն գէպ ի կրծեղրը մնացած մասն ալ բոլորսկին
տարբեր նիւթով ըլլալ (Խնչպէս 662րդ օրինակին վրայ տարբեր նիւ-
թերով ցուցուցած ենք):

բարել ցուցանակ ունի մասնաւութեան, կերպարին եղբե ա—բ զի՞ւ և գ—ւ շ
Գալով յետամասուին, կերպարին եղբե ա—բ զի՞ւ վրայ կը
ա—զ համարելով (Տե՛ս 66 Երդ օր.), ա կէտէն ա—բ գծին վրայ կը
նշանակենք Այն չափը + 4 որ է դ կէտը և նոյն կէտէն վրա ալ
կ'զնենք քառանգքին Գ. չափն ու կէս զառքաշի համար առաւել
50, որոնցմով կ'ձշտենք բ կէտը: Յետոյ յետամասի աստանին Ժ
կ'հաւասարեցնենք ա—զ գծին և Ը կէտը ա—դ գծին ու 0
կէտը կ'հաւասարեցնենք ա—զ գծին և Ը կէտը Զ—0 գծին
կէտը կերպասուին եղբէն մաս մը հեռու: ապա քանակը Զ—0 գծին
հաւասարեցնելով կ'կտրենք որ քանակին վարի կողմը բ կէտին
հպի, հակառակ պարագային աստառը կ'շարժենք ներս կամ դուրս,
հպի, հակառակ պարագային աստառը կ'շարժենք ներս կամ դուրս,
ինչպէս բաենսիս ըրջապեսաթին յետամասը (Տե՛ս Մ. տախ. 368 Եր
օր.): Վերջապէս քանակը կ'հաւասարեցնենք Խ—Թ գծին ու կը
քաշենք Խ—Թ—Ե գիծը, Գ. չափին վրայ կ'աւելցնենք զառքաշի

բաժինները՝ կ'ձշտենք ե կէտը և բ և ե կէտերը լարով մը կը միացնենք ու տղեզով մը կ'լարացնենք:

Կողամասներն անջատ ալ կ'ըլլան ու նախորդ գասին նման միացած ալ: Համարինք թէ այս անդամ ալ անջատ կ'ուզենք. ուստի կ'շարունակենք անոնց երկայնաւթեան զծերն ու կերպառ-ները կ'փրենք (Լա՛ւ դիտէ 666 և 667րդ օրինակերուն երանին, ազդրին ու սօրուներուն վրայ նշանակուած թիւեր):

Այս ձեւով խցաղգետին յետամասն երեք տարբեր ձեւերով
ևս կրնայ ներկայացնելի:

Ա.Բ.Ջ.Զ.Ն.— Ամերիկեան ձեւով շինելու համար, կերպասին ծաղքը կառնենք ա-բ դիմ. ատառը միշտ կպչուն և կերպասին կռնամէջի խոտոր մասը կ'թօղունք միատեղ (Տե՛ս ԵԵԿը ըր. մութ ստուերով մասը), աստանին կռնամէջի առանձին կ'կարենք ու կռնակորը կերպասին հետ, այնպէս որ խոտոր մասը գտնելվայրին դէմ թղզ կ'մնայ, որով քալելու ժամանակ ծոճրակէն մինչեւ ստուրտ բրդաձեւ դիրք մը կ'առնէ, և շատ վայելուչ կ'ըլլայ նիհար ու երկայնահասակ կազմերու վրալ:

ԵՐԿՐՈՐԴ. — Դարձեալ կոնսմէջը միակտոր կ'առնենք, և այս անգամ խոտոր մասը գօտեվայրին վրայ 2—3 կարգ պղպջակ ձեւացնելով կ'հծիկենք ու կ'հաւասարեցնենք ներքեւի աստանին լայնութեան (ի՞նչպես 663րդ նրար) :

ԵՐԵՐԾՈՒԹՅՈՒՆ. — Եթէ ուզենք խոսոր մասին աւելորդը հինգ հատ սեղմօնի նման կարուած ծալեր ալ կրնանք ձեւացնել (ի՞նչպէս 66Երդ Ակարը):

* *
Միակտոր բարձր ծալ օձիք. — Առաջին հագուստներու վրայ
միակտոր բարձր ծալ—օձիք կցել ուղղաւած ատեն (ի՞նչպես 660 և
661րդ նկարները). ձեւացակ կ'քաշենք Ա.—Բ և Ա.—Գ գծերը (Տե՛ս
659րդ օր.) ու Ա. կէտէն Ա.—Գ գծին վրայ կնշանակենք 3 հար-
մէտով Ե կէտը, Ե կէտէն վեր օձիքին բարձրութիւնը 5 հարմէ-
տով Զ կէտը և Զ կէտէն վեր ցրջուքին լայնութեան ալ 6 հար-
մէտով Գ կէտը: Ե կէտէն շեղակի Ա.—Բ գծին վրայ կնշանակենք
փողեզրի մեծութիւնը. որ է 19 հարմէտ ու կ'քաշենք Բ—Ե՝ ուղ-
ղահայեացը. օձիքին առաջակողմի բարձրութիւնը $4\frac{1}{2}$ հարմէտով
Ե կէտը կնշանակենք. և Բ—Ե գծէն 2 հարմէտ (այն է հագուս-

ախն կրծեղի հակածալին կէս լոյնքը) զուգահեռաբ դրսօք ալ
Հ—Դ գիծը: Ե կէտը նախ մեղմ զմբեթարդ և յետոյ շտա
մեղմ վէտկոր գծով մը կ'միացնենք Բ կէտէն . Զ—Է գիծը
վերի չուրթին կոտրելու սահմանը կ'ըլլայ և Գ—Թ գիծը շրջու-
քին շուրթը, որուն առաջակողմը կինայ 7 հարմէտ ըլլալ՝ փոքր
շեղութիւնով մը (ի՞նչպէս ՅԵՒՐՈ նկարին տեսիր): Թերեւս շրջուքը
բուն օձիքին բարձրութենէն նեղ շինել ուզուի՝ ի՞նչպէս Ժ—Լ
գիծը, և գուցէ առաջակողմն անջատ ու բալրակածեւ (Որ է 600րդ
նկարին ձեւովիր): Այս տիպարավ օսլոյուն օձիք ալ կրնայ շինուել՝
հիթէ նիւթն ընտիր մատարուսմ ըլլայ կամ քթան ու մէջն եռա-
հիւսակէ պնդածուէն դրուի:

፩፻፭ ፩

ՅԵՍԱԿՈՂՄՆ ԱՆԶԱՏ ՊԱՐԵԳՕՏՈՎ ԽՅԱԳԻԵԱՏ
ԷՒ ՈՒՄՆՈՑԻ ԶԵՒ ԳԱԼԱՐՈՒԻՆ ՕԶԻՔՆԵՐ

(Տե՛ս ՀՊ. Տախ. 672էն միջեւ 685րդ օրինակներն ու Եկարեները)

Կարգ մը խցազգեստներ կան որոնց յետահկովմի գոտեվալրէն
դէպի վարն անջտա կ'ըլլայ, որ շատ վայելուչ կ'ըլլայ նիհար և
երանը տափարակ կազմերու : Անջտա պարեգօտը ձեւելու համար,
կերպասին ծալքն Ս.—Գ գիծ համարելով (Տե՛ս 677րդ օր.), Ա. կէ-
տէն Զ հարմէգ վարօք և կէտը կ'նշանակենք ու Բ կէտէն վար կը-
դնենք Գ. չափը և $\frac{1}{2}$ զառքաշի համար 50 հարմէգ, որ է 100+
50=150 հարմէգ, որով կ'ծշտուի Գ կէտը : Ա. կէտէն Ս.—Դ գծին
վրայ կ'նշանակենք 12րդ կրկին չափին $\frac{1}{3}$ ը որ է 40 հարմէգ և Բ
կէտը մեղմ կոր գծով մ'իրարու կ'միացնենք : Ստորոտի լայնու-
թեան համար կ'քաշենք Գ—Ե գիծն ու 12րդ կրկին չափը և Եր
կէտն ալ միատեղ առնելով՝ հաւասար 75 հարուէտով կ'ծշտենք Ե
կէտն ու կ'բարձրացնենք Ե—Զ հարվագնական գիծը . յետոյ Դ կէ-
տէն շեղակի Ե—Զ գծին վրայ կ'նշանակենք Գ. չափը և զառ-
քաշին $\frac{2}{3}$ ը՝ որով կ'հաստատուի Ե կէտը : Գ և Ե կէտերը շեղ գծով
մ'իրարու կ'միացնենք ինչպէս նաև Գ և Ե կէտերն ու այս վեր-
ջնին դէմ աղեղ մը քաշելով՝ կերպասը կ'կարենք (Տե՛ս 677րդ օր.)

Չորրորդ կերպը. — Յետուամասը Ա. կերպին նման կ'պատրաստենք. խոկ պարեգօտին փոթը Բ կէտին նման ներքեւէն կը կցենք գօտեվայրին, ու կոնքի հաւասարութեան վրայ գրասանք ձեւացած թաթիկ մը կ'դնենք (ի՞նչպէս 680րդ նկարը), և կոճակներով կ'զարդարենք:

Թերեւս Բ. կերպին նման պատրաստուի և յետուամասին որածայր գիրքովը լայն ժապաւէն մը անցուի, որ սնակութիւնը գառաջ առաջականացնէ: Ապա, պարեգօտին Բ—Դ գիծը

* * *

Ուսնոցի ձեւ զարդուն օձիքներ. — Այս ուսնոց օձիքներն երկու կերպով կ'ըլլան, այն է նաւաստիական ձեւով օձիքի նման թիկանց վրայէն կ'դառնայ ու հատու ձեւով կուգայ կուրծքին վրայ, երբեմն մինչեւ առաջակողման գօտեվայր կ'յանդի (ի՞նչպէս 672 և 673րդ նկարները), և երբեմն ալ երկու երեք կարգ վեր 672 և 673րդ նկարները), առաջականացնէ (ի՞նչպէս 685րդ նկարը): Զաւորքի նման ուսերուն շուրջը կ'պատէ (ի՞նչպէս 685րդ նկարը): Սյուռ ամենայնիւ, ձեւելու սկզբունքը միշտ նոյնն է, որովհետեւ կ'հաւասարեցնենք ձեւագծելու եղանակին նման յետուամասին տիպարը զարդօձիքներ ձեւագծելու եղանակին նման յետուամասին տիպարը առաջանայինքնէնք առաջանայի ուսին (Տե՛ս 682րդ օր.), և ուզ-կ'հաւասարեցնենք առաջանայի ուսին (Տե՛ս 682րդ օր.), և ուզ- ուած սահմաններէն կ'սկսինք ներքին ու արտաքին շրջագծերը ձեւագծել: Արդ, համարենք թէ մէջի եզրն առնել կ'ուզենք Դ ձեւագծել: Կամ, թաւիչ երիզ մը կ'անցնենք և կամ ժամանակակիցներ կ'կարենք: Ապա, պարեգօտին Բ—Դ գիծը խոշոշը շուշլալ մ'ընելով կ'կծկենք՝ մինչեւ որ յետուամասի գօտեվայրին հաւասարի, ու ներքեւի կողմէն կ'կցենք Զ—Խ գծին. և յետու կ'միացնենք կողմանային, որ հագնոււած ատեն տեսնողը կ'կարծէ թէ յետուակողմը փոթփոթուած քղանցքի մը վրայ որածայր իրանազգեստ հագած է (ի՞նչպէս 678րդ նկարը):

Երրորդ կերպ. — Եթէ ուզենք Զ—Մ” և Մ”—Յ’ գծերն ալ կէս կ'ընենք, ու Փ, Օ և Օ, Բ կէտերը մէյ մէկ շեղ գծերով իրարու կ'միացնենք (Տե՛ս 675րդ օր.): այս ալ երկրորդ ձեւին նման պատրաստելով կ'ունենանք կրկին ծայրերով ձեւացած անշատ յետուամաս (Տե՛ս 681րդ նկարը):

Առաջին կերպը. — Նախ յետուամասին ատուառը կտրելու ժամանակ Զ—Մ” և Խ—Յ գծերէն մէյ մէկ հարմէդ զլօռի բաժին կ'ձգենք (Տե՛ս 676րդ օր.), և կ'ունենանք Զ—Մ” և Խ—Յ գծերն ու կարաբատինները ձգելով կ'կտրենք: Յետոյ իւրաքանչիւրը կերպասին հետ կ'գերակարենք, շուրջը կ'յարդարենք ու կոնստմէջը վերջնականապէս կ'կարենք: Ապա, պարեգօտին Բ—Դ գիծը 5 հարմէդ կ'գարձնենք շրջօնին կողմը, որով Բ—Թ գիծը շրթունք կ'կազմուի (Տե՛ս 677րդ օր.), հիմա ալ նոյն շուրջը 4 հարմէդ լայնութեամբ՝ այն է Ժ—Ի գծէն երեսի կողմը կ'գարձնենք, ու հաստ թելով ուլորակար մ'ընելով կ'կծկենք՝ մինչեւ որ յետուամասի Յ—Մ” գծին հաւասարի. այն ատեն շուրջը կ'ցցենք վեր, որ բազմափոթի մը ձեւը կ'տանէ: Ոլորակարին հաւասարութիւնը, այն է Ժ—Ի գիծը և հարմէդի չափ յետուամասի Յ—Մ” գծին վրայ զետեղելով՝ ոլորակարերուն մէջէն կէտ կարով մը կ'հաստատենք, և յետոյ ամրողչափիւնը կ'կցորդէնք կողմանային հետ, որով պարեգօտը երանին դէմ գլուխ ձեւացած բազմափոթ կ'ձեւանաց (ի՞նչպէս 674րդ նկարը):

Երկրորդ կերպը. — Առաջանքն Խ—Յ’ գիծը կէս ընելով կ'ունենանք Ք կէտը (Տե՛ս 676րդ օր.), ու շեղ գծով մը կ'միացնենք, Մ” կէտին. կերպասին հետ կ'գերակարենք, կոնստմէջը կ'կարենք, այնպէս որ վարի կողմն եռանկիւն մը կ'ձեւանաց: Ապա եռանկեան երկու շուրջը կ'շրջենք ներս, ու մէքենայով քանի մը կարգ թափանց կերեր կ'ընենք, կամ թաւիչ երիզ մը կ'անցնենք և կամ ժամանակակիցներ կ'կարենք: Ապա, պարեգօտին Բ—Դ գիծը խոշոշը շուշլալ մ'ընելով կ'կծկենք՝ մինչեւ որ յետուամասի գօտեվայրին հաւասարի, ու ներքեւի կողմէն կ'կցենք Զ—Խ գծին. և յետոյ կ'միացնենք կողմանային, որ հագնոււած ատեն տեսնողը կ'կարծէ թէ յետուակողմը փոթփոթուած քղանցքի մը վրայ որածայր իրանազգեստ հագած է (ի՞նչպէս 678րդ նկարը):

Երրորդ կերպը. — Եթէ ուզենք Զ—Մ” և Մ”—Յ’ գծերն ալ կէս կ'ընենք, ու Փ, Օ և Օ, Բ կէտերը մէյ մէկ շեղ գծերով իրարու կ'միացնենք (Տե՛ս 675րդ օր.): այս ալ երկրորդ ձեւին նման պատրաստելով կ'ունենանք կրկին ծայրերով ձեւացած անշատ յետուամաս (Տե՛ս 681րդ նկարը):

եզրը 3—4ական հարմէդ կ'անջատենք . իսկ ներքէն լույս կ'պահենք իրարու կից , որով տիպարը գալարուն ձեւ մը կ'առնէ (ի՞նչպէս 684րդ օր.) : Կ'մայ չուրջը կարաբաժիններ ձգել ու կերպասը կտրել :

Ճիշտ միեւնոյն եղանակով կ'կարուին այս կարգի ձեւ արուած գալարուն օձիքները , բաւական է որ տիպարին վրայ անոնց առաջանք լաւ ճշտուի :

Պ Ա Յ Պ .



ԳԱՀՎՐԱՅՈՎ ԽՅԱԶԳԵՍՏՆԵՐ

ԵՒ ԱՌԱՆՑ ՊՆԴԱԾՈՒԵՆԻ ԲԱՐՁՐ—ՕՉԻՔՆԵՐ

(Տե՛ս ՀՊ . Տափակ 690էն մինչեւ 698րդ օրինակ ու նկարները)

Գահվրայով խցազգեստներն ալ կ'ձեւուին ճիշտ գահվրայով սուկաններու նման (ի՞նչպէս 694 , 692 եւ 697րդ նկարները) , հորիզոնական ձեւով , որածայր , բոլորչի , ևն . : Համարենք թէ հորիզոնական ձեւով շինել կ'ուզենք լինչպէս նույն . քովէն կոճկուած : Նախ գահվրայի տիպարին թիկնամէջն այն է ը'—և' գիծը (Տե՛ս 694րդ օր.) , կրծեղը որ է Դ—Բ գիծը միակտոր կ'կազմենք և տիպարին Ծ'—Խ' գծէն կարելալ ձախ կողմի ուսուը կ'ամնջատենք , որով ուսածագը կ'ունենանք Ծ'—Խ' և թիկնածագը Ծ'—Խ' : Միւսն թէ այս վերջնին Յ հարմէդի չափ կոճկափեղի բաժին կը ձգենք , որ է ա—բ գիծը , և միւս եղբերուն ալ կարաբաժիններ ձգելավ աստաղը կ'կարենք : Իսկ կերպասը ձեւելու ժամանակ՝ Ը'—Ե' գիծն առէջի թելերուն ուղղութեանը պէտք է դրուի , մասնաւանդ գծաւոր կամ քառակուսեակ եղած ատեն (ի՞նչպէս 694րդ օր.) , որպէս զի գծերն ամէն կողմի վրայ ներգաշնակութեան ունենան . ապա մոռնալու չէ Ը'—Ե' և Ե'—Ե' գծերէն կէս հարմէդ աւելի ձգել՝ որ կարելու ժամանակ գիւրութիւն ըլլայ :

Քանի որ քովէն պիտի կոճկուի՝ ձախ կողմին ներքեւը աստաղէ կրծատեալ առաջամաս մը կցելու է , որուն համար կ'առնենք տիպարին հետեւեալ գծերը՝ որոնք են Ծ—Դ , Ծ—Խ , Խ—Ը—Ե , Ե—Ժ—Մ և այս վերջնինը 8—40 հարմէդի չափ



ազգրին ձեւովը շարունակելով մինչեւ Ժ կէտ (ՏԵ՛Ա 690րդ օր.), ու Դ կէտն աղեղնաձեւ միացնելու է Ժ կէտին. բոլոր շուրթերուն ալ կարաբաժին ձգելով (ի՞նչպէս 635րդ օր.). յիսոյ մէկ մասը կերպասավ ծածկելու է (ի՞նչպէս ԽՊ. տախտակ 274րդ օր.):

Գալով վարի մասերուն, համարենք թէ նախ առաջամասը
ձեւել կուղենք, հետեւապէս կերպասին ծալքը ա—բ գիծ նկա-
տելով (Տե՛ս 600րդ օր.), փոթփոթուած սուկանի նման 10րդ չա-
փին միծութեամբ կամ քանի մը հարմէդ աւելիով՝ այն է 18—20
հարմէդ կերպասին ծալքն զուգահեռաբար գէպի նիրսօք զ—դ
գիծը քաշելով, տիպարին Զ և Յ կէտերը կ'հաւասարեցնենք սոյն
գծին և գահվրայի բարձրութիւնը կերպասին գագաթէն մէկ կա-
րաբաժին վարօք։ Բ կէտէն վար Ա. չափը դնելով կ'ձշտինք Դ
կէտը, և լնթացիկ կանոնին համեմատ ալ կողմնակի ե—զ գիծը
կ'քաշենք ու կերպասը կ'կտրենք։

Սոյն ձեւով լցազգեատը զառքաշ ալ կլնայ ըլլալ (ինչպէս օքանութեան մասին պատմութեան մեջ առաջանակած է):

Խցազգեստներուն ստորոտը սովորական քղանցքներու ստա
կերպ կերպ զարդեր կրնան գրութէ, ինչպէս են լայն ու փոթ-
փոթուած վերջաւորք (Տի՛ս 672րդ նկարը): Նեղ երկու կարգ (ի՞նչ-
պէս 691րդ նկարը): Զեւ տրուած լայն վերջաւորք, և նոյն իսկ
զարդաշով (ի՞նչպէս 673րդ նկարը): Կռնամէջ ու գրասանքով (ի՞նչ-
պէս 696րդ նկար): Ժանեակով կամ տարբեր նիւթերով (ի՞նչպէս
679րդ եւ 697րդ նկարները), ևայլն:

* *
Առանց պեղածուէնի բարձր-օձիքներ. — Քանի մը տարի է որ
ժանիկէ կամ բարակ մետաքսէ բարձր-օձիքներն առանց պնդա-
թ. — 25

ծուէնի կ'գործածուին (ՏԵ՛Ս 698րդ օրինակը): Ուզուած բարձրութեամբ թղթէ տիպարը շինելէ ետք, անոր վրայ կ'պատրաստենք բուն օձիքը (ինչպէս զարդօձիքները) և շրթունքն ինքնիրմով նուրբ խծիպ կ'ընենք: Որպէ՛ս զի հազնուած ատեն օձիքը փողեզրին շուրջը կանգուն կենայ, երեք տեղ կիսուսկորներ պէտք է դրուի: Արդ, եթէ օձիքը ծոծրակին վրայ պիտի կոմկուուի (ԽՇ-պէս 698րդ օր.), Ն"-ՈՌ" գծին ուղղութեամբ կտոսկը մը կ'գրուի՝ բարակ նիւթէ կածանով մը ծածկելով, և մէյմէլ հատ Ք-Փ և Ք'-Փ' գծերուն չեղ գիլքովը:

ՏՂՆԴԵՐՆԵՐՈՒՄ ԿՊՉՈՒՆ ԻՐԱՆԱԳԳԵՍՏՆ ՈՒ ՔՂԱՆՑՔԸ

(Տե՛ս ՀԳ. տախ. 686, 687, 688 եւ 689րդ օրինակները)

Զորա հինգ ամսութ տղնդերներու վրայ չափ առնուած ատեն կոնքի չափը 3—4 հարմէդ նուազ գրելու է. իսկ 6—7 ամսութ դողներունն ալ 5—6 հարմէդ. և տիպարները սովորական եղանակին համեմատ ձեւագծելէ ետք, զեղչուած թիւվն կէսը պէտք է նշանակել կողամասին Շ կէտէն գուրս ու ½ըն ալ 2 կէտէն. և Հ—ա—բ գծով նոր կողանջատը՝ որ է լ.—դ—ե գիծը (ՏԵ՛ս 687րդ օր.): Լաւ կ'ըլլայ որ առաջամասին սեղմօնները չկարուեի. այլ կածանով կապիչ պատրաստուի (Խնչպէս կ'երեւայ 687րդ օր.ին վրայ), որպէս զի առաջացեալ ամիսներուն մէջ հետզհետէ կապիչը թուլցնել կարելի բլրա:

Գալով քղանցքին, անհրաժեշտ է մասնաւոր միջոցներ ի գործ դնել, որպէսզի եթէ նոյն խոկ յղութեան երրորդ ամսուն քղանցք մը չինուի, կարենայ գայն մինչև վերջին ամիսաը հագնիլ:

Հիմա բացատրենք թէ ի՞նչ է այս պարագային մեր ձեռք տուած միջոցը, որով թէ՛ առաջամասը չկարճնայ և թէ՛ գօտին ու կոնքը նեղ չդայ:

Նախ քղանցքի առաջամասին գօտեվայրն օրուան չափէն 8
հարմէդ բարձր կ'նշանակենք՝ որ է ա կէտը (Տես 688րդ օր.), և
քովն ալ 6 հարմէդով ք կէտը կ'նշանակենք ու մեղմ գմբեթարդ
գծով մը կ'միացնենք ա կէտին։ Տարակոյս չկայ թէ արդէն ա-

սոնց գօտեվայրի լայնութիւնը 12ըրդ չափին $\frac{1}{2}$ ովք կ'շինուի : Յետոյ
կերպառը կ'կուրենք բ—Դ—Թ գծէն 2—3 հարմէդ զուգահեռաբար
դրսօք, որ է զ—Պ գիծը, որ պիտի ծառացէ իրեւ առբերան :
Կողմամախին համար նախապէս թղթէ տիպար մը կ'շինենք .
յետոյ զայն կերպամին վրայ փոխադրելով (Տե՛ս 689րդ օր.), Ի—Ա.
գիծը կ'հաւասարեցնենք ե—զ գծէն և հարմէդ զուգահեռաբար
ներսօք (Տես 698րդ օր.) . Ա—Զ գիծը (որ այս վերջինը 678րդ օ-
րինակին ներեւու մնացած է) կ'օրինակենք, ու գնդասեղը Զ կէտին
վրայ ցցելով Ժ կէտը 10 հարմէդ ետ կ'քաշենք, հիմայ ալ Ժ կէ-
տէն Ծ հարմէդ վերօք Ե կէտը կ'ձշգենք և Դ' կէտը վէտիր գծով
մը կ'միացնենք Ե կէտին : Թերեւու յետսակողմն հակածալ, զառքաշ
կամ փոթի բաժին ուզուի, որոնք այս գործողութենէն վերջը
պէտք է կարգադրուին :

Արդ, առաջամասին թ անկիւնը կողամասին Յ. առկա կցելով՝ երկայնութեան մինչև երկու-երրորդը կ'կարենք ու միւսը կ'թողունք փեռեկի նման անջատ, նոյնպէս ալ միւս կողմը։ Ապա երկու կողմի ե անկիւնին մէրմէկ երիզ կ'կարենք, որ առաջա- առկու կողմի ե անկիւնին մէրմէկ երիզ կ'կարենք, միեւնոյն կերպով ալ կողմին վրայ ուզուած սեղմումով կապուի. միեւնոյն կերպով ալ կողմին վրայ ուզուած սեղմումով կապուի. յետու- առաջամասին գ անկիւններն երիզով մը կընան կապուիլ յետու- կողմին վրայ։

240 2.

И. А. К. Г. С. У. Ч. У. З. У. Ч. Ч. В. Р. 2

ԵՒ ՆՈՅՆ ԶԵՒՈՎ ԿՐԿՆԱԿԱՐ ԱՐՏՍԱԳԳԵՑՏԵՐ

ՏԵՐ ՅԱ ԽՈ ՀԱՅԻ ՏԱԿԱՆ 699ԷԿ ՄԻԳՅԵՒ 710ՐԴ ՕՐԲԻՆԱԿ ՈՒ ՆԿԱՐ)

Ամէնէն ծանօթ մուշտակահանդերձին ձեւը թէև մերձաւոր
մանութիւնն ունի կրկնակար արտազգեստին (Խնչպէս ՀՆ. տախ.
Ծ ու 708րդ Եկարմները), բայց ուրիշն եղանակով մը կ'ձեւենք
այն, այն է նախապէս մինչև կոնքի հաւատարութիւնն իշնող յիշա-
ւամաս, կողամաս և առաջամասի մը տիպարները կ'ընենք և
տոյ զանոնք կերպասին վրայ փոխազգրելով մուշտակահանդերձի
վերածենք: Զափառութիւնը միշտ կ'կատարենք ներքինն հան-
երձներուն վրայէն, Յրդ կրկին ու 12րդ չափերն ալ զանց ընելով:

Արդ, յեսամատին ու կողամասին տիպարները ձեւագծելու համար, ընթացիկ եղանակին համիմատ ուղղահայեաց գծերը կը քաշենք, և որովհետեւ մուշտակահանդերձը առտնին վրանոց հագուստ մ'է, բնական մէջքը ներկայացնող Բ' կէտն ալ կ'քաշենք Բ' ուղղահայեացը (Տե՛ս ՀԴ տակ. 700րդ օր.) ու ասոր վրայ կ'նշանակենք Զ' կէտը և կ'շարունակենք կազմել կոնամէջը, կոնածագն ու թիկնածագը: Ապա, 11 և 12րդ կրիին չափերուն կէտերը նուազ Զ հարմէգով կ'ճշտենք Հ և Ն կէտերն ու զանոնք շեղ գծով մ'իրարու կ'միացնենք՝ առանց սնակուշտը ճշտելու, այլ սոյն Հ—Ն գիծն ուր որ Բ ուղղահայեացը կտրէ, ճիշտ այն տեղը կ'անուանենք Զ կէտ, և Զ' կէտը շեղ գծով մը կ'միացնենք Զ կէտին որ գոտեվայրի հաւասարութիւնը կ'կազմէ: Այժմ սոյն Զ—Զ գծին վրայ մէջքի լայնութիւնը կ'նշանակենք 4րդ չափին կէտովը որ այժմ կ'ընէ 8¹/₂ հարմէգ և կ'ունենանք Խ' կէտը. ասոր դիմաց ալ կ'գնենք 3րդ չափին ։ Յ կէտը կ'նշանակենք միշտ մէջքի լայնութիւնն ու 3րդ չափին ։ Յովը որ այժմ կ'ընէ 11¹/₂ հարմէգ, կոնակորին սկիզբը կ'իջեցնենք Ք կէտին վրայ և միւս գործողութիւնները կ'շարունակենք դրեթէ պարզ կողամատի նման:

Ասոր առաջամասին տիպարը քանի մը մասնաւորութիւն ունի . այն է ընդարձակ սեղմօնով իրանազգեատ շինել ու նման կրծեզրին Դ—Զ գիծը շեղ գիրքով կ'քաշենք մինչեւ Ն կէտ (Տե՛ս 669րդ օր.) . 10րդ չափն առաւել 4ով կ'նշանակենք . ուսին աղեց կ'ներկայացնենք Բ' կէտէն . 12րդ կրկին չափին $\frac{1}{2}+4$ կ'գնենք Ն կէտէն . թիկնածագին երկայնութիւնը նուազ 4ով կ'նշանակենք Խ կէտը . ինչպէս նաեւ կողանչատն ուղիղ գծով կ'կազմենք , որ է Լ—Ճ գիծը . անթածրին բաղդատութիւնն ըսելով՝ տիպարները կ'կտրինք :

Նիւթը ձեւելու համար՝ անշուշտ մուշտակահանդերձին մէջ աստառ
մը կդրուի. ուստի որը որ կարծր է նախ զայն պէտք է ձեւել :

Կերպասին կտրելը կ'ձեռնարկենք յետսամասէն . հետեւապէս ,
ա—բ գիծը կերպասին եզրը նկատելով (Տե՛ս Հե . ամս . 707րդ օր .) ,
5 հարմէդ ներսօք կ'քաշենք Գ—դ հորիզոնական զուգահեռական
գիծը . տիպարին Գ կէտը կ'հաւասարեցնենք սոյն գծին և Մ' կէտը Յ
հարմէդ ներսօք մինչեւ Ե—Լ մասն օրինակելով՝ ընդարձակութեան
բաժինին համար 1 հարմէդ վար կը քաշենք ու կ'օրինակենք
վարի մասը : Կռնամէջն մէկ հարմէդ ընդարձակութեան բաժին

կ'ձենք ու 1 հարմէդ ալ կարաբաժին, այս վերջինն երանին կ'միացնենք Գ-Դ գծին. քանակը Խ-Յ գծին ուղղելով գիրքով կ'միացնենք Գ-Ե-Լ գիծը. 2րդ կրկին չափը որ է 40 հարմէդ՝ կը նշանակենք Զ կէտէն վար որով՝ կ'ճշտուի դ կէտը. յեսոյ Մ'-դ գիծը չափելով՝ տեսնուած երկայնութիւնը կ'փոխադրենք Յ կէտէն Յ-Գ գծին վրայ (Մինչդեռ սոյն 707րդ օրինակին վրայ՝ վրիպմամբ հակառակը փորագրած ենք). միւս կողմի կարաբաժիններն ալ ձգելով կերպասը կ'կարենք: Եթէ փեռեկ ուզուի՝ 5 հարմէդ լայնութեամբ վերելեակի բաժին կ'ձգենք, որ է հ-ը-բ. սակայն գիտնալ պէտք է թէ այս կարգի հագուստներուն փեռեկն իրրեւ զարդ չէ որ կ'շնուրի, այլ նատած տտեն ստորոտը տարածուելու համար է. ուստի երկայնութիւնը Մ' կէտէն 5-6. հարմէդ վարօք պէտք է ըլլայ որ նպատակին ծառայէ:

Հնդկանբապէս բաղլիու բարմէտ անշատ-
անակուշտին գէմ տիպարներուն եղրէն կէս կէս հարմէտ անշատ-
ծ և կ կէտերը կ'նշանակիենք, ու սեղմօնին շրջագծերը կ'կազմինք
լ-կ, կ-ի և լ-ծ ու ծ-ի գծերով, որ կո՞նքի հաւասարութենէն
4-5 հարմէտ վարօք կ'վերջանայ: Այս սեղմօնը կտրելու պէտք
չկայ, այլ շրջագծերն իրարու բերելով ճիշտ անոնց վրայէն կ'կա-

Արդ, յետուամասին ու կողամասին տիպարները ձեւագծելու համար, ընթացիկ եղանակին համիմատ ուղղահայեաց գծերը կը քաշենք, և որովհետեւ մուշտակահանդերձը առանին վրանոց հագուստ մ'է, բնական մէջքը ներկայացնող Բ' կէտն ալ կ'քաշենք Բ' ուղղահայեացը (Տե՛ս ՀԴ տախ. 700րդ օր.) ու ասոր վրայ կ'նշանակենք Զ' կէտը և կ'շարունակենք կաղմել կոնամէջը, կանածագն ու թիկնածագը։ Ապա, 11 և 12րդ կրկին չափերուն կէտերը նուազ Զ հարմէգով կ'ձտենք Հ և Ն կէտերն ու ամսոնք շեղ գծով մ'իրարու կ'միացնենք՝ առանց մնակուշտը ճշտելու, այլ սոյն Հ—Ն գիծն ուր որ Բ ուղղահայեացը կտրէ, ճիշտ այն տեղը կ'անուանենք Զ կէտ, և Զ' կէտը շեղ գծով մը կ'միացնենք Զ կէտին որ գոտեվայրի հաւասարութիւնը կ'կազմէ։ Այժմ սոյն Զ—Զ գծին վրայ մէջքի լայնութիւնը կ'նշանակենք 4րդ չափին կէտով որ այժմ կ'ընէ 8½ հարմէգ և կ'ունենանք Խ' կէտը. ասոր դիմաց ալ կ'գնենք 3րդ չափին ½ը. Յ կէտը կ'նշանակենք միշտ մէջքի լայնութիւնն ու 3րդ չափին ½ովը որ այժմ կ'ընէ 11½ հարմէգ. կոնակորին սկիզբը կ'իջեցնենք Ք կէտին վրայ և միւս գործողութիւնները կ'շարունակենք գրեթէ պարզ կողամասի նման։

Ասոր առաջամասին տիպարը քանի մը մասնաւորութիւն ունի. այն է ընդարձակ սեղմօնով իրանազգեստ շինել ու նման կրծեզրին Դ—Զ գիծը շեղ դիրքով կ'քաշենք մինչեւ Ն' կէտ (Տե՛ս 669րդ օր.). 10րդ չափին առաւել 1ով կ'նշանակենք. ուսին աղեւը կ'ներկայացնենք Բ' կէտէն. 12րդ կրկին չափին ½+4 կ'գնենք Ն' կէտէն. թիկնածագին երկայնութիւնը նուազ ¼ով կ'նշանակենք Խ' կէտը. ինչպէս նաեւ կողանչատն ուղիղ գծով կ'կազմենք, որ է Լ—Ձ գիծը. անթածրին բաղդատութիւնն ըսելով՝ տիպարները կ'կտրենք։

Նիւթը ձևելու համար՝ անշուշտ մուշտակահանդերձին մէջ աստառ մը կ'դրուի. ուստի որը որ կարծը է նախ զայն պէտք է ձեւել։ կերպասին կտրելը կ'ձեռնարկենք յետուամասէն. հետեւապէս, ա—բ գիծը կերպասին եղրը նկատելով (Տե՛ս ՀԵ. տախ. 707րդ օր.), 5 հարմէգ ներսօք կ'քաշենք Գ—Դ հորիզոնական զրւգահեռական գիծը. տիպարին Ք կէտը կ'հաւասարեցնենք սոյն գծին և Մ' կէտը 3 հարմէգ ներսօք մինչեւ Ե—Լ մասն օրինակելով՝ ընդարձակութեան բաժինին համար 1 հարմէգ վար կը քաշենք ու կ'օրինակենք վարի մասը։ կոնամէջէն մէկ հարմէգ ընդարձակութեան բաժին

կ'ձգենք ու 1 հարմէգ ալ կարաբաժին, այս վերջինն երանին գիրքովը կ'միացնենք Գ—Դ գծին. քանակը Խ—Յ գծին ուղղելով կ'քաշենք Խ—Յ—Լ գիծը. 2րդ կրկին չափը որ է 40 հարմէգ՝ կը նշանակենք Զ կէտէն վար որով՝ կ'ձշուուի դ կէտը. յետոյ Մ—Դ նշանակենք Զ կէտէն վար կտրով՝ կ'ձշուութիւնը կ'փոխադրենք Յ կէտը չափելով՝ տեսնուած երկայնութիւնը կ'փոխադրենք Յ կէտէն Յ—Գ գծին վրայ (Միհնդեռ սոյն 707րդ օրինակին վրայ՝ վրիպմամբ հակառակը փորագրած ենք). միւս կողմի կարաբաժիններն ալ ձգելով կերպասը կ'կտրենք։ Եթէ փեռեկ ուզուի՝ 5 հարմէգ լայնութեամբ վերելեակի բաժին կ'ձգենք, որ է Է—Բ—Բ. սակայն գիտնալ պէտք է թէ այս կարգի հագուստներուն փեռեկն իրրեւ զարդ չէ որ կ'շնուրի, այլ նստած տանեն ստորոտը տարածուելու համար է. ուստի երկայնութիւնը Մ' կէտէն 5—6. հարմէգ վարօք պէտք է ըլլայ որ նպատակին ծառայէ։

Առաջամասը ձեւելու համար, կերպասին եղրէն, այն է Ա—Բ գծէն (Տե՛ս 707րդ օր.) 4 հարմէգ ներսօք կ'քաշենք Գ—Դ գիծը՝ որ հագուստին կրծեզրը կ'ներկայացնէ և դուրսի մնացածը առբերանի բաժին։ 3 հարմէգ ներսօք ալ կ'քաշենք Ե—Գ գիծը, որ է կրծեզրի ընդարձակութեան բաժին. տիպարին Դ—Ն' գիծը կ'հաւասարեցնենք Ե—Գ գծին, վերի մասը կ'օրինակենք ու Է—Լ գծէն ընդարձակութեան բաժինը 1 հարմէգ վար քաշելով կ'թողունք ընդարձակութեան բաժինը 1 հարմէգ վար քաշելով կ'թողունք կողամասին Հ—Ն գիծը առաջամասին Լ—Ձ գծէն 2 հարմէգը զուգահեռաբար հեռու գնելով (ի՞նչպէս 709րդ օր.), շուրջի կարաբաժինները կ'ձգենք. 3րդ չափին ½ը Ղ կէտէն դուրս նշանակելով՝ կ'ունենանք Բ կէտը և կէտն ալ՝ այն է 1 հարմէգ Ո կէտին դիմաց ծ կէտը. քանակը Բ և ծ կէտերուն ուղղելով, կ'քաշենք Բ թ—Ձ—Ի գիծն ու Ղ—Ո գծին ձգուած կարաբաժինին գիրքը կ'շարունակենք Ճ—Ի գծին վրայ։ Յետուամասին Մ'—Ե երկայնութիւնը կ'գնենք Ո կէտէն վար ու կ'ձշտենք ի կէտը, նոյնպէս ալն' կէտէն վար զ կէտը և վարի շուրջը մեղմ կոր գծով մը կ'լրացնենք։

Ծիգհանրապէս բազկին գէմ սեղմօն մ'ալ կ'շնուրի. ուստի մնակուշտին գէմ տիպարներուն եղրէն կէս կէս հարմէգ անջատ ծ և կ կէտերը կ'նշանակենք, ու սեղմօնին շրջագծերը կ'կազմինք Լ—Կ, կ—Ի և Լ—Ձ ու Ձ—Ի գծերով, որ կոնքի հաւասարութեան 4—Յ հարմէգ վարօք կ'վերջանայ։ Այս սեղմօնը կտրելու պէտք չկայ, այլ շրջագծերն իրարու բերելով ճիշտ անոնց վրայէն կ'կա-

րենք : Նկատելու պարագայ մ'ալ կայ որ հագագին դէմ Յ հարմէդ ընդարձակութեան բաժինը շատ կ'ըլլայ . սւստի այն տեղ Դ կէտէն Ա^{1/2} հարմէդ դրօք և կէտը նշանակելով՝ մեզմ կոր գծով մը կ'միացնենք Զ կէտին դիմաց՝ որ է լ կէտ :

Այժմ տեղն է որ ըսենք թէ չափառութեան ատեն «մուշտակահանդերձ պիտի շինուի» ըսելով, չափերը մեծ առնելու չէ, որովհետեւ ինչպէս կ'տեսնուի, կերպասը ձեւուած ատեն կէս վանդակածրին վրայ ունեցանք 6 հարմէդ լայն ու կոնքին վրայ ալ 8 հարմէդ, որոնց կրկնները կ'ըլլան 12—16, որ նոյն խկ ամէնէն թանձր մուշտակը պատելով հանդերձ սովորական հագուստներուն վրայէն ալ գիւրութեամբ կրնայ հագնուիլ :

Մետաքսերէն կամ նեղ կերպասներով շինուած ատեն առաջամասին լայնքը միակտոր չառնուիր, այն պարագալին փոխանակ ընկալեալ ձեւով ծուէն մը գնելու՝ որ տքեղ երեսով մը կ'ունենայ . սեղմօնի շրջագէն կողամաս մը կ'ձեւացնեն (Տե՛ս 70Յրդ օր.), որ է լ—կ—ն—հ—խ գիծը և առաջամասին կողանշատն ալ կ'կազմենք լ—ծ—ն—հ—խ գծով :

Երբեմն զարդի համար փեռեկը գոտելայրէն 4—5 հարմէդ վարօք կ'սկսուի ու մուշտակը 23 հարմէդ շուրթերուն վրայ շրջուած կ'շինուի (Ի՞նչպէս 708րդ նկարը) :

Սովորական կերպասներով շինուած ատեն ծալքը բանալ և երկու գլուխներն իրարու բերելով մէկ ծայրէն ձեւելու է յիտսամասն ու միւս ծայրն ալ առաջամասը (Տե՛ս ՀՊ. տախ. 701, 702 և 703րդ օրինակները), եթէ ոչ Փ—Բ գծէն ծուէն մը գնել հարկ կ'ըլլայ . մինչդեռ այժմ թէ առանց ծուէնի կ'ըլլայ և թէ խնաշողական :

* * *

Մուշտակահանդերձի ձեւով կրկնակար արտազգեստներ ալ կրնայ շինուիլ (Տե՛ս 709եւ 710րդ օր.) . սա տարբերութեամբ որ եթէ կրկնաշար կոճէնով կ'ուզուի, վերեւեակի բաժինը 10 հարմէդ ձգելով քաշելու է գ—դ տրամագիծը և ընդարձակութեան բաժինին համար ալ տիպարին կրծեղը 1 հարմէդ միայն նոյն գծէն ներսօք գնելու է, ինչպէս նաեւ բաղկին դէմի սեղմօնին շրջագծերէն ներս կարաբաժինով կարելու է (Տե՛ս 710րդ օր.) որ հագուստը չափազանց լայն կ'ըլլայ :

Ասոնց կրծօձիքն ու օձիքը ամէն ընկալեալ ձեւերով ալ կըրծնայ շինուիլ . նոյնպէս գրապաններն ու թեւերը . միայն մոռնալու չէ թեւին վերի կողմէն ալ ընդարձակութեան բաժին ձգել, կամ տիպարը ձեւագծելու ժամանակ՝ Բ կէտը ճշող թիւն առաւել Չով դնել, փոխանակ 1 հարմէդի :

ՊԱՍ

Ա Յ Գ Ա Զ Գ Ե Ս Ն Ե Բ

(Տե՛ս ՀՊ. տախ. 711եւ մինչեւ 718րդ նկարներ)

Առանին հագուստներու կարգէն կայ նաև այգազգեստը, այսինքն՝ նախկին քոթանակ—գամիզոլ անուանուածը, որ հիմա կ'կոչուի Այգազգեստ=Մարինե :

Այգազգեստին յետսակողմն երկու գլխաւոր սկզբունքով կ'ըլլայ, կամ մուշտակահանդերձի տիպարով և կամ սովորական յետսամաս և կրկնակողամասներով (Ի՞նչպէս 714րդ նկարը) :

Առաջակողմն եթէ կարուած ծալեր պիտի շինուի (Ի՞նչպէս 712 եւ 718րդ նկարներ), զանոնք նախապէս պատրաստելէ ետք, թէ որ մուշտակահանդերձի տիպարով պիտի ձեւուի, այն ատեն տիպարին Դ—Ն գիծը հակածալի կէսէն 1 հարմէդ զուգահեռաբար ներսօք գնելով շարունակելու է : Թերեւս առաջակողմն երկայն շինել ուզուի (Ի՞նչպէս 711րդ օրինակը) :

Խկ եթէ իրանազգեստի տիպարով պիտի ձեւենք, այն ատեն ալ տիպարին Դ կէտը հակածալին մէջտեղը կ'զնենք, ու Զ կէտը Ա^{1/2} հարմէդ ներսօք . միայն թէ տիպարին ստացած սոյն դիրքին մէջ (Տե՛ս ՀՊ. տախ. 687րդ օր. Լ—Ֆ—Մ գիծը) կողմնակի մասը շատ լայն կ'ըլլայ . ուստի Ժ կէտէն Յ հարմէդ ներսօք կէտ մը նշանակելով, տիպարին անթմէջը կ'թողունք նախկին տեղն ու Ժ կէտը կ'մղենք դէպի Յ հարմէդին վրայ և կ'օրինակենք Լ—Ֆ—Մ գծին դէպի առաջակողմն մղուած ձեւը :

Այգազգեստը գահվրայով ու բազմածաւալով ալ կ'ըլլայ (Ի՞նչպէս 715րդ նկարը), որ շատ կ'պատշաճի տղնդերներու համար :

Այգազգեստը պօլերօի նման մինչև գոտելայր ալ կ'առնուի ու անկէց վար իր կերպասէն բազմածաւալ կամ լայն ժանեակէ վտա-

ւաս կ'ցուի (ի՞նչպէս 717րդ նկարը): Մէջքը գօտիով ալ կրնայ ամփոփուիլ (ի՞նչպէս 713րդ նկարը), կերպ կերպ օձիքներ ու թեւեր կցուիլ, բայց միշտ հանգստաւէտ ըլլայու պալմանաւ:

T U B C.

**ՄԱՐՄՆԻՆ ԱՅԼԵՒԱՅԼ ԿՈՂՄԵՐՈՒԽՆ ԿԱԶՄԱԿԱՆ ԹԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԲԱՄՊԱԿՈՎ ԲԱՐԵՁԵԼԵԼՈՒ ԿԵՐՊՐ**

(Տե՛ս ՀԶ. Տախտակ 719հ6 մինչեւ 722րդ օրինակները)


Ա. — Նեհար կազմեր կան, որոնց անրակոսկորը տիգին հետ
դէպի առաջակողմ ծուած և ուշնասորիէն մինչև երբուծ խոռոշ մը
ձեւացած կ'ըլլայ. հակառակ ուսերէն սկսելով երբուծն ու լանջքը
մինչև ստնամբարձին վերի հաւասարութիւնն ողորկ ըլլալու: Այս
թերութիւնը ծածկելու համար, Ծ—ա—Ռ և Ծ—բ—Ռ (Տե՛ս 719րդ
օր.) երկու իրարու հակառակ կոր գծերու ծայրերը մէկզմէկու
միացած ձեւովը բամպակ (վատկայ) կ'կտրենք, և իրանազգեստին,
պօլերօխն կամ սուկանին աստառին նոյն տեղը դնելով՝ շուրջը մեծ
մեծ վրայ կարով մը կ'հաստատենք: Եթէ նշանակուած թերու-
թիւնը չափազանց ըլլայ, բամպակը կրկնակի ու եռակի կ'դնենք,
իւրաքանչիւրն իրարմէ մէյմէկ հարմէդի չափ փոքր (ի՞նչպէս օ-
րինակին վրայ կ'երեւայ), պայմանաւ որ ամէնէն մեծը դէպի երեսի
կողմը գտնուէ և փոքրերը մարմնին կողմը: Եւ թէ իւրաքանչիւրը
ձեւիչով կտրելէ ետք շուրջերը փափկութեամբ փետելու է, որպէս
զի յաջորդաբար նուրբ փերջաւորութիւն մ'ունենան:

Բ .— Եթէ թիկունքները բարձր ըլլան ու կոնսմէջը ակոս մը կազմուած, Հ .—Ք ձեւով կ'դրուի (Խնայէն 719րը ու հետ ուժուած) .


Գ.—Եթէ անթատակը խրած ըլլայ, տիգին երկու կողմերն ալ անվայիլ տափարակութիւն մը կ առնեն. ուստի և—Ռ զծին ձեւովն ու կողանջատին կէս բարձրութեամբը, այն է Ռ—զ—լ, զծին ձեւովն աստիճանաբար բամպակ կ'դնենք, որ կ'անուանուի ԱՆ-ԹԱՎԱՏԱՑԱՅՑ:

Դ.—Եթէ մէկ ուսը միւսէն ցած ըլլայ, նոյն կողմի Ծ կէտէն (Ինչպէս 720րդ օր.) 2 հարմէդ ներսօք աղեղնաձեւ մինչև Հ կէտ

ՄԱԿԵՏԱԿԱՆ ԱՆԴԵԲՔ



ԱՅ ԴԱՐՁԵՍՆԵՐ



և առաջակողմին վրայ ալ մինչեւ Ռ կէտ՝ Հ—Խ—Ռ գծին գիրքովս աստիճանաբար բամպակ կ'զնինք : Միայն պէտք չէ որ անթածրին շուրթը հասնողները փետառուին, որպէս զի պատռուար մը կազմեն :

Ե. — Եթէ ստինքները մեծ ցուցնել ուզուի, Կ, Զ, Դ գծերուն գիրքովս և աստիճանաբար դէպի կեդրոնը փոքրացած ձեւերով կ'գրուին բամպակները (Խ'նչպէս 720րդ օր .) : Կայ ալ որ մէկ ստինքը միւսէն փոքր կ'ըլլայ, ու կ'ուզուի միայն փոքր կողմը հաւասարեցնել մեծին :

Զ. — Մէկ աղդը միւսէն ցած կամ երկուքը միանգամայն տափարակ եղած կ'ըլլան, որով կնոջական կազմի հրապուրը չունենար . այն ատեն Ե—Ժ—Գ և Ե—Մ—Գ գիրքովը բամպակներ կը դրուի :

Է. — Երանը տափարակ կազմերու համար փոքր բարձիկ մը կ'շնուրի, որուն ձեւը պէտք է առնել տիպարներուն երանի մասները քովէ քով շարելով (Խ'նչպէս 722րդ օր .) գօտեվայրի սահմանը մինչեւ Բ. կողամասին մէջտեղը, որ է Ք կէտ . (մէկ կողամասով եղած ատեն ալ մինչեւ Յ/Ն լայնութիւնը), մէջտեղի երկայնաւթիւնը մինչեւ Մ կէտ (Տե՛ս 722րդ օր . մութ սուռեւ. Ա ձեւը) : Յետոյ ոոյն ձեռք կրկնատակ ատառա պարկ մը կ'ձեւենք, վարի շուրթը կ'կարենք, բամպակներն աստիճանաբար կտրելով իրարու վրայ կ'շարենք և վերի շուրթէն կ'շրջենք ներս ու այն ալ երեսի կողմէն կ'կարենք : Երկու ծայրերը երիգներ կ'կցինք (Տե՛ս 721րդ նկարին Ք եւ Ք' ծայրեր) որ մէջքը կապուի :

Դ Ա Ս Թ .

Շ Ո Ւ Ճ Ն Ե Ր Ո Ւ Տ Ե Ս Ա Կ Ն Ե Ր Ը

(Տե՛ս ՀԶ. տախոսկ, 723են մինչեւ 727րդ նկարները)

Ամէն տեսակ վրանոց հագուստներու մէջ ալ շոճուած=զարիքօնէ բամպակ կրնայ ըլլաւ, իրեւ զարդ կամ տաք պահելու համար : Արդ, շոճածեւ կարելը վեց գլխաւոր կերպով կ'ըլլայ :

Ա.Բ.Ա.ԶԻՆ . — Մեքենայով կարել, երկու շեղ գծեր իրար կտրելով (Խ'նչպէս 723րդ նկարը) :

ԵՐԿՐՈՐԴ. — Նախորդին ձեւով, բայց իւրաքանչիւրը մէլմէկ նեղ կարգեռվ կազմուած (Խ'նչպէս 724րդ նկարը) :

ԵՐՐՈՐԴ. — Մէկ կարգն ուղղաձիգ գիրքով ու միւսը շեղ՝ որ կ'անուանուի շեղանկիւն (Խ'նչպէս 725րդ նկարը) :

ՉՈՐՐՈՐԴ. — Հորիզոնական և ուղղահայեաց գծերով իրար կտրած ձեւով՝ որ կ'անուանուի քառակուռակ (Խ'նչպէս 727րդ նկարը) :

ՀԻՆԳԵՐՐՈՐԴ. — Միայն շեղ գիրքով կարուած :

ՎԵՅՑԵՐՐՈՐԴ. — Արդուկալ կտրուած՝ (Խ'նչպէս 726րդ նկարը), որ է ամէնէն շատ աշխատանքով ու ամէնէն յարգին։ Այս աշխատութիւնը մետաքսեղէններու լաւ կ'պատշաճի. զայն շինելու համար, շրջնի կողմէն նախ կարգ արդուկալ կ'կոտրենք. յետոյ շեղանկիւն կամ քառակուռեակ գիրքին համեմատ նախորդը խաչածեւելու համար՝ արդուկին ծայրը մէն մի գծին միջոցը յաջորդաբար կ'ձմէնք (նախապէս հոգ տարած ըլլալով որ ծայրը շատ տաք ըլլայ)։ Յետոյ կ'ձածկենք վատկային ծիւ կողմը, այսինքն խեժոտ կողմը տակը գտնուելու պայմանաւ, շուրջը մէծ մէծ կ'գերակարենք. և տպա շատ բարակ մետաքս թելով մէն մի անշկիւնը մէլմէկ կէտ կար կ'ընենք, առանց թելլ կտրելու միշտ միւս անկիւնն անցնելով, այսպէս որ ամբողջութիւնը կատարեալ շոփածեանայ՝ սիրուն բշտիկներ կազմուելով (Աւ դիտէ՛ 726րդ նկարը)։

Մէն մի տողին իրարմէ ունեցած լայնութիւնն ալ նկատողութեան առնելու է, որ Ձէն մինչեւ 4 հարմէգ կրնայ ըլլալ։

Սա ալ գիտնալ պէտք է թէ շահճ ըլլալիք նիւթերը երեսի կերպառէն 2 հարմէգի չափ բոլոր շուրջը մէծ կտրելու է. որովհետեւ շոփածեր կ'կծկին ու վերջը փոքր կ'ըլլայ։

Առեղնաթոռոապներուն կրծեղը ու ստորառը գարձարձիկ աւլքներ ալ կ'շնուի (Խ'նչպէս 723րդ նկարը)։ Շատ անգամ սուտնին թռուապներուն նոյն իսկ երեսի կերպառը կ'չոճուի։



ԵՒԱՋԻ ԵԵՐԿԱՅ Բ. հատորին սպազրութեան պահուե՛ 1907 Յունիս 20ին պատահեցաւ մահը անոր հեղինակին։ Այս պատճառով յարմար նկատուեցաւ գործիս կցել հեղինակին կենսագրութիւնը որ իր մահուան առիթով հրատարակուած էր Բէղանդէնի մէջ։

Յանկարծական և վաղահաս մահուամբ մը կը բաժնուի մէկը այն ժիր մշտիներէն որոնք իրենց կեանքը գործնական նպատակի նուեիրած և ուրիշներու օգտակար ըլլալու ազնիւ գոհունակութեան հեռապատկերով քաջալերուած, կ'աշխատին, կը տքնին, ներկայէն աւելի տապագայ սերունդէն յուսալով իրենց չարաչար աշխատութեան արդիւնաւորութիւլը։ Մելքոն Գալէնտէր՝ մեր գժբախտ բարեկամը, մէկն էր անոնցմէ որ հակառակ իր համեստ միջոցներուն, և միջավայրին անքաջալեր պայմաններուն՝ միմիայն իր անհատական ուժովը և իր ջանքովը նուեիրուած էր գործի մը, որուն կարեւորութիւնը ոչ ոք կրնայ ուրանալ։ Եւ գըժրախտութիւնը հոն է որ Գալէնտէրի կեանքին թելլ կը խզուի ճշշդ այն պահուն երբ երեսուն տարուան փորձառութիւն մը — աւելորդ է ըսել թէ շատ գժնդակ և տառապագին — իրեն սորվեցուցած էր ուղղակի և անմիջական կերպով օգտակար ըլլալու միջոցները և այլեւս բերած յանգեցուցած էր եղբակացութեան մը՝ որ միակ նպատակն ըլլալ կը թուէր իր կեանքին։ Գալէնտէր իր գործը տարուած տեսնել կը փափաքէր ամբողջութեամբ, և իր բոլոր ուժերը կերպնացուցած էր այդ նպատակին համելու համար։ Եւ առաջադրեալ վեց հատուներէն հազիւ երեքը լրացուցած, ահա այսպէս վաղահաս կերպով կը մեռնի, զգալի պակաս մը թողլով իր ետին։

Իր գործունէութեամբ լի, եռանգուն, զուարթ և աշխայժ կեանքը որ տակաւին երէկ իր բոլոր ոգեւորութեամբը կ'աշխատէր տապագայի փառքին համար, կը խորտակուի այսպէս, և չկայ մէկը որ իր գործը լրացնէ։ Եւ արդէն չես գիտեր ինչ տիխուր նախազդացում մը կրծող որդ մը եղած էր իր ներսը,

վասն զի ծայրահեղ աճապարանք մը ցուց կուտար ժամ առաջ աւարտելու համար իր արուեստագիտական գործերը, զորս ըրացնելու համար «կը վախճամ որ կեանքս ամբողջ չպիտի բաւէ» կ'ըսէր երբեմ:

Իր նւային Բ. տպագրութեան Գ. էջին մէջ ալ նոյն երկիւղը կը յայտնէ, բացատրելով այն պատճառները որոնք աւելի ընդուրձակ ծրագիրի մը գործադրութենէն հրաժարեցնելով, սահպած էին զինքն աւելի ամփոփ ուղղութեան մը հետեւելու: Սակայն խեղճ ֆալէնտէր չէր գիտեր թէ նոյն խոկ այդ ամփոփ ծրագիրն ալ գործադրելու համար ժամանակը թանկ էր և իր կեանքը շատ կարճ:

Երբ այս տողերը կը գրեմ, աչքիս առջեւ կը պատկերանակ իր դէմքը և ոգեւորուած խօսակցութիւնը որով հաղիւ քանի մը ժամեր առաջ զինքն զգեանել կոչուած ցաւը զգալէն, կը խօսէր ինծի իր ծրագիրներուն վրայ, որոնց մէջ քայլ մը եւս առած պիտի ըլլար քանի մը օրէն նւայի Բ. հատորին հրաժարակութեամբ: Ո՞վ կրնար մտարերել թէ քանի մը օրէն իր Բ. հատորը ողջունելու տեղ, իր մտրմին շուրջը պիտի բոլորուէինք և փոխանակ իր գործին արժէքը ծանօթացնելու, իր կեանքը՝ յետ մահու ներկայացնելու համար գրիչ ձեռք պիտի առնէինք: Իր մտերմութեան վայրկեաններուն մէջ տմէն անգամ որ իր կեանքին դրուագներուն վրայ խօսք բացուէր, կատակով մը «կը փափիմ գիտնալ թէ, կ'ըսէր, ի՞նչ պիտի գրես վրաս»: Ամէն անգամ հեռու վանել կուզէի այդ գաղափարն իր և իմ միտքէս, մինչ երկուք ալ չէինք գիտեր թէ անիկա այնքան մեր մօտն էր: Հետեւարար իր կտակը գործադրելու բարոյական հարկը կը ծանրանայ իմ վրաս: Սակայն զիտեմ թէ շատեր, մարդը հեռուէն դատողներ և անոր գործին կարեւորութիւնը չըմբռնողներ, պիտի տրտնջան՝ «Կ'արժէ՞» հարցումը նհատնով: Անոնց համար մէկ պատասխան ունիմ: «Քիննեցէք զգիրս և տպս հաւատաշջիք»: Կիսկատար, կիսահատ, ասկէ անկէ հաւաքուած կամ լսուած տեղեկութիւններ անբաւական են գալէնտէրի արժէքը երեւան հանելու: Պէտք էր զայն մօտէն ձանչնալ, անոր կարողութիւններուն գիտակցութիւնը ունենալ և յետոյ գատել անձնալ, գործն ալ: Անիկա ինքնածին և գերազանցուապէս ընդունակ միտք մըն էր, ճարտար և գործօն ձեռք մը, և չարաչար աշխատող

ու կամքի տէր անհատականութիւն մը, որ իր այս բոլոր կարողութիւնները գործածած է իր ամեն աւելի այլոց բարւոյն համար: Գալէնտէր աւելի ապագային մտատանջութեամբը, օր մը գնահատուելու և փառաւորուելու իսկալովը, հրաժարած է և լքած բոլոր այն գործերը, որոնք իր նիւթական անմիջական վիճակին բարւուքմանը կրնային նպաստել: Իրեն համար այլ և այլ ճարտարառուեստական հաստատութեանց մէջ տեղիր պակաս չէին, սակայն ինքն առօրեայ նուազագոյնովը կը բաւականանար՝ անուն մը ձգելու և օգտակար ըլլալու յոյսով, և բոլոր ոգւովը և ուժովը կը ջանար տարածուած տեսնել իր գրութիւնը, որուն հեղինակը եղած ըլլալու հպարտութեամբը լեցուած էր:

Այդ հպարտութիւնն արդար էր, վասն զի ու է մարդու մը տրուած չէ Սնատոլուի խորերուն մէջ ծնունդ առնել և հեղինակել նորածեւութեան գործ մը, որ համաշխարհային համբաւ ունեցող հեղինակութիւններէ գնահատուած ըլլայ: Ասիկա տաղանդ մը կ'ենթագրէ: Գալէնտէր իրապէս ունէր այդ տաղանդը, վասն զի եթէ մօտէն ուսումնատիրուի իր կեանքը և իր գործը, մանաւանդ իր գրութիւնը, պիտի տեսնուի թէ իր մէջը կար կոչումը և կարողութիւնը նոյն ձիւղին, որուն տարածմանը նուիրած էր ինքզինք:

Ա. — ԻՐ ԿԵԱՆՔԸ

Մելքոն էֆ. Գալէնտէր ծնած է Ակնայ մէջ 1857ին, որով հազիւ 52 աարեկան կը մեռնի: Հայրը, Մատթէսոս Գալէնտէրեան, պարզ գերձակ արհեստաւոր մըն էր, որ կանուխէն Ակնէն Ամասիա գաղթած էր ընտանիօք: Փոքրիկն Մելքոն Ակնայ մէջ նախնական կրթութիւն մը առնելէն յետոյ միջոց մը Ամասիոյ մէջ շարունակած է իր ուսումը: Այդ միջոցին իրեն գպրոցակից եղած է Բիւզանդ էֆ. Քէչեան, որուն հայրն ալ կ. Պոլսէն կեսարիա և Ամասիա անցած էր ընտանիօք, և յետոյ Պոլիս գարձած:

Հազիւ 12—13 տարեկան էր, երբ հայրը չյաջողելով Ամասիոյ մէջ, ստիպուեցաւ կ. Պոլիս գալ, միասին բերելով նաև Մելքոնը: 1867 Ապրիլ ամսուան միջոցներուն կ. Պոլիս կը հասնի Գալէնտէր,

տակաւին դեռահաս պատանի մը որ գաղափար իսկ չունէր կեսնքի վրայ : Շատ անգամ ծիծալելով կը յիշէր այդ օրը, և իր ունեցած շուարումը, երբ ինքզինքը գտած է առաջին անգամ կ . Պոլսոյ պէս խոշոր քաղաքի մը եռուղեռին մէջ, որուն կուգար լնք ալ խառնուիլ, հացի պայքարը մղելու համար : Եւ Գալէնտէր 12 տարեկան պզտիկ տղայ մըն էր կ . Պոլս եկած ատեն, պարզուեկ մէկ զաւակը Անատոլուի, շալվարով և եեմենիով պարոն մը, որ անգիտակ իր ապագային, կ . Պոլս կը մանէր զարմանքի ու հիացման տպաւորութիւններով :

Ամէն անոնք որ զինքն յետոյ տեսած և տեսակցած են հետը, չպիտի կարենան երեւակայել Գալէնտէրը շալվարով և եեմենիով, զի, մեր ճանչցած Գալէնտէրը բոլորովին գաւառացիական գրոշմէ զուրկ, ճկուն և կէս եւրոպականացեալ տիպար մըն էր : Որուն բնաւ չէր պատշաճեր այդ գեղջուկ տարազը : Իր հօրեղայրը որ կ'երեկի թէ բաւական բարեկեցիկ վիճակ մը ունէր, իր կ . Պոլս գալէն քանի մը օր յետոյ զգեստ մը առնելով կը հագուեցնէ Պ.Մ.Ելքոնին որ բաւական տհաճութեամբ կը թողու իր գաւառական տարազը : Գալէնտէր կը գրուի գերձակի մը քով կար կարելու համար : Հայրն ալ նոյնը կ'ընէր արդէն : Խանի մը անկիւնը կը պառկէին կ'ելլէին և ցերեկիները օրականի մը համար կ'աշխատէին : 1867էն մինչեւ 1871 կը տեւէ այս աշակերտութեան շրջանը : 1871ին գերձակութեան կ'սկսի իր հաշոյն խանութ բանալով, զոր մինչեւ 1887 շարունակած է :

Այն ատեն կ . Պոլսոյ մէջ ձեւելու համար գործադրուած եղանակը՝ համեմատական (եեկի անուամբ ծանօթ) գրութիւնն էր : Գալէնտէր գործնականին մէջ զգալով անոր անբաւականութիւնը, հետամուտ կ'ըլլայ աւելի կատարեալին : Ահա հոս կ'սկսի Գալէնտէրի բարձրացումը : Անիկա չէ գոհացած անով որ կը մնար հիներէն, աւելի բան մը ընել ուղած է և այդ բան մը աւելին զինք առաջնորդած է արուեստին ամէնէն խորունկ կողմերը և մղած է դէպի զարդացումը ու կատարելութիւնը : Երկարատեւ փորձերէ և երկար բազգատութիւններէ յետոյ, մասնաւոր գրութիւն մը հեղինակելու յանդուգն գաղափարը կը յղանայ, մասնաւորապէս թելադրուելով սա միակ պատճառէն, որ եւրոպական գրութիւններէն անոնք որ գործադրելի էին, եեկի գրութեան

պէս կատարեալ չէին, իոկ անոնք որ տեսականին մէջ կատարեալ էին, գործնական կիրառութեան մէջ կը կաղային : Գալէնտէրեան այդ անպատեհութիւնը բառնալու չանքեր կ'ընէ 1876ին իր գրութեան հիմը դնելով :

1880ին Գալէնտէր գասախօսութեան կ'սկսի գործնականապէս իր գրութիւնը լնդհանրացնելու համար : Արդէն իր ժամանակը կոնխող միտք մը՝ կարապես Փանոսեան 1871էն սկսեալ իր բացած Ագապեան վարժարանին մէջ, զգալով պէտքն և կարեւորութիւնը ձեւ ու կարին՝ ներմուծած էր նոյն ճիւղը, երբ տակաւին Գալէնտէր գերձակութեան պարզ աշակերտ էր : Այնպէս որ այդ պէտքին վրայ անդրագառնալ սկսուած էր ասու անդ քանի մը շրջանակներու մէջ : Սակայն արդ ճիւղն աւանդելու կարող չայ մը չգտնուելով, Փանոսեան հարկադրուած էր աւստրիացի և իտալացի վարպետներու յանձնել այս գասը : Գալէնտէր երբ իր գրութիւնը կը յղանայ, Ագապեան վարժարանը փակուած էր . սակայն Փանոսեան, որուն գլխաւոր մտասեւեռումներէն մէկը եղած է աղջկանց գաստիարակութեան հարցը, առաջին անգամ որ կը տեղեկանայ Գալէնտէրի ձեռնարկին և զայն գասախօսուելու պատրաստակամութեան, կը խոստանայ կարելին ի գործ գնել : Փանոսեան՝ Գալէնտէրի աշխատանոցը այցելութիւն մը տալէ և մօտէն գաղափար մը կազմելէն երկու օր յետոյ, զուգագիպաբար Մեզպուրեան Մկրտիչ էֆ . կը գիմէ Փանոսեանի և յայտնելէ յետոյ թէ իր երկան գպրոցը միայն աղջկանց վարժարանի վերածած է և Սկիւտար փախագրած (1879) քանի մը ամիսէ ի վեր, կը խնդրէ որ այդ մասին իրեւեւ նախաձեռնարկ փորձառու, խորհուրդ մը տայթէ որու յանձնէ կար ու ձեւի ուսուցումը : Փանոսեան՝ Գալէնտէր կը յանձնարարէ և Մեզպուրեան շունչը ուղղակի անոր գործատեղին կ'առնէ : Սոկէ անգին թողունք որ Գալէնտէր ինքը պատմէ թէ ի՞նչպէս գասախօս եղու . —

«Օրը շաբաթ ըլլալով՝ աւարտելու վրայ եղող որտենկոդի մը օձիքը պատրաստելու վրայ էինք :

«—Գալէնտէր էֆ.ն գու՞ք էք, ըսելով, քրտնաթոր անձանօթ մը կը մտնէ ներս :

«Պատահական յաճախորդի մը վայել յարգանօք՝ «Այս» կը պատախանենք, ու աթոռ կը հրամցնենք : Ինքինքը կը ներկա-

յացնէ և կը հրաւիրէ որ վաղայտջորդ երկուշաբթի օրն աղցելենք իմաստիկի Մեզպուրեան աղջկանց վարժարանը։ Փամագրութեանը տրուած է և մենք 1879 Փետրուար ամսուն առաջին կէսի երկուշաբթի կէսօրին կը մտնենք վարժարանին ընդունելութեան սրահը։ Տիկին Մեզպուրեանի ներկայացուելէ ու մեր միատեղ առած քանի մը ձեւագծական ձեռակերտ օրինակներն աչքէ անցուելէ և մեր գասաւանդելու մեթոսին վրայ գաղափար մը ստացուելէ վերջ, փափաք կը յացնուի որ նոյն խկ իրիկուան առաջին ժամուն դասարան մտնենք։

«Զանգակը գարնուած է, Յնի չափ հասուկ աղջիկներ ակնդէտ մեր գասարան մտնելուն կ'սպասեն։ Կը մտնենք։ Ասոնք թող գիտելու վրայ ըլլան մեր այտերուն վրայ նոր բուսած մօրուքը և ձեռքերնիւ բւնած Ֆեօր գլխարկը։ Մեք ալ շուարած կը մնանք առաջին բառն արտասանելու՝ սրտատրոփ։ Քանի որ ոչ գասադիրք ունինք, «չ ծրագիր և ո՛չ ալ գիտենք թէ ի՞նչ պիտի ըսէլնք point du coude, սուրչին, ըստութիւնին։ Բայց վերջապէս բաներ մը ըսինք, պարտականութիւններ տուինք ու քրտինքներու մէջ ուղղուած դասարանէ գուրս ելանք։ Քանի մը ամիսէն տարեկան քննութիւնը վրայ կը հասնի։ Մեզպուրեան էֆ. մեր անդրանիկ աշակերտուհիներուն առջինել քննութեան համար իրրեւ մտնագէտ կը հրաւիրէ անուանի վաճառական—գերձակ Եկմէնիճեան և նախկին գերձակ Պասմաճեանը։ Աշակերտուհիք մեզմէ լսածնին և սորվածնին ի հանդէս կը բերեն նոյն քննիչներուն առջեւ։» Այսպէս ահա Գալէնտէր առաջին մագամ ուսուցչական տապարէզ կը նետուի, և գործնականապէս իր գրութեան տարածումին կ'աշխատի։ Սակայն այդ միջոցն ալ նեղ կը գտնէ և աւելի լայն շըրջանակի մը մէջ գործունէութեան տապարէզ մը ունենալու համար լրագրութեան միջոցաւ իր գրութեան տարածումին նախաձեռնարկ կ'ըլլայ, 1881ին «Վայել» անուն նորածեւութեան պատկերագրդ հանդէսի մը հրատարակութեան ձեռնարկելով։ Հանդէսը ամսաթերթ պիտի ըլլար, սակայն առաջին թիւը հրատարակելու համար միայն 20 սոկի ծախք ըլլալով, սախպուեցաւ կանգ առնել։ Քանի մը ամիս յետոյ Գարեգին էֆ. Պաղտատլեանի և Վահրամ էֆ. Մարգարեանի ընկերակցութեամբ կը վերսկսի նոյն հան-

դէսին հրատարակութեանը։ Հազիւ Ծրդ թիւին կարելի կ'ըլլայ տոկալ, անոր համար որ նորածեւութեան պատկերներուն պէտք եղած ինամքը կը պակսէր ու քաջալերաւթենէ կ'իյնար։ Գալէնտէրի այս ձախող փորձը զինքը կը թելագրէ անձամբ հետամուտ ըլլալու փորագրութեան արուեստին, «որ գրեթէ կատարելութեան հասուցած էր, ինչպէս դիւրին է մակարերել իր վերջին գործերուն պատկերներէն, որոնք անսպառ համբերատարութեամբ մը և աննկուն կամքով մը, —զորս գաղափարով մը վառուած անձերը միայն կը նան ունենալ, ինքն անձամբ կը փորագրէր։ 1886ին այս ձեւով կ'սկսի հրատարակելու կանանց ձեւ ու կարի դասախոսութեան համար պատրաստուած «Նայ»ի Ա. հատուրը, որուն Բ. հատորը կը հրատարակէ 1881ին։ Խոկ այդ երկու հատորներուն ամենումը կը հրատարակուի 1892ին։ Իր այս աշխատութիւնները իր առօրեայ և սովորական գերձակութեան գործերուն վասակ սկսած էին, վասնզի ինքն աւելի բարձր, աւելի ազնիւ նպատակի մը խելայեղութեամբ ներկան կ'ուրանար՝ ապագան ստանալու համար։ «Նայ»ի հրատարակութեան հետ միաժամանակ գրէթէ Բերայի մէջ արհեստանոց մը բանալու գաղափարը—զոր նուրեան էֆ. ունեցած էր—զինքն աւելի եւս կը խանգավառէ։ 1886ին սկիզբն երբ տակաւին նոյն խկ Արհեստանոցին չէնքը աւարտած չէր, Մելքոն Գալէնտէր տնօրէնութեան կը կոչուի, և իր տուած ծրագրին համաձայն և իր հսկողութեան տակ կը կազմակերպուի և կը կահաւորուի Արհեստանոցը։ 1886 Մայիս Յին հանդիսաւորապէս բացումը կը կատարուի Արհեստանոցին։ Այդ հանդէսին քանի մը շաբաթ տուած Տիկին Մատակեան Պոլիս հասած էր և Նուրեան էֆ. ի կարգադր ութեամբ Արհեստանոցին վերին տեսչութիւնը անոր յանձնուած էր, երկրորդական վիճակին ենթարկելով այն որ ծրագիրը յղացած էր և անշուշտ գործագրութեան համար պատասխանատու պէտք էր բռնուէր։ Ասոր հետեւանքը այն եղաւ որ բացումէն քսան օր վերջը, Գալէնտէր հրաժարեցաւ, հակառակ անոր որ խանութն ալ փակած էր Արհեստանոցին վատահելով։ Սակայն Գալէնտէր չվհատեցաւ։ Մէկ կողմէ հրատարակչական գործեր, միւս կողմէ ձեռարուեստական աշխատութիւններ, գասախօսութիւններ ևն. զինքը չկառեցուցին և ինքն անսայթաք շարունակեց իր ընթացքը

միշտ գէպ ի առաջ գիմելով։ Յետոյ յաջորդ վարիչները իր կարեւորութիւնը և պէտքը զգալով, քանիցո կոչում ըրբն իրեն և ինքը դասախոսեց Արէհոտանոցի յարկին տակ։ Նոյն իսկ 1901ին փորձեց վերստին ստանձնել անոր վարչութիւնը որ իր կեանքին վերջին օրերուն դարձեալ իրեն յանձնել կը մտածուէր։

Քիչ յետոյ 1889ի Բարիզի արուեստահանդէսին առիթով Եւրոպա կ'ուղեւորի, իր գործը եւրոպացի վարպետներու գնահատութեան ենթարկելու համար։

«Եւան հեսս առնելով Եւրոպա գացի, այցելեցի անձամբ նորաձեւութեան և վայելչազարդութեան մայրաքաղաքը՝ Բարիզ, և ի մէջ այլոց իր ամէնէն աւելի անուանի դերձակ-ձեւագէտ Պ. Ֆըրանսուա Ռուսէլին և իր համարը Մէրսիէի, որոնց գնահատմանը ներկայացուցի մեր հեղինակած Եւան, զոր ընդունելէ և հետաքրքրօրէն մանրազնելէ ետքը, սեղմեց ձեռքս տաքարիւն ու վարվուն ֆրանսացւոյ մը յատուկ ոս քաջալերիչ շեշտով։ «Ուրախ և գոհ եմ, ըստւ, որ գուք իբրեւ զաւակ ձեր գործերուն, Արեւելքի մէջ այդքան զարգացուցած էք ձեր արուեստը, և յաջողած՝ նոյն իսկ գրութեան մը հեղինակը ըլլալով հանդերձ՝ անոր մատենագիրը ու հրատարակիչն ալ ըլլալ։ Թէեւ ձեր գրքին լեզուն (հայերէնը) չհասկնալուս համար, չեմ կարող որոշ դատաստան ընել ձեր մատենագրական ոճին մասին, տակայն ձեր նորագիւտ ու ինքնահար Զափական դրուքեան համաձայն՝ ճարտարօրէն ճշգրտագծած ձեր օրինակներուն համար կը չնորհաւորեմ զձեզ»։ Այս գնահատութիւնը անարժէք էք Գալէնտէրի համար, մանաւանդ նկատելով թէ այդ անձերը «հանրածանօթ են ո՛չ միայն իրենց արուեստագիտական հմտութեամբը և հաստատած ձեւագիտութեան գպրցովը՝ այլ նաեւ 27 տարիէ ի վեր իրենց հրատարակած Le Tailleur Moderne, publié par Boussel et Mercier, professeurs de coupe à Paris անուն պատկերազարդ հանդէսովը»։ Նոյն տարուան թիւերուն մէջ յատուկ կերպով լիշուած է Գալէնտէրեան գրութիւնը իր անձին և պատկանած տոհմին պատուաբեր եղանակով մը։ Ասոնք ամէնը ցոյց կուտան թէ Գալէնտէրեան իրաւամբ հեղինակը էք գրութեան մը՝ որ կրնար եւրոպական միջավայրի մը մէջ աւելի բարձր գնահատութեան արժանանալ։ Այս խախտութիչ և քաջալերական գնահատութիւննե-

րէն աւելի ոգեւորուած՝ կ. Պոլիս դառնալու վրայ էր, երբ կ. Պոլիսէն Վարդան Արաւանեան (հիմա Տ. Վարդան քհ. Բինկեանցի) կը յանձնարարէ Գալէնտէրի՝ սպասել իր գալստեամբը։ Եւ իրաւամբ Վարդան Արաւանեան անմիջապէս Բարիզ կ'ուղեւորի և հոն Գալէնտէրի աջակցութեամբը Արուեստահանդէսին մէջ կ'ուսումնասիրէ հիւսուածենի մեքենաները, զորս կ. Պոլսոյ մէջ բանեցնելու գաղափարը յղացած էր Վարդան Արաւանեան։ Գալէնտէր արտակարգօրէն սորվելու, ուսումնասիրէ լու ընդունակ և իւրացնելու հետամուտ միտք մը, Արուեստահանդէսին մէջ մեքենաներուն կազմութեան վրայ որոշ գաղափար մը կազմելէ յետոյ, ըմբռնելով թէ լաւագոյն գործարանները թրուայի գործարաններն են, արուեստին գաղտնիքներուն աւելի եւս հետամուտ ըլլալու համար Բարիզէն թրուա կ'ուղեւորի և հոն հիւսուածեներու հոչակաւոր գործարանին մէջ քիչ ժամանակէն կ'ստանայ այնքան վարժութիւն և այնքան ձեռնհասութիւն որ գործարանին տեսչութիւնը իրեն կու տայ վկայական մը որով կը հաստատէ Գալէնտէրի կարողութիւնը իրը կարող վարպետ հիւսուածեղիններու գժուարակըն-ձիո մեքենաները լարելու և կազմալուծելու (monter և démonter)։

Վարդան Արաւանեան ֆանէլայի շինութեան յատուկ գործիքները Գալէնտէրի աջակցութեամբ ծախու առնելէ յետոյ միասին կ. Պոլիս կը գառնան և Քիւրքքի խանի մէջ Գալէնտէր կը հաստատէ այդ գործիքները և կատարեալ ձեռնհասութեամբ զանոնք կը վարէ, նաեւ շարտնակելով իր գրաւոր աշխատութիւնները, հրատարակելով՝ նեալի Բ. հատորը (1891) և Տարրական ձեւագիտութիւնը (1892)։ Սակայն գրամագլուխի նուազութեան պատճառաւ 1892ին իսկ Արաւանեան կ'ստիպուի գործը գագրեցնել։ Գործիքները կը զնէ Բաղրապ պէտ անուն գործարանատէր մը, որ զանոնք տեղափոխելու, լարելու և վարելու համար գարձեալ Գալէնտէրի աջակցութեան կը կարօտի, զի գործիքները շատ կնճուտ էին և ամէն մարդու տրուած չէր անոնց լեզուէն հասկնալ։ Յետոյ այդ աշխատանոցին յաջողութիւնը խայծ մը կ'ըլլայ որ երկու երգնկացի Հայեր ալ նոյն նպատակով գործարան բանալու հետամուտ ըլլան։ Այդ նպատակով կը կազմեն ընկերակցութիւն մը և կը գտնեն Գալէնտէրը, որ անհրաժեշտ գործիքները գնելու և զանոնք հոս տեղափոխելով հաստատելու համար, գլխաւոր բաժնետէրէն Միհ-

ըսն էֆ. Աստուրեանի հետ կրկին Բարիզ կ'ուղեւորի 1893ին՝ իրենց վերադարձին Շիշլի մէջ կը բանան գուլպալի և ֆանէլալի գործարան մը, որուն առաջին մեքենագէտը և հոկողը կ'ըլլայ Գալէնտէր։ Սակայն գործարանին մէջ շահ ունեցողներէն սմանք կարծելով թէ առանց հմտութեան ալ կարելի է այդ գժուարակնիւ մեքենաները վարել, գժուարութիւններ կը հանեն Գալէնտէրի դէմ և ասով բովանդակ գործին խաճարման պատճառ կ'ըլլան։ Գալէնտէր կը թողու գործը և իրեն յաջորդները՝ անկարող մեքենաները վարելու, կ'ստիպուին գործարանին դուռները փակել քիչ յետոյ։ Այդ միջոցին Բաղրա պէջ՝ Արսլանեանէ առած իր գործիքները կը վաճառէ Գարամուսալի Կայսերական գործարանին։ Գալէնտէր վերատին զանոնք վարելու կը կոչուի և այդ առթիւ 1894ին ինն ամիս իրը առաջին մեքենագէտ Գարամուսալի մէջ կը բնակի, և շրջակայ քանի մը վայրերը կ'այցելէ։ Վերադարձին ինքը բերել կու տայ երկու շատ կատարելագործեալ մեքենաներ, —որոնցմէ իւրաքանչիւրը 6—7 հազար կտոր ամենանուրը գործիքներով կը կազմուի, և զորս արուեստին ամէն պահանջումներով գասակարգելու և կազմակերպելու գժուարին գործը կատարելագէտ իւրացուցած էր, —և զանոնք կը հաստատէ Շապճը խանին մէջ ուր ինքն իր հաշւոյն ֆանէլայի գործով զբաղել կ'սկսի։ 1899ին առանց մէկ կողմ ձգելու ֆանէլայի գործը, կը փոխադրուի թարագճըլլարի կողմերը և հոն կը հաստատուի, վերակելով մէկ կողմէն իր ձեւագիտութեան դասախոսութիւններուն և միւս կողմանէ գրական աշխատութեանց։ Այս շրջանը ինքնամփոփման շրջանը կ'ըլլայ իր կեանքին, վասն զի հիւսուածեղէնի մեքենաներու ուսումնասիրութիւնը և զանոնք վարելու համար իր տատանումները պահ մը կասեցուցած էին իր գլխաւոր մտադրութեան պէտք եղածին պէս աշխատելու եռանդը։ Յակայն բնաւինքը գագրած չէր անոր աշխատելէ, միայն թէ իր ուժերը կը ցրուէին այս ու այն կողմ, մինչ 1899ին կ'ամփոփուէր իր գործին մէջ և բոլոր արհեստագիտական ուժերը միահամուռ կը գործածէր իր գործին գարբացմանը և տարածմանը։ Այդ աշխատութեանց առաջին արդիւնքը կ'ըլլայ 1900ին Ադամի հրատարակութիւնը, որուն մեծ մասը հրատարակուած էր, իրը ամէն կողմանէ խընդրանքները ըլլալով կանանց հագուստներու համար պատրաստած

իր երեք հրատարակութիւններուն, որոնք սպառած էին, կը հարկադրուի Ադամը կիսատ թողուլ և «Առձեռն ձեւ ու կար» անուն իր եռահատոր աշխատասիրութիւնն Ա. Հատորը հրատարակել 1904ին։ Քանի մը շաբաթէն պիտի աւարտէր նաև Բ. հատորը, որմէ յետոյ պիտի հրատարակէր Տարլուկան նախակրթարաններու յատուկ համառօտ դասագիրք մը, որուն վիմագրութիւնները ընելու զբաղած էր։

Իր ծրագրին մէջն էր Ադամը աւարտելէ անմիջապէս վերջ, օմաններէն ու ֆրանսերէն երկու ձեւագիտութեան դասագիրքեր ևս պատրաստել, սակայն գժբախտաբար չկրցաւ լրացնել իր այդ ծրագիրը։

Գալէնտէրի գործին կարեւորութիւնը՝ իրը աղջկանց գաստիարակութեան ամէնէն էտկան պէտքերէն մէկը, շեշտել աւելորդ յոգնութիւն պիտի ըլլար, վասն զի լրագրաց սիւնակներուն մէջ, քանից անգամ շեշտուած, և ամէն կողմէ միահամուռ ընդունուած է։

Գալէնտէրի իր ամբողջ կեանքը և գործունէութիւնը նուիրելով այս գործին, չքաւոր աղջիկներու և նոյն իսկ կարգ մը այրերու նիւթական բարեկեցիկութիւն մը ապահոված է, և ասով նպաստած է հանրային բարուականին՝ փրկելով շատեր այն սայթաքումներէն որոնք աղջատութեան ուղղակի և անմիջական հետեւանքը կրնան ըլլալ։ Գալէնտէրի գործը սակայն միայն ուսուցչութիւն չէր։ Անիկա ուրիշներէ ստացածը առանց ու է փոփոխութեան նոյնութեամբ չփոխանցեց ուրիշներու, պարզ միջնորդի մը գերը կատարելով։ Ատանկ գործ մը բնաւ իրեն իրաւունք չպիտի տար պարզ ձեւուկարի ուսուցիչի հանգամանքէն աւելի բանով մը պատուուելու։ Անիկա գրութեան մը հեղինակն էր, անիկա գաղափարի մը առաքեալն էր և անոր տարածիչը։ Տափակ, հետեւակ և անձկամիտ հետեւող մը չէր, այլ իր անձէն, իր մտածումէն և իր գաղափարներէն բան մը գրած էր հոն և անով միայն պիտի տարբերի բոլոր միւս դասախոսներէն, որոնք իրմէ ստացածնին ուրիշներու պիտի փոխանցեն յաջորդաբար։ Գալէնտէր՝ գասախօս ըլլալէ առաջ հեղինակ մըն էր, և այդ ձիւղին մէջ հեղինակութիւն ըլլալու համար մարդ օժտուած ըլլալու է գիտական մտքով և արուեստի ճարտարութեամբ, վասն զի ձեւ ու

կարը թէ՛ գիտութիւն մըն է և թէ՛ արուես մը, վասն զի անիկա «իրբեւ գիտութիւն կարգ մը որոշ, ընդհանուր, ճշգրտեալ ոկղունքներու վրայ հիմնուած ծանօթութեանց կանոնաւոր շարք մըն է, և իրը արուես, տեսական և գործնական որոշ կանոններու ենթարկուած է»:

Գալէնտէրի մասնաւոր մտասեւեռումը եղած է արուեստը գիտական որոշ կանոններու վրայ հիմնել և զանոնք անվրիպելի ճշգրտութեամբ մը մարմնաւորել, նոյն խոկ մարմնական բացառիկ կազմութեանց համար կանոնի բացառութիւններ չունենալու պայմանով: Եւ այդ գաղափարը իրագործելու յաջողած է, գտնելով գրութիւն մը որ իր անունավը ճանչուած է և որուն արժէքը նոյն խոկ Եւրոպացիներ գնահատած են, ինչպէս ըստեցաւ:

Առանց արուեստական մանրամասնութեանց մտնելու և առանց մի առ մի ցոյց տալու այն գլխաւոր հիմնակէտէրը որոնց վրայ Գալէնտէր իր գրութիւնը հիմնած է, կը բաւէ միայն սաշափը ըսել թէ Գալէնտէրեան գրութիւնը Եւրոպայի մեծագոյն մտախն մէջ գործնականին մէջ կիրարկուած բուռակիթենական կամ ուղղանկիթենական գրութեան և իրը տեսուկան և տեսլական կատարելութիւնը ընդունուած՝ այլ սակայն գործադրութիւնը գտուար համարուած՝ եռունկիթենական դրութիւնն միջինն է և ԳՈՐԾԱԴՐԵԼԻՆ:

Առով Գալէնտէր կրցած է հաստատել գրութիւնը, որ կատարելագոյնին կ'մօտենայ տեսականին մէջ և գործադրելի է կատարելապէս՝ գործնականին մէջ: Առոր ակներեւ տապացոյն է Գալէնտէրեանի տշակերտներէն մեծագոյն մտախն գործնականապէս արհետը ի գործ զնելը յաջողութեամբ և նոյն խոկ կարգ մը ուրիշներու միայն իր հեղինակութեանց վրայ ինքնին արհետը սորված և կիրարկած ըլլալը:

Գալէնտէր՝ հակառակ իր այս ձեռնհասութեանը պէտք եղածին պէս չէ գնահատուած մեր միջավայրին մէջ, վասն զի մենք միշտ չենք գիտցած մեր ունեցածին արժէքը գիտնալ որչափ ատեն որ անոնք օտար շունչով մը ոգեւորուած չեն:

Գալէնտէր իր ցեղին համար փառք մըն էր, սակայն մարդ չնախցաւ այդ բանը: Տարբեր միջավայրի մը մէջ թերեւս աւելի բարձր մակարդակի մը հասնէր և աւելի մեծ անունի մը տիրանար, սակայն մեր մէջ չկրցաւ գնահատուել և Գալէնտէրեանի

գլխաւոր առաքինու միւնք այն եղաւ որ իր բոլոր յորսը ապագային վրայ գնելով, օր մը գնահատուելու իտէալովը, յետ մահու փնտուելու փառասիրութեամբ անվհատ կորովով մը գործեց, աշխատեցաւ և տքնեցաւ, և գժբախտաբար պնալիսի պահ մը ուր ամէնէն աւելի պէտքեր կը ներկայանացին իր ձեռնահասութեան գիտելու, երբ եթէ ոչ մեր ըրջանակէն գէթ օտար հասարակութիւններէ, իր գործին գնահատութիւնը կ'ըլլար, ինքն այսպէս յանկարծական կերպով մենէ կը բաժնուի:

Յունաց աղջկանց բարձրագոյն կրթական հաստատութեան թերայի Զարբիոն վարժարանին մէջ քանի տարիներէ ի վեր է Գալէնտէրի գրութեամբն է որ կը գասախօսուի, և որովհետեւ աղջկանց միւս կրթարաններու վարժուհիներու մեծ մատը այդ յարկին տակ կը պատրաստուի, մօտաւոր ապագայի մը մէջ յուսովի է Գալէնտէրի գրութիւնը տարածուած տեսնել յոյն թաղային վարժարաններուն մէջ, որքան տարածուած չէ ալոր հայ գպրոցներու մէջ:

Եւ ասոր վասահ կրնանք ըլլալ վասն զի վարժարանին վարչութիւնը շատ խանգավասութեամբ կը գնահատէ Գալէնտէրի գրութեան առաւելութիւնները և անոր ժամ առաջ տարածմանը համար, տակաւին մօտերս բանակցութեան մտած էր Մելքոն էֆ. Գալէնտէրի հետ, թարգմանութեան իրաւունք ստանալու և նւախ առաջին հասորը յունարէնի թարգմանելու համար: Գպրոցին վարչութիւնը միանուագ 60 ոսկի տալու տրամոգրութիւն յայտնած էր, մինչ Գալէնտէր կը պահանջէր 100 օսմ. ոսկի, և հաւանական էր որ եթէ ողջ մնար, այդ տարբերութիւնն ալ երկուստեք զիջողութիւններով վերջանար և յունարէն թարգմանութիւնը իրականանար: Ասիկա ցոյց կուտայ թէ Գալէնտէրի գործը իրաւամբ արժէք ունեցող գործ մըն է, զի արուեստի, ճաշակի և վայելչութեան գործերու մէջ Յունաց՝ մենէ աւելի ընդունակ և աւելի բաժինդիր ըլլալը իրը տոհմային յատկանիշ և ընդհանուոր նկարագիր չենք կրնար ուրանար: Երբ անոնք կը գնահատեն, երբ անոնք միջոցներ ունենալով հանդերձ ուրիշ գրութիւններու վրայ նախապատուութիւն կու տան Գալէնտէրեան գրութեան, անշուշտ բան մը տեսած են կամ գնահատելի բան մը գտած:

Գալէնտէրեանի աշակերտները և աշակերտուհիները պէտք

չ մոռնան այս պարագան, և կատարելապէս համոզում գոյացը-նին թէ ինչ որ իրենք սորված են, անիկա մեր մէջ հազուա-գիւաօրէն ճնունդ առնող տաղանդի մը յդացումն է, որ մերը ըլ-լալու առաւելութեան հետ պակասաւոր և կարկտուած գործի լնութիւնը ունենալէ հեռի, կատարեալ գործ մըն է, որուն տա-րածմանը և հիմնաւորմանը պարտին աշխատիլ այն ոգեւորու-թեամբ և այն խանգով ու անվհատ կամքով, զարս ունեցաւ իրենց գարպեալ ՅՅ տաբի շարունակ:

Դժուարութեանց մէծ մասը հարթուած է: Դերձակութեան արուեստագիտական լեզուն կազմուած է: Գալէնտէր ինչպէս ին-քը պատմած է երբ իրը դասախոս գպրոցի մը սեմէն ներս մուա, չէր գիտեր թէ ի՞նչպէս պիտի բացատրէր իր միտքը և ի՞նչպէս պիտի կազմէր Հայերէն բառերը: Որչափ իր գործին՝ նոյնքան ալ արուեստին հայացմանը աշխատած է Գալէնտէր, երկարատեւ պրատումներով հին լեզուն քաղելով և պակսած ատեն կազմե-լով արուեստագիտական բառերու մթերք մը: Շատեր զինքը քննադատած են խարդ և ականջի ծանր հնչող գանելով կարդ մը բառերու կազմութիւնը, առանց անդրադառնալու թէ արուեստի բառեր՝ ամէն լեզուի մէջ արդէն արհեստէն դուրս մարգսց հա-մար, անսալոր ըլլալով խորթ կրնան հնչել:

Գալէնտէր արդէն ինքը կը խոստովանէր լեզուի մասին իր հեղինակութիւն մը ըլլալը, և եթէ ինքն առանձնակի ձեռնար-կած ըլլար արուեստին լեզուն կազմակերպելու, թերեւս չյաջո-ղէր. սակայն ինքը խոհեմութիւն ունեցած էր Վայելի հրատա-րակութեան օրերէն սկսեալ միշտ Հայ լեզուի մէջ իրենց ունեցած ձեռնհասութեամբը և հմոռութեամբը ծանօթ անձնաւորութեանց խորհուրդներուն ապաւինիլ և լեզուի օրինաց դէմ առանց մե-ղանչելու կազմել բառեր և բացատրութիւններ:

Վերջերս մեր մէջ ամէնէն աւելի այս մասին ձեռնհաս անձ մը, —որ ծագրայեղ համեստութեամբ մը քաշուած կ'ապրի և որուն համեստութիւնը վիրաւորել չուզելով չենք ուզեր իր անունը յայտնել —իր խորհուրդները չէր զլանար Գալէնտէրի բառերու կազմութեան և նախնեաց մատենագրութեան՝ հագուստի վիրա-բերեալ բառերու ուսումնասիրութեան մէջ: Հետեւաբար լեզուի մասը յարդարուած է: Զեւուկարի պէտքին և անոր կարեւորու-

թեան գաղափարի տարածումն ալ հիմա բաղգտումամբ այն թուա-կաններուն ուր Գալէնտէր գործել կը սկսէր, անբաղգտելի կեր-պով առաջդիմած է: Երբ Գալէնտէր գործի կը սկսէր՝ ձեռագործ անունով զաս մը գոյութիւն ունէր վարժարաններու մէջ, սակայն բնաւ ձեւուկար: Գալէնտէրէն առաջ միայն Փանոսեան անդրա-գարձած էր այդ պէտքին վրայ, և Ագապեան վարժարանին ծրա-գրին մէջ մտցուցած էր: Սակայն շատ անհաստատ և խախուտ հիմ մը ունէր անիկա, վասն զի—թէեւ չենք գիտեր մեթոտը—սակայն Եւրոպացի վարպետներ, որոնք իրարու կը յաջորդէին, ամենքն ալ իրենց կարգին, իրենց մեթոտները կը բերէին:

Անհատաբար, կանանց հագուստները բռարիմով և անմեթոտ իրարմէ սովորածնին ի գործ կը գնէին: Միայն այդ ժա-մանակներուն՝ մերուով ձեւող մօսիսդներուն մէջ երեւելի էր Օր Արրուհի Այշճեան (աւելի ծոնօթ Սուրբիկ մատիագել անունով, երբեմն Սկիւտար՝ հիմա Բերա հաստատուած) որ Փրանտացի մա-րապետներու քով սորված էր կար ու ձեւը՝ թէպէտ ոմանք կը պնդէին թէ Յակոր էֆ. Եէմենճեանէ սորված է ձեւելը: Ասոր աշակերտներն ալ մեթոտով կը ձեւէին, սակայն ասոնք անհատա-կան ձեռնարկներ էին և սահմանափակ շրջանակի մէջ միայն ըն-դունելութիւն կրնային գտնել: Վարժարաններու մէջ այս ձիւզը գոյութիւն չունէր: Դալէնտէր առաջին անգամ հանրային գոր-ծունէութեան հրապարակ ելա 1880 թուականին, Մեղապուրեան վարժարանի մէջ ձեւագիտութեան ուսուցչութիւնը առնելով իր վրայ և իր գործին հեղինակը ըլլալէ զատ, անոր առաքեալը և քարոզիչը ըլլալու փափուկ գերը ստանձնելով: Մեղապուրեան վար-ժարան՝ մեր Հայ իգական սեոի դաստիարակութեան գործին մէջ իր ժամանակին նշանակելի գեր կատարած է: Գալէնտէր հոն-կէ սկսելով իր գործունէութեան՝ աղէկ պատուանդանի մը վրայ գրած է իր ստքը իբր նախաքայլ: Միւս կողմէ մասնաւոր գա-ստիսութիւններով հասուցած է աշակերտներ, որոնք ուղղակի արուեստը գործադրել սկսած են, և աւելի ուժ տուած իր գոր-ծին տարածմանը: Հետպհետէ աղջկանց դաստիարակութեան մէջ ձեռական աշխատութեանց կարեւորութիւնը և ձեւուկարին անոր անհրաժեշտ և անբաժան մասը կազմելլ ընդունուած ճշմարտու-թեանց կարգը անցնելով չնորհիւ լրագրական յարատեւ քարոզու-

թեանց, Գալէնտէրի գրութիւնը հետզհետէ աւելի տարածուիլ սկսու : Այսօր թաղային վարժարաններու մեծամասնութեան մէջ Գալէնտէրեան գրութեամբ կը դասախոսուի : Ինքը դասախոսած էր մեր թաղային վարժարաններէն գլխաւորներուն մէջ պարբերաբար : Վերջին տարեշրջանին, հակառակ չափազանց ծանրաբեռնուած ըլլալուն մասնաւոր դասերով և հրատարակչական ձեռնարկներով և փորագրութեան աշխատութիւններով՝ —որով վայրկեան մը իսկ չունէր պարապ— տակաւին կը դասախոսէր Մայր վարժարանի և Սամաթիոյ մէջ :

Իր գործին գաղափարով վառուած, և իրը եռանդու և ճկուն մարդ մը, իր դասախոսութեանց մէջ իր մեթոտին առաւելութեանցը քարոզիչն էր կամ անոր շատագովվը : Սրամիտ, զուարթ և չէն բնաւորութեամբը գիտէր միանգամայն դասը շահեկան և հածելի գարձնել, որով իր աշակերտներն ալ խանդավառել և իրենց կարգին իր գործին չատագովները գարձնել : Միւս կողմէ, Գալէնտէր իր հրատարակութիւններովը և դասագիրքերովը իր գործը հաստատուն հիմի մը վրայ գրած է : Իր զոհողութիւնը մեծ եղած է և թերեւս պիտի կարենանք ըսել թէ իր կեանքը մաշեցուցած է չարաչար աշխատութեամբ : Կիրք մը գործած էր գործին զարգացումը, մոլութիւն մը եղած էր անոր տարածիչը ըլլալու եռանդը իր մէջ : Կրօնքի առաքեալի մը ոգեւորութիւնը և եռանդու շեշտը ունէր երբ իր գրութեան առաւելութիւնները բացատրելու համար կը խօսէր և կ'ուզէր զանիկա ի գին ամէն տեսակ զոհողութիւններու տարածուած տեսնել : «Այն ատեն պիտի տեսնեն թէ, կ'ըսէր, ո՞վ է Գալէնտէր և ի՞նչ ըրած է» : Այդ հաւատքը, որ մը հասկցուելու եռանդը, պատկերները իսկ իր ձեռքովը վիճագրելու, աչքի լոյս սպառելու, տքնելու և նեղուելու յանձնառու ըրած էր զինքը : Սակայն գժրախտաքար, առանց լիովին իրագործելու իր ծրագիրը, այնքան կանխահաս կերպով մը կը մեռնի, և գժուար կ'երեւայ մեզ կարծել թէ պիտի կրնան աշակերտները շարունակել գործը : Զանք և աշխատութիւն պէտք չէ խնայուին, եթէ կարելիսութիւն կայ : Իր անտիպ գործերը և գծագրած պատկերները պէտք է խնամով ուսումնակիրուին օգտուելու համար այն ներշնչումներէն, որոնք Գալէնտէրի անձէն կը բխէին : Արդէն գժուար մասն աւարտած է, կանանց

արտաքին հագուստներու ամէն ձեւերը կարելի է շինել նւախիրկու հատորներով, որոնք աւարտած են : Միայն կը մնայ Գ. հատորը որ ձերմակեղէններու մասը պիտի պարունակէր և որ գիւրագոյնը ըլլալով, կրնայ պատրաստուիլ իր ատաղձներուն վրայ, իր յաջողակ աշակերտուհիներուն ձեռքով : Իսկ Ադամին Ա. թերի հատորը և ծրագրեալ երկու հատորները լրացնելու համար լուրջ կարգագրութեան մը պէտք կայ, վասն զի խոշոր գըժուարութիւններ կան այդ մասին, զսրս պէտք է հարթեն իր այն աշակերտները, որոնք յաջողապէս իրենց արհեստը ի գործ կը դնեն :

Բ. — ԻԲՐ ՄԱՐԴ

Ըսինք կարծեմ թէ Ակնցի էր : Այն ամունը մեր մէջ կապուած է կարգ մը յատկանիշներու, որոնք սուտ կամ իրաւ նուիրտգործուած են ժողովուրդին միտքին մէջ և տեսակ մը համոզման կարգ անցուծ : Գալէնտէր՝ հակառակ անձնապէս իր ծննդավայրին բարքերը, սովորութիւնները և լեզուն բոլորովին թոթափած և զանոնք յիշեցնող ոչինչ պահած ըլլալուն իր վրայ, —այնպէս որ արտաքուստ գատելով շատ գժուար էր հաւատալ իր Ակնցի ըլլալուն, —պահած էր իր սրտին մէջ բան մը որ իր ծննդավայրը կը յատկանչէր և զոր իր մէջն արմատախիլ ընել և ջնջել մարդուն տրուած կարողութիւն չէ : Գէթ այդ կողմէն իր ծննդավայրին զաւակն էր : Եւ ատիկա իր տկարութիւնը մնաց մինչեւ վերջը : Ասկէ զատ գաւառացիներու բաւագոյն յատկանիշերը եղող և ընդհանուր նկարագիրը կազմող՝ աշխատասիրութիւնը, չարքաշութիւնը, կամքի տէր ըլլալը իր նկարագրին նշանակելի և զօրտոր կողմերը կը կազմէին :

Աշխատութեան մարմնացումն էր . բոլոր զինքը ճանչցողները միահամուռ կրնան վկացել թէ պարապ ժամանակ անցընելու վրայ գաղափար չունէր : Հետաքրքիր, քննախոյզ միտքով օժտուած էր : Մտքին այդ տրամադրութիւնը զինքը պղտիկ համայնագիտական բառարան մը գործուցած էր : Ամէն բանի քիչ ու շատ գաղափար ունէր և բնաւ առիթը չէր փախցներ բան մը սոր-

վելու համար : Դիտելու կարողութիւնը բաւական նշանակելի էր , բարքերը և սպորութիւնները խիստ կը չահագրգուէին զինքը , և զանոնք պատկերացնելու աննման եղանակ մը ունէր , որ Գաւէնտէրի բարեկամներու շրջանակներու մէջ իր ներկայութիւնը միշտ փնտուել կուտար : Խօսելու , նկարագրելու և պատկերացնելու գերազանց կարողութեամբ օժտուած էր , այնպէս որ մարդ հաճոյքով կ'ունինդրէր իր խօսքերուն և պատմութիւններուն ուրոց անսպատ գանձարանն էր : Աւելցուցէք ասոր վրայ իր որամութիւնը , պատրաստաբանութիւնը և կտառակասէր և զուարթ բնաւորութիւնը , պիտի գտնէք այն գաղտնիքը որ Գալէնտէրը այնքան փնտուել կու տար ընկերական շրջանակի մէջ : Գնալլ կղզի ամառանոց գացողները գիտեն թէ շոգենաւներու մէջ Գալէնտէր տեսուկ մը քարոզիչ էր որուն շուրջը կը համախմբաւէին , և ինքը գիտէր ամէնտուն ալ ճաշակին և տրամադրութեան համաձայն խօսիլ . կեանքն հաճելի ընելու կը չանար այնքան որքան կրնար , վասն զի՝ իրը գիտող , զննող և մտածող միտք մը՝ գիտէր անոր արժէքը և անոր ոչնչութիւնը : Կեանքն ուսուցման և ուսանելու դպրոց մը կը համարէր և կտառակին , ծաղրին ու հեգնութեան մէջ կ'ուզէր որ բան մը գտնուէր օգտակար :

Շատեր Ակնցիի բարբառով բաներ գրած են , անոր անհեթիթութիւնները մէջտեղ բերելու համար : Գալէնտէր՝ խղճամիտ քննութեան մը ենթարկած էր իր բնագաւառին թէ՝ բարքերը և թէ լեզուն , զոր գիտէր այնքան բնականօրէն խօսիլ և խնդրուած տաենը գրել : Իր գործը աւելի գաւառաբարբառին ուսումնասիրութիւնն էր քան թէ սոսկ հեգնութիւնը : Եթէ վառուած չըլլար իր դրաւթեան ջատագովութեան գաղափարավը , եթէ ինքզինքը նուիրած չըլլար այդ գաղափարին , իր գիտելու և բարքերն ուսումնասիրելու կարողութիւնը , ինչպէս նաեւ իր ապրած կեանքը և անով կազմած գաղափարները՝ միացած իր նկարագրելու և պատկերացնելու կարողութեանը , պղտիկ գրոկան մշակութեամբ մը կրնալին զինքը վիպագիր մը ընել՝ մեր տահմային կեանքէն քաղուած վէպերու :

Սակայն իրապէս ժամանակն էր որ կը պակսէր իրեն՝ ատով զբաղելու համար , թէեւ գործէ փախչող չէր , այնպէս որ քանի անգամ որ իրը թաղ . Խորհուրդի կամ յանձնաժողովներու անդամ իրեն կոչում եղած է , պաշտօն ստանձնած :

Իր ընտանիքի հայր՝ զարմանալի առանձնայտութիւնով մը օժտուած էր : Սիրային ամուսնութեամբ մը տամուսնացած էր և երջանիկ եղած էր ամուսնութեան կեանքին մէջ , իրեն՝ լծակից ունենալով ժրաշան կին մը , որուն մայրական կարողութիւնները զարմանալի տպաւորութիւնը չը ըրած էին նոյն իսկ Գալէնտէրի վրայ : Փոխագարձաբար իր կարողութիւններն ալ տպաւորութիւն ըրած էին իր կնոջ վրայ , որով ընտանիքը հիմնուած էր որքան փոխագարձ սիրոյ , այնքան ալ փոխագարձ յարգանաց զգացման վրայ :

Գալէնտէր իր տունին մէջ ամենայն ինչ էր : Իր ընտանիքին և զաւակներուն վերաբերող գործերուն ամենայնեալն մանրամասնութեանցը ուշադիր և հսկող , և անոնց գաստիարակութեան լաւագոյն հիմերու վրայ հաստատուելուն աշխատող : Բժիշկի մը չափ մանկական հիւանդութեանց վրայ մասնագիտութիւն ձեռք բերած էր փորձառաբար : Վեց զաւակներ ունեցած է , որոնցմէ երկրորդը՝ Եւա՝ վաղահասօրէն մեռած ըլլալով , Գալէնտէր թելադրուած է իր ձեւագիտութեան գասագիրքերը նոյն անունով մկըրտել և ասով անմահացնել իր աղջկան անունը : Եւ իրաւամբ , «Եւա» այլեւս անմոռաց անուն մըն է մեր մէջ , վասն զի Գալէնտէրի անունին կապուած է ան և Գալէնտէրի անունը կրնանք ըսել թէ անխուսափելիօրէն կապուած է ձեւուկարի գասախօսութիւններուն և անոր զարգացման համար եղած բոլոր ձեռնարկներուն հետ , վասն զի իրմով կը սկսի ան և գուցէ չպիտի գըտնուի ուրիշ մը որ ասկէ յետոյ իրմէն աւելին կարենայ ընել :

Իր անշուք հողակոյտը՝ Գնալլ կղզիի այն ողորմելի գերեզմանասան մէջ , որչափ ատեն որ մնայ այդ վիճակին մէջ , մեր անգիտակցութեան տխուր խորհրդանշանը և մեր սովորական ապերախտութեան կոթողը պիտի ըլլայ : Թող իր աշակերտները և իր աշակերտուհիները իրենց նուիրական պարտականութիւն համարին , կանգնելու համար մահարձան մը , զի վաղը՝ ինչ որ մենք չկրցանք գնահատել , ինչ որ մենք չկրցանք ըկրցանք ըմբռնել , ինչ որ մենք չկրցանք հասկնալ , վաղուած սերունդը կրնայ գնահատել և այդ հողի պատառը , որ երկինքի կապուտին և ծովու կապոյտին միջեւ կը կանգնի , նուիրական ուխտատեղի մը դարձնել : Այդ քարի կտորը՝ որ Գալէնտէրի հողակոյտին վրայ պիտի բար-

ձրանայ, թող յուշարձան մը ըլլայ անցուցի՛ց և հնորարկուին
համար: Եւ եթէ երբեք սգաւոր այրիներ, չքաւոր աղջիկներ,
որը և անտերունչ կոյսեր, աղքատութեան ճիրամներու դէմ ի-
րենց մզած պայքարին մէջ յաջողած և վերականգնուած գտնեն
ինքզինքնին ա՛յն միջոցներով զորս Գալէնտէր իր կեանքը մաշե-
ցընելավ իրենց ձեռքերուն մէջ դրած էր, գան այցելել իր գերեզ-
մանը, թող գիտնան թէ ո՛ւր կը գտնուի ան:

Ու թերեւս այն ատեն հրճուի հոգին Գալէնտէրի, որուն
իտէան էր արդէն ապագային գնահատուիլ:

ԱՐԴԱԿ Ա. ԱԼԹՈՅԱԶԵԱՆ



«Ազգային գրադարան



NL0299670

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԳՈՐԾԵՐԸ

	Տարբերակ
1. — Շի. Ա. Հատոր (1886) սպառած	40
2. — ԶԱՓԱՃԵՅՐ (1887) յաճախորդին չափուրը զրելու հեշտոր զիւրաւթիւններ ընծայոց 50 Թերթէ բաղկացած տեսոր	2 $\frac{1}{2}$
3. — Եկե. Բ. Հատոր (1891) սակաւաթիւ օրինակներ	35
4. — ՏԱՐՏԱԿԱՆ ԶԵՐԱԳԻՑՈՒԹԻՒՆ (1862) Սպառած	12
5. — ԱԴԱՄ (1900) Արտանց եւ մանչ տղոց ամեն տեսակ հազուստ- ներ ժեւելու եւ կարելու ինքնուսոյց զիրք, հրատարակուած մինչեւ 200 սուսար էջ բացատրութիւն եւ 50 մեծաղիք տախուակ (Անդյան ած)	15
6. — ՄԹՋԵԹՅ, ԶԵԿ ԱԽ Կ. Հ. Հատոր (1904)	30
Թղթատարի ծախրով	35
7. — ԱՐԶԵՐՆ ԶԵԿ ԱԽ Կ. Հ. Բ. Հատոր (1908) (Կենսագրական ծանօթութեամբ)	65
Թղթատարի ծախրով	70

ԱՅՍ ԳՈՐԾԵՐԸ ԶԵՂԶ ԶԻՒՆԻՆ



Թերթանակար, առ Ա. Պուշկին, Կալաթա Գոմիսին: Խանի
տակ թիւ 77. Wie er Bank Vereinի շիմացը:

معارف عمومية نظارات جليلة سنك في 7 أيلول ۲۲۲ تاريخلو و 7
رومنلى دخصتاميسىل طبع ايدلشدر